



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

B 1,170,712










29

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

927

ԴՊՐՈՅ ԵՒ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ



(ՄԵԾԱԿՈՆ ՄԱՍԵՐ ԱՐԻՆ ԼՈՍ ՏԵՍՈՒ ԲՐԱԶՆՈՍ ՄԵՐԼՈՆ ՄԻՋՈՍԻ)




Կ Ի Ե Ն Ն Ա

Մ Ի Ի Բ Ա Ր Ե Ա Ն Տ Գ Ա Ր Ա Ն

1907

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES




Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

Perpepyan, Kotsoy, No. 1.


ԴՊՐՈՑ ԵՒ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Քրտ. և Գրական

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՆԻԻԹԵՐ



(ՄԵՆԵՂԻՆԵ ՄԱՍՈՒՐ ԱՐԻՆ ԼՈՍՏ ՏԵՍԵՆ ԹՐԻՍՏՈՆ ՄՈՒԴՐՈՆ ՄԻՋՈՍԵՏ)



Կ Ի Ե Ն Ն Ա

Ի Բ Ա Ր Ե Ա Ն Տ Գ Ա Ր Ա Ն

1907

10.11.6

FR EN

927

BURY

GRAD
EFCN
327
02.20.98

Մ Ո Ւ Ր Ա Տ Ե Ա Ն Ց Մ Ե Լ Ք Ի Ս Ե Պ Ե Կ

Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի

Մ Ե Ժ Վ Ա Ր Դ Ե Պ Ե Տ Ի Ն

ԵՒ

Մ Ա Տ Թ Է Ո Ս Մ Ա Մ Ո Ւ Ր Ե Ա Ն Ի

Մ Ե Ժ Հ Ր Ա Պ Ե Ր Ա Կ Ե Գ Ր Ի Ն Ե Ի Ո Ւ Ս Ո Ւ Ց Զ Ի Ն

Պ Ա Ն Ժ Ա Լ Ի Ե Ի Զ Ա Տ Ա Կ Ա Ց

20%

Բ Ա Ր Ե Պ Ե Ց Տ Ի Կ Ց Ա Ր Կ Ա Ն Ո Ց Ե Ի Ա Ն Մ Ա Թ Ա Ց Ս Ի Ր Ա Ց

Ռ. Յ. Պ.

11.11.6
FRAN
927
BUNT

GRAD
FFEN
327
02.20.98

Մ Ո Ւ Ր Ա Տ Ե Ա Ն Ց Մ Ե Լ Ք Ի Ս Ե Դ Ե Կ

Ա Ր Զ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի

Մ Ե Ժ Վ Ա Ր Դ Ը Պ Ե Տ Ի Ն

Ե Ի

Մ Ա Տ Թ Է Ո Ս Մ Ա Մ Ո Ւ Ր Ե Ա Ն Ի

Մ Ե Ժ Զ Ի Ն Պ Ա Ր Ը Կ Ը Գ Բ Ի Ն Ե Ի Ո Ւ Ս Ո Ւ Ց Չ Ի Ն

Պ Ա Ն Ժ Ա Լ Ի Ե Ի Չ Ա Տ Ա Կ Ա Ց

20%

Բ Ա Ր Ե Պ Ա Շ Ց Ի Կ Ց Ա Ր Գ Ա Ն Ա Ց Ե Ի Ա Ն Մ Ա Թ Ա Ց Ս Ի Ր Ա Ց

Ռ . Ց . Պ .



Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Ներկայ հատորին մէջ ամփոփուած գրութեանց նիւթը մանաւանդ եղած է ինձ թելադրող այս փունջը կազմելու գաղափարը: Աստ անդ, ինչ ինչ պատեհութեամբք, տարիներու ընթացքին մէջ, գրած եմ յօդուածներ կամ արտասանած եմ բանախօսութիւններ, որք իրենց առարկայ ունեցած են դաստիարակութեան խնդրոյն այլ եւ այլ շահեկան կէտերը կամ գրականութեան վերաբերեալ զանազան հարցեր եւ նոյն իսկ այլ եւ այլ մատենագրական դէմքեր: Դաստիարակութեան նպատակն ու եղանակները, կրթութեան սատիճանները, դպրոցաց կազմակերպութիւնը, ուսուցչաց պատրաստութիւնը, մանկավարժական սկզբունքները, կրթական իշխանութեանց դերը, դպրոցական ծրագրի կազմութիւնը, որոց հետ նաեւ Պէրպէրեան վարժարանի՝ գործունէութեան ինչ ինչ դրուագները, ինչպէս նաեւ հայ լեզուի եւ դպրութեան շուրջը դարձող խնդիրները, գրականութեան սեռերը եւ գրագէտներու գրական արդիւնքն ու գործունէութիւնը թելադրած են մեզ մերթ ընդ մերթ այդ գրուածներն ու այդ ճատերը, որոց մէջ շանսցած ենք բանածեւել մեր տեսութիւնները, մեր համոզումները, մեր սիրած ու հետեւած սկզբունքները, ուսմամբ, խորհրդածութեամբ եւ փորձառութեամբ ստացուած ու հոգիներու մէջ լուսաւորութեան կայծեր եւ ազնիւ յուզման մը շարժումները յառաջ բերելու սահմանուած: Այդ խնդիրներն ալ, յայտնի է, առօրեայ չեն. վայրկեանի մը կեանքը չէ որ ունին, այլ ամէն ժամանակի մարդերը կը հետաքրքրեն: Կրթութիւն եւ գրականութիւն ընդ միշտ


կենսական հարցեր են, ժողովուրդներու բարոյական կեանքին գործարանները. ամէն սերունդ պիտի ՚ն-տաքրքրուի իր դպրոցներով որոց կը յանձնէ իր ապագայ ճակատագրաց պատրաստութեան հոգերուն մեծագոյն մասը, ու նաեւ ամէն սերունդ իբրեւ մտաւոր սնունդ մատենագրութիւն մը պիտի ունենայ որուն ուղղութիւնը, իբրեւ մեծապէս ազդող իր բարոյական եւ ընկերական կեանքին վրայ, պիտի շահագրգռէ զինքը շարունակ: Կրթական եւ գրական խնդիրներուն ամէն ժամանակներու համար ունեցած կարեւորութիւնը պատճառ է որ երէկ կամ այսօր երեւցած կամ վաղն երեւնալիք գրուածներ, որք նոյն խնդիրներուն հետ վերաբերում մ'ունին, այնպիսի ձեւի մը մէջ դրուին որ իրենց երեւումէն ետքն ալ կարենան դիւրաւ խորհրդակցութեան մը նիւթ ըլլալ ներկային ու ապագային մէջ, նոր օգուտի մը, շահեկան տպաւորման մը, բաղդատման մը պէտքին համար: Ժողովրդեան մը մտքին առջեւ պէտք է գտնուին իր մէջ արտայայտուած անցեալ մտքերը, մանաւանդ կարեւոր ու կենսական հարցերու շուրջը դարձողները. հինը գիտնալ նորը դիւրաւ գտնելու կը ծառայէ, եւ շատ անգամ նոր ու աւելորդ խարխափումներէ, անօգուտ կրկնութիւններէ կ'ազատէ զմեզ: Մեր մէջ յաճախ տեսնուած է կրկնուիլն այնպիսի խնդիրներու որք արդէն ժամանակ յառաջ ընդունած են իրենց բանաւոր լուծումը, եւ սակայն վերստին կը յուզուին ու ժամավաճառ կ'ընեն զմեզ՝ մոռցուած ըլլալով ինչ որ գրուած եւ խօսուած էր երբեմն: Այս մոռացումն ու կորուստը — յարաբերական գէթ եթէ ոչ բացարձակ — անտի յառաջ կու գան որ մեր մէջ մտաւոր արտայայտութիւնը ընդհանրապէս ո՛չ թէ գրքերու միջոցաւ կը լինին այլ թոռցիկ թերթերու զորս կ'առնու կը տանի հովն այն օրուան ուր ծնան, եւ զաղափարներն ու տեսութիւնները կ'աւլուին կ'երթան անոնց հետ գրատանց կամ հնասէրներու հաւաքածոյներուն մէջ իրենց փոշոտ քուեր քնանայու: Գէթ ժամանակ մը վերջը գրքերու մէջ ամփոփուէին, ցիրուցան ատաղծներ շէնք մը

կազմէին, ցրուած անդամներ մարմին մը յառաջ բերէին որ դէմք մ'ունենար, որ այլ եւս իր անհատական գոյութիւնն ունենար եւ ալ ձեռքէ ձեռք՝ ամէն սերունդներուն, ըստ իւր կարեւորութեան, խօսիլ կրցող մարմնաւորեալ ոգի մ'ըլլար, խորհող միտք մը, բարախող սիրտ մը մնացուցած: Այսպիսի է գիրքը:

Ուստի եւ, ինչպէս ասկէ առաջ ալ մի քանի անգամներ ըրած ենք մեր այլ գրութեանց համար, մտածումն ունեցանք այն յօդուածներն ու ըանախօսութիւնները, որոց ակնարկեցինք ի վեր անդր, միացնելու մէկ նոր հատորի մէջ, «Դպրոց եւ Դպրութիւն», տիտղոսը տալով անոր, ըստ որում կրթական եւ գրական նիւթոց ժողովածոյ: Կը յուսանք թէ անօգուտ գործ մը չենք ըրած: Այլ ընդհակառակն արդի եւ ապագայ կրթասիրաց եւ գրասիրաց, ուսուցչաց եւ գրագիտաց համար ի մասնաւորի, շահեկան եւ հետաքրքրելի: Եւ այդ իսկ է մեր վարձքը:

Ռ. Յ. Պ.

Իւսկիւտար, Կ. Պոլիս, 1905 Փետրուար 2



Դ Պ Ր Ո Ց Ե Ի Դ Պ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Կ Ր Թ Ա Կ Ա Ն Ն Ի Ի Թ Ե Ր

1. Գ Ա Մ Ճ Ի Ո Ր Ո Կ Ո Ի Թ Ե Ո Ն Ն Պ Ո Ց Ո Կ Ը

Պարբերաբար Արեւելքի առաջին էջին մէջ կը տեսնուին խմբագրական յօդուածներ տոհմային կրթութեան վրայ, ինչպէս անցեալ օր ալ հրատարակուած էր յօդուած մը “Գործ կայ, գործող չկայ”, վերնագրոյն տակ: Այս խմբագրականը ընդհանրապէս կծու քննադատութիւնք են ազգային, անշուշտ հանրային ու մասնաւոր, վարժարանաց ուղղութեան դէմ զոր հեղինակն այդ յօդուածոց չի գտներ բաւական գործնական, բաւական դրական, բաւական կարող ուսանողին հացն ապահովելու: Հեղինակը կը կարծէ թէ մեր վարժարանաց մէջ աւանդուած կրթութիւնը առաւել կամ նուազ գրական է, եւ այդ գրական կրթութիւնը կը համարի յարմարագոյն հովկուլներու եւ անօթիններու թիւը շատցնելու: Անգամ մը գրած էր թէ հայերէնի ուսումը զարդ մ’է լոկ եւ առ առաւելն անոնց միայն պիտանի որք կամ եկեղեցական կամ վարժապետ լինելու սահմանուած են՝ չկրնալով առաւել ինչ լինել: Այս անգամ ալ դառն բողոք մը կը բառնայ. Ի զուր կը վատնուին, կ’ըսէ, մեր Պոլսոյ վարժարանաց համար ամսէ ամիս հազարաւոր ոսկիներ. շրջանաւարտք անգործ կը մնան, քանզի կանոնաւորապէս չեն ուսած ո՛չ վաճառատան տումար մը բռնել եւ ո՛չ առեւտրական նամակ մը գրել գաղիներէն: Պատճառ. — վասնզի գրական ուսմունք, առաւել հրապուրիչ աշակերտին համար, կը գրաւեն անոր ուշն ու ժամանակն եւ կ’արգելուն զնա զբաղելէ թիւերով եւ առեւտրական լեզուի յատուկ տարազ-

ներով: Իր եզրակացութիւնն է անշուշտ վտարել դպրութիւնները մեր դպրոցներէ եւ տեղը դնել միայն եւ միայն թուաբանութիւնը, տոմարակալութիւնը, վաճառականական թղթակցութիւնը, որպէս զի ուսանողն՝ ի վերջ իւր ընթացից՝ բախտն ունենայ յաջողութեամբ ողջունելու վաճառականի մը գրասենեկին դուռը զոր անտարակոյս նորա համար Էլտորատոյի մը մոտքը կը համարի: Այն ատեն, ըստ Պատ. Յօդուածագրին, մեր վարժարանք կը դադրին ամուլ վիճակ մ'ունենալէ եւ կ'արտադրեն սերունդ մը ճշմարտապէս օգտակար եւ կարող:

Գոհ եմք որ նոյն իսկ Արեւելքի մէջ Գրիգոր Զօհրապ զայրոյթի աղաղակ մ'արձակեց այս չափազանց անձուկ տեսութեանց դէմ: «Ո՛չ, դպրոց չեն երթար տղաք, կը գոչէ, որպէս զի ստակ շահելու ճամբան սովորին. ո՛չ, այդ շահամուղ ոգին չպիտի առաջնորդէ երբեք Հայ մանկուոյն. տղան պիտի երթայ հոն նախ, նախ մարդու ու քաղաքացւոյ գիտելիքը սովորելու,», եւ պայծառ ու ողջադատ մտքով եւ ազնիւ զգացումով մը կը ճշդէ կրթութեան նպատակը եւ կը պահանջէ որ չչիտթուի այն ո՛ր եւ է բանի հետ որ չէ այն: «Ուսումը, կ'ըսէ, կը սովորուի բարոյական եւ մտաւորական զարգացման համար, եւ ո՛չ դրամ շահելու,», ու կը յարէ. «Գաստիարակութիւնն ու կրթութիւնն արհեստի հետ պէտք չէ շփոթել. մին կրնայ ծառայել միւսին: Բայց նպատակները տարբեր, բոլորովին տարբեր պիտի մնան,»

Կրթական խնդրոց վիճաբանութեան մէջ անտարակոյս հիմնական կէտն է որոշել կրթութեան ինչն նպատակը. ցորչափ լաւ չըմբռնեմք զայս, միշտ պիտի մոլորիմք մեր դատաստանաց մէջ եւ պիտի մոլորեցնեմք հասարակաց դատաստանն ալ զոր ուղղել եւ լուսաւորել է հրապարակագրին պաշտօնը: Այդ նպատակն, որպէս քաջ կը սահմանէ Գրիգոր Զօհրապ, անտարակոյս բարի մարդ ու բարի քաղաքացի պատրաստելն է, կամ, աւելի համառօտ ըսելով, ինչն մարդեր պատրաստելն է: Այն ամենայն երկրորդական է գաստիարակութեան մէջ:

Ելբ դպրոցները կատարեալ մարդ ընեն մեր տղայքը, ալ նոքա կարող են իրենց կեանքը պահպանելու եւ զարգացնելու միջոցները գտնել եւ իւրացնել անջան: Այս ուղղութեամբ, այս տեսակէտով պարտիմք քննել մեր գաստիարակութեան վիճակը,

Հետազօտել նորա թերութիւնները: Մարդն ունի բարոյական, մտաւորական ու ֆիզիքական կարողութիւններ, դաստիարակութեան նպատակը պէտք է լինի զարգացնել այս կարողութիւնքն ներդաշնակ կերպով. կարող ընել զմարդկային էակն ուղիղ խորհելու, լաւն ու ազնիւը սիրելու, բարին գործելու: Ամէն իմաստասէրք եւ մեծ մանկավարժք համամիտ են մեզ եւ միշտ շատ աւելի բարձր դրած են դաստիարակութեան նպատակը քան Արեւելքի կտրի դրական խմբագիրը: Արդարեւ ամէն բան չի կրնար վերածուիլ պատառ մը հաց ուտել կարենալու այս աշխարհի վրայ. մարդն անասուն մը չէ որ նորա համար բաւական ըլլայ կտոր մը խոտը կամ կտոր մ'ոսկորը: Ա՛չ կուշար բոլորովին երջանիկ է, եւ ո՛չ նօթին հարկաւորապէս թշուառ: Մարդն այնպիսի էակ է որ կարող է կամաւ ինքզինք նօթութեան դատապարտել, եւ կեանքն իսկ՝ եթէ ուզէ՝ կրնայ վերցնել իրմէ: Կեանքը բարոյական նպատակ մ'ունի մանաւանդ, եւ այն կրթութիւն որ չի տար մանկան այդ նպատակին ձգտելու կարողութիւն կամ չի զարգացնել բնութենէն նորա մէջ դրուած կարողութիւնքն յայն ձգտելու համար, իւր նպատակէն վրիպեալ կրթութիւն մ'է: Հերպերդ Սթենսէր իսկ, դրականասէր փիլիսոփայ, կ'ըսէ. «Ի՛նչպէս ապրիլ կատարեալ կեանքով... ահա՛ ինչ որ ամէն բանէ վեր կարեւոր է մեզ գիտնալ, եւ ինչ որ դաստիարակութիւն պարտի ուսուցանել մեզ: Դաստիարակութեան նպատակն է պատրաստել զմեզ ապրելու կատարեալ կեանքով,՝ կատարեալ կեանքով ապրելուն կը պատրաստեմք մեր տղաքը, երբ մեր բոլոր կրթական ջանքերն ամփոփեմք ուսուցանելու մէջ նոցա միայն ինչ որ կը ներէ նոցա ամիսը քանի մը հարիւր դահեկան շահիլ, գրագրութիւն մը կամ արհեստ մը, զի զուտ արհեստական կրթութիւնն ալ ոչ նուազ պաշտպաններ ունի մեր մէջ: Նոյն իսկ վայելման տեսակէտով դատելով, մարդոյն համար լոկ մարմնական ախորժակներու գոհացման մէջ չի կայանար վայելքը. նա՛ զգացումներովը, սրտովը կը վայելէ, նա իմացականութեամբը կը վայելէ մանաւանդ: Կրթութիւն մը որ լոկ ապրուստի միջոց մը հայթայթէ նմա՛ չ'ապահովեր նորա երջանկութիւնը եւ կը զրկէ զայն ընդհակառակն այնպիսի հաճոյքներէ որք ամենէն աւելի կը վայլեն մարդուն: Ամէն մարդու փղձն է հասնիլ իւր բնութեան բովանդակ զարգացման, ըլլալ

բոլոր այն ինչ որ կը ներեն իրեն ըլլալ իւր ձիրքերն ու բնասուր կարողութիւնք: Դաստիարակութիւնը պարտի նպաստել մէն մի անհատի այդ վերելքին մէջ: «Դաստիարակութիւնը պարտի ի լոյս բերել անհատին իտէալը», ըսած է Ժ. Ռիխդէր: Արդ կարի գեանաքարչ ու սակաւապէտ կրթութիւն մը կ'արգելու անհատը դիմելէ իր տեսլականին: Արնայ առարկուիլ թէ զարգացեալ կրթութիւն մը միայն այն անձանց արուելու է որք սահմանեալ են բարձր պաշտօններ վարելու: Բայց ո՞վ սահմանեալ է բարձր պաշտօններ վարելու. նա որ զարգացեալ կրթութիւն է ստացեր. ուրեմն եւ ամենէ յետին աղքատին որդին, երբ դաստիարակութիւնը դուրս կը բերէ նորա մտքի եւ հոգւոյ գանձերը: Սակայն ո՞չ ապաքէն ամէն մարդ ստեղծուած է իբրեւ մարդ ապրելու, այսինքն իբրեւ բարոյական էակ, անդամ եւ գլուխ ընտանեաց, անդամ ազգի ու մարդկային ընկերութեան, ապա իւր երջանկութիւնը, զոր պարտի ստեղծել, եւ այլոցն որում պարտի ծառայել՝ ի նչպիսի փափուկ պարտաւորութիւններ կը դնեն իւր վրայ զորս անշուշտ չէ կարող քիչ մը թուաբանութեամբ արժանապէս կատարել յաջողիլ: «Պարտի եւ պահանջէր ծանօթութիւնը, ինչպէս սրամտութեամբ կը հարցնէ Գրիգոր Չօհրապ, պիտի կրնայ տալ ուսանողին միանգամայն եւ մարդկային պարտուց եւ իրաւանց գիտակցութիւնը, որ հիմն է ամէն բարոյականութեան եւ պայման պարկեշտ եւ օգտակար կենաց:

Այս խնդիրք, զորս վեր ի վերոյ կը շօշափեմ, բաւական են ցոյց տալու թէ որքան կը սխալի մէկը երբ կրթութեան խնդրոյն վրայ լոկ հացի տեսակէտէ կը նայի, ինչպէս դժբախտաբար ընելու կարի հակամէտ է մեր նիւթապաշտ ժողովուրդը: Կէթ խմբագրութիւնը չքաջալերէր այդ հակումներ որք ինքնին արդէն շատ վայրաքարչ են: Եթէ մեր ազգային վարժարանաց համար ընդհանրապէս գանգատելու բան մը կայ՝ այն ո՞չ թէ ուսմանց առուելազանցութիւնն է, այլ ընդհակառակն անբաւականութիւնը: Գրագիտական ուսումներն ո՞չ միայն պէտք չէ բառնալ, այլ եւ շատցնել եւ ընդհանրացնել: Բառին բուն նշանակութեամբ, շատ քիչ վարժարանաց մէջ կ'աւանդուի գրագիտութիւն: Լոկ քերականութիւն, քերականական վերլուծութիւն եւ թարգմանութիւն չեն բաւեր. պէտք է ուսուցանել ճաննալ ու ճաշակել գրագի-

տական յատկութիւններն ու գեղեցիկն ի գրականութեան. պէտք է ազգային եւ օտարազգի, հին եւ նոր մատենագրութեանց գլուխ — գործոցները վերլուծել ի լուր աշակերտին եւ վայելել տալ անոր Հոմերն ու Վիրգիլն ու Բագլատունին, Եսքիզն ու Շէյքսպիրն ու Պէշիկթաշեան, Պինդարոսն ու Հիւկոն ու Ալիշանը, Հերոդոտն ու Բուզանդը ու Միշլէն, Դիմոսթէնն ու Աիկերոնն ու Միրապոն: Գրականութեան ուսումն մարդկային հոգւոյն, մարդկային ընկերութեան եւ իմաստութեան ուսումն է, եւ չկայ ուսումն քան զայն բարոյականացուցիչ, քան զայն ընդլայնող մեծցնող մարդուն միտքն ու սիրտը: Համարողական ուսմանց քով խօսքն իսկ չ'ըներ բնական գիտութեանց Արեւելքի Պատ. Խմբագիրն, մինչ գէթ զայնս առ ոչինչ գրելու չէր իւր իսկ տեսակէտով, վասն զի իւրեանց կիրառութեամբ անյբան սերտ առնչութիւն ունին գործնական արուեստից հետ, բայց նոցա ուսումն անհրաժեշտ է նախ եւ յառաջ մտքին առողջ կրթութեանն համար. նոցա ուսմամբ մանաւանդ միտքը կը խորտակէ նախապաշարմանց շղթայները, ճիշդ ու լուսաւոր գաղափար կ'ստանայ բնութեան երեւութից եւ զօրութեանց, որպէս եւ տիեզերական օրինաց հարկաւորութեան վրայ: Բնական գիտութիւնք, ի վեր հանելով տիեզերաց պանչելի կազմաւորութիւնը, անհունապէս մեծն ու անհունապէս փոքրը միանգամայն, ո՛չ նուազ կը զօրացնեն կրօնական զգացումն, Անհուն Էսկին վրայ յաւելլով մեր հիացումն ու պատկառանքը: Կը յիշենք որ Արեւելքի խմբագրականաց Պատ. Հեղինակը շեշտած է կրօնական ու բարոյական կրթութեան կարեւորութիւնը. արդ կը զարմանանք որ գէթ այս տեսութեամբ չի խնայեր այն ուսմանց որք համարողութիւն չեն եւ սակայն մեծ նպաստ կը մատուցանեն կրօնական ու բարոյական զգացմանց մշակութեան, որպէս բնական գիտութիւնք եւ գրագիտական ուսմունք: Չեմ գիտեր թէ Պատմութիւն եւ Աշխարհագրութիւն շնորհք գտած են իւր աչաց առջեւ, եթէ ոչ նոցա մասին ալ կարծեկից է ուսկին որ կը հարցնէ թէ «նպարավաճառը կ'առնո՞ւ զան'նք»:

Իս կատարեալ նախնական կրթութեամբ մ'ալ չեմ բաւականանար եւ ամենուն համար կը պահանջեմ միջնակարգ կրթութիւն: Պէտք է որ առատապէս տարածուի լոյսը եւ իջնէ ժողովրդեան ամէն խաւերուն մէջ: 12—13 տարեկան դպրոցէն մեկ-

նող պատանեակ մը չէ կարող ոչ բարոյականի եւ ոչ գիտութեան հաստատուն ու գոհացուցիչ սկզբունքներ տանիլ իւր հետ: Պէտք է որ դպրոցի մէջ գտնուի այն հասակին մէջ ուր նկարագիրը կը կազմուի, եւ մարդոց ու իրաց վրայ, նիւթական ու բարոյական աշխարհաց վրայ ստանայ լայն ծանօթութիւններ, եւ իւր միտքը բացուի իմաստասիրական ծանօթութեանց: Գէթ դպրոցէ թերուս ելնողներու համար առանձին դասաբեմեր պարտին լինել՝ կատարելագործող ինչ որ ուրուագծած էր նախակրթութիւնը: Այս պայմանաւ միայն կը բարձրանայ ժողովրդոց իմացական ու բարոյական մակարդակը:

Բայց դպրոցը բոլորովին անտարբեր պարտի լինել նիւթական կեանքի պահանջներուն: — Ո՛չ. իւր գլխաւոր եւ առաջին պարտականութեան հետ, որ է մանուկը մարդ ընել կատարել, մտքը հասուն եւ լուսաւոր, զգացմամբ ազնիւ՝ համակիր եւ ընկերական, մարմնով զօրեղ եւ կայտառ, կրնայ եւ պարտի դնել նորա տրամադրութեան տակ միջոցներ որք դիւրացնեն նմա ասպարիզի մ'ընտրութիւնն: Արդէն իւր ստացած կրթութիւնն, իւր կարողութիւններն զարգացնելով եւ ազնուացնելով, մի եւ նոյն ատեն ըրած է զինքն գերազանցապէս օգտակար ու բարեբար ցոյժ մը մարդկութեան մէջ, յորմէ անտարակոյս պիտի փութայ օգուտ քաղել ընկերութիւնը, եւ որով ինքն ամէն յարմարութիւն կը վայելէ ինքզինքն շուտով այլոց օգտակար ու պիտանի ընծայելու, արդիւնաւոր կերպով ծառայելու եւ փայլելու ո՞ր եւ է ասպարիզի մէջ զոր ուղէ գրկել. այլ նաեւ դպրոցն, այս առանձին տեսակետով, կ'աւանդէ եւ պարտի աւանդել՝ ըստ պատշաճի՝ արհեստական, առեւտրական, լեզուական գիտելիք ու կրթութիւնը, մասնաւորապէս ուղղուած դէպ ի գործնական նպատակ: Բայց այս չպարտի խափանել դաստիարակութեան բուն գործը եւ մեքենայացնել զմարդ՝ թափուր թողլով նորա միտքն ու սիրտը: Ոչ մի վարժարանական տեսչութիւն փոյթ ունեցած է գործադրել մտաւոր ու բարոյական կրթութեան այնքան բազմակողմանի ճոխ ծրագիր որպէս է այն զոր կը գործադրեմ տարիներէ հետէ իմ վարժարանի մէջ. բայց այս պատճառ մը չէ եղած որ խնամով աւանդել չտամ նաեւ իմ աշակերտաց ուսումն կենդանի կարեւորագոյն լեզուաց, տոմարակալութեան, վաճառականական թղթակցու-

Թեան, օրէնսգիտական սկզբանց, առեւտրական իրագիտութեան ու աշխարհագրութեան, այլովքն հանդերձ: Պետական, ուսուցչական, իրաւագիտական, խմբագրական, բժշկական, ճարտարական ու վաճառականական ասպարէզներու միանգամայն յարմար մեկնած են մեր Ուսումնաւարտք եւ ցրուած արդարեւ գործունէութեան այս զանազան ընդարձակ դաշտերուն մէջ. իմացական ու բարոյական խնամեալ կրթութիւնն զոր ընդունած են՝ ո՛չ միայն չէ ֆնասած աւելի գործնական ճիւղերու ուսման, այլ նա մանաւանդ աւելի դիւրացուցած է զայնս իրենց եւ աւելի եւս ապահոված իրենց յաջողութիւնը կեանքի մէջ: Եթէ Արեւելքի Պատ. Խմբագիրը պատահած է այնպիսի շրջանաւարտներու որք կարող չեն եղած վաճառականի մը համեստ պահանջումները գոհացնել, ո՛չ, յանցանքը գրական կամ այլ ուսմանց չէ, այլ դպրոցաց անկատար ծրագրերուն եւ անոնց եւս անկատար գործադրութեան:

(Ծաղիկ, Թիւ 14, 1890)

2. ԳՊՐԹՈՍԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՅՑ ԼԻԹԻԻ՝

1890 Սեպտ. 5:

Մերելի ընթերցող, ահա՛ կ'աւարտին դպրոցական արձակուրդք եւ մեր կրթական հաստատութիւնք վերստին կը բանան իւրեանց դռներ ուսանող հայ մանկտուղն: Քիչ թէ շատ մեր վարժարանք պարապոյ օրեր տուած էին իւրեանց սանուց, որք, պահ մը գիրք ու գրիչ թողած, վարժապետին ձայնն ու զանգակին հնչիւնը մոռցած, կ'արշաւէին լեռ, ձոր ու դաշտ, եւ, փոխանակ սեւ տախտակին, կը յառէին երկնից կապոյտին, փոխանակ հսկողաց սաստին՝ կը լսէին ալեաց մրմունջն ու զեփիւռին շշուշն, եւ ծովու զով ջուրց մէջ կը մխրձէին փոխանակ քրտանց մէջ լող տալու: Հիմայ մեր ուսանողք պէտք է որ հրաժեշտ տան այս

¹ Այս յօդուածը մասն եղած է "Գործք եւ Գործողք" վերնագրով գրութեանց շարքի մը զոր սկսած էի գրել "Մարդիկ եւ Իրք" շարքը փակելէս յետոյ, "Հրահատ" ծածկանունով, Երևոյտնու շանդիսի մէջ: Կերկոյ գրութիւնն երեւցաւ Փայլագաշեանի Նուրիին մէջ:

քաղցրութեանց, բնութեան գրկին մէջ անցած այս հեշտազուարճ կենաց, ու դեռ գեղեցիկ եղանակը բոլորովին չսահած, դեռ սուխակները բոլորովին չլուծած, դեռ ծառերն իրենց տերեւներէն չմերկացած, երթան փակուել դասարանի պատերուն մէջ եւ՝ գրասեղանաց վրայ ծռեն իրենց գլուխը: Եւ անտարակոյս պէտք է որ ուսանողք այս զոհն ընեն, ու շատեր սիրայօժար ձեռք կ'առնուն վերստին դպրոցական կեանքն, ուսումն ու դասերն. վասն զի կեանքը չի կրնար յարատեւ զբօսուիլ մ'ըլլալ, եւ վասն զի ամէն հասակի համար կան լուրջ պարտականութիւնք զորս հարկ անհրաժեշտ է կատարել. մանուկն ու պատանին օր մը պիտի լինին մարդ, անդամ իրենց ազգին, քաղաքացի իրենց երկրին, մարդկային ընկերութեան մի գործող տարրն, եւ պարտին պատրաստուիլ կանխաւ այդ ապագայ կենաց, պարտին իրենց միտքն ու սիրտն ու կամքը մարդել հրահանգել որ օր մը կարող լինին ըմբռնել, սիրել ու գործադրել ինչ որ օգտակար ու բարի է եւ ծառայել իրենց ընտանեաց, ազգին ու երկրին:

Բայց խնդիր է թէ մեր դպրոցաց մեծագոյն մասին համար կ'արժէ՞ որ մանուկներն ընեն այն զոհն որոյ վրայ կը խօսէինք, թէ լուսագոյն չէ՞ արդեօք որ մեր շատ դպրոցաց աշակերտք պարտին ազատ օրի մէջ ու զինքեանս յանձնեն մի միայն բնութեան առաջնորդութեան քան երթան խոնիր այն յարկերուն տակ որոց դպրոց անունը կուտամք եւ որք մանկտին մտաւորապէս, բարոյապէս ու ֆիզիքապէս հաշմելու մանաւանդ կը ծառայեն: Դպրոցաց վերամուտի այս եղանակին առթիւ կրթական խնդիրն է որ ինքնաբերաբար կը ներկայանայ խորհող մտքերու եւ կը ներշնչէ խորհրդածութիւններ մեր ազգային դաստիարակութեան ընդհանուր վիճակին վրայ: Դաստիարակութեան գործն անտարակոյս ազգի մը ամենէն կենսական գործերէն մին է, այն որ ամենէն աւելի կ'ազդէ ժողովրդեան մը ճակատագրաց վրայ: Բայց այդ գործոյն բարւոք եւ արդիւնաւոր ուղղութիւնն սերտիւ կապուած է գործողներու ձեռնհասութեան եւ գործելու կերպին հետ, եւ տեսնենք թէ կրթական գործիչք առ մեզ ընդհանրապէս կը գտնուին իրենց ստանձնած դերին բարձրութեան մէջ եւ հետեւաբար կրցած են կազմակերպել մեր կրթական գործն այնպէս որ ներքելի լինի մեզ սպասել անտի բաղձացեալ արդիւնքն, այն է լուսամիտ եւ ազ-

նուստրա սերունդ մ'որ իւր պարտուց դիտակցութիւնն ունենայ եւ բարի կամեցողութիւնն զայն կատարելու:

Մեր կրթական գործիչներն են մեր ուսուցիչք, մեր հոգաբարձութիւնք եւ մեր գաւառական ու կեդրոնական ուսումնական խորհուրդք: Յայտնի է որ մենք ցարդ չեմք ունեցած վարժապետական դպրոց մ'որ քիչ շատ բարձրագոյն կրթութեան մը հետ դաստիարակելու եւ ուսուցանելու արուեստն աւանդէ եւ ընծայէ Ազգին կրթական գործոյն համար լաւ պատրաստեալ անձեր, եւ ոչ ալ փոյթ ունեցած եմք գէթ ամէն տարի մէկ երկու ուշիմ պատանիներ ընտրանաւ յղել եւրոպական լուսաւորութեան կեդրոններն իբրեւ ուսուցիչ պատրաստուելու համար: Մեր բոլոր ուսուցիչք — Թուրքիոյ Հայոց վրայ կը խօսիմ, յայտնի է — նախնական ուսում մը չին ըրած արուեստին զոր ի գործ դնել ձեռնարկած են, եւ բազումք բախտին բերմամբ կամ ապրելու հարկէն ստիպեալ մտած են կրթական ասպարիզի մէջ: Անշուշտ ունիմք դաստիարակի կոչում եւ ուսուցանելու բնածին տենչ ունեցող վարժապետներ. ունիմք եւ այնպիսիներ որք առանց վարժապետական դպրոցի մը շրջանն ըրած ըլլալու՝ քաջահմուտ են մանկավարժական սկզբանց, առանձինն մշակած լինելով նշանաւոր հեղինակաց մէջ դաստիարակութեան գիտութիւնն: Նոքա կը ճանչեն Ռուսոն, Բէտդալոցցին ու Ֆոլէօպէլն. նոքա ուսումնասիրած են Ալեքսանդր Պէտլ, Հերպերդ Սբէնսէրն, Հերպարդն եւ ուրիշներ: Բայց այսպիսիք հազուագիւտ բացառութիւններ են, իսկ վարժապետի անուն կրող անձանց յոյժ մեծագոյն մասն առ մեզ անգէտ է մանկան հոգեբանութեան, մտաց եւ սրտի զարգացման օրինաց, եւ հնաւանդ եզանակաց կամ իւր քմահաճոյից միայն կը հետեւի կոյր զկուրայն: Սորա վրայ պէտք է յաւելուլ եւ այս թէ մեր ուսուցչաց շատերն ինքնին յոյժ անկատար ծանօթութիւն մ'ունին այն առարկայից զորս ուսուցանել կոչուած են: Գժուար չէ այսպիսիներ տեսնել նոյն իսկ մայրաքաղաքիս դպրոցաց մէջ, իսկ ի գաւառս նոցա թիւն անշուշտ աւելի մեծ է: Երբ մեր ազգային ուսուցչական մարմինն կազմուած է ընդհանրապէս այսօրինակ տարրներէ, բնականաբար ձեռք բերուած արդիւնքն կը լինի դոյշն ինչ կամ ոչինչ, եւ յաճախ նոյն իսկ ժխտական, վասն զի դաստիարակ մ'որ չի ճանչեր մանկան հոգին, որ հոգեբանական ու

բնախօսական օրինաց վրայ չունի գաղափար, որ չի գիտեր թէ միայն ինչպէս կարող կը լինի ըմբռնել, զգայնութիւնն ինչպէս ազնուանալ, կամքն ինչպէս կազմուիլ ու զօրանալ, կը խամրէ կ'սպաննէ իրեն յանձնուած մատաղ իմացականութիւնն, կը տանջէ ու կը խեղդէ այդ հոգին, հրէշ մը կ'ընէ զայն որ հրեշտակ մ'էր անմեղ: Թոռի կրթութեան մը ներքեւ միտքը՝ փոխանակ լուսաւորուելու՝ նախապաշարմանց մշուշովը կը մթանայ, փոխանակ սրելու իւր գիտելու եւ դատելու կարողութիւն՝ կ'ապշի ու կը բթանայ, եւ տգէտ ուսուցչաց քով մանկութեան թանկագին ժամերը կ'սպառին ընդունայն՝ փոխանակ յաջող ու երջանիկ ապագայ մը պատրաստելու միջոց լինելու: Ո՞վ կարող է ըսել թէ ընդհանրապէս մեր վարժարանաց արտադրած արդիւնք լաւագոյն են քան զայս: Ցարուէ տարի քանի՞ պատանիք դուրս կ'ելնեն մեր վարժարաններէն որ ուսած լինին գեթ բարոյական ճշմարիտ ու առողջ սկզբունքներ, որք կարող լինին բաւական մաքրութեամբ խօսիլ եւ գրել իրենց մայրենի լեզուն, որք հաշուական խնդիր մը յաջողակութեամբ լուծեն, որք իրաց եւ մարդոց եւ բնութեան օրինաց վրայ ստացած լինին գոնէ ամէն մարդկային էակի անհրաժեշտ ծանօթութիւնքն: Սոցա թիւն այնքան քիչ է որ մեր Ազգի ուսանողաց ընդհանուր թուոյն հետ բաղդատելով կրնամք ըսել թէ ոչինչ է: Չեմք հաշուեր անհատական նախաձեռնութեան եւ ճգանց արդիւնք մէկ երկու մասնաւոր հաստատութեանց պտուղներն որք որչափ եւ բերկրառիթ՝ չեն կարող ընդհանուր ամլութիւնը դարմանել: Թերուս, անուս, ուսած չլինելէ զատ ուսանելու կարողութիւնն ու իղձն ալ կորուսած, անառջնորդ՝ մանաւանդ թէ վատթար օրինակներու ներգործութեան տակ մոլորած ապականած խղճով, այսպէս հարիւրաւոր պատանիներ ամէն տարի կը թողուն դպրոցական գրասեղաններն ու կ'իյնան մեր ընկերութեան ծոցը:

Սակայն այս տխուր վիճակին պատասխանատու միայն ուսուցիչները չեն, մանաւանդ թէ առաջին պատասխանատուք նոքա չեն: Կրթական իշխանութիւնք անտարակոյս ունին մեծագոյն բաժինը պատասխանատուութեան, նոքա որք կ'ընտրեն ու կը կարգեն ուսուցիչներն, նոքա որք կրթական ծրագրեր կը յօրինեն կամ նոցա գործադրութեան կը հսկեն, նոքա վերջապէս որք կը վարեն

եւ կ'ուղղեն մեր տոհմային կրթութիւնը, Հոգաբարձութիւնը եւ Ուսումնական խորհուրդը: Հոգաբարձութիւնը, որոց կը յանձնուի թաղերու մէջ վարժարանաց տեսչութիւնն, ճշ ապաքէն մեծաւ մասամբ կը կազմուին կրթութեան գործոյն անհմուտ եւ յաճախ ազէտ անձերէ: Գէթ իրենց պաշտօնն սահմանափակուէր ելեւմտից վրայ հսկելու, հասոյթները գանձելու եւ ամսականները վճարելու մէջ, ո՛չ. այդպիսի անձկացում մ'իւրեանց պաշտօնին եւ իրաւասութեան խորապէս պիտի վիրաւորէր իրենց անձնասիրութիւն, զինքեանս ծառայներն պիտի համարէին վարժապետաց, ինչ որ ընկերական կարգի անօրինակ յեղաշրջում մը պիտի թուէր իրենց: Պէտք է որ ինքեանք, թէ եւ ազէտ, դատաստան ընեն վարժապետին կարողութեան կամ անկարողութեան վրայ, ընտրեն ու հրաժարեցնեն դասատուները, իրենց ներկայութեան կոչեն զանոնք՝ մերթ հրահանգ ու պատուէր տալու եւ մերթ եւս սաստելու համար զնոսա: Անձնական նկատումներ, քմահաճոյք ու կիրք մեծ դեր կը խաղան մեր Հոգաբարձուաց ըրած ընտրութեանցն ու հրաժարեցումանց մէջ. յաչս իրենց՝ շողջորթելու եւ իւր ողնայարը ծռելու առաւել վարժ ուսուցիչ մ'ունի յայտնապէս առաւել արժանիք, եւ զի կարելի եղածին չափ աժան վճարել ու աժանը նախընտրել այն սկզբունքն է որուն կը հետեւին ընդհանրապէս այդ կարգի անձինք, երկու ընտրելիներու մէջէ այն ունի յաջողութեան առաւել հաւանականութիւն նոցա քով որ կը պահանջէ համեստագոյն վարձք: Ուրեք ուրեք կան թէ եւ հաստատուած տեսուչներ, դասատու կամ ուսեալ ո՛ր եւ է մի անձ, բայց Հոգաբարձութիւնը զգուշացած են միշտ գործելու քիչ շատ ընդարձակ ազատութիւն մը թողուլ կարգեալ տեսչին, ինչ որ իրենց մտքը նուստութիւն մը պիտի լինէր իրենց եւ Ազգին բարերարները լինելու օրինաւոր պարծանքն յափշտակէր իրենցմէ. ուստի տեսուչն առ առաւելն Հոգաբարձութեան ներկայացուցիչն է դպրոցին մէջ եւ նոցա վճիռները գործադրող հըլու պաշտօնեայն. մերթ «տեսուչ» անունն ալ կրնայ զլացուիլ իրեն, բաւական համարուելով «կարգապահ» անունն, առ ահի զի մի գուցէ մեծագոյն մասնակցութիւն մ'ենթադրել տայ այդ բառ դպրոցական վարչութեան մէջ: Թերեւս ո՛չ մի մարմին մեր Հոգաբարձութեանց չափ նախանձախնդիր եղած է իւր պատուոյն եւ իրաւա-

սութեան: Հետեւարարնորս վերջնականապէս կը վճռեն Ուսմանց ծրագրի խնդիրներ ալ եւ կ'որոշեն աւանդելի առարկայից տեսակն ու չափը՝ հեգնական ծիծաղ մ'արձակելով Ուսուցիչական խորհրդոյ վրայ որ ծրագրեր ու կանոններ կը հրամայէ, բայց գործադրութեան մէջ դնել տալու յոժէն կը պակասի: Այսպիսի պայմանաց մէջ ապիկար ուսուցիչներ կարողներու տեղը կը գրաւեն, լաւերը կը վհատին ու ամէն վայրկեան ասպարիզէն խոյս տալ կը խորհին, ի չգոյէ նախաձեռնութեան եւ գործելու ազատութեան՝ ընտիրք իսկ անկարող կը լինին յառաջ մերել բովանդակ այն արդիւնքն որուն կարող են, եւ վարժապետական դասուն վրայ կը ծանրանայ նուաստութեան լուծը որ թէ եւ՛ բաղդատմամբ այն անարգութեան ուր ինկած էր վարժապետն ամիրայական ժամանակի մէջ՝ նուազ ստրկական, այլ ոչ նուազ նախատալի է եւ ոչ առաւել յարմար յաւելցնելու ուսուցչական պաշտօնի հրապոյրն եւ ի յառաջդիմութիւն դրդելու: Բայց ամէնն այս չէ. ականատես եղած ես գուցէ, սիրելի ընթերցող, այն տխուր տեսարանին զոր մեր թաղային դպրոցաց վարժապետք կը ներկայացնեն բազում ուրեք Հոգաբարձութեանց կամ Թաղական Խորհրդոց սենեակներու դրանցն առջեւ կիւրակէ օրերը: Կարգաւ շարուած կեցած են հէք ուսուցիչք ու կ'սպասեն ժամերով որ հաճոյ թուի Ազգին դրամը գործածող աղաներուն ներս կոչել զիրենք ու պատասխան մը տալ. երանի է իրենց եթէ յաջողին հուսկ ուրեմն փոքրիկ գումար մը խլել յետեւալ ամսականներէ, բայց յաճախ այդ ընդերկար ակնկալեալ պատասխանն է գոռոզ ու բարկացեալ ձայնով մ'արտասանուած սա խօսքն. «Հիմայ ստակ չունինք, պէտք է սպասել»: Ու նոցա կինն ու զաւակները կամ մայրն ու քոյրը թերեւս նօթի կ'սպասեն այն ժամուն որ հաց բերեն նորս: Կարծես թէ շատ Հոգաբարձուներ մասնաւոր հաճոյք մը կ'զգան ուսուցիչը թշուառ տեսնելով: Գեռ անցեալ օր հարուստ թաղի մը դպրոցաց Հոգաբարձութիւնն պէտք ունենալով ուսուցչի, բազմաթիւ ներկայացեալներու մէջէ կ'ընտրէ մին՝ կարողագոյնն, պայմանաւ որ ամէն օր առաւօտէ ցերեկոյ պիտի մնայ վարժարանին մէջ. Թոշակ. — հակառակ թախանձանացն ուսուցչին չի յօժարիր վճարել ամսաթոշակ 300 դահեկանէ աւելի, եւ այդ ուսուցիչն ծեր հայր ու կին ու զաւակ ունի սնու-

ցանելու: Իրաւունք չունի՞ հազար անգամ անիծելու այն օրն յորում իւր ոտքը դրած էր այդ ասպարիզի մէջ: Այս անգթութեան պատճառն ուրեմն միշտ ստակի չգոյութիւնն չէ, եւ ուր որ ստակ չկայ իրօք՝ կամ հարկ է փակել վարժարաններն եւ կամ ստեղծել գտնել կարեւոր գումարն քան այդպիսի յուսահատական թշուառ վիճակի մղել զանոնք որոց կը յանձնեմք մեր զաւակները կրթելու հոգը: Ամօթալի երեւոյթ է անշուշտ ազգի մը համար եւ վհատեցուցիչ նորա ասպագային համար որ վարժապետին նիւթական կացութիւն կօշիկ ներկողի մը վիճակէն աւելի ստորին ըլլայ:

Իսկ Ուսումնական Խորհուրդք ի՞նչպէս կը կատարեն իրենց վերին հսկողութեան եւ ուղղութեան պարտականութիւնն: — Գաւառական Ուսումնական Խորհուրդք, որ առաջնորդանիստ քաղաքին վարժարանաց տեսչութիւնը կը վարեն միանգամայն, նոյն վիճակին մէջ են յորում կեդրոնի Հոգաբարձութիւնք կը գտնուին. լաւագոյններէն մին պէտք է լինի Չմիւռնիոյ Ուսումնական Խորհուրդն, որ սակայն՝ հակառակութեան ոգիէ առաջնորդուած՝ առաջին գործ կ'ընէ իրեն պաշտօնանկ ընել Մամուրեանի նման Տնօրէն-Ուսուցիչ մ'որ Չմիւռնիոյ վարժարանաց փառքն էր եւ քսանամեայ բազմարդիւն պաշտօնավարութեամբն ու կրթած սերունդներով իրաւունք ստացած իւր հայրենակցաց երախտագիտութեան վրայ: Մեր ուսանող մանկուոյն շահերն եւ մեր ուսուցչաց կացութիւնն ամենուրեք այսպէս առաջին եկողին քմահաճութեանն ու կրից մատնուած են, ամենուրեք գրեթէ կրթական գործոյն վարչութիւնն՝ ինկած այնպիսի ձեռքերու մէջ որք աւելի քանգելու յարմարութիւն ունին քան շինելու. Թողունք որ ի գաւառս շատ ստեղծու մէջ ոչ Ուսումնական Խորհուրդ կայ, ոչ հոգաբարձութիւն եւ ոչ իսկ դպրոց: Միացեալ ընկերութեանց ջանքերն առ այս կարի անբաւական են: Կեդրոնական կրթական վարչութիւնն ի՞նչ դարման կը խորհի իրաց այս աննախանձելի կացութեան, ի՞նչ կը խորհի եւ ի՞նչ կը գործէ այս անկերպարան վիճակն կազմակերպելու, այսքան բարձրագոյն ու կենսական շահեր փրկելու համար կոյր դիպուածին ձեռքէն որու մատնուած են: — Գրեթէ ոչինչ ապաքէն մեր կեդրոնական Ուսումնական Խորհուրդն կը խլրտի, շարժման նշաններ ցոյց կու տայ, ուսումնական ծրագիր կը շինէ:

կ'աւրէ ու նորէն կը շինէ, դասատուաց կարգ ու վկայագիր կը
 բաշխէ, ներքին կանոնագիր կը խմբագրէ որոյ մէջ պաշտօնէից
 պարտաւորութիւնները նշանակած ատեն նոցա իրաւունքները կը
 մոռնայ, դասագրքեր կը վաւերէ ու հեղինակները քաջալերելու
 համար տուրք կը դնէ նոցա վրայ, մրցանակ ու պսակ կը յղէ այն
 դպրոցներն ուր իւր անդամներէն մին հոգաբարձու է, արտասա-
 նական բարեկարգութեան կը ձեռնարկէ ու կաճառ կը կազմա-
 կերպէ, բայց այս ամէն շարժմունք չեն արգիլեր ու չպիտի
 արգիլեն մեր վարժարանաց անկանոն եւ ամուլ ընթացքն. այդ
 շարժմունք կը թուին նպատակ ունենալ առաւել խօսիլ տալ
 Ուսումնական Խորհրդոյ վրայ քան ձգտիլ կրթական լուրջ բարե-
 կարգութեան մը, առաւել վկայագրոց մէջ ու գրքերու ճակատն
 հետք մը ձգել իւր իշխանութեան օրերուն քան հաստատուն
 հիմ' մ'ազգային դաստիարակութեան, եւ արդէն ըստ ինքեան
 թերի, կողմնակցական, հակասական ու երբեմն վնասակար իսկ են
 եւ չեն յայաներ ազգային դաստիարակութեան խնդիրն հիմնովին
 ուսումնասիրող ու նորա պահանջմանց թափանցող ձեռնհաս
 վարչութիւն մը: Ի՛նչ, ի՛նչ աւելի կարելի է սպասել մի կեդրո-
 նական վարչութեան Ուսումնական Խորհուրդէ ուր ո՛չ մի վար-
 ժապետ կայ անդամ՝ թէպէտ ամէն արհեստի վերաբերող
 անձինք կան: Այո՛, մեք այսպէս եմք, կ'ուզեմք որ հիւանդանոցի
 հոգաբարձութեան մէջ բժիշկ չլինի եւ Ուսումնական Խորհրդոյ
 մէջ ուսուցիչ չլինի. միշտ նոյն խուլ նախանձն ու ատելութիւնն
 ընդդէմ ձեռնհասութեան: Ի՞նչ օգուտ հատուկտիր հրահանգ-
 ներէ եւ կանոններէ՝ երբ կրթական ընդհանուր Օրէնք մը կը
 պակսի որ որոշէ մեր կրթութեան ընդհանուր ուղղութիւնը,
 որոշէ մեր վարժարանաց տեսակներն ու աստիճաններն ու անոնց
 հիմնարկութեան ու մատակարարութեան պայմաններն, որ ճշդէ
 կրթական պաշտօնէից ընդունելութեան, պաշտօնավարութեան,
 յառաջացման, ընտրութեան եւ հրաժարման պարագայներն, որ
 հասութի որոշ աղբիւրներ սահմանէ, որ ուսուցչաց, տեսչաց,
 հոգաբարձութեանց եւ Ուսումնական Խորհրդոց փոխադարձ
 առնչութիւնքն, պարտքն ու իրաւունքն ճշգրտէ: Ի՞նչ օգուտ
 տարին անգամ մը նորոգեալ եւ սրբագրեալ ուսմանց ծրագիր-
 ներէ՝ երբ զսյն գործադրող ուսուցիչներ ու մանկավարժներ կը

պակսին, երբ մանկավարժական սկզբանց համեմատ պատրաստեալ դասագրքեր այնքան քիչ են առ մեզ, երբ դեռ մեր մէջ ընդհանրապէս կը տիրէ սովորեցնելու համար բառ առ բառ ի բերան ուսանել տալու տխմար դրութիւնն, եւ դաստիարակելու համար դեռ գաւազան եւ ծեծ անհրաժեշտ գործիներ համարուած են շատ տեղ: Կէտք է որ Ուսումնական խորհուրդք փոյթ ունենան նախ քան զամենայն օժտելու զԱզգն ազգային կրթական օրէնքով մ'որ՝ ձեռնհաս ժողովէն վաւերացեալ՝ պարտաւորիչ լինի ամենուն համար եւ ապագայ յառաջդիմութեանց եւ բարեկարգութեանց շահիդ գծէ. կէտք է որ փոյթ ունենան Ազգին մէջ հաստատել տալու վարժապետական ընտիր դպրոց մը՝ որ չի կրնար ըլլալ անշուշտ Ղալաթիոյ Աեդրոնական վարժարանն որոյ անորոշ է բնութիւնն, կէտք է որ մանկավարժական թերթ մը հիմնեն իրենց առաջնորդութեան տակ, ձեռնհաս ուսուցիչներէ խմբագրեալ՝ իբրեւ ուղեցոյց ծառայելու համար այլոց. կէտք է որ վարժապետական ժողովներ ու գումարումներ սահմանեն գէթ տարին միանգամ՝ միջոց հայթայթելու համար ուսուցչաց կարծեաց փոխանակութիւններ ընելու եւ կրթական սկզբանց ու մեթոտներու վրայ զերար լուսաւորելու. կէտք է որ պիտանի դասագրոց յօրինման համար նախաձեռնութիւն ստանձնեն եւ վարձք ու միջանակ խոստանալով՝ խմբագրել տան կարողներու. կէտք է որ մատնանիշ ընեն Ազգին այն մութ կէտերն ուր վարժոց կը պակասին եւ կրթասիրական շարժման մը գլուխն անցնելով՝ ընեն որ ոչ ուրեք հայ մանուկը զուրկ մնայ լոյսէ. վերջապէս կէտք է որ վարժապետութեան յետին անդամը նօթութենէ ու անարգութենէ փրկելու հնարք խորհին ու ի գործ դնել ջանան: Ահա՛ այն ատեն Ուսումնական խորհրդոց գործունեութիւնը կը պատասխանէ բարձրութեան պաշտամանն զոր ստանձնած են, եւ, աստիճանաբար ստորագասեալ մարմնոց գործունեութիւն եւս բարւոքուելով, մեր ազգային ընդհանուր դաստիարակութեան գործն կը ստանայ տակաւ օրինաւոր կազմակերպութիւն եւ իրապէս օգտակար ու յառաջադէմ ուղղութիւն, եւ դպրոցաց վերամուտի եղանակն կը լինի առ հասարակ եւ ճշմարտապէս յուսարժարժ տօնելի ժամանակ:

(Ժաղիկ, Թիւ 1, 1890.)

3. ՄԱՆԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՋՄՈՎԵՐԳՈՒԹԻՒՆ ՆՈՒՍԿԱՎՐՈՒԹՅԱՆ

(Ուսուցչական ժողովի մէջ խօսուած, 1892 Օգոստոս 18.)

Ցեւորք պաշտօնակիցք,

Անցեալ նստին մէջ խօսք առնելով Օրակարգի առաջին խնդրոյն¹ վրայ, նախ դժբախտաբար պարտաւոր կը զգայի ինքզինքս հաստատելու թէ մեր նախակրթարանք ընդհանրապէս ապարդիւն վիճակ մ'ունեցած են ցարդ: Ոչ թէ մեր նախակրթարաններէն չեն ելած զանազան ժամանակաց մէջ անհասներ որք իրենց կրթութեամբն յարգելի անձնաւորութիւններ եղած ըլլան, եւ այնպիսիներ ալ որք պատուաւոր տեղ մը գրաւած լինին մինչեւ իսկ մտային առաւել կամ նուազ բարձր զարգացում մը պահանջող ասպարէզներու մէջ, որպիսիք են խմբագրական, գրագիտական, ուսուցչական ասպարէզներն ու պետական պաշտօններն: Ոչ. այսպիսիներ ունեցած եմք եւ ունիմք, այս անուրանալի է. բայց անուրանալի է նաեւ թէ կրթական դրութեան մը կամ հաստատութեան մ'արդիւնաւորութիւնն իւր կազմած սերնդեան ամենամեծ մասին կրթութեան աստիճանովը պէտք է չափել ու դատել, եւ ոչ թէ սակաւաթիւ անհատից միայն որք, բացառիկ կարողութիւններով օժտեալ, կրնային միշտ զարգացման աստիճանի մը հասնիլ՝ հակառակ աննպաստ պարագայներու անգամ: Եւ գիտեմք որ մեր մէջ մատերու վրայ կը հաշուին անոնք որք գոհացուցիչ կրթութիւն մը կը պարտին լոկ իրենց թաղին ժողովրդական դպրոցին: Իսկ ի՞նչ կը լինի մեծագոյն մասն մեր թաղային վարժարաններէ ելնողներուն: — Ցոյց կուտայի անցեալ օր. մեծաւ մասամբ կատարելապէս տգէտ են նորա: Թաղին դպրոցէն ելնելէ յետոյ շուկայ կամ արհեստի մտնողներուն շատերը հազիւ պարզ կարգալ, գրել ու հաշուել մը գիտեն. անկարող են ըմբռնելու իրենց կարգացածը, իրենց միտքը խօսքով ու գրով ուղիղ բացատրելու, անտալ ուղղագրելու, բնական ու ընկերային աշխարհաց երեւոյթներն հաս-

¹ Այս խնդիրն էր «Մեր նախակրթարանաց արդի վիճակն արդիւնաւոր եղած է եւ եթէ ոչ՝ ի՞նչ նոր կազմակերպութիւն հարկաւոր է?»

կնալու: Կան որ քիչ շատ քերականութիւն ուսած էին, քիչ մը պատմութիւն ու քիչ մ'ալ աշխարհագրութիւն տեսած, եւ գաղիերէնի ու թրքերէնի ալ դաս առած. բայց այդ դասեր, անյարիր, թերի, տարտամ ու գէշ մարտած, կը մոռցուին անվրէպ, եւ ալ ընդհուպ ոչինչ գիտեն անոնցմէ: Այս յայտնի է որ լաւագոյններն ու ընթացաւարտ ըսուածներն իսկ գրեթէ հիմնովին անտեղեակ են բնական գիտութեանց տարերց, որով զուրկ են կենաց անհրաժեշտ պիտանեգոյն ծանօթութիւններէ, եւ որով այսօր դպրոցէն ելնելով երկրագործական կամ ձեռագործական արհեստի մէջ մտնող պատանին այնքան քիչ օգուակրնայ ստանալ իւր գործին համար դպրոցին մէջ իւր սովորածէն որքան ասկէ 30—40 տարի յառաջ արար գացող կամ արհեստաւորի քով մտնող տղան: Դպրոցական մարմնամարզիկ հրահանգաց ընդհանրապէս դեռ ոչինչ կը պարտի մեր տղայոց մարմնական կորույթ, առողջութիւնն, եւ ոչ ալ ծանօթութիւնն ստացած են բնախօսական ու առողջապահական օրինաց, որպէս զի գիտնան ճանշել կեանքն եւ անոր պահպանման ու զարգացման պայմաններն: Իսկ ամենէն աւելի ցաւալի է իրենց բարոյական կրթութեան վիճակը: “Նախնական” կամ “կրթական” քրիստոնէականի դասագրքի մը մէջէն բանաձեւեալ պատասխաններ բերնուց ուսած են թէեւ, ամէնքն ալ վերջին քննութեան հետեւեալ օրը մոռցուելու սահմանուած, բայց իրօք ոչինչ հասկցած են կրօնքին ոգիէն, անոր բարոյականէն, չունին գիտակցութիւն կեանքի պարտականութեանց, եւ զուրկ են բարոյական որոշ սկզբունքներէ որք առաջնորդեն զիրենք իրենց ապագայ կեանքին մէջ. հոն կը նետուին անտաշ զգացումներով, խաւար խղճմտանքով: Պէտք է յաւելուլ թէ մեր նախակրթարանաց արտադրած սերունդն մեծաւ մասամբ անկարող է դպրոցէն դուրս ինքնին զարգանալու, վասն զի ոչ միայն առ այդ հարկաւոր նախնական ծանօթութեանց գումարը կը պակսի իրեն, այլ եւ ինքնին ի չգոյէ բաւական սնունդի ու յարմարագոյն մարզանաց, իւր իմացական կարողութիւնք, ուշ դնելու, գիտելու, բաղդատելու, դատելու, իմաստասիրելու, հնարելու, բացատրելու կարողութիւնք գրեթէ սաղմնային վիճակի մէջ մնացած են կամ թէ բթացած բոլորովին:

Ազգային նախակրթարանաց այս ընդհանրապէս բացասական արդիւնքը պարզելէ յետոյ, դիտել տուի թէ պատճառը ոչ դրամի, դրամական զոհողութեան պակասութիւնն է, քանի որ Ազգը միայն մայրաքաղաքիս թաղային վարժարանաց համար մէկ միլիոն զրուէն աւելի ասարեկան ծախք մը կ'ընէ, եւ ոչ ալ ուսուցչաց թուոյն նուազութիւնը, քանի որ այդ թիւ օրէ օր շատնալու վըայ է եւ քանի որ մեր նախակրթարանք 5էն մինչեւ 15—20 պաշտօնեայներ ունին, մինչդեռ Եւրոպացիք 5—6 ուսուցիչներով նշանաւոր քաղաքային նախակրթարաններ կը վարեն, այլ այն թէ մեր նախակրթութեան կազմակերպութիւնն է հիմնովին թերի, կամ թէ դեռ, բառին իսկական նշանակութեամբ, չէ հասկցուած մեր մէջ նախնական կրթութեան բուն նշանակութիւնը, նորա նպատակը, ու զայն իրագործելու համար մանկավարժական հիմ ու յօրինուած չեմք տուած մեր դպրոցաց: Գեռ, անգէտ այդ նպատակին, որ է մանկան ֆիզիքական, իմացական ու բարոյական կարողութեանց ներդաշնակ զարգացումն ու կենսըի պատրաստութեան անհրաժեշտ ծանօթութեանց աւանդումն, մեր նախակրթական ամենէն զարգացեալ ծրագրոց մէջ իսկ զանց ըրած եմք շատ տեղ մարոյագիտութեան, առողջաբանութեան, բնական գիտութեանց, մարմնամարզի ու երգի նման կարևորագոյն ու կենսական ճիւղեր: Գեռ մեր նախակրթարանք զուրկ են առհասարակ ճշմարիտ մանկավարժ ուսուցիչներէ, դաստիարակներէ (instituteur), որպէս կը հասկնան այս բառը Եւրոպացիք, այն է տղուն բոլորամասնեայ դաստիարակութեան գործին կարող ու պատասխանատու, կոչմամբ յայդ գործ ծնեալ ու մասնաւոր կրթութեամբ ի դոյն պատրաստեալ վարժապետներէ, սիրոյն ուսմանց այս կամ այն ճիւղին աւանդումը միայն ստանձնող ուսուցչացն, որք մէկ նախակրթարանէն միւսը կը վազեն հետհետ, եւ որոց ոչ մին, բայց ոչ մին, ինքզինք պատասխանատու կը համարի իւր աշակերտաց, իբրեւ բարոյական էակներու, զարգացման ու շինման գործին: Ասոնցմէ զատ, մեր մէջ, նոյն իսկ նախակրթական ծրագրի բաժանումը, նիւթոց աւանդման կարգն ու չափը, ուսմանց տեւողութիւնը, աշակերտաց դասաւորումը, ժամանակի գործածութիւնը, ուսուցչաց մէջ աշխատութեան բաշխումը կէտեր են որք չեն կարգադրուած իմաստուն մանկա-

վարժութեան մ'սկզբանց համաձայն, ո՛չ ալ իմաստուն տնտեսութեան մը, եւ ո՛չ ալ հիմնապէս նոյն մի ընդհանուր տիպի, յորմէ յառաջ կու գայ ընդհանրապէս անօգուտ սպառումն մեր դրամներուն, մեր ուսուցչաց եւ հոգաբարձուաց գործունէութեան, մեր տղայոց թանկագին տարիներուն:

Ի բաց թողլով ծրագրի պարունակութեան ու մանկավարժական մարմնոյն կազմութեան խնդիրներն, որք մասնաւորապէս Օրակարգի երկրորդ ու երրորդ խնդիրներուն վիճաբանութեան մէջ պիտի գտնեն իրենց տեղը, անցեալ անգամ¹ խօսքս ամփոփեցի այս վերջին կէտերուն վրայ, որք բուն նախակրթարանաց կազմակերպութեան խնդիրը կը կազմեն: Բացատրեցի թէ այս կէտերու կարգադրութեան մասին բնաւ օգուտ չեմք քաղած մանկավարժական փտութեան ու փորձառութեան դասերէն եւ եւրոպական ազգերու օրինակէն: — Նախակրթական դպրոցին ծրագիրը մեր մէջ ի նկատ չառնուր սա՛ հոգեբանական իրողութիւնը թէ տղայութեան հասակին մէջ մէկ երկու տարիներու տարբերութիւնը մեծ տարբերութիւն յառաջ կը բերէ մտաց ըմբռնման աստիճանին մէջ, եւ ըստ այդմ, աշակերտներն իրենց տարիքին համեմատ մի քանի խումբերու բաժնելով, անոնց մտաւոր զարգացման չափին համեմատութեամբ չի սահմաներ պատշաճ կրթութեան աստիճան մը: Մեծերուն ու փոքրերուն տարբերութիւնը, զոր օրինակ՝ հայ լեզուի դասին համար խօսելով, յայտն կը կայանայ որ մինչ առաջինք քերականութեան երկրորդ մասը, համաձայնութիւնը, կը կարգան, վերջինք դեռ խօսքին ութ կամ ինն մասանց մէջ են, բայց թէ՛ անոնք եւ թէ՛ ասոնք մի եւ նոյն կերպով կ'ուսանին, մի եւ նոյն բանաձեւեալ պատասխաններն ու վերացեալ սահմաններ հաւասարապէս ի բերան ուսանիլ կը տրուի ամենուն: Ո՛չ թէ իւրաքանչիւր հասակը, կամ նախակրթարանի իւրաքանչիւր հատուածն ունի իրեն պատշաճագոյն կրթութիւնը, այլ մի միակ կրթութիւն կայ որ յաջորդարար մաս առ մաս աւանդուելով պիտի ամբողջանայ 5—6 տարիներու մէջ: Բայց այս յայտնի է որ մտաց հասուրու-

¹ Նախորդ նստին մէջ առեւտրանութեան հեղինակը բերանացի խօսքով ներկայացուցած էր իր տեսութիւնները եւ ծօղոզը որոշած էր որ գրաւոր բերէ զանոնք յաջորդին, յորմէ այս վերագործներն անցեալին:

Թեան հետ չչափուած ուսում մ'անմարսելի կը մնայ ուղեղէն, ու ոչ միայն մտքին համար հմտութեան տարր մը չի լինիր, այլ եւ կը յոգնեցնէ ու կը տկարացնէ զայն: Ատոր հետեւանքն է անշուշտ որ մեր նախակրթարանաց մէջ յաճախ բարձրագոյն դասարանաց աշակերտք կ'անգիտանան այն բաները որք կ'ուսուցուին ստորին դասարանաց մէջ, — գրագիտութեան կանոններ դաս կ'առնուն՝ մինչ հոլովն ու խոնարհումը մոռցեր են, Ուկէանիան կ'ուսումնասիրեն մանրամասն՝ մինչ Եւրոպայի գետերն ու լեռներ վրիպեր են արդէն իրենց յիշողութենէն. այսպէս եւ այլ ճիւղերու մասին: Այս տխուր երեւոյթի մի այլ պատճառն այն է անշուշտ որ մեր դպրոցաց մէջ բաւական ուշագրութիւն չեմք դարձուցած այն սկզբունքին թէ սովորին է սովորիլ, կրկնել, եւ մեր ուսուցումը չունի կանոնաւոր վերադարձներ արդէն կարուած ճամբուն վրայ՝ զայն վերստին եւ այլ անգամ չգիտուած կէտերու վրայ աւելի ուշ դարձնելով ու կանգ առնելով կարելու համար: Կռեառ, Գաղիոյ Սէնի նահանգին նախակրթարանաց կաղմակերպողն, իւր «Մանկավարժական շրահանգաց եւ Ուղղութեանց» մէջ կ'ըսէ. «Նախնական ուսմանց համար մանաւանդ ըսուած է իրաւամբ որ կրկնութիւնը ուսմանց հոգին է:» Այդ կրկնութիւնն, այո՛, ամենակարեւոր է նախակրթութեան մէջ, որ կ'ուղղուի մանկան, ու մանուկը, գիտեմք, դեռ շատ կարող չէ գիտակցական ու կամաւոր աշխատութեան, մտքի յամառ ճգանց, եւ կրկնութիւնը կը դիւրե նմա ուսումը: Բայց առ մեզ ուսման ընթացքը, նոյն իսկ նախակրթարանի մէջ, տարուէ տարի կը շարունակէ իւր արշաւն առարկային մէկ մասէն ի միւսն առանց ետին նայելու, վասն զի եւ ծնողք եւ ուսուցիչք պարծանք մը կը համարին իրենց որ իրենց տղան, իրենց աշակերտը շուտ շուտ կարգ ու դասագիրք փոխէ: Մեր սովորութիւնն է ընդհանրապէս տղան, նախակրթարանի մինչեւ այս ինչ կարգը, անձանօթ պահել դպրոցական ծրագրի այս ինչ առարկային, եւ յետոյ օր մը յանկարծ դէմ առ դէմ դնել զայն անոր հետ: Օրինակի համար, այս ինչ տարին երկրաչափութիւն պիտի սկսի, այն ինչ տարին ալ բնագիտութիւն, եթէ պատահամբ այս ճիւղեր կը գտնուին ծրագրին մէջ. բայց ցայնվարդ տղան եւ ոչ իսկ անունը լսած է երկրաչափութեան եւ բնագիտութեան, եւ օր մը կ'ուզեն որ, անպատրաստ,

ձեռնարկէ սովորիլ այդ գիտութիւնները մեթոտիկ կերպով: Ի՞նչ դժուարութիւն. բնութիւնը ուստում չընել, եւ մենք կ'ուզենք որ աղան ահագին ուսուցման ընէ, անգիտանալով մանկավարժական այն օրէնքը թէ ուսուցման մէջ պէտք է երթալ անորոշէն (indéfini) յորոշն (défini), ի ճշդեալն:

Միտքը պէտք է որ փոքր առ փոքր վարժուի ընտանենայ մէն մի ուսման, քայլ առ քայլ ընթանայ, ոչինչ նոր ելնէ կանգնի յանկարծ իւր դիմաց, անզգալաբար կազմուի ու ընդլայնի շարունակ ծանօթութիւնը իւր մէջ, նախատարերքէն տարերաց ու ասոնցմէ աւելի ընդարձակին անցնի աստիճանաբար: Եւ առ այս ապա պէտք է նախակրթութեան առաջին աստիճանէն տալ մանկան նախակրթութեան աւանդելիք ամէն ծանօթութեանց առաջին տարերքն. պէտք է որ առաջին օրէն տղուն ստացած կրթութիւնն պիտանեգոյն ծանօթութեանց ամբողջութիւն մը ներկայացնէ, պատշաճեալ անշուշտ իւր մտաց հասողութեան, այլ արդէն ամբողջ մ'իւր մէջ: Այս ո՛չ միայն կարեւոր է աստիճանաբար պատրաստելու համար տղուն միտքն, այլ եւ անոր համար որ ուսմանց զանազան առարկայք յատուկ են մանաւանդ իմացական ու բարոյական այս կամ այն կարողութիւնները զարգացնելու, եւ առաջին օրէն դաստիարակութիւնը պարտի ըլլալ մարդուն կարողութեանց ամբողջական ու ներդաշնակ զարգացումը: Ի՞ր առաջին օրէն ու նախակրթարանին զանազան շրջաններուն մէջ շարունակ մանուկը չունենայ միանգամայն իր ընթերցման ու գրի ու գծագրութեան, լեզուի ու շարագրութեան, կրօնի ու բարոյականի, պատմութեան ու աշխարհագրութեան, թուաբանութեան ու երկրաչափութեան, բնապատմական ու բնագիտական ուսմանց, երգի ու մարմնամարզի դասերն, իր հասակին ու մտքին յառաջացման չափով աւանդման քանակին ու եղանակին մէջ փոփոխեալ ու զարգացած: Ո՞չ ապաքէն բնութիւնն ալ կամ ինք մանուկն այսպէս կը կրթէ զինքն. երբ դպրոցին սեմէն ներս կը մտնէ՝ նա իր հետ արդէն կը բերէ այս ամէն ճիւղերուն վերաբերեալ ծանօթութեանց պաշար մը, շատ փոքր, այո՛, այլ արդէն հանրագիտակ: Նա կը խօսի, ապա լեզուագէտ է իւր չափով. նա իր ու ընկերոջն հասակներն իրարու հետ կը չափէ, ապա չափագէտ է. նա կը զանազանէ գեղձը սալորէն, այծը ոչխարէն, ապա

բնական պատմութիւն գիտէ արդէն. նա կը բողբէ իր խաղաղիքն իր ձեռքէն յափշտակող տղուն դէմ, անիրաւ կը գտնէ զայն, ապա բարոյագէտ է արդէն. այսպէս դեռ գիտէ նա շատ մ'ուրիշ բաներ: Ճշմարիտ մանկավարժութիւնը կը կայանայ բնութեան եղանակաց ուշադիր ըլլալու եւ անոնցմէ օգտուելու մէջ. իսկ մեր նախակրթական սովորութիւնք չեն մատներ բնաւ այսպիսի ուշադրութիւն մը, այսպիսի հետեւողութիւն մը: — Մենք, մեր աղքատութեան շնայելով, շուայլ ալ ենք: Ըսի արդէն, մեր ինչ ինչ թաղային վարժարանաց մէջ շատ աւելի ուսուցիչ ունինք քան եւրոպական ազգք իրենց մայրաքաղաքի նախակրթարանաց մէջ: Աւելին կայ. մենք հինգ աշակերտի տասնեւհինգ դասատու կու տանք: Մեր նախակրթարանաց վերին կարգերն յաճախ 3էն մինչեւ 10 աշակերտ միայն կը պարունակեն. փոյթ չէ, պէտք է որ նոքա զատ զատ կարգեր կազմեն, թէ եւ իրօք մեծ տարբերութիւն մ'ալ չլինի նոցա մէջ հասակի ու հմտութեան մասին, եւ պէտք է որ առանձին դասարանի մէջ դաս առնուն, անոնց տրուին լաւագոյն ուսուցիչներն, անոնց վըայ վատնուի մեծագոյն մասն դպրոցական հաստութից. իսկ ստորին կարգերն, թէ եւ բազմութիւ, զոհուին անոնց, թողուին գրեթէ անխնամ: Ամէն ազգի մէջ ուր կազմակերպեալ ու օրինադրեալ է նախակրթութիւնը, ուսուցչաց թիւը կախում ունի ուսանողաց թուէն. մինչեւ սահմանեալ թիւ մը (50, 60 կամ աւելի՝ ըստ տեղւոյն) միայն մէկ ուսուցիչ կամ դաստիարակ կ'ունենայ նախնական վարժարանը, ու մէկ դասարան ու կը կոչուի «վարժարան մէկ ուսուցչով» (école à un instituteur), «վարժարան մէկ դասարանով» (école à une classe), թէ եւ միշտ կ'ունենայ իւր մէջ Ուսմանց Ծրագրին պահանջած բաժանումները, տարիները կամ դասընթացքները. միայն, միեւնոյն վարժապետը փոխ առ փոխ կը զբաղի մէն մի հատուածի հետ ու մի եւ նոյն ատեն կը զբաղեցնէ միւսներն: Երբ սահմանեալ թիւն անցնի, այն ատեն աշակերտք երկու դասարանաց կը բաժնուին, որոց իւրաքանչիւրը կ'ունենայ իր յատուկ ուսուցիչը. այն ատեն դպրոցը կ'առնու երկու ուսուցչով, երկու դասարանով վարժարանի (école à deux instituteurs, école à deux classes) ձեւը: Այսպէս, երբ այդ թիւն երկպատիկն անցնի, աշակերտք երեք դասարանաց կը բաժնուին, ու

դպրոցը կ'ունենայ երեք ուսուցիչ. եւ այդ համեմատութեամբ, բազմամարդ թաղերու մէջ, կրնան ըլլալ նախակրթարանք չորս, հինգ, վեց եւ աւելի դասարաններով եւ ուսուցիչներով, վեցէն անդին յաւելեալ դասարանք ընդհանրապէս լինելով «համընթաց դասարաններ» (classes parallèles) որք ամենէն աւելի բազմաթիւ կարգաց ծանրութիւնը թեթեւցնելու միայն կը ծառայեն, իսկ գործադրեալ ծրագրով յար եւ նման են անոնց: Այս իմաստուն տնօրինութիւնը, յայտնի է, կը պակսի մեր քով:

Ժամանակի գործածութիւնը կարեւորագոյն պարագայ մ'է վարժարանական կազմակերպութեան մէջ. ուսման իւրաքանչիւր ձիւղին յատկացեալ շաբաթական ժամուց թուէն կախում ունի դպրոցական ծրագրին առաւել կամ նուազ կատարեալ ու արդիւնաւոր գործադրութիւնն: Եւրոպական երկիրներու մէջ օրէնքը ցոյց տուած է այն սկզբունքներն որոց համեմատ պարտի կազմուիլ մէն մի դպրոցի ժամանակացոյցն, եւ այդ մասին հիմնական սկզբունքն է մէկ կողմանէ աշակերտաց տարիքին համեմատ առաւել կամ նուազ երկարել մէն մի դասու կամ աշխատութեան տեւողութիւնը, իսկ միւս կողմանէ ձիւղերու կարեւորութեան կամ դժուարութեան աստիճանին համեմատ որոշել իւրաքանչիւրին յատկանալի շաբաթական դասուց կամ ժամուց գումարը: Ձոր օրինակ, գաղիական օրէնքը կը պատուիրէ որ ամէն օր դաս մ'ըլլայ բարոյախօսութեան, գաղիերէնի ուսումն ամէն օր գրեթէ երկու ժամ գրաւէ, գիտական ուսումն՝ ըստ կարգաց եւ դասընթացից՝ օրը մէկէն մինչեւ մէկուկէս ժամ առնու, բաժնուելով համարողականին եւ բնագիտականին մէջ, պատմութիւնն ու աշխարհագրութիւնն ի միասին ամէն օր ժամ մը կամ իւրաքանչիւրը շաբաթը երեք ժամ բռնէ: Բրուսիական օրէնքը, միդասեան նախակրթարանին մէջ, օրինակի համար, միջին աստիճանի աշակերտաց, կ'որոշէ շաբաթական 5 ժամ կրօնքի, 10 ժամ գերմաներէնի, 4 ժամ հաշուոյ եւ երկրաչափութեան, 1 ժամ գծագրութեան, 6 ժամ իրագիտական ուսմանց, 2 ժամ երգի, 2 ժամ մարմնամարզի (կամ աղջկանց ասեղնագործութեան) դասեր: Այդ օրէնքները մասնաւոր պատուէրներ ունին որ ուշադրութեան մեծագոյն ձիգ պահանջող հրահանգք, զոր օրինակ թուաբանական, քերականական, շարա-

դրական վարժութիւնը առաւելապէս առաւօտեան մասին մէջ դրուին, որ աշխատութիւնը զբօսանքով ու շարժումներով ընդհատուին, դժուարին դասի մը համեմատաբար դիւրին հրահանգ մը յաջորդէ, եւ այլն: Մեր մէջ, ժամանակացոյցը լրջօրէն եղած է բնաւ այսպիսի պաշտօնական հոգածութեան ու հրահանգաց ու հսկողութեան առարկայ. թողուած է այն իւրաքանչիւր դպրոցի չորսարձուութեան կամ թաղ. խորհրդոյ քմահաճոյքին որ մեծ առատաձեռնութիւն ըրած կը համարի երբ շաբաթը Յ ժամ տայ հայերէնին. շատ տեղ Չ ժամը բաւական կը համարուի թուարանութեան, գաղիերէնին ու տաճկերէնին, իսկ այդքան ժամ ճշմարիտ շոյլութիւն մ'է պատմութեան ու աշխարհագրութեան համար: Գալով այն միւս մանկավարժական ու ողջ պահիկ ուշադրութեանց, անոնք դեռ մաքրէ իսկ չեն անցնիր ընդհանրապէս, իսկ դասուց օրուան որ մասին մէջ եւ որ ճիւղէ յետոյ զետեղման խնդիրը կը լուծուի մասամբ այցելու դասատուաց տրամադրելի ժամերուն եւ մասամբ շոգենաւուց երթեւեկի ցուցակին տուած ուղղութեան համեմատ: Շիրքէթի-Խայրիյէի ուղեցուցակները շինողները չեն մտածեր անշուշտ թէ մի եւ նոյն ատեն կը վճռեն մեր ուսանողաց օրական աշխատութեանց ընթացքը: Ար հարցնեմ թէ իմաստուն կերպով գործածել է այս մեր տղայոց ժամանակն ու մտաւոր ու ֆիզիքական զօրութիւնները: — Ունինք, վերջապէս, միօրինակ կարգ ու կանոն մը մեր նախակրթարանաց համար, ընդհանուր ուղղութիւն մը, հիմնական նոյնութիւն ուսմանց ծրագրի ու անոր բաժանմանց. մեր դպրոցաց նոյն անունը (զոր օրինակ առաջին, երկրորդ, եւն) կրող կարգերն կամ հատուածք կը համապատասխանեն միմեանց աշակերտաց հասակովն ու առած ուսման եւ հրահանգաց տեսակովն ու աստիճանաւ, գէթ մերձաւորապէս: Ո՛չ, ո՛չ. այլ ամենուրեք տարբեր ծրագիր, տարբեր բաշխում, տարբեր ընթացք. քմահաճոյք ամենուրեք, կամ յաճախ դիպուածական վիճակ, առանց նպատակի աւանդեալ ուսմանց ընտրութեան եւ առանց համեմատութեան անոնց քանակին մէջ: Աստ (եւ այս բազում ուրեք) բարոյականի ու առողջաբանութեան պէս կարեւորագոյն ուսմունք կը պահսին, եւ սակայն Յունաց դիցաբանութիւնը կը տեսնես առ անձին առարկայ դարձած ուսման. անդ, աղջկանց վար-

ժարանի մը մէջ, շրջանաւարտ ազգուիք գրաբար ոտանաւոր հասուած մը կը թարգմանեն ու կը վերլուծեն, եւ սակայն կը դժուարանան տալ շրջանակին սահմանն ու չեն գիտեր թէ քանի՞ ակուայ ունինք մեր բերնին մէջ, եւ անծանօթ մնացած են առանին անտեսութեան սկզբանց: Մեր նախակրթարանաց յետինը մաւսամբ կը կարծուի նախակրթութեան սահմաններէն դուրս վազած ըլլալ, եւ սակայն կը տեսնես թէ ամենէն յառաջագէմն ալ կարեւորագոյն ճիւղերու համար նախնական կրթութեան սեմն իսկ չէ կոխած: Անկերպարան վիճակ մը, թո՛հ ու բո՛հ: Անմիօրինակութիւնն ամենէն աւելի մեր ժողովրդեան ուշադրութեան զարկած ու գանգատանաց առարկայ եղած կէտն է, մանաւանդ մայրաքաղաքիս մէջ ուր յաճախ թաղէ թաղ բնակութեան փոփոխումներ տեսի կ'ունենան, եւ մէկ դպրոցէն ուրիշ դպրոց մ'անցնող աղան վերջնոյն մէջ չի գտներ յաճախ նախորդին մէջ իւր ունեցածին համապատասխան կարգ մ'ու տեղ մը, ստիպուած է կամ վար մնալ կամ վեր վազել, ուսածները մոռնալ կամ չուսածները գիտցած համարուիլ, եւ այլ զանազան անպատեհութեանց զոհը դառնալ: Միօրինակութիւն ըսելով անշուշտ չենք հասկնար ամէն մանրամասնութեանց մէջ կատարեալ նոյնութիւն, ինչ որ չէ կարելի, ո՛չ ալ փափաքելի, քանի որ տեղական պայմանք փոփոխական են եւ ունին իրենց յատուկ պահանջներն, այլ հիմնական, ընդհանուր գծերու մէջ նոյնութիւն մը որ հարկաւոր զանազանութեանց ճկի, իսկ էական կէտերու մասին ներկայացնէ այն միօրինակութիւնն որ կարգի եւ ներդաշնակութեան պայմանն է:

Ահա ինչ որ, կարծեմ, կը բաւէր ըսել (ու այս ամէնն անցեալ անգամ ըսի համառօտակի) ցոյց տալու համար թէ մեր նախակրթութիւնը դեռ բանաւոր ու մանկավարժական կազմակերպութիւն մը չէ ստացած, եւ թէ ժամանակն է զայն անոր տալու: Այս է մեր օրակարգի խնդրոյն պարունակած երկրորդ հարցը: Նախակրթութիւնը իւր նախապատրաստական մասն ունի եւ իւր յաւելուածական ըրացուցիչ մասն. առաջինն այսօր մանկական պարտեզներուն կամ մայրական դպրոցաց (écoles maternelles) գործն է, իսկ երկրորդն բարձրագոյն նախնական վարժարանաց (écoles primaires supérieures): Այս երկուքին մէջտեղ կայ բո՛ն պարզ

Նախնական կրթութիւնը որ կ'աւանդուի, ըստ երկրաց, պարզ կամ տարրական կամ ժողովրդական կամ թաղային կոչուած նախակրթարանաց մէջ: Այս կրթութիւնն է մեր խորհրդակցութեանց բուն առարկան: Զայն կ'ստանան ընդհանրապէս 7էն մինչեւ 13 տարեկան տղայք: Նախակրթարանն ապա բնականաբար պարտի ունենալ իւր զանազան բաժանումներն, իւր զանազան կարգերն, իւր տարիներն, որոց մէջ բաժանուին աշակերտք ըստ հասակի եւ կարողութեան, եւ նախակրթութեան ծրագրին առարկայք աստիճանուին ըստ չափու դժուարութեան եւ ընդարձակութեան եւ նոյնպէս ըստ տիոց եւ հասողութեան ուսանողաց: Սկզբունքով գրեթէ ընդհանրապէս ընդունուած է այսօր յԵւրոպայ որ նախակրթարանին զանազան բաժանումները պարտին աւանդել նախակրթութեան ծրագրին ամէն առարկայներն աստիճանաւորեալ, հետզհետէ ընդլայնեալ, այնպէս որ նախակրթութիւնն իւր մէն մի աստիճանին մէջ ամբողջութիւն մը ներկայացնէ, եւ թէ այդ բաժանմանց հիմնական թիւը երեքն է, որ կատարելապէս կը բաւէ աշակերտներն եւ ծրագրի նիւթերը բանաւորապէս աստիճանելու, ամենէն յառաջացեալներէն կազմուելով բարձրագոյն բաժանումը, ամենէն նուազ յառաջացեալներէն ստորինը ու միջակ կարողութիւններէն միջին բաժանումը: Գաղիական նախակրթարանաց կազմակերպութիւնն հիմնուած է երեք Դասընթացքներու (cours) վրայ, որք կը կոչուին Ցարրական, Միջին եւ Բարձրագոյն Դասընթացք (Cours élémentaire, Cours moyen ou intermédiaire, Cours supérieur), որք, կ'ըսէ Ք. Պիւիսոն իւր «Մանկավարժութեան ու Նախնական կրթութեան Բառարան»-ին մէջ, «ուսման երեք աստիճաններ են. երեքէն իւրաքանչիւրը պարտի զարթուցանել, զարգացնել չափով մը մանուկին բոլոր կարողութիւնները. իւրաքանչիւրն հետեւաբար պարտի պարունակել այն զանազան հրահանգներն որք կ'աջակցին յառաջ բերելու կարողութեանց այս առաջին եւ ներդաշնակ մշակումը. իրենց ընդգրկած առարկայք կը տարբերին ընդարձակութեամբ այլ ո՛չ բնութեամբ»: — Աւստրիոյ մէջ, 18 մարտ 1874ի Ուսմանց ծրագրին համեմատ, նախնական վարժարանի աշակերտք, նոյն իսկ երբ դպրոցն մի միակ սրահ կամ դասարան ունի, երեք խումբի կամ դասընթացքներու բաժնուած են, առաջինն պարունակելով առաջին

տարւոյ աշակերտներն, երկրորդն՝ երկրորդ, երրորդ եւ չորրորդ տարիներու աշակերտքն, իսկ երրորդն վերջին չորս տարիներունը: Բրուսիական օրէնքը նախնական դպրոցը կը բաժնէ երեք աստիճաններու (Stufen), որք կը համապատասխանեն աշակերտաց յառաջացման, եւ որք, ըստ թուոյ թաղին ունեցած ուսուցչաց եւ աշակերտաց, կրնան մէկ, երկու, երեք կամ աւելի դասարաններ կազմել, բայց ուսման ճիւղերն նոյնն ըլլալով մէն մի աստիճանի մէջ: Սաքսոնիոյ թագաւորութեան մէջ նոյնպէս նախակրթութիւնը երեք աստիճաններ կը պարունակէ, որոց ամէնքն ալ, կամ միայն առաջին երկուքը, կամ մէկը միայն կրնան ունենալ դպրոցք. երեք աստիճաններն ալ պարունակող դպրոցք յայնժամ Բարձրագոյն ժողովրդական դպրոցք, (höhere Volksschulen) անունը կ'առնուն, միայն առաջին երկու, տարրականն ու միջինը, պարունակողներն «Միջին ժողովրդական դպրոցք», (mittlere Volksschulen), իսկ միայն տարրական աստիճանն ունեցողները «Պարզ ժողովրդական դպրոցք (einfache Volksschulen) կը կոչուին: — Ռուսիոյ մէջ, 31 մայիս 1872ին հրատարակեալ մասնաւոր կանոնադիր մը քաղաքի նախակրթարանաց (écoles primaires urbaines) կու տայ սս ներքին կազմակերպութիւնը: Ուսմանց ամբողջական ընթացքի տեւողութիւն մը 6 տարի է: Միայն մէկ դասարան ունեցող սակաւաթիւ դպրոցաց մէջ աշակերտք երեք յաջորդական հատուածներու բաժնուած են, որոց իւրաքանչիւրին մէջ սովորաբար երկու տարի կը մնան: Երկու դասարանէ բաղկացեալ դպրոցաց մէջ, առաջին դասարանին ընթացքը 4 տարի կը տեւէ եւ աշակերտք երկու հատուածի բաժնուած են, իսկ երկրորդ դասարանին ընթացքը 2 տարի կը տեւէ: Երեք դասարան պարունակող դպրոցաց մէջ, իւրաքանչիւրին ընթացքն երկամեայ է: Չորս դասարանով դպրոցաց մէջ, առաջին երկուքին ընթացքը կը տեւէ երկուքական տարի, իսկ միւս երկու դասարանացն մէկ մէկ տարի: Դպրոցին մէջ այնքան ուսուցիչ կայ որքան դասարան:

Սկզբամբ գրեթէ մի եւ նոյն հիման վրայ հաստատուած այս զանազան դպրոցական կազմակերպութեանց տիպերէն մասնաւորապէս գաղղականը անցեալ նստի մէջ առաջարկեցի օրինակ առնուլ մեզ մեր նախակրթարանաց կազմական բարեկարգութեան գործոյն համար, իբրեւ ըստ իս ամենէն գործնականը, իբրեւ մին

ամենէն լայներէն, ամենէն յարմարն ընդհանուր միօրինակութիւն մը հաստատելու, մի եւ նոյն ատեն ամենէն ձկուան ըլլալով տեղական պարագայներու պատշաճելու, միանգամայն եւ իւրեւ այն որ կրնայ ամենէն աւելի լաւ ճանչցուիլ եւ իւր մանրամասնութեանց ու գործադրութեան եղանակաց մէջ ամենէն աւելի ընդհանուր կերպով ուսումնասիրուիլ մեզմէ, քանի որ միշտ Տաճկահայոցս մտաւոր յառաջդիմութեան գլխաւոր սասարը Գաղիոյ գրական ու գիտական մատենագրութիւնը եղած է: Գաղիական կրթական օրէնքը (Օրէնք 28 մարտ 1882ի եւ Որոշմագիր 27 յուլիս 1882ի) նախնական կրթութիւնը հանրային վարժարանաց մէջ կը բաժնէ երեք դասընթացքներու (cours), «տարրական», «միջին», եւ «բարձրագոյն», որոց երեքին ալ կազմութիւնը պարտաւորիչ կը զնէ ամէն դպրոցաց համար, ինչ որ ըլլայ դասարանաց ու աշակերտաց թիւը: Երբ թաղի մը մէջ առանձինն մանկապարտեզ կամ մայրական դպրոց չկայ, դպրոցական տարիքէն (7 տարեկան) վար եղող տղայք նախակրթարանը կ'ընդունուին եւ անոնց համար կը կազմուի մի «մանկական դասարան», (classe enfantine) կամ, ըստ մեզ, «ծաղկոց»: Եթէ դպրոցի մը մէջ նախնական ուսմանց վկայականն ստացող տասն աշակերտք կան որք, բարձրագոյն դասընթացքն լրացուցած, կը բաղձան շարունակել իրենց կրթութիւնը, կրնայ «լրացուցիչ դասընթացք», մը (Cours complémentaire) հաստատուիլ մէկ տարւոյ տեւողութեամբ: — Ուսմանց տեւողութիւնը կը բաժնուի հետեւեալ կերպիւ. (Յօդ. 3, Որոշմ.) — Մանկական դասարան, մէկ կամ երկու տարի, ըստ այնմ որ տղայք մտնեն 6 կամ 5 տարեկան. Տարրական դասընթացք, երկու տարի, 7էն 9 տարեկան. Միջին դասընթացք, երկու տարի, 9էն 11 տարեկան. Բարձրագոյն դասընթացք, երկու տարի, 11էն 13 տարեկան. Լրացուցիչ դասընթացք բարձրագոյն նախնական կրթութեան, մէկ տարի: — Մէկ ուսուցիչ եւ մէկ դասարան (classe) ունեցող դպրոցաց մէջ, ոչ միջին եւ ոչ բարձրագոյն դասընթացքներուն մէջ ոչ մի բաժանում պիտի կրնայ հաստատուիլ, եւ 9 տարեկանէն վար տղայոց համար 2 բաժանումէն աւելի չպիտի կրնայ հաստատուիլ: Միայն երկու ուսուցիչ ունեցող դպրոցաց մէջ, մին պիտի ստանձնէ միջին եւ բարձրագոյն դասընթացքները, միւսը տարրական դասընթացքը՝ ի միասին

ըլլալով, եթէ տեղի կայ, 7 տարեկանէն վար տղոց հասուածը: Երեք ուսուցիչ ունեցող դպրոցաց մէջ, մէն մի դասընթացք առանձին դասարան մը կը կազմէ: Չորս դասարանով դպրոցաց մէջ, տարրական դասընթացքը երկու դասարանի բաժնուած պիտի ըլլայ, միւս երկու դասընթացից իւրաքանչիւրը մէկ դասարան պիտի կազմէ: Հինգ դասարանով դպրոցաց մէջ, տարրական դասարանը երկու, միջինը երկու, իսկ բարձրագոյնը մէկ դասարան պիտի կազմէ: Վեց դասարանով դպրոցաց մէջ, երեք դասընթացից իւրաքանչիւրը երկու դասարան պիտի կազմէ: Ամէն անգամ որ մի եւ նոյն դասընթացքն երկու դասարան պարունակէ, մին դասընթացքին առաջին տարին պիտի կազմէ, միւսը երկրորդ տարին: Մի եւ նոյն դասընթացքին երկու դասարանները պիտի հետեւին ուսմանց մի եւ նոյն նախագծին (programme), բայց դասերն ու վարժութիւնը աստիճանաւորեալ պիտի ըլլան, այնպէս որ աշակերտք երկրորդ տարւոյն մէջ կարենան վերստին տեսնել, աւելի խորցնել ու լրացնել առաջնոյն ուսմունքը: Վեց դասարանէն վեր, վարժապետաց թիւն ինչ ալ ըլլայ, ոչ մի դասընթացք չպիտի կրնայ երկու տարիէն աւելի ունենալ: Վեցէն աւելի եղող դասարանք, առանց հաշուելու մանկական դասարանն, պիտի լինին համընթաց դասարանք, դասընթացքի մը առաջին կամ երկրորդ տարւոյն աշակերտաց առաւելեալ թիւը յերկուս բաժնելու միայն սահմանեալ: (Յօդ. 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11 Որոշմն.): Հանրային նախակրթարանաց մէջ աւանդեալ կրթութիւնը եռակի առարկայ ունի, դաստիարակութիւն Ֆիզիքական, դաստիարակութիւն իմացական, դաստիարակութիւն բարոյական, որոց պահանջած աստիճանաւորեալ դասք եւ հրահանգք մանրամասնուած են սոյն Որոշմնագրոյն կցուած ուսումնական ծրագրոց մէջ: Օրէնքը կը պատուիրէ մէն մի դպրոցական տարւոյ սկիզբն օր առ օր եւ ժամ առ ժամ ժամանակի գործածութեան շաքաթական ցուցակին յօրինուիլն ի ձեռն դպրոցին տնօրէնին կամ գլխաւոր ուսուցչին, որպէս զի, յետ հաւանութեան կրթական շրջանակին այցելու տեսչին, կախուի դասարանաց մէջ, եւ կը թուէ մի առ մի այն ընդհանուր պայմաններն զորս լրացնել պարտի լաւ ժամանակացոյց մը եւ որոց վրայ համառօտ գաղափար մը տուիլը արդէն: Ուսմանց ծրագիրը նախակրթութեան երեք աստիճանաց, երեք դա-

սընթացից համար ալ կը ներկայացնէ մի եւ նոյն ճիւղերն, որք են. 1. Ֆիզիքական դաստիարակութեան համար՝ առողջապահութեան եւ մաքրութեան խնամք եւ պատուէրք, մարմնամարզք, ձեռական աշխատութիւնք. 2. Իմացական դաստիարակութեան համար՝ ընթերցում, գիր, մայրական լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, քաղաքացւոյ ուսում (instruction civique), գործնական իրաւագիտութիւն (droit usuel), տնտեսագիտական ծանօթութիւնք, թուաբանութիւն, երկրաչափութիւն, գծագրութիւն, գործնական տարերք բնագիտական եւ բնապատմական գիտութեանց, հողագործական եւ պարտիզպանական գիտելիք, երգ. 3. Բարոյական դաստիարակութեան համար՝ բարոյախօսութիւն (ուսումն պարտուց առ անձն, առ ընկերութիւնն, առ Աստուած), դպրոցին մէջ եւ դպրոցէն դուրս գործնական կիրառութեամբք եւ մանաւանդ աշակերտին միջավայրէն անուած օրինակներու վրայ ուշադրութիւն դարձուելով: Պաշտօնական Եւրագիրք մանկական դասարանի իրագիտական դասուց համար ամիսներու բաժնուած մանրամասն յատուկ ծրագիր մը տալով, թելագրած են գաւառական կրթական իշխանութեանց նոյնն ընել իրենց շրջանակին մէջ ամէն դասընթացից ուսման մէն մի ճիւղին համար, որպէս զի իւրաքանչիւրին ընդարձակութիւնն ու սահմանները ճշդուին, ընդհանուր ծրագրի մ'ունեցած տարտամութիւնը անհետանայ, ուսուցչաց ընթացքը կանոնաւորի, մի եւ նոյն շրջանակի դպրոցաց համապատասխան դասընթացից եւ դասարանաց մէջ համընթացութիւն գտնուի եւ վարչական հսկողութիւնն ալ որոշ կռուան ու դիւրութիւն ունենայ: Զանազան գաւառաց մէջ պատրաստեալ այսպիսի «ամսական բաշխումներ», (répartition mensuelle) ինչ ինչ տարբերութեամբք ու տեղական պատշաճմամբք արդէն կատարած են զայս գործ:

Այսպիսի մանկավարժական կազմակերպութեան մը ըստ ինքեան ներկայացուցած առաւելութիւնք ակներեւ են: Նախակրթութեան երեք դասընթացքներու բաժանումը, փոխանակ «առաջին կարգ», «երկրորդ կարգ», «երրորդ կարգ», եւ այլն անորոշ բառերուն, բնական ու բանաւոր բաշխում մ'է աշակերտաց ըստ հասակի եւ զօրութեան, ու հիմնական միօրինակութիւն մը կը դնէ նախ ամէն նախակրթարանաց մէջ, ըլլան գիւ-

ղային, ըլլան քաղաքային, աղքատ կամ հարուստ թաղերու վերաբերեալ: Ուսմանց ընդհանուր ծրագիրը կը պարունակէ մարդուն ու քաղաքացւոյն անհրաժեշտ ամէն գիտելիքները: Անոր պլանաւոր հանգամանքն այն է որ իւր մասերէն իւրաքանչիւրն կատարեալ ամբողջ մը կը կազմէ: “Անդստին տարրական դասընթացքէն, կ’ըսէ ժ. Կոյեառ, նախակրթութեան տեսուչ ի Բարիզ, իւր “Մանկավարժական կազմակերպութիւն,, յօդուածին մէջ¹, ուսուցման բոլոր նիւթերն ալ կ’ընդգրկուին իւրեանց նախատարերց մէջ, այնպէս որ բաւականաչափ ամբողջութիւն մը կրնան կազմել: Միջին դասընթացքին մէջ ամէնքն ալ ընդլայնում մը կը ստանան: Բարձրագոյն դասընթացքին մէջ, օրէնքէն նշանակուած մեծագոյն աստիճանին կը հասնին:” Եւ այս հանգամանքն, բաց ի մանկավարժական առաւելութենէն, սա մասնաւոր օգուտն ալ ունի որ առանց բարձրագոյն աստիճանին հասնելու դպրոցէն ելնող տղայն միշտ իւր չափին մէջ ամբողջական հմտութիւն մը կը տանի իւր հետ, “զոր յետոյ, կ’ըսէ Կոէառ, որ մասնաւորապէս կը շեշտէ զայս առաւելութիւն, դիւրին պիտի ըլլայ իրեն պահել եւ ընդլայնել, թէ ինքնիրեն հայրենի տան մէջ եւ թէ արհեստավարժ չափահասից դասարաններու մէջ”:

Այս օգտաւէտ պարագայ մեծ կշիռ կը ստանայ անշուշտ յայտնային ժողովրդոց մանաւանդ առ որս նախակրթութիւնը օրինօք պարտաւորիչ չէ դարձած: Բաց աստի դասընթացքներու համընթացութիւնն մի եւ նոյն կրթական շրջանակի դպրոցաց մէջ, միօրինակ ամսական բաշխմամբ ապահովեալ, կը ներէ թաղ փոխող աշակերտին որ նոր դպրոցին մէջ՝ ուր կը փոխադրուի՝ կարենայ իրեն յարմարագոյն բաժնին մէջ զեռեղուիլ իսկոյն առանց խանգարելու իւր ուսմանց կարգը: Իւրաքանչիւր դասընթացքի երկրորդ տարիները, որք նախորդը կը կրկնեն ինչ ինչ ընդլայնմամբ եւ յաջորդութիւնն երեք դասընթացից որք ծրագրի մի եւ նոյն նիւթերը կ’առնուն վերստին՝ զարգացնելու եւ անորոշէն, հարեւանցիէն հետզհետէ դէպ ի որոշն, դասաւորեալն տանելու համար, իբրեւ երեք համակերպող շրջանակներ որք կը լայնին տակաւ, յարմարագոյն եղանակը չե՛ն, կրկնութեան ու աստիճանական

¹ Տես “Մանկավարժական Բաւարան” Պիւխտնի, Մասն Ա.:

զարգացման շնորհիւ, մտաց մէջ անջինջ ու խոր քանդակելու ստացեալ կրթութիւնն: Գաւընթացքին ու դասարանին իրարմէ որոշ ու զատ ըմբռնումը եւ դասարանաց ու վարժապետաց թուոյն աշակերտաց թուոյն համեմատուիլը մեծ առաւելութիւններ են դարձեալ որովք հնար կը լինի, առանց աղքատիկ թաղերու աննպաստ կացութենէն արգիլուելու, հիմնապէս մի եւ նոյն ծրագիրը գործադրել յետին գիւղին ու առաջին ոստանին մէջ եւ մի եւ նոյն նախնական կրթութեան մ'էական առաւելութեանց մասնակից ընել շինականին ու քաղաքացիին զաւակները: — Ուսումնական խորհրդոյ մէջ իմ պատուարժան պաշտօնակցացս առաջարկած եմ արդէն մեր նախակրթութիւնն հիմնել ըստ գաղիականին երեք դասընթացքներու վրայ, իւրաքանչիւրն երկամեայ տեւողութեամբ, առաջարկ որու համամիտ գտնուած են, եւ համոզուած եմ որ ուրիշ յարակից կէտերու մասին ալ օգտակար պիտի լինի մեզ ներշնչուիլ մի եւ նոյն դպրոցական կազմակերպութենէն, որ երկար փորձերու եւ գիտութեան արդիւնք է, որոյ ամէն արամագրութիւնք ալ, որպէս տեսնեք, Գաղիոյ յատուկ չեն եւ ոչ ամբողջութեամբ Գաղիացոց նախաձեռնութեան պտուղ: Բայց ըստ որում որեւէ դպրոցական ներքին նոր կարգադրութիւն՝ որ գործադրուելու համար ուսուցչաց աջակցութեան կը կարօտի՝ չի կրնար իւր բոլոր արդիւնքն յառաջ բերել, եթէ ուսուցիչք ինքնին համոզուած չլինին անոր օգտակարութեան ու բանաւորութեան եւ կերպիւ իւրք մասնակցած անոր հաստատութեան, իմ կարծիքն այն եղաւ որ պէտք էր նոր կազմուելիք վիճակին ու հիմնելի դրութեան վրայ կանխաւ համոզում գոյացնել մեր ուսուցչաց մէջ՝ իրենց խորհրդածութեանց ննթարկելով զայնս: Ինչ որ ըրինք: Աստահ եմ, ազնիւ Պաշտօնակիցք, դուք ամենէն յառաջ ու ամենէն աւելի զգացած էք մեր նախակրթարանաց արդի անկազմ ու խառնափնդոր վիճակին թերութիւններն ու հիմնական դարմանի անհրաժեշտ պէտքն, եւ կը յուսամ որ դուք եւս համամիտ պիտի լինիք թէ բացատրեալ դրութեան հետեւողութիւն մը գործնական ու արդիւնաւէտ ճամբու մը մէջ պիտի դնէ զմեզ յետ երկարատեւ խորխափմանց ու փնասուց: Այս հետեւողութիւնն անշուշտ չպիտի լինի կէտ առ կէտ, կյոյր, այլ պատշաճեցմամբ մեր առանձին

Հանգամանաց, պայմաններուն, պիտոյից: Ձոր օրինակ, Գաղիացին իւր նախակրթարանի մէջ գաղիերէնէ զատ լեզու չ'ուսուցաներ. մենք, բացի Հայ լեզուէն, պարտաւոր եմք ուսուցանել պետական լեզուն՝ Թուրքերէնը եւ բազում ուրեք նաեւ Գաղիերէնը: Կրօնի դասը մասնաւոր կարեւորութիւն ունի մեզ համար, որ կրօնական ժողովուրդ մ'ենք: Թող չկարծուի նաեւ թէ միամտաբար կը խորհիմք որ նոր կազմակերպութիւն մը, նոր դրութիւն մը, իբր մոզական գաւազանաւ, յանկարծ ամէն ինչ պիտի փոխէ ի մեզ, ամէն փառութիւն պիտի նորոգէ, ամէն ինչ ի լաւն պիտի շքէ: Ո՛չ. անտարակոյս դեռ շատ բանի պէտք կայ ու պիտի ըլլայ, արդիւնաւէտ գործելու համար հաստատեալ կարգն ու հրատարակեալ ծրագիրներն. մանաւանդ, որպէս իրաւամբ կը դիտէր ազգային թերթ մը, պէտք մարդու, կարող մարդերու, այսինքն կարող ու ձեռնհաս մանկավարժ ուսուցիչներու եւ տեսուչներու, վարիչներու: Այո, այդ ամէնը ճշմարիտ է, սակայն ճշմարիտ է նաեւ թէ Բարիզ մէկ օրէն չշինուեցաւ, ինչպէս կ'ըսէ գաղիական առածը, թէ ամէն բանի մէջ կարգ մը կայ, թէ յառաջարկմութիւնը դէպ առաջ առնուած փոքր փոքր քայլերու շարք մ'է, թէ ամէն քայլերէն յառաջ կայ ու պէտք է լինի առաջին քայլը, եւ թէ զմեզ զբաղեցնող նախակրթական բարեկարգութեան խնդրոյն մէջ առաջին ու վճռական քայլ մ'է անշուշտ նախակրթարանաց ծրագիրքն ու անոնց բաժանմունքը, աշակերտաց դասաւորութեան ու դասարանաց կազմութեան պարագայները, ժամանակի գործածութիւնը, ուսուցչաց պարտիքն ու պաշտօնավարութեան եղանակը գիտապէս, փորձառապէս ճշդող մանկավարժական կազմակերպութիւն մը: Ա՛լ անկէ յետոյ յառաջդիմել դիւրին կը լինի համեմատաբար. ճամբան հարթուած ու զծուած է, եւ քան զմեղ յառաջդէմք կը ցուցնեն մեզ ուղւոյն դժուարութեանց յաղթելու եղանակն իրենց փորձեալ ու զարգացեալ մեթոտներով եւ իմաստութեամբ ու գիտութեամբ պատրաստուած դասագրքերով, յորոց յայնժամ ուղղակի օգտիլ հնարաւոր պիտի լինի մեզ: Մեր ուսուցիչք, տակաւ բուն նախակրթիչներ դարձած, պիտի կրնան, այո, ուղղակի օգտիլ եւրոպեան մանկավարժական գրականութենէն, հանդէսներէն ու գրքերէն, զի պիտի կրնան ուղղակի գործա-

գրել ու փորձել իրենց ուսածն, մինչդեռ այժմ, գիտեմ, կան մէկէ աւելի ուսուցիչներ, հետամուտ, զոր օրինակ, գազիացի մանկավարժից հրատարակութիւններուն, որք սակայն իրենց ամենօրեայ գործին համար, չեմ ըսեր բնաւ, այլ շատ օգուտ չեն քաղեր իրենց ուսումնասիրութիւններէն, քանի որ, մեր դպրոցաց ու ծրագրոց կազմակերպութիւնն լինելով տարբեր ու, ըսեմք բառը, հակամանկավարժական իսկ, միջոց չունին անոնց անմիջական կիրառութիւնն ընելու: Այս կերպով տակաւ մեր ուսուցիչք, որոց մէջ կը հաւատամ թէ կան շատ բարի կամեցողութիւններ, իրենց գործոյն անկեղծ սէրն ու լաւագունին տենչն ունեցողներ, իրենք զիրենք պիտի կազմեն, պիտի զարգացնեն, եւ այն մարդերը՝ որոց պակասութեան վըայ կ'ողբար քիչ յառաջ ակնարկած թերթս՝ պիտի գոյանան, պիտի շատնան: Զերմութեամբ պիտի ուսումնասիրուին լաւագոյն մեթոտները, երբ անգամ մը գիտնամք թէ ինչ բանի եւ որոց համար ի գործ պիտի դրուին անոնք, եւ պիտի ունենամք ընտիր, մեթոտիկ, նպատակայարմար դասագրքեր որոնք՝ պիտի գործածուին: Հեշտեցի այս բառը, «պիտի գործածուին», վասն զի ցարդ թէ եւ ինչ ինչ մանկավարժական ուղղութեամբ դասագրքեր յօրինուեցան ի մեզ թարգմանօրէն կամ հետեւողութեամբ, ինչպէս Տիկին Բարբարա Գիլիերի գործերէն մէկ քանիները, մասամբ «Պրանսիէն» կոչուած ընթերցանութեան գիրքը եւ ուրիշներ, բայց չգործածուեցան, չհասկցուեցան, անօգուտ ճացին, զի մեր ուսուցիչք ու տնօրէնք չէին կրնար գիտնալ ու գտնալ թէ ճշդիւ մեր արդի դպրոցական կարգերէն ու ծրագրի առարկայներէն որուն կը պատշաճէին անոնք: Կը յուսանք թէ յայնժամ աւելի ալ զգալի պիտի ըլլայ վարժապետ ու վարժուհի պատրաստող գէթ երկու յատուկ դպրոցներ եւ մի քանի ուսուցչավարժ դասընթացքներ հաստատելու պէտքն, որով լրջօրէն կ'ապահովուի մեր մատաղ սերնդեան ֆիզիքական, իմացական ու բարոյական դաստիարակութեան կենսական գործը:

Վերջացնելէ յառաջ կ'ուզեմ պատասխանել երկու առարկութեանց: — Անցեալ նստի մէջ, Մ. Անդրէասեան էֆէնտի, նախկին աշակերտ Գէորգեան ճեմարանի, կասկած յայտնեց թէ նախակրթութեան առարկայից, ըստ գաղիական դրութեան, երկը

դասընթացքներու մէջ ամփոփումը, որ իրօք ուսման եռամեայ ընթացք մ'ըսել է, կրնայ երաշխաւորել աշակերտաց բաւականաչափ զարգացումը, եւ ինք, փոխանակ երկամեայ երեք դասընթացքներու, կ'առաջարկէր հնգամեայ ընթացք մը, մէն մի տարին ունենալով իւր առանձին ծրագիրն, առարկելով նաեւ թէ գերմանականն, 6 տարի շարունակելով ու ամէն տարի ուսմանց նիւթերը փոփոխելով ու յառաջ տանելով, կը հասցնէ աշակերտքն աւելի զարգացեալ վիճակի մը:

Առանց մանր փնտռելու թէ « գերմանականն », ըսելով Գերմանիոյ ո՞ր տէրութեան մէջ ի գործ դրուած դպրոցական օրէնքը կամ դրութիւնը կ'ուզէ իմանալ Անդրէասեան էֆէնտին, վասն զի յայտնի է թէ Գերմանիա անունը կը բացատրէ ամբողջութիւն մը թագաւորութեանց, մեծ-դքսութեանց, դքսութեանց, իշխանապետութեանց եւ ազատ քաղաքաց, որոց մէն մին իր յատուկ օրէնսդրութիւնն ունի իւր ներքին իրաց համար, հոս յառաջ կը բերեմ շիրքոյի « Հանրային կրթութիւն ի Գերմանիա » անուն գրքէն, հրատարակեալ ի 1873, Վիւրդէմպէրկի թագաւորութեան նախակրթարանի մը Ուսմանց ծրագրին վերջին տարւոյն առարկայներն ու յետոյ Գաղիոյ նախակրթութեան բարձրագոյն դասընթացքին ծրագիրն, ու թող բողոքատուութիւնը խօսի իմ փոխանակ, Պէտք է յաւելցնել թէ ի Վիւրդէմպէրկ, ըստ 1870ի կրթական ծրագրոց, նախակրթարանի ընթացքը 8 տարի կը տեւէ 6էն 14 տարեկան: Արդ 8րդ տարին աշակերտք ունին ընթերցումն լաւ առողանութեամբ, լատին գիր (այսինքն գերման հեղինակներէ քաղուած ու գաղիներէն տառերով տպեալ հատուածոց ընթերցումն), գրական շարադրութիւնք, նամակք, ընթացիկ հաշիւք, ընկալագիրք եւն, հաշուական խնդիրներ սովորական կեանքի ընթացքին մէջ պատահող իրողութեանց վրայ, ընթերցումն եւ արտասանութիւն Աստուածաշնչի մի քանի հատուածոց, Սրբազան պատմութիւն՝ նախորդ տարուան պէս. (նախորդ տարին ալ նշանակուած է իր նախորդին պէս, այն ալ իրենին, եւ այսպէս մինչեւ առաջին տարին ուր նշանակուած է « կարճ պատմութիւնք առնուած Հին եւ Նոր Կտակարանէ ». երրորդ տարւոյն մէջ գրուած է նաեւ « Ուսուցիչը իրողութիւն մը կը պատմէ, եւ աշակերտք կը վարժին զայն իրմէ յետոյ պատմելու. » այս իրողութիւն յետոյ

կ'ըլլայ "դէպք", եւ աշակերտք "կը կրկնեն", ո՛չ թէ "կը վարժին կրկնել", նկարագիր հինգ մասանց աշխարհի, եւ Գերմանիոյ մասնաւորապէս. օգերեւութաբանական երեւոյթք, փոթորիկք, սկզբունք հողագործութեան եւ առողջաբանութեան, երգ՝ որպէս նախորդ տարին, ուր նշանակուած է երգ երկու եւ չորս ձայնով: Բրուսիական նախակրթարանին մէջ, որպէս կը յայտնէ Էմիլ տը Լավըլէյ իւր "Կրթութիւն ժողովրդեան", անուն գրքին մէջ (1872), ուսման առարկայք են կրօնք՝ շաբաթական 6 ժամ, ընթերցում եւ գիր՝ 12 ժամ, հաշիւ՝ 5, երգ՝ 3 ժամ: "Տղոց կը սրուին, կ'ըսէ Լավըլէյ, պատմութեան, աշխարհագրութեան, բնագիտութեան, բնական պատմութեան եւ գործնական գիտելեաց ծանօթութիւններ, բայց այս ծանօթութիւնք առանձին ճիւղ չեն կազմեր, ընթերցանութեան ընթացքին մէջ կը մտնեն առանձին հատուածներու միջոցաւ զորս ուսուցիչք կը բացատրէ:", քիչ մը հեռուն կը յաւելու. "ի Բրուսիա նախնական կրթութեան յատկանիշն է սահմանաւորումն ականդեալ նիւթոց, որք շատ աւելի քիչ են քան ի Սաքսոնիա եւ ի Վիւրթեմպերկ", Այժմ ակնարկ մը նետեմք Սէնի նահանգին նախակրթութեան ծրագրոյն վրայ (որ այժմ աւելի եւս զարգացեալ է ըստ վերջին պաշտօնական ծրագրոց) ուր բարձրագոյն ընթացքին համար կը գտնեմք նշանակեալ Բարոյական եւ կրօնական կրթութիւն — քրիստոնէական վարդապետութիւն ըստ հրահանգի կրօնից պաշտօնէին. Հին եւ Նոր կտակարան. Ընթերցանութիւն — ընթերցումն գրքերու եւ ձեռագրաց մէջէ, բացատրութեամբք եւ ամփոփմամբք. ընթերցումն լատիներէնի. Գիր — ընթացիկ, բոլոր եւ կոթագիր. Գաղիերէն լեզու — պատճառաբանեալ կիրառումն քերականութեան կանոնաց ի վերայ դասական բնագրաց. վարժութիւնք պարզ տեսակ շարագրութեան. Հաշիւ կամ համարողութիւն — պատճառաբանեալ ուսումն թուաբանութեան (ամբողջ եւ տասնորդական թիւք, հասարակ կոտորակք), կիրառումն գործնական խնդրոց. Չափական դրութիւն — կիրառումն մեզրական դրութեան մակերեւոյթներ եւ ծաւալներ չափելու. (այժմ պաշտօնական ծրագիրք կը յաւելուն ամփոփ ծանօթութիւնք ի վերայ մակարդակ երկրաչափութեան եւ չափման գործածական ծաւալից). Տարերք բնագիտական ու բնապատմական գիտութեանց (այս

մասը փոխ կ'առնում նոյն իսկ պաշտօնական ծրագրէն) — Մարդը, (ծանօթութիւնք ի վերայ մարսողութեան, արեան շրջանի, շնչառութեան, ջրային դրութեան, զգայարանաց, գործնական խրատք առողջապահութեան, զեղծութիւն ալքոհոլի, ծխախոտի, եւն: Անասունք, մեծ գիծք դասակարգութեան, օգտակար եւ վնասակար կենդանիք. բոյսք, էական մասունք տնկոց, գլխաւոր խումբք, բուսախնդրութիւնք. Հանքք, ամփոփ ծանօթութիւնք ի վերայ հողոյ, ժայռից, բրածոյից, գետնոց. Առաջին ծանօթութիւնք բնագիտութեան եւ բնալուծութեան. աւելի դասաւորեալ ծանօթութիւնք հողային վաստակոց, մշակութեան գործեաց, ճախճախուտ վայրերու ցամաքեցուցման, բնական եւ արուեստական պարարութեանց, սերմանացանութեանց ու քաղից, հողագործական հաշուակալութեան. ծանօթութիւնք պարտիզամշակութեան, գրլխաւոր եղանակք տեղւոյն օգտակարագոյն բուսոց բազմապատկութեան, ծառամշակութեան ծանօթութիւնք, կարեւորագոյն պատուաստմունք. — Պատմութիւն Գաղիոյ — վերատեսութիւն Գաղիոյ պատմութեան՝ սկիզբէն մինչեւ ի հարիւրամեայ պատերազմն եւ ընդլայնեալ պատմութիւն անտի մինչեւ մեր օրերն, (այժմ վերջին պաշտօնական ծրագիրք կը յաւելուն՝ խիստ ամփոփ ծանօթութիւնք ընդհանուր պատմութեան, հնութեան համար՝ Եգիպտոս, Հրեայք, Ելլադա, Հռոմ, Միջին դարու եւ Նոր ժամանակաց համար՝ մեծ դէպքերն, ուսումնասիրուած մանաւանդ Գաղիոյ պատմութեան հետ իրենց առնչութեանց մէջ). Աշխարհագրութիւն — բնական, քաղաքական, հողագործական, ճարտարական եւ առեւտրական Գաղիոյ, (նոր պաշտօնական ծրագիրք կը յաւելուն՝ բնական եւ քաղաքական աշխարհագրութիւն Եւրոպիոյ. աւելի ամփոփ աշխարհագրութիւն աշխարհի այլ մասանց, քարտիսագրական վարժութիւնք մտաւոր): Աերջապէս Գծագրութիւն, գծական եւ զարդագծական, Երգ (ուսումն սկզբանց եւ երգեցողութիւն միաձայն կամ խմբովին երաժշտական հատուածոց), Յիշողութեան վարժք (ծաղկաքաղ հատուածք ի դասական բնագրաց), Կար՝ աղկանց համար:

“Բայց սխալ մը կ'այ ուրեմն, կ'երեւի թէ լաւ հասկցուած չէ. այսչափ բան երեք դասընթացքի, գրեթէ երեք տարիներու ընթացքի մէջ ինչպէս կարելի է սղմեցնել. ուրեմն երկրորդ տա-

րինները լոկ կրկնութեան ու թեթեւ ընդլայնմամբ մը միայն վե-
 րատեսութեան տարիներ չպիտի ըլլան, այլ միանգամայն շարու-
 նակութեան, այնպէս որ վեց ընթացքի կամ տարւոյ կ'երեւի թէ
 կ'ստորաբաժանի նախակրթութեան ընթացքն ի Գաղիա եւ ո՛չ
 երեքի: Այս է Մ. Անդրէասեան էֆէնտիի երկրորդ առարկու-
 թիւնն: — Ո՛չ, եղբայր իմ. ձեզ խօսողը փոյթն ունեցած է ըստ
 կարի լաւ ուսուցնասիրելու ինչ որ պատիւն ունի ձեզ ներկայաց-
 նելու: Արդէն գաղղական կրթական օրինաց այն տրամադրու-
 թիւնքն, զորս քիչ յառաջ մէջ բերի, կարծեմ, բաւական եղան
 ապահովելու վարանոտ մտքերը բացատրութեանս ճշգրտութեան
 վրայ: Իւրաքանչիւր դասընթացքի ծրագիրը կ'ոտորաբաժանի մէկ
 տարւոյ տասն ամիսներու վրայ եւ հետեւեալ տարին անոնք որոց
 դեռ տարիքն ու կարողութիւնը չնբերցին անցնիլ վերին դասըն-
 թացքին՝ կը կրկնեն մի եւ նոյն ընթացքն իրենց դասընթացքին մէջ
 նոր մանողներուն հետ: Երբ դպրոցին զարգացման աստիճանը
 ներէ, զոր օրինակ մէկէ աւելի ուսուցիչներով դպրոցաց մէջ, որք
 նախակրթարանի զարգացեալ տիպերն են, մէն մի դասընթացք
 առանձին դասարան կազմելով, դիւրին կը լինի առաջին եւ եր-
 կրորդ տարիներու աշակերտաց խումբեր կազմել եւ, թէ եւ եր-
 կուքին ալ վրայ « մի եւ նոյն ծրագիրը » գործադրելով դարձեալ,
 աստիճանաւորում մը դնել դասուց եւ հրահանգաց մասին, որ-
 պէս օրէնքը կը տրամադրէ: Այս բան աւելի եւս կը դիւրանայ
 երբ դպրոցն այնքան հարուստ է աշակերտներով որ մինչեւ իսկ
 դասընթացքի մը երկու տարիներն առանձին դասարաններ կը
 կազմեն ու առանձին ուսուցիչ կ'ունենան: Իսկ մէկ ուսուցիչով
 գիւղական դպրոցի մը մէջ, զոր օրինակ, ուր երեք դասընթացք
 ալ ի միասին մէկ դասասրահի մէջ են, դժուարին կը լինի իւրա-
 քանչիւր տարւոյ աշակերտաց առանձին խումբ կազմելը, վասն զի
 մէկ ուսուցչի, եթէ օգնական աշակերտ մ'ալ ունենայ, անկարելի
 կը դառնայ վեց խումբի դասախօսել առանձին առանձին: Առ
 առաւելն ստորին դասընթացքը կրնայ ի հարկին հատուածներու
 բաժնուիլ ընթերցման եւ հաշուոյ համար, մնացեալին համար
 դարձեալ հաւաքական դասեր ստանալով: Անշուշտ միշտ պէտք
 չէ մոռնալ թէ կարգ մ'աշակերտք անցեալ տարի մ'ունին ըրած
 եւ պէտք չէ առ ոչինչ համարիլ տալ ստացեալ ուսումն եւ աշա-

կերան անհոգութեան մատնել երկրորդ տարին: «Ամսական բաշխում» խնդրող եւ հաստատող անձանց մտքէն չէ անցած բնաւ, կ'ըսէ Ժ. Նայեառ, դպրոցական տարւոյ մ'սկիզբն նախորդ տարւոյն մէջ շահեալն զանց առնել: Եթէ թուարանութեան մէջ բաժանման հասնող տղան թիւ կարդալու, յաւելում եւն ընելու կը վերագառնայ, այդ բաներն աւելի մանրամասնութեամբք վերստին տեսնելու համար, զանոնք լաւ եւս հասկնալու համար է. բայց անշուշտ բնաւ արգելք չկայ որ յարմար վարժութիւններով տղուն արդէն ունեցած ծանօթութիւնքն պահել տրուի: Արդէն այլապէս գործել խոհեմութիւն չպիտի ըլլար: Նմանօրինակ առարկութեան մը պատասխանելով, Նայեառ կ'ըսէր արդէն «Այդ առարկութիւնը իւր ոյժը կը կորսնցնէ, եթէ, գործագրութեան մէջ, ուսուցիչն ուզէ համոզուիլ թէ տղայ մը չէ կարող մի միակ տարւոյ մէջ ուսանիլ դասընթացքի մը ծրագրին ամբողջ նիւթը: Անշուշտ երկրորդ տարի մը պիտի ընէ, կամ մի եւ նոյն դասարանին մէջ՝ եթէ խնդիրը գիւղական դպրոցի մը վրայ է, կամ նոյն դասընթացքին վերին բաժանման մէջ՝ եթէ տղան քաղաքային վարժարանի մէջ է: Պէտք է ուրեմն որ ուսուցիչը մի եւ նոյն բաժանման տղայոց միայն այնչափ տայ որչափ կրնան առնուլ. հարկաւոր չէ որ ամբողջ նշանակեալն ըսուի, ոչ ալ որ ամէն ինչ մի եւ նոյն աստիճանաւ ընդլայնուի: Պէտք չէ ուշագրութենէ վրիպեցնել որ տարրական դասընթացքի ծրագիրը, այնպէս որպէս նշանակեալ է ամսական բաշխման ցուցակին մէջ, կը ցուցնէ ոչ թէ այն ամէն բանը զոր աշակերտ մը ի հարկէ պիտի սովորի մէկ տարուան մէջ, այլ այն ամէնն զոր պարտի գիտնալ միջին դասընթացքն անցնելու համար: Ուրեմն չէ կարելի խորհիլ ամբողջ դասիկոնն մէկ անգամէն ելնել տալ անոր. ստտիճաններ պիտի ըլլան, որք են այն երկու եւ մինչեւ իսկ երեք տարիներն զորս պիտի զոհէ կտրել անցնելու համար դասընթացքն: Ուսուցչին անկ է մէն մի դասընթացքի ծրագրին մէջ յապաւումներ ու հատանումներ ընել՝ զայն իւր աշակերտաց իմացականութեան յարմարցնելու համար: Եթէ, օրինակի համար, Գեկտեմբեր ամսոյ մէջ Քարլովինկեան պետութիւնը պիտի դասախօսէ, անշուշտ է որ առաջին տարին անոր միայն մեծ գծերը պիտի ցուցնէ, եւ հետեւեալ տարին պիտի մտնէ ինչ ինչ մանրամասնութեանց մէջ:

Միջին եւ թարձրագոյն դասընթացք պիտի լրացնեն իւր գործը: Կը տեսնուի թէ ուսուցչին թողուած նախաձեռնութիւնը բաւական մեծ է տակաւին: Եւ ահա ինչ որ արդէն ըսած էի անցեալ անգամ ի պատասխանի Մ. Անդրէասեան էֆէնտիի երկրորդ առարկութեան:

(Արեւելք, Թիւք 2574, 2577 եւ 2580, տարի 1892):

4. ԿՐԹՈՎՈՆ ԲՈՆՈՉԵՒՔ

1893ի ուսուցչական ժողովին Օրակարգը բաղկացեալ ըլլալով սա խնդիրներէն՝

ա. Դպրոցը ի՞նչ պայմաններով կրնայ նպաստել մանկանց ֆիզիքական զարգացման.

բ. Ուսուցումը, որպէս զի ո՛չ միայն տղայոց ծանօթութիւններ աւանդելու, այլ եւ անոնց մտաւոր կարողութիւնները մշակելու եւ զարգացնելու ծառայէ, ի՞նչ մեթոտներու պարտի հետեւիլ.

գ. Ի՞նչ միջոցներով կարելի է լաւագոյնս նպաստել տղայոց բարոյական դաստիարակութեան եւ իրենց նկարագրին բարւոք կազմութեան,

Գործիս հեղինակը, իբրեւ եզրակացութիւն վիճաբանութեանց, հետեւեալ Բանաձեւերը ներկայացուցած է, որք ժողովէն ընդունուած են միաձայնութեամբ եւ զորս օգտակար կը համարինք գնել աստ իբրեւ ամփոփող եռակի դաստիարակութեան կարեւոր սկզբունքներն ու եղանակները եւ մատնանշող մեր պակասներն ու պէտքերը, հետեւապէս եւ յանձնարարելի մեր Դաստիարակաց եւ կրթական Վարչութեանց նկատառութեան:

Ա. Ֆիզիքական դաստիարակութիւն:

1. Մեր դպրոցաց մէջ ֆիզիքական դաստիարակութիւնը ամենէն աւելի անխնամ թողուած կէտերէն մէկն է:

2. Տղայոց առողջութեան պահպանման ու մարմնոյն զարգացման վրայ մասնաւոր հոգածութեան պարտականութիւն ստանձնող պաշտօնեայ կը պակսի, քանի որ մեր կրթական պաշ-

ածնեայք զեռ միայն ուսմանց այս կամ այն ճիւղին դասախօսողն են միայն, եւ ոչ բառին բուն նշանակութեամբ դաստիարակներ:

3. Պէտք է փութով ի գործ դնել դասարանական բաժանման դրութիւնը եւ մէն մի դասարանի համար կարգել դաստիարակ — ուսուցիչներ, որք, բացի տղոց իմացական ու բարոյական կրթութենէն, ստանձնեն նաեւ նոցա առողջութեան ու ֆիզիքական կարողութեանց պահպանման եւ զարգացման խնամքը:

4. Մեր դպրոցաց շէնքերն ընդհանրապէս անհամաձայն են առողջապահական պայմանաց, անբաւական են տղայոց թուոյն, եւ անմաքուր վիճակի մէջ կը պահուին:

5. Գրասեղանք եւ նստարանք — թէ եւ կան տեղեր ալ ուր ասոնք բոլորովին կը պակսին — անյարմար են տղայոց հասակին ու մարմնոյն առողջութեան վնասող կերպով շինուած են անգիտօրէն:

6. Փափաքելի է որ Վազմական Կանոնագրով խոստացուած Հրահանգը ի մասին վարժարանական շինուածոց ու կահուց ողջ պահիկ պահանջմանց՝ հրատարակուի ի մտոյ, եւ մեր Թաղ. Խորհուրդք եւ Հոգաբարձութիւնք փութան դպրոցաց շէնքերն ու կահաւորումը համաձայնեցնել անոր, եւ այսուհետեւ անոր տրամադրութիւնք ի նկատ առնուին դպրոցական նոր շէնքի մը շինութեան եւ պատրաստութեան ատեն, հրատարելով աւանդական ծանօթ տիպէն որու համեմատ շինուած են մեր ամենէն նորակերտ վարժարաններն ալ:

7. Ուսուցիչք եւ տեսուչք, լաւագունին սպասելով, կրնան արդի պայմանաց մէջ ալ ըստ կարի գոհացնել առողջապահութեան պահանջումները, եթէ փոյթ տանին — ինչ որ զանց կ'առնուի յաճախ — դպրոցաց սրահներուն ու դասարանաց մէջ օդին յաճախակի փոփոխման ու նորոգման (ամէն դասամիջոցի տղայքը պարտէզ հանելով կամ ձմեռը բակը իջեցնելով եւ դուռ ու պատուհան բանալով), նոյնպէս եւ ճեմիշներու ստէպ մաքրութեան եւ հականեխման:

8. Պարտէզ ու բակ անհրաժեշտ են դպրոցաց, եւ սակայն շատ տեղեր կը պակսին կամ գտնուածները շատ անբաւական են: Թաղ. Խորհուրդք եւ Հոգաբարձութիւնք չեն կրնար աւելի օգ-

տակար բան մ'ընել քան փութալ լրացնել այս մեծ պէտքն ուր որ չէ գոհացուցուած կամ շատ թերապէս միայն:

9. Պէտք է մեծ կարեւորութիւն տալ խաղերու եւ մարմնական շարժմանց ու մարզանաց, ստիպել ամէն աշակերտներն ալ, մանչ թէ աղջիկ, որ զբօսնուն, խաղան, վազեն: Մարմնամարզի համար կարելի է շատանալ մէկ երկու պարզ ու դիւրագնի գործիներով (տրապէզ, օզակներ, հաստատուն ու զուգահեռական ձողեր), եւ անհրաժեշտ չէ անշուշտ մասնագէտ ուսուցիչ մ'ունենալ աղայոց մարմնամարզ ընել տալու համար. նպատակը դնդերները մարզել ու զօրացնելն է, եւ ձեռք ուսուցիչ քիչ մը բարի կամեցողութեամբ կարող է ունիլ եւ ուսուցանել մարմնամարզական պարզ կրթութիւնները:

10. Դաս եւ զբօսանք, մտաւոր եւ ֆիզիքական վարժութիւնք պէտք է որ իւրաւ յաջորդեն եւ միմեանց փոխանակեն, մտաւոր անընդհատ յոգնութիւնը առողջութեան վնասող մեծ պատճառ մ'ըլլալով: Ապա անհրաժեշտ հարկ է որ կանոնաւոր դասամիջոցներ ըլլան 10—15 վայրկեան, ինչ որ դեռ ընդհանրապէս ի գործ չի դրուիր մեր վարժարանաց մէջ, տղայոց հասակին համեմատ դասուց տեւողութիւնը զանազանի 20 վայրկեանին ու 1 ժամուն մէջ եւ ցերեկուան հանգիստն լինի ճաշով հանգերձ գէթ $1\frac{1}{2}$ ժամ:

11. Պէտք է որ տղայք ամէն առաւօտ, դպրոց մտած ատեննին, տեսչին կամ ուսուցչին կողմէն իրենց գլխուն, երեսին, ձեռաց եւ զգեստներուն մաքրութեան մասին քննութեան ենթարկուին, եւ անմաքուրները ետ ղրկուին, որպէս զի պահանջեալ մաքրութեամբ վերագառնան:

12. Տղայոց փոքր հասակէ սկսեալ պէտք է տալ առողջապահական խրատներ անդառութեան, հագուստի, բնակարանի, ջերմութեան, լուսաւորման պայմաններուն եւ հիւանդութեանց պատճառներէ զգուշութեանց մասին, խօսակցութեանց եւ ընթերցմանց միջոցաւ, եւ քիչ մ'աւելի յառաջացեալ հասակի մէջ՝ առողջարանութեան կանոնաւոր դաս մ'ընել անպատճառ:

13. Ֆիզիքական զարգացումը ներփակելով նաեւ մարմնական ճարտարութեան ու զգայարանաց աջողակութեան զարգացում, առ այս, բացի խաղերէն ու մարմնամարզէն, ի կիր պէտք է

առնուլ ձեռական պարապուճները, արհեստական պարզ գործեաց գործածութիւնը, առարկայից վրայ տեսնելու, դիտելու, զննելու, շօշափելու, կշռելու, չափելու, լսելու, հոտ եւ համ նայելու եւ զանազան զգացողութիւնքն իրարու հետ բաղդատելու եւ նմանութիւններն ու տարբերութիւնները գտնելու, վերջապէս գծագրելու եւ երգելու վարժութիւնները:

14. Թաղ. խորհուրդք եւ Հոգաբարձութիւնք վայրկեան մ'իսկ պէտք չէ որ ուշանան իրենց խնամոց տակ եղած վարժարանաց համար այցելու բժշկի մ'ընտրութիւնն ընելու, որ ամէն շաբաթ վարժարանաց առողջապահական վիճակը քննէ եւ հարկ եղած ընդհանուր պատուէրներն ու մասնաւոր հրահանգները տայ աշակերտաց առողջութեան մասին, որպէս կը տրամադրէ կազմական կանոնագիրը:

Բ. Իմացւան դաստիարակութիւն:

1. Մեր նախակրթարանաց մէջ կը կարծուի ընդհանրապէս թէ իմացական դաստիարակութիւնը մի միակ նպատակ ունի, այն է տղուն բան սովորեցնել, այս կամ այն պիտանի ծանօթութիւններն աւանդել: Բայց պէտք է գիտնալ թէ այս նպատակին հետ կայ նաեւ եւ մանաւանդ տղուն մէջ առողջ, գործօն, լաւ եւ ուղիղ խորհող եւ միշտ ուսանելու եւ զարգանալու ընդունակ միտք մը կազմել. եւ այս կը լինի ուշագիւր լինելով զ՛շ միայն ուսուցման նիւթերուն, այլ եւ անոնց աւանդման կարգին ու եղանակին, այնպէս որ տղուն մտաւոր զանազան կարողութիւնքն, ուշադրութիւն, դիտողութիւն, յիշողութիւն, երեւակայութիւն, դատողութիւն, իմաստասիրութիւն, արտայայտութիւն, արթննան, գործեն, մարդուին, սրին, զօրանան աւանդեալ դասերով: Եւ արդէն առանց այսպիսի ուշադրութեան եւ խնամոց աւանդուած դասեր չեն կրնար նոյն իսկ ծանօթութեանց ստացումն ապահովել եւ մարտուելով մնայուն հետք մը թողուլ աշակերտին մտքին մէջ, այլ աւելի կը ծառայեն զայն ընդունայն չարչարելու եւ թթացնելու:

2. Ուշադրութեան հիմնական կէտը պէտք է լինի իմացականութեան զարգացման բնական ընթացքը, որուն համեմատ միտքը կ'երթայ պարզէն բաղադրեալին, ծանօթէն անծանօթին,

Թանձրացեալէն վերացեալին, փորձառականէն բանաւորականին. եւ ըստ այսմ՝ ուսուցումը պէտք է որ նախ պարզ եւ հարեւանցի ծանօթութիւններ, տարրական գիտելիքներ ներկայացնէ տղոց մտքին՝ յաջորդ աւարիներուն մէջ աստիճանաբար ընդլայնելու եւ լազմամասնելու համար (ինչպէս կը տրամադրէ երեք համակերպումն դասընթացքներու դրութիւնը): Պէտք է որ ամէն դաս մեկնի նախապատրաստութենէ մը՝ անոնց արդէն ունեցած գիտակցութեամբ, զայն զարգացնելու եւ անոր կապակցելու համար նոր ծանօթութիւնը: Պէտք է նախ եւ յառաջ փոքրիկ տղոց միտքն զբաղեցնել թանձրացեալ բաներով, անոնց ուշադրութիւնը հրաւիրել անհատ առարկայներուն ու մասնաւոր իրողութեանց վրայ, պնդել գիտելու եւ անոնց մասունքն ու հանգամանքները վերլուծելու եւ բաղդատելու դրդել եւ նմանութեանց ըմբռնմամբ ու վերացմամբ տակաւ վարժեցնել հանրացնելու եւ սահմանելու, եւ վերջապէս միշտ կարեւոր է ընդհանուր կանոններու եւ սկզբանց խելամոտութիւնը եւ անոնցմէ ընծայութիւնը պատրաստել՝ ներկայացնելով նախ մասնաւոր դէպքերն ու օրինակները, նախ եւ յառաջ փորձառական ծանօթութիւն կազմելով տղոց մտքին մէջ:

3. Պէտք է փոյթ ունենալ ներդաշնակաբար զարգացնելու մտքին ամէն կարողութիւնները եւ առ այս զանազանել ուսման նիւթերն ու վարժութիւնքն, ոչ միայն իրենց այլազան օգտակարութեանցն համար, այլ նա մանաւանդ վասն զի իւրաքանչիւրն աւելի մտաց այս կամ այն կարողութեան օժանդակութիւնը կը պահանջէ եւ հետեւաբար մասնաւորապէս կը նպաստէ՝ ի մէջ այլոց՝ անոր մարզման ու զարգացման: Այսպէս լեզուի ու բացատրեալ ընթերցման դասերը կը մարզեն մանաւանդ արտայայտման կարողութիւնը, դատողութիւնն ու ճշակը, — հատընտիր հատուածոց հասկացողաբար ի բերան ուսումն, հրահանգիչ վէպերն ու հէքեալթները, պատմութիւնն ու աշխարհագրութիւն՝ յիշողութիւնը, երեւակայութիւնը եւ դատողութիւնը, — թուաբանութիւնն ու երկրաչափութիւն՝ իմաստասիրութիւնը, — բնական գիտութիւնք՝ դիտողութեան, վերլուծման եւ խելամոտութեան կարողութիւնները, — երաժշտութիւն եւ գծագրութիւն՝ զգայարանները, երեւակայութիւնն ու ճաշակը: Ուստի եւ չէ

կարելի երբեք զանց ընել, ինչպէս եղած են մեր շատ մը նախակրթարանաց մէջ, բնապատմական ու բնագիտական դասերը, երաժշտութիւնն ու գծագրութիւնը, նոյնպէս եւ բացատրեալ ընթերցուածոց դասը նախակրթութեան ամէն աստիճաններուն մէջ, որով մանաւանդ կարելի է նաեւ ընթերցանութեան ճաշակն արթնցնել մանկան մէջ եւ անոր ապագայ ինքնուսումն յառաջդիմութիւնն ապահովել:

4. Դեռ ընդհանրապէս մեր վարժարանաց մէջ աւանդուած ուսումը բառերու ուսում է եւ ոչ իրաց: Տղայոց բերնուց սովելի կը տրուի դասագրքի մը բնագիրը կամ զուցագրեալ բանաձեւեր, եւ երբ կարող են թուրքերէ կրկնել՝ կը կարծուի թէ դասին նիւթը իւրացուցած են: Պէտք է հրաժարիլ այս հինցած ու փտած, տխմար ու մտասպան սովորութենէն որ միայն տղոց յիշողութեան դիմում կ'ընէ, իսկ կ'անտեսէ միւս կարողութիւնները, եւ որով ո՛չ մէկ իրական գիտութիւն կրնայ ստանալ ուսանողը, գիտնալու առաջին պայմանն ըլլալով հասկնալը: Յիշողութիւնն իսկ չի զարգանար այս մեթոտով, վասն զի լո՛կ բառից, ձայնից մեքենական յիշողութիւն մ'է այդ եւ ոչ գաղափարաց ու մտածմանց, եւ վասն զի ամէն կարողութիւն զօրեղ եւ հեշտ գործունէութիւն մը ստանալու համար պէտք ունի միւսներուն օժանդակութեան: Պէտք չէ երբեք պահանջել աշակերտներէն որ բառ առ բառ փոց ըրած ըլլայ դասը, այլ պահանջել որ հասկցած ըլլայ, այսինքն գաղափարաց պարունակութիւնը ու դատողութեանց կապակցութիւնն ըմբռնած ըլլայ, եւ հետեւապէս կարող դասին նիւթը կազմող իրողութիւններն ու ճշմարտութիւններն ազատօրէն իրեն յատուկ ձեւով ու զանազան կերպերով բացատրելու: Առ այս անշուշտ պէտք է որ ուսուցիչն ալ կանխաւ տղոց մօքին հասողութեան յարմար եղանակաւ մեկնած ըլլայ դասը, օրինակներով, փորձերով, ծանօթին հետ կապակցութեամբ եւ շօշափել տուած բառից ու բանաձեւոց տակ ծածկուած իրողութիւնները: Բառ առ բառ ուսումը պէտք է վերապահել միայն գրական կտորներու եւ գիտական տարազներու եւ սահմանաց, եւ դարձեալ հատուածը լաւ մը բացատրուելէ եւ տարազն ու սահմանը խելամտօրէն կամ ընծայաբար աշակերտէն ըմբռնուելէ եւ նոյն իսկ անոր կողմանէ եզրակացուելէ յետոյ:

5. Արդիւնաւոր ուսուցման մեթոտի էական մէկ տարրն է դէմ յանդիման տեսութիւնը (intuition), զգայարանօք ուսումը, ուղղակի եւ անմիջնորդական ըմբռնումն իրին: Ոչ մէկ բառական բացատրութիւն կրնայ անոր տուած պայծառ գիտակցութիւնը տալ, եւ բառից ու բառական ձեւոց իմաստը միշտ տարտամ ու շփոթ պիտի մնայ՝ ցորչափ դէմ առ դէմ չզրուի ուսանողն բնական եւ արուեստական առարկայից կամ գէթ անոնց ներկայացուցիչ նիւթոց ու պատկերաց հետ: Իրագիտական դասուց եղանակն է այս ղոր պէտք է ի կիր առնուլ որեւէ ուսուցման համար ըստ ներելոյ նիւթոյն: Անով դիտողութեան ու վերլուծման կարողութիւնը կը սրի, հետաքրքրութիւնը կ'արթննայ, մտապատկերներն ու տպաւորութիւնքը կենդանի ու խոր կ'ըլլան, գաղափարները՝ ճշմարիտ ու առատ, ու դատողութիւնները՝ հաստատուն եւ վստահ:

Առ այս հարկ է որ Թաղ. Խորհուրդք եւ Հոգաբարձութիւնք իրենց առաջին պարտքերէն մին համարին օժտել իրենց Թաղին դպրոցները կարեւոր հաւաքածոյներով՝ Փրէօպէլեան նուէրներու, բնապատմական, բնագիտական, արհեստական ու գեղարուեստական նմոյշներու, անհրաժեշտ գործեաց, չափուց ու կշռոց, պատկերաց ու քարտիսաց: Պէտք է նաեւ որ պատկերազարդ դասագրքերը նախամեծար համարուին, եւ աշակերտք մերթ ընդ մերթ ուսուցչաց առաջնորդութեամբ ուսուցմասիրական պտոյտներ կատարեն եւ գործարաններ ու թանգարաններ այցելեն:

6. Վերջապէս պէտք է կրաւորական մեթոտներու տեղը, որք աշակերտը կ'արձանացնեն ու կը մեքենայացնեն, դնել զործօն մեթոտները, այսինքն անոնք որովք ուսուցումը կ'ըլլայ ոգեւորեալ գործակցութիւնը ուսուցչին եւ ուսանողին: Առանց աշակերտին սիրայօժար գործօն մասնակցութեան ու կամաւոր փութոյն չէ կարելի ստանալ որ եւ է յաջողութիւն: Ապա պէտք է աշակերտը հետաքրքրել գիտնալ, արթնցնել ու վառ պահել անոր ուշադրութիւնը, անոր միտքը գործունէութեան մէջ դնել ու ինքնաբեր աշխատութիւնը քաջալերել: Այս կ'ըլլայ նախ մեր ուսուցման եղանակները բնութեան ընթացքին ու մանկան մտաց պահանջումներուն համաձայնեցնելով, ինչպէս բացատրուեցաւ

վերի յօդուածոց մէջ, որով ուսումը կը դիւրանայ եւ հրապու-
րիչ կը լինի, եւ յետոյ դասին տալով խօսակցութեան ձեւ մը,
ոչ միայն ուսուցիչն ինք խօսելով ճառօրէն, այլ եւ շատ անգամ
խօսեցնելով աշակերտները, բերանացի հրահանգներն ու փոր-
ձերը (գասահարցութիւնները) յաճախելով, իրենց հասկացողու-
թիւնն ու տպաւորութիւնը բացատրել ու պատմել տալով անոնց,
պատեհ հարցմամբք իրենց դիտողութիւնքն ու դատաստանը
գրգռելով, խորհրդածելու եւ իմաստասիրելու գրդելով ու հա-
մարձակեցնելով, սկզբապէս մեթոտին բանաւոր կիրառմամբ
իրենց իսկ գտնել տալով ճշմարտութիւններ, իրենց տարակոյս-
ներուն եւ հարցասիրութեանց յօժարափոյթ պատասխանելով,
ոչ մէկուն ներելով քնալ անտարբեր: Բերանացի հրահանգաց
պէտք է որ միանան նաեւ գրաւոր հրահանգներ, խնդիրներ,
գիւտի ու շարագրութեան վարժութիւններ, որոց մէջ աշակերտը
իր դասառութեամբ ու անձնական փորձով ուսածներուն կիրա-
ռութիւնը կ'ընէ ինքնաշխատ:

Գ. Բարոյական դաստիարակութիւն:

1. Ամէն դպրոց պարտի ունենալ իր տեսուչ-ուսուցիչը եւ
ամէն դասարան իր դաստիարակ-ուսուցիչը, առաջինը դպրոցին
ընդհանուր բարոյական ուղղութեան հսկող եւ պատասխանա-
տու, եւ երկրորդը՝ իր յատուկ դասարանին աշակերտաց բարոյա-
կան կրթութեան:

2. Նոյն իսկ դպրոցին մթնոլորտը պէտք է որ բարոյական
ըլլայ, ուսուցիչք բարի վարուց եւ ազնիւ զգացմանց օրինակը
տան աշակերտաց, սէր եւ անձնուիրութիւն ունենան անոնց հա-
մար, եւ ոչինչ ուսուցուի եւ թոյլ տրուի ընթեռնուլ որ տղայոց
բարոյական գիտակցութիւնը խանգարէ, այլ դպրոցական կեանքի
ամէն պարապուստներէն ելնէ բարոյացուցիչ ու ազնուարար
տպաւորութիւն մ'անոնց համար:

3. Պէտք է խնամով հսկել որ տղոց մէջ տիրէ ներդաշ-
նակութեան ոգին, եւ համակրական ձգտումներն ու փոխադարձ
սիրոյ եւ անձնուիրութեան զգացումները մշակել, օգուտ քաղել-
լով իրենց յարաբերութիւններէն կոչում ընելու համար ազնուա-
կան բնագոյմանց:

4. Պէտք է ուսուցումն ու հրահանգներն ու ընթերցումները ծառայեցնել, որքան հնար է, բարոյական կրթութեան, ընելով այնպէս որ տրուած օրինակները եւ վարժութիւնները բարոյական իմաստ մը պարունակեն, եւ ընթերցման ու շարագրութեան նիւթերը բարոյ եւ առաքինութեան յորդորող գործեր ու մտածութիւններ ներկայացնեն աշակերտներուն մտաց ու սրտին:

5. Պէտք է որ ուսուցիչն մեր առ անձն, առ նմանս, առ ազգն, առ երկիրն եւ առ Աստուած պարտուց վրայ սրտագին խօսի մերթ ընդ մերթ եւ խօսակցի աշակերտաց հետ՝ առիթ առնելով մանաւանդ օրուան դէպքերէն ու ընթերցումներէն. իսկ բարձրագոյն դասընթացքի մէջ պէտք է նաեւ կանոնաւոր դասախօսական ընթացք մ'ընել բարոյական պարտաւորութեանց վրայ. բայց միշտ պէտք է ի նկատ ունենալ թէ բարոյախօսութեան դասերու արդիւնաւորութեան մէջ մեծ դեր ունի ուսուցչին անկեղծ համոզման յուզեալ եւ կենդանի շեշտը:

6. Պէտք է ուսուցանել չին եւ Նոր կտակարաններն ու քրիստոնէական վարդապետութիւնը ո՛չ իբրեւ ծանօթութիւն լոկ, այլ մանաւանդ աստուածաշնչական պատմութիւններէն բարոյական խրատներ ու դասեր հետեւցնելու համար, եւ ԅիսուսի վարուց մէջ սիրոյ, գթոյ, ներման ու անձնուիրութեան վսեմ իտէալ մը ներկայացնելու համար:

7. Պէտք է ամէն կիւրակէ եւ տօն օրերը աշակերտները եկեղեցի տանիլ՝ ներկայ ըլլալու համար նուիրական արարողութեանց եւ լսելու Ս. Գրոց բացատրութիւնն եկեղեցւոյն քարոզչէն, որ եւ չպարտի զանց ընել իր այս շաբաթական կրթիչ պարտաւորութիւնը յօգուտ մեծաց եւ փոքունց:

8. Չէ ներելի երբեք ուսուցչաց թեթեւօրէն ու անզգոյշ կերպով խօսիլ աշակերտաց առջեւ կրօնական խնդիրներու վրայ եւ անոնց անհասկանալի կարի ազատախոհական մտածումներ յայտնել, ո՛չ թէ խոհեմութեան համար միայն ու մատաղ մաքեր չգայթակղեցնելու համար, այլ վասն զի ճշմարիտ դաստիարակի մ'աններելի է չզգալ կրօնին մեծութիւնը եւ մարդկային ճակատագրին վրայ անոր գործած մեծ ազդեցութիւնը:

9. Ամեն դաստիարակ-ուսուցիչ պարտի մտադիր ուսուսմասիրել իր սանուց բնաւորութիւնքն ու լաւ ճանչել զիրենք, անոնց յուր բնազդութիւնները զսպել եւ ջնջել, թերութիւններն ուղղել եւ լաւ արամադրութիւնքն ու յօժարութիւնները քաջաւերել ու զօրացնել ջանալու համար, յաճախ մասնաւոր կրթիչ միջոցներ պատշաճեցնելով իւրաքանչիւրին բնաւորութեան:

10. Ուսուցման ընտիր մեթոտք ունին մեծ կարեւորութիւն բարոյականի ալ տեսակէտով, զի լաւ խորհելու սովորութիւններ ստացած միտք մը զօրեղ նեցուկ մ'է բարոյականութեան: Բաց աստի, դաստիարակը պարտի օգուտ քաղել Գեղեցիկ Գարութեանց եւ Գեղարուեստից ընծայած կարեւոր նպաստէն յազնուացում զգացմանց:

11. Նկարագրի տէր անհասաներ պատրաստելու համար հարկ է ինքնագործ ինքնակամ գործունէութիւնը մշակել, կամքը զօրացնել, պատասխանատուութեան զգացումը զարգացնել, բանականութիւնը զինել աւողը սկզբունքներով: Ուսուցիչը պիտի յարգէ տղայոց մէջ բարոյական անձը, անոնց կամքի ազատութիւնը, չպիտի բռնաբար վարուի անոնց հետ, կանոնին ու իրենց օգտին հնազանդութիւն պիտի պահանջէ քան իր կամքին ու պիտի ընէ այնպէս որ աշակերտը կամաւ ու գիտութեամբ հնազանդի:

12. Պատիւ եւ վարձ՝ բանաւոր եւ չափաւոր կիրառմամբ պիտի կրնան գործածուիլ ոչ իբրեւ էական միջոցք կրթութեան ու բարոյականացման՝ այլ իբրեւ երկրորդական օժանդակ միջոցներ, աշակերտին պատուասիրութեան զգացումէն օգտուելու համար: Սկզբամբ՝ իրենց զարգացման պիտի աշխատին աշակերտք ոչ առ ահի պատժոյ, ոչ առ յուսոյ վարձուց, այլ ինքնաբեր յօժարութեամբ, ներքին տենչէ մղուած զոր գործ է զարթուցանել: Մարմնական պատիժք՝ իբրեւ գազանական վարմունք՝ անվայել են ճամբարի դաստիարակի, անոր բարոյապէս ներգործելու ապիկրութիւնը կը յայտնեն, ուսուցչին եւ ուսանողին մէջ կրթութեան գործին այնքան նպաստաւոր համակրական զգացմանց գոյութեան կը վնասեն եւ չեն կարող նկատուիլ բարոյացուցման միջոց:

5. ԳՐԱՐԱՐԻ ՌԻՍՈՒՄԸ ՆՈՒԲԱԿՐԹԱՐԱՆՈՑ ՄԷՋ՝ ԸՆԳՀԱՆՈՒՐ ՌԻՂՂՈՒԹԻՒՆ

Նախնական կրթութեան պաշտօնական պանոնագիրը տարրական նախակրթարանաց ուսմանց ընդհանուր Յայտագրին մէջ նշանակած է «Սկզբունք գրաբար հայերէնի»: Ըսել է որ գրաբարի տարրական ծանօթութիւն մը պէտք է աւանդուի մեր ամենէն յետին դպրոցաց մէջ ալ, եւ այս անշուշտ առանց պատճառի չէ:

Ինչ որ ալ ըսուի, գրաբարը մեզի համար բողբոջվին մեռեալ լեզու մը չի կրնար համարուիլ: Ամէն օր մեր եկեղեցեաց մէջ մեր ականջին կը զարնէ այն. անով կը լինին Ս. Գրոց ընթերցմունք տաճարաց մէջ, անով կը կատարուին եկեղեցական պաշտամունք: Արդ, եթէ կ'ուղենք որ ժողովուրդը անտարբեր չմնայ այդ կարգացուած բաներուն եւ իր հոգևով համակրի երգուած երգոց եւ արտասանուած աղօթից, ինչ որ պիտակից բարեպաշտութեան մ'առաջին պայմանն է, պէտք է որ քիչ շատ տեղեակ ընենք ամէն դպրոցէ ելնող այդ սրբազան լեզուին: Մենք դժուարաւ կրնանք երեւակայել աշխարհաբարը եկեղեցական լեզու եզած, մեր շարականներն ու նուիրական մատենաքը աշխարհիկ լեզուաւ երգուած ու կարգացուած եկեղեցւոյ մէջ: Ապահով եղէք որ անոնք իրենց սրբութենէն, իրենց վեհութենէն բան մը պիտի կորսնցնէին մեզ համար, եւ, ամէն պարագայի մէջ, մեր հարց եկեղեցին չպիտի ճանչէինք անոնց մէջ. հոգեկան կապի մը, որով կապուած կը զգամք այժմ զմեզ մեր սրբավայրաց մէջ մեր նախնեաց հոգիներուն հետ, խզուիլը պիտի զգայինք մեր մէջ: Եւ եթէ եկեղեցական լեզուն ուսմանն ընդու պէտքը զգալի չեղաւ նոյն իսկ այնպիսի ժամանակներու մէջ որ աշխարհաբար քարոզներն ալ գրաբար կը կարծուէին, հիմայ եւ յետ այսօրիկ որ կրթութիւնը կը զարգանայ ու պիտի զարգանայ տակաւ մեր մէջ՝ այդ պէտքը եւս աւելի անզգալի պարտի դառնալ, վասն զի հասկացողներու թիւը ո՛չ թէ պիտի պակսի, այլ ընդհակառակն:

Գրաբարը բողբոջվին մեռեալ լեզու մը չի կրնար համարուիլ դարձեալ անոր համար որ գործօն դեր մը կը կատարէ միշտ աշխարհաբար գրաւորին մէջ: Թէ եւ աշխարհաբարն ունի իր

Հօլովմանց եւ խոնարհմանց յատուկ ու սովորական կերպերը, բայց ո՛վ չի գիտեր թէ գրաբար Հօլովմունք ու խոնարհմունք եւս կրնան ու կրցած են միշտ ի ճահ գործածուիլ աշխարհաբար գրուածոց մէջ, — եւ պէտք է դիտել թէ այս երկու բանը (Հօլովման ու խոնարհումը) էական մասունքն են լեզուի մը գիմագծութեան:

Բանանք Հաւաքածոյ մ'աշխարհիկ ընթերցուածոց. ահա ըստ բախտի պարբերութիւն մը Գ. Վ. Սրուանձաեանցէ.

“Երկիրը տեղ տեղ անմշակ՝ այլ խոտուէտ, որոց մէջ քազմութիւն ձիոց խրոխտ կը խրխնջեն եւ եզիկն ծանր կը բառաչեն արածելով:”

Դարձնէք. Թափառական Հրեայէն է, Կ. Ս. Իւթիւ-ճեանի Թարգմանութիւն.

“Յօնքը բարակ, կամարածեւ եւ քաջաթուխ է՝ իր երկայն արտեռանակնց պէս որք իր լերկ այտերուն վրայ ստուեր կը ձգեն, ըստրագոյն ջրթռնքը՝ թեթեւ կերպով կիսաբաց՝ մնչեան շունչ մը դուրս կու տան:”

Դարձնէք. Ե. Տէմերձիպաշեանն է որ կը գրէ.

“Ամենէն հսկայ շերիկն Արեւելից մէջ կը բարձրանան, ամենէն լայնատարր եւ արգաւանդ դաշտոյսք Արեւելից մէջ կը տարածուին ու կը պտղաբերին, ամենէն ակնախտիղ գոհարներ Արեւելեան հողոյն ներքեւ կը թաքչին. ամենէն ակնապարար բոյսեր Արեւելեան արշիտոյն ներքեւ կը փթթին, ամենէն տիտան մարդիկ եւ ամենէն տիտան կենդանիք արեւելից են որդիր:”

Դարձնէք. “Դրախտի ընտանիք”էն առնուած հատուածի մը մէջ կը կարդանք.

“Բանգի հայր ու մայր անոռանք նախասկիզբն արմատ են այլ ամէն անոռանց: Իշխան, ժողովուրդ, ազգ՝ հայր ու մայր անոռանց ծնողական շառաւիղներն են որ նոյն միացեալ արմատէն եւ երկճի բնէն կը բուսնին եւ կը ափոյն աշխարհիս վրայ:”

Դարձնենք. «Յուշիկ, ներու հեղինակն է որ կը խօսի.

«Թէպէտ եւ զանազան են հասակք եւ վիճակք, այլ ամէնքն ալ ըստ շարժում եւ ըստ վիճակի իրենանց՝ պարտական են երկնից:»,

Դարձնենք. ահա Օտեան կը գրէ.

«Հազիւ հազ այս մէկ քանի ամսուան մէջ երբեմն կը կը ցրուին մատախոռոք, եւ թոյլ կու տան նշողիցն արեգական փայլելու Լոնտոնի մշտականաչ մարմանդներուն վրայ:»,

«Հացկերոյթք ու երկերոյթք իրարու կը յաջորդեն ու ցերեկներն ալ պարտէզներու մէջ կը շարունակին տօնք ու հանդէսք:»,

Եւ այլուր.

«Ո՞չ ապաքէն ամենայն ինչ կ'աղօթէ յաստիս...: եւ միայն մարդս շարժի աղօթէ, մարդս՝ որոյ վրայ կը խուժեն ստիպք, որ բոլոր բնութեան մէջ անժառանգեալ ինքն է միայն որոյ մխիթարութեանը, յոյսն ու մեծութիւնն է խօսիլ ընդ Աստուծոյ:»,

Դարձնենք. Մայտայի հեղինակուհին կը շարժէ իր գրիչը.

«Մերթ ընդ մերթ վանկ մի կը լսուի, ուրիշ մի կը պատասխանէ սոսաջնոյն, եւ յանկարծ երաժշտական ամբողջութիւն մի կը կազմուի: Ի՞նչ կը խօսին թոշոռնք. ի՞նչ կ'ուզեն. կը ձանաչին արդեօք իբրեւ զմեզ վիշտն ու հրրճուանքը, կը ճանաչին ծնողաց սրտին ցարը, կը ձանաչին կենաց պատրանքը, կ'ողբան սիրեցեալ բացակայի վրայ, կուլան կը հիւծին անհնարին բաղձանքներով:»,

Այս օրուան Հայրենիքն ալ աչքիս առջեւն է, որուն մէջ կը կարդամ.

«Վերջերս սաստիկ կռիւ մ'ունեցաւ Ռոպերդ Պիշտանան անուանալի թատերագրի մը եւ թատերապետի մը հետ՝ յիշեալին՝ «բարձր դաստի թեթեոնիկ մը», վերնա-

գրով մէկ նոր խաղին նկատմամբ: Քննադատը Ռ. Պիչա-
նուանի խաղը իրաւամբ դարովել է ետքը եւայլն.,,

Այս բոլոր օրինակները, գորս կրնայի ըստ հաճոյս շատցնել,
ցոյց կու տան որ գրաբարը միշտ աշխարհաբարին մէջ է, անոր
մէջ կ'ապրի, նոյն իսկ իր հոլովումներով ու խոնարհումներով որ
լեզուի մը կենդանութեան ջղերն են: Հ. Արսէն Այսրնեան իր
Աշխարհաբարի քերականութեան մէջ (Կանոն 39) կը գրէ.
“Անուններէն շատերը գրաբարի նման ալ կրնան հոլովուիլ:”
Ուլ բայական վերջաւորութեան վրայ խօսելով կ'ըսէ թէ գրա-
բարի մէջ զատ լծորդութիւն մը կը կազմէ, “որուն այլ եւ այլ
բայերուն կանոնաւոր ժամանակները (աներեւոյթը, սահմանական
ներկայներն ու անկատարները — եւ ըստ սահմ. ներկային ու ան-
կատարին նաեւ անշուշտ ստորագասականին ներկայներն ու ան-
կատարները) կրնան համարձակ գործածուիլ արդի լեզուին մէջ.
ինչպէս՝ զենուլ, կը զենու, կը զենուր, որ զենու, որ զենուր,
թող զենու, եւն. — նոյնը իմացիր նաեւ շատ մը գրաբար
բայերու համար որ եկամուտ գիր ունին, ինչպէս՝ բեկանել, ար-
կանել, լուծանել, յառնել եւն.: Գրաբարի նախդիրներ ու
ոճեր եւս շատ անգամ կը գործածուին աշխարհաբարի մէջ, եւ
գիտեմք որ ոտանաւորը որ աստիճան մեծ տեղ մը կու տայ գրա-
բարի ձեւերուն: Իսկ գրաբարի բառական միջերբը գրեթէ ամ-
բողջութեամբ կրնայ մտնել ու գործածուիլ աշխարհաբարի մէջ,
որու բառարանը ցարդ այսու փոխառութեամբ մանաւանդ ճոխա-
ցած է տակաւ:

Գրաբարին ուսումն ապա նոյն իսկ աշխարհաբարին տեսա-
կէտով պէտք մը կը դառնայ: Կամ այն է որ աշխարհաբարին
քերականութեան մէջ պէտք է քիչ շատ ձուլուի գրաբարի քե-
րականութիւնը, ինչպէս ըրած է Հ. Այսրնեան, որ եւ զուտ
գրաբարի քերականութեան յաւելուած մը կցած է իր գործոյն,
կամ այն է որ զուտ աշխարհաբար ձեւերու վրայ հիմնեալ քե-
րականութիւն մ'անբաւական է հայերէնին ուսման եւ միշտ ան-
հրաժեշտ պէտք մը պիտի ըլլայ ճանչցնել առանձին գրաբարի
քերականութիւնը, գէթ իր ընդհանուր ձեւերուն մէջ:

Այս վերջինն է անշուշտ օգտակարը, որով ոչ միայն աշա-
կերտը կ'ուսանի հասկնալ աշխարհաբար գրութեանց մէջ գոր-

ծածուած գրաբարակերպ ձեւերն ու ասութիւններն ու անոնց օրէնքները գիտնալ եւ ինքն ալ իր կարգին կարող ըլլալ գործածել, այլ եւ կարողութիւն կ'ստանայ հասկնալու պարզ գրաբար գրուածները, որք շատ անգամ միայն իրենց բառից քերականական վերջաւորութեամբն ու դասաւորութեամբ կը զանազանին իրենց աշխարհաբար թարգմանութենէն. — ինչ որ կը տեսնուի բաղդատելով, օրինակի համար, հետեւեալ տողերն իրենց մաքուր աշխարհաբար թարգմանութեան հետ.

Գրաբար

Հողմավար կորնչիմ, մըրըկօրէն վարեն զիս վիշտը.
Կարօտիմ գերեզմանի, կոչեմ զօրհաս եւ խուլ է ինձ.
Տառապիմ կողկողիմ, եւ ոչ գիտեմ զինչ գործեցից...
(Յոր)

Աշխարհաբար

Հողմավար կը կորնչիմ, վիշտը մըրըկօրէն կը վարեն զիս.
Գերեզմանի կը կարօտիմ, օրհասը կը կոչեմ եւ նա խուլ է ինձ.
Կը տառապիմ, կը կողկողիմ, եւ չգիտեմ թէ ինչ գործեմ...:

Բայց պէտք է դիւրացնել աղայոց գրաբարի ուսումը, եւ ահա թէ ինչ պէտք է ընել առ այս:

Պէտք է նախ եւ յառաջ, ցարդ շատ տեղ եղածին հակառակ, բաժնել քերականական արուեստին ուսումը գրաբարին ուսումէն: Մեր մէջ ընդհանրապէս աշակերտը գրաբարին ուսման հետ երկու բան միանգամայն կը սովորի. մէյ մը բուն քերականութիւն ըսուած բանը որ ընդհանուր բան մ'է, այն է բառից տեսակներուն, անոնց եղանակաւորմանց ու պաշտօններուն ուսումը, եւ յետոյ՝ գրաբարին յատուկ ձեւոց ու գործածութեանց ուսումը: Տղան միանգամայն կը սովորի, դեռ առաջին անգամ, թէ ինչ է գոյական, ածական, դերանուն, բայ, եւն. ինչ են ենթակայ, ստորոգելի, խնդիր, յատկացուցիչ, եւն. ու մի եւ նոյն ատեն թէ գրաբարի մէջ ինչ փոփոխմունք կը կրեն եւ համաձայնական ինչ կանոնաց ենթակայ են անոնք: Այս կերպով երկու դժուար

բութիւններ հիւսուած ու կնճռուած են իրարու հետ, եւ աշակերտը ի վտանգի է ոչ մին եւ ոչ միւսը սովորելու. արդարեւ շատ անգամ, ընդ երկար յեղյեղելէ յետոյ քերականական արուեստական բառերն ու գրաբարին հոյովներն ու խոնարհմունքն, կ'ելնէ գպրոցէն ո՛չ իսկ լաւ ըմբռնած գոյականին բնութիւնը կամ սեռի խնդրոյն դերը, զոր օրինակ: Ոչ. պէտք է գծուարութիւնները բաժնել. նախ աշխարհաբարով, տղուն արդէն գիտցած լեզուական ձեւերուն վրայ, պէտք է ուսուցանել իրեն գաստակարգել բառերը իրենց բնութեան համեմատ, վերլուծել խօսք մ'իւր մասերուն եւ ըմբռնել անոնց առնչութիւնքն, շատ մը հրահանգներով որոց լեզուն հասկանալի եւ ծանօթ է իրեն, եւ որք լինին մի եւ նոյն ատեն մտածելու եւ բացատրելու մարզանքներ, բառագիտութեան ու ոճոյ կրթութիւններ: Յետոյ, երբոր ուսանողն արդէն գաղափար ունի լեզուի կազմական տարերց ու համադրական օրինաց վրայ, պէտք է, ծանօթէն անծանօթին երթալու օրինօք, ձեռնարկել գրաբարի ուսուցման, որ այլ եւս պիտի կայանայ մի միայն գրաբարին յատուկ ձեւերուն եւ օրինաց ուսուսնասիրութեան մէջ, ասոր հրահանգներն ալ յաւէտ քերականական նպատակ ունենալով քան մտամարզական. նոյն իսկ լեզուին բառական միջերջն մեծաւ մասամբ կրնայ աւանգուած ըլլալ ու շարունակել աւանդուիլ աշխարհաբարի կրթութեանց հետ: Այս մեթոտով աշխարհաբարին ուսումը պատրաստիչ, դիւրացուցիչ մը կ'ըլլայ գրաբարին ուսման, եւ գրաբարին ուսումն ալ աշխարհաբարի ուսման լրացուցիչ մը, պսակ մը, անտարակոյս դպրոցին աստիճանին չափով, տարրական նախակրթարանին մէջ գրաբարի սկզբանց միայն ծանօթութիւն մ'աւանդելով ու զարգացնելով զայն առ յապա բարձրագոյն նախակրթարանին ու երկրորդական վարժարանին մէջ: Գիտեմք որ գրաբարին ուսումը նաեւ սա օգուտն ունի որ անով կրնան բացատրուիլ ու հասկցուիլ իրենց ծագման ու պատմական ընթացքին մէջ շատ մ'աշխարհիկ լեզուի ձեւեր ու գործածութիւններ:

Այս եզրակացութեան կը հասնի արդէն Հ. Արսէն Այտընեան ալ ու այսպիսի ուսուցման մը կոուանին վրայ կը տեսնէ կարելութիւնն միութեան երկու հակառակորդ կողմանց, աշխարհաբարեանց ու գրաբարեանց, նոյն իսկ իւրաքանչիւր կողմն հաս-

տատ մնալով իր սկզբանց վրայ ու իր շահու տեսակետովը դատելով:

Համաձայնութիւնը շուտով կը գոյանայ, կը խորհի նա.

“1. Նկատելով աշխարհաբարն իբրեւ դիւրացուցիչ եւ իբրեւ առաջին աստիճան գրաբարի ելլելու. — որուն համար հարկ է նշոնն օրինօք աւանդել.

“2. Նկատելով գրաբարն իբրեւ էապէս հարկաւոր աշխարհաբարի կատարելութեանը. — որուն համար երբեք պակսեցնելու չէ գրաբարի ուսումը.

“Միայն այս կէտին վրայ, կը յաւելու, կը տեսնենք մեր մեր ներկայ եւ ապագայ ազգային գրականութեան պայծառութիւնը...”,

(Մասիս, Մանկավարժական հանդէս, Նոր շրջան, Թիւ 3, 1894.)

6. ԹԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ ՄԵՐ ՆՈՒՆԿՐԹՈՐԱՆ- ՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Յայտնի է որ նախկրթարանին առաջին պարտաւորութիւններէն մին է ուսուցանել մայրենի լեզուն, այն է կարող ընել աշակերտը իր մայրենի լեզուն գործածելու ըստ բաւականին դիւրութեամբ ու մաքրութեամբ: Գործածելն է կարենալ խօսիլ եւ գրել, հասկնալ այլոց գրածը եւ խօսքով ու գրով հաղորդել այլոց, կանոնաւորութեամբ, իր մտածածն ու զգացածը: Ըսել է թէ մայրենի լեզուով գրելու, շարագրելու վարժութիւնք եւս անհրաժեշտ մասն պարտին կազմել նախկրթական հրահանգաց, շարագրութեան դասը պարտաւորիչ ուսում պէտք է լինի նախկրթարանաց մէջ:

Նախնական կրթութիւն ստացող մը պիտի կրնայ դպրոցէն անցնիլ ուղղակի գործի, շուկայի՝ արհեստի մարդ ըլլալու համար, իր հետ տանելով իր անհատական, ընտանեկան ու քաղաքացիական պարտքերը կատարելու համար անհրաժեշտ եղած կրթութեան պաշարը: Արդ, եթէ ոչ գեղեցիկ գրելու, գէթ պարզութեամբ ու կանոնաւորութեամբ իր միտքն յայտնելու կարողու-

Թիւն մը պէտք է ենթագրուի այդ պաշարին մէջ: Կենսքին մէջ այդ բանին միշտ պէտք պիտի ունենայ. գործի կամ ընտանեկան նստակ մը գրել, խնդրագիր կամ տեղեկագիր մը մատուցանել, տպաւորութիւններ բացատրել հարկ պիտի ըլլայ իրեն յաճախ. որչափ ալ պարզ ու անարուեստ ըլլայ ոճը, բայց միշտ կարգ ու յստակութիւն պիտի պահանջուին հասկնալի ըլլալ ուզողէ մը, եւ յետոյ, մաքուր ու ճիշտ բացատրութիւններ, որք իր լեզուն քիչ շատ գիտցող մը պիտի զատեն ագէտ անգրագէտ ուսմէն:

Լեզուին ուղղակի ուսումը, քերականութիւն, բացատրեալ ընթերցումաճք, արտասանական դասք անշուշտ կարեւոր պայմանքն ու սատարքն են այս կարողութեան ստացման. բայց շարադրական յատուկ վարժութիւնք անհրաժեշտ են գրով իր գաղափարներն յայտնելու ունակութիւնն ու դիւրութիւնը տալու համար աշակերտին, սովորեցնելու զայն խորհրդածելու տրուած կամ առաջքն ունեցած նիւթի մը վրայ՝ գտնելու համար գլխաւոր գաղափարի մը մէջ պարունակուած երկրորդական գաղափարները, ամբողջէ մը մասերը, նախադասութեան մը փաստերը կամ հետեւութիւնները, փնտռելու համար իր յիշողութեան մէջ պատկերի մը գծերը, զգացման կամ տպաւորութեան մ'արձագանգները, եւ վերջապէս ընտրելու եւ որոշելու համար իր յղացումներուն արտայայտութեան յարմարագոյն կարգն ու բացատրութիւնքն: Առանց այս վարժութեանց, եւ հակառակ լեզուին ուսմամբ ստացուած գրական պաշարին, դպրոցէն անցնող շատերուն համար շարադրելը անմատչելի ու խրտեցուցիչ արուեստ մը պիտի մնայ:

Շարադրութեան, խմբագրութեան հրահանգները մեր վարժարանաց մէջ ընդհանրացած չեն տակաւին: Աստի 25—30 տարի յառաջ՝ կրնայ ըսուիլ թէ բնաւ գոյութիւն չ'ունէին, նոյն իսկ ժամանակին ամենէն զարգացեալ դպրոցներուն մէջ: Մեր Խասգիւղի Ս. Ներսիսեան վարժարանին աշակերտած ատեն, օր մը մեր հայ լեզուի եւ մատենագրութեան մեծանուն ուսուցչէն՝ — որ արդարեւ ցայսօր գրական հոյակապ անձնաւորութիւն մ'է — խնդրեցինք որ գրութեան նիւթեր տայ մեզի: Նա չուզեց հաւանիլ մեր խնդրոյն՝ առարկելով որ մենք տակաւին տղայ էինք,

1 Ա. Մ. Վ. Գարագաշեան:

գաղափարէ. զուրկ, հեղինակներ չէինք կարգացած եւ հետեւապէս անկարող էինք բան մ'արտադրելու: Երբ շատ թախանձեցինք, առակ մը պատմեց մեզ որպէս զի գրեմք նմանողաբար, եւ այն եղաւ իր առաջին եւ վերջին նիւթը շարագրութեան: Դպրոցաց մէջ աշակերտներէն սակաւք ոմանք որք գրելու ինքնայորդոր բերում մը կը զգային իրենց մէջ՝ քիչ շատ բան մը կը գրէին, ճառ կամ ոտանաւոր, ու ցոյց կու տային դասատուին, իսկ մնացեալ մեծ մասը բոլոր դպրոցական ընթացքին մէջ գրիչ ձեռք առած չէր ըլլար ինքն իրեն բան մը շարագրելու համար: Ետքէն կամաց կամաց սկսուեցաւ մէկ քանի դպրոցաց մէջ գրութեան նիւթ տրուիլ. բայց ինչպէս. — Դասատուն կ'ըսէր. «փոթորիկ մը նկարագրեցէք», կամ թէ «գրեցէք թէ ինչ է երջանկութիւնը», եւ կամ «Խօսեցէք քաղաքակրթութեան բարիքներուն վրայ», առանց ամենափոքր պատրաստութեան, խորհելով անշուշտ որ տղոց միտքը կարող էր ինքնին ամէն գաղափար՝ բղնեցնել, բաւ է որ դիւթական «գրեցէք», բառը դուրս գար ուսուցչին շրթներէն: Երբ տեղ տեղ դասատուք սկսան շարագրելի նիւթը կանխաւ պարզել աշակերտաց, այն առանց մեթոտի էր ընդհանրապէս, որով շարագրութիւնն յիշողութեան գործ մը կը դառնայ աւելի քան խորհրդոյ եւ դատողութեան. իսկ աշակերտաց գրածին վրայ բանաւոր ու կանոնաւոր գնահատում մը, քննադատութիւն մը իմաստից, լեզուի ու ոճոյ տեսակէտներով, այնպէս որ սրբագրութիւնը գրականութեան գործնական դաս մ'ըլլայ, այդ, հազուադիւս բացառութիւններէ դուրս, անծանօթ բան մ'եղած է գրելէ: Ու շարագրելու դասը այս վիճակին մէջ կը մնայ մինչեւ ցայժմ մեր վարժարանաց մէջ, եւ այն ալ անոնցմէ ոմանց բարձրագոյն կարգերուն մէջ միայն գոյութիւն ունենալով: Նախնական կարգերն ընդհանրապէս անկարող ու տհաս կը համարուին այդ կարգի հրահանգաց համար:

Այդ դասը, իբրեւ կարեւորագոյն լրացուցիչ մայրենի լեզուի գործնական ուսման, չի կրնար սակայն ու չպարտի զանց առնուիլ ո՛չ մի վարժարանի մէջ: Պէտք չէ նաեւ որ նկատուի այն իբրեւ բարձրագոյն կարգաց ուսանողներու միայն մատչելի աշխատութիւն մը, այլ գտնուի կրթութեան ամէն աստիճաններուն վրայ: Նախակրթարանի տարրական դասընթացքէն սկսեալ մա-

նուկը պէտք է վարժուի գաղափարաց գիւտն ընելու, զանոնք կարգաւորելու եւ բացատրելու: Այս վարժութիւնը անկարելի չի կրնար ընել այն առարկութիւնը թէ մատաղ մաքեր զուրկ են գաղափարէ: Մանուկը, դպրոց մտնելու ատեն, գաղափարաց պաշար մ'իւր հետ կը բերէ արդէն զոր զանազան առարկայից դասերը հետզհետէ կ'աւելցնեն, ինչպէս նաեւ բառերու եւ բացատրութեանց որ եւ է գումար մը որ ընդունակ է մաքրուելու եւ ճոխանալու: Եւ երբ անկէ խնդրուի միայն — ինչպէս բանաւոր մանկավարժութիւն մը կը պահանջէ — յայտնել գաղափարներ որք իր կենաց ու ծանօթութեանց շրջանակին մէջ են, պիտի կրնայ գտնել կարեւոր տարերքն իր համեստ նադասութեանց փոքրիկ շարքը կազմելու: Միայն մեթոտ հարկաւոր է պարզէն աստիճանաբար ու քայլ առ քայլ ելնելու համար բարդին, կնճռոտին:

Շարագրութեանց նիւթը, ընդարձակութիւնը եւ կազմելի խօսքերուն ձեւը պէտք է համեմատուին տղոց հասակին ու զարգացման աստիճանին: Տարրական դասընթացքի մէջ տղաքներէն կրնայ պահանջուիլ որ ծանօթ եւ ընտանի առարկաներու եւ անձանց վրայ փոքրիկ դիտողութիւններ ընեն, հետեւելով կարգ մը հարցումներու որք անոնց ուշագրութիւնը ուղղեն եւ արթնցնեն իրենց գիտակցութիւնը, կազմելով կարճ եւ փոքրաթիւ նախագասութիւններ որոց քերականական ձեւը ուղիղ ըլլայ եւ բառերը մաքուր: Օրինակի համար, կրնայ առաջարկուիլ իրենց որ գրեն թէ ինչպիսի տեղ է դասարանը, ի՞նչ առարկաներ կը տեսնուին հոն, ի՞նչ անձեր կան հոն եւ ի՞նչ կ'ընեն անոնք, ի՞նչ պէս պէտք է որ կենան աշակերտք: Տղան ծանօթ է ու կը հետաքրքրուի շատ մը անձերու (ծնողք, եղբարք, ազգականք, ուսուցիչք), կենդանեաց (ձի, էշ, շուն, կատու, հաւ, ոչխար, եզ), առարկայից (խաղալիք, գիրք ու գրիչ, կարասիք, սպասք), տեղեաց (տուն, պարտեզ, եկեղեցի, դպրոց, դաշտ, շուկայ), բնական երեւութից (երկնքին երեսը, ամպ, անձրեւ, ձիւն, ցերեկ, գիշեր), որոց մասին կրնայ գաղափարաց եւ զգացմանց փոքրիկ շարք մ'արտայայտել, եթէ իր խորհրդածութիւնը գրգռուի, եթէ կամաց կամաց սովորի իր յիշատակներուն ու տպաւորութեանց դիմում ընել, իրաց մասին իր ունեցած տեսիլները վերլուծել, զա-

նոնք իրարու հետ բաղդատել, եւ եթէ օգնենք իրեն գտնելու պիտանի ու պատշաճ բառերը եւ բացատրութիւնները: Միջին Գասընթացքին մէջ, ուր տղուն հասակն ու խելքն յառաջացած են, փորձառութեան շրջանակն ընդլայնած ու ծանօթութեանց պաշարն ալ աւելցած, կարելի է առաջարկել անոր, փոքր ծրագրի մը համեմատ որ առաջնորդ մ'ըլլայ գլխաւոր կէտերը եւ կարգը ցոյց տուող, իրագիտական պարզ շարադրութիւններ ընել, ընտանի իրաց ու դիպաց պարզ նկարագրութիւն մը կամ կարճ պատմութիւն մ'ի գիր առնուլ: Աշակերտը պիտի կրնայ թեթեւօրէն բարդ նախադասութիւններ գործածել, իրողութեանց պատճառները եւ հետեւութիւնները կամ գործողութեանց պտրագայները բացատրելու ծառայող շղկապներու դերը հետզհետէ աւելի ըմբռնելով, ինչպէս նաեւ յարաբերական դերանուանց դերը՝ խօսքի մը մէջ բառի մ'իմաստը որոշելու կամ մեկնելու համար: Իսկ բարձրագոյն դասընթացքի մէջ շարադրութիւնք կրնան թէ՛ նիւթոց մասին աւելի զանազանիլ, թէ՛ աւելի ընդարձակութիւն առնուլ եւ թէ՛ ոճոյն նկատմամբ աւելի ճաշակ ու վայելչութիւն ցոյց տալ: Նիւթերը կրնան ըլլալ բարոյական նշանակութիւն ունեցող պատմութիւններ, նամակներ, համառօտ նկարագրութիւններ կամ տպաւորութիւններ, առածներու կամ բարոյական վճռոց բացատրութիւնք:

Բայց հոս չի լինար ամէն բան: Կարեւորագոյնը այն մեթոտն է որով պիտի կարողացնենք աշակերտը աստիճանաբար իրեն տրուելիք այս նիւթոց վրայ շարադրութիւններ ընելու, որով պիտի վարժեցնենք զինքը գաղափարները գտնելու եւ զանոնք յարմարագոյն ձեւով ու կերպով արտայայտելու: Կռէստը ըսած է. «Գաղափարները ինքնիրեն չեն գար տղուն միտքը, պէտք է գտնել ուսուցանել անոր. իրենց առնելիք կարգն ու ձեւն ալ աւելի նուազ կ'առնուն ինքնին, պէտք է շարադրել ուսուցանել անոր»¹ Ահա հոս կը կայանայ գործին դժուարութիւնը: Նիւթն առաջարկելով ու յետոյ տղան ինքն իրեն թողլով որ գրէ՝ կարելի չէ շարադրել սովորեցնել: Ուրիշ բան է որ մէկ քանի հազուագիւտ տղայք, ի ընէ օժտուած բացատրելու

¹ Education et Instruction (Eus. primaire).

յատկութեամբ, բնազդաբար կարենան զարգացնել իրենց այդ ձիւքը եւ առանց վարժապետի մինչեւ իսկ մատենագիր դառնան ապագային: Ինդիրը մեծագոյն մասը եւ միջակ կարողութեան տէր եղողները վարժեցնելու վրայ է՝ քիչ թէ շատ կանոնաւոր շարագրութիւն մ'արտադրելու:

Առ այս պէտք է տղայքը նոյն իսկ դասարանի մէջ պատրաստել տրուած նիւթը ընդլայնելու, ոչ թէ դասատուն ինք բերանացի ընդլայնելով որպէս զի ուսանողք իմաստներ, բաւեր ու խօսքեր նշանակեն՝ զետեղելու համար յիշողութեամբ միայն ու մքրենաբար՝ իրենց գրելիքին մէջ. — ոչ, այլ նոյն իսկ տղայոց հետ աշխատելով, խօսակցութեան առարկայ ընելով նիւթը կամ յատկագիծը ու ճարտար հարցմամբ եւ թելագրութեամբ գրգռելով անոնց միտքը եւ անոնց գտնել տալով զանազան ատաղձքն ու մանրամասնութիւնքն ուր պիտի ծառայեն նիւթին ընդլայնման կամ ծրագրին գործադրութեան: Յատակագիծն իսկ կարելի է կազմել դասարանին մէջ, երբ նախ կը խորհուի ի միասին նիւթին վրայ՝ գտնելու, երեւան բերելու համար անոր զանազան մասունքն եւ անոնց կարգն ու տեղը որոշելու: Դասարանին մէջ գլխաւոր գաղափարաց գիւտը կ'ըլլայ, անոնց բացատրութեան յարմար ձեւերը կը փնտուռին, գտնուած իմաստներն ու ձեւերը կը քննուին ուղղութեան ու պատշաճութեան տեսակէտով, ծուռ մտածութիւնները եւ անճիշդ բացատրութիւնները կը շտկուին, ընդունուածները կը գրուին սեւ տախտակին վրայ: Ամէնքը կը մասնակցին այս հաւաքական աշխատութեան. ոգեւորութիւնը հետզհետէ կը սաստկանայ դասարանին մէջ, մտքերը կը լարուին ու կը սրուին. այս՝ ուղղուած հարցման պատասխան մը կը գտնէ, այն՝ բառի մը կամ ձեւի մ'ուղղութիւնը կ'առաջարկէ, միւտը՝ նոր իմաստ մը կու գայ զետեղել եւ իբր մի նոր երեսը դուրս բերել մէջտեղ դրուած նիւթին: Սա կը ծեծուի դասարանին մէջ, տղայք հետզհետէ կը վարժին առաջարկուած նիւթին շուրջը դառնալ, զայն խորհրդածութեան առարկայ ընել, դարձնել իր զանազան կողմերով, փորել քրքրել ցոյց տրուած ուղղութեան մը համեմատ եւ իրենց կարողութեան սահմանին մէջ, եւ այս աշխատութեան միջոցին նաեւ իրենց բառարանը ճոխացնել՝ դասատուին ուղղութիւնն-

ըով՝ ուսնելով նորանոր բառեր ու դարձուածներ, եւ յղկել ու ողորկել իրենց լեզուն՝ սխալ ու խուժ ասացուածքն ընտրել ուսնելով ուղիղէն ու հարազատէն, գործնական կենդանի դաս մ'ընելով լեզուի ու քերականութեան: Երբ յետոյ ամէն բան ջնջուի սեւ տախտակին վրայէն, մնալով միայն ամփոփումը կամ յատակագիծը նիւթոյն, աշակերտը դիւրաւ պիտի կրնայ ամփոփուել ու շարագրել, նախապատրաստութեան այն արգասաւոր գրգռումն յետոյ. նիւթն ալ համր բան մը չէ իրեն համար, սովորեցաւ խօսեցնել զայն: Ու այս մարդանքն սակաւ կրկնուելով պիտի տայ մտքին ունակութիւն յղացման, զգացում մը գիւտի աղբիւրներուն, դիւրութիւն մը կազմակերպութեան մտքին ու սրտին մատակարարած տարերց, եւ վարժութիւն ընտրութեան եւ գործածութեան բառից եւ ասացուածոց: Պիտի տեսնուի որ ամուլ կարծուած մտքեր անակնկալ արգասաւորութիւն մը պիտի ցոյց տան, վասն զի, ինչպէս կ'ըսէ Ռոժէ Լավլէյն, «Շատ մտքեր ոլք ամուլ կ'երեւին՝ պարզապէս ծոյլ են. պէտք ունին արթնցուելու, խորհիլ դրդուելու»¹: Յետոյ կրկին հրապարակային ու հաւաքական խնամոտ սրբագրութիւն մը պիտի ամբողջացնէ մեթոտը ու արդիւնաւորութեան վերջնական պայմանը պիտի լինի:

(Մասիս, Մանկավարժական Հանդէս Նոր շրջան, թիւ 8, 1894):

7. ԳՊՐԱՑՈՒԿԱՆ ՊԱՏԻՓՆԵՐԸ

Քասթէմունիի դպրոցին ուսուցիչներէն Արամ Յովսապիեան կը յայտնէ նամակաւ մը թէ մի քանի կրթասէր անձանց հետ կարծեաց փոխանակութիւն մ'ունեցեր է սա խնդրոյն վրայ թէ «ոլք են այն բարոյական յարմարագոյն պատիժները զորս մանկավարժութիւնը կը թոյլատրէ սահմանել ի հարկին յանցաւոր մանկան», եւ թէ չկարենալով վերջնական համաձայնութեան մը յանգիլ, հարկ համարած է դիմել խմբագրութեանս կարծեաց, խորհելով որ «թերեւս այսու այլոց կրթական պաշտօնէից ալ տածած հետաքրքրութիւնը յագուրդ կ'ստանայ»:

¹ Sujets de compositions françaises.

Հարցը մանկավարժական կարեւորագոյն հարցերէն մին է ու շատ վէճերու եւ տարածայնութեանց առարկայ եղած. բայց վիճաբանող տեսքը արդէն լաւագոյն լուծման մը մօտեցած կը համարուին, քանի որ իրենց խնդիրը կը սահմանափակեն բարոյական, մանկավարժութենէ թոյլատրեալ եւ ի հարկին սահմանելի պատժոց մէջ: Ըսել է՝ կը մերժեն մարմնական պատիժները, կ'ընդունին որ նոյն իսկ բարոյական պատժոց մէջ կան հակամանկավարժականներ, եւ վերջապէս կը խորհին որ պատիժք ի հարկին միայն պէտք է որ սահմանուին, եւ ո՛չ յամենայն դէպս, յախուռն ու անխորհուրդ:

Նախ եւ առաջ, ըստ մեզ, դպրոցական պատիժին բնութիւնն ու դերը պէտք է ճշդել: Դպրոցին մէջ պատիժը պէտք է հասկնալ բոլորովին այն իմաստով որով կը հասկցուի ընկերութեան մէջ: Անշուշտ ո՛չ. քաւութեան պէս բան մը չէ այն որ կը հարկադրուի յանցաւորին վրայ որպէս ղի քաւ է իւր յանցանքը, տեսակ մը վրէժ յանցաւորէն իր գործած չարեաց փոխարէն: Տղան յաճախ բառին բուն նշանակութեամբ յանցաւոր չէ. դեռ իր ըրածին կատարեալ պատասխանատու չէ, վասն զի դեռ իր բանականութիւնը եւ իր կամքը անզարգացեալ անկազմ վիճակ մ'ունին: Ասկէջ զատ դաստիարակը անպատճառ դատաւոր մը ու պատժածու մը չէ. ուսուցանող, առաջնորդող, օրէնուսոյց մ'է մանաւանդ եւ բացառաբար, ի հարկին եւ ի հարկէ միայն դատաւորի ու պատժածուի դեր կ'ստանձնէ: Նա ակամայ պարտի պատժել սովորաբար խրատատու, զգուշացուցիչ, նա, որպէս հրեայ վարդապետը կ'ըսէին, «երկու ձեռքով պարտի գգուել եւ մէկ ձեռքով միայն պատժել»:

Ուսուցիչը պաշտօնն ունի կրթելու մանուկը, որ մտքովն ու սրտովն ապրելու եւ առաջնորդուելու սահմանուած էակ մ'է, ապա եւ անոր բարոյական կրթութիւնը անոր մտքին ու սրտին վրայ ներգործելով կրնայ ի գործ դրուիլ, ուսուցմամբ, ներշնչմամբ, օրինակաւ բարւոյն եւ առաքինութեան: Ցակաւ առ տակաւ կը հաստատուին բարի սովորութիւնները, սիրտը կամաց կամաց կը բացուի ազնուական զգացումներու եւ փորձով ու կրթութեամբ (instruction) բանականութիւնը կը սովորի հետզհետէ ընտրել լաւը յոռիէն, եւ ընզընզական բաղձանքներուն մէջէն քիչ քիչ կը

կազմի երեւան կու գայ կամք մը, բարւոյն գիտակցօրէն ընտրող եւ զայն գործադրելու համար բաւական ոյժ ունեցող: Այս աստիճանական բարոյական զարգացում փափկութեամբ ու իմաստութեամբ առաջնորդելի գործ մ'է: Յիմար ու անսիրտ ըլլալ է միանգամայն՝ չարչարել ու բռնազբօսել քնքուշ անգիտակ հոգին՝ պահանջելով անկէջ ու բռնի ջանալով ստանալ այն կատարելութիւնները զորս դեռ չէ կարող ունենալ: Բիրտ ձեռք մը կրնար առ յաւէտ ձգմել չորցնել այդ նորարոյս տունկը, առ յաւէտ թիւր ու հաշմ ընել զայն: Մանկան մնութեան անգիտութեամբ եւ անոր անհամեմատ ու հակառակ կերպով եղած անմիտ պահանջանքնք եւ բռնութիւնք մէկ կողմէն մանկական հասակի ղուարթութիւնն ու երջանկութիւնը կը փճացնեն, ու միւս կողմէ կը մնասնն անոր դաստիարակութեան, երկիւղի զգացման տակ անոր ուղեղը եւ սիրտը ճնշելով, անոր կամքը պրկելով եւ ատելութիւն ներշնչելով անոր դասի ու դասատուի դէմ:

Ի՞նչ մանէ յառաջ կու գայ վարժապետին խաղ խողալու հաճոյքը որ սովորական է շատ տղայոց, եթէ ոչ այն ատելութենէն զոր ազդած է իրենց անոր խիստ ու բռնաւոր վարմունքը: Շատ չըններ որ վարժապետներ կը վախնային փողոցներէն անցնելու. աներեւոյթ փոքրիկ ձեռներէ արձակուած քարերու կարկուտ մը կը բռնէր զանոնք յաճախ եւ չարաճճի ձայներ անծանօթ անկիւններէ ելած ու ծիծաղելի համերգ մը կազմած հայ հուշ կ'ընէին զիրենք. «Պատ-ուե-լի, պատէն վեր ե-լի», Յերեկն ի բուն ճնշուած տղաքներն էին որք, փողոցէն ազատագրեալ, իրենց ոխը կը լուծէին ահեղ պատուելիէն:

Երբ ուսուցիչն իր պաշտօնին գիտակցութիւնը ունի, ինչպէս նաեւ մանկան մնութեան եւ զարգացման օրէնքներուն գիտութիւնը, յայնժամ արդէն ինքնին մեծապէս կը նուազի պատժելի համարուած դէպքերուն թիւը: Գիտէ համբերել, սպասել, ներել, անտես ընել, գոհանալ կրկնելով դասն ու խրատը, ազդարարելով, յորդորելով, բնական գտնել շատ բան ու չզայրանալ ընդունայն, հսկել ու զգուշանալ կանխաւ՝ յետոյ պատժելու տեղի չթողու համար, ներկային չտուածը կամ տալ չկրցածը ապագայէն ու նորանոր ջանքերէ յուսալ եւն: Դպրոցին մէջ ոչ թէ իր կամքին եւ իր քմահաճոյիցն է որ հնազանդիլ կը պահանջէ

աշակերաններէն այլ դպրոցիւն օրինաց որք պարտաւորութիւն մը չեն հարկագրեր անոնց վրայ որ անոնց տարիքէն ու կարողութեանէն վեր ըլլայ: Ի նկատ գիտէ առնուլ մանկութեան անհանդարտ վառ վռուն բնաւորութիւնը, առատագեղ կեանքի մ'անխորհուրդ յորդումը, անոր մշտաշարժ հետաքրքրութիւնը, դիւրախոնջ ու շագրութիւնը, եւ դիւրափոփոխ ախորժակները, եւ աղայոց գործած թերութիւններուն մէջ ընել ասոնց բաժինը, ինչպէս նաեւ իր ի գործ դրած մեթոտներուն մէջ գոհացում տալ անոնց եւ օգուտ քաղել անոնցմէ եւ ուղղել զայնս՝ փոխանակ անխորհուրդաբար բռնազբօսել ջանալու բնութիւնը: Ո՛րչափ արդարեւ կը փոխուին իրերը. վարժապետը չարչարելու համար ստեղծուած կարծաւոր այն սատանիկները մէկ մէկ հրեշտակ կը դառնան. գոհ ու երջանիկ են, ապա եւ բարի են. ու նաեւ աւելի խելացի, վասն զի բնական ճամբուն մէջ են եւ զուարթութիւնը պայծառութիւն մը կու տայ իրենց մտքին: Համակրական կապ մը կայ դաստիարակին ու աշակերտաց մէջ. ասոնց վստահալից նայուածքները, ընտանի վարժուներ կ'ըսեն դաստիարակին թէ կը սիրեն զինքը, եւ դաստիարակը գոհ է անոնց սիրով որ այնքան դիւրին եւ քաղցր կ'ընէ իր գործը: Այսպիսի ճշմարտիւ մանկավարժական շրջանակի մը մէջ տխուր՝ այլ բացառիկ հարկի մը, դեղի մը հարկաւորութեան պէս միայն կրնայ ներկայանալ պատժի պէտքը:

Այս պէտքը կը ծագի երբ աշակերտ մը յամառ անկարգութեամբ մը կը խափանէ դասատուն իր դասն ընելէ, կը խանգարէ դասարանին բարեկարգութիւնը, կ'արգիլէ իր ընկերակիցները դասէ կամ սերտողութենէ: Այս պէտքը կը ծագի դարձեալ երբ աշակերտը նիւթական վնաս մը կը հասցնէ իր ընկերակցին կամ դպրոցին, կը գողնայ, կը պատռէ, կը կտորէ եւն. երբ կը վնասէ իրեն ու դպրոցական կեանքը անօգուտ կը դարձնէ իրեն ծուլութեամբ եւ անճշդութեամբ, հակառակ կանխագոյն խրատուց եւ ազդարարութեանց. երբ վերաւորիչ վարժունքով իր ընկերակցաց բողոքին տեղի կու տայ, եւ երբ յարգանաց պակասութիւն ընէ առ իւր ուսուցիչս յամառ անհնազանդութեամբ կամ անարգական խօսքով: Բոլոր այս պարագայներուն մէջ անմիջական զսպման ու դարմանարար տնօրի-

նութեան մը պէտքն ակներեւ է: Երբ դպրոցին կամ դասարանին մէջ կարգապահութիւն չըլլայ, դպրոցն անկարող կ'ըլլայ իր նպատակին ծառայելու: Դպրոցին ու աշակերտաց գոյքերը պէտք է որ պահպանուին, վասն զի անոնք ուսուցման կը ծառայեն եւ աշակերտք իրաւունք ունին պահանջելու որ ուսուցիչը արգիլէ իրենց գոյից կորուստը կամ խաթարումը ուրիշ աշակերտաց ձեռքով: Երբ աշակերտը իր ծուլութեան ու պարտազանցութեան մէջ անմիջական կերպով չարգիլուի, դպրոցին գործը մեծ մասամբ ապարդիւն կը լինի անոր վրայ: Դարձեալ աշակերտաց արդարութեան զգացումը անմիջական գոհացում կը պահանջէ, երբ իրենց ընկերակիցներէն մին զիրենք բիրտ խօսքով կամ վարմունքով ցաւցնէ. հակառակ պարագային՝ կը բերուին անձնապէս արդարութիւն ի գործ դնել եւ վէճ ու կռիւ կը խռովեն դասարանը կամ բակը, տեղի կրնան տալ ցաւալի միջադէպերու եւ հետեւանաց եւ սզոց մէջ կը խանգարի ներդաշնակութիւնը, — բան մը որ դարձեալ պիտանի է դպրոցական միջնորդութիւն հանդարտութեան, զուարթութեան եւ բարոյացուցիչ ներգործութեան: Իսկ ուսուցչին դէմ տեղի ունեցած անարգութեան ու խեղճութեան գործը եթէ անմիջապէս նկատողութեան առնուելով դարմանել չփութացուի, ուսուցչին վարկը կը կոտորի աշակերտաց առջեւ, անոր բարոյական հեղինակութիւնը կը նուազի կամ կը կորսուի, ինչ որ դարձեալ կը վնասէ ուղղակի ուսուցչին ազդեցութեան, անոր ուսուցման արդիւնաւորութեան: Տղայոց շատ թերութիւններուն համար պիտի թողունք որ ժամանակը գործէ, մեր դասերն ու խրատներն ու յորդորները իրենց ազդեցութիւնն ի գործ դնեն աստիճանաբար անոնց մտաց ու սրտին վրայ, եւ առ առաւելն յանդիմանութեան ու պարսաւի պիտի դիմենք մերթ անոնց արժանապատուութեան զգացումէն օգտուելու եւ նոցա ուշը գրգռելու համար: Վերոյիշեալ պարագայներուն մէջ, սակայն, չենք կրնար ոչ այդ համբերութիւնն ի գործ դնել եւ ոչ իսկ գոհանալ յանդիմանութեամբ, թէեւ յաճախ այնու սկսիմք. վասնզի, ինչպէս տեսանք, դպրոցական շրջանակին մէջ անկարգութիւն, նիւթական վնաս, վիրաւորում եւ կրթական գործին կատարման ու արդիւնաւորման արգելք ու խափանում անոնց անմիջական հետեւանքներն են:

Այս պարագայներուն մէջ է ահա որ պատիժը իր դերը պիտի ունենայ իբրեւ անմիջական ազդու տնօրինութիւն ի դարման կամ ի խափանումն չարեաց: Բայց ի՞նչ կրնայ ու պէտք է լինել այդ պատիժը, ահա խնդիրը: Առաջին պայմանը այն է որ տնօրինուած պատիժը բանաւոր ու արդար ըլլայ, այսինքն կարենայ ուղղակի ծառայել իբրեւ դարման այն չարեաց զոր կ'ուզենք կտրճել եւ նկատուիլ նոյն իսկ յանցապարտ աշակերտին կողմէ իբրեւ ինքնաբեր ու հարկաւոր հետեւանք իւր վարմանց: Այն ատեն պատիժը ընդունող աշակերտին համար չպիտի կրնայ համարուիլ այն իբրեւ ուսուցչին անգութ քմահաճոյից մէկ արդիւնքը, եւ չպիտի գրգռէ զայն նորա դէմ, վասնզի իր վարմունքին ու պատժոյն մէջ գտնուած բանաւոր ու արդար առնչութիւնը պիտի զգացնէ իրեն անոր հարկաւորութիւնը եւ պիտի սովորի ինքզինք մանաւանդ մեղադրել: Մեր առաջարկածը բառին բուն նշանակութեամբ պատիժ չէ, այլ դարմանում, եւ եթէ մէկ նայուածքով բնական պատիժի, բնական հակագործութեանց դրութեան կը նմանի, բայց բուն այն չէ, այլ աւելի անոր գործադրուելուն տեղի չթողու համար դասատուին միջամտութեամբ ի գործ դրուած արդար ու բանաւոր միջոց: Եթէ թոյլ տայինք որ ծոյլը իր ծուլութեան հետեւանք, զոր օրինակ, ապագային մէջ տգէտ ու ողորմելի մնալով, պատժուէր, ահա այդ կը լինէր բնական հակագործութիւնը, բնութենէն հարկադրեալ պատիժը, բայց մենք կ'ուզենք որ մեր պատժով ծոյն արգիլուի իր ծուլութեան մէջ եւ չկրէ յապագային բնական վաւերացման արդիւնքը:

Այս տեսակէտով նախ մերժելի են մարմնական պատիժները որք ինքնին չարիք ու ցաւ են քան չարիքն ու ցաւը արգիլելու միջոց, եւ եթէ բնական հակագործութեամբ մը ցաւն ու չարիքը գային տղուն վրայ, բան մը չպիտի ունենայինք ըսել. բայց ի՞նչ իրաւունք ունինք մենք մեզէն հարկադրելու զայնս մանկանց, մինչ չեն բնական հետեւանք այն վարմանց զորս կ'ուզէինք արգիլել: Այդու անիրաւ ու անգութ կը լինին մանկանց դէմ, որք ան չեն տեսներ արդար ու զիրենք սիրող էակ մը ուսուցչին վրայ, եւ ան կ'ատեն զայն ու կը սուսան անկէ իբրեւ պատուհասէ, եւ ամէն համակրանաց ու յարգանաց կապ խզուած է ուսուցչին ու աշա-

կերտաց մէջտեղ. այդ վայրագ վարմունք կ'ընդվզեցնէ զայնս իրեն դէմ, եւ, բանաւոր էակաց կրթութեան միջոց մ'ըլլալէ հեռու, անբանացուցիչ ու միմիայն կարծեցեալ դաստիարակին ցաւալի ապիկարութեան վկայող դրութիւն մ'է: Տերենտիոս արդէն կ'ըսէր թէ « հարուածք անբան անասնոց համար են », եւ անշուշտ մարդէն անասնոց վրայ ի գործ դրուելու համար. եթէ ոչ, որպէս Պէոնարտէն տը Սէն-Բիէռ կը դիտէր. « զգայուն էակաց բոլոր տեսակներուն մէջէն մարդկային տեսակն է միայն որուն պզտիկներն հարուածներով կը մեծցուին: » Մարմնական պատիժներէն զատ մերժելի են նաեւ բոլոր այն պատիժները, նիւթական թէ բարոյական, որք ուսուցչին քմահաճոյքէն կը բղխին, առանց երբեք կապ մ'ունենալու գործուած յանցանքին կամ հակագործելի թերութեան հետ, եւ միայն աշակերտին վրայ հարկադրուած նուաստութեան մը կամ բռնի աշխատութեան մը մէջ գոհացում մը փնտուել ունին նպատակ, չափն ու սահմանն ալ կախում ունենալով միմիայն ուսուցչին աւելի կամ նուազ նեղսրտ կամ նեղսրտած ըլլալէն: « Յիսուն տող պիտի գրես », Գիտողութիւն մը աշակերտին կողմէն կամ պատասխան մը մրմռացուած, եւ ահա իսկոյն յիսուն տողը կ'ըլլայ հարիւր, հարիւրը կը կրկնապատկի, կ'եռապատկի, կը քառապատկի, կը բազմապատկի, յիմար համեմատութեանց կը բարձրանայ, բարկացայտ վարժապետին շրթանց մէն մի շարժումով, որ տողերն իրարու վրայ բարդելով Ոստան ու Պելլոնը իրարու վրայ գիզող սկայից մին ըլլալու երեւոյթն ունի կարծես, չես գիտեր որ Արամազդին ընդդիմամարտ. — տասներեք տարեկան խեղճ պզտիկ դողդոջուն տղեկ մը կայ իր դիմաց:

Իբրեւ բանաւոր ու արդար պատիժ մենք հետեւեալները կը համարինք. Ա. Աշակերտ մը դասարանը կը խանգարէ, չի թողուր դասատուին հանդարտութեամբ պարապիլ իր գործին եւ արգելք կ'ըլլայ իր ընկերակցաց դասին կամ սերտողութեան, եւ իր անկարգութիւնը կը շարունակէ յետ ազդարարութեանց, յետ յանդիմանութեանց, յոռի նիշն ալ չ'ազգեր իր վրան: Հեռացուցէք, զատեցէք զինքն իր ընկերակիցներէն. հեռացուցէք, եթէ հարկ է, դասարանէն, եւ երբ անուղղայ կը մնայ՝ դպրոցէն եւս, ժամանակաւոր կամ վերջնական կերպով: Այդ մէկը որ արդէն

կը զըկէ Ինքզինք դպրոցական պարապմանց օգուաներէն՝ գէթ ուրիշներն ալ չըըկէ անոնցմէ :

Բ. Աշակերտ մը նիւթական փնաս կը պատճառէ դպրոցին կամ իր ընկերաց. յանդիմանութեան ու խրատին հետ պէտք է պահանջել որ տուժէ, դարմանէ փնասը, կորսուածին ու փնասելոյն տեղը դնէ: Եթէ փնասող աշակերտին անձնական աշխատութեամբ դարմանելի է եղածը, պէտք է ստիպել զինքը այդ աշխատութիւնն յանձն առնուլ. եթէ դրամով դարմանելի է, պիտի հատուցանէ, եթէ կրնայ, իր մանր հաճոյքներուն համար իր ծնողքէն ստացած դրամներով. իսկ եթէ ոչ՝ նոյն իսկ ծնողք պիտի հատուցանեն, բայց պէտք է որ տղան ալ տուժէ զըկուելով ինչ ինչ նուէրներէ զորս առանց այդ պարագային պիտի ստանար իր ծնողքէն:¹

Գ. Ծուլութեամբ կամ անճշդապահութեամբ կը թերանայ աշակերտ մը իր պարտականութեանց մէջ. պէտք է լեցնել տալ թերին: Ուշ դպրոց եկողը երեկոյին ուշ կը դառնայ տուն, վար կը դրուի որպէսզի աշխատի: Առանց բանաւոր պատճառի բացակայող աշակերտը կը պարտի ի փոխարէն կիրակի կամ տօն օրեր գալ աշխատիլ դպրոցին մէջ: Ուրիշ մը իր դասը չէ սերտած կամ չէ պատրաստած իր պարտականութիւնը, դպրոցական ժամերէ դուրս վար կը դրուի պարտաւորելու համար զինքը չսերտած դասը սովորելու կամ չպատրաստած գրաւոր աշխատութիւնն ընելու:²

Դ. Աշակերտ մը լեզուի կամ ձեռքի հարուածով իր ընկերներուն զգայնութիւնը վիրաւորեց, բարոյական կամ մարմնական ցաւ մը պատճառեց անոնց ու անոնց դժգոհութեան ու բողբոջանաց տեղի տուաւ: Ուսուցիչը անխրաւութիւն կամ անգթութիւն գոր-

¹ Աղքատ աշակերտը բնականաբար տուելի զգոյշ կ'ըլլայ, կամ աւելի գթութեան կ'արժանանայ. իսկ երբ — ինչ որ չէ սովորական եւ այս պարագային մէջ հարուստ, աղքատ միեւնոյն բանն է — մասնաւոր ձգտում մը ցոյց կուտայ աշակերտ մը կոտորելու, քրքրելու, եղծանելու, այն ատեն կը նկատուի իբր փնասակար անզուսպ տարր մը ու կը հեռացուի դպրոցէն:

² Միմիայն իբրեւ անհաճոյ ու չարչարիչ բան մը հարկագրուած գրաւոր պատիժը (pensum) կամ միեւնոյն էջերուն, մի եւ նոյն բաւեց, միեւնոյն բայից բազմապատիկ ընդօրինակութիւնը անիմաստ, անգութ ու անբանացուցիչ բան է: Որովհէն կ'ըսէ իրաւամբ. «Ծայրայեղ գրաւոր պատիժք ատենի կ'ընեն գրքերը, գիտութիւնները եւ ուսուցիչները»:

ծող աշակերտին կ'զգացնէ իւր զգածեալ յանդիմանութեամբք թէ՛ ճրքան մեղանշած է յարգանաց եւ սիրոյ պարտաւորութեան դէմ՝ զոր ամէն մարդիկ ունին միմեանց հանդէպ, եւ կը հրաւիրէ ու կը պարտաւորէ զայն անկեղծ զղջմամբ մը ներուժ խնդրելու վերաւորուած ընկերներէն: Երբ յաճախ կը կրկնուին այսպիսի յանցանքներ, ու բուռն կոպտութեան ու վայրագութեան կը զառաժանին, զանոնք գործող տղան անընկերական կը համարուի ու նախ դասարանին կամ խաղետղին կամ դպրոցին մէջ զայն կը չէզոքացնեն, եւ ի հարկին դպրոցէն եւս կը հեռացնեն ժամանակաւոր կամ վերջնական մերժմամբ:

Ե. Բողոք այս պատժական տնօրինութիւնք կ'ենթադրեն որ աշակերտը գիտէ յարգել իւր ուսուցիչը, պատկառիլ անկէ ու հնազանդիլ անոր ձայնին. բայց երբ աշակերտ մը նոյն իսկ իւր ուսուցչին դէմ կ'ըմբոստանայ, անպատկառ ու անհնազանդ կը գտնուի նորա դէմ, անսասան անլսող մնալով անոր խրատուց եւ անտարբեր անոր զգացած վշտին, ի՞նչ պէտք է ընել. — Ըմբոստ տղան կը ներկայացուի անարգուած պաշտօնէին կողմանէ իրմէ անմիջապէս վեր գտնուող պաշտօնէին որ, յետ զգացնելոյ անոր իր ծանր պակասութիւնը, կը յայտարարէ թէ իրեն անկարելի է մնալ դպրոցին մէջ ցորչափ չբարմանէ իւր յանցանքը, իւր ներուժը չստանայ նոյն իսկ իւր վերաւորած ուսուցչին բերնէն: Երբ ապարդիւն մնայ այս միջոց, աւելի վերին պաշտօնէին կը ներկայացուի որ միեւնոյն պայմանները կը գնէ անոր դպրոցին մէջ մնալուն, միայն թէ այժմ աշակերտը մէկի տեղ երկուքի դէմ յանցաւոր է. այսպէս ուսուցչէն առ տեսուչն, ասկէ առ վերատեսուչն կամ հոգաբարձուն ելնելէ յետոյ խնդիրը, երբ աշակերտը կը յամառի կը մնայ իւր հետաման մէջ եւ յանձն չ'առնուր գոհացում տալ իւր մեծերուն զորս վերաւորած է իւր կոպիտ վարմունքով, եւ կամ երբ բազմիցս տեղի կ'ունենան մի եւ նոյն աշակերտին կողմանէ նմանօրինակ դէպքեր, այն ատեն հարկ կը լինի յանձնել զայն իր ծնողաց, եւ միայն մի անկեղծ եւ հրապարակային զղջումէ յետոյ կրնայ հաւանականութիւնն ունենալ վերստին ի դպրոց ընդունուելու:

Այս ամենուն մէջ՝ կը տեսնենք որ խրատն ու յանդիմանութիւնը միշտ իրենց բաժինն ունին: Արդարեւ տղոց յանցման ամէն

պարագաները պատեհագոյն առիթներն են անոնց խօսելու իրենց պարտուց վրայ, ազնիւ ու խելացի վարմունքի մը պայմաններուն վրայ, եւ այդ ոչ միայն յանցաւոր տղուն օգտին ու կրթութեան համար է, այլ նաեւ միւսներուն, բոլոր դասատան որ բարոյականի ամենէն կենդանի դասը կ'ընդունի այդ վայրկենին: Բայց խրատն ու յանդիմանութիւնը իրենց ճշմարիտ ազդեցութիւնը յառաջ կը բերեն այն ատեն միայն երբ ուսուցիչը կը խօսի զգածեալ, անկեղծօրէն վերաւորեալ շեշտով, իր սաներուն բարւոյն ու կատարելագործման տենչացող հօգիի մը արդար տրամութեան կամ արդար՝ այլ քաղցրախառն զայրոյթի ձայնով: Այսպիսի յանդիմանութիւն մը ինքնին պատիժ մ'է, մանաւանդ զգայուններուն համար, ինչպէս շատեր կան տղայոց մէջ, եւ երբ մանաւանդ իր աշակերտներէն սիրուած ու յարգուած ուսուցչի մը կողմէ կու գայ: Տղայոց շատ մը թերութիւններուն համար, որպէս ըսի, պէտք չէ ատկէ աւելի հեռուն երթալ. բայց նոյն իսկ մեր թուած պատժելի պարագայից մէջ ալ կան այնպիսիներ յորս ի սկզբան կրնամք ու պարտիմք գոհանալ այսպիսի յանդիմանութեամբ:

Մեր համարման պակասիլը ու աշակերտին բարոյական անկումը նշանակող բարի նիշերու նուազումը կամ յոռիներու ստացումը տղոց պատուասիրութեանն զգալի պատիժ մ'է, եւ ինչպէս տղոց ընդհանուր բարոյական վիճակին աստիճանները ցոյց տալու համար կրնան գործածուիլ բարի նիշերը, նոյնպէս եւ յոռի նիշերը կամ լաւերու թուոյն նուազումը պարտին ընկերանալ պատժական անօրինութեանց որոց ազդեցութիւնը կը յաւելուն, եւ մերթ իրենք միայն համարուիլ առաջին աստիճանը պատժոյն: — Դպրոցը ամենօրեայ կամ գէթ ստէպ յարաբերութիւն ալ պարտի ունենալ տան հետ՝ տղուն օրըստօրէական լաւ կամ յոռի ընթացքը ընտանիքին ծանօթացնող վիճակացոյց-տեսարի մը միջոցաւ. ի տես նշանակեալ լաւ կամ յոռի թուոց ու անօրինեալ վարձուց կամ պատժոց, հօրն ու մօր փոհունակութիւնը կամ դժգոհութիւնը պիտի գար աճեցնել անընդհատ անոնց զօրութիւնը, որմէ դպրոցը պիտի օգտուէր՝ կարելի եղածին չափ քիչ ու թեթեւօրէն կատարելու համար դեր պատժածուի:

(Մասիս, Մանկավարժական Հանդէս, Նոր շրջան, Թիւ 9—10, 1894):

8. «ԱՄԵՆԱՄԵՑ ԵՐԳՈՆԷ ՊՈՐՏՈՎՈՆ ԵՆՔ ՄՈՆԿՈՆ».

(Maxima debetur puero reverentia).

(Մրցման գրուած նիւթ եւ քննադատութիւն):

Հռովմայեցի երգիծաբանին, Յոմնաղի, այս նախադասութեան վրայ բացատրական գրութիւններ յղած են մեղ երեք ուսուցիչներ, որոց երկուքն արդէն պատիւ ունեցանք ներկայացնելու մեր ընթերցողաց նախորդ նիւթոյն վրայ իրենց շարադրութեանցն առթիւ: Սորա են Դաւիթ Սարգսեան եւ Մ. Յ. Աղասեան:

Երրորդն առաջին անգամ կը մասնակցի մրցման, եւ է Ղեւնիք Սրուանձտեան, շրջանաւարտ Ազգ. Կեդր. վարժարանի եւ այժմ ուսուցիչ:

Դաւիթ Սարգսեան կը համարի թէ մեծ երգիծաբանը արձակած է այդ վճիռը իբրեւ արտայայտութիւն այն խորին ակնածութեան զոր կը ներշնչէ իրեն մանկան անմեղութիւնը՝ հանդէպ իր ժամանակի Հռովմին ապականութեանցն ու ստորնութեանց որք իր զայրոյթը կը գրգռեն ու նողկանք կու տան իրեն:

— «Նոյն խորախորհուրդ խօսքին — մեծ յարգանք մանկան — արձապանգը կը թռի, կ'ըսէ, մարդուն կուրծքէն, երբ մարդ, բարուց նոյն խննէշութիւններէն, նոյն ապականութիւններէն... որոցմով խառնուած է իր մնութիւնը, գանած, զգուած, կը փնտռէ կէտ մը ուր կարող ըլլայ հաստատել իր ակնարկը... ու կը գտնէ մանուկն իր հրեշտակային ժպիտներովն, իր երկնային բարբառներովն ու անմեղ սիրափարուսներով:», Իրեն համար մանուկը կատարեալ մարդն է, անոր անմեղուկ վիճակէն մեկնած ենք ու անոր պարտինք հասնիլ. ահա՛ ինչու համար ամենամեծ յարգանք պարտական ենք անոր: Այդ յարգանաց արտայայտութեան եղանակը՝ արտաքին ձեւերը չեն, զորս չ'ըմբռներ մանուկը, ու ան՝ անգիտակից իր արժանեաց՝ «յարգանք մը չ'սպասեր բնաւ:», Մեր յարգանաց արտայայտութիւնը նպատակ պիտի ունենայ «ուշադրութիւն ընել մանկան այն յատկութեանց որոցմով կը գրաւէ մեր հիացումը» — «խուլ յարգանք մը, հիացման, գուրգուրանքի եւ խղճամիտ փափկանկատութեան խառն արտայայտում մը:», Եւ յետոյ պէտք է ուշադիր ըլլալ պահելու միշտ

մանուկն իր անմեղութեան մէջ, եւ առ այդ ծածկել անկէ մեր «կեանքին մթին սուռերանկարները, զգուշանալ անոր առջեւ հանելու մեր ներքին կեանքին ո եւ է մասնանկարը որ աղտոտ կողմեր ունի», Բայց, կը յաւելու Սարգսեան, ըստ որում մանուկը, «թէ եւ մարդ կատարեալ», օր մը պիտի մտնէ աշխարհ «որ չէ օժտուած անոր կատարելութեամբ», — թէ եւ. «կուզէինք որ աշխարհի իսկական վիճակին անգիտակ մնայ, եթէ կարելի ըլլար», — պէտք է մանկան հոգին զօրացնել «աստիճանաբար ներկայացնելով անոր արտաքին աշխարհի թերի ու ապականեալ կողմերը», եւ որպէսզի անոնցմէ չապաւորուի, ու «արփիի մը պայծառ անուշ ու կենեղուտ ճաճանչներով անցնի մարդկային ընկերութեան մէջէն», «զեղուլ անոր սրտին մէջ գթութեան եւ սիրոյ սկզբունքները»:

Մ. Յ. Աղասեան «Ուսուցչին կազմելիք բարոյական եւ իմացական շէնքին հիմը» կը նկատէ յարգանք առ մանուկն: Սա, կ'ըսէ, յոյժ դիւրագգած է եւ ունի արժանապատուութեան զգացում. «ունի նաեւ կանուխէն գաղափարն թէ ուրիշներն ինչ կը պարտին իրեն եւ ինք՝ ուրիշներուն»:

Մանուկը յարգելն է գգուել ու սնուցանել անոր արժանապատուութիւնը: Եւ այնու մանկան մէջ ալ կ'արթննայ փոխադարձ յարգանքի պարտականութեան զգացում մը, կը ներշնչուի անոր «ամենակատարեալ համակրութիւն առ ուսուցիչն, ում կը յաջորդեն վստահութիւն ու կրաւորական վիճակ»: Այդ յարգանք «մտաւոր ու բարոյական յառաջդիմութեան ամենամեծ խթանն է, ուսանողին, եւ ուսուցչին համար ալ իր պաշտօնին դժուարութեանց դիւրաւ յաղթելու ամենազօր միջոց մը»: «Հետեւաբար դաստիարակութեան գործին մէջ ամենէն աւելի կարեւոր եւ ամենէն աւելի արդիւնաւոր միջոցն է յարգել մանուկն ամենուրեք, ամէն ժամ, իր աշխատութեան, իր վշտին եւ իր հրճուանքին մէջ: Ճշմարիտ վարժարանն է այն յորում ուսուցիչ եւ ուսանող կը գուրգուրան մէկզմէկու, կը սիրեն ու կը յարգեն զիրար»:

Եւ Աղասեան կը գանգատի թէ «յոյժ ցաւալի է որ առ մեզ առհասարակ մանուկը նկատուած է իբր յարգանաց անարժան, ամենայնի անգիտակից, ի մի բան մեքենայ մը», ու կը

մեղադրէ այն դաստիարակները որոց կրթողական բոլոր ճարտարութիւնը կը կայանայ ի դէպ եւ յանդէպ սաստեղու, արդար անարդար պատժելու եւ ամէն առթիւ կրաւորական հնազանդութիւն պահանջելու մէջ, « մեռցնելով ամէն համարձակասուութեան, նախաձեռնութեան ու եռեփ եկող աշխուժութեան փորձերը:», Ի՞նչ իրաւունք ունին այսպիսիք յետոյ իրենց գանգատներով մեր լսելիքը յոգնեցնելու: Ընելով թէ « իրենց աշակերտները ծոյլ, ապուշ ու անզգայ, անուղղայ ու լիրբ են, զուրկ արժանապատուութեան փոքր ինչ զգացումէ եւն:», Աշխատանի ակնարկած այդ դաստիարակները մեր ազգային վարժարանաց մէջ « կառավարիչ անուան տակ պաշտօնավարող խեղճներն են որք սխալ, շատ սխալ ըմբռնած են դաստիարակին պաշտօնը... եւ որոց անմեկնելի պատճառաւ մը ցայս վայր յանձնուած է սաներու դաստիարակութեան գործը, հակառակ կազմ. կանոնագրի բացորոշ արգելքին, ու անգոսնելով դասարանական դրութեան այնքան անվիճելի առաւելութիւնները:»

Ղեւոնդ Արուանձտեան իր գրուածքը կը սկսի յայտնելով կարեւորութիւնն մանկան հոգւոյն ուսումնասիրութեան իբրեւ անհրաժեշտ ու էական պայման լաւ ուսուցչութեան: «Պէտք է գիտնալ որ, կ'ըսէ, մանուկը անգիտակից, բնազգական էակ մը չէ, այլ խորհող, գիտակից ու վերլուծող. հետեւաբար պէտք չէ անտեսել զինքը, այլ պէտք է կարեւորութիւն տալ իրեն եւ յարգել իր մանրիկ էութիւնը:» Ուսուցիչը, գիտնալով որ « իր էութիւնը ամբողջ մանկան կողմանէ կը լրտեսուի եւ լուրջ ու անաչառ քննութեան մը կ'ենթարկուի», պարտի զգոյշ կենալ, երբ աշակերտին դիմաց կը գտնուի, իր շարժումներուն ու վարմանց մէջ, « միշտ արթուն, միշտ լուրջ, միշտ գորովալից, միշտ յարգող:» Երբ ուսուցիչը իր պաշտօնին փափկութեան գիտակցութիւնն ունի, երբ կը սիրէ ու կը յարգէ իր աշակերտները, յայնժամ սոքա հլու եւ հնազանդ են, բայց անգամ մ'որ աղայք ուսուցչին « ապիկարութենէն ու թուլութենէն օգտուելով» գերակշիռ դիրք ստանան, երբ անգամ մ'իրենց արժանապատուութիւնը ուսուցչին կողմէն վիրաւորուած զգային, « ալ մեաք բարով կարգ ու կանոն, հնազանդութիւն ու ակնածանք, սէր ու յարգանք:» Ա՛լ այն ատեն ուսուցչին կը մեայ,

կ'ըսէ Սրբուանձտեան, իր գլխարկն ու գուռազանն առնուլ ու մեկնիլ գպրոցէն, այլ եւս հոն ոտք չկոխելու համար: Ար վերջացնէ իր յօգուածը ցաւ յայտնելով որ շատ մ'անարժանք, ի չգոյէ այլ գործոյ, եկած մտած են կրթական գործի մէջ:

« Հեռու հեռու » կը գոչէ այդպիսեաց « որոնք մանկական հոգեբանութեանը անգիտակ' ահաւոր նախաձիւրներ կը գործեն մտառդ էակներու սրտին, մտքին եւ հոգւոյն մէջ », եւ « անոնց տեղ թող գան բազմին ուսուցչական աթոռին վրայ անոնք որոնք կոչում ունին, եւ որոնք զիտեն վարուիլ մանկան հետ ամենամեծ յարգանքով: »

Երեք գրութեանց ալ հեղինակները, ինչպէս ժբւ վերլուծութեանէն կը տեսնուի, ջանացած են մեկնել Յոբանոյի խօսքին իմաստը իրենց յատուկ տեսակէտներով, եւ իւրաքանչիւրն յայտնած է զանազան լաւ մտքեր, բայց այս անգամ անոնցմէ ոչ մին պատշաճ համարեցինք հրատարակել աստ, վասն զի, ներուի մեզ ըսել, ոչ մին թուեցաւ մեզ թափանցած ըլլալ կատարելապէս խնդրոյն էութեանը, եւ ամէնքն ալ ուղիղ մտածութեանց հետ խառն կը բերէին թիւր կամ չափադանցեալ տեսութիւններ:

Առաջին գրութեան հեղինակը մանկան կատարելութեանց վրայ հիացական զգացման մը հետեւանք կը դնէ յարգանքը զոր լատին երգիծաբանը կը պահանջէ մանկան համար: Բայց գիտնք որ մանուկը կատարեալ էակը չէ, եթէ ոչ պէտք չպիտի ունենար կրթութիւն: Ոչ միայն մտօք ու մարմնով տկար ու անկատար է, այլ եւ բարոյապէս եւս. իր անմեղութիւնը անգիտութիւն է. եւ թէեւ իրաւ է որ իր այդ անգիտութիւնը, դեռ կրից անփորձ ու ցանկութեանց անծանօթ իր սիրտը զինքը հեռու կը պահեն չափահասութեան յատուկ մեղքերէն, բայց նա եւս ունի իր չարութիւնները. մանուկը անձնասէր է սովորապէս, ու ան անգութ ալ է, „cet âge est sans pitié“, ու ժառանգականութեամբ շտաբը ուն մէջ կան աւելի կամ նուազ չարի սերմունք: Միայն թէ մանուկները, եբք չարիք գործեն, անմեղ յանցաւորներ են, ու մենք շուտով կը ներքնք իրենց, վասն զի դեռ իրենց բանականութիւնը չէ կարող ընել բարւոյն ու չարին ընտրութիւնը, դեռ իրենց կամքը չէ կազմուած, եւ հետեւապէս դեռ չեն կարող պատասխանատու համարուիլ իրենց գործոց: Բարոյական կատար-

րելութիւնը անգիտակից գործունէութիւնը չէ, աւելի կամ նուազ անգիտօրէն բարի կամ չար, այլ գիտակից, խորհրդածեալ ու աղատակամ բարերար գործունէութիւնն է: Մարդուն էն մեծ ստորոգելիքն իր բանաւորութեան ու աղատակամութեան հանգամանքներն են, եւ դեռ երկուքն ալ յոյժ անկազմ եւ անկատար են մանկան մէջ: Արդարեւ գիտակցութեան յանցանքներուն ու խղճի տագնապներուն առջեւ մարդ յաճախ երանի՛ կը կարդայ անգէտ ու անխէթ մանկութեան, բայց այդ այնպէս է որպէս թէ մարդ կենաց տառապանաց հանդէպ մահուան անզգայութեան ու գերիզմանի հանգստին ցանկար: Մանկան կատարելութեան պարագային մէջ, դաստիարակութիւնը ժխտական դեր մը պիտի ունենար, ինչպէս որ կ'երեւի ունենալ ըստ Արագսեանի, որ կարծես կը կայացնէ զայն աշխարհի տգեղութիւնները մանկան աստիճանաբար ճանչցնելու մէջ: Մանուկը գեղեցիկ ու հրապուրիչ է, ինչպէս ծաղիկը, ինչպէս արշալոյսը. բայց ծաղիկն կատարելութիւնը պտուղն է, որպէս արշալուսին՝ արեւը իր զէնիթին վրայ: Երկրորդ գրութեան հեղինակը լաւ կը տեսնէ մանկան դիւրազգածութիւնը զոր մեր պարտքն է չվիրաւորել, ու տղուն արժանապատուութեան նորաբոյս զգացումը զոր մեր պարտքն է տածել սնուցանել իրրեւ անոր բարոյական դաստիարակութեան կարեւորագոյն խմորը: Բայց կարծես թէ Աղասեան այս առ մանուկն յարգանաց պարտքը առ նա տեսակ մը քաղաքավարութեան ու փափկանկատութեան հետ կը նոյնացնէ, տեսակ մը մանկավարժի հնարք կամ ճարտարութիւն ընելով զայն, մանուկէն ստանալու համար փոխադարձ յարգանք ու դիւրայօժար հնազանդութիւն, «հեշտիւ յաղթելու պաշտօնին պահանջած այլազան դժուարութեանց ու իր նպատակին հասնելու»: Անշուշտ տալ մանկան ինչ որ կը պարտինք անոր՝ միջոց մ'է զինքը չմղելու ի խեղութիւն, վասն զի յիրաւի, որպէս կը դիտէ Աղասեան նա գաղափարն ունի կանուխէն անոր՝ զոր այլք կը պարտին իրեն, — թէեւ ո՛չ նոյնքան իրաւացի է ըսել թէ գիտէ նաեւ կանուխէն ինչ որ ինք կը պարտի այլոց, վասն զի, Ռընուվիէի ըսածին պէս, «Արդարին զգացումը իրաւանց կողմէն վաղահաս է ու պարտուց բանաւոր ծանօթութիւնը կը կանխէ երկար ժամանակաւ, , բայց մենք պարտաւոր ենք մեր պարտքերը կատարել առ

մանուկն, նոյն իսկ երբ սա չունենայ անոնց որոշ գիտակցութիւնը, ինչպէս է իրողութիւնը շատ պարագայից մէջ, եւ տանի իսկ հըու-
թեամբ մեր ինչ ինչ անիրաւ ու վնասակար վարմանց:

Երբորդ գրութեան հեղինակը աշակերտաց ներկայութեան սրտտես լրտեսներու աչքին տակ կը զգայ ինքզինք ու անոնցմէ երկիւղի պէս բան մ'ունի: Յղուն առերեւոյթ պարզութեան տակ չարաճճի ոգի մը կը նշմարէ, խորհող ու վերլուծող միտք մը որմէ ամէն վայրկեան կ'ենթարկուի լուրջ ու անաչառ քննու-
թեան: Պէտք չէ անտես ընել այդ փոքրիկները. եթէ անոնց անձնասիրութիւնը վիրաւորելու անխոհեմութիւնն ունենանք կամ մեր ապիկարութիւնն անոնց առջեւ պարզելու, ալ վայ մեզ. ուստի յարգանք մանկութեան ու մանաւանդ զգուշութիւն, «եր-
բեք յախուռն գործ, շատ քիչ անգամ բարկութիւն, երբեք աննպատակ պատիժ, երբեք անգործագրելի սպառնալիք:», ինչո՞ւ.
վասն զի, առանց ասոր, վարժապետը «խաղալիք մը կը դառնայ իրենց ձեռքը, անզոր ու տկար...», կը տեսնուի թէ Սրբաւանձտեան ինքն եւս իրրեւ կարգապահութեան հնարք մը, տղոց հաճելի ըլլալու պայման մը յանձնարարեալ կը համարի առ մանկութիւնն յարգանքն, որու ճշմարիտ բնութիւնն ալ տարտամ կը մնայ իրեն համար, ինչպէս նաեւ կը չափազանցէ՝ երբ տղուն մտաց կատարելապէս վերլուծող ու անաչառ քննող կարողութիւն կը վերագրէ:

Յոբնաղի ԺԳ. երգիծաբանութեան մէջ կը գտնուի այս խօսքը: Այդ երգիծաբանութեան վերնագիրն է Օրինակը. անոր մէջ բանաստեղծը կը հարուածէ այն ծնողքն որք, իրենց զեղծու-
մեղծ բարութ, խաղամոլութեան, որկրամոլութեան, անգթութեան եւ արծաթամոլութեան աղիտարեր օրինակները կու տան իրենց զաւակաց, եւ կը յորդորէ զանոնք ետ կենալ ամէն մեղապարտ գործէ եւ հեռացնել «այն սեմէն ուր իրենց մանուկը կը մեծնայ՝ ամէն ինչ որ կրնայ վիրաւորել անոր ականջը կամ աչքերը:», «Ամենամեծ յարգանք պարտական ենք մանկան. երբ ամօթալի գործ մը գործելու վրայ ես, մտածէ քու որդւոյդ անմեղութեան վրայ, եւ մեղանչելու վայրկենիդ՝ տղուդ տեսիլը թող գայ քեզ պահպանել:», Յարգանքը պաշտում, հիացում չի նշանակել որ անդ, այլ խնայում, անվթար պահպանում անմեղութեանն այն

Հոգւոյն որ մեզ հաւատացուած է որպէս զի, հեռի տպականելէ, տակաւ զարգացնենք զայն բարւոյն ու գեղեցկին ուղղութեամբ:

Ու առ այս չի բաւեր անշուշտ մեր բարուց տգեղութիւնները ծածկել մեր զաւակներէն, ջանալ չգայթակղեցնել անազնիւ գործքով թէ խօսքով այդ փոքրիկները, այլ պարտինք մաքրել, սրբացնել զմեզ, որպէս զի նաեւ դրապէս բարւոյն օրինակ լինինք մեր մանկանց: Ա. Աինէ ըսած է. — “Ինչ որ կ'ըսէր Յիսուս Քրիստոս իր աշակերտաց մասին — “Եւ ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ”, — հաւատարիմ հօր եւ մօր նշանաբանն է:”

Մանկան յարգանք պարտինք նաեւ իբրեւ *անձի* (personne), իբրեւ բարոյական էակի, որ վախճան մ'է ինքնին եւ զոր չեմք կարող իբրեւ միջոց գործածել ըստ մեր քմահաճոյից ու շահուց, առանց անբարոյական գործ մ'ըրած ըլլալու, առանց մեծագոյն անիրաւութիւնը գործելու: Ու թէ որ տղան դեռ կատարելապէս անձ չէ, որոյ էական ստորագելիքն, բանականութիւն ու ազատականութիւն, դեռ կազմուելու վրայ են իր մէջ, սակայն անձ մը պիտի լինի, անձ մ'ըլլալու ճամբուն մէջ է. այդ իր մէջն է ու պիտի դուրս գայ տակաւ. հետեւապէս այժմէն պարտական եմք մարդկային անձի արժանապատուութիւնը յարգելու նորա մէջ որ մարդն է ապագայ, եւ որ պիտի կրնայ շեղել իր նպատակէն՝ եթէ կանխաւ անոր տեսակէտով չվարուինք իրեն հետ: Արդէն իր իրաւունքներուն ալ, որպէս ըսուեցաւ, եթէ ոչ որոշ ու ամբողջական, գէթ տարտամ ու մասնական գիտակցութիւնն ունի կանուխ, որով գիտէ՝ շատ պզտիկ՝ զայրանալ անիրաւութեան մը, զրկման մը, թշնամանքի մը դէմ: Կը զգաս որ պզտիկ մարդ մ'է, ու մարդ մը պիտի ըլլայ: Բայց իր իրաւանց գիտակցութեան անկատարութիւնն կամ զանոնք պաշտպանելու մասին իր տկարութիւնն պատճառ մը չեն որ մեր յարգանքն անոնց չափովը չափուի:

Արդարութիւնը պարտք կը դնէ չափահասին վրայ խորհիլ, հոգալ ու պաշտպանել անչափահասին տեղ, եւ ահա ասոր համար իշխանութիւնք, պաշտպան անչափահասին իրաւանց, կը միջամտեն ընտանիքին մէջ ու դպրոցին՝ բռնի յարգել տալու ծնողաց ու դաստիարակաց տղուն անտես առնուած իրաւունքները կամ գործուած բռնաբարմանց մասին համար պահանջելու:

Ըստ այսմ ծնողք եւ դաստիարակք լին յարգանքք պիտի վերաբերուին իրենց զաւակաց ու սանուց նորալոյս իմացականութեանց, քնքոյշ զգայնութեանց ու դեռածին կամեցողութեանց հետ, այնքան աւելի յարգանքք որքան սոքա դեռ անկարող են իրենց մարդկային բարձր կոչումն ըմբռնելու ու սկար՝ զիրենք պաշտպանելու յայն դիմելէ զիրենք արգիլող պատճառներուն դէմ: Պիտի զգուշանան սուտով, սխալով ու նախապաշարմամբք անոնց միտքը թունաւորելէ, բիրտ ու վայրագ, անհոգածու ու անգորով վարմունքով վերաւորելէ անոնց զգայնութիւնը ու թշուառացնելէ զանոնք, եւ բռնական կամքի մը խիստ ու անբանաւոր պահանջներուն տակ փշրելէ անոնց նորակազմ կամեցողութիւնը եւ արգիլելէ նկարագրին կազմութիւնը: Եթէ մանկանց անխելահասութիւնն իրաւունք կու տայ մեծերուն, փոքրերուն շահուն ու վախճանին իսկ տեսակէտով, իրենց խորհուրդն ու կամքը հարկադրելու անոնց վրայ, այդ պիտի ըլլայ իմաստուն զգուշութեամբ, քաղցրութեան միջոցներով, սէրէն ոգեւորուած յարգանքք, որպէս զի մի գուցէ վտանգուի անոնց մէջ բարոյական էակին կազմութիւնը եւ չտափազանց ու թիւր եռանդ մը դաստիարակութիւնը իր նպատակէն վրիպեցնէ:

Երեք գրութիւնք կը շոյափէին անշուշտ այս զանազան գաղափարները, մանաւանդ այս եզրակացութիւնները, բայց սկզբանց ու հետեւութեանց յստակ ու ամբողջական տեսութիւն մը կը պակսէր անոնց:

(Մասիս, Մանկավարժական Հանդէս, Նոր Շրջան, Թիւ 9—10, 1894.)

9. ԲԵՐՈՅՈՒԿԱՆ ԳՆՍՑԻՆԵՐԵԿՈՒԹԻՒՆ

(Հետեւողութեամբ Գոմբէյուէի)

Բարոյական դաստիարակութիւնն ամբողջութիւնն է այն միջոցներուն ու ազգեցութեանց որք ի գործ կը դրուին մանկան վրայ՝ անոր բարոյական զգացումները մշակելու, անոր առաքինի սովորութիւններ ստանալ տալու, անոր գործունէութիւնը դէպ ի բարին ուղղելու համար: Կռէառ կը յայտարարէ թէ « իմացական մշակութեան որ զմիտքն կը յարդարէ՝ պարտի միանալ բարոյա-

կան մշակումը որ զբնաւորութիւնն (զնկարագիրն) կը կազմէ: Ըստ այսմ բարոյական դաստիարակութիւնը կը գերազանցէ իսկ իմացականը, վասն զի նպատակն իսկ է դաստիարակութեան, եւ մարդուն արժէքը ոչ այնքան իր հմտութեան մէջ է որքան իր նկարագրին:

“Երթութիւնը, կ’ըսէր Լոք, փոքրագոյն մասն է միայն դաստիարակութեան, Գարձեալ. “Ինչ որ հայր մը պարտի փափաքիլ իր որդւոյն, նախ եւ յառաջ առաքինութիւնն է. գիտութիւնը վերջը կու գայ:” Եթէ Հօռասման կ’ըսէր թէ “դպրոցն մեծագոյն գիւտն է զոր մարդկութիւնն ըրած ըլլայ”, անշուշտ անոր համար էր որ անկէ բոլոր մարդոց համար կը սպասէր բարոյականի մեծ դասեր: Բեսդալօցցիի իտէալը դաստիարակութիւնն էր աւելի քան ուսումը, թէ եւ ամէն ուսում յաչս իրեն ունէր դաստիարակիչ զօրութիւն: Գերմանացի մանկավարժն Յիսդըրօվէկ կը յայտարարէ թէ մարդուն արժէքն իր սրտին մէջ է:

— Բարոյական դաստիարակութեան մէջ ընտանեաց գերն շատ մեծ է. առաջին ներգործութիւնք ընտանիքէն կու գան, եւ կը տեւեն անլնդհատ: Բայց ոչ նուազ ունի եւ դպրոցն իւր բարոյացուցիչ մասինն ու ազդեցութիւնը, ոչ թէ միայն անոր համար որ դպրոցին մէջ կրնանք սովորիլ մեր զանազան պարտաւորութիւնները, այլ մանաւանդ այնու որ ամէն ինչ վարժաժարանին մէջ, դասք եւ վարմունք, աշակերտաց եւ ուսուցչին, կրնան ծառայել եւ օգտակարապէս գործածուիլ լաւ սովորութեանց կազմութեան, զգացմանց եւ կամաց մշակութեան: Բայց առաջին եւ անհրաժեշտ պայմանն է որ ուսուցիչը, սիրելի եւ յարգելի եղած աշակերտաց, նոցա վրայ ճշմարիտ ըստոյական հեղինակութիւն մը ստացած լինի, յանձին իսկ իւրում տալով նոցա բարոյական յատկութեանց (բարեմասնութեանց) օրինակն:

— Իմացական դաստիարակութիւնը կը պատրաստէ բարոյական դաստիարակութիւնը: Իմացականութեան լաւ յատկութիւններ, ուղիղ դատողութիւն, խորհրդածութիւն, լաւագոյն նեցուկներ են բարոյական յատկութեանց բողբոջման, եւ ուսման ամէն մասունքը ու հրահանգք կրնան նպաստել բարոյականութիւնը զարգացնելու, ինչպէս երբ ուշադիր ըլլամք քերականութեան

դատի մը համար ընտրելու բարոյային օրինակներ, շարագրութեան առարկայներ ընտրելու բարոյացուցիչ նիւթերէ, ընթերցուածոց առթիւ մեր խորհրդածութիւններէն հանելու շայեկան խրատներ: Եւ նոյն իսկ բարոյագիտութեան ուղղակի ուսուցումն ունի իւր օգտակարութիւն: Բայց ասոնք չեն բաւեր, կայ մասնաւոր ու յատուկ դաստիարակութիւն մը բարոյականութեան, որոյ էական տարերք են 1. Բնազդմանց եւ նկարագրոց ուսուցման քրութիւնը, 2. Սովորութեանց կազմութիւնը, 3. Զգայնութեան մշակութիւնը, 4. Կամաց մշակութիւնը, 9. Վարձուց եւ պատժոց դրութիւնը (discipline):

— Ուսումնասիրութիւն ընազդմանց եւ նկարագրաց: — Թէպէտ եւ նկարագիրը դեռ վերջնապէս կազմուած չէ տղայոց քով, այսու հանդերձ ամէն անհատի մէջ կայ ժառանգական ու անձնական տրամադրութեանց գումար մը զոր իր հետ բերած է ի ծնանելը, եւ զոր հետզհետէ պիտի յեղակերպեն ազդեցութիւնը ընտանեաց, դպրոցին, կենաց, կամաց: Այս նախնական գումարը կը կազմէ բնաւորութեան հիմ մը, եւ դեռ այդ իսկ է ինչ որ կը կոչեմք նկարագիր տղայոց քով. բայց շատ զանազանութիւններ կը ներկայացնէ, որով եւ տղայք կը ներկայանան արդէն զանազան բնաւորութեանց տէր: Գաստիարակին առաջին պարտաւորութիւնն է ուսումնասիրել իր աշակերտաց զանազան ընաւորութիւնքն, զսպելու համար յոռի հակամիտութիւնները եւ նպաստաւորելու բարի յօժարութիւնները:

— Ինչիր է թէ մարդկային բնաւորութիւնն ի բնէ բարի է թէ չար, եւ թէ՛ եթէ չար կամ ոչ կատարելապէս բարի՝ դաստիարակութիւնը կարող է չարը բարիի դարձնել եւ բնութեան թերութիւնները ուղղել: Այս մասին կարծիքները կը հակառակին: Գիտեմք որ Ռուսո մարդոյն բնածին բարութեան ջերմ հաւատացող մ'էր:

“Ամէն ինչ բարի է յելանելն ի ձեռաց արարչին իրաց, ամէն ինչ կը վատթարանայ մարդոց ձեռաց մէջ...: Մարդկային սրտին մէջ չկայ սկզբնական զեղծութիւն:”, Ժ. Ժ. Ռուսո, Էմիլ, Գլ. Ա. Բեսսալոցցի ալ կ'ըսէ. “Մարդը բարի է...: Հակառակ ամենայնի, բացարձակ եւ ընդհանուր կերպիւ կը հաւատամ մարդկային սրտին, եւ փիլիկած ծամբուս վրայ կը քալեմ այս հաւատքով,

իրբեւ թէ քալէի լաւ սալայտաակեալ հռոմէական պողոտայի մը վրայ:»

Բայց այլք չունին այս բացարձակ հաւատքը ու վերապահումներ կ'ընեն, մարդուն մէջ տեսնելով ի բնէ թէ բարի եւ թէ յոռի յատկութեանց սերմեր, ընդունակութիւններ, ըստ ժառանգական ու կազմական հանգամանաց, եւ մանկան անմեղութիւնը դնելով մանաւանդ չարին, բարոյական՝ կամաւոր չարին անգիտութեան մէջ, որպէս կ'ըսէ Սենեկա, «Տղան անմեղ է անգիտութեամբն չարին: Վասն զի մեծ տարբերութիւն կայ չարը չկամելուն ու չգիտնալուն մէջ... կը ծնանինք առաքինութեան համար, ո՛չ թէ անով. լաւագոյնս օժտուած մարդիկ՝ դաստիարակութիւն ստանալէ յառաջ՝ միայն սերմն ունին առաքինութեան, ո՛չ զնոյն ինքն առաքինութիւնը:» Եւ քանզի կ'ըսէ. «Կրնայ ըսուիլ որ սկզբնաբար կը պարունակէ (մարդն) իւր մէջ հակամիտութիւն ամէն մոլութեանց համար, զի ունի յօժարութիւններ ու բերումներ որք զինքն՝ ընդդէմ բանականութեան ճգանց՝ հակառակ կողմը կը քաշեն:»

Անշուշտ Ռուսօ կերպիւ իւիք իրաւունք ունի ըսելու թէ «Ամենայն բարի է յեղանակէն ի ձեռաց արարչին իրաց.» բայց նոյն իսկ ի ծնանելն կը կրէ՞ տղան յինքեան զմարդկային բնութիւնն այնպէս որպէս Արարիչն ըրած կամ ըլլալու սահմանած է զայն: Ո՛ր պիտի գտնենք զուտ Աստուծոյ ձեռակերտ մարդը. դեռ նոր աշխարհ մտնող մանկիկն ալ կրած է արդէն ազդեցութիւնն անոր. (մարդուն) որոյ ձեռքը վատթարացուցիչ կը համարի ինքն իսկ Ռուսօ: Բայց ճշմարիտ է որ մարդկային բնութեան հիմն ու ձգտումն ազնիւ են. «առաքինութեան համար ծնած է» մարդ, այո՛, բայց յոռի սերմեր կան խառնուած առաւել կամ նուազ բարիներուն հետ, եւ բարիներն ալ սերմունք են միայն. գործ է յոռիները սկիարացնել, ջնջել, ու բարիները փրկել, զօրացնել, զարգացնել: Եւ այս գործ բարոյական դաստիարակութեանն է:

— Սովորութիւնք. — Բարի յօժարութիւնք (inclination) քաջալերուելով, վարժուելով ի գործ, կը լինին լաւ սովորութիւններ: Սովորութիւնք կը հաստատուին ըստ համեմատութեան միեւնոյն գործողութեան կրկնութեանց թուոյն, սասակութեան ճգան կամ հաճոյքին որ մէն մի գործողութեան կ'ընկերանայ:

Պէտք է որ դաստիարակը արգիլէ ձր եւ է կրկնում յոռի տպաւորութեան մը, գործի մը, որ կրնայ ծնունդ տալ մոլեկան սովորութեան մը. եւ ընդհակառակն նպաստել որ մանուկը յաճախ վերագառնայ այն զգացմանց, գաղափարաց, գործոց, յորոց գուրս պիտի գան լաւ սովորութիւններ:

Լաւ սովորութիւններէ յառաջ կու գայ բարին գործելու դիւրայօժար արամադրութիւն մը, որ եւ հետեւաբար ունի բարերար ազդեցութիւն մեր բարոյական վարմանց վրայ: Տիկին Կիզօ ըսած է. «Մեր կարողութիւնը սահմանափակ է. զօրութիւնը, լըսը մեզմէ կտրուած չ'ունին, ժամանակը միայն մերն է: Օրուան զօրութեան պիտի յաւելու վաղուանը, եւ երէկ սովրածնիս մեր այսօրուան գիացածին մի մասն է: Պարտականութեան գործ մ'առաջին անգամ դժուարին երեւցաւ ինձ գործադրելու. երկրորդ անգամ, պիտի սկսիմ զայն՝ զօրացեալ այն գոհունակութեան զգացմամբ զոր անոր կատարումը տուած էր ինձ...: Ընդհուպ, այլ ճիգ մը չպիտի ուզէ ինձմէ, պէտք մը պիտի ըլլայ ինձ համար».

Բայց պէտք է նկատել որ սովորութիւնը ոչ-բանաւորական (irrationnel), անգիտակից գործունէութիւն մ'է, եւ թէ ըլլայ բարի՝ բայց սեսակ մը մեքենականութիւն կու տայ, մեր ներկայն կը շղթայէ մեր անցելոյն, եւ նոր ու անակնկալ պարագաներու առջեւ կրնայ ըլլալ անբաւական: Հետեւաբար պէտք չէ որ սովորութեանց իշխանութիւնն ըլլայ բացարձակ. պէտք է, որպէս կ'ըսէ Ա. Վինէ (L'éducation, la famille et la société.), որ սովորութեան անկամաւոր գործոց մէջտեղ ազատութիւնը կարենայ ժամանակ առ ժամանակ նետել իւր յատուկ գործերը, եւ, որպէս կ'ըսէ Տիկին Կիզօ, սովորութեանց կցել գործողութեան խորհրդածեալ սկզբունքները: Սոքա են որ պիտի ներեն տղուն ազատօրէն որոշել իւր ընելէքը, պարագայից պատշաճեցնել իւր գործերը, որք պիտի արգիլեն զինքը մեքենական ու լոկ մնազդական կեանքի մէջ իյնալէ, եւ որք վերջապէս զինքը տէր պիտի թողուն ինքզինքին:

— Մշակութիւն զգայնութեան. — Զգայնութիւնն հասկնալովք անձուկ մտքը, հասկնալով միայն այնու մարդուն ազնուական, այլասիրական, վեհանձնական, վեհըղձիկ ձգտմունքն կամ յօժարութիւնքն, որք կը շինեն բարի եւ անձնուէր մարդը՝

ընտանեւէրը, բարեկամը, բարի քաղաքացին, տոհմասէրը, մարդասէրը, Ճշմարտին, բարւոյն, գեղեցկին անձկատենչ հոգին, վերջապէս հոգեպէս կրօնազգած կրօնախոհ մարդը: Զգայնութեան ստորին ձեւերը եւս անշուշտ պարտին առարկայ ըլլալ դաստիարակին ուշադրութեան, բայց զանոնք զսպելու, չափաւորելու, անոնց ի կիրք զառածուօ՞ք արգիլելու տեսակէտով: Իսկ ազնիւ զգացմունքն է որ պէտք է մասնաւորապէս ուշադիր ըլլալ զարգացնելու:

Այս դժուարին եւ փափուկ գործ է, բայց չէ անհնար: Ճիշդ չէ բողոքովին ըսել, որպէս կը կարծուի սովորաբար, թէ այդ ազնուական տրամադրութիւնք բնատուր կը լինին ըստ անհատից եւ թէ դաստիարակութիւնն անկարող է յառաջ բերել զանոնք: Կայ զգայնութեան դաստիարակութիւն մը որ կը կայանայ բնութեան դրած ազնիւ յօժարութեանց սերմունքը մշակելու եւ անոնց փթթման ու պտղաբերութեան օգնելու մէջ՝ դնելով զանոնք այս նպատակին նպաստաւոր պայմաններու մէջ ու ազդեցութիւններու տակ. — Եւ բարեբաղդաբար ամենէն ապաշնորհ սրտերու մէջ կան տարերքն բարեզգածութեան զորս միայն սնուցանել ու կենդանացնել հարկ է: — Զգայնութեան մշակման կարեւորութիւնն ալ բացայայտ է՝ երբ խորհինք թէ զգայնութիւնն որքան մղիչ ոյժ մ'է գործունէութեան, եւ թէ սիրտը կենդանի աղբիւրն է երջանկութեան:

— Անտեղի է կանուխէն տղաքներէ պահանջել խիստ փափուկ ու խոր զգայնութիւն մը: Հակառակ անոնց քնքոյշ շնորհաց ու սիրաժպիտ մշտածիծաղ դէմքին, իրենց զգայնութիւնն դեռ շատ կոշտ է: Արտաքին բացատրութիւնը անհամեմատ է ներքին զգացման ու պատիր: Ստիպել տղան որ շատ կանուխ տայ սիրոյ, անձնուիրութեան, բարձր զգայնութեան մը փորձերը՝ բռնազբօսել է նորա բնութիւնը. այս կերպով վտանգ կայ անկէ միայն ձեւական ծամածուօններ կամ կեղծաւորական շարժումներ ստանալու: Լաւագոյն համարինք իրականութիւնը, սպասել գիտնանք ու մշակել, զամէն ինչ ժամանակին ստանալու համար: Հասակը, կեանքը, մտաց ու սրտի աստիճանական զարգացումը պիտանի են զգայնութեան ազնուացման: Բայց միւս կողմանէ, երբ տղան ինքնաբեր կ'արտայայտէ զգացում եւ սէր, պէտք չէ կեղծիք կամ չափազանցութիւն կասկածիլ ու ցուրտ կերպով ընդունիլ. կրնայինք սիրոյ

զգացումն իսկ մարեւ որպէս իրաւամբ կը գիտէ Գ. Էճուորթ (Miss Edgeworth, Essais sur l'éducation pratique):

— Սակայն զործոյն կամ արաւաքին բացատրութեան եւ զգացման մէջ կայ այնպիսի փոխադարձ կապ ու ազդեցութիւն որ մերթ օգտակար եւ կարեւոր է կանխել զգացումը, եւ գործել տալ ազնիւ յօժարութեան մը ուղղութեամբ, դեռ այս վերջինը չարթնցած կամ չզարգացած. զոր օրինակ՝ ողորմութիւն տալ տալ տղուն, թէպէտ դեռ չէ հասկցած գութը, ընկերին անշահախնդր գիր սէրը: Եթէ զգացումը ի գործ կը տանի, գործն ալ՝ մանաւանդ կրկնուելով՝ կրնայ զգացումը, յօժարութիւնն արթնցնել, ծընցունել:

— Նշնպէս զգացմանց ու զաղափարաց մէջ կայ փոխադարձ սերտ յարաբերութիւն: Զայն կը սիրենք զոր կը ճանաչենք. ապա եւ զգայնութեան զարգացումն սերտիւ կապուած է մտքին զարգացման: Խորհրդածութեան կոչում ընելով, տղուն մտաց ներկայացնելով՝ ի ձեռն պատմութեանց եւ օրինակաց՝ զինքն յուզելու կարող տեսարաններ ու կացութիւններ ու գործեր, անուղղակի ճամբով սրտին կը հասնինք, եւ այսպէս մտքին լուսաւորութիւնը կը նպաստէ սրտին կրթութեան:

— Օրինակին ազդեցութիւնը թերեւս զգայնութեան դաստիարակութեան մէջ ամենէն աւելի յայտնի կը տեսնուի: Եթէ կ'ուզենք որ տղայք սիրեն, սիրենք նախ զանոնք: Սիրոյ եւ անձնութիւնութեան մթնոլորտի մը մէջ թէ մեծնայ մանուկը, բնականաբար եւ ինքն պիտի լինի ընդունակ միեւնոյն զգացմանց, պիտի փոխադարձէ սերն որոյ առարկայ կը լինի: Եթէ ծնողք գորովագութ են, երեց եղբարք՝ հոգածու իրենց կրտսերաց, ամբողջ ընտանիքն՝ միացեալ ու ներդաշնակ, դրացիք՝ բարեացակամ հաճոյակատար եւ ուսուցիչն ալ հայր մը, բարեկամ մը, մանուկն չի կրնար անզգայ ու անսէր թնայ, ինչպէս կարի հաւանականաբար պիտի ըլլար ցուրտ անտարբերութեան ու անսիրելութեան չոր ու ցամաք մթնոլորտի մը մէջ:

— Զգացմունք նաեւ ո՛չ միայն սրտէ ի սիրտ, այլ եւ միեւնոյն հոգւոյն մէջ կրնան իրարու հաղորդել իրենց ջերմութիւնը: Մէկ կողմով զգայուն, պիտի կրնայ զգայուն ըլլալ մարդ այլ կողմերով, ամէն կողմերով: Այնտեւ ներքին տարափոխութիւն մը: Թէ ընտանեկան սիրոյ զգայուն է դք, իւր սիրտը պիտի կրնայ բա-

ցուիլ այլ սերերու. գեղեցկին սերը բարւոյն սերը պիտի արթնցնէ, այս՝ ուրիշներ եւայլն:

— Սկսինք ընտանեկան զգացումներէն կամ սէրերէն, որք դիւրագոյնք են ի վառիլ, այնքան ընտանիքը մօտ է մանկան սրտին: Այս զգացմանց մշակումն ընտանեկան յարկին տակ կրնայ կատարուիլ, եւ եթէ տղայ մ'ընտանեաց ջերմ ծոցին մէջ առած շլինի սրտի այս առաջին կակղացումը, անտարակոյս յոյժ դժուարին կը լինի դպրոցին՝ զգացումներն յղկելու գործը: Ինչ է ընտանիքը. — սքանչելապէս կը պատասխանէ Պէրսօ. «Երբ ի միասին կ'ապրին, երբ զիրար կը սիրեն, երբ իւրաքանչիւրն կը սիրէ միւսներն առաւել քան զինքն, երբ անոնց բարեբախտութեամբն երջանիկ է ու դժբախտութեամբը՝ թշուառ, երբ պատրաստ է խնամելու զանոնք՝ երբ պէտք ունին իրեն, պաշտպանելու զանոնք՝ երբ յարձակում կրեն, երբ լաւագոյն կը համարի տառապիլ քան նոցա տառապիլը տեսնել, եւ երբ ամէնքն ի միասին մի եւեթ սիրտ են, այն աստեն, ահա՛ ընտանիքը...»: Այսպիսի հաստատութիւն մը դպրոցն է ամէն բարի զգացմանց: Բարի որդի, պիտի լինի մարդ դիւրաւ եւ ընտիր բարեկամ, անձնուէր քաղաքացի, տոհմասէր մարդ, ընդունակ ու կարող սրտի ամէն ազնուութեանց:

— Դպրոցը, ոյր գործ սկսուած ու դիւրացած է այսպէս տան ներգործութեամբ, անմասն չէ բոլորովին նոյն իսկ ընտանեկան զգացմանց մշակութենէն. կրնայ օրինակներով, պատուէրներով յիշեցնել զաւակաց երախտագիտութեան ու յարգանաց պարտաւորութիւնքն առ ծնողս. իսկ իւր յատուկ շրջանակին մէջ ունի առանձին յարմարութիւններ զգայնութիւնը մշակելու՝ ընկերսիրական զգացման զարգացմանն առիթ ընծայելով, որպէս եւ կազմութեանն այն դպրոցական բարեկամութեանց որք յաճախ կենաց հետ կը տեսնեն: Դպրոցական այդ փոքր ընկերութեան մէջ, որ արդէն աշխարհն է մանրանկար, փոխադարձ պէտք եւ ծառայութիւնք, հասարակորդութիւն ուսմանց եւ խաղուց, վաստակոց ու հանգստեան, կը զարգացնեն համակրութիւնը, արդարութեան եւ գթոյ զգացումները կը զարթուցանեն, ընկերական ոգին կը զօրացնեն: Եւ ուսուցիչն մանկանց փոխադարձ յարաբերութեանց ու շփմանց մէջ ամէն վայրկեան առիթ կը

գանձէ քաջալերելու ազնիւ զգացմանց արառայաաւթիւնները, նսական ոգւոյ ձգտումները զսպելու, բարերար սրտագրեցիկ տպաւորութիւններ առաջ բերելու:

— Դպրոցին մէջ աղուն սիրած ընկերներն վաղը պիտի լինին իւր քաղաքակիցները, անոնց սէրը պիտի սկսի արդէն յինքեան ազգայնոց ու տոհմին ու երկրին սէրը զօր եւ պարտի ու պիտի կարենայ մշակել դպրոցը, մշակութիւն որում նոյն իսկ ուսմանց առարկայք (պատմութիւն, աշխարհագրութիւն, արուեստ եւ գրականութիւն) եւ ընթերցուածք կը լինին միջոց եւ օժանդակութիւն:

— Վերջապէս պէտք է որ դպրոցը մշակէ ազնուագոյն ու բարձրագոյն յօժարութիւնքն մարդկային սրտին, — քարուոյն, մշմարտին, գեղեցկին սէրերը, եւ կրօնային զգացումն, բարձրագոյն յատկանիշքն մարդոյն, առանց որոց անկատար կը մնայ միշտ զգայնութեան մշակութիւնը: Բարւոյ սիրոյն մշակումն է ինչ որ կը կոչուի խղճի, քարոյական գիտակցութեան, քարոյական զգայնութեան մշակումն:

— Կամքի եւ նկարագրի դաստիարակութիւնը: — Բարոյական դաստիարակութիւնը յայնժամ կատարեալ է, երբ բարի ունակութեանց, համակրական եւ ազնուական զգացմանց վրայ կ'աւելնայ զօրաւոր կամք մը: Կամքը կարեւոր է նոյն իսկ սովորութիւնները կազմելու համար, վասնզի սովորութիւնք, մանաւանդ բարիները, միշտ դիւրին, հեշտ, առանց ձգան կրկնուած գործողութիւններէ չեն ծնիր, այլ տաժանագին գործերէ զօրս կատարելու համար կամաց ուժին պէտք ունի մարդ. — նաեւ սովորութիւնները պահպանելու համար, վասն զի յաճախ կրնան պատահել կենաց մէջ պարագաներ, տագնապալի վիճակներ, կրից յանկարծական յուզումներ որք մեր կեանքի սովորական ընթացքը կը խանգարեն եւ կ'սպառնան վերի վայր շրջել մեր ամենէն աւելի հաստատուած սովորութիւնները, պարագայներ յորս զօրաւոր կամք մի միայն կրնայ զմեզ փրկել եւ ուղիղ ճամբուն մէջ պահպանել, — նաեւ զգացմանց ապահովելու համար իրենց գործունէութեան բովանդակ զօրութիւնը, վասնզի շատ անգամ մարդ կ'զգայ, բայց ըստ իւր զգացման գործել կը վարանի, կը սկարանայ, վասն զի կան զգայնութիւնք շատ փափուկ

բայց ոչ զօրաւոր, կան թոյլ ու դանդաղկոտ բնութիւնք. ահա յայնժամ հզօր կամք մ'իւր ձեռքը կ'երկնցնէ զգացման ու կը կանգնէ եւ կը մղէ զայն: Եւ վերջապէս բարոյականութեան կատարելութիւնը կը կայանայ բարի կամեցողութեան մը մէջ որ միշտ պատրաստ ըլլայ մեր գործունէութիւնը բանականութեան, այն է բարւոյն ու պարտուց ցուցած ուղղութեան մէջ վարելու, եւ որով կը լինիմք մանաւանդ ճշմարտապէս բարոյական, այն է՝ ազատօրէն բարին ընտրող էակներ, ի ձեռին ունող զսանձ առաջնորդութեան մեր կենաց:

— *Նկարագիրն* (caractère) ընդարձակ առմամբ անհաս-
տին տիրող հանգամանաց ու յօժարութեանց ամբողջութիւնն է,
անոր բարոյական գիմագծութիւնը, որով կը զատուի այլ ան-
հասներէ: Անձուկ առմամբ նկարագիրը զօրաւոր, գործելու
մշտապատրաստ, սկզբունքներով առաջնորդուելու համար բաւա-
կան ոյժ ունեցող, միշտ որոշ ուղղութեան մը համեմատ գործող
եւ իւր որոշմանց գործագրութեան մէջ յարատեւող կամքի հա-
մանիչ է. այսպէս կ'ըսուի *նկարագրի տէր մարդ մը* (un homme
de caractère): Բայց որ եւ է առմամբ նկարագիրն անբաժան է
կամքէն ու անոր մշակումէն: Նոյն իսկ առաջին՝ ընդարձակ առ-
մամբ, ոմանց կարծածին պէս, կրաւորական, ճակատագրային բան
մը չէ, վասնզի անհաստին նկարագրին կազմութեան մէջ մեծ է ու
կրնայ մեծ ըլլալ կամքին բաժինը: Ապա կարեւոր է յոյժ նկա-
րագրի դաստիարակութիւնը. այն է որ պիտի կազմէ բուն մարդը,
պիտի աւարտէ կազմել ըարոյակասն անձնաւորութիւնը:

— Այս դաստիարակութիւն երկու գլխաւոր տարերք կը
պարունակէ. մին *իմացականութեան*, ըանականութեան
մասն է, եւ միւսը *կամքին*: Նկարագրի տէր ըլլալու համար
պէտք է ունենալ որոշ ու խորհրդածեալ սկզբունքներ, ունե-
նալ սովորութիւնը խորհրդածելու, անդրադառնալու, բանիւ ու
յետ քննութեան գործելու, եւ յետոյ՝ արիութիւն, ոյժ կամքի՝
որոշելու, ընտրելու եւ գործագրելու համար այն վարմունքն որ
համաձայն է բանականութեան վճռոյն:

Ապա նկարագրի դաստիարակութիւնը կարելի է երկու
բանի ուշադրութիւն եւ ջանք ընելով. մէկ մը վարժեցնելու
միտքը ինքնին խորհելու, ուշադրութեան, խորհրդածութեան,

քննութեան, մտածելու իրաց հետեւութեանց վրայ, անդրադառնալու եւ ազատ համոզումներ կազմելու կեանքի ու բարի եւ օգտաւէտ գործունէութեան սկզբունքներու վրայ. եւ մէկ մ'այլ՝ կրթելու, մարզելու կամքն գործելու, վարժեցնելու աղան ի գործ դնելու իւր անձնիշխան կամեցողութիւնը, իւր ինքնակամ ինքնավար գործունէութիւնն ունենալու, ինքզինքին հնազանդելու, իւր բարոյական անկախութեան խափանարար նեղքին ու արտաքին զրգմանց ընդգիմագործութեան ճիգ ընելու, դժուարութեանց ու վատնգաց դէմ արիանալու:

Դպրոցը կարող է ընել զժին եւ զժիւսն: Ուսուցման բանաւոր եղանակներն մեծապէս պիտի նպաստեն այսմ ի մասին իմացականութեան, արթնցնելով զնա ինքնին խորհելու եւ հասկնալու, կշռելու եւ դատելու. կամաց մարզանքի մասին գալով, նուրբ գեր մ'ունի գաստիարակն դպրոցական կարգապահութեան անհրաժեշտ հնազանդութեան պահանջներն հաշտեցնելու համար կամքի կրթութեան պահանջից հետ: Անշուշտ հնազանդութիւն պիտի պահանջուի, բայց միանգամայն յարգելով տղուն ազատականութիւնն ու միջոց ընձեռելով անոր կիրարկութեան: Օրինաց, կանոնաց հնազանդութիւնը ըստ ինքեան ոչ թէ արգելք մ'է ազատակամ գործունէութեան, այլ ընդհակառակն առիթ մ'անոր մարզման. բայց պէտք է որ տղան գիտութեամբ եւ կամաւ հնազանդի: Ահա՛ այն փափուկ կէտն որու պէտք է ուշադիր ըլլալ: Պէտք է տղան զգայ թէ ոչ եթէ ուսուցչին բռնաւոր կամքին, ուրիշ մը մտահաճութեանց առջեւն է որ կը խոնարհի ի հարկէ, այլ բանականութեան, որ կը հրամայէ հպատակիլ կարգի կանոնի, նախադասել օգտակարը հաճելիին, պարտականութեան կատարումը՝ կրքին գոհացման: Ի հնազանդելն՝ մեծերը միշտ պէտք է որ հասկնան զայդ, առանց թոյլ տալու իրենց որ յոռի փաստաբանութեան մղուին, եւ փոքրերը պէտք է տակաւ վարժեցնել զայս հասկնալու: Կամքին արիութեան գալով, այդ՝ կենաց մէջ մանաւանդ կրնայ զարգանալ հանդէպ այն դժուարութեանց զորս կեանքը կը հանէ կամքին դիմաց, մինչ դպրոցական կեանքն, ընդհանրապէս հանդարտ ու կանոնեալ կեանք մ'է. բայց ոչ նուազ եւ այս վերջինը կ'ընծայէ առիթներ ուր կամքին արիութիւնը կը մարզուի ինչպէս, բաց ի մարմնամար-

զական փորձերու պահանջած արիութենէն, ընդհանրապէս ուսմանց դժուարութիւնք, դասահարցմանց ու մրցմանց ու հրապարակային հարցաքննութեանց փորձք: Ինքնակամ, ինքնախորհուրդ գործելու վարժութիւնն ալ կը զօրացնէ բնականաբար պատասխանատուութեան զգացումը, որ իր կարգին պիտի նպաստէ խորհրդածեալ գործողութեան:

Ի վերջոյ յայտնի է թէ, ըստ որում կամքը կրնայ չարի ալ գործիք ըլլալ (մեծ չարագործներն ալ ըստ իւրեանց կերպի կամք վը կը յայտնեն), խնդիրն բարի կամեցողութիւնը, բարւոյն կամքը մշակելու վրայ է, կամ, որ նոյն է ըսել, «կամքի մշակութիւնը անբաժան է բանականութեան եւ բարոյական գիտակցութեան կամ խղճի մշակութենէն»:

— Պատժոց եւ վարձուց դրութիւն. — Կարգապահական միջոցք (discipline) — Պատիժք եւ վարձատրութիւնք իբրեւ կարեւոր օժանդակ գործածուած են միշտ բարոյական դաստիարակութեան մէջ, եւ արդարեւ չէ կարելի ուրտնալ պատժոց ու վարձուց դրութեան մը հարկաւորութիւնը եւ օգտակար ազդեցութիւնը, թէպէտ էապէս երկրորդական գործիքի մը գերն ունին անշուշտ:

Եղած են որք պահանջած են բառնալ պատիժները կամ վարձատրութիւնքը կամ երկուքն ի միասին: Պատիժները, կ'ըսեն, վախ կ'ազդեն, երկչոտ կ'ընեն. ատելութեան՝ խեղութեան զգացումներ առաջ կը բերեն տղուն սրտին մէջ ընդգէմ ուսուցչին (կամ ծնողին). իսկ վարձատրութեանց համար կ'ըսեն թէ կը հպարտացնեն, սնտախոտութեան զգացում կը ծնցունեն, եւ տղայոց մէջ նախանձու եւ մատանաց ոգին կը սնուցանեն: Սակայն մանկավարժից ամենամեծ մասն այն կարծիքն ունեցած է թէ չէ կարելի կրթողական միջոցներէ դուրս նետել պատիժքն ու վարձքն, եւ թէ առաջնոց երկիւղն եւ վերջնոց յոյսն, որպէս հասուն մարդուն, նոյնպէս եւ տղայոց մէջ կրնան շարժառիթներն ըլլալ պարտուց կատարման ու արդիւնաւոր ճգանց յորդորել: Ու թէպէտ նշանակեալ անպատեհութիւնք անուրանալի են ու խիթալի, այսու հանգերձ ճարտար դաստիարակն կարող է մեղմացնել զանոնք մեծապէս, զգուշութեամբ ու չափով ի գործ դնելով վարձքն ու պատիժք:

Բնական հակագործութեանց դրութիւնը: — Ռուսօ կ'ուզէր արգէն որ Էմիլ իւր յանցանքներուն համար բնութենէն միայն պատժուէր: Բարկութեան վայրկենի մը մէջ Էմիլ խորտակեց իւր սենեկին պատուհանները. լաւ, լաւ հարբուի մը պիտի սովորեցնէ իրեն թէ գիշերուան պաղ օդին դիմաց անպատրաստ քնելն որքան անհաճոյ բան է: Հերպերդ Սքենսեր իր դաստիարակութեան գրքին մէջ կ'ընդունի եւ կը յանձնարարէ այս գրութիւնը, բնական հակագործութեանց դրութիւնը, եւ կը մերժէ շինծու, կամայական պատիժները: Եթէ տղան անխոհեմութեամբ ձեռքը ճրագին երկնցուց կամ գնդասեղներու բարձկին, մասները պիտի այրին կամ խայթուին, ու ալ այդ անխոհեմութիւնը չպիտի գործէ, եւ պիտի հասկնայ ինքնիրեն մօրն արգելքին անհնազանդ գտնուելու ձախող հետեւանքը: Եթէ տակնուվրայ ըրաւ իր սենեակը, թող զայն շտկելու ստիպուի: Դուրս ելնելու, պտոյտի երթալու պահուն միշտ յետամնաց է, ոչ երբեք կազմ. թող տունը քայ որ սովորի: Զմեքին կոտրեց կամ հագուստը պատռեց, ալ նոր զմեքի, նոր հագուստ չպիտի առնուի իրեն, եւ ինք պիտի խորհի ու սովորի իրեն տրուածը խնամով պահել ու գործածել: «Սոս բնական պատիժները, կ'ըսէ, սա առաւելութիւնն ունին որ յանցանքին համեմատական են եւ միանգամայն անխուսափելի, անվրէպ: Բաց աստի, իրեւ բնական հետեւութիւն իրաց, բնաւ ատելութեան ոգի մը չեն ծնուցաներ ծնողքին կամ դաստիարակին դէմ, ընդհակառակն անոնց կանխագոյն արգելմանց կամ զեկուցմանց յարգն ու նոցա հնազանդելու հարկն առաւել զգալի կ'ընեն իրեն իւր իսկ փորձով, եւ այսպէս մանկան ու դաստիարակին մէջ համակրութիւնը կը ծառայէ հզորապէս ուղղութեան, դաստիարակին համակրանաց կորուստը, անոր դժգոհութիւնը կամ պարսաւը լինելով յետոյ միայլ բնական հակագործութիւն տղուն յանցանաց եւ ըստ այնմ կազմելով բնական պատիժ մը, ոչ նուազ զգուշացուցիչ» :

Ար տեսնուի թէ Հ. Սքենսեր բնական հակագործութեանց մէջ կը գնէ տղուն շուրջը եղող անձանց, ղորս նա կը սիրէ, համակրութեան նուազումը, դժգոհութիւնը, պարսաւը, եւ այս ճամբով անուղղակի կ'ընդունի պատիժն ալ՝ գէթ նկատեալ իրեւ ծնողքին կամ ուսուցչին դժգոհութեան արտայայտութիւն: Ա'ըն-

գունի նաեւ որ ծնողք զրկեն մանուկն այս կամ այն վայելքէն որուն յարգը չգիտցաւ, եւ անշուշտ այս ալ, ծնողաց կամքով յառաջ եկած, թէպէտ ուղղակի իւր գործոյն հետ առնչակից, կրնայ յաչս մանկան համարուիլ ծնողքէն հարկադրեալ պատիժ մը: Բայց սա ստոյգ է որ Հ. Սմեռնէր կ'ուզէ որ պատիժը ոչ թէ մեծերուն բռնութեան մէկ արդիւնքը սեպուի, այլ բնական հետեւանքն իսկ գործոյն, որ խորհիլ ապա տղուն թէ գործերն չեն անտարբեր, կը զանազանին իրենց լաւ կամ յոռի արդեամբք եւ հետեւապէս մարդ պարտաւոր է խորհելով գործել, հետեւութեանց վրայ մտածելով, մանաւանդ թէ իրմէ մեծերուն փորձառուներուն ազդարարութեանց անսալ, եւ խորհրդածելով գործելու վարժուիլ հարկաւ սկիզբն ու պայմանն է բարոյացման: Սկզբունքը ճիշդ է եւ պատիժին արդիւնւորութեան կարեւոր մէկ պայմանը. բայց կանոնով հաստատեալ ու նախատեսեալ պատիժ մ'ալ չի՞ կրնար նկատուիլ տղայէն իբրեւ տհաճելի հետեւութիւն մը՞ զոր իւր իսկ գործով կը հրաւիրէ իր վրայ: Հ. Սմեռնէր պիտի առարկէր թէ այդ կամայապէս հաստատեալ պատժոյն ու յանցաւոր վարմունքին մէջ պատճառի եւ արդեանց բնական կապ մը չի տեսներ տղան, այլ կամայական, քմածին բան մը. սակայն չի՞ կրնար ըսուիլ թէ տղան ծնողքին կամ դաստիարակին դժգոհութիւնն ալ անիրաւ, անտեղի համարի, անոնց բնաւորութեանց կամ քմահաճոյքին արդիւնք. իսկ եթէ որ եւ է կերպով անոնց հակակրութեան արժանանալ ցաւ մ'է իրեն յորմէ պիտի խուսափի, պատիժն կրնայ արդարանալ իբրեւ աւելի ազդեցիկ ցաւ մը, հետեւանք դաստիարակողին տհաճութեան: Յետոյ, անշուշտ ճիշդ չէ ըսել թէ բնութիւնը յանցանքին կը համակշռէ պատիժը: Փոքրիկ անխոհեմութիւն մը կրնայ ծանր հետեւանքներ առաջ բերել. եթէ Էմիլի կոտորած ապակիները իսկոյն չվերանորոգուին անոր ծնողքէն, Էմիլ գիշերը հարբուխի տեղ կրնայ թոքատապ մ'ունենալ ու մեռնիլ: — Շատ անգամ, բնութիւնը յամր է պատժելու եւ կազմուածքին շնորհիւ կրնայ այս ոք գէթ ժամանակ մը ազատ մնալ պատժէ որ իսկոյն կը զարնէ մի ուրիշն, եւ այդ ազատութեան միջոցին յոռի սովորութիւնք կրնան ժամանակ ունենալ հաստատուելու: — Բաց աստի, վարժեցնել տղան վարմունքին յոռութիւնը միայն հետեւանքին առաւել կամ նուազ

ցաւառիթ ըլլալէն չափել եւ զգուշանալ անկէ տհաճոյ հետեւանացն համար միայն, սովորեցնել է տղուն շահուն չափով չափել՝ հաշուել ամէն ինչ եւ չզգուշանալ յոռի գործէն՝ երբ անմիջական կամ մերձաւոր թէ հեռաւոր ո՞ր եւ է փեսա մը անձին շնախատեսէ: Եւ վերջապէս Էր տղան թողուլ մի միայն իր անձնական փորձառութեան, եւ այդ փորձառութիւնը գործածելով հանգերձ՝ օգուտ չհանել անոր մարդկութեան փորձառութենէն, որպէս իմացական դաստիարակութեան՝ նոյն եւ բարոյականին մասին, եւ պատուէրներով ու կանխարգել նախազգոյշ միջոցներով ու բարի սովորութեանց հաստատմամբ յաճախ տխուր փորձառութիւն մը չկանխել: — Բնական հակագործութեանց գրութիւնը՝ ունենալով հանդերձ իւր լաւ ու մտածելու արժանի կողմը՝ չի կրնար ընդունուիլ իբրեւ բացարձակ ու կատարելապէս բաւական գրութիւն մը բարոյական կրթութեան:

— ԅանդիմանութիւնք եւ պատիժք: — Ուրեմն ուղղակի միջոցներով եւս պէտք է գործել, յանդիմանութեամբք եւ պատժովք: ԅանդիմանութիւնք կ'ենթադրեն ընութիւններ յորս պատուոյ զգացումն, ուսուցչին սէրն ու անոր անհաճոյ ըլլալու երկիւղը զարգացած են արդէն, այլ անբաւական կը մնան այն տղայոց համար որք չունին խորին եւ անկեղծ յարգանք մը դաստիարակին խօսքերուն համար եւ չեն զգայուն ամօթի: Սոցա համար պէտք է դիմել եւ պատիժներու:

ԅանդիմանութիւնք պէտք է լինին մեղմ, համոզկեր, զգածեալ: — Պատիժք, որպէս ղի լինին արդար եւ արդիւնաւոր, պէտք է որ լինին համաձայն սա կանոնաց. 1. Համեմատեալ ըլլան ո՛չ միայն յանցանքին ծանրութեան, այլ եւ աշակերտին զգայնութեան աստիճանին. 2. Սովորական դարձած եւ յաճախ կրկնուելով իրենց ազդեցութիւնը կորսնցուցած չըլլան. 3. Ինամով աստիճանաւորին. պէտք է թեթեւագոյններէն սկսիլ եւ ծայրագոյն խստութեանց հարկաւորութեան պարագային մէջ միայն երթալ: — Մարմնական պատիժները պէտք է բոլորովին ի բաց վտարել դպրոցէն: Ծեծը գազանական եղանակ մ'է յուղղութիւն բերելու. դաստիարակին դէմ գրգռում յառաջ բերելու եւ խուլ ատելութեան ոգի ներշնչելու յարմարագոյն միջոցն է. նա չարաչար կ'ստորնացնէ տղան իբրեւ անասնոյ վարուելով իրեն հետ, եւ

վերջապէս, վասն զի մանաւանդ բարկութեան ատենն է որ ուսուցիչը կը զարնէ, ողբալի ու անդարմանելի հետեւութիւնք իսկ կրնան յառաջանալ. ամէն պարագայի մէջ, բարոյական էակն ուղղելու միջոցը չէ բնաւ: Այս մասին բողոքովին համակարծիք եմք գաղղական մանկավարժութեան սկզբանց, եւ կը զարմանամք որ յԱնգղիա եւ ի Պերմանիա լուրջ մտքեր կը փոստաբանն գաւազանին ու հարուածոց փրկաւէտ ազգեցութիւնը, եւ պաշտօնական շքաբերականներ կը սահմանեն հարուածոց թիւն ու բնութիւնը: Այդպիսի կրթողական եղանակ մ'արդէն Ղը կը համարէր ամենէն յոռեգոյնը, ամէն տեսակէտներով ամենէն վնասակարը:

Գովեստը եւ վարձատրութիւնը: — Գովեստք եւ վարձք կը զարթուցանեն նախանձաւորութեան ոգին, խրախոյս ու գրգիռ կու տան արդիւնաւոր ճգանց. այլ պէտք է որ ի գործ դրուին իմաստութեամբ եւ չափով: Գովեստը միայն արդիւնքին չպիտի ուղղուի, այլ նաեւ ճգան, բարի կամեցողութեան, եւ առանց անթերի ըլլալու՝ արդէն բարւոքում ու լաւին ու լաւագունին եռանդը ցոյց տուող տղայք ու վարք եւ աշխատութիւնք եւս պէտք է որ գովեստի ու քաջալերանաց արժանանան: Վարձատրութեանց նպատակն է պարտուց գաղափարը հաճոյքի գաղափարի մը կցելով յորդորել ի ջան, ի բարւոքում. այլ պէտք չէ ընել այնպէս որ տղայք բերուին վարձատրութիւնը (լաւ նիշը, աստիճանը, մրցանակը) նկատել իբրեւ նպատակ, այլ միշտ իբրեւ նշան իրենց իրական լաւութեան եւ ուսուցչին գոհունակութեան, ողբ պարտին նկատուիլ բուն կէտ նպատակի աշակերտին ջանքերուն ու փափաքին:

Վերջապէս, պէտք չէ բնաւ մտքէ հեռացնել սա կէտը, թէ՛ պատժոց եւ թէ՛ վալձուց գործադրութեան մէջ, թէ կրթողական միջոցաց կամ կարգապահութեան նպատակը միայն դպրոցի եւ դասարանի մէջ կարգն ու կանոնաւոր ու լուռ աշխատութիւնը պահպանել չէ, այլ պատրաստել տղայքն մարդ ըլլալու եւ զինքեանս կառավարելու:

(Մասիս, Մանկավարժական Հանդէս, Նոր շրջան, Թիւ 1—2, 1894.)

10. ԳՆԱՏԻՍՏՐԱԿ-ՈՒՍՈՒՅԻՉ

Ըմբռնում մը, ամենակարեւոր մեր նախակրթարանաց բարեկարգութեան ու արդիւնաւորման գործին, որ սակայն ցարդ ընդհանրապէս կը պակտի մեր մէջ, է դաստիարակ-ուսուցչի ըմբռնումը:

Դաստիարակ-ուսուցիչը գեռ գրեթէ գոյութիւն չունի մեր մէջ: Կազմական Կանոնագիրն, համաձայն բոլոր քաղաքակիրթ ժողովրդոց ընթացքին, քանի մը տարիէ ի վեր արդէն սահմանած է անոր պաշտօնն ու պահանջած է զայն, եւ սակայն ուր է այն: Գնա՛ բոլոր եւրոպական նախակրթարաններն, ու կը տեսնես որ անոնց իւրաքանչիւր դասարանն յանձնուած է մէկ դաստիարակ-ուսուցչի կամ վարժուհւոյ խնամոց, որ անոր մէջ եղող մանուկներուն դաստիարակութեան եւ կրթութեան պատասխանատու միակ պաշտօնեայն է:

Դասարանին դրան վըայ արձանագրուած է անոր անունը. անի անոր դասարանն է. ինքն է մանուկներու այդ խմբին կրթիչը, վարիչն, ուսուցիչը, դաստիարակիչը:

Ան կ'աւանգէ այդ դասարանի ուսմանց ծրագրին ըողոր առարկաները եւ կ'առաջնորդէ ըողոր պարապմանց, — մայրենի եւ երբեմն օտար լեզու մ'ալ, գիր եւ գծագրութիւն, կրօնական՝ բարոյական եւ բնական գիտելիք, թուաբանութիւն եւ երկրաչափութիւն, պատմութիւն եւ աշխարհագրութիւն, ձեռական աշխատութիւն, երգ եւ մարմնամարզ: Դուն ուրեք կը տեսնուի մասնաւոր յարմարութիւն կամ վարժութիւն պահանջող ճիւղի մը համար առանձին այցելու օւսուցիչ, ինչպէս ձեռական աշխատութեանց համար:¹

Ան կը դաստիարակէ մանուկներու այդ խումբը, անոնց իւրաքանչիւրին բնոյթն ու հանգամանքները կը ճանչնայ, ու կը համեմատէ անոնց իր վարմունքն ու կրթական միջոցները, ուսման հետ կը ջանայ անոնց մօքին կարողութիւնները եւ սրտին զգացումները մշակել զարգացնել, լաւ սովորութիւններ կազմել անոնց

¹ Նոյնպէս իր մէջ մէկէ աւելի բաժանում ունեցող դասարանի մ'ուսուցիչը կրնայ օգնական մ'ուսնեալ մայսւն եւ իր առաջնորդութեան տակ:

մէջ, անդուլ հսկելով անոնց շարժմանց եւ արարքներուն վրայ, եւ ինքզինքն ալ յարաժամ անոնց առջեւ գնելով իրեւ բարի օրինակ:

Ան շարունակ նաեւ անձամբ յարարերութեան մէջ է իր աշակերտաց ծնողաց հետ, համերաշխաբար անոնց հետ յառաջ վարելու համար ապագայ մարդոյն ու քաղաքացւոյն պատրաստութեան փափուկ գործը:

Ահաւասիկ նախակրթութիւնը Եւրոպայի մէջ:

Ուր որ դաստիարակ չկայ, չկայ նաեւ դաստիարակութիւն, եւ մենք չունինք դաստիարակ:

Գնահ մտիր մեր նախակրթարանաց ամենամեծ մասին մէջ, չըսեմ բոլորին, — վասն զի մէկ-երկու տեղ այս վերջին տարիներս սկսած են ունենալ դաստիարակ-ուսուցիչներ. ի՞նչ կը տեսնենք այդ ամենամեծ մասին մէջ. — հնօրեայ կառավարիչը, իր աւանդական փայտը կամ քանակը ձեռքը, որ “լուութիւն” պռալու եւ ծեծ սպառնալու պաշտօնն ունի, եւ յետոյ ուսուցիչներ, մասնագէտ ուսուցիչներ, հայկաբանութեան, տաճկաբանութեան, գաղիաբանութեան, թուաբանութեան, կրօնագիտութեան, գեղագրութեան եւն եւն, որք այցելութեամբ կու գան դպրոց շաբաթը 3, 2 կամ 1 անգամ, ու երկու-երեք ժամու դասէ յետոյ կը մեկնին:

Ար զարմանամ. ի՞նչ կրթութիւն է ատ, ի՞նչ նախակրթութիւն:

Նախ եւ առաջ ուր է դաստիարակութիւնը. ո՞ր պաշտօնեայն պատասխանատուն է ադոր: Կառավարիչը. — բայց եթէ կարող մէկն է դա այդպիսի պաշտօնի, ինչու չուսուցաներ: Կարելի է ուսուցանել զատել կրթելէն, դաստիարակելէն: Ուսման նիւթերն են զորս ընդհանրապէս դաստիարակը պիտի գործածէ նաեւ մանուկին բարոյական կրթութեան եւ իմացական կարողութեանց զարգացման: Գարձեալ կ'ըսեմ, նախակրթութեան մէջ կարելի չէ զատել ուսուցանողն ու դաստիարակը:

Ու ի՞նչ բան ունին այդ մասնագէտները նախակրթարանաց մէջ: Նախակրթարանը գոլէճ կամ համալսարան չէ, հոն մասնագէտ ուսուցիչներու (maître spécial) պէտք չկայ բնաւ, եթէ մասնագէտ ուսուցիչ ըսելով պէտք է հասկնալ ու եւ է ճիւղի մը

խորունկ հմտութիւնն ունեցող ու զայն խորապէս ուսուցանող
դասաւանդ :

Մեր նախակրթարանաց ուսանողք պիտի սովորին ուսմանց եւ
գիտութեանց նախատարերքն ու չեն կարօտիր բնաւ մասնագէտ-
ներու, ընթացիւցողներու : Իրենց կը բաւեն խոնարհ ուսուցիչներ
որ հմտութիւն ունենան ուսմանց եւ գիտութեանց տարրերուն
եւ կարող ըլլան պայծառ ու հեշտ կերպով զանոնք աւանդելու .
միեւնոյն ասան տղոց բարքերն ուղղելով, անոնց խորհելու, զգա-
լու եւ գործելու եղանակները բարուղիելով, կենաց պիտանի մի
քանի առողջ սկզբունքներ քանդակելով անոնց հոգւոյն մէջ, եւ
հսկելով մարմինին ալ առողջ եւ առոյգ զարգանալուն :

Թո՛ղ որ, խօսքը մէջերնիս, այդ մասնագէտ-ուսուցիչ
անունն ալ մեր մէջ քիչ մ'աժան կը ծախուի : Յաւով կը տես-
նեմ յաճախ որ մասնագէտն այդպէս կը կոչուի, ո՛չ վասն զի
իւր յատուկ ճիւղը կը ճանչէ խոր հմտութեամբ, այլ վասն զի
միայն զայն գիտէ քիչ թէ շատ հմտութեամբ, անոր մասնագէտն
է, վասն զի զայն միայն կը ճանչէ մասամբ :

Յայտնի է թէ ճշմարիտ մասնագէտն ոչ միայն յատուկ ճիւղ
մը մշակած կ'ըլլայ մասնաւոր ինքնամբով, այլ յառաջ քան զայն ստա-
ցած կ'ըլլայ ընդհանուր գոհացուցիչ կրթութիւն մը իբրեւ հիմ :

Ամէն պարագայի մէջ, մասնագէտ-ուսուցիչները, որք այցե-
լութեամբ մի քանի ժամերու համար կ'երթեւեկեն մեր նախա-
կրթարանները, գոյութեան իրաւունք չունին անոնց մէջ : Այդ
դրութիւնն ժխտումն է մանկավարժական ճշմարիտ դրութեան :
Այդ պայմանաւ, իբր թէ ուսմանց սա կամ նա ճիւղերը դասա-
խօսելու համար երթեւեկող ուսուցիչք, անտարբեր են բուն
գաստիարակութեան գործին, վասն զի իրենք ճիւղի մը պատաս-
խանատուներն են միայն զոր լոկ ուսումնական տեսակէտէ ըմբռնած
են : Սովոր են ուրիշին վրայ նետել գաստիարակութեան տեսա-
կէտն, այդ գործ ուսէ ուս պիտի իյնայ կառավարչին ուսին վրայ,
կտրի սկար ու անյարմար զայն բառնալու : Եւ այդ զանազան
բարքով ու բնոյթով մասնագէտ կոչուած ուսուցիչներն, որք
գաստիարակի պաշտօնը չեն ճանչեր իրենց ու չեն ալ սովորած
զայն, ի՞նչ խառնակ ազգեցութիւն մը յառաջ կը բերեն մանու-
կին վրայ, որ, ապշած, կը գիտէ այդ զանազանութիւնը դէմքերու,

խառնուածներու, կարծիքներու, զգացումներու, յաճախ իրար հակասող ու քանդող, ու, շուարած, չգիտէ ինչ ուղղութիւն բռնել: Ցարքեր ու հակառակ իսկ ազգեցութիւնք զիրար կը տկարացնեն ու կը ջնջեն. բարոյական սպաւորութեանց միութիւնն, որ այնքան կարեւոր է դաստիարակութեան մէջ, չի կրնար գոյանալ, եւ ուսումնական ծանօթութիւնք իսկ, տարբեր բերաններէ աւանդուած, չեն կարող մանկային մաքին հասկացողութեան այնքան պիտանի կեդրոնացումը կազմել: Այդպիսի մասնագէտ-ուսուցիչներու մէջ կան որ, գաստիարակ չըլլալու եւ իբր թէ լոկ մաքին հետ յարաբերութիւն ունեցող գործ մ'ունենալու պատրուակին տակ, չեն քաշուիր գինեառուներ յաճախելէ, ու գինով գասարան մանեղէ, աշակերտաց ներկայութեան ծխելէ ու երբեմն աղտոտ բառեր իսկ տրտասանելէ:

Եղաւ որ — ու կը ցաւիմ ըսել դասատուներու մէջէ — միակ դաստիարակ-ուսուցչի գրութիւնը փնասակար հրատարակեցին իբրեւ ձանձրացուցիչ, իբր թէ տղան պիտի ձանձրանար ամէն օր ու ժամ տեսնելով միեւնոյն մարդուն դէմքը: Այնպիսի զանազանութիւնն է օգտակար, թէ այն բարոյական ու իմացական ուղղութեանց միութիւնն որ միեւնոյն դաստիարակին յարատեւ ներգործութենէն կրնայ գալ, բարոյական հայր ու վարդապետ իր սանիկներուն, ինամոտ անձնուէր հովիւ այդ փոքրիկ հօտին: Ի՞նչ խենդ է եղեր Ռուսօ որ իր Էմիլին մէկ դաստիարակ կուտայ, այն ալ երբ կը խորհի թէ հայրը, որ ամենէն բնական դաստիարակն է, կրնայ անյարմարութիւններ ունենալ այդ պաշտօնն առանձին լիովին կատարելու: Ի՞նչ խենդ են Գերմանացիք, Զուիցերացիք, Գաղիացիք, Անգղիացիք, ամէն Եւրոպական ազգերն ու Ամերիկացիք որ իրենց նախակրթարանաց մէն մի բաժանումներուն մէկ մէկ դաստիարակ [Lehrer, régent, instituteur, teacher] կը յատկացնեն, իւրաքանչիւրին յանձնելով իրեն յատուկ դասարանին ամբողջական հոգն ու պատասխանատուութիւնն: Արդեօք պէտք է ըսել նաեւ թէ մեր տղայք իրենց հօրմէն ու մօրմէն ալ կը ձանձրանան, քանի որ ամէն օր միեւնոյն դէմքերը կը տեսնեն անոնց վրայ:

Ամէն օր աչուրնուս առջեւն է սա մեր երթեւեկ մասնագէտ-ուսուցիչներու տասնեակներովը կառավարուած նախակրթարանաց

ցաւալի կացութիւնն: Թաղ կայ որ անկարող կը գտնէ ինքզինք ամսական 100 ռակիով իր դպրոցները վարելու. ու այսքան ծախքին հետ արդիւնք — ոչինչ: Քառասային վիճակէ մը ինչ կանոնաւորութիւն ու արդիւնաւորութիւն կրնան սպասուիլ:

Երբ արդիւնք կ'ըսենք, կ'աղաչեմ, չհասկնանք քանի մը բառ հայերէն կամ գողիերէն գիտնալը, թուաբանութեան խնդիր մը քիչ շատ լուծելը, նոյն իսկ մէկ երկու գիտական ծանօթութիւններ գոց ըրած ըլլալը: Ո՛չ. նախակրթութիւնը նա՛ մանաւանդ սղում միայրը ու սիրարը ու կամքը պիտի կաղմէ, այնպէս որ միայրը անոր բոլոր կեանքին մէջ սուր ու փայլուն գործիք մ'ըլլայ խորհելու եւ ուսանելու, սիրարը լաւին կիրքը ունենայ, ու կամքը բարի ու զօրաւոր ոյժ մ'ըլլայ իրեն կեանքին դժուարութեանց մէջ: Արդ, ասոր դաստիարակութիւն կ'ըսեն, ու տեսանք որ մէք դաստիարակութիւն չունինք, չունենալով անոր պաշտօնայինները: Եւ ահա՛ մեր նախակրթարաններէն անցնող պատանիներուն մեծ մասին վրայ կը տեսնենք այս պակասութեան ցաւալի արդիւնքները: Իմացական աշխոյժ, ողջագատ միտք, ուղղաբարոյութիւն եւ ճշմարտասիրութիւն, ընկերսիրութիւն, կարգի կանոնի փափաք եւ հնազանդութիւն, մեծին ու արժանաւորին յարգանք, նախաձեռնութեան ու յարատեւութեան ոգի եւ զօրեղ նկարագիր՝ յատկութիւններ են, քաղաքակիրթ կեանքի ու ճշմարիտ յաւատարմութեան անհրաժեշտ, որոցմով չենք կրնար դժբախտաբար ըսել թէ կը փայլի մեր նոր սերունդը: Զարմանալին աս է որ մտքերնէս ալ չ'անցնիր թէ այս յատկութիւններ կրնան ու պարտին ստացուիլ դպրոցի մէջ. մէք կը կարծենք թէ հոն ուսմունք միայն կը սովորուի, ու զայդ միայն կը պահանջենք. բաց աստի մեր հպարտութեան ալ կը դպչի որ մեր տղայք ամէն այդ իմացական ու բարոյական բարեմասնութիւնները արդէն չունենան իրենց մէջ ընդամոցս, մեր արեան հետ ի ծնանելն իրենց փոխանցուած: 2^է մի որ միշտ պահանջած ենք որ մեր տղայք գո՛հ ըլլան մանաւանդ դպրոցէն եւ ուսուցիչներէն քան սոքա անոնցմէ: — «Տղաս, գո՛հ ես վարժարանէդ, վարժապետէդ.՝ դուն ուրեք վարժապետին գոհունակութիւնը կը փնտռուի, ու ան ալ գրեթէ միշտ գովեստի ու շողոքորթութեան ակնկալութեամբ: Գալով նոյն իսկ ուսումնական պաշարին, զոր մեր տղայք կը տա-

նին դպրոցէն, գիտներ թէ որքան թերի, անկապակից ու տարտամ է այն: Արդէն կրթական նշնօրինակ պայմաններու մէջ կարելի չէր որ այն ալ լաւագոյն ըլլար:

Ընդհանուր այսպիսի արդիւնք պարզապէս ժխտական կը կոչուին:

Ուսուցիչք ոմանք թերեւս իրենց պատճառներն ունենան տարփողելու հին դրութիւնը, բայց Թաղ. Խորհուրդք եւ Հոգաբարձութիւնք ի՞նչ պատճառ ունին նոյնին մէջ յամառեալ մնալու չեմ հասկնար: Ազգային Օրէնքն իրենց կը պատուիրէ ընդգրկել նոր, մանկավարժական ու բանաւոր դրութիւնը. լուսաւորեալ ազգաց օրինակը նոյնը կը թելադրէ մեզ, մինչեւ իսկ խնայութիւնը նոյն խրատը կու տայ մեզ, եւ մեք կը յամառինք փարած մնալու հինին որ ամլեց ցարդ մեր դպրոցներն, ընդունայն փճացուց մեր ճիգերն ու դրամները:

Չէ, եղբարք, խնայե՛ք Ազգին ու անոր զաւկներուն: Բանաւոր կրթութեան ճամբուն մէջ մտնե՛ք. օգուտ քաղե՛ք ուրիշներուն փորձառութենէն. օգուտ քաղե՛ք մանկավարժական գիտութեան տուած դասերէն:

Կազմե՛ք մեր ամէն նախակրթարանաց մէջ դաստիարակուսուցիչով դասարաններ:

Ընտրե՛ք մեր ունեցած ուսուցիչներուն մէջէն լաւագոյններն ու քիչ շատ բազմակողմանի հմտութիւն ու մանկավարժական ոգի եւ ընդունակութիւն ունեցողներն, եւ անոնց յանձնե՛ք մեր դասարանները: Ուսու՛մն. Խորհուրդը այդպիսեաց ցանկերը կարող է հաղորդել Թաղերուն: Կը ճանչնամ ուսուցիչեր որք ընտիր դաստիարակ-ուսուցիչներ կարող են ըլլալ, ստանձնելով դասարանի մ'ամբողջական կրթութեան խնամքն, եւ որք այսօր, իբրեւ այցելու դասատու, ասդին անգին ճիւղ մը կամ երկու դասախօսելու վազելով՝ անօգուտ կը գառնան գրեթէ ազգային կրթութեան գործին: Եթէ պահանջուած թուով դաստիարակները չունինք այսօր, համեմատաբար լաւերը առնենք, ու վստահ ըլլա՛նք որ անոնք քիչ ատենէն լաւագոյն պիտի ըլլան ու նոր լաւեր պիտի հասնին:

Թող մեր բարեացակամ ուսուցիչք, որոց մէջ շատ երիտասարդներ կան, յանուն ազգային կրթութեան ճշմարիտ շահուն, ի բաց թողուն յաւակնութիւն եւ անձնական ո եւ է նկատում, ու

նոր վիճակին պահանջումները գոհացնող դաստիարակ-ուսուցիչներ դառնալ աշխատին. վստահ եմ թէ շուտով կը յաջողին ընդհանրապէս: Առ այդ կը բաւեն բարոյական յատկութիւններ, մտկավարժական կոչում ու դաստիարակութեան արուեստին էական սկզբանց ծանօթութիւն, եւ ընդլայնում մ'իրենց արդի հմուտութեանց շրջանակին: Երբ կոչումն ու բարոյական յատկութիւնները կան, մնացեալը չեմ կարծեր թէ դժուարին ըլլայ ձեռք բերել: Քիչ շատ հանրագիտակ հմուտութիւն մը կը պահանջուի անշուշտ դաստիարակ-ուսուցչէն, բայց միւս կողմանէ՝ ոչ մէկ ձիւլի համար մասնագէտ ըլլալ պարտաւոր է, եւ արդէն ինչպէս որ եւ է ուսուցիչ, ինքզինք յարգող ու այդ անուան յաւակնութիւնն ունեցող ո եւ է ուսուցիչ, կ'ըսեմ, չգիտնայ, գէթ իրենց էական տարերց մէջ, բոլոր կամ գոնէ մեծ մասամբ այն տուարկայներն, որք նախակրթարանաց ուսմանց ծրագիրը կը կաղմեն, եւ որոց ծանօթութիւնը պարտաւորիչ եւ անհրաժեշտ ըրած ենք 13 տարեկան սղոց համար: Ինչու չգիտնայ դանոնք 7 էն 13 տարեկան սղոց ուսուցանելու չափով:

Հոգ չէ թէ փոխանցական ժամանակի մը մէջ ինչ ինչ ի հարկէ շեղումներ եւ անբաւականութիւններ ըլլան: Բաւ է թէ իտեալին հասնելու, դէպ յայն քալելու հաստատ որոշումն ունենանք, ու կարելի բարւոքումներն այս օրէն սկսինք ի գործ դնել:

Ու ջանանք որ վարժապետանոցն ալ գայ պատրաստել մեծագոյն բարւոքումները:

(*Բիւզանդիոն, 1898, Թիւ 609, 610:*)

11. ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԱԿ ԻՍՏԱՆԻՆԵՐԻ ԳՍՏՐՈՍՏՈՒԹԻՒՆԸ

Մեր նախակրթարանաց այժմու ուսուցիչք գիտնաբար պատրաստուած չեն իրենց պաշտօնին. այս յայտնի է, եւ այդ է անշուշտ մեր տոհմային կրթութեան մեծագոյն պակասը: Վարժապետանոց չունիմք, ոչ իսկ աստ եւ անդ մանկավարժական գասընթացքներ: Երբեմն, գաւառի մը մէջ¹, «վարժապետանոց» անուանով դպրոց մը գոյութիւն ունեցաւ, եւ Մայրաքաղաքիս մէջ ալ

¹ Վան.

ունիմք աղջկանց վարժարան¹ մը որոյ Տիմնարկութեան յայտնի նպատակն է վարժուհիներ պատրաստել. բայց ուր որ վարժապետացու աշակերտաց մի միայն ուսմունք կ'աւանդուին ինչպէս ամէն այլ վարժարանաց մէջ՝ հոն չէ՛ կարելի անշուշտ վարժապետանոց մը տեսնել. այս հաշուով ամէն դպրոց ալ կրնար նոյն տիպոզսին յաւակնիլ: Վարժապետանոց մը, բաց ի այն ուսումներէն որք ապագայ վարժապետին մատուցող պաշարը ճոխացնելու կը ծառայեն, պարտի նաեւ, եւ իբրեւ իր յատուկ պարտականութիւնը, աւանդել ուսուցանելու, դաստիարակելու արուեստը: Հոգեբանութիւն, բարոյագիտութիւն, դաստիարակութեան գիտութիւն, մեթոտաբանութիւն, դպրոցական վարչագիտութիւն էական տարրերը պարտին լինել մի այդպիսի հաստատութեան ծրագրի:

Այս պակասը լեցնելու համար մեր մէջ ոմանք լրագիրներու միջոցաւ կարծիք կը յայտնեն թէ հարկ է դրամ գտնել ու եւրոպական մանկավարժանոցները յղել այն պատանիներն ու պատանուհիները որք կը յօժարին դաստիարակ-ուսուցչի կամ-ուսուցչուհւոյ պաշտօն ստանձնել մեր նախակրթարանաց մէջ: Առ այս այդօրինակ մանկավարժանոցներու ծրագիրն եւ ընդունելութեան պայմաններն ալ կը հրատարակեն, որպէս վերջերս տեսնուեցաւ Նանսիի վարժապետանոցին ծրագիրը:

Այս միջոցը կը բաւէ՞ կամ այն է որ պիտի ծառայէ լրացնելու մեր մէջ այն մեծ պակասը որոյ վրայ կը խօսինք:

Կարծեմք թէ ոչ: Նախ եւ յառաջ մեր նախակրթարանաց համար հարիւրաւոր ուսուցչաց եւ հարիւրաւոր ուսուցչուհեաց պէտք ունիմք. ի՞նչպէս կարելի է զանոնք ամէնքն ալ պատրաստել Եւրոպիոյ մէջ: Յետոյ, ինչ որ աւելին է, օտար մանկավարժանոցներու մէջ, որ կազմուած են օտարազգի մանուկներու դաստիարակ պատրաստելու համար, կարելի՞ է միթէ որ մեր մանկութեան ապագայ դաստիարակներն ստանան լիովին այն կրթութիւնը որով կարող ըլլան յետոյ օգտակար դառնալ մեր նախակրթարանաց մէջ: Հոն պիտի վարժին տարբեր լեզուով, տարբեր երկրի պէտքերուն տեսակէտով, տարբեր ազգի մանուկներու վրայ իրենց փորձերը կատարելով: Գիտեմք որ դաստիարակութիւնը թէ եւ

¹ Դպրոցատէր Տիկնանց վարժարանը:

ընդհանուր՝ մարդկային հիմեր ունի, բայց նաեւ կը զանազանի ու պարտի զանազանիլ իւրաքանչեւը ազգի ու երկրի տեսակէտով: Վերացեալ մանուկը չէ՛ որ պիտի պատրաստուի վերացեալ մարդ մը, այլ այս ինչ ազգին ու երկրին վերաբերող մանուկը՝ ապրելու նոյն ազգին ու երկրին գիւղը, այդ ընկերային ու աշխարհագրական միջավայրին մէջ: Հետեւապէս առաջին վայրկենէն այդ ընդհանուր ու մասնաւոր, մարդկային ու տոհմային տեսակէտներն յիրար պիտի ձուլուին առաջնորդելու համար սանին զարգացման. հետեւապէս եւ ապագայ դաստիարակն իր պաշտօնին պիտի պատրաստուի ուսումնասիրելով զայն այդ կրկին միաձոյլ ուղղութեամբ:

Չեմք ըսեր անշուշտ թէ ո՞ր եւ է ապագայ դաստիարակի համար գլխովին անօգուտ կը մնան օտար վարժապետանոցի մը մէջ անցուցուած երկու երեք տարիները. բայց դեռ իրեն ի դարձին շատ բան պիտի մնայ սովորելու մեր տղան, մեր լեզուին, մեր ընկերութեան, մեր դպրոցական գործոց ու բարուց, մեր բնական երկրին նկատմամբ: Սովորածներէն շատ բան ալ փոխելու, բարեփոխելու պիտի ստիպուի, եթէ երբեք բաւական ուշիմութիւն ու ճկունութիւն ունենայ ինքնին խելամտելու համար մշակելի դաշտին առանձին հանգամանաց ու անոնց համակերպելու: Օտարազգի մանկավարժանոց մը մանելու համար կը պահանջուի մտից քննութիւն մ'օտար լեզուով, եւ այդ ի հարկէ հայ ուսանող-վարժապետացուն համար կ'ենթադրէ արդէն բաւական զարգացում մը, զոր, կրնանք ըսել, մեր մէջ երկրորդական դպրոցէ ելնող մը կրնայ ստացած ըլլալ: Երկրորդական կրթութիւն ստացող մը թերեւս նախնական մանկավարժանոցի մ'ընդհանուր ծրագիրը անբաւական գտնէ իրեն համար եւ աւելի բարձրագոյն կրթութեան ձգտի: Յետոյ, պէտք է երեւակայել որ տարիներով Եւրոպա դեգերողներ բաւական անյաւակնոտ պիտի գտնուին յօժարելու համար յանձն առնուլ դաստիարակ-ուսուցչի պաշտօն մը մեր քաղաքային ու գիւղային տարրական նախակրթարանաց մէջ, առ առաւելն մի քանի հարիւր ղըուշի փոխարէն:

Այս ամէնը կը ցուցնէ որ այս տեսակ խորհուրդներ երազային են: Նախակրթարանաց ուսուցիչք կրթական համեստ պաշտօնեայներ են ու պարտին ըլլալ: Իրենցմէ շատ գիտնալ չի պահանջուիր,

մասնագէտ ուսուցիչներ չեն. միայն իրենց գիտցած քիչը պէտք է որ լաւ գիտնան, միշտ աւելին ուսնելու եւ զարգանալու փափաքն ունենալով, եւ նա մանաւանդ իրենց գիտցածը լաւ սովորեցնել կարողանան, մանկավարժական սկզբունքներ ունենան, տղուն հոգին ճանչնան, անոր մտքին ու սրտին հասնելու ճամբայներուն տեղեակ ըլլան, սիրեն մանուկն ու իրենց պաշտօնին վեհութիւնն ըմբռնեն: Այս յատկութիւնները, բնական կոչում ենթադրելով հանդերձ, հարկաւ կը պահանջեն առանձին ուսում ու պատրաստութիւն որք սակայն, ինչպէս վերեւ ցուցինք, օտար միջավայրերու մէջ չեն կրնար ձեռք բերուիլ: Ոչ մէկ ազգ տուած է ցարդ իր նախակրթարանաց ուսուցիչները արտասահմանի մէջ պատրաստելու օրինակը. այդ ուսուցիչներէն մինչեւ իսկ օտար լեզուի մը հմտութիւնը չի կրնար պահանջուիլ:

Ի՞նչ պէտք է ընել ուրեմն: — Ահաւասիկ:

Մանկավարժական սկզբունքներ ըստ բաւականին մուտ գտած են մեր մէջ: Մասիսի նման թերթեր զանոնք կը ծաւալեն, անոնց կիրառութիւնը կ'ընեն մեր կրթութեան պէտքերուն, ամէն ուսուցչաց հպելի կ'ընեն զանոնք: Գաստիարակութեան գիտութեան եւ արուեստին վրայ ճառող նշանաւոր երկեր կը թարգմանուին ու կը հրատարակուին աժանագին, մեր գաղափարաց եւ ունակութեանց պահանջած մեկնութիւններովն լուսաբանուած: Առ այժմ գէթ ի Պոլիս կը հաստատուին երկու մանկավարժանոց կամ նախնական վարժապետանոց, մին արական եւ միւսն իգական սեռի համար՝ անոնց ծրագիրն կազմելով մասամբ հետեւողութեամբ եւրոպական նմանօրինակ հաստատութեանց ծրագրաց, այլ նա՛ մանաւանդ պատշաճեցնելով մեր յատուկ պիտոյից, անոնց մէջ դասախօսել կոչելով հիմակուհիմայ մեր ունեցած ուսուցիչներէն ամենէն ձեռնհասները որք հիմ կը դնեն հայ մանկավարժութեան: Այդ դպրոցներէն ելնող լաւագոյններն կամ ուրիշ յարմարագոյններ կը ղրկուին յԵւրոպա, ո՛չ թէ նախնական մանկավարժանոցներ (école normale primaire) մտնելու՝ այլ բարձրագոյնները՝

¹ Նախնական վարժապետանոցը ինչպէս Նանսիից՝ գրեթէ ամէն նահանգի մէջ կը գտնուի, իսկ բարձրագոյն վարժապետանոց Գաղիա միայն երկու հաս ունի, մին ի Ֆոնգընէյ-օ-նօղ եւ միւսն ի Սէն-Գլու, աւաջինը

(*école normale supérieure*) որք նախնականաց ուսուցիչ կը պատրաստեն, որոնք՝ կատարելագործուելով կու գան հետ գհետեւ, մէկ կողմէն Պոլսոյ վարժապետանոցներուն մէջ աւելի ձեռնհասութեամբ դասախօսելու եւ սկսուած գործը զարգացնելու, եւ միւս կողմէն գաւառական մէկ երկու կարեւոր կեդրոններու մէջ նոր վարժապետանոցներ ու մանկավարժական դասընթացքներ (*cours pédagogique*) հիմնելու: Մի եւ նոյն ատեն կեդրոնը, ինչպէս կանոնադրած է ընել, ուսուցչական վկայագիր տալու համար՝ ուսուցանելի առարկայից հմտութենէն զատ մանկավարժական սկզբանց ու եղանակաց ալ կսկսի հմտութիւն պահանջել ընտրելիներէ, աստիճանաբար իր պահանջկոտութիւնը յաւելցնելով, պահանջ մ'որոն կրնան ուսուցչական ընտրելիք կամ արդի ուսուցիչք եւս այժմէն գոհացում տալ սկսիլ, քանի որ քիչ շատ կան ու հետ գհետեւ ալ պիտի աճին միջոցներն հմտանալու դաստիարակութեան տեսչականին: Ահա այս կերպով, կը կարծեմք, կրնայ կարելի ըլլալ աստիճանական բարեշրջումն մեր տոհմային դաստիարակութեան, տակաւ բարձրացումն մեր ուսուցչական մարմնոյն, պատրաստութիւնն կրթական գործոյն նոր ու կարողագոյն մշակաց, եւ կազմակերպումն մի տոհմային մանկավարժական գիտութեան, իր պատմութեան, տեսականին ու գործնականին մէջ:

(Մասիս, Մանկավարժական Հանդէս, նոր շրջան, Թիւ 3, 1894):

12. ՌԻՍՈՒՄԵՆԱԿՈՆ ԽՈՐՀՈՒՐԳԸ

Ժամանակէ մ'ի վեր շատցած են քննադատութիւնները Կեդր. վարչութեան Ուսումն. խորհրդոյն դէմ թէ՛ ուղղակի տեղական ազգ. լրագրաց ոմանց կողմէ եւ թէ՛ գաւառական թղթակցութեանց մէջ: Այս յարձակումները շատ անգամ ոչ միայն արդի Ուս. խորհուրդը դրած են իրենց նպատակ, այլ ո՛ր եւ է Ուս. խորհուրդ, ընդհանուր դատապարտութեան մը մէջ պարուրելով իրարու յաջորդող բոլոր անցեալ ու ներկայ խորհուրդները:

Վարչական մեքենային այդ անիւր սկիզբէն ի վեր անգործ մնացած կը համարին, կամ գրեթէ անգործ, կատարելով թէեւ գաղտնարակ-վարժուհեաց եւ երկրորդ գաղտնարակ-ուսուցչաց վարժապետանոցներու ուսուցիչներ պատրաստելու նպատակաւ հիմնուած:

շարժում մը, այլ օգին մէջ, ընդունայն, առանց ծառայելու իր նպատակին, առանց իրական ներգործութիւն մը յառաջ բերելու ազգային կրթական գործին մէջ: Ու սկիզբէն ի վեր այդ մարմնոյն բոլոր կատարած գործը իբրեւ չեղեալ կը դատեն, ամէն ինչ նորէն սկսելու պէտքը կ'զգան եւ մերթ խորհուրդ կու տան ամէն յոյս վերցնել այդ մարմնոյն վրայէն եւ անձամբ անձին ճարը գտնել, ամէն թաղ ու գաւառ (եւ ինչո՞ւ նաեւ ո՞չ ամէն գիւղ ու թաղ մէն մի գաւառի մէջ) իր ծրագիրն ինք յօրինելով, իր կրթական պէտքերն ինք որոշելով եւ ինք սահմանելով առանձին անոնց գոհացման միջոցները:

Այս դատաստանք ինչ աստիճանի իրաւացի ու բանաւոր են, ահա ինչ որ կուզենք քննել հոս համառօտակի:

Ամենէն յառաջ անշուշտ պէտք է հեռացնել կրթական բացարձակ ապակեդրոնացման մը գաղափարը, որ ամենէն զարգացեալ երկրին մէջ ալ գոյութիւն չունի եւ որ կրթական անշխանութիւն մը պիտի նշանակէր: Զուիցեբիոյ մէջ, մէն մի նահանգ, իբրեւ առանձին անկախ մարմին, ինքն իր մէջ իր կրթական միութիւնն ունի, կեդրոնէն սահմանուած ծրագիրն ու կանոնագիրը եւ արտօնեալ ուսուցիչներ, եւ սակայն, ասով գոհ չըլլալով, ձգտում մը կայ, տակաւ զօրանալու վրայ, կրթական գործին աւելի կեդրոնացում տալու եւ Գաշնակցային ժողովին անոր միջամտելու իրաւունքները շատցնելու: Աւելորդ է ըսել թէ Գաղիոյ, Ռուսիոյ եւ Գերմանիոյ մէջ կրթական կեդրոնացումը շատ մեծ է, եւ նոյնն ըրած է Օսմ. Կառավարութիւնն ալ իսլամ վարժարանաց համար, երկիրը բաժնած ըլլալով կրթական շրջանակներու եւ միօրինակ ծրագրի ու կանոնի ենթարկած: Ամենէն ապակեդրոնացականը այս մասին, Անգղիա ալ, տարիներէ ի վեր սկսած է ժողովրդական վարժարանաց վրայ ո՞ր եւ է կերպով հսկողութիւն մ'ի գործ դնել:

Ո՛ր եւ է կեդրոն, մեծ կամ փոքր շրջանակի, չի կրնար անտարբեր ձեալ իր շուրջը դաստիարակութեան առած ընթացքին, վասն զի այդ ընթացքն իր հակազդեցութիւնն ունի ամբողջին ճակատագրին վրայ, եւ չի կրնար, առանց իր պարտուց թերանալու, բացարձակապէս ինքզինքնուն թողուլ ճիւղերն ու ճիւղակները: Ինչ որ ալ ըլլան այս վերջիններուն մասնաւոր պէտքերը,

սա յայտնի է որ հասարակաց մեծ մաս մը կայ ամենուն կրթութեան պէտքերուն մէջ, նախ որ ամենուն կրթութիւնն ալ մարդկային է, եւ երկրորդ որ, իբրեւ միեւնոյն մասնաւոր ամբողջին պատկանեալ մասունք, դեռ այլ բազում ինչ ունին նոյն եւ հասարակաց: Նոյնութիւն պահանջող մասերը սահմանել ի հարկէ կեդրոնին պարտքն ու իրաւունքը կը լինի, իբրեւ ընդհանուրին ներկայացուցիչ եւ հոգածու մարմին. ճիւղերն ալ իրաւունք կ'ունենան անշուշտ իրենց յատուկ պէտքերը որոշելու եւ իրենց թողուած գործելու ազատութեան շրջանակին մէջ զանոնք գոհացընել ջանալու, ի հարկին կեդրոնին իսկ օգնութեամբ: Ըսենք, սակայն, թէ այս մասնաւոր պէտքերը կարծուածին չափ բազմութիւ չեն, մանաւանդ նախնական կրթութեան մասին որ մարդն ու քաղաքացին շինելու պաշտօնն ունի էապէս:

Ուրեմն անբանաւոր կը լինի քաջալերել ճիւղերը աղիկամբ ընթանալու եւ մտաւոր ու բարոյական համերաշխութեան կապը խզելու իրենց մէջ, մերժելով կեդրոնին իրաւասութիւնը: — Բայց պիտի պատասխանեն մեզ թէ ի՞նչ պէտք է ընել երբ կեդրոնը չկատարէ իւր պարտքը, եւ մեր կեդրոնը չի կատարեր իւր պարտքը: Ահա հոս է որ կը հասնինք մեր գրութեան առարկայ եղող բուն խնդրոյն:

*
*
*

Չենք խօսիր մասնաւորապէս արդի Ուսումն. խորհրդոյ դէմ եղած դիտողութեանց մասին, վասն զի եղած քննադատութիւնք աւելի ընդհանուր հանգամանք մ'ունին, ինչպէս տեսանք, ու կը նկրտին հարուածել որ եւ իցէ Ուս. խորհուրդ որ գոյութիւն ունեցած ըլլայ Պատրիարքարանի Օրինաց հաստատութենէն ի վեր: Ոմանք կը հարուածեն Ուս. խորհուրդները իբրեւ թէ իրենց պակասութեամբ, անհոգութեամբ կամ ապիկարութեամբ, չեն ուզած կամ չեն կրցած օգտակար ըլլալ տոհմային կրթութեան ու բարւոյքել վարժարանաց կացութիւնը, այլք անբուժելի կը գտնեն Ուս. խորհրդոց սոյն տկարութիւնը, որ անոնց կազմութեան մէջն է եւ որ, չծնած իսկ, անոնց գործունէութիւնը ամրութեան կը դատապարտէ:

Ինքնայայտ է որ Ուս. խորհուրդք, իբրեւ կրօնական իշխանութեան մը յարակից պաշտօնէութիւն, կը պակասին այն ուժէն

ու ազդեցութենէն զոր նմանօրինակ պաշտօնով մարմիններ կը վայելին այլուր: Արդ այս պարագայ բացառիկ կացութեան մը մէջ կը դնէ մեր կեդրոնական եւ նոյն իսկ գաւառական Ուս. Խորհուրդները հանդէպ այն վարժարանաց ու անոնց հսկող մարմնոց որք ըստ օրինի ենթարկուած կը համարուին իրենց իրաւասութեան, իրենց որոշումները զրկելով ազդու վաւերացումէ եւ նուազեցնելով իրենց հարկեցուցիչ կարողութիւնը: Այս տկարութիւն արդէն մեր ամէն մարմիններուն ալ է քիչ շատ եւ Ուս. Խորհուրդինն ըլլալէ առաջ՝ անոր ծնունդ տուող ազգային իշխանութեանն է որ էապէս թարոյական ու հայրական է: Այս գիտնալով, բնականաբար քննադատութիւնը կ'անխրաւի որ եւ է Ուս. Խորհուրդը դէմ, երբ անկէ կը պահանջէ այնպիսի արագ արդիւնք, այնպիսի ազդեցիկ տնօրինութիւններ, անմիջական փոփոխութիւն իրաց վիճակի, որոց համար անոր տրամադրութեան տակ գտնուած միջոցներէն տարբեր միջոցներ հարկաւոր պիտի ըլլային: Սակայն պէտք է խոստովանիլ նաեւ որ, իր սահմանին մէջ, տակաւին Ուս. Խորհուրդ մը, որ իր պարտուց գիտակցութիւնն ունի եւ պահանջուած ձեւնհասութիւնը, կարող է շատ արդիւնաւոր դեր մը կատարել, մաւ է որ Ազգն ալ իր կողմէն յարգել պիտնայ իր օրինաւոր իշխանութիւնները եւ յառաջդիմելու անկեղծ ու դործօն իղձ մ'ունենայ:

Կարելի է ըսել արդարութեամբ թէ եկող գացող Ուսումն. Խորհուրդներ բնաւ ո՛ր եւ է արդիւնք չեն գոյացուցած, բնաւ զարկ մը չեն տուած դաստիարակութեան գործին եւ թէ անոնց ջանից հետեւանքն եղող որ եւ է թարուրում չի տեսնուիր մեր վարժարանաց մէջ: Կարծեմ թէ չէ կարելի, եթէ քիչ շատ գիտնք մտադրութեամբ եւ անկողմնակալ ոգւով քննել կրթական գործին բարեշրջական ընթացքը մեր մէջ:

Անցեալներս թղթակից մը գաւառէն կը գրէր օրթերթի մը մէջ թէ Ուսումն. Խորհուրդք սկիզբէն ի վեր կատարեալ անտարբերութիւն մը ցոյց տուած են գաւառաց կրթական վիճակին նկատմամբ, երբք անոր տեղեկանալ իսկ փոյթ չընելով: «Գացէք, կը գոչէր վստահութեամբ, բացէք Ուսումն. Խորհուրդը դիւանատան դարակները, թղթի կտոր մ'իսկ չպիտի գտնէք անոնց մէջ, հին կամ նոր, որ գաւառաց կրթական կացութեան նկատ-

մամբ ծանօթութիւն մը պարունակէ. « Իրողութիւնն այն է որ ահագին կոյտ մը կայ այդ դարակներուն մէջ այդ տեսակ թղթերու, տեղեկագրերու, խնդրուած կամ հաղորդուած այլ եւ այլ առիթներով, ի մէջ այլոց՝ այն մանրամասն ընդարձակ տեղեկութիւնները որք շատ մը կողմերէ ղրկուեցան ի պատասխանի 1883—84ի Ուսումն. Խորհրդոյն Հարցարանին, որ «Նշանաւոր. կոչուեցաւ ժամանակին թերթերուն մէջ: Մեր ազգ. պաշտօնական մարմնոց գործունէութեան վրայ մեր դատաստանը ընդհանրապէս ասոր կը նմանին. խղճամիտ հետազոտութեան բացակայութիւն, բացարձակ ուրացում անցեալին, եղածին. անտեսում աչքի առջեւ տեղի ունեցածներուն, որպէս զի մենք մեզի տանք դիւրին գոհացումը քննադատելու, քննադատելու, անխնայ եւ միշտ քննադատելու:

Այլ քննադատներ երբ պակաս մը կը տեսնենք: Այս մասին ոչ դք մեղադրելի է, գէթ հիման մէջ. բայց եկնու տես որ կը քննադատենք երբ կ'առաջարկուի այդ պակասը լեցնել, եւ կը քննադատենք նաեւ երբ կը լեցուի այդ պակասը: Ժամանակաւ Ուսումն. Խորհուրդ մը չարաչար քննադատուեցաւ, վասն զի կ'ուզէր փութացնել կեդրոնական վարժարանի հաստատութիւնը: «Մեզի նախակրթարաններ պէտք են, գրեց թերթ մը, եւ ոչ երկրորդական վարժարան. հիմը չդրած՝ շէնքին վերի մասերը չեն կրնար շինուիլ: ... Կրթական ընդհանուր կազմակերպութիւն մը տրամադրող կանոնադրութեան մը պակասը կ'ողջացուէր. այդպիսի պէտք մը լրացնելու համար հանգուցեալ Իրէքճեանին, որ միանգամայն կրթական տեսուչ էր, 20 ոսկի ամսական կը վճարուէր, որպէս զի ծրագիր մը խմբագրէ առ այդ: Այլ եւ այլ փորձերէ յետոյ, տարիներ վերջը, օր մը մեր նախակրթարանաց համար բաղձացեալ կանոնագիրը, մանկավարժական սկզբանց ու մեր վիճակին ըստ կարելոյն յարմար կերպով յօրինուած, երեւան եկաւ իբրեւ կրթական օրէնք, Ազգային վարչութեան խառն ժողովէն վաւերացուած: Ահա՛ դժգոհ պարը կ'սկսի նորէն. «Մեզի կանոն պէտք չէ, այլ ուսուցիչ, ուսուցիչ», իբր թէ գանուէր երկրի վրայ ազգ մը որ կրթական օրէնք չունենար, հետեւելի ուղղութիւնը ու լրանալի թերիները մասնանիշ ընող եւ պահանջող, եւ իբր թէ նոյն իսկ անկէ յառաջ իրենք չըլլային կրթական

գործին մէջ տիրող անկարգ ու քմահաճ ընթացքին ի դարման կանոն խնդրողները: Օր մը Ուսումն. խորհուրդ մը նախաձեռնուած թիւնը ունեցաւ վարժապետական ժողովներ գումարեկաւ կամ վերահաստատելու ինչ որ տարիներ առաջ արդէն մի անգամ տեղի ունեցած էր, ու դոքա գումարուեցան մէկ քանի տարիներ իրարու վրայ: Քանիցս, երբ խօսք ըլլար, կ'զմայլէին շատեր իրենց կրթական յօդուածներուն մէջ Եւրոպական այդպիսի սովորութեանց վրայ ու կ'աւաղէին որ կը պակսէր մեր ուսուցչաց համար նմանօրինակ միջոց մը կարծեաց փոխանակութեան, որ ո՛ր եւ է պարագայի մէջ չէր կրնար օգտակարութենէ զուրկ մնալ: Եւ ահա երբ բախտը կ'ունենայինք այդ միջոցն ի ձեռին ունենալու, մօտէն հեռուէն քննադատութեան ձայներ բարձրացան: Ի՞նչ օգուտ ասկէց. ուսուցիչք ի՞նչ միջոց կամ ոյժ ունէին իրենց որոշումները գործադրել տալու որք վերջապէս օգին մէջ պիտի մնային, եւ այլն. մինչդեռ շատ լաւ գիտէինք թէ Եւրոպական նման ժողովներն ալ ուրիշ բան չէին կրնար ընել բայց եթէ իղձ բանաձեւել իրրեւ եզրակացութիւն իրենց խորհրդակցութեանց, եւ մինչդեռ շատ լաւ ալ կարող էինք խորհիլ որ արդէն նոյն իսկ այդ խորհրդակցութեանց մէջ կը կայանար էապէս այդ ժողովներուն օգտակարութիւնը: Նոյն Ուսումն. խորհուրդը մանկավարժական թերթի մ'ալ հրատարակութեան խորհուրդն յղացաւ եւ միջոցներու ներած սահմանին մէջ գործադրեց իր Ատենապետին խմբագրապետութեամբ: Նախափորձ մ'էր այդ վերջապէս, անտարակոյս գովելի եւ խրախուսելի: Առաջին օրէն կարեւորութիւն ունեցող թերթ մը քննադատեց զայն, բայց գիտէք կամ կը յիշէք ի՞նչ առարկելով. — ո՛չ թէ անոր մանկավարժական ուղղութիւնը կամ երեւան բերած սկզբունքները, ո՛չ թէ անոր մէջ գրողներու ձեռնհասութեան պակասութիւնը, ո՛չ. այլ... վասն զի լեզուն ժողովրդական կամ չափազանց աշխարհաբարեան չէր, այս ինչ յօդուածին ոճը ակադեմական էր, եւ այլն: Արդէն գիտէք թէ մեր մէջ հիմայ, ու այդ ժամանակէն ի վեր, ամէն հրատարակութեանց արժէքը միայն մէկ բանէ կախում ունի. — լեզուն աւելի կամ նուազ աշխարհաբարեան ըլլալէն: Այս է մեր խեղճ գրադատութեան, մեր էսթետիքին ալ միակ կանոնն ու չափը:

Զերկարենք խօսքերնիս: Արդի Ուսումն. խորհուրդը իր նախորդին կողմէն պատրաստուած «Նախնական կրթութեան ծրագիր»ը հրապարակ հանեց, Ազգ. վարչութենէն վաւերացուած, եւ ի գործադրութիւն հաղորդեց գաւառաց Ուսումնական եւ Մայրաքաղաքիս Թաղական խորհրդոց: Ինչ ընդունելութիւն եղաւ այս երեւոյթին, որ, պէտք է խոստովանիլ, նոր էր մեղ համար, — ու գործին կարեւորութիւնն՝ անժխտելի —, վասն զի առաջին անգամն էր որ Թուրքիոյ հայերը կ'ունենային նախակրթական ուսմանց յասակագիծ մը, դպրոցներու մանկավարժական կազմակերպութեան մը հիման վրայ պատրաստուած, որոշապէս ներկայացնող դաստիարակութեան եռակի դերը, կրթութեան համակերպոն ու տակաւ ընդլայնեալ շրջանակներու նոր ու բանաւոր ըմբռնման համեմատ ուսմանց եւ հրահանգաց բաշխումն ու յառաջատարութիւնը սահմանող, եւ վերջապէս իր մանրամասնութեամբք ու թելադրած եղանակներով լուսատու առաջնորդ մ'ըլլալու յատկացած ոչ միայն ուսուցչին, այլ եւ դասագրոց ապագայ հեղինակներուն: Դժբախտաբար ոչ մէկ լուրջ ու ամբողջական գնահատութիւն երեւցաւ, ոչ մէկ անկեղծ յանձնարարութիւն տեղի ունեցաւ մամլոյ կողմանէ որոց որ անկ է, որպէս զի ջանք ըլլայ մոնելու վերջապէս բանաւոր ու ամբողջական կրթութեան ճամբուն մէջ որուն կ'առաջնորդէր այս նախագիծ: Դարձեալ մեր հինաւուրց մեթոտը սուտ խուլ ըլլալու, անտարբերութեան, արհամարհանքի եւ ոչ շատ ազնիւ հնարքներ գտնելու՝ ուրանալու համար արդիւնարար վաստակը եւ ձեռնհաս գնահատութեան անկարողութիւնը կամ չկամութիւնը ծածկելու՝ քաշքշուք եւ օտարոտի առարկութեանց տակ: Առանց դրապէս բան մը ցոյց տալու, եւ յաճախ չկարդացած չսերտած իսկ, եղան գրողներ. «Թերութիւններ կան, կը հրաւիրենք որ ամէն մարդ ցոյց տայ զանոնք, որ ամէն մարդ սրբագրէ ըստ իւր կարծեաց կամ ըստ սեղական պատշաճութեանց, որպէս զի լաւագոյնը, ամենալաւը ու լիակատարը ունենանք:» Է՛հ, հերիք է որ հասարակութեան միտքը գայթակղի, եւ թող գոյանալիք օգուտն ալ կորսուի, եթէ մեր անձնասիրութիւնը պիտի ստիպուի արժանիք կամ արդիւնք մը վերագրելու այս կամ այն անձին կամ անձներուն:

Կը ցաւիմ որ չեմ կարող տարբեր կերպով մեկնել մեր քննադատելու եզանակները, գէթ մեծ մասամբ, վասն զի կ'ընդունիմ որ պարզ անհասկացողութիւնն ալ իր բաժինն ունի ձախող դիտողութեանց մէջ: Ուսումն. խորհուրդները շարունակ քննադատելու տեղ, քիչ մ'ալ պէտք չէ որ ժողովրդեան, գաւառական եւ թաղային վարչութեանց հրաւեր կարգանք որ իրենք ալ իրենց բարեացակամ ջանքերով սատարեն Ուսումն. խորհրդին եւ անոր ակամայ տկարութեան թերին ըսուն իրենց ինքնայօժար օրինասիրութեամբ եւ համակերպութեամբ: Մեր կրթարտնաց բարեկարգութեան գործին դանդաղ ընթացքը, չէ, չէ կարելի վերագրել պարզապէս Ուսումն. խորհրդոց անձնոնհասութեան կամ եռանդի պակասութեան: Ամէն բարի տրամադրութիւններով ու կարողութեամբ ալ կրնան չյաջողիլ, կամ գէթ այնքան շուտ որքան փափաքելի է, երբ իրենցմէ վեր եւ իրենց շուրջը, մօտն ու հեռուն, Կտնուած մարմինք չաջակցին իրենց, երբ մանաւանդ ուսուցիչք եւ վարժարանական հոգաբարձութիւնք պատուիրուած բարեփոխութեանց կարեւորութիւնը չուզեն կամ չկարենան ըմբռնել եւ զայնս ի գործ դնելու անկեղծ ու անձնուէր փոյթը չունենան: Յառաջդիմութիւնը ամենուրեք համերաշխ ու միաբան ջանքերու արդիւնք է, եւ երբ վարչութիւն կ'ըսենք ու անկէ կամ անոր մէկ ճիւղէն բան մը կ'սպասենք, անշուշտ պէտք է իմանալ ազգին ամբողջ վարչական մեքենայն ի միասին, կեդրոնին թէ գաւառներուն, որոյ ամէն անիւններուն ալ գործակցութիւնն հարկաւոր է՝ որպէս զի ո՛ր եւ է մէկ ճիւղ անգամ կատարեալ արդիւնաւորութեամբ իր դերը լեցնել կարենայ: Ուստի, երբ խնդիր է դատել այս կամ այն ճիւղին գործունէութիւնը յառաջացեալ արդեանց տեսակէտով, պէտք է որ արդար ըլլանք մեր դատաստանաց մէջ եւ անոր կամքէն անկախաբար տեղի ունեցած թերութիւններն ու բարւոքմանց յապաղումները միայն անոր վրայ չբեռնաւորենք: Ասիկա քննադատութեան շատ լաւ տեսակը չ'ըլլար, որ եթէ բարութեան պակասութիւն չյայտնէ՝ անպատճառ պիտի յայտնէ մերթ հապճեպով եւ մերթ անգիտակցօրէն դատելու սովորութիւն:

Չեղածը պահանջելէ առաջ կամ գէթ պահանջելուն հետ ի միասին ինչու չենք ուզեր եղածը տեսնել ու գնահատել, գոր-

ծողը քաջալերել ու գործադրողներն ալ յորդորել արդիւնաւորելու: Ըսել կ'ուզեմ, անշուշտ է թէ կրթական գործին մէջ դեռ շատ քայլեր կը մնան մեզ առնելու, շատ պէտքեր գոհացնելու, նոյն իսկ շատ բաներու հիմը ձգելու, բայց արդէն դաստիարակութեան բանաւոր ուղղութիւն մը եւ կրթութեան որոշ յատակագիծ մը հաստատած ըլլալ քիչ բան է ու դիւրին ալ բան եղած է: Եթէ ինքնին չի նշանակեր կրթական իրացեալ բարեկարգութիւն, գէթ առաջին քայլը չէ՞ այդ: Երբ որ եւ է կրթական հեղինակութիւն ուզէ բարեփոխութիւն մտցնել կրթական հաստատեալ վիճակի մը մէջ, չէ՞ մի որ կրթական օրէնք ու ծրագրեր ըստ պատշաճի բարեփոխելով կամ հաստատելով կ'սկսի: Նոյնն եղաւ վերջին մէկ քանի Ուսումն. Խորհրդոց օրով, հաստատմամբ Վազմանկան Կանոնագրին եւ Նախնական կրթութեան Ծրագրին: Ուսումն. Խորհուրդը, իբրեւ սոհմային կրթութեան հսկող ու առաջնորդող մարմին, գէթ մեծ մասամբ իր պարտքը կատարած կ'ըլլայ, երբ կը ջանայ կարելի լաւագոյն ուղղութիւնը գծել անոր առջեւ եւ գործադիր մարմնոց մատնանիչ ընել: Այդ գործ կրնայ իր թերութիւններն ունենալ. որ մարդկային գործ զերծ է թերութենէ. սա յայտնի է որ, նոյն իսկ պակասներն ու անյարմարները տեսնելու համար, գործադրել պէտք է: Լաւագոյնն ու նենալէ առաջ լաւն ունենալու է, մանաւանդ երբ ինչ որ ունէինք՝ յոռին էր միայն: — Ուսուցչական ընտրելեաց համար պատրաստուած եւ մէկ քանի տարիներէ ի վեր գործադրութեան դրուած Հրահանգն ալ, պէտք չէ ուրանալ, առնուած կարեւոր քայլ մ'է: Բերանացի, գրաւոր եւ գործնական փորձերու կանխորոշ բրդկրամ մը ապագայ ուսուցչին ուղղութիւն մը ցոյց կու տայ՝ ըստ այնմ պատրաստուելու համար իր ընտրած դասակարգին համեմատ, վասն զի ուսուցչութեան գանազան կարգերն ալ, ըստ Վազմանկան Կանոնագրի եւ Հրահանգին, այժմ որոշ կերպով ճշդուած են: Եւ քննութիւնը կատարուելով ձեռնհաս անձերէ կազմուած յատուկ Յանձնաժողովի ձեռքով՝ կը ներկայացնեն աւելի երաշխիք ընտրելոց արժանաւորութեան: Իրաց այս վիճակին գերազանց առաւելութիւնն յայտնի է, երբ բաղդատենք հին դրութեան հետ ուր որ եւ իցէ ժամանակ մէկը կրնար ներկայանալ Ուսումն. Խորհրդոյ որ եւ է մէկ նստին եւ ներկայ եղող անդամոց առջեւ՝

որոնց մէջ յաճախ ընտրելին յաւակնած ճիւղին մէկ մասնագէտ իսկ չէր գտնուէր՝ վեր ի վերոյ քննութեամբ կ'ստանար ուսուցչի վկայական: Գիտենք որ Հրահանգը այս կերպով ստացեալ հին վկայականաց իսկ վերաքննութիւն տնօրինած է: Թողունք որ կար ժամանակ ուր բոլորովին առանց վկայականի էր ուսուցչաց մեծամասնութիւնը: Վարժապետանոց մ'ունենալ եւ պահանջել որ Դաստիարակ-Ուսուցչութեան ընտրելին շրջանաւարտ մ'ըլլայ այդ դպրոցին, անշուշտ լաւագոյն պայման մ'է զոր կը յուսանք օր մը կարենալ յաւելուլ այդ Հրահանգին, բայց յառաջդիմութիւնը քայլ առ քայլ կ'ըլլայ, ու ներկայ վիճակին մէջ Հրահանգին պահանջմունք գէթ մանկավարժական ինքնակրթութեան մը, իր պաշտօնին լրջագոյն պատրաստութեան մը կը պարտաւորեն ընտրելին: Ըսենք նաեւ որ մի քանի տարիներէ ի վեր Վազմական Կանոնագրի տրամադրութեան համեմատ կատարուած նախնական կրթութեան շրջանաւարտներու կեդրոնացեալ քննութիւնք ինքնին լաւագոյն ու լրջագոյն արդիւնքներու պարտաւորող բնութիւն ունին. — վասն զի, առանց աղմուկի ու սաստի, լոկ կերպին ազդեցութեամբ, Հոգաբարձութեանց քմահաճ ընթացքը կը չափաւորեն եւ կ'ստիպեն իրթական Ծրագրին հետեւող ըլլալու, — եւ իրենց ընծայած առաւելութիւնք կը բազմապատկին անտարակոյս, եթէ նաեւ գաւառական շրջանակաց մէջ նոյն դրութեան գործադրութեան հոգ տարուի, ինչպէս Կանոնը կը տրամադրէ: — Հոս կը յիշեմ հաճոյքով կարդացած ըլլալ Յիգրան Արփիարեանի մէկ գեղեցիկ ֆրոնտիէր, յորում ազնիւ հրապարակագիրը սրտագին համակրութեամբ կը նկարագրէր Ղալաթիոյ վարժարանին սրահներուն մէջ այս երկու քննիչ Յանձնաժողովոց տարեկան նիստերուն առթիւ տեսնուած գրաւիչ եւ յուսալից ոգեւորութիւնը. — արդարեւ բացառիկ երեւոյթ մը մեր մամլոյն մէջ:

Վերջին տարիներուս մէջ հաստատուած բոլոր այս նոր կարգերն ու կանոնները, վարժապետական ժողովներն ու մանկավարժական հրատարակութիւնները արդէն զգալի բարեշրջում մը յառաջ բերած են մեր կրթական հայեացքներուն ու գործնականին մէջ: Վազմական Կանոնագրի պահանջած դասընթացքները կազմակերպուած են, թէ Պոլսոյ թէ գաւառի մէջ, ոչ սակաւ տեղեր, եւ իրթական Ծրագրին ըստ կարի մօտէն հետեւողութիւն ի գործ

դնելու ջանքն ակներեւ է: Յայտնի կը տեսնուի նաեւ վերջին տարիներուն մէջ հրատարակուած դասագրքերուն կրած բարեփոխութիւնը, որոց հեղինակները հիմայ որոշ կերպով այս կամ այն տարիքն ունեցող տղայոց, այս կամ այն դասընթացքին կը սահմանեն ու կը պատշաճնն իրենց գործերը, եւ իրենց յառաջաբաններուն մէջ կը յիշեն իրենց խնամքը՝ հաստատուած դպրոցական կարգադրութեանց զայնս համապատասխան ընելու: Այս ալ ցոյց կու տայ արդէն մեր Ուսուցչական մարմնոյն մէջ բարեշրջման նշանակելի աստիճան մը: Գոհութեան արժանի է նաեւ տեսնել որ արդի Պատ. Ուսումն. խորհուրդն ալ գովելի եւ անժխտելի իղձն ունի կանոնադրեալ դպրոցական բարեկարգութեանց գործնականացումը տակաւ ընդհանրացնելու եւ իր հրահանգներով չէ դադրած ոյժ եւ մղում տալէ անոր: Աներկբայ իր իղձն ու ջանք գործնական աւելի արդիւնք կ'ստանային, եթէ աւելի զօրաւիգ գանէր թէ վարչական շրջանակաց եւ թէ՛ լրագրական մամուլոյն կողմանէ:

Ո՛չ, եղբարք, ո՛չ. ամէն բան ջուրին չտանք, ամէն բան սեւ չտեսնենք, չափ եւ կշիռ ունենանք մեր դատողութեանց մէջ, մանաւանդ արդարասէր ըլլանք, ու քննադատելու, չհաւնելու մարմաջը, որ ազգային մոլութիւն մը դառնալու վրայ է, որ մեր կարողութիւնները կը չէզոքացնէ, թող չտանի զմեզ ամէն արդիւնք ու վաստակ ուրանալու: Աշխատողներ ունենալու եւ աստիճանական յառաջդիմութիւն մը տակաւ իրագործել կարենալու լաւագոյն եղանակը չէ այդ, ընդհակառակն լքում, վհատութիւն, տարամուտութիւն, ու մինչեւ իսկ յետադիմութիւն յառաջ կը բերէ անվրէպ: Իրաւասութիւն եւ ձեռնհասութիւն յարգելի ըլլան մեզ, գնահատենք օգտակար աշխատութիւնները, որքան ալ խոնարհ ըլլան անոնք, ու դէպ յառաջ առնուած քայլի մ'արժէքը ճանշաննք: Այդ պայմանաւ կրնան աշխատութիւնք բարդուիլ աշխատութեանց վրայ ու քայլը քայլին յաջորդելով՝ զգալի յառաջացում մը գոյացնել: Միշտ շինուածը մեր ձեռքով քակելով՝ Պենելոպէի կտաւին կը դարձնենք սա դպրոցական բարեկարգութեան գործը, որ միշտ եղած տեղը կը մնայ, կամ թէ անհունապէս ծանր կը յառաջանայ: Այլոց բարեգործ ջանքերը ոչնչացնելու տեղ՝ անոնց կցենք բարեսէր ոգւով մերիները, ու անոնց տկա-

րութիւնը կորացնենք մեր ուժերուն նպաստով: Չհասկցուի թէ բարեմիտ հիացող մ'եմ մեր կրթական վիճակին. ես իսկ դեռ անցեալներս մատնանիչ ըրի մեր նախնական կրթութեան մեծ թերին, — դաստիարակ-ուսուցիչով դասարաններու ընդհանրապէս պակասութիւնը. բայց պաշտօնապէս ալ ընդունուած ու օրինադրուած խռող ու բեղմնաւոր սկզբունքներուն գործադրութիւնը կը պահանջէի: Թող այս շինիչ պահանջման մէջ ամէնքն ալ միանան, ամէն անոնք որք ձայն մը եւ ազդեցութիւն մ'ունին հրապարակի վրայ, եւ որք նաեւ մի եւ նոյն ատեն բարոյական մեծ պատասխանատուութիւն մ'ունին. թող ամէն գործօն Կեր ունեցող մարմին կամ անհատ ալ այդ պահանջման գոհացում տալ աշխատի իր կարողութեան չափով: Դաստիարակութեան խնդիրը նուիրական ու կենսական է, որուն հետներելի չէ թեթեւութեամբ կամ անտարբերութեամբ վարուիլ. անհամբերութեամբ ալ կրնանք փնաս տալ անոր: Յարատեւող, համբերատար, լուրջ, աննախանձ, անկեղծօրէն լաւատենչ ու զոհաբեր ոգիով կարելի է բաղձալի լուծումը տալ անոր:

(Արեւելք, 1899, Թիւ 3915, 3916:)

13. ՆՈՒՆՈՎՈՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

Բանաւոր է գանգատիլ թէ մեր նախակրթարանաց մէջ աւանդուած կրթութիւնը անբաւական է մեր պէտքերուն, վասնզի մեր թաղային դպրոցներէն ելնողները չեն կարող անմիջապէս բանի մը օգտակար դառնալ: Արդեանց այս անբաւականութիւնն ալ ի հարկէ վերագրելի՞ է ծրագրի անկատարութեան, հետեւապէս եւ կայ իրօք պէտք մը նոր փոփոխութեանց, կատարելագործմանց, ինչպէս կան կարծողներ ու յայտարարողներ մեր մէջ:

Արդարեւ իրար հասկնալու մը պէտք ունիք: Ժողովրդեան պահանջները շատ են, ինչպէս պէտքերը: Դպրոցական ընթացքն աւարտող ժողովուրդի զաւակը պէտք է որ սկսի իր հացը շահիլ ու քիչ շատ օգնել իսկ իր ծնողքին: Պէտք է որ կարենայ արհեստ մը ի գործ դնել, առեւտուր ընել, մասնաւորաց գրագիր կամ համարակալ ըլլալ, ճարտարական վարչութեանց կամ հանրային ծառայութեան մը մէջ մտնել, եւ կամ կարող ըլլալ մաս-

Նագիտական բարձրագոյն դպրոցի մ'ուսանող դառնալու: Վարժարանք պէտք է այս կեանքին, գործնական կեանքին պատրաստեն, ու երբ չեն տար կատարելապէս այս պատրաստութիւնը, ուրեմն կը թերանան իրենց կոչման, ու կ'ապացուցանեն թերութիւն մը իրենց կազմակերպութեան մէջ որուն հարկ է դարման տանել:

Իրաւացի է այս պահանջը. միայն թէ պէտք է խորհիլ թէ նոյնքան իրաւացի է այս ամէն բաները նախակրթարաններէն պահանջել: Մէկ տեսակ ու մէկ աստիճանի վարժարաններ պարտին տալ գործնական կեանքին ամբողջական պատրաստութիւնը. թէ ոչ այդ պարտի գործը լինել այլատեսակ դպրոցներու: Այս է բուն խնդիրը: Իրաւացի չէ նախակրթարաններէ ամէն բան սպասել. սպասել որ անոնք կրթութեան նախատարերքն աւանդեն, ու միանգամայն առեւտուրի, արհեստներու, մասնագիտութեանց յարմար ու պատրաստած դուրս տան 13—14 տարեկան պատանեակներ: Ո՛չ մէկ ազգի մէջ նախնական դպրոցներէն այդպիսի արդիւնք կ'սպասուին, այլ զանոնք ձեռք բերելու համար դեռ ուրիշ կրթական գործարաններ ու հաստատութիւններ ունին, որք մեզի կը պակսին, հետեւապէս եւ անոնցմով ստանալի բարիքները:

Ամենէն բարեկարգ նախակրթարաններն ունեցող ազգերը այդ դպրոցներուն մէջ չեն աւանդեր մեր ծրագրին արամագրածէն աւելի ուսում, այլ ընդհանրապէս նուազ իսկ. վասն զի շատ ազգերու նախնական դպրոցները՝ իբրեւ լեզու միայն մայրենի լեզուն կ'ուսուցանեն, մինչ մերիններն հարկաւորապէս կ'ուսուցանեն հայերէնին հետ պետական լեզուն, ու շատերը նաեւ Փրանսերէնը քիչ թէ շատ: Նախակրթութիւնը, մանկապարտէզն ալ ի միասին առնելով, 3—4 տարեկանէն մինչեւ 12—13 տարեկան հասակը կ'երկարաձգուի, եւ այդքան կարճ միջոցի մը ու այդքան ճիղճ հասակի մը մէջ չի կրնար պահանջուիլ որ տղան ստանայ կեանքի հարկաւոր բոլոր ձեռնհասութիւնը: Շատ իսկ է որ տղան սովորի ընթերցանութիւն, գիր, նախնական թուաբանութիւն, երկրաչափութեան ու գծագրութեան տարերքը գիտնայ, մայրենի գրական լեզուին բառամթերքն ու քերականութիւնը ճանշայ մասամբ եւ կարող ըլլայ անով քիչ թէ շատ իր միտքը հասկցնել բերանացի ու գրով, գիտնայ նոյնպէս իր երկրին լեզուն

չափով մը կարդալ ու գրել, աշխարհագրական ու պատմական ընդհանուր ծանօթութիւններն ունենայ, ինչպէս նաեւ բնական գիտելեաց պիտանի տարրական պաշար մը՝ առողջաբանական, կրօնական ու ընկերական-բարոյական սկզբունքներու եւ թելադրութեանց գումարով մը, միեւնոյն ատեն մանաւանդ մանուկին միտքն ու սիրտը ու մարմինը մարզուին եւ ընդունակութիւն ստանան բարւոք եւ առողջ խորհելու, զգալու եւ աշխատելու: Ամէն տեղ ընդհանուր կերպով մը այս է ինչ որ կ'սպասուի նախնական-տարրական դպրոցներէն: Աչքէ թող անցունէ ով որ ուզէ եւրոպական ո՞ր եւ է ազգի նախնական վարժարանաց ծրագիրը, ու պիտի համոզուի մեր ըսածին: «Կեսնքի պահանջումներն այնքան յայտնի են որ ամէն երկրի մէջ, կ'ըսէ Միշէլ Պոէալ, եւ ինչ որ ալ ըլլայ դպրոցին ընդհանուր ձգտումը, դասերու ծրագիրը գրեթէ նոյն է: Ֆրանսերէն (այսինքն՝ մայրենի) լեզու, հաշիւ, մեղրական գրութիւն, գծագրութիւն, պատմութիւն ֆրանսայի (այսինքն երկրին), աշխարհագրութիւն, բնագիտութեան եւ բնական պատմութեան ծանօթութիւնք, սրբա են, կրօնքի կամ բարոյականի դասերու հետ, նախնական կրթութեան գրեթէ անփոփոխ տարերքը», Ու Օ. Կոէառ կը գրէ. «Նախնական կրթութեան նպատակը չէ իր շոշափած ամէն նիւթերու վրայ ընդգրկել ամէն ինչ որ կարելի է գիտնալ, այլ իւրաքանչիւրին մէջ լաստովը եցնել ինչ որ ներելի չէ անգիտանալ: Այս իմաստութիւնը, որ իրաց բնութեան կը համապատասխանէ, այնքան աւելի կարեւոր է, որքան այդ ծանօթութիւնք իսկ միեւնոյն ատեն միջոց մ'են ու նպատակ մը. իրենց արտագրելիք բարւոյն միայն կէսը յառաջ պիտի բերէին, եթէ նախ եւ առաջ չծառայէին մանկան մէջ կազմելու ողջմտութիւնը եւ բարոյական զգացումը»:

Ինչպէս կը տեսնուի, բուն հմտութեանց դրական քանակէն աւելի — ինչ որ դարձեալ քիչ բան չէ՝ բազմատելով այդ առաջին հասակին համեմատական տկարութեան հետ ու խորհելով որ բացարձակ տգիտութեան վիճակէ մը դուրս կ'ելլէ մանուկը, — տարրական նախնական կրթութեան մէջ բուն ու առաւելյապէս խնդրելին կաղապարումը, կերպաւորումն է, այն է մտքին կարողութեանց զարթումն ու մարզումն, բարոյական դասողութեան եւ զգացման ուղղութիւնն, առողջ հիման մը կազմու-

Թիւնը խորհելու եւ զգալու կերպին մէջ, ինչպէս նաեւ ֆիզիքս-
 կան ու առողջական տեսակէտով: Ասոր պէտք է ձգտի առաջին
 կրթութիւնը, ու զայս մանաւանդ պէտք է փնտռենք երբ կ'ու-
 ղենք գնահատել այդ կրթութեան արդիւնքները, ու պարտինք
 մեծապէս ուրախ ըլլալ՝ երբ հաստատենք թէ այդ քիչ մը տար-
 րական ուսումը կրցած է ըլլալ նիւթականին (matériel) հետ
 նաեւ կերպական (formel), կազմիչ, ինչպէս կ'ըսեն Գերմանացի
 մանկավարժները, որոշելու համար ուսումը եւ դաստիարակու-
 թիւնը: Մեր նախակրթարանաց մէջ տրուած դաստիարարակու-
 թիւնը այս տեսակէտով դեռ շատ թերութիւններ ունի, կը խոս-
 տովանինք, քանի որ կը պակսին մեզ պէտք եղած թուով ձեռն-
 հաս դաստիարակներ, դէմյանդիման ուսուցման համար առար-
 կայական միջոցներ, եւ ընդհանուր կիրառութիւն կրթական
 գիտակից ու գիտնական մեթոտներու: Ու քննադատութիւնը
 պէտք է որ այս կողմին վրայ ծանրանայ, ու պահանջէ ամենէն
 յառաջ դաստիարակներու մասնագիտօրէն պատրաստութիւնը
 իրենց պաշտօնին, հետեւապէս եւ վարժապետանոցներու հաս-
 տատութիւնը եւ յարակից պէտքերու գոհացումը: Սակայն մեր
 քննադատութեան պահանջածները չեն այս կէտերը, այլ այնպիսի
 թանկեր որք չեն կրնար գոհացուիլ նոյն իսկ այս կարգի կենսական
 թերութեանց ուղղութեամբ: Տեսանք վերեւ որ տնոր գանգատ-
 ները կը վերաբերին աշակերտաց ստացած ծանօթութեանց գու-
 մարին անբաւականութեան ու այն անձեռնհասութեան որուն մէջ
 կը գտնուին գործնական կեանքի պահանջներուն անմիջապէս պա-
 տասխանելու եւ իրենց անձին ու միջավայրին օգտակար դառնա-
 լու նկատմամբ: Իրաւունք չունինք մեր տարրական նախակրթա-
 րանները պատասխանատու ընելու այս մասին, ոչ ալ դատապար-
 տելու մեր 12—13 տարեկան նախակրթարանի շրջանաւարտները,
 վասն զի, կանոնաւոր կիրառութեամբ մեր ծրագրին, այս
 հասակներուն մէջ կրնան մեր մանուկները աւարտել նախ-
 նական տարրական կրթութեան շրջանը, ինչպէս կը տես-
 նուի հետզհետէ: Տղայք պարզ նախակրթարանին սեմէն կամ
 շրջանակէն դուրս ալ միջոցներ ունենալու են շարունակելու կամ
 վերագացնելու իրենց ուսումը, ի մասնաւորի այն ասպարէզներուն
 վերաբերութեամբ զորս գրկել կը պատրաստուին: Պէտք է որ

այդ ասպարէզներուն պատրաստող արհեստական, մասնագիտական դպրոցներ ըլլան ուր յաճախեն, ու յաճախելով ալ դարձեալ իրենց ընդհանուր զարգացումը յառաջացնելու դիւրութիւններ գտնեն իրենց միջավայրին մէջ: Թողլով բարձրագոյն նախակրթութեան ու երկրորդական կրթութեան, ինչպէս լրացուցիչ դասընթացքներու աւանդած ուսումները որոնցմով տարրական դպրոցին կրթութիւնը կրնայ միշտ զարգացուիլ, եւրոպական միջավայրերու մէջ՝ նոյն իսկ աղքատիկ դասերու զաւակներուն համար որոց վիճակը չի ներեր յամէլ դպրոցական միջնուրրի մէջ, կան լրացուցիչ, զարգացուցիչ, շափահասից դպրոցներ կամ դասընթացքներ (Ecole complémentaire, Ecole de perfectionnement, cours d'adultes), որք երեկոյնները, կամ կիրակի օրերը, եւ կամ շաբթու մէջ ինչ ինչ օրեր, կ'ընդունին արդէն գործի կամ արհեստի մը մտած ժողովրդի զաւակները, եւ ձրի կամ շատ թեթեւ վճարումով մը կ'աւանդեն անոնց գործածական ծանօթութիւններ, գործնական աշխատութիւններով, ամբարջներով, լրացնելով, յառաջ տանելով թաղային նախակրթարանին տուած ուսմանը: Իսկ արհեստի կամ առեւարական ասպարէզներու պատրաստութեան համար կան այլեւայլ արհեստագիտական, ինչպէս նաեւ վաճառականական դպրոցներ, երկուսեւորու համար, որոնք իրենց առարկային յատուկ տեսական եւ գործնական ուսուցմամբ կը պատրաստեն բանգէտ գործաւորներ, արհեստաւորներ, մեքենագործներ, վաճառականի ու սեղանաւորի գործակատարներ, հաշուակալներ, քարտուղարներ եւայլն: Աւելորդ է բսել թէ ուր որ տեղւոյն յատուկ մասնաւոր ճարտարութեան ճիւղ մը կը ծաղկի, հոն անոր համար առանձին դպրոց կայ, ինչպէս Ժընէվի ու Նէօշաթելի մէջ ժամագործութեան դպրոցներ՝ բաց ի ուրիշներէ:

Մենք դեռ եւ ոչ մէկ վաճառականական դպրոց ունինք, թէեւ վաճառական ժողովուրդ մ'ըլլալու համբաւն ունինք: Մեքենական արհեստներու համար դեռ նոր սկսած ենք արհեստանոցներու հիմնարկութեան փորձեր ընելու, առանց տեսականի. ու ինչ բանի կը ծառայեն Պոլսոյ համար, զոր օրինակ, ռամիկ վարժապետներով արհեստանոց մը Ս. Յակովբայ Որբանոցին մէջ, ու աղջկանց համար կարի եւ ասեղնագործութեան արհես-

տարան մը՝ Բերայի մէջ: Իսկ գործի ելնող աղքատիկ պատանեակներուն կրթական զարգացման համար ոչինչ ունինք իբրեւ կիրակնօրեայ կամ երեկոյեան դասընթացք: Ու ամէն բան ստիպուեր ենք նախակրթարաններէն սպասել: Արդարեւ հնար չէ: Մեզի կարեւոր է ունենալ գէթ 2—3 հատ արհեստական դպրոցներ: Պօլսոյ այլեւայլ կողմերն հաստատուած ու կարող վարպետներով եւ ուսուցիչներով օժտուած: Մեզ պէտք է ունենալ գոնէ մէկ հատ վաճառականական դպրոց: Մեզ պէտք է կազմակերպել այլ եւ այլ թաղերու մէջ, անբաւական ուսուցիչներով գործի՝ ելնող անչափահասներու կամ չափահասներու համար, դասընթացքներ՝ պիտանի գիտելեաց եւ լեզուաց մշակման ու զարգացուցիչ վարժութեանց ծառայելու համար:

Այս է գործնականը. ծրագիրներ փոփոխելով ոչինչ կը շահուի: Թող մեր գործնական ոգւով պարծող հարուստները երեւան գան, եւ թող մեր թերթերն ալ, դիւրին քննադատութիւններէ այլ եւս հրաժարելով, լրջօրէն եւ գործնականօրէն կարեւորն յանան ու խրատեն: Իսկ մեր տարրական նախակրթութեան համար պահանջին վարժապետանոց, որպէս զի ծրագիրները գիտակցաբար գործադրուին ձեռնհաս ու արժանաւոր դաստիարակներու տակաւ աճեցուն թիւէ մը, որպէս զի մեր նախակրթարանները կարող ըլլան լաւագոյնս գոհացնել պէտքերու ամենէն նախնականն ու հիմնականը, ինչ որ իրենց յատուկ դերն է — այն է արտադրել սերունդ մը, ո՛չ թէ շատ բան գիտցող արդէն, ո՛չ թէ արդէն արհեստաւոր կամ այլ ինչ, այլ սերունդ մը, որ, բնական կարողութեանց ու բնազդմանց իմաստունն ու բանաւոր մարզմամբ մը, լաւ խորհող, ազնուօրէն զգացող, օգտաբեր աշխատող ըլլալու ճամբուն մէջ դրուած ըլլայ:

(Սուրհանդակ, 1903, Թիւ 1403.)

14. ԲԱՐՈՅՈՒԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

Ա.

Հրապարակի վրայ մերթ ընդ մերթ երեւան եկած թիւր ըմբռնութիւններէն մին է «գիտութիւն» բառով լոկ հասկնալ բնական գիտութիւնները, առ առաւելն կցելով անոնց Ուսողութիւնը,

եւ կամ « գիտութիւն », բառին գործածութեան մէջ անձուկ իմաստը փոխել լայն, բացարձակ իմաստի. ինչ որ չէ բնագիտութիւն, տարրաբանութիւն, բնախօսութիւն, ինչ որ չէ բնապատմական ուսումներէն կամ չի վերաբերիր մաթեմատիքական ուսմանց՝ գիտութիւն չէ, եւ որովհետեւ դարս գիտութեան, դրականութեան դար է, խոտելի է, ու հետեւապէս դպրոցական ծրագրերէ վտարելի՝ վերոյիշեալ նիւթերէ դուրս ամէն առարկայ ուսման, գրականութիւն, իմաստասիրութիւն եւ այլ ո՞ր եւ է դասական ուսմունք, կամ թէ գէթ ուսմանց ճիւղերն երկուքի բաժնելով՝ այս վերջինները, իրրեւ ժամանց, վերապահելու է միայն կորսնցնելու ժամանակ ունեցողներուն:

Թէ որչափ սխալ ու անհեթեթ է մտածելու այսպիսի կերպ մը եւ իւր հետեւանքներուն մէջ որքան ֆրասակար՝ դաստիարակութեան ու մարդկային ընդհանուր զարգացման տեսակէտով, կ'ուզեմ ի յայտ բերել այս յօդուածին զանազան մասերով:

Ընդ բնական ու մաթեմատիքական ուսումները գիտութիւն ընդունիլ՝ գիտութեանց դաշտը կարի անձկացնել է, ի բաց հանելով անկէ գիտութիւններու ամբողջ ու բարձրագոյն աստիճանաւ կարելու դաս մը, այն է բարոյական եւ ընկերաբանական գիտութիւնները: Այսպիսի յապաւում մը բնաւ գիտական չէ, այլ ընդհակառակն գիտական խոշոր վրէպ մ'է: Երեւելի գիտուններ գիտութեանց դասակարգութեան մէջ միշտ ինկատ առած են ֆիզիքական ու բարոյական աշխարհներու տարբերութիւնները, ու այդ երկու աշխարհներու երեւութից ուսումնասիրութեամբ պարագող գիտութիւններ զանազանած: Նիւթին երեւոյթներուն եւ անոր օրէնքներուն քով դրած են հոգեկան, մտաւոր երեւոյթներն ու անոնց օրէնքները: Հանքին, բոյսին ու անասունին գիտութեանց քով կան մարդուն եւ մարդկային ընկերութեան գիտութիւնները: Խնդիր չէ մնալ որ նիւթապաշտք ուզած ըլլան հոգեկան երեւոյթներու սկիզբն ալ նիւթը դնել ու անոր հետ առնչութիւնը բնութեան ալ նոյնութիւն համարիլ. ինչպէս եղած են ծայրայեղ գաղափարականը ալ, որպէս Պէրըլէյ, որք միայն գաղափարը համարած են իրական կամ գէթ ըմբռնելի մեզ համար: Բնազանցութեան խնդիր մ'է այդ, ծագման ու սկզբան խնդիր, մարդկային մտքին բարձրագոյն հետազոտութեանն հարկաւոր առարկայ, որ

կ'ապացուցանէ թէ ինքզինք դրական համարող գիտունն ալ այնքան բնազանցութեան հետամուտ է որքան ամենէն տեսլապաշտ իմաստասէրը: Թաքուն ու խորհրդաւոր սկիզբէն յետոյ կան անկէ բղխած էութիւնները եւ անոնց մէջ տեղի ունեցող երեւոյթները, ու այս էութեանց եւ երեւութից մէջ մարդիկ, բնազանցական ինչ դաւանութեան ալ պատկանած ըլլան — պիտի ցոյց տանք թէ անտարբեր չէ՛ այս կէտն ալ, ընդհակառակն —, զանազանած են միշտ մարդը, իբրեւ բանաւոր ու բարոյական էակ՝ որ տիեզերքին մէջ օրէնք կ'ըմբռնէ ու խղճին մէջ պարտականութիւն, ուրիշ էակներէ որք կամ անինքնագործ մարմիններ են՝ լոկ նիւթական յատկութիւններ ունեցող, եւ կամ, թէ եւ գործարանաւորեալ ու ապրող, բայց իրենց բարձրագոյն տեսակներուն մէջ իսկ զգացմամբ ու խորհրդով անչափս հեռու մարդկային էակէն: Ամէն, մեծ քանակագէտ ու բնագէտ, կ'որոշէր Տիեզերախօսական գիտութիւններու (Sc. cosmologiques) եւ Հոգեխօսական կամ մտախօսական գիտութիւններու (Sc. noologiques) երկու մեծ դասակարգեր: Օկիւսդ Գոնդ, Գրական իմաստասիրութեան հիմնագիրը, որ մտաւոր երեւոյթներն իրենց սկզբան մէջ չէր տարբերի նիւթական երեւոյթներէ, ամէնքն ալ նոյն բնութեան արտայայտութիւնները, չէր մոռնար սակայն ընկերային գիտութեանց խումբը, ընկերաբանութիւնը, զոր կնճռոտութեան կարգով իր գիտութեանց դասակարգման մէջ ամենէն վերջ կը դնէր: Օկիւսդ Գոնդ, գաղափարը դնելով զգացողութենէն ու զգայութիւնն ալ մարմնական վիճակէ մը, կը ժխտէր օրինաւորութիւնը բարոյական գիտութեանց խումբի մը առանձնական գոյութեան, բայց Սդուարդ Միլ իր նշանաւոր Լօժիքին մէջ կ'ըսէր. « Զգացողութեան անմիջական նախընթացը մարմնոյ վիճակ մ'է, բայց զգացողութիւնն ինքնին մտքի վիճակ մ'է: Եթէ միտք (ոգի) բան մը կը նշանակէ՝ կը նշանակէ այն որ կ'զգայ: Ինչ կարծիք ալ որ ընդունուի նիւթին եւ ոգիին հիմնական նոյնութեան կամ զանազանութեան մասին, մտաւոր իրողութեանց եւ ֆիզիքական իրողութեանց, արտաքին աշխարհին եւ ներքին աշխարհին զատութիւնը պիտի մնայ միշտ իբրեւ խարխիւ մը դասակարգութեան: »

Ինչպէս բարոյական երեւոյթներուն լոկ նիւթական սկզբան հարցը չ'արգիւնը գոյութիւնն ու օրինաւորութիւնը բարոյական

գիտութեանց, նոյնպէս եւ բարոյական կամ հոգեբանական երեւութից որ եւ է համապատասխան անշուքիւք ֆիզիքական կամ բնախօսական վիճակներու եւ փոփոխմանց հետ՝ չեն կրնար շփոթել տալ առաջինները վերջիններուն հետ ու անոնց առանձինն ուսումնասիրութեան հարկն ու պէտքը բառնալ: Ի հարկէ հոգի եւ մարմին սերտիւ միացեալ ու գիրկնդխառն են մարդուն մէջ, ֆիզիքականն ու բարոյականն իրենց փոխադարձ ազդեցութիւններն ունին. բայց բնաւ չենք կրնար ըմբռնել թէ նիւթին ու մարմնոյն ծանօթութիւնը բաւէ հոգւոյն կեանքը ճանչնալու համար: Գանկարանք կը յաւակնին ուղեղին զանազան ծալքերուն մէջ տեղաւորել հոգեկան կարողութիւններն ու անոնց համապատասխան արտաքին ուսուցներ նշանակել գանկին վրայ, եւ բնախօսք կը ջանան գիտակցական երեւոյթներու համընթաց ֆիզիքական կերպափոխումներն ուսումնասիրել եւ ջղային բջիջներու ու կեդրոններու մէջ փնտռել անոնց կայանները: Բայց այդ ամէնքն, մեծաւ մասամբ դեռ ենթադրական, եթէ հիմնովին ճիշդ ալ ըլլան, կը ծառայեն միայն հոգւոյն ու մարմնոյն յարաբերութեանց հինաւուրց ծանօթինդիրն աւելի եւս լուսաւորելու եւ փոխադարձ նշաններու թիւն աւելցնելու, որով եւ անշուշտ օգտակար խելամուտութեանց յանգելու, բայց բնաւ չպիտի կրնան ուղղակի ծանօթութիւնը տալ մեզ մեր հոգւոյն մէջ անցած դարձածին: Եթէ գիտակցութեան միջոցաւ արդէն իսկ մարդը իր ներքին կեանքին, իր զգայնութեան, իր մտածմանց ու կամեցողութեանց վերահասու չըլլար, ի՞նչպէս պիտի բերուէր իսկ անոնց ֆիզիքական պայմանները խուզարկելու: Գիտակցութիւնն արդարեւ առաջին ու անհրաժեշտ միջոցն է հոգեբանական ծանօթութեան: Արդէն բնախօսական ու հոգեբանական երեւոյթներն եւ անոնց ուսումնասիրութեան մեթոտներն էապէս զատող բանն այն է որ զգայարանաց միջոցաւ կ'ըմբռնուին բնախօսականք, իսկ ներքնահայեցութեամբ, գիտակցութեամբ՝ հոգեբանականք: Այդ անձնական ուղղակի ծանօթութիւնն է հիմն որու վրայ հանգիտական ու բաղդատական ուսումնասիրութեամբ կանգնած է մարդկային ընդհանուր բարոյական բնութեան գիտութիւնը, Հոգեբանութիւնը, ու անոր հիման վրայ ալ բարոյական եւ ընկերական միւս գիտութիւնները, Տրամաբանութիւն, Բարոյագիտութիւն, Գեղեցկագիտութիւն,

վրոնից եւ լեզուաց գիտութիւն, Պատմութիւն, Դաստիարակութիւն, Իրաւագիտութիւն, Քաղաքագիտութիւն, Քաղաքական Տնտեսութիւն:

Բ.

Երեւոյթները մացատրել, օրինաց խելամտել ո՛չ միայն հետաքրքրութիւն գոհացնելու խնդիր մը եղած է մարդկային էակին համար, այլ եւ իր գոյութիւնն ու զարգացումն ապահովելու խնդիր մը: Իր ֆիզիքական ու բարոյական եութեան բազմապատիկ պահանջները պիտի գոհացնէ նա իր գիտութեան չափով, կիրառութեամբքն իր ծանօթութեանց, այն հետեւութեամբք զորս դուրս պիտի հանէ իր կազմած սկզբունքներէն: Այս հարկին տակ, որքան անշուշտ ամէն բան հասկնալու ազնիւ տենչով որ դարձեալ ան ալ մարդուն՝ իբրեւ բանաւոր էակի՝ մի պէտքն է, մարդկութիւնը քալած է լուսով ու մութով խառն ճամբէ մը, միշտ իր շուրջն ու իր մէջ տակաւ աւելի լոյս ընել ջանալով, ճշմարտութեան փոքր նշոյլներն ալ չարհամարհելով՝ երբ չէ կարող աւելի պայծառութեան հասնիլ, մանաւանդ գիտնալով թէ անոնց հաւաքմամբ պիտի կազմուին մեծագոյն լոյսերը, հաւանականութեամբք գոհանալով ու ենթադրութեանց դիմելով՝ երբ ստուգութիւնը կը պակսի կամ կ'ուշանայ գալ: Այսպէս եղած է ծանօթութեան ամէն դաշտերուն մէջ. այսպէս նաեւ, ի մէջ այլոց, բարոյական գիտութեանց դաշտին մէջ: Կարելի՞ է արհամարհել զանոնք, կարելի՞ է զանց ընել զանոնք: Գիտութիւն ընդհանուր կերպով, երջանկութիւն, առաքինութիւն կամ բարութիւն մարդուն տենչացած ու յարգած երեք մեծագոյն բարիքներն են, ուստի եւ մարդկային կեանքի նպատակները, որք կը պատասխանեն մարդկային հոգւոյն ալ երեք գլխաւոր կարողութեանց կամ յատկութիւններուն, — գիտութիւնը՝ իմացականութեան, երջանկութիւնը՝ զգայնութեան, եւ առաքինութիւնը կամ բարութիւնը՝ կամքին կամ բարոյականութեան: Այս նպատակներուն երթալու համար հարկ է մարդուն ճանչել իր մտքին օրէնքներն եւ սահմանները, իր զգայնութեան բնագոյններն ու ձգտումները, իր կամաւոր ու բարոյական գործունէութեան պայմանները: Նոյն իսկ արտաքին աշխարհը ճանչնալու պայմանն ինքզինքն ու իր կարող-

ղութիւնները ճանչնալն է. գիտութեան սկիզբն ու հեղինակը մարդն ինքն է:

Արնայ գիտութեան հասնիլ, կրնայ վստահիլ իր մաքին. իր միտքն ի՞նչ պայմաններու մէջ խորհելով կարող է ճշմարտութիւնը գտնել. կան կամ կրնան կազմուիլ իր բանականութեան մէջ սկզբունքներ որոց ստուգութիւնը բացարձակ ըլլայ, եւ որք կարենան անվրէպ կանոնն ըլլալ իր մաքին ու անդրդուելի խարխիսն իր գիտութեան: — Բազմաթիւ ու ընդդիմամարտ հակումներով ոգեւորուած մարդն իր երջանկութեան տիրական փափաքն ինչպէս կրնայ գոհացնել եւ ո՞ր պէտք է փնտռէ իր երջանկութիւնը. բնաւ իսկ կայ երջանկութիւն երկրի վրայ, ու ի՞նչ են անոր պայմանները. կարելի՞ է՝ հակառակ տառապանաց՝ լաւատես մնալ կեանքին եւ անոր վախճանին համար, թէ ոչ հարկ է, երջանկութեան անիրանալի երազին ու անիմաստ կեանքի մը հանդէպ, յոռետեսութեամբ վարակուիլ, հեգնութեան ծաղրը շրթանցը վրայ կամ անէացման փափաքը սրտին մէջ: Բւ մարդկութիւնն իր հաւաքական կեանքին մէջ կրնայ յաւակնութիւնն ունենալ հաշտութեան, ներդաշնակութեան, երանութեան իտեալի մը, ու ի՞նչ կրնային ըլլալ այդպիսի իտեալի մ'աստիճանական իրագործման համար պահանջուած ընկերային իմաստութեան կանոնները, կամ թէ արդեօք իրաւ մարդկային ընկերութիւնը դատապարտուած է եսամոլ կրքերու եւ շահերու աղիտաբեր պայքարը մղելու յաւիտենապէս: — Ի՞նչ է բարին զոր մեր կամքին ու գործունէութեան կանոն կը դաւանինք, եւ ինչո՞ւ պարտաւորիչ է. ինչպէս պէտք է ըմբռնել զայն իրբեւ սկզբունք եւ անկէ բխած արդարութեան եւ սիրոյ կանոնները. ուրկէ՞ կը բղխի բարոյական օրէնքին բացարձակութեան հանգամանքը, եւ այդպիսի օրէնքի մը գոյութեան անհրաժեշտ պայման մարդուն բարոյական անձնիշխանութիւնը ինչո՞վ կ'ապացուցուի. բարոյական իտեալը զոր կ'ըմբռնենք մեր բանականութեան ու խղճին մէջ եւ ուրկէ՞ կը բղխին բարոյական շարժառիթն ու պարտականութիւնը՝ իր բացարձակութեան մէջ բարոյական բարիի մ'աստիճանական յայտնութիւնն է, դէպի գերագոյն վախճան մը առաջնորդող զմարդ ու տիեզերական կարգին մէջ յատուկ դեր մը տուող բանաւոր ու ազատական մարդուն գործա-

կցութեան, այդ բարին ալ Գերագոյն կամքի մ'արտայայտութիւն, Գերագոյն Օրէնսդրի մը գործ, որ իրեն վերապահէ վերջնական արդարութիւնը՝ անդրագոյն կեանքի մը կամ կեանքերու թողած փորձերու վախճանն եւ բարւոյն կատարեալ յաղթանակը, թէ ոչ բացարձակ բարի, բացարձակ պարտականութիւն, գերագոյն էակ, օրէնսդիր, գերագոյն վախճան կամ կատարելութիւն, բարոյական աղիկամութիւն, անմահութիւն կամ հատուցում, լոկ բառեր ու ցնորքներ են, ու ամէն ինչ կոյր, դիպուածական ու աննպատակ շարժման մ'ենթարկուած է, միակ բարին ու կանոնն ըլլալով մարդուն համար հաճոյքը՝ ուր կը մղուի ճակատագրապէս, զօրութեանն աստիճանաւ վայելելու պայմանին ներքեւ: — Ի՞նչ է դարձեալ գեղեցկին գաղափարը, որով կ'որակենք իրերն ու գործերը մեր հոգւոյն հետ իրենց վերաբերմանը մէջ, որուն դարձեալ բացարձակութիւն մը կ'ընծայենք, զոր հիմ եւ սկիզբ կ'ընենք մեր ճաշակագիտական դատաստաններուն, որ խանդավառ պաշտամունքի ու բարձրագոյն վայելքի առարկայ մ'է մեզ համար, եւ բոլոր գեղարուեստներուն աղբիւրը: Հաճելոյն կամ օգտակարին հրապոյրն է, թէ ճշմարտին կամ բարւոյն փայլը. բայց ի՞նչ է որ անոնց խառնուելով հանդերձ՝ դարձեալ կը մնայ անզատ եւ ինքնաբուն. ի՞նչ է մանաւանդ ընկերականութեան մէջ գեղարուեստին գերը, եւ այլն:

Այս հարցերուն կարեւորութիւնը բարձրագոյն ու կենսական է, վասն զի նոյն իսկ կեանքին նպատակներուն կը վերաբերին, եւ անոնց լուծման եւ ըմբռնման կերպէն կախում ունի մարդուն եւ ընկերութեան իրենց կարողութեանց եւ ուժերուն կիրառման աղիք ուղղութիւնը, լաւ կամ յոռի, արդիւնաւէտ կամ փնասութիւն, բարձրացուցիչ կամ ստորաբարձ: Հոգեբանութիւնը, Տրամաբանութիւնը, Բարոյագիտութիւնը, որք բնազանցութեան հետ ի մասնաւորի կը կազմեն Փիլիսոփայական գիտութիւնները, ասոնք են ահա որք սկզբնաբար կը մշակեն այս հարցերը, կը ջանան պատասխանել անոնց, ու անոնց տուած պատասխաններն են որ իրենց սկզբունքները կը մատակարարեն ո՛չ միայն բարոյական բոլոր միւս գիտութիւններուն, այլ նոյն իսկ գիտութեան առհասարակ, իրրեւ տիրական ու առաջնորդող գիտութիւններ: Բոլոր գիտութեանց վրայ, առանց բացառութեան, կը տիրապետէ Տրամաբանութիւնը, որմէ անոնք իրենց մեթոտները կը քաղեն,

կամ, այսպէս ըսենք, Տրամաբանութիւնն է որ մասնաւոր ուսման ու քննութեան առարկայ կ'ընէ մտքին օրէնքները ու անոր գործելու այն կերպերն ու պայմանները որովք կարող կը լինի՝ առարկային համեմատ՝ յաջողապէս փնտռել ճշմարտութիւնը, գտնել ու ապացուցանել զայն՝ երբ կարելի է, եւ կամ ճանչնալ թէ կը վրիպի, ու զանազանել գիտական ստոյգ ճշմարտութենէն ինչ որ ենթադրութիւն կամ հաւանականութիւն է միայն: Բարոյագիտութիւնը պիտի տայ մարդուն գործերու մէջ ընտրութեան լաւագոյն սկզբունքները, որք պիտի ըլլան ուղեցոյցներն իբ նահատական, ընտանեկան եւ ընկերային կեանքին, եւ որք ազգերու պիտի ցուցնեն իրենց փոխադարձ յարաբերութեանց, իրենց անտեսական մրցմանց ու յառաջդիմական պայքարներուն մէջ լաւագոյն քաղաքագիտութիւնը: Աերջապէս, հոգեբանական գիտութիւնն է որ, մարդը լաւագոյնս ճանչցնելով մարդուն, անոր ճշմարիտ բնութեան, զօրութեանցն ու տկարութիւններուն, ճակատագրին, անոր ձգտումներուն ու պէտքերուն վրայ լոյս սփռելով, անոր դաստիարակութեան, անոր օրէնսդրութեան, անոր գրականութեան ու արուեստին հիմերը կ'ընծայէ, եւ դէպ ի գիտութիւն, առաքինութիւն եւ երջանկութիւն անոր ճամբայները կը պայծառացնէ ու կը բեղմնաւորէ: Տրամաբանութիւն եւ Բարոյագիտութիւն մէկ մէկ մարդերն են Հոգեբանութեան, ուրկէց առնելով իրենց նիւթն ու առաջին սկզբունքները, մին՝ բանականութիւնն իր առաջին ճշմարտութիւններով ու միւսը՝ պարտքի ու բարւոյ սկզբունքները, ընծայօրէն կ'իմաստասիրեն իրենց հետեւութիւնները ու կը կազմեն, Ուսողութեաննման, շղթան իրենց զուտ ու կիրառեալ ճշմարտութեանց: Իսկ Հոգեբանութիւնը. — ան որո՞ւ կը պարտի իր ծանօթութիւնները, եւ ի՞նչ են իր քարոզած ճշմարտութեանց երաշխիքը: Հոգեբանութիւնը, իբրեւ ուսումը մտքին կարողութեանց ու գործողութեանց, օրտին հակումներուն եւ յոյզերուն ու գործունէութեան զսպանակներուն, փորձառական գիտութիւն մ'է ինչպէս բնագիտութիւնն ու բնական պատմութիւնը, ու ասոնց պէս խելամոտական (inductif) մեթոտով իր օրէնքներուն յօրինուածը կը հիւսէ, միայն թէ հոս փորձառութեան սկիզբն եւ հիմը գիտակցական՝ ներքնահայեցական փորձառութիւնն է, ինչպէս վերն ըսինք: Հոս ալ կը գործեն գի-

աողութիւն, բաղդատութիւն, փորձարկութիւն, վերլուծում ու համադրում, բարդ ու մասնաւոր երեւոյթներու մէջէն դուրս բերելու համար ընդհանուր իրողութիւնը, օրէնքն ու օրէնքին ընծայական (deductif) հետեւութիւնները, բայց երեւոյթք նիւթական ու արտաքին չեն, այլ ներքին ու աննիւթական, ոչ թէ առարկայական այլ ենթակայական, ու միայն առնչակից ֆիզիքական երեւոյթներու հետ: Բայց ինչպէս մաթեմատիքական ու բնական գիտութեանց սկիզբը կը յանգի բնազանցութեան, ինչպէս մաթեմատիկոսն իր առածներուն ծագումն ու վաւերականութիւնը, բնագէտն՝ իր նիւթին ու զօրութիւններուն, եւ բնախօսը՝ կեանքի ու գործարանաւորութեան սկիզբը քննել ու զած առեմ, ստիպուած են կանգ առնուլ իրենց յատուկ միջոցներուն անբաւականութեան առջեւ, նոյնպէս փորձառական Հոգեբանութիւնը կանգ կ'առնու հոգւոյն բնութեանն ու ծագման, բանականութեան սկզբունքներուն բացարձակութեան, սրտին անձուկներուն անհունութեան, պարտաւորութեան օրէնքին վճռական հրամայողութեան խնդիրներուն առջեւ, ու միտքը, նոյնքան անկարող ժամանակի ու միջոցի մէջ սահմանափակ փորձերով զանոնք մեկնելու որքան զանոնք հերքելու, ըստ որում կը հարկադրուին անոնք իրեն՝ մեկնելու համար ճշմարտին հաւատքը, պարտքին նուիրականութիւնը, գեղեցկին ու սիրոյն խանդը՝ կ'ապաւինի իրեն զուտ բանաւորական գէմյանդիման տեսութեանցն ու լոյսերուն, ու կը հաստատէ տեսանելիէն անդին անտեսանելի մը, յարաբերականէն ու պայմանաւորէն անդին բացարձակ մը, վերջացող կեանքէն անդին գոյութեան անվերջութիւն մը, մարդկային բանականութեան աղբիւր գերագոյն իմացականութիւն մը, արարչութեան նպատակ մը ու վախճան մը, իրրեւ իմացական էակի մը, Աստուծոյ, գործին: Բնազանցութիւնն է այս, գիտական եւ իմաստասիրական հայեցողութեանց վերջին սահմանը, ուր ամէն գիտութիւն կը յանգի հարկաւորապէս ու կը միտուի գերագոյն ու ինքնասեռ գիտութեան մը, փիլիսոփայական հաւատքի մը մէջ, դրացի կրօնականին:

Գ.

Կարգ մը դրականներու բարոյական գիտութեանց օրինա-
ւորութիւնը մերժելու համար յառաջ բերած մէկ փաստն ալ
անոնց մէջ տեսութեանց յաճախ աւելի կամ նուազ վիճելի,
ճշմարտանման ու ենթագրական հանգամանքն է, միւսողեւ չա-
փագիտական ու բնագիտական ճշմարտութիւնք սեղմ՝ ճշգրտու-
թիւն ու ամբութիւն մ'ունին, ապահով մեթոտներու կիրառման
արդիւնք: Ուստի կարելի է գիտութեան անունով պատուել այդ-
պիսի երկրայելի հաւաստումներու ամողջութիւն մը: Կախ՝ ճշմար-
տանման կարծիք, հաւանական թուիք ու ենթագրութիւն, հակընդ-
դեմ. տեսութիւններ դրական գիտութեանց սահմանին մէջ ալ
իրենց գոյութեան լայն մտփնն ունին, մանաւանդ երբ գիտունը
կը ձեռնարկէ մեկնել ծագման, զգացական կեանքի, հոգեխառն
իրողութեանց խնդիրներ: Ի՞նչ է Յարվինականութիւնը, եթէ ոչ
բնապատմական խոշոր ենթագրութիւն մը: Երկրորդ՝ անհնար է
ուրանալ որ մարդկային միտքը աներկբայելի ճշմարտութիւններու
շարքեր ձեռք բերած է հոգեբանական, արամբանական, բարոյ-
ական, տնտեսական, իրաւաբանական, պատմական, աշխարհվարա-
կան, մանկավարժական խնդիրներու մասին, եւ եթէ միշտ շատ
անհամաձայնութիւններ, տարակոյսներ ու մթութիւններ կան ու
պիսի ըլլան այդ սահմաններուն մէջ, պատճառն այն է որ բարոյ-
ական գիտութեանց առարկայ եղող իրողութիւնք իւրօրին ամենէն
բարդերն են իրողութեանց, ամենէն նուրմերը, ունենալով իրենց
կնճռայօդ կապերը մեքենական ու կենսական գործողութեանց
հետ, շատք նիւթական ու արտաքին տարբերով խառնուած, ու
հետեւապէս նոյնքան կը գժուարանայ ու կը կնճռոտի անոնց յա-
րաբերութեանց ու օրինաց ուսումնասիրութիւնը: Բայց դժուար-
ութիւնը պատճառ մը չէ զանոնք անտեսելու եւ լքանելու, մա-
նաւանդ որ մարդուն մէջ գործունէութեան բարձրագոյն ձեւին,
բարձրագոյն կեանքին կը վերաբերին ու կ'իշխեն անոր ճակատա-
գրին: Իսկ բնագանցական խնդիրներն իրենց բնութեամբ իսկ
դրական գիտութեանց գետինը չունին իրենց ուրբին տակ. տե-
սանելոյն, շօշափելոյն հորիզոնը կ'անհետի. բայց ինչո՞ւ Տիեզերա-
գրութիւնն ալ, մաթեմատիքական — բնական գիտութիւն մը,
երբ մեր աչաց ու հեռագէտ գործեաց տեսութեան ծիրը կը սահ-

մանափակուի, անկէ անդին միշտ միջոց, միշտ գոյութիւն, միշտ շարժում կ'ենթադրէ, կը հաւատայ, անսպառ, անվերջ: Ինչո՞ւ ամէն կարգի գիտունք ալ գոյութեան ո՛չ սկիզբ, ո՛չ վախճան կ'ընդունին, թո՛ղ ըլլայ այն նիւթին համար միայն: Ա՛ր փորձառական ծանօթութեան վրայ կը յենուն, ու փորձառական ծանօթութիւնք կրնան ինքնին համարձակեցնել միտքը յաւիտենական իրողութեանց հաւաստման: Այդպիսի հաւաստումներ սուրկեց ալ գան՝ բնազանցական են, զուտ բանական (rationnel) տեսութեանց արգիւնք: Ինչ որ ալ ըլլայ, մարդուն գիտութիւնը բնազանցութենէ չի կրնար անցնիլ, անոր մէջ ունի իր սկիզբն ու վախճանը, նա ամէն ուղղութեամբ փիլիսոփայութեան կը յանգի, որ, իրբեւ գիտութեանց գիտութիւնը, սկզբան ու վախճանի հետախոյզ, բացարձակին զգայարան, կը կանգնի, միշտ իր վերին գահին վրայ, միշտ իր իրաւանց տէր, ամէն մասնաւոր գիտութիւններուն վերեւը: Ի զուր գրական իմաստասիրութիւնը կը յաւակներ յապաւել բնազանցութիւնը. ինքզինքնին տուած «իմաստասիրութիւն, անունն իսկ ատոր անկարելութիւնը կը հաստատէր: Օկիւսդ Գոնդ, անոր հիմնադիրը, զգալով որ մարգկութիւնը առանց իտեալի չէ կարող ապրիլ, որպէս գիտեմք, «Մարդկութեան կրօնքը, հիմնեց իր սուրբերոջն ու տաճարոջն ու պաշտամունքով: Բան մը կ'ընդունէր ապա որ ըացարծակ արժէք մ'ունէր, պաշտուելու արժանի, ու ինք կը հիմնէր մարոյականը անձնուիրութեան վրայ, ինք կ'ստեղծէր altruisme (այլասիրութիւն) բառը, մարոյական պարտքն արտայայտող, ու կայ բնաւ պարտականութիւն, առանց բացարձակ բարիի մը հաւատքին. հիմնապէս, ներքնապէս, բարոյապէս բացարձակը միայն կրնայ ունենալ պարտաւորիչ հանգամանք, ու բացարձակ ընդունիլ՝ միշտ բնազանցութիւն ընել ըսել է: Աւելորդ է «գիտական» մակգիր մը կցել փիլիսոփայութեան, վասնզի ամէն փիլիսոփայութիւն գիտական է. միշտ տեսլականը գրականին ընդլայնումը, շարունակումն ու վերջին մեկնութիւնն է, հետեւապէս եւ կ'ենթադրէ ի հարկէ անոր ծանօթութիւնը, բայց այդ գրականը անբաւական է ինքն իր մեկնութեան: Փիլիսոփայութիւնը, ամենէն հոգեպաշտականը, չի մերժեր բնաւ գրական գիտութեանց բերած լոյսերը. բայց գրական, փորձառական ծանօթութեան յաւելում-

ներք չեն կրնար ընուլ խորհուրդին (mystère) անդունդը, որուն մէջ նայելու համար մեր բանականութեան լոյսը, անոր բնազդներն, ու անոր ալ անձանթ սրտին փաստերը — վասնզի, Փառքալի բառով, „le coeur a ses raisons que la raison ne connaît pas“ —, ատոնք միայն ունինք: Աղօտ, երեւուն լոյս, բայց թանկագին, վասնզի ան է միայն մեր լապտերը անդրագունին, բացարձակին ստուերներուն մէջ: Բայց եթէ բացարձակն յղանալէ մարդ չի կրնար հրաժարիլ, նոյն իսկ դրական իմաստասէրը, ինչ որ արմատական սկեպտիցիզմն մը պիտի ըլլար՝ ամէն գիտութեան ալ հիմերը տարակուսանաց մատնող առկախող, սակայն այդ յղացումը կրնայ այլեւայլ կերպով ըլլալ, աւելի կամ նուազ բանաւորապէս բացատրող կեանքն ու տիեզերքը, աւելի կամ նուազ ողջամիտ ու բարեբար ուղղութիւնը տուող անհատական ու ընկերային կենաց: Երբ չէկէլ տարտամ գաղափար (Idée) մը դնէ ամենայնի սկիզբը, որ, ինքզինքին անձանթ, աննպատակ, առխարխափ, կ'իրականանայ տակաւ բնութեան ու պատմութեան մէջ, ի հարկէ կը մերժէ վախճանական բարւոյ սկզբունքը, ու լոկ գոյութեամբ կ'արդարացնէ ամէն ինչ որ եղած է ու կը լինի անցեալ ու ներկայ իրականութեան մէջ, իրականը շփոթելով տեսլականին հետ ու ամենէն բիրտ իրականութիւնն ալ իր հնարաւորութեան բացատրութեանը մէջ կը գտնէ իր նուիրականացումը: Երբ Գրականութիւնը միայն փորձառականութեան սահմաններուն վերածէ մարդկային հետաքրքրութիւնն ու գիտութիւնը, ու խրատէ անկէ անդին բանի մը չհաւատալ կամ գեթ հրաժարիլ փորձելէ աւելի հեռուն մղել մեր տեսութիւնը, անհիմն կը թողու բացարձակ հաւատքի մը պէտք ունեցող ամենէն հիմնական, ամենէն կենսական ու անհրաժարելի բաները, զորս ակնարկեցինք վերեւ մեր յառաջ բերած հարցերուն շարքին մէջ, ու այն ատեն ինչպէս, նոյն իսկ ըստ իրեն, բացարձակ նուիրականութիւն մը կրնայ ունենալ մարդկութիւնը — ինքն ալ յարաբերական անցաւոր երեւոյթ մը — իրեւ կրօնքի մ'առարկայ ու անոր սէրն ալ՝ բացարձակ պարտաւորութեան հանգամանք մը: Անբնական երբ նուիրական պարտաւորութիւնը նիւթը միայն դնէ բացարձակ սկիզբ եւ աղբիւր ամէն զօրութեանց, ինչպէս կրնայ մեկնել զգացումը, խորհուրդը, արդարութիւնը լոկ նիւթին զօրութեանց կեպարա-

նափոխումներով, անկենդանին անցքը կենդանաւորին, շարժման անցքը խորհուրդին, ֆիզիքական ճակատագրականութեան անցքը բարոյական օրէնքի ազատակամ հնազանդութեան: Ահա՛ ասոր համար տեսլապաշտ բնազանցութեան մը, բանաւորական ըմբռնումը, հոգեպաշտ իմաստասիրութիւնը կը հարկագրուի մեզ իբրեւ բանաւորագոյն, որ բարձրագոյնով կը մեկնէ ստորնագոյնը, գերագոյն զօրութիւն մը դաւանելով ամենուն սկիզբը, անկէ յղացուած գերագոյն բարի մ'ամենուն ծայրը, անոր իմացականութեան ու կամքին արտայայտութիւն կարգն ու օրէնքը բնութեան, բանականութիւնն ու խիղճը՝ մարդուն, իտէալն ու յառաջգիմութիւնը ամենուն մէջ, եւ անոր մեր մէջ տածած կատարելատենչ խորհրդաւոր աւիւնին արդիւնք կրօնքն ու բանաստեղծութիւնը:

Եւ ահաւասիկ բարոյական եւ իմաստասիրական ուսմանց կարեւոր գերը, իբրեւ գիտութիւնը մարդուն եւ ընկերութեան, իբրեւ մարդկային մտաց օրինաւոր ճիգերն՝ համադրելու գոյութիւնն ու գիտութիւնը, փորձառական իրականութիւնն եւ զմեզ կապելու բացարձակին հետ, եւ իբրեւ լոյսեր, իր ճակատագրին իրացման մէջ, մարդուն ջանքերն ուղղող ու զօրացնող:

Արթութիւնը, որ միանգամայն դաստիարակութիւն պէտք է ըլլայ, պարտի այդ առաջնորդող ծանօթութիւններով զինել կեննքի լուրջ ասպարիզին պատրաստուող նորահաս ոգին, որ մքենական անխորհուրդ զօրութիւն մը չէ, եւ որ, սակայն, առանց սկզբունքի մնացած կամ գէշ առաջնորդուած, կրնայ ապրիլ կեանքը երկրաբար ըմբռնումով, առանց բարւոյ հաւատքին ու ըզձին, որք միայն կրնան նշանակութիւն եւ նպատակ տալ բարոյական կենցաղի մը, եսական անձուկ կեանքին տեղ բարեացակամ լայնածիր կեանքի մը հորիզոնը բանալ, ու ամէն ազնիւ հոգիներուն, ու իրեն ալ՝ եթէ կամի, աջակցութեամբ բարոյական ու ընկերական աշխարհին մէջ աստիճանաբար աճող ընդհանուր բարիով մ'անհասին տառապանքներէն սփոփուելու օճանն ու ոյժը դնել մարդուն մէջ, — հէք վտատակեալ գործաւոր զոր վարձատրե ու սրտապնդէ իտէալի շինուածին տակաւ բարձրացումը: Այս դերը կը կատարէր երբեմնի դաստիարակութեան մէջ կրօնական ուսուցումը, որ այսօր ալ իր դերն ունի բոլոր քաղաքակրթեալ աշխարհի դաստիարակութեան մէջ, բայց, ինչպէս ժամանակին փիլի-

սովայական դպրոցներուն, ակադեմիաներուն ու գիմնազներուն մէջ, իմաստասիրական ու բարոյագիտական բարձրագոյն ուսուցմամբ մը, յառաջացեալ ուսանողին միշտ ջնանցուած է տալ բանաւորական հաստատութիւն մը բնազանցական սկզբանց, ապա եւ կրօնքի ու բարոյականի հիմերուն, հիմա ալ — հիմա մանաւանդ որ մտքերու վրայ կրօնական հաւատալեաց ազդեցութիւնը նուազած է այնքան — մի եւ նոյն բանը կ'ընեն քաղաքակրթեալ ազգերն իրենց լիկէոններուն, գիմնազներուն, գոլէճներուն, ճեմարաններուն մէջ հաստատելով բարոյական եւ իմաստասիրական գիտութեանց դասեր: Գացէք Զուլիցերիա, Ֆրանսա, Իտալիա, Անգլիա եւ Ամերիկա, ամենուրեք պիտի տեսնէք միջնակարգ վարժարանաց մէջ Հոգեբանութեան, Տրամաբանութեան, Բարոյագիտութեան, Իմաստասիրութեան Պատմութեան դասընթացքներ. միայն Գերմանիա այդ ուսումները կը վերապահէ Համալսարանին, ու գիտենք թէ այնքան շատ ու իրարու մօտ են Համալսարանք ի Գերմանիա, եւ գերման ուսանող քրիտասարգութիւնը գունդագունդ կը դիմէ հետեւիլ փիլիսոփայական դասերուն: Ու անշուշտ աղէկ կ'ընեն. իմաստասիրական ոգին բարձրագոյն կարողութիւնն է մարդուն. տուանց անոր չի կրնար ըլլալ ճշմարիտ զարգացում ու քաղաքակրթութիւն. իր մտքորումներուն մէջն իսկ պատիւն է մարդկային մտքին, վասն զի իր խարխափանքին մէջ ալ անշահախնդիր տենչն ու խոյզն է բացարձակօրէն ճշմարտին:

Գ.

Այդ (իմաստասիրական) ոգին եղած է մարդկային յառաջգիմութեան հրեշտակը. գիտութիւններն անոր զաւակներն են. Արիստոտէլներու, Պագոններու, Տէքարդներու. ձեռքով անոր ի վեր հանած ու ճշգրտ արամաբանական մեթոտներն են որ գիտական հետազօտութեանց ապահով ու արգասաւետ ուղղութիւն ընծայած են. կրօնք, օրէնսդրութիւն, ընկերային կարգ ու սարք, անտեսական յարաբերութիւնք, բարք, գրականութիւն ու գեղարուեստը անոր ախրապետող եւ ուղղող առաջնորդութեան տակ կը բարեշրջին, իմաստասէրին աշխատութեան հանդարտիկ, խոնարհ այլ բարձրահայեաց խցիկէն առաջնորդող գաղափարները դուրս ելնելով, դիւրահասկանալի ու գործնական ձև առնելով, տակաւ

ծաւալելով, տակաւ թափանցելով իմացական խոնարհագոյն խաւերուն մէջ, դպրոցին, բնմին, գիրքին ու արուեստին միջոցաւ: Պատմական գիտութիւնը ժամանակներու ոգին ու անոր արդիւնքները սիրող փիլիսոփայական գաղափարներու մթնոլորտով կրնայ մեկնել հիմնապէս: Կրօնքներն իրենց պարունակած փիլիսոփայութեան չափովն ու որակովը կը բազդատուին ու կը դատուին: Չկայ մեծ գիտուն, մեծ բանաստեղծ, մեծ արուեստագէտ, առանց իմաստասիրական դաւանանքի, առանց ունենալու կեանքին ու տիեզերքին վրայ իր բնազանցական տեսութիւնը: Գործնական մարդեր ըլլալ կ'ուզուի. արդ, պէտք է գիտնալ թէ գերազանցօրէն գործնական են այն ուսուցիչներն որք լուրջ, ողջամիտ, պարկեշտ, բարի, քննասէր ու լաւատենչ մարդեր ըլլալու կանոնները կու տան մեզ, անոր իղձն ու տրամադրութիւնը կը զօրացնեն մեր մէջ: Ճշմարտապէս գործնական մարդերը, անոնք որ միայն իրենց շահուն համար գործնական ու այլոց մասին անտարբեր կամ վնասաբեր չեն, անոնք են որ ամէն բանէ յառաջ մարդեր են, մարդկային կարողութիւններն ու յատկութիւններն իրենց մէջ զարգացուցած ու ազնուացուցած մարդեր, ու Մարդկային Ուսուցիչներն (les Humanités) են, որպէս կը կոչուին գրական եւ իմաստասիրական ուսուցիչները, որք ամենէն աւելի կը նպաստեն այդ նպատակին: Երբ միայն նիւթապէս շահելու եւ նիւթին տիրելու տանող գիտութեանց հետամտիքը, զանց առնելով գիտութիւնն այն բաներուն որք հոգւոյն, մեր մէջ եղած բարոյական եակին կը վերարժեքին, յայտնի է թէ լայնապէս ըմբռնուած ու լաւ հասկցուած գործնականութեան մը տեսակէտով սխալ մը կը լինի. նիւթին գիտութեան մէջ զարգացած բայց հոգւով խոպան մարդը կրնայ վտանգաւոր ոյժ մ'ըլլալ ընկերութեան եւ իր անձին: Ճշմարիտ կրթութիւնը ներդաշնակ զարգացում կը պահանջէ, համերաշխաբար տրուած ուղղութիւն մը կ'ենթադրէ խորհելու, զգալու եւ գործելու կարողութեանց: Դաստիարակութիւնն արհեստ (métier) մը չէ որ կը արուի դպրոցականին ձեռքը, այլ բարբար գործունէութեան խորհրդածեալ արամադրութիւն մը, կամ, եթէ կ'ուզէք, ապրելու արհեստն է, արհեստներու արհեստը: Ուստի պէտք չէ ընել զայն միակողմանի ու կիսատ. նոյն իսկ մարդը պիտի ծայրատուէր: Բուն դաստիարակութեան շրջան մը, ինչպէս է մինչեւ երկրորդական կրթութեան

վախճանը տրուածն, պէտք է լինի ամբողջական. մասնագիտութիւնը, իր ամէն աստիճաններուն մէջ, դպրոցէն ետքի գործ է, Նախակրթարանէն կամ Ուսումնարանէն ետքի: Դաստիարակութիւնը ամբողջութիւն մ'է, բոլորակի մը պէս որ կրնայ լայն կամ ամփոփ տարածութիւն ունենալ, բայց որուն շրջանակը միշտ 360 աստիճան ունի: Զարգացած անհատին պատրաստութեան մէջ ուսողական եւ բնական գիտութիւնք, դպրութիւնք եւ իմաստասիրական ուսմունք պարտին իրենց բաժինն ունենալ, պայմանաւ որ իմաստնաբար ուսուցուին, ու միայն յիշողութիւնը չծանրաբեռնեն, այլ ուսանողին դատողութիւնը, ինչպէս նաեւ ճաշակն ու զգացումը կազմելու եւ լուսաւորելու ծառայեն: Փափուկ ու վտանգաւոր բան է ճիւղաւորումը, մանաւանդ երբ կարծուի թէ, եթէ երբեք հարկ է պահել դպրութիւնքն ու իմաստասիրական գիտութիւնները, զատուին անոնք ուսողական ու բնական գիտութիւններէն, առաջինները դասական, իրր զարդական կրթութեան մը վերապահուելով, իսկ վերջինները՝ դրական, իրագիտական կրթութեան մը, գործնական ասպարէզներու պատրաստողներու, այսինքն ուսանողներու մեծ թուին մասնաւորապէս պատշաճ: « Կարելի չէ երբեք յուսալ, կը գրէ Կիւյօ¹, ըմբռնել վերջնական մարդը տղուն եւ ո՛չ իսկ երիտասարդին մէջ. չէ հնար բնաւ նախատեսել բնաւորութեան մը մէջ բոլոր կարելութիւնները զորս կը պարունակէ, բոլոր յարմարութիւնները զորս պիտի պարզէ: ... Ամէն կանխահաս մասնաւորում հաւասարակշռութեան խաթարում մ'է. զինուոր մը, երկրաչափ մը, երաժիշտ մը պատրաստել՝ հարկաւորապէս իր բոլոր կարողութեանց տիրացած մարդ մը պատրաստել ըսել չէ: »

Իմացական կարողութեանց զարգացման տեսակէտով՝ գիտունք իսկ կը խոստովանին թէ զուտ գիտական (ուսողական ու բնական գիտութիւններով) կրթութիւն մը նպաստաւոր չի կրնար ըլլալ: Նոյն գրքին մէջ Կիւյօ կը գրէ դարձեալ. « Գիտական ուսուցումը կարծուածէն նուազ կը զարգացնէ պատճառաբանելու կարողութիւնը (raisonnement), վտան զի մտքին կը մատակարարէ կազմ ու պատրաստ իրողութիւններ ու տարազներ, ինքնիրմով

¹ Education et Hérité.

խորհելու չի վարժեցներ, նախաձեռնութիւն չի հաղորդեր, որ հիմն է ամէն անձնական խորհողութեան: ... Փիլիսոփայական ուսուցումը միայն կը զարգացնէ պատճառաբանութիւնը, ինչպէս նաեւ լաւ իմացուած գրական ուսուցումը: Ալֆրէտ Ֆույետե ալ, մեծ խորհող մը, կ'ըսէ՝. «Շատ լաւ գիտողութիւն մ'է թէ գիտական մեթոտները, մանաւանդ մաթեմատիքականները, կը նմանին եզերց վանդակորմերու (garde-fous), որք առաւելութեանց քով ծանր անպատեհութիւններ ունին. միտքը անուշագրութեան, գահավիժման, թեթեւութեան իսկ կը վարժեցնեն, վասն զի մարդ կ'ըսէ իւրովի՝ թան մը չեմ վտանգեր:», Եւ մտադիր կ'ընէ ընդհանրապէս չափագիտաց չափագիտական իրերէ դուրս ինդրոց մէջ միանգամայն մէկէ աւելի իրաց ուշագրութեան անկարող դառնալուն եւ տրամաբանելու տկարութեան՝ երբ չունին այլ եւս օճանն այն նշաններուն որոց յօդուքները գրեթէ մեքենական են: «Բնագէտին ալ վանդակորմը իր փորձերուն մէջ է, կ'ըսէ, թայց երբ իր իմացականութիւնը կը կիրարկէ գաղափարներու եւ գաղափարաց առնչութիւններու, թալկացումը կ'սկսի:» Գիտուններ իւրերին կը վկայեն գիտական ասպարէզներու մէջ անգամ յաջողելու համար լոկ գիտական ուսուցիչներու անբաւականութեան: Մեծանուն ֆրանսացի բժիշկ Տոքթ. Պրուարտէլ, որ կը նախագահէր վերջերս Սէնի բժիշկներու ընկերակցութեան ընդհանուր ժողովին, իր ասենարանութեան՝ նիւթ առնլով Գաղիոյ մէջ երկրորդական կրթութեան ծրագրին վերջին փոփոխութիւնները եւ պաշտօնապէս ընդունուած պատկաւորութեան (Baccalauréat) չորս տիպերը (Ա. լատիներէն եւ յունարէն. Բ. լատիներէն եւ կենդանի լեզուներ. Գ. լատիներէն եւ գիտութիւնք. Դ. ֆրանսերէն եւ գիտութիւնք առանց լատիներէնի), որոց ամէնքն ալ մտից իրաւունք պիտի տան Համալսարանի ամէն ճիւղերուն, կը քննէ սա կէտը թէ անոնցմէ որը կը յարմարի բժշկութեան Համալսարանի լաւագոյնս պատրաստուելու: Իր եզրակացութիւնն է թէ դասական-գրական ուսուցիչն անհրաժեշտ մասը պէտք է լինին այդ պատրաստութեան: Երբ, կ'ըսէ, կայսրութեան ատեն, 1851ին, դպրութեանց եւ գիտութեանց երկճիւղաւորում մը հաստատուե-

¹ La Réforme de l'enseignement par la philosophie.

² Le Bulletin médical, 4 հոկտ. 1902.

ցաւ երկրորդական կրթութեան (baccalauréat-lettres եւ baccalauréat-sciences), գրութիւն որ յետ փորձոյ մերժուեցաւ ինքնին — ու գիտութեան պսակաւորին իրաւունք ճանչցուեցաւ բժշկական վարժարան մտնելու, այդ կազմակերպութենէն քանի մը տարի վերջ բժշկական ուսումները տկարացան, եւ Համալսարանի Բաժիններուն (Faculté) ընդհանուր գիտողութեան վրայ այդ որոշումը ետ առնուելով՝ դպրութեանց պսակաւորի վկայական պահանջուեցաւ: Ար պատմէ թէ Հանրային կրթութեան նախարարութեան բժշկական ուսուցման մասնաժողովին մէջ՝ գիտութեանց Արտօնեալներուն (licenciés es sciences) բժշկական դպրոց ընդունուելու իրաւունք շնորհուեցաւ առանց դպրութեանց պսակաւորի վկայական պահանջուելու, եւ ընդհանուր կերպով «իրենց բժշկական ուսումներուն մէջ այգպիսիք իրենց միւս ընկերներէն ստորին գտնուեցան», մինչդեռ հակառակը տեղի ունեցած էր գիտութեանց պսակաւորի վկայականէն զերծ մնացող դպրութեանց կամ իրաւաբանութեան Արտօնեալներուն համար, որոց «գրեթէ ամէնքն ալ փայլուն աշակերտներ դարձան», Ար յիշէ նոյնպէս թէ նշանաւոր գերման քիմիագէտ Վիպիկ, երբ 50 տարի առաջ Բրուսիոյ մէջ հիմնուեցան առաջին բարձրագոյն իրագիտական (réal) դպրոցները, կը գրէր խանդավառ եւ յուսալից. «Այն օրէն սկսեալ ուր գերմանական դաստիարակութիւնը պիտի կերպարանափոխի, ուր փոխանակ ամուլ ուսումներով երիտասարդաց տարիներ կորսնցնել տալու՝ իրականութեան հետ յարաբերութեան մէջ պիտի դրուին անոնք, խելամտել պիտի տրուի անոնց բնութեան այն իրերուն որք ճշմարտութեան հետ կապ ունին աւելի քան երեւակայութեան, յեղաշրջում մը պիտի կատարուի գերմանական իմացականութեան մէջ ու առաջին կարգը պիտի գրաւէ Եւրոպիոյ մէջ», Բայց, կը յաւելու Տքդ. Պրուարտէլ, 30 տարի ետքը, իր մահուանէն 4 տարի յառաջ, Վիպիկ կը գրէր. «Ըսած եմ թէ բնական իրերով կրթութիւնը միայն յարմար էր այն երիտասարդաց որք գիտութեան պիտի նուիրեն ինքզինքնին: Փորձառութիւնը ինձի սա բանը սովորեցուց. իրագիտական դպրոցներէն (Realschule) իմ աշխատանոցս եկողներն առաջին տարին գիմազիոններու (դասական երկրորդական վարժարան) աշակերտներէն գերազանց են, երկրորդ տարին հաւասար են անոնց, եր-

բորդին՝ անոնցմէ ստորին կ'ըլլան:», Ու ասոր կը կցուի Սորպոնի ուսուցիչ բնագէտ Վիրմանի վկայութիւնը, որ անձամբ ըսած է Յքգ. Պրուարտէլի. «Երիտասարդներ, առանց դասական ուսումներ ըրած ըլլալու, փայլուն կերպով հասած են գիտական առջըդորութեան աստիճանի, բայց անգամ մը որ տղըդոր ընդունուեցան, ալ չեն աշխատիր, գիւտ չեն ըներ. եթէ առաջնորդուին՝ աղէկ կ'երթան, բայց մինակ քալելու համար բաւականաչափ մարզանք (gymnastique) չունին. նախաձեռնութիւնը կը պակսի անոնց:», Ինչո՞ւ այսպէս. — վասն զի լոկ դրական գիտութեամբ կրթութիւնը զուրկ կը թողու միտքը դասական ուսմանց ընծայած գիւրաթեքիչ մարզանքէն, ու նրբանիւթ ու զօրեղ ճարակէն, բարոյական աշխարհին վրայ անհատին մէջ կազմած խոր գիտակցութեան, ու արթնցուցած բարձրագոյն հետաքրքրութեան ու ձգտումներէն: Դատողութեանց ու զգացումներու ինչ բազմերանգ ու փափուկ հիւսքեր մտքին վերլուծման կ'ենթարկեն դպրութիւնը՝ գրական էջերու ուսումնասիրութեան եւ թարգմանական ու շարադրական վարժութեանց մէջ, եւ բարոյական ու բնազանցական ուսումներ ամենէն աւելի կը զարգացնեն փիլիսոփայական ոգին, որու յատկանիշն է, ըստ Նյայպիցի, ամէն բանի մէջ բարձրագոյնը փնտռել: Ալֆրէտ Ֆուլյեէ, վերոյիշեալ գրքին մէջ, քննելով երկրորդական ուսմանց ծրագրի բարեփոխմանց այժմեայ խնդիրն ի Ֆրանսա, սա՛ եզրակացութեան կը հասնի որ կրնան բաժանումներ ըլլալ՝ որոց մէջ լատիներէնի, յունարէնի, նոր լեզուներու եւ գիտութեանց (մաթեմատիքական եւ բնական) տրուած ըլլայ աւելի կամ նուազ տեղ, կամ թէ ինչ ինչ ուսումներ, ինչպէս հին ու նոր լեզուներէն այս ու այն, բնաւ չգտնուին, բայց ամենուն մէջ ալ իմաստասիրական ուսմունք անհրաժեշտ ըլլան, ու ծրագրին որեւէ մասերն ալ ուսուցանող ուսուցիչք փիլիսոփայութիւն գիտնան ու փիլիսոփայական ոգի ունենան: «Ճշմարիտն այս է որ, կը գրէ, մեր դրական գիտութիւնք ինքնին միայն չեն կրնար փիլիսոփայութեան տեղը բռնել. ուստի փիլիսոփայական գաղափարաց, որք միանգամայն բարոյական եւ ընկերական գաղափարներ են, պարտի վերաբերիլ ուսուցման առաջնորդութիւնը:», Դարձեալ. «Իմաստասիրութեան լուրջ ուսումներ պարտին ուրեմն ստիպողական

ըլլալ ըողոր՝ աշակերտաց համար, եւ պսակաւորութեան ըողոր ճիւղերն ալ վկայականի քննութեան գրաւոր փորձերուն մէջ ունենան իմաստասիրական շարադրութիւն մը:

Գոհունակութիւնն ունինք տեսնելու որ մեր երկար առնէ ի վեր խորհած, կամ թէ ըսենք, նոյն իսկ տեսակ մը դէմյան-դիման տեսութեամբ ըմբռնած ու ներքին խոր ու անդրդուելի համոզմամբ մերովսանն գործադրութեան դրած գաղափարներն հաստատութիւն կը գտնեն եւրոպացի խորհողներու նորագոյն յայտարարութեանց մէջ: — Գրական ուսմանց, որոց հետ արդէն շատ անգամ կը շփոթեն կամ կը միացնեն իմաստասիրականները, դաստիարակութեան մէջ ունեցած գերին համար ալ նոյնպէս լըջօրէն կարելի չէ աննպաստ գաղափար ունենալ, աւելորդ կամ իբր զարդ ինչ համարիլ զանոնք: Գրական ուսումներն՝ ի նպաստ դրական գիտութեանց՝ յապաւել կամ տկարացնել՝ տկարացնել պիտի ըլլար կրթութեան մարդկայնացուցիչ դերը: Արդէն գրականութիւնը ընդարձակ հայելի մ'է ուր ամբողջ մարդկային քաղաքակրթութիւնը կը ցոլանայ իր բարոյական, ընկերական, կրօնական, փիլիսոփայական, գիտական, ճարտարական ու գեղարուեստական ձեւերուն բարեշրջական այլ եւ այլ փուլերուն մէջ: Ուստի եւ մեծ է գրականութեան դասերու ազդեցութիւնը մտքերն ու սրտերը յղկելու գործին մէջ: Վերը տեսնուեցաւ անոնց կարեւորութիւնը իմացական կարողութեանց զարգացման մասին. անուրանալի է նաեւ նոցա մատուցած առանձին նպաստը երեւակայութեան ու գեղեցկագիտական ճաշակի, ու ամենէն աւելի բարոյական զգացումներու մշակութեան, երբ լաւ ու իմաստնաբար կ'ընտրուին ու կը մեկնուին ընթերցման, բացատրութեան, արտասանութեան ու գրագիտական դասերու եւ ուսումնասիրութեան ծառայելիք հեղինակներն ու հատուածները: Մարդուն, կեանքին, ընկերական յարաբերութեանց, մութեան եւ Աստուծոյ վրայ քանի՛ քանի՛ ընդհանուր գաղափարներ ու ճշմարտութիւններ գրականութեան խողովակով կ'անցնին մեզ ու կը տարւանան մեր մէջ անզգալաբար, իրողութեանց ու պատկերներու պաշար մը կազմելով մեր մտքին մէջ, մեր զգայնութիւնը կուելով,

1 Հեղինակն է ոտորագծողը:

մեր դատողութիւնը մարզելով, մեր բարոյական գիտակցութիւնը լուսաւորելով: Գրականութիւնը գլխաւոր միջոցն է յարաբերութեան մտնելու իմացական աշխարհին հետ եւ հոգիներու հետ շփուելու: Ինչպէս կ'ընդլայնէ այն կեանքը, ինչպէս դարերն ու աշխարհները կը բանայ մեր առջեւ, խօսակից եւ ունկնդիր ընելով զմեզ այլազան ժամանակաց ու տեղեաց խորհողներուն, պատմողներուն, քերթողներուն, գիտուններուն եւ իմաստուններուն: Ու ինչ ընդարձակ ուսուցում տեւողութեան ու միջոցին այլազան կէտերուն վրայ կանգնուած դասարեմերէն եկած, ինչ հովեր ներշնչութեան՝ իմացական երկնքին չորս անկիւններէն փչած, հակառակ տարածայնութեանց՝ ինչ վեհապանծ համերգութիւն Գաղափարին, Ոգիին, Բացարձակին ի վկայութիւն եւ հոգիներու վերելքին ի քաջալերութիւն:

(Բիզանդիոն, 1902, թիւ 1856, 1857, 1858, 1859.)

15. ԿՐԹՈՎԱՆ ՀԱՆԳԵՍՔ Ի ԶՈՒՅՑՆԵՐԻՍ

Վերջին մէկ երկու շաբաթներուն մէջ ժընէվի բոլոր գանդոնը տօնական երեւոյթ մը զգեցած էր: Արթական ամսվերջի հանդէսներուն եղանակն էր, եւ Զուիցերացոյն համար այդ հանդէսներէն աւելի ցնծառիթ, աւելի ժողովրդական բան մը չկայ: Իրաւ, հանդէսներ շատ ունի ան, տանամեակներ, յիսնամեակներ, հարիւրամեակներ հանրօգուտ հաստատութեանց կամ ընկերութեանց հիմնադրութեան, օրէնսդրութեանց եւ կամ աւագ արանց ծննդեան կամ գործունէութեան, զորս եռանդագին կը տօնէ թափօրներով, երաժշտութեամբ, խնջոյքներով ու բանախօսութեամբ, եւ իմաստուն երջանիկ ժողովրդի մը տեսիլը պարզելով սր առիթ կը փնտռէ ու կ'ստեղծէ շարունակ իր պաշտած գաղափարները հոչակելու եւ անոնց իրականացմամբ իր ստեղծած երջանկութեան գիտակցութիւնը վայելելու հաւաքապէս: Եթէ այդ առիթները չբաւեն, որք ինքնին շատ են, կան դեռ պատմական յիշատակներ, թաղային տօներ, արհեստաւորաց իւրաքանչիւր դասակարգերու յատուկ հանդիսական օրեր, եւ կամ հե-

րոսներ նահանգական, գաշնակցական կամ համազգային մրցական փորձերու մէջ յաղթութեան դափնին կորզող, որոց իրենց հայրենակիցք՝ անոնց փառքովն հպարտ՝ խանդավառ ընդունելութիւն մը կը կազմակերպեն, — ինչպէս ժընէվի ժողովուրդն ըսաւ անցեալներս գիշեր մը Լիոնի դիպաձգութեան (tir) համազգային մրցահանդէսին մէջ ամենէն առաջին մրցանակները շահող Աիյեօմ Թէլի հինգ քաջ զաւակներուն, որոց երեքը ժընէվցի եւ երկուքը Նէօշադէլցի, երկաթուղոյ կայարանէն դիմաւորելով զիրենք, ժողովուրդ եւ իշխանութիւնք, եւ զինուորական երաժշտական խումբի մ'առաջնորդութեամբ, «հունում» գոչող հազարաւոր բազմութեան մէջէն յաղթական երկայն գնացքով բերելով մինչեւ Համալսարանին կից հանրային պարտէզն, ուր կառավարութեան ներկայացուցիչք գովեստի ու երախտագիտութեան ուղերձներով անոնց ճակատը կը համբուրէին ու աջը կը թօթուէին, վասն զի ամէն ազգերու առջեւ իրենց ազգին փառքն էին բարձրացուցած, մինչ թնդանօթը կ'որոտար անոնց ի պատիւ, ու մայրերը իրենց մանուկները գրկած վեր կը բարձրացնէին՝ բեմին լոյսերուն տակ աջնիւ հպարտութեամբ մը կանգնող հերոսները ցոյց տալու համար անոնց:

Այսպիսի հանգէսներ ունի բոլոր Զուիցերիա, ինչպէս միւս նահանգաց համար ալ թերթերու նկարագրութեանց մէջ կը կարդանք, բայց դպրոցական հանգէսք ուրիշ ընտանեկան ու ժողովրդական հանգամանք մ'ունին մանկավարժութեան այս դասական հողին վրայ. անոնց մէջ կը տեսնես բոլոր այն մեծ կարեւորութիւնը զոր այս ժողովուրդ կու տայ կրթութեան գործին, այն մեծ սէրն որով ազգն ողջոյն մէկ հօր մը պէս կը գգուէ իւր ուսանող մատաղ սերունդը:

Աստ, ի ժընէվ, ամէն վարժարանք, բաց ի Համալսարանէ, ունին իրենց տարեկան մրցանակաց ու վկայականաց բաշխման հանգէսը: Վերջին մէկ երկու շաբաթներուն մէջ, «Արհեստական Ակադեմիայ»էն սկսեալ, որ հասուն աղջկանց ու կանանց եւ երիտասարդաց, արդէն մեծ մասամբ գործաւոր կամ արհեստաւոր, ձեռագրիական զարգացման ծառայող հաստատութիւն մ'է, հետզհետէ հանգէս եկան նախակրթարանք, լրացուցիչ կրթարանք, քաղաքին ու պետութեան գեղարուեստից դպրոցք, վաճառակա-

նութեան, ժամագործութեան ու մէքենագործութեան վարժարանք, արհեստագիտական վարժարանը, Գոլէժը, Ժընէվի երկրորդական կրթութեան այդ պատմական հաստատութիւնը՝ Կալվինէն իսկ հիմնուած, ու Ազըկանց երկրորդական ու բարձրագոյն վարժարանը, ու Երաժշտութեան Գոնսէսվադուառը: Երբեմն մէկ քանի գպրոցներու հանդէպ միացեալ կը կատարուէին: Կիրակի օրեր տեղի ունեցան գիւղային թաղապետութեանց նախակրթարաններու հանդէպ, ու նաեւ նոյն օրեր քաղաքին մէջ, տաճարաց յարկին տակ, կրօնական կրթութեան մրցանակաբաշխութիւնը առանձին:

Եւ նախ եւ յառաջ փութամբ ըսել թէ մրցանակի, վարձարութեան դրութիւնն ընդունուած է հոս ամէն գպրոցներու համար գրեթէ եւ ի գործ կը դրուի լայնապէս: Գիրք կամ միտալ է արուած պարգեւը, երբեմն բաց ի դպրոցին մրցանակներէն կանմասնաւոր պարգեւներ այս կամ այն Մարմնոյն կողմէն նուիրուած, ինչպէս էին Արհեստագիտական Ակադեմիային մէջ կահագործ, աստղձագործ, գոհարագործ արհեստաւորաց ու արհեստապետաց ժողովներու (chambres syndicales) կողմէ զրկուած մրցանակներ, որոց ոմանք դրամական էին: Միայն Գոլէժն ու Արհեստագիտական գպրոցը յաջողակ աշակերտաց բաշխեցին վկայագրեր (certificat), յաջողակագունից «շատ պատուաւոր», կամ պարզապէս «պատուաւոր յիշատակութեամբ»: Բայց Գոլէժը բաշխեց նաեւ իր մէկ քանի ուսանողաց յատուկ մրցանակներ գաղիերէն շարագրութեան եւ արտասանութեան, զորս մասնաւոր անհատը (prix Hentsch, fondation Alph. Scheler) հիմնած են այդ ճիւղերուն մշակման մյուս աշու նպատակաւ: Պարգեւներու այս դրութիւնը մանկավարժական տեսակէտով իր քննադատական կողմն ունի անշուշտ, եւ Ժընէվի կրթական իշխանութեանց անոր ընծայած անզը չեն տար ամէն տեղ Զուիցերիոյ մէջ. բայց անուրանալի է որ իր առաւելութիւններն ալ ունի, մանաւանդ երբ զգոյշ ու իմաստուն կերպով ի գործ դրուի եւ միայն ձեւք բերուած արգիւնքը վարձատրելու չծառայէ, այլ նաեւ ու մանաւանդ բարի կամեցողութիւնը, ճիգը, յարատեւութիւնը, ու աշակերտին ինքն իրեն հետ բաղդատաբար ալ ըրած յառաջգիմութիւնը: Սա յայտնի է թէ այս խնդիր գործնականին մէջ, ինչպէս տեսականին, բացարձակ վճիռ մը չէ ստա-

ցած յԵւրոպայ ինպաստ վարձատրութեանց ջնջման, եւ չեմ կրնար զարմանքս բռնել երբ կը յիշեմ մեր այն մանկավարժները! որք ուսանողաց նախանձորդութիւնը գրգռելու այդ միջոցին դեմ կարուկ ու աններող պատգամներ կ'արձակէին, կարծելով նաեւ իրենց միամտութեան մէջ թէ Եւրոպական ժողովուրդք, մանաւանդ մանկավարժ Զուիցերիա. վաղուց կտրած նետած են զայն իրենց կրթական եղանակաց մէջէն:

Հանգիստսրահը, քաղաքին մէջ, կամ Համալսարանի բանասիրութեանց ամփիթատարոնն է (Aula), կամ «Վիքթորիա Հօլ», կոչուած երաժշտական հոյակապ սրահը, եւ կամ մի այլ ընդարձակ շքեղ լսարան որ Salle de la réformation անունը կը կրէ եւ ընդհանրապէս կը ծառայէ կրօնական պաշտաման ու քարոզութեանց: Ժողովուրդը, մեծ մասամբ իգական սեռէ, լցած է արդէն հանգիսավայրին շրջաբոլորն ու վերնատունները, երբ որոշեալ ժամուն կը հասնին ուսանողները, իրենց ուսուցիչներէն առաջնորդուած, եւ կը գրաւեն իրենց նստարանները. գետնայարկը, որ կեդրոնն է սրահին, իրենց յատկացուած մասն է: Յաճախ թափօր կաղմած կու գան հանգիսատեղին, զոյգ զոյգ կամ չորս չորս քալելով համաչափ, դրօշակներ առջեւնէն ու զինուորական նուագախումբ որ իր պղնձեայ գործիներուն վառվառով կը գողացնէ օդը: Այս թափօրը, քաղաքին փողոցներուն մէջէն իր հանգիսական գնացքն ընելով, անցած է կառավարութեան ապարանքին առջեւէն իր յարգանքը նուիրելու համար Իշխանութեանց որոց ներկայացուցիչք անոր ճամբուն վրայ կ'սպասեն: Երբ ժողովուրդ եւ ուսանողութիւն պատրաստ են, ահա՛ պաշտօնական մարմինը իր մուտքը կ'ընէ ու կը բազմի բեմին վրայ շարուած աթոռներուն վրայ: Ամէնքն ալ զոռք հագած են ու երկար սեւ գլխարկներ կը բռնեն ձեռուրնին: Սոքա են անգամներ Պետական խորհրդին, Աւագ ժողովոյ (երեսփոխանական) Դիւանին, Հանրային կրթութեան Պաշտօնատան եւ Քաղաքապետական ժողովոյն ներկայացուցիչք, սնօրէնք, ուսուցիչք եւ քննիչք (Jury): Յաճախ անոնց գլուխը կը տեսնուի Պ. Էօժէն Ռիշառ, որ Պետական խորհրդոյ նախագահն է, այսինքն ժընէվի Հանրապետութեան Գահերէցը, ու միանգամայն պետը հանրային կրթութեան պաշտօնատան, եւ որ անձամբ կու գայ շատ անգամ ու գիւղերն իսկ կ'երթայ անձամբ նախա-

գահել կրթական հանդէսներուն: Փոքր մարդ մ'է, խարտեաշ ալիսառն մազերով, բարի ու մտացի դէմքով, դեռ քիչ ասնն յառաջ Համալսարանի մէջ իրաւարանութեան ուսուցիչ: Բեմին մէջտեղը, նախագահի թիկնաթոռին առջեւ, կայ սեղան մը, որուն վրայ են մրցանակի փայլուն գրքերը, միաաշնները, վկայականները: Նախագահը նիստը բացուած կը հրատարակէ, եւ եթէ ուսանողներու կողմէ խմբերգ մը չկայ երգուելու, խօսքը անմիջապէս կու տայ անոր որ պիտի կարգայ տեղեկագիրը: Բայց սովորաբար աշակերտաց կողմէ (նախակրթարանաց, արհեստագիտական դպրոցի, Գողէժի ստորին բաժանման եւ աղջկանց երկրորդական դպրոցին) խմբերգ մը կ'երգուի ի սկզբան, երեք կամ չորս ձայներով, ճարտար հիւսուածքով խմբերգ մը, որուն կ'առաջնորդէ ուսուցիչ մը կամ վարժուհի մը, եւ որուն մէջ արդէն փոքրիկ Ձուլիցերացիք ցոյց կուտան երաժշտութեան համար իրենց ունեցած ճաշակն, այնքան կանոնաւորութեամբ, ճշգրութեամբ ու շնորհքով կ'երգեն անշփոթ եւ հեշտ: Իրենք են որ, դպրոցէն յետոյ, պիտի երթան սուսարացնել գործիական կամ ձայնական երաժշտութեան ընկերութեանց կարգերը որք, զանազան անուններու տակ, La Muse, L'Ondine, La Musique d'Elite, La Fanfare genevoise, La Société du chant sacré, L'Harmonie nautique, եւն), մեծ վարպետներու առաջնորդութեամբ՝ կը մշակեն երաժշտական արուեստը եւ ամբողջ տարին իրենց ընտիր նուագահանդէսներով ժողովուրդը կ'զմայլեցնեն: — Տեղեկագիրը, որ անհրաժեշտ մասն է դպրոցական հանդէսներուն, նախակրթարանաց մասին կը ներկայացնէ նախնական կրթութեան ընդհանուր տեսուչը կամ մի ներկայացուցիչ հանրային կրթութեան պաշտօնատան. Գողէժի եւ նման հաստատութեանց համար անօրէնն է տեղեկագրեր: Պարզ ու գրեթէ չոր ոճով շարագրուած եւ այցելու տեսչաց ու պաշտօնական քննչաց վկայութեանց վրայ հիմնուած, տեղեկագիրը կը պարզէ վարժարանաց տարեկան ընթացքը եւ քննութեանց արդիւնքը: Վերջացող դպրոցական տարւոյն մէջ քանի աշակերտք յաճախած են վարժարան, այդ թիւ նախորդ տարւոյն բաղդատմամբ աճած է թէ նուազած. օտարականաց թուոյն համեմատութիւնը ինչպէս է բնիկներու հետ (եւ պէտք է ըսել թէ բաւական մեծ է, $\% 30$, թողլով Համալսարանի Ուսա-

նողները որոց 540ը օտարազգի են, ամբողջութիւնն ըլլալով 825)․ աշակերտք կանոնաւոր յաճախում ունեցած են․ բացակայութեանց եւ յապաղմանց թիւն որքան եղած է․ ուսանողաց կարգապահութիւնը ինչ աստիճան է։ Ծրագիրը փոփոխութիւն կրած է ու անոր մէն մի ճիւղի գործադրութիւնը ինչ արդիւնք տուած է դասարանաց մէջ․ ուսուցման նիւթական միջոցք եւ գործիք՝ բաւական եղած են, եւ եղանակներն ինչ զարգացում ստացած են․ որք են թերիք ու բաղձալիք այդ մասին․ վարժարանաց շէնքը, կարասիք ու մաքրութիւն փափաքուած վիճակի մէջ են, եւ օգն ու լոյսը կը մտնեն Տոն պէտք եղածին պէս․ դպրոց եւ տուն, ուսուցիչք եւ ծնողք բաւական համերաշխ են միմեանց հետ, ուսուցչական մարմնոյն մէջ փոփոխութիւն տեղի ունեցած է, եւ կան մահուամբ հեռացողներ, նոյն օր սգալի ու երախտագէտ յիշատակութեան մը առիթ․ — ահա այն գլխաւոր խնդիրները որոց վրայ կը խօսի տեղեկագիրը, բաղդատութիւններ ու դիտողութիւններ ընելով, առաւելութիւններ ու թերութիւններ ի վեր հանելով, ուշադրութիւն հրաւիրելով բարոյքելի եւ զգուշալի կէտերու վրայ, եւ կը վերջացնէ ուսուցչաց, վարիչ մարմնոց ու ծնողաց ուղղելով խնդակցութեան ու քաջալերանաց ջերմ խօսքեր։ Կրօնական կրթութեան համար կատարուած մրցանակաբաշխի հանդէսներուն մէջ տեղեկագիրը կը ծանրանայ մասնաւորապէս սոյն կրթութեան կարեւորութեան վրայ։ Կառուփի մէջ (Ժրնէվի մօտակայ թաղ մը) տեղեկաբերը, որ ժողովրդապետ մ'էր, կ'ըսէր թէ «Տղոց կրօնական եւ բարոյական ուսուցման կարեւորութիւնը պայծառապէս դուրս կու գայ այն իրողութենէն թէ ընկերութիւնը պարկեշտ, ուղղաբարոյ, խղճամիտ տարրերու պէտք ունի փնասակար տարերց աղիտաբեր ձգտումները հակակռելու համար։» — «Կէս դարէ ի վեր, կ'ըսէր դարձեալ, գիտութիւնը ահագին յառաջդիմութիւններ ըրաւ, պարտինք հպարտ ըլլալ ազոր համար․ գիտութեան նպատակն է մերձեցնել զմարդիկ, լուսաւորել զանոնք, առաջնորդել զանոնք այն ճամբուն մէջ որ կը տանի իրաց ներկայ վիճակէն գերազանց վիճակի մը։ Բայց խորհողին համար մեր արդի ընկերութիւնը իւր ծոցոյն մէջ կը կրէ ախտային սերմեր զորս վտանգաւոր է թողուլ աճել, զի եթէ ըլլայ որ յառաջ բերեն իրենց արդիւնքներ, մեծ կը լինի

յետագնացութիւնը: Ահա՛ սորա համար կրօնի ուսուցիչք պարտին արմատացնել պատանութեան սրտին մէջ բարւոյն, գեղեցկին, ճշմարտին սէրը, սէրն այն ամէն բանի որ մարդը տկար բնութեան ստորին բնազդներէն վեր կը բարձրացնէ: Ու ատենաբանը յորդոր կը կարդար ծնողաց՝ կրօնուսուցներու «գեղեցիկ բայց յաճախ տաժանագին», գործին աջակից ըլլալ:

* * Ցեղեկագրին ընթերցումէն յետոյ, նախագահն է որ խօսք կ'առնու: Երբ թաղին քաղաքապետն է, կամ թաղապետական ժողովին նախագահը, կամ Հանրային կրթութեան պաշտօնաւան մի ներկայացուցիչը, քանի մը վայելուչ խօսքերով շնորհակալութիւն կը յայտնէ կրթական գործին բոլոր աշխատողներուն, ապագայ բարւոքումներու համար ամենուն եռանդը կը գրգռէ, եւ ուսանողաց, ընթացաւարտ թէ մնացող, կ'ուզէ հայրական խրատներ, ընտանեկան շեշտով մը խօսելով անոնց հետ, իբր թէ ամէնքն ալ իր զաւակներն ըլլային: Առաքինութիւնքը զորս կը յանձնարարեն մանաւանդ այս նախագահք՝ կամքի կորովը, աշխատութեան սէրը եւ պարտուց հաւատարմութիւնն են: Կենաց դժուարութիւններուն մէջ անոնք պիտի ըլլան, կ'ըսեն, իրենց զօրաւիգը, իրենց յաջողութեան երաշխաւորը եւ իրենց մխիթարիչը: Իրենց վստահութիւնը իրենց անձին վրայ դնել կը քարոզեն:

Երբ Էօթէն Ռիչառ է որ կը նախագահէ, վստահ ես որ գեղեցիկ ճառի մը պիտի ունենդրես, գրական յատկութիւններով, իմաստասիրական տեսութիւններով, մանկավարժական նկատողութիւններով զարդարուն ու պարարուն: Նա այս ամ երեք կարեւոր բանախօսութիւններ արտասանեց նախակրթարանաց, Գոլէժի եւ Աղջկանց երկրորդական վարժարանի հանդէսներուն առթիւ:

Նախնական կրթութեան վրայ խօսելով, կը շեշտէր պէտքն միաբան ու համերաշխ գործակցութեան դաստիարակին ու ծնողաց, ինչ որ կրնար ըլլալ արդիւնք անոնց յաճախակի բանակցութեան, որով տեղի չեն ունենար բնաւ այն հակասութիւնք ուսուցչին ու ծնողին տեսութեանց ու վարմանց մէջ որք չեն խուսափիր մանուկին սրտասուլթենէն ու կը փնասեն յաչս իրեն իր կենաց առաջնորդներուն բարոյական հեղինակութեան: Եւ առ

այս հարկ է որ ծնողք շահագրգռուին իրենց զաւկին դպրոցական կենաց առօրեայ փոքրիկ դէպքերուն առանց ձանձրոյթ զգալու: “Խիստ յաճախ երբ մանուկը պատմէ իր դպրոցական կեանքին պատահարները, իրեն ըսած են. Ա՛հ, նորէն այդ դպրոցի պատմութիւններդ. ուրիշ բան մ'ունիս ըսելու: Է՛հ, կ'ըմբռնենք թէ այդ հայրը, գործի օրուան մը հոգերէն յետոյ, սիրէ պահել իր սան երեկոյի քաղցր ժամուն համար ջինջ խաղաղութեան մթնոլորտ մը, թէ իւր աղայոց խնդալի շաղփաղփէն ուզէ միայն թարմութիւն ու հանգիստ քաղել, եւ թէ տաղակալի երեւի իրեն անոր մէջ ալ գտնել մանրանկար պատկերն այն գձուձ ու տխուր բաներուն զորս երջանիկ էր պահ մը մոռնալուն: Բայց դաստիարակութիւնն յարատեւ զոհողութիւն մը չէ՞ միթէ: Չե՞նք գիտեր թէ իրենց, ո՛չ թէ մեզի համար պարտինք սիրել մեր զաւակները: Արդ իրենց պատմութիւնները, զորս երբեմն չլսել կ'ուզէիք, տեղեկութեան աղբիւրներու ամենէն պատուականը կը մատակարարեն ձեզ:” Ըստ որում դպրոցին հաւաքական կեանքն ընկերական կենաց աշկերտութիւնն է եւ շատ չտեսնուիր որ կենաց ընթացքին մէջ իր բնաւորութեան նախնական հիմը փոխէ սակամ նա մարդը որ դպրոցէն ելնելու ատեն վարանոտ կամ հաստատակամ էր, երկչոտ կամ յանդուգն, անձնասէր կամ ուրիշին օգնելու յօժար, մեծամիտ կամ մարդընտել, պարզ կամ կեղծաւոր, միջամտել պէտք է դպրոցական կեանքի սկիզբէն, եւ եթէ չենք կրնար — ինչ որ իդէալը պիտի ըլլար — անտեսանելի կերպով ներկայ ըլլալ դասերուն եւ մանաւանդ զբօսանաց, գէթ ունկնդիր պէտք է ըլլալ սիրով աղուն ըսածներուն որոց մէջ անքօղ կը տեսնուի իւր բոլոր հոգին: Ու մանկավարժ պետական մարդը կը վերջացնէր սա խորիմաստ խօսքերով. “Այս աղայոց երջանկութիւնը կամ ապերջանկութիւնը մեր ձեռքով պիտի զանգուի: Կանաչ ցորենաբոյսը կը բարձրանայ հասկով ուռած: Երիտասարդ Սպարտացուց պէս պիտի կրնան երգել օր մը. — Ենք ինչ որ եզաք, պիտի ըլլանք ինչ որ էք: — Աշտամբանք թէ երախտագիտութիւն, յոյս թէ մորմոք, ինչ պիտի հնձենք: Պատասխանատուութիւնը կը ծանրանայ մեր վրայ եւ մեր ամենուն վրայ: Մեզմէ հայրենիքի սիրովն ազնուացած նկարագրով մարդիկ կ'ուզեն: Խորհինք — միշտ — այդ հայրենիքին վրայ, եւ մեր

արտերն անոր մէջ պիտի գտնեն մեր զաւկները մեծցնելու գաղափիրը։

Ճընէվի Գոլէժը երկու մասի կը բաժնուի, Ստորին բաժանում, Վերին բաժանում կամ Ժիմնազ, առաջինը 3, երկրորդը 4 տարիներու ընթացքով։ Այս վերջինն իր մէջ չորս հասուածներու կը ձիւղաւորուի, Դասական (classique), Իրագիտական (réal), Ծարտարական (technique) եւ Մանկավարժական (pédagogique), որք երկրորդական կրթութեան բարձրագոյն մասը կ'աւանդեն արդէն իսկ մասնագիտական բաժանեալ ուղղութեամբ, թէ եւ ունին հասարակաց ու միացեալ ձիւղեր։ Ըսել է թէ ժիմնազի ծրագիրը այնքան շատ ծանրաբեռնեալ չեն ինքնին, քանի որ այս ձիւղաւորմամբ ինչ որ հասուածներէն միոյն ծրագրին մէջ կայ՝ կրնայ պակսիլ միւսին ծրագրին մէջ կամ թէ թեթեւ մասով մը մտնել անոր մէջ։ Այսուհանդերձ երկրորդական կրթութեան ծրագրի դէմ հոս եւս կայ խճողման կամ չարավաստակութեան ամբաստանութիւնը, եւ այդ խնդրոյն վրայ կը ծանրանայ մանուանդ Պ. Էօժէն Ռիշար Գոլէժի հանդիսին մէջ արտասանած բանախօսութեամբ։ Ար յայտարարէ թէ այս մասին մուծանելի բարւոքմանց նկատմամբ ընտանեաց հայրերու հետ սկսուած բանակցութիւնք աւարտած են, որք սակայն սա իրողութիւնը հաստատած են թէ այսօրինակ խնդիրներ զանազան երեսներ ունին եւ տեսակէաներու համեմատ տարբեր լուծումներ կը ներկայացնեն։ Եթէ ուղուի ուսմանց առարկայից թիւը նուազեցնել, մտաւոր կրթութեան ծայրատու մը, կանխահաս մասնաւորումէ մը կը վախցուի, իսկ եթէ թիւը պահելով՝ իւրաքանչիւր ձիւղի վերաբերեալ ծանօթութեանց քանակը վերածուի, այն ատեն ինչ որ տարածութեան կողմէ կը շահուի՝ կը կորսուի խորութեան կողմէ, եւ թէ եւ շատ կամ ամէն բանի վրայ լոյսեր ստանայ ուսանողն, ըստ ամէնքն ալ աղօտ ու տարտամ կը լինին ու շուտով անհետանալու ենթակայ։ Բայց ինքն, ատենաբանը, կը կարծէ թէ կարելի է գտնել միջին ճամբայ մը. — Թողուլ որ ուսանողը վերջին տարիներուն մէջ մի բանի ձիւղերու ընտրութիւն ընէ եւ զանոնք խորապէս ուսուցանել իրեն, իսկ ուրիշներու վրայ ընդհանուր լուսաւորութիւն մը տալով գոհանալ։ Արդէն, երկրորդական ուսմանց նպատակն ու

անոնցմէ ստացուելիք էական առաւելութիւնը մտքին պատրաս-
 օթիւնը, իմացականութեան հերկը չէ, կ'ըսէ. արդ եթէ այս աշ-
 խատութիւն փոքրաթիւ հրահանգաց վրայ կատարուի, ֆեսս մը
 չի կրեր, ընդհակառակն՝ կը շահի, աստ խորութիւնը տարածու-
 թեանն աւելի կարեւոր ըլլալով: Այն ատեն գէթ մարդ մտակն
 տեսածին տեւական ծանօթութիւնը պիտի ունենայ, եւ երեք
 գիտցուած բան նախամեծար չէ՞ վեց մոռցուած կամ գէթ անորոշ
 բաներէ:», Ասկէց զատ, մտքին այդ ամփոփումը, կրթութեան
 (instruction) դաշտին այդ անձկացումը կարեւոր կը համարի
 Պ. Ռիշար, մանաւանդ բարոյական կրթութեան, դաստիարակու-
 թեան տեսակէտով: «Պէտք է խոստովանիլ, կ'ըսէ, իւրացնելիք
 նիւթերուն կոյար արգելք մ'է ո՛չ միայն իմացական, այլ եւ բա-
 րոյական դաստիարակութեան ո՛ր եւ է փորձի:», Ար գտնէ որ
 դաստիարակութիւնը չափազանց կ'անտեսուի, թէ կարի այլամերժ
 կերպով զուտ իմացականութեան դաշտը ընդարձակել աշխա-
 տուեցաւ վերջի ժամանակներս եւ թէ ծայրայեղութեան մէջ
 ինկած են ամէն առաքինութիւն ուսման միայն վերագրելով, իբ-
 րեւ թէ ան իրեն նպատակն ըլլար, մինչդեռ միջոց մը միայն
 կրնայ ու պարտի ըլլալ: Գրային, մատենական (livresque) կրթու-
 թիւն մը կու տանք այսօր, ու նոր սերունդը չափազանց կամ
 մանաւանդ գէշ կը կարդայ: Այդ անյագութիւն ընթերցման
 մէջ՝ կ'սպաննէ անհատականութիւնը որ պարզապէս ընդունարան
 մը կը լինի եւ կը կորսնցնէ քիչ քիչ անկախութեան ունակու-
 թիւնն, ինչպէս ամէն սկզբնականութիւն: Միտքը նորացնելու,
 կահաւորելու զբաղման մէջ ալ ժամանակ չի ֆեսս կամքի զսպա-
 նակները ձգտեցնելու եւ նկարագիրները դարձնելու: Աստի թոյլ,
 ախտակիր, «ալ ուզել չկրցող» երիտասարդութիւն մը, ինչպէս
 կ'ըսեն անոր ներկայացուցիչներուն մէջէն անոնք որք ամենէն լաւ
 գիտեն բացառել ինչ որ իրենց «հոգւոյ վիճակը», կ'անուանեն:
 Բոյց պէտք է խորհիլ. «հզօր հոգիները, բարոյական արիութիւնք
 աւելի թանկագին եւ աւելի օգտակար են ժողովրդի մը քան նոյն
 իսկ ներհունութիւնը (érudition):», Ահա՛ այսպիսի տեսութիւններ
 ջուրհեղեղի պետական մարդը դէմ կ'եննէ արդի կրթու-
 թեան եւ անոր հիմնական բարենորոգման պէտքը կը հուշակէ:
 «Ստիպողականութիւն կայ վերստին ձեռք առնելու դաստիարա-

կուլթեան գործը, նոյն իսկ իւր հիմերուն մէջ, զայն հիմակուռնէ աւելի լաւ հասկնալու եւ անոր լաւագոյն բաշխում մ'ընելու համար: Իմացականութիւններ ձեռակերտել լաւ է, խիղճներ կազմելը լաւագոյն պիտի ըլլար:»

* * Օր մը վերջը — եւ այդ օրը վերջինն էր քաղաքին դպրոցական հանդիսական օրերուն — Պ. Էօփէն Ռիշար ուրիշ կարեւոր ու գեղեցիկ ճառ մը կը խօսէր: Աղջկանց երկրորդական ու բարձրագոյն վարժարանին հանդէսն էր ու կնոջ դաստիարակութեան խնդիրն էր նիւթը: Ատենաբանը կը յիշեցնէ այդ դպրոցին խոնարհ սկզբնաւորութիւնը 50 տարի յառաջ, նորութիւն մը, գրեթէ յանդգնութիւն մը, « վասն զի կնոջ դաստիարակութեան դատը դեռ հեռի էր շահուած ըլլալէ:» Այսօր փառաւոր հաստատութիւն մ'է այն, երկու բաժանումներով, ստորինը չորս եւ վերինը երեք տարուան դասընթացքով, այս վերջինը ճիւղաւորեալ զբաղման եւ մանկավարժական հաստատումներու, հարուստ ծրագրովք զօր կը գործադրեն ամենէն մեծ անունները կրող ուսուցիչներ, որոնց շատք ուսուցիչք համալսարանի: Ախտադարեան միջոցի մը մէջ արժանեաց ու մատուցեալ ծառայութեանց ճոխ պսակ մը քաղած է. « անոր կը պարտինք, կ'ըսէ նախագահատենաբանը, ուսեալ ժընէվցուհայն այն տիպարը որ գիտէ առանին խնամքները կցորդել մտքի հաճելի հանգամանաց, կինն ընկեր առնական ուղեղն զբաղեցնող հոգերու, բարեխորհուրդ այն կինը որ հմտութիւնն ու իր սեռին հրապոյրները միացուցած՝ միանգամայն ոյժ մը եւ զարդ մ'է իւր ընտանիքին համար: Նա կազմեց լուսամիտ մայրեր, կարող բարձր տեսակէտէ մ'առաջնորդել իրենց զաւակաց դաստիարակութեան, կարող ամենէն համեստ տունը ընելու վառարան մ'այնքան սրտին որքան մտքին համար:» Բայց իգական սեռի ընդհանուր մշակման այս հաստատութեան քով Աւագ Ժողովը հարկը տեսածէ աւելի համեստ ձգտումով՝ այլ ոչ նուազ կարեւոր ու կենսական աղջկանց դպրոցի մը, այն է տնտեսաբարական դպրոցի մը որուն բացումը որոշած է: Սա նպատակ պիտի ունենայ աւանդել այն գործնական ծանօթութիւնները, անհրաժեշտ տեսական գիտելեաց փոքրագոյն թուով մ'ամրապնդուած, զորս պարտի ունենալ ամէն լաւ տանտիկին որ ինքզինք պատասխանատու կ'զգայ զինք շրջապատողներուն երջանկութեան.

Հաստատութիւն մը, նպատակայարմար յատուկ կազմակերպու-
 թեամբ, որ պատրաստէ ճշմարիտ տանտիկիներ միանգամայն եւ
 լուսամիտ կիներ: Այս Հաստատութիւն, որպէս կ'երեւի, պիտի
 ըլլայ նման անցեալ տարի Լա Շո-տը-Ֆօնի մէջ Հիմնուածին որ
 կերակուր եփել, շուկայէն սննդանիւթոց եւ այլ պիտոյից գնումներ
 ընել, տուն տեղ մաքրել ու սեղան դնել, կար ու կարկուտք ընել,
 արդիւն եւլն, կ'ուսուցանէ գործնապէս՝ առտնին տնտեսութեան
 եւ առողջապահութեան դասերով հանդերձ: Այս ծանօթութեանց
 ամէն կանայք պէտք ունին. անոնց շնորհիւ կարգն ու բարօրու-
 թիւնը կը տիրեն ու կը շատնան տուներուն մէջ, ընտանիքներու
 խողաղութեան այդ աղբիւրները: Այս դպրոցը չպիտի կանգնի
 հակառակորդ միւսին, եւ անոր հիմնադիրք միտք չունին բաժա-
 նում մը յառաջ բերելու աղբիկներուն մէջ, մէկ կողմէն առտնին
 նիւթական հոգերով զբաղելու ու միւս կողմէն իմացական բար-
 ձրագոյն մարզերը սաւառնելու սահմանուած դասեր: Ատենաբանը
 կը հերքէ ուժգին այս գաղափարը: «Ծանրապէս պիտի սխալէին
 այսպէս կարծողները. երկու դպրոց ունենալով չենք ուզեր երկու
 կիներ յառաջ բերել»: Աւետարանի Ղազարին երկու քոյրերը
 օրինակ առնելով, չ'ուզեր ան որ Մարթա միայն տունը հոգայ ու
 անուշադիր ականջով միայն լսէ աստուածային վարդապետին խօս-
 քերը, եւ Մարիամ ալ ընկղմի միայն անոր նկատողութեանը մէջ.
 Ինչո՞ւ Մարթա բաժին չունենայ ասկէ, ու Մարիամ ինչո՞ւ չհաս-
 կնայ թէ պաշտօններու ամենէն խոնարհն ալ պարտաւորութեան
 ցուքով մը կը շողազարդի: Աինը նախախնամութիւն մ'ի գործ կը
 դնէ. զայն յատկանշող բնագոյր մայրութեան բնագոյն է. քոյրը
 յաճախ իր եղբայրներուն «մայրիկն», է — եւ «մերթ փնջ աւելի
 գորովագութ մայր մարդու մը համար քան իւր իսկ աղջիկը»:
 Աւելի մոգիչ հրապոյրներ, գեղեցկութեան շքեղութիւնք, աշ-
 խոյժ մտքի փալիւրուն խաղեր չեն կրնար կնոջ յատուկ սիրոյ վե-
 հապետութեան տեղը բռնել. — առանց անոր անկատար է կինը:
 Նա պէտք է որ ճանշնայ իր յատուկ պաշտօնը եւ ամէն կողմերով
 անոր պատրաստուի, նոյն իսկ ամենէն խոնարհ սեպուած իրերով
 որք սակայն իրենց բանաստեղծութիւնն ունին եւ մարդուն երջան-
 կութեան մէջ իրենց կարեւոր դերը: «Այս աշխարհի մեծ տառա-
 պանքը արդեօք յառաջ չի՞ գար մէն մի սեռի դերին երկարա-

ձգեալ անտեսուէն, երկար թիւրիմացութենէ մը որ յաճախ փոխադարձ ոխերու կը զառածի՝ մթացնելով դաստիարակութեան հարցը՝»

* * Այսպէս գեղեցիկ ճշդելով կնոջ դերը եւ ասոր համապատասխան դաստիարակութեան մը պահանջները, Պ. Ռիշար կ'անցնի դիտելու թէ աղջիկ ուսանողներու վրայ ընդհանրապէս անսնուած ծայրայեղ ու խղճամիտ հետեւողութիւնը ու կապուիլը դասերուն բնագրին, գրին, դասախօսին բառերուն, հաւատարիմ ու սարկական ընդօրինակումն անոր խօսքին եւ հետեւապէս ուսանելու համար յիշողութեան միայն ապաւինումը տարակուսիլ կուտան երբեմն թէ դպրոցն աղջկան համար իրօք իմացականութեան զարգացուցիչ միջավայր մ'ըլլայ: Աշխատելու այդ եղանակ անմշակ կը թողու իմացական նախաձեռնութեան եւ բարոյական անկախութեան յատկութիւնները որք այնքան կարեւոր են կնոջ որքան այլ մարդուն: Թերեւս այս կը բացատրուի, որպէս կ'ընեն ձեռնհաս դիտողք, Ժառանգական անպատրաստականութեամբ, կինը մինչեւ մեր օրերը դուրս ձգուած ըլլալով ճշմարտութեան խուզարկութեան համար հաւաքական աշխատութիւններէ, ստեղծիչ՝ կազմակերպիչ կամ արտադրիչ գործունէութիւններէ, որով անզարգացեալ մնացին ինքնաբեր խոյզի, սկզբնական տեսութեան յատկութիւններ, ինչպէս համադրութեան ու խելամտութեան ոգին: Ինչ որ ալ ըլլայ, ատենախօսը այլ եւս անարդարանալի կը գտնէ այսօր այդպիսի սովորութիւն մը եւ կը յորդորէ աղջիկները իրենց նօթերը չափաւորել ու անձնական խորհրդածութեան եւ ուսումնասիրութեան աւելի ոյժ տալ. «այդ ճիգը միայն երկարաձգուելով կրնայ ամրացնել առն եւ կնոջ իմացական հաւասարութիւնը՝ ապահովել վերջնոյն անկախամտութիւն եւ անձնականութիւն:» Եւ դիտելով որ գուցէ հանդիսի այնպիսի ցնծառիթ օր մը այդօրինակ անաչառ դիտողութիւններ անպատեհ դատուին, իմաստուն մենտորի մը պէս կ'ըսէ. «Կեանքը, որ լուրջ բան է, յանձն պիտի առնու ապացուցանել ձեզ թէ զձեզ սիրողք սիրելու լաւագոյն կերպ մը չունէին քան կանուխէն վարժեցնել զձեզ ճշմարտութեան, վասն զի ճշմարտութիւնը ամենէն թանկագին պարգեւն է որ կրնայ տրուիլ մարդկային իմացականութեան մը:» Եւ իր առջեւ նստած այդ

բոր Նորահայլ կեանքերուն ապագային անստուգութեանն հանդէպ մտախոհ, հայրենիքի մ'անունով խօսող մարդու մը բոլոր վեհութեամբ ու իղձերով կ'աւելցնէ վերջացնելու համար. «Այսօր մեր զարդն ազգային, մեր սիրելագոյն յոյսերուն շնորհագեղ ծողկափթթումը, վաղը պիտի լինիք հայրենեաց բարոյական առաջին զօրութիւններէն, անոր ազնուագոյն առաքինութեանց աւանդապահներէն մին: Ապագան, իւր անստուգութիւններով քողարկուած, ընդ առաջ կու գայ ձեզ: Ինչպէս կրնանք խօսիլ ձեզ առանց յուզուելու: Գուք պատանութեան հեշտագին, այո՛, բայց նաեւ վճռական ժամուն մէջ կը գտնուիք: Չեր հոգիները, տակաւին իրենց երիտասարդութեան թարմութեան մէջ ու գարունով խնկաւէտ, կը բացուին կեանքի. արդէն կը պարզեն իրենց սարսուռն թեւեր: Ո՛ւր պիտի երթան, աշխարհի վազքին մէջ տարածուած: Ա՛հ, իցիւ, լսելով քերթողին ձայնը, «Ելնէի՛ն վեր, ելնէի՛ն միշտ այն ոսկեղէն սանդղին վրայ որ դէպ Աստուած կը բարձրանայ»:

Այս երեք ատենաբանութեանց վերլուծումն ու քաղուածք բաւական երկարեցին սոյն յօդուածը, բայց կը խոստովանիմ որ չկրցայ դէմ դնել զանոնք գէթ այսչափով ընթերցողներուն ծանօթացնելու փափաքիս, յուսալով որ օգտակար խորհրդածութեանց նիւթ կրնան մատակարարել անոնց: — Այս պաշտօնական ճառերէն անմիջապէս յետոյ կ'սկսի մրցանակաց, վկայագրոց եւ յիշատակագրոց բաշխումը, ու յետոյ ալ կը մնայ միայն նախագահին յայտարարել թէ նիստը վերցած է: Բայց երբեմն աշակերտաց կողմէ երկրորդ խմբերգ մը կ'երգուի, ինչպէս ըրին երկրորդական վարժարանի աշակերտուհիք, որք շատ արուեստով երգեցին Մոցարդի «Դիւթեալ սրնգ»-ին չորս խմբերգները ընկերակցութեամբ այր եւ կին արուեստասէր նուագածուներու խմբի մը: Մրցանակաբաշխութեան ատեն աշակերտաց ու ժողովրդին կողմէ մասնաւոր համակրութեամբ կը ծափահարուին այն ուսանողք որք հանրութեան սիրելի անուն մը կը կրեն, նախկին հանրապետութեան նախագահի մը, ժողովրդական երեսփոխանի մը կամ գրագէտի մը, արդի պետական յարգուած մարդու մը: Ճարտարական գեղարուեստից վարժարանի շրջանաւարաններէն յաջողակին (Նուի Շմիտ), զոր տեղեկագիրը «Հանդիսին դիցազնը»

կանուանէ, վկայագիրը յանձնուած պահուն ներկայ եղող նուագախումբը կարճ հատուած մը կը նուագէ ի պատիւ: Հայ պատանի մը, Երուանդ Գարամանեան, Արուեստագիտական վարժարանի աշակերտներէն, եւ Ջարեհ Շէրիտճեան, Երաժշտութեան Գոնսէտվաթուառի ուսանող, կը ներկայանան մրցանակ ընդունելու: Այս վերջին դպրոցի հանդէսն էր միայն որ պարգեւներու մաշխմամբ չ'աւարտեցաւ. ընդհակառակն, անկէ վերջ կ'սկսէր երկրորդ մաս մը որ կատարեալ նուագահանդէս մ'էր: Դպրոցին յաջողակագոյն աշակերտուհիք եւ մէկ աշակերտ հետզհետէ իւրաքանչիւրն իր վարպետին թեւը մտած ի բեմ գալով, երաժշտական բարձր հատուածներ նուագեցին արուեստագիտի ճարտարութեամբ, որը դաշնակի, որը ջութակի, որը բամբ ջութակի վրայ. երեք օրիորդք, արդէն տաղանդաւոր երգչուհիք, երգեցին՝ մին Ռոսինիի «Պաուպիէ տը Սէվելլ», ի քավադէինը, միւսը Մէյերպերի «Աֆոխթէն, ին սէն տիւ մանսընիյնէն», եւ երրորդը վերաիի «Այտա, ին մէկ արիան», եւ ամենէն վերջ ուսուցիչ Գեդդընի առաջնորդութեամբ երգուեցաւ, աշակերտուհեաց պարի մը կողմէ, պարագային համար խօսք եւ եղանակ յատկապէս շարադրուած խմբերգ մը, լէ լավանտիէն: Ամէքն ալ եւ ոմանք քանիցս ի բեմ կոչուեցան ներկայից շնորհաւորութիւնքն ընդունելու համար, եռանդագին ծափահարութեանց մէջտեղ:

Հանդէսներու աւարտը գեղեցիկ է — հանդիսականսց կողմէ զսպուած ուրախութիւններու եւ շնորհաւորութեանց արտաբերութեան ժամն է, բակին մէջ կամ փողոցը, հանդիսավայրին դուռներուն առջեւ ուր խումբ խումբ ցրուելէ առաջ, կանգ կ'առնու պահ մը մազմութիւնը: Զուարթ ճուղողին մը կը թռչաի. ամբողջ գարուն մ'է որ հասուն ամառուան մը շուրջը կը դառնայ. ծնողք իրենց զաւակները կ'ողջագուրեն, ընտանիքներ իրենց խնդակցութիւնը կը փոխանակեն: Շքեղ է վերը հելուետեան կապոյտ երկնակամարը ուսկից ժպտուն ճաճանչներ կը թափէ արեւը, ու երբ վարը կը տեսնեմ տուն դարձող հանդիսականաց հոյլերը, մեծ մասամբ կին ու աղջիկ, ամառնային պայծառ գոյներով թարմ արդուզարդեր կրող, որ ընդարձակ, մաքուր, գեղեցիկ շէնքերով շրջապատուած հրապարակները կը լեցնեն եւ կ'ոգեւորեն երջանկութեան ցոլքերով ու մրմունջներով, կը նա-

խանձիմ երկնից ու երկրի կազմած այդ ներդաշնակութեան վրայ որով մարդուն ժպիտը կը պատասխանէ երկնից ծիծաղին ու այդ հրաշագեղ բնութեան շքեղ շրջանակին արժանի պատկեր մը կը դառնայ այն լուսաւոր ու բարեբաստիկ ընկերութիւնը որ կ'ապրի անոր մէջ:

* * Բայց կրթական հանդէսը չեն վերջանար ասով: Զուիցե-
բական հին ու լաւ ներշնչուած սովորութիւն մը կ'ուզէ որ դպրո-
ցականք, նախնական ու երկրորդական կրթութեան աշակերտք եւ
աշակերտուհիք, յաւարտ տարեկան աշխատութեանց, եւ նոյն իսկ
մրցանակէն ու վկայագրէն զատ, ունենան քաղաքին կողմէ իրենց
ընծայուած հրապարակային պատիւներ, խնջոյք ու զուարճու-
թիւն: Այս ալ կէս օրէ յետոյ. այսպէս ամբողջ օրն իրենցն է:
Որոշեալ ժամուն նոյն դպրոցին կամ դպրոցաց որոց պարգեւա-
բաշխի հանդէսը կատարուած էր տուտուն, — (գիւղերու մէջ
կրնայ այս ուրիշ օրուան մը թողուիլ եւ զբօսական պտոյտի մը
ձեւն առնուլ) — ուսանողք կը հաւաքուին իրենց դպրոցին մէջ
կամ հրապարակ մը որ ժամադրաւայր կ'ընտրուի, իրենց ուսու-
ցիչներով ու տնօրէններով. հոն կուգան նաեւ խշանութիւնք
զօրականաց մէկ երկու վաշտով եւ զինուորական նուագածուաց
խումբով մը: Նշանակուած ժամուն կը կազմուի հանդիսական
թափօրը որ ճամբայ կ'ենէ դէպ այն հանրային պարտէզը որ այդ
օրուան համար այդ աշակերտաց զբօսավայրնշանակուած է: Կրթա-
կան բանակներուն զօրահանդէսն է այդ, կամ յաղթական հան-
դէսը, որ կը ցուցնէ թէ Զուիցերիան ինչպէս գիտէ գուրգուրալ
իւր մատաղ սերունդին վրայ եւ յարգել ու խրախուսել անոր
պատրաստութիւնն ապագայ քաղաքացւոյ պարտաւորութեանց:
Նկարագրեմ հոս միայն ծրնէվ քաղաքին նախակրթարանաց
միահամուռ թափօրը, որ ամենէն շքեղն էր եւ որուն 4000
տղայք, աղջիկ եւ մանչ, մասնակցեցան: Աեհ եւ յուզիչ է տե-
սարանը, լէման լճին եզերաց վրայ տարածուող «Անգղիական
Պարտէզն», է ժամադրաւայրը ու անկէց, ամենէն բազմամարդ
փողոցներէն անցնելով, թափօրը պիտի երթայ քաղաքին վերը
ըրօմըննատ տէ Պասսիօն կոչուած ընդարձակ ու դարաւոր ծա-
ռերով զարդարուն պարտէզն որուն մէջն է համալսարանը: Այս
երկայն ճամբուն երկու կողմը ծայրէ ծայր հազարաւոր բազմու-

Թիւնը ցանկ կազմած է արդէն ու տուններուն պատուհաններէն բիւր դէմքեր գուրս են երկնցած սպասելով մատաղերամ գունդին անցքին: ԱՏա՛ նախ կուգայ հրշէջ զօրականաց ջոկաս մը առաջնորդութեամբ իրենց հրամանատարին. կորովի մարտիկ որք կուռ կը քալեն համաչափ քայլերով. իրենց պղնձեայ ոսկեգոյն սաղաւարտներուն վրայ պայծառ արեւի մը ճառագայթները կը ցոլանան: Յետոյ ժընէվի էն ընտիր թմբկահար զօրաց մէկ խումբը, հսկայ մարդերէ կազմուած, որք թմբկապետին ետեւէն կ'երթան ուղիղ, իրենց ուռներու խուլ որոտը գոռացնելով: Անոնցմէ վերջ փողարներու վաշար որոց սուր դռնչիւնը օդերը կը պատուտէ ու ոստանը կը դղրդէ ամէն արձագանգներն արթնցնելով: Աւելի հեռուն կուգայ քաղաքապետական վառվառը աշխոյժ նուագով եւ անոնց ետեւէն իշխանութիւնք, առաջին գծին վրայ Պետական խորհրդին, Աւագ Ժողովին, Քաղաքին վարչական ժողովին ու Քաղաքապետութեան նախագահները եւ յետոյ ուրիշ պաշտօնական անձինք, հանդիսական օրերու սեւ ֆուրսովը ու սպիտակ փողկապով: Ասոնք կ'առաջնորդեն 2000 մանչ աշակերտաց հինգ խումբերուն որոց գլուխը կը քայլէ քաղաքապետական ժողովոյ անդամ մը. իւրաքանչիւր խումբի առջեւէ բարձր կը տարուի անոր պատկանած թաղին անունը եւ զայն կազմող աշակերտաց թիւը կրող նշանատախտ մը: Մէն մի խումբի առջեւէն ու քովէն կ'երթան իրենց դաստիարակները, ու նաեւ ամբողջ գնացքին երկու կողմէն իրարմէ ոչ շատ հեռաւորութեամբ գացող զօրականաց շղթայ մը կ'երկարի: Կարգաւ վեց առ վեց կը քալեն աշակերտք զինուորական քայլով, իրենց կուրծքին կամ բազկին վրայ կրելով հանդիսական շքանիշը, քիչ մ'աւելի մեծերը իրենց եղած պատուոյն գիտակից ու հպարտ, փոքրերը մանկային խնդութեամբ, զբօսավայրն հասնելու անհամբեր: Յեղական թերթ մը գոհութեամբ կը դիտէ թէ Որբանոցի աշակերտք չէին օրոշուեր այս տարի խումբերուն մէջ՝ երբե՞նի իրենց համազգեստով ալ չզանազանուելով միւս մանուկներէն, եւ այս նորութեան համար կը շնորհաւորէ Որբանոցի վարչութիւնը որ մէն մի օրբի տարբեր տարազով հագուստ կարել տուած էր: Արդարեւ Որբանոցներու մէջ պատասպարելոց հագցուած այդ միօրինակ տխրագոյն հագուստներուն մէջ ես ալ որոց զգացման տեսակիտով անգութ

բան մը տեսած եմ. ատով կարծես իրենց դժբախտութեան դրոշմը զարկած ենք իրենց վրայ ու անոր զգացումը մշտակաց կ'ուզենք ընել իրենց մէջ: Թիապարտը իր յանցանքին յիշատակը թող գտնէ միշտ իր բանտի հանգերձին վրայ. բայց բախտին այդ անմեղ դատապարտեալներուն ինչո՞ւ ամէն վայրկեան յիշեցնել իրենց սեւ ճակատագիրը եւ թէ հացը զոր կ'ուտեն՝ գթութեան կը պարտին զայն: Նոյն թերթը կը հարցունէր թէ արդեօք սրբուհիներուն համար ալ այն փափուկ ուշադրութիւնը ունեցած էին, եւ անոնց տեսչուհին կը պատասխանէր հրապարակաւ թէ անոնց համար ալ միեւնոյն դրութիւնն ընդունուած էր: — Մանչերէն յետոյ 2000 ալ աղջիկներ, դարձեալ վեց վեց, իրենց վարժուհիներով, 13—14 տարեկանէն մինչեւ 7—8 տարեկաններ, բաց գոյն բայց ոչ մթագոյն պատմուճաններով, մեծ մասը արձակ իրենց կռնակին վրայ թողած ոսկեգոյն մազերնին: Ասոնց գունդերն ալ իրենց առջեւէն ունին երաժշտական յատուկ խումբ, արուեստասէր քաղաքացիներէ բաղկացեալ, որ կ'անցնի նուագելով, եւ ամենէն յետոյ վերջապահ զինուորական ջոկատ մը կը փակէ թափօրը, որուն գլուխն արդէն հասած է նպատակակէտին երբ «Նեգլիական Պարտէզ»-էն նոր դուրս կ'եննէ անոր վերջին մասը, — անսպառ գետ սխրալի որ մատաղափայլ կեանքի կոհակներ կը թաւալէ, անմեղունակ շնորհքի եւ խոստմնալից յուսոյ լուսագեղ ցոլմունքներով համակ շողողուն, որ քաղաքին մէջ տարածուելով, եւ աշխատող ու յոգնող ներկայ սերունդին, հայրերու եւ մայրերու աչքին առջեւէն սահելով, կազդուրիչ զօրութիւն մը կը սփռէ իւր շուրջ եւ ասպագային քաղցր վստահութեամբ կ'ոգեւորէ հոգիները:

* * Պարտէզը այն օր ասոնց, ինչպէս ուրիշ օրեր ուրիշ դասակարգի, աւելի մեծ կամ աւելի փոքր, աշակերտաց ու աշակերտուհեաց յատկացուած է եւ իրենց հետ միայն իրենց ծնողք մասնաւոր տոմսերով կրնան ներս մտնել. ոստիկանք կը պահպանեն դռները: Զուիցերական Գաշնաւորութեան, Ժընէվի եւ այլ Գանդոններուն դրօշակները կը ծածանին հոն. երկայն սեղաններ կանգնուած են որոց վրայ պատրաստ է գինւոյ եւ գարեջրոյ ստամաններու ընդ մէջ երեկոյի թեթեւ ճաշը որ պիտի տրուի ուսանողաց. ամէն սեղանի գլուխ արձանագրութիւն մը կը կրէ,

անունն այն ուսուցչին կամ վարժուհւոյն որու դասարանին ուսանողները պիտի բազմին հան. եւ դարաստանին մէկ ծայրէն միւսը թաւ ծառերուն շուքին տակ ու դալար մարգերուն վրայ շարուած կանգուն կ'սպասեն նուագաւոր հեծելախաղք, մարմնամարզիկ զբօսարանաց գործիներ, մրցակայմեր, խաղալիքներու՝ անուշեղէններու՝ պաղպաղակի սեղաններ, դիպաձգութեան փորձի տաղաւարներ, եւ պարի յատուկ տախտակամած գետին մը: Եւ ահա բոլոր տղայք ճաշասեղաններուն շուրջն են, որք արագ կը մերկացուին, ու պահ մը յետոյ ամէնքը գրուած են իրենց տրամագրութեան տակ դրուած խաղի ու զբօսանաց առատ միջոցները: Ոգեւորութիւնն աննկարագրելի է, եւ ծնողաց, ուսուցչաց, պաշտօնական մարդոց ու ներս մտնելու բախտն ունեցող հանդիսատեսներուն համար, մանկանց, պատանեաց ու պատանուհեաց այդ անսահման ցնծումի ու երջանկութեան տեսիլն՝ մանկացուցիչ, երիտասարդացուցիչ բան մ'ունի, ամենէն կնճռոտ ճակտին ամպերը պահ մ'ի բաց փարատելու կարող: Ամէնքը կ'զբօսնուն. կը մրցին, կը պարեն, կը դառնան, կը վազեն, կը ցատկեն, կը պոռան, կը խնդան, կ'երգեն, կը սուլեն, կ'ուտեն, խումբ խումբ կը ճեմեն, խօսակից ընկերք կամ ընկերուհիք, եւ երաժշտախումբը, մերթ զինուորականը, մերթ քաղաքայինը, կը նուագէ, — ու հեծելախաղի փայտէ ձիերէն կը վազեն մրցակայմի շուրջը ու անկէ պարավայրը ու անկէ դիպաձգութեան սեղանին առջեւ, ու դարձեալ փայտէ ձիերուն ու դարձեալ մրցանաց մասնակցելու, անզուսպ, անյագ, հաճոյքէն ու ձայներէն արբշիւ, ընդհանուր ոգեւորութենէն տարուած, եւ այսպէս մինչեւ երեկոյ, մինչեւ որ պարտէզին առջեւ բացուող շքեղ նոր հրապարակը (բլաս նէօժ) իր ելեկտրական լոյսերը վառէ ու փողարք հնչեցնեն դադարը եւ զօրականաց խումբերը մեկնին վերջին վառվառը գոռացներով: Եւ մէկը չէր զգացած ժամերուն սահիլը, եւ թէեւ ամէնքն յոգնած՝ բայց մէկը չէ ձանձրացած, ու փորձիկները դժկամակ կը հետեւին իրենց մայրերուն որք եկած են տուն տանելու զիրենք: Նախակրթարանաց հանդիսաւոր օրուան վերջին արարուածը հրախաղութիւնները եղան որք Բլէյնալէի ընդարձակ դաշտին մէջ կատարուեցան գիշերուան ժամը 9 1/2 ին, հիանալի լուսեղէն երեւոյթներ պարզելով օդոց մէջ, մինչ թնդա-

նօթներ, նոյն դաշտին մէջ բերուած, որոտաձայն բովանակող վերջին պատիւը մատուցին դպրոցական սերունդին ու կրթական մարմիններուն:

Սոյն տեղեկութիւններն ամբողջացնելու համար, պարտիմ յաւելուլ թէ գեղարուեստական, մեքենագիտական, ժամագործական եւ արհեստագիտական վարժարանք ուսանողաց տարեկան աշխատութիւններով եւ ամառվերջի մրցական արտադրութիւններով, ցուցահանդէսներ կազմակերպած էին իրենց սրահներուն մէջ որոց այցելու հրաւիրուած էր հասարակութիւնը: Փոյթ ունեցայ ամենուն ալ երթալու, եւ խնամով աչքէ անցուցի ի տես դրուած գործերը, երկու սեռէ ուսանողաց արդիւնք, — պատկերներ, արձաններ, նկարէն յախճապակեայ անօթներ, գրականատիկոնի վրայ նկարներ, ճարտարապետական ծրագրեր, զարդական ու ճարտարապետական այլ եւ այլ ոճերու նմանողութիւններ, մեքենայներ ու բնագիտական եւ ելեկտրական գործիքներ, ժամացոյցներ ու ժամացոյցի մասեր եւ աննոց տեսական գծագրութիւնքը, դարբնեալ երկաթէ գեղակերտ առարկայներ, փայտի վրայ աշխատութիւններ: Այս գործեր, զարգացեալ ճաշակաւ ու գիտուն արուեստով մը շինուած, արդարեւ մեծ մասամբ հիացման արժանի էին, եւ ինձ սա համոզումը տուին թէ ժրնէվ միայն ուսումնական ու զուտ գիտութեան տեսակետով յառաջադէմ քաղաք մը չէ, այլ եւ գիտուն արուեստի ու գեղաճարտարութեան կողմանէ եւ թէ իր այդ կարգի վարժարանք կ'արտադրեն ամէն տարի բանիբուն արհեստաւորներ ու ճշմարիտ արուեստագէտներ:

Ու այս բոլոր դպրոցական հանդէսներուն ու ցուցադրութեանց մէջ կը պարզուէր գաղտնիքը թէ ինչպէս ժրնէվ եղած է փայլուն վառարան մը գիտութեանց եւ փեթակ մը ճարտարագործ աշխատութեան, եւ թէ ինչպէս այնքան մեծ է նա իր փոքրութեան մէջ, շատ մը մեծերու համար օրինակելի:

(*Բիւզանդիոն*, 1897, թիւ 218, 219, 220, 221, 222:)

16. ՀԻՆ ՅՈՒՆԱՅ ԳՈՍՏԻՈՐՈՎՈՒԹԵԱՆ ՆՅՈՆՆԵՐԸ ԿԵՏԵՐԸ

(Աթէնք եւ Սպարտա¹)

Հին Յունաց մէջ տիրող գաղափար մ'էր թէ Պետութեան (Etat) պարսքն էր ապագայ քաղաքացւոյն դաստիարակութիւնն ապահովել եւ միանգամայն թէ անոր իրաւունքն էր ուղղութիւն տալ այդ դաստիարակութեան: Սպարտայի մէջ Ղիկուրգեան օրէնքը իր մանրամասնութեանց մէջ ճշդած ու սահմանադրած էր մանկանց սրուելիք կրթութիւնը եւ զայն ամբողջապէս յանձնած էր Պետութեան ձեռաց, որ ինքն կը մատակարարէր կրթութիւնը հասարակաց կրթարաններու մէջ ուր կը ժողովէին եօթ աարեկանէն սկսեալ բոլոր տղայքը: Ծնողք մինչեւ այս հասակը միայն իրաւունք ունէին իրենց քով պահելու եւ անձամբ մեծցնելու իրենց զաւակները. այնուհետեւ պէտք էր որ զանոնք կառավարութեան յանձնէին որ միօրինակ եւ ընդհանուր դրութեամբ մը կը ձուլէր զանոնք մի եւ նոյն կաղապարին մէջ:

Աթէնք միեւնոյն իրաւունքը կը ճանչէր Պետութեան: «Օր մը, կը գրէ Ֆիլադէլ տը Գուլանտ², Աթէնք օրէնք մը դրաւ որով կ'արգիլէր առանց կանխաւ ատենակալաց հաճութիւնն սաանալու ուսում աւանդել պատանեաց, եւ ուրիշ օրէնք մ'ալ որ մասնաւորապէս արգելք կը դնէր փիլիսոփայութիւն ուսուցանելու: Բայց Աթէնքի մէջ պետութեան այս իրաւունքը իր բոլոր խստութեան մէջ չգործադրուեցաւ երբեք: Սողոն, անոր օրէնսդիրը, բաւականացաւ օրինաց մէջ ճշգրելով միայն ծնողաց պարտականութիւնքն ի մասին իրենց որդւոց կրթութեան. նա պարտաւորեց ծնողները որ իրենց զաւակաց սովորեցնեն արհեստ մ'որով նորա կարող ըլլած իրենց ապրուստը ճարելու: Կրթութեան մասին օրէնք դրաւ որ տղայք ուսնին լողալ եւ կարգալ. հարուստք պարտաւոր էին օրինօք իրենց որդւոց աւելի զարգացեալ կրթութիւն մը տալու: Այս լայն սահմանք ընդարձակ ազատութիւն կը թողուին ծնողաց տնօրինել իրենց զաւակաց կրթութիւնը ինչպէս

¹ Յունական միւս քաղաքներն իրենց ընկերական ու քաղաքային կազմակերպութեան մէջ աւելի կամ նուազ կը մերձենային այս երկուքէն մէկուն:

² La cité antique, par Fustel de Coulange.

որ կ'ուզէին: Ուսուցումը միշտ ազատ մնաց Աթէնքի մէջ: Քերականներ, երաժշտութեան եւ մարմնակրթանաց ուսուցիչներ իրենց հաշուոյն դպրոցներ կը հաստատէին եւ իրարու հետ կը մրցէին յանկուցանելու համար ուսանող մանկութիւնը: Իշխանութիւնը միայն մարմնակրթանաց համար շէնքեր կը դնէր այդ ճիւղին ուսուցչաց արամադրութեան տակ եւ կը հսկէր որ ո՛ր եւ է անկարգութիւն չպատահէր եւ կանոնաւորապէս մարզարանք (palestre, gymnase) բացուէին ու փակուէին օրուան հետ: Ուսուցչաց ականգած ուսման գնահատումը թողուած էր ծնողաց:

Այս ազատութիւնը սակայն անհաճոյ էր յաշտ Պղատոնի եւ Արիստոտելի որք իրենց դաստիարակութեան ծրագիրներուն մէջ կը պահանջէին որ պետութիւնը բացարձակօրէն ստանձներ ու վարէր աղիկամբ կրթութեան գործը: Այս մասին երկուքն ալ սպարտական դրութեան համամիտ էին: Այս վերջինը կ'ըսէր. «Ըստ որում մի միակ վախճան կայ որ նոյն է բոլոր քաղաքային ընկերութեան համար, կը հետեւի թէ դաստիարակութիւնը պարտի ըլլալ մի եւ նոյնն ընկերութեան բոլոր անդամոց համար, եւ անոր ուղղութիւնն պարտի հասարակաց ըլլալ, եւ ոչ թէ իւրաքանչիւր մասնաւոր անհատի թողուած լքուած», ինչպէս կը գտնէր իւր օրերուն մէջ ուր «անցնիւր որ անձամբ կը վարէ ու կ'առաջնորդէ իր զաւակները եւ անոնց տալ կուտայ առանձինն ինչ կրթութիւն որ պատշաճ կը դասի, մինչդեռ հասարակաց եղող շահերու վերաբերեալ իրաց ուսուցումն ու գործադրութիւնն ալ հասարակաց պարտէին ըլլալ», Թէ ինքն Արիստոտել եւ թէ Պղատոն, որք առաջին մանկութեան խնամքը, մինչեւ 6—7 տարեկան, կը թողուն ծնողաց, կը պահանջեն սակայն որ Պետութիւնն հսկողութիւն ի գործ դնէ այդ մասին ալ, եւ այդ՝ սկսեալ նոյն իսկ ծնողաց ամուսնութեան վայրկեանէն: Պէտք է որ այրերն ամուսնան, ըստ Պղատոնի, 25—35 տարեկան հասակներուն մէջ եւ կանայք՝ 16էն մինչ 20 տարեկան. ըստ Արիստոտելի՝ այրը պարտի ամուսնանալ 37 տարեկան եւ կինը՝ 18 տարեկան: Պղատոն կը պահանջէ մինչեւ իսկ որ ամուսինք տաս տարիէն աւելի չկենակցին միմեանց հետ, որպէս զի, ծնողք իրենց առոյգ տարիքին մէջ միայն զաւակաց տէր ըլլալով, քաջաւորող սերունդ մ'ապահովուի քաղաքին:

Պետութեան ի գործ դրած ու պետութենէն պահանջուած այս կրթական հոգածութեան հիմն, ի Յունաստան, այն սկզբունքն էր թէ անհասար ընկերական ամբողջին կը վերաբերի եւ անոր օգտին տեսակետով պարտի պատրաստուիլ: Սպարտա բացարձակապէս անհաստին մէջ քաղաքացին միայն կը տեսնէր, անհասար կը զոհէր ամբողջին, կ'ընկղմէր անոր մէջ: Անոր դաստիարակութեան իտեալն էր Ֆիզիքապէս ուժեղ, տոկուն, հոգևով աներկիւղ մարդը որ, միանգամայն քաղաքին պետերուն հրամանաց հշու եւ անոր պաշտպանութեան անձնուէր, երկրին սերէն գուրս սէր չունենար եւ պատրաստ ըլլար զոհել իր կեանքը Պետութեան պահպանութեան եւ բարւոյն համար: Անհաստին ուրիշ ամէն զգացմունք եւ յօժարութիւնք եւ իրաւունք զոհուած էին անոր քաղաքացիական պարտաւորութեանցն առջեւ: Մտաւոր մշակութիւնը Սպարտացւոյն կրթութեան կարեւոր մաս չէր համարուեր. Սպարտացի քաղաքացին չէր կարող ինքզինք զարգացնել իւր ճաշակաց համեմատ եւ իւր այլազան կարողութեանց մէջ: Կանանց պարկեշտութեան բնական զգացումն իսկ չէր յարգուած. հարկ էր որ երիտասարդաց նման իրենք եւս մարմնակրթական ամէն մարզանք ի գործ դնէին Ֆիզիքապէս զօրանալու, երկանց ցաւերու տոկալու եւ քաջառոյգ զաւակաց ծնունդ տալու համար:

Աթէնքի մէջ եւս, որպէս Սպարտայի մէջ, կը տիրապետէր այն սկզբունքը թէ «մանուկը երկրինն էր եւ պէտք էր զայն անոր համար մեծցնել», բայց Աթենացին ընկերային կազմակերպութիւնը եւ անոր զօրութիւնը միջոց մը կը նկատէր մանաւանդ քան նպատակ մը, միջոց մը անհաստից իրաւանց պահպանութիւնը եւ անարգել զարգացումն ապահովելու: Ըստ այսմ Աթենական դաստիարակութեան իտեալն էր մարդոյն ամբողջական զարգացումը: Սողոն կը յանձնարէր դիւրակեցիկ քաղաքացւոց իրենց զաւակները հրահանգել ոչ միայն մարմնամարզից, այլ եւ երաժշտութեան, ուսողութեան, բանաստեղծութեան եւ բանասիրութեան մէջ. — յանձնարարութիւն որ ընդարձակօրէն ի գործ դրուեցաւ, վասն զի աթենական քաղաքակրթութեան գեղեցիկ օրերուն մէջ ամենէն աղքատներն ալ իրենց որդւոց գիտութեանց ու գեղարուեստից դասեր տալ կու տային, այս նպատակին համար յանձն առնլով ամէն տեսակ զօհողութիւն եւ

զըկում: Կային, որպէս ըսինք, քերականներ, երաժիշտներ, հոե-տորներ ու փիլիսոփայներ, առ որս կը յաճախէր Աթենացւոց մատաղ սերունդը 7էն մինչեւ 18 տարեկան, կրթութեան յաջորդական աստիճաններ փոխելով: Մարզարանք (gymnase), որք ի սկզբան միայն պատանեաց մարմնակրթական վարժութեանց յատկացեալ շէնքեր էին, կամաց կամաց իմացական կեանքի փայլուն կեդրոններ եղան, նման արդի Համալսարանաց, վասն զի մութեամտիկոսք, հոետորք, իմաստասէրք անոնց մէջ¹ սկսան ուսուցանել, եւ ոչ միայն երիտասարդք, այլ եւ հասուն մարդիկ անոնց շուրջը կը ժողովէին զանոնք մտիկ ընելու համար:

* * *

Պղատն, թէ եւ Սպարտական դրութեան զարմացող եւ իր իտէալ՝ «Հասարակապետութեան»², մէջ անհատը միայն պետութեան աարըը նկատելով անոր անհատական անկախութիւնը մեծապէս անձկացնելու եւ քնջելու իսկ տրամադիր, շատ աւելի լայն կը գծէ կրթութեան սահմանը, իւր «Օրէնք»ին² մէջ, իբրեւ ճշմարիտ Աթենացի: Երկու մասի կը բաժնէ դաստիարակութիւնը. Մարմնակրթական (Gymnastique) եւ Մուսայական (Musique), առաջինը մարմնոյն եւ երկրորդը՝ մտքին զարգացման յատուկ, ինչպէս արդէն կ'ընէին Աթենացիք, Musique բառն առնելով շատ ընդարձակ իմաստով եւ անով ոչ միայն երաժշտութիւնն հասկնալով, այլ եւ ամէն ինչ որ իմացական մշակման կը ծառայէր — գրագիտութիւն, գիտութիւն, գեղարուեստ եւ փիլիսոփայութիւն: Որքան գեղեցիկ եւ կատարեալ է արդէն Պղատնի դաստիարակութեան տուած սահմանը. «Դաստիարակութեան նպատակն է տալ մարմնոյն եւ հոգւոյն բոլոր այն գեղեցկութիւնն ու բոլոր այն կատարելութիւնն որոց ընդունակ են նոքա»: Միայն թէ նա իր դաստիարակութեան ծրագրին մէջ անտարբեր կ'երեւի երկրագործաց ու արհեստաւորաց նկատմամբ: Բայց քաղաքապահ ու պաշտօնատար դասուց համար կը պահանջէ ինամեալ կրթութիւն: Պաշտօնատարութեան (magistrature) սահմանեալ հատընտիր երիտասարդք միւսներէն աւելի

¹ Որք այս աւթիւ գեղեցկացան եւ ընդարձակեցան:

² Տրամախօսութիւն Պղատնի:

բարձր գիտական եւ իմաստասիրական կրթութիւն մը պիտի ստանան, որ կը պարունակէ տեսական ուսողութիւն, աստեղագիտութիւն ու երաժշտութիւն եւ փիլիսոփայութիւն, որ 20 տարեկանէն սկսեալ մինչեւ 25 տարեկան հասակը պիտի շարունակուի, եւ, իբրեւ բարձրագոյն ուսումն, պիտի յաջորդէ կրթութեան առաջին աստիճանին, որ կը պարունակէ մարմնամարզ, գրագիտութիւն, գործնական երաժշտութիւն եւ թուաբանական, երկրաչափական ու աստեղագիտական պիտանի գիտելիք: — Արիստոտէլ ալ ուսման առարկայները երկուքի կը բաժնէ. 1. անոնք որք քաղաքային կեանքի յարմար կ'ընեն, եւ 2. անոնք որոց նպատակն է մարդուն զարգացումը:

* * *

Նշանակելի է Յունաց դաստիարակութեան, ինչպէս նաեւ անոնց մանկավարժ իմաստասիրաց գաղափարներուն մէջ, մարմնամարզի եւ երաժշտութեան ընծայուած մեծ կարեւորութիւնը: Մարմնամարզը ֆիզիքական դաստիարակութեան կարեւոր միջոցը կը համարէին, եւ երաժշտութիւնը՝ բարոյականին: Մարմինը՝ զօրաւոր, տոկուն, դիւրամեք ու բարեձեւ կ'ուզէին. ուժեղ, քաջառողջ ու գեղեցիկ կ'ուզէին որ ըլլային իրենց երիտասարդները, եւ մարմնական կորովոյ, ճակութեան ու ճարտարութեան փորձերու եւ վարժութեանց մէջ կը գտնէին այդ արդիւնքը ձեռք բերելու միջոցը: Եթէ տարեկան հասակէն կ'սկսէին այս հրահանգները եւ անընդհատ կը շարունակուէին ցվերջ դաստիարակութեան շրջանին: Եթէ երգն ու պարը յաւելցնենք մարմնամարզին վրայ, արդէն սպարտական կրթութիւնը սահմանած կ'ըլլանք. եւ պարն ալ արդէն երգն ու մարմնամարզը յինքեան միացնող վարժութիւն մը չէ: Յոյնք մարմնակրթանաց մէջ միայն օգտախնդիր նպատակ մը չէին դիտեր. գեղեցկագիտական նուրբ հոգածութիւն մ'ալ ունէին, ու մարմնամարզը ու պարը կը նկատէին նաեւ միջոց մը մարմնոյ շարժմանց ու ձեւոց տալու դիւրութիւն, շնորհ ու ներդաշնակ զարգացում: Պիութեան, Նեմէան, Իսթմեան եւ մանաւանդ Ողիմպեան խաղերը մարմնամարզիկ մրցութեանց աշխարհախումբ հանդէսներ էին, եւ կը ծառայէին ֆիզիքական կորովոյ եւ ճարտարութեան եռանդը ոգեւորելու ու

մշտավառ պահելու յոյն երիտասարդութեան մէջ. — Հանդէսներ զորս այսօր Եւրոպա կը խորհի վերակենդանացնել մտաց եւ մարմնոյ դաստիարակութեան մէջ երկար ատենէ ի վեր իր կորուսած հաւասարակշռութիւնը վերահաստատելու նպատակաւ:

Այս հաւասարակշռութիւնը, այս ներդաշնակութիւնը յոյն ցեղերէն Աթենացւոյն տեսլականն էր: Գեղեցիկ բառ մ'ունէր նա որով կը բացատրէր զայն: Այդ բառն էր *καλοχάριστος*, որ, գեղեցիկ (*καλός*) եւ ըարի (*ἀγαθός*) բառերէն բարդուած, մարմնոյ եւ հոգւոյ կրկին գեղեցկութիւնքն ներդաշնակ միութեան մը մէջ համաձոյլ յանձին բերող մարդը կը նշանակէ, որ միանգամայն ֆիզիքական, իմացական եւ բարոյական առողջ դաստիարակութեամբ, մարմնոյ, մտաց եւ սրտի յատկութեանց համընթաց զարգացմամբ կրնայ լոկ կազմուիլ:

Մարմնամարզին քով, ըսի, ընդհանուր Յոյնք նաեւ երաժշտութիւնը կը դնէին իբրեւ անհրաժեշտ պայման դաստիարակութեան: Սպարտայի մէջ մանկտին կը սովորէր երգել կըծական ու ժողովրդական երգերը: Աթէնքի մէջ ամէն քաղաքացիք պարտաւոր էին երաժշտութիւն գիտնալու: Անոր ամենէն ծաղկեալ շրջանին մէջ ալ երաժշտական գործիք մ'ածել չգիտնալ՝ խնամեալ կրթութեան մը մէկ կարեւոր լրացուցիչէն զուրկ ըլլալ կը նշանակէր: Այսպէս, Թէմիստոկլէս կը նկատուէր իբրեւ անկատար դաստիարակութիւն ստացած անձ, վասն զի չէր գիտեր նուագել որ եւ է գործիքի վրայ: Ուսանող մանուկը, որպէս քերականին, նոյնպէս եւ կիթառի վարպետին (*cithariste*) քով յաճախել պարտաւոր էր: Ջբօսանքի նպատակաւ չէր որ երաժշտութիւնը այսքան փութով կը մշակէին Յոյնք. ոչ, այլ յաւետ իբրեւ բարոյական կրթութեան գործի մը: Նոյնը կը համարէին երաժշտութիւնը հոգւոյն համար ինչ որ մարմնամարզը մարմնոյն համար: Պլատոն 18 տարեկանէն սկսիլ կու տայ երաժշտութեան ուսումը քնարի վրայ, եւ Արիստոտել գեղարուեստներուն մէջէն կը յանձնարարէ մասնաւորապէս երաժշտութիւնը՝ հոգւոյն վրայ անոր բարոյական շինիչ ներգործութեանն համար, եւ իբրեւ զբօսանաց աղնուացուցիչ: Արդարեւ ուշագրաւ է հին Յոյներուն դաստիարակութեան մէջ երաժշտութեան կատարած այս դերը. ու որչափ իրաւունք ունէին ճաշակի բարւոքման, զգացմանց մա-

քրութեան ու բարձրացման եւ ազնուական տենչերու զօրացման մասին անոր քաղցր ու բարերար ազդեցութեան հաւասարու:

Աղջկանց դաստիարակութեան խնդրոյն մէջ Աթենացիք չեն երեւիր ունենալ նոյն բարձր հայեացքը, նոյն սերը կատարելութեան զոր կը ցուցնեն արական սեռի կրթութեան համար: Ախները խոնարհագոյն սեռէ էակներ համարելու սխալը կը գործեն, եւ անոնց կրթութիւնը գրեթէ բոլորովին զանց ըրած են: Այն մը, յաչս անոնց, բաւական կրթուած է երբ գիտէ սուսը յանձանձել, բուրդ մանել, ծարրին ու շպարին օգնութեամբ խնամ տանիլ իր գեղեցկութեան: Բացառաբար միայն պարկեշտ ընտանեաց աղջկունք կ'ուսնէին կարգալ եւ գրել, գեղարուեստ կամ գիտութիւն. ազատաբար կանանց բաժինն էր այդ, իբրեւ փրկանք մը իրենց անպաառուութեան կամ յաւելուած մը իրենց հրապուրանաց: Բայց Սպարտացին, որ յարգանք կը տածէր առ կինն, ինչպէս տեսանք, աղջկանց համար պարտաւորիչ կ'ընէր արականին արուած կրթութեան յար եւ նման կրթութիւն մը, եւ, Աթենացւոյն պէս զանոնք տանց մէջ փակելով նստողական կեանքի մը մեղկութեան վարժեցնելէ հետի, կը սովորեցնէր զանոնք յասպարէզ գալու, մրցանաց մասնակցելու, եւ կրօնական հանդիսից մէջ երիտասարդաց ներկայութեան երգելու եւ պարելու, այս վերջնոց համար անոնց գովեստն ու պարասն ալ գրգիռ մ'ընելով քաջութեան եւ առաքինութեան, վասն զի ներելի էր աղջկանց իրենց երգոց մէջ ծաղրական սուր սլաքներ արձակել կամ դրուատիբ'ալ երիտասարդաց իրենց վարմանցն համեմատ, եւ աղջկանց մէջ բարի անուն մ'ունենալ հպարտութեամբ կ'ուռեցնէր արժանաւոր պարմանւոյն սիրտը:

Պղատն եւս կարեւոր կը համարէր, Սպարտացւոց նման, աղջիկները, որք ապագայ քաղաքացիները պիտի ծնէին, կրթութեան եւ հրահանգաց ենթարկել: Միայն թէ Սպարտայի մէջ կրթութիւնը միակողմանի էր լոկ, եւ Սպարտացիք ու Պղատն անասն կ'ընէին կնոջ յատուկ բնութիւնը որ իր յարմար կրթութիւնը կը պահանջէ:

* * *

Յունական Գաստիարակութեան մէջ յոյժ կարեւոր գեր մը տրուած էր նաեւ բանաստեղծութեան, որ ինքն ալ երաժշտութիւն մ'է գերազանցապէս կրթող ու ներշնչող: Քերականք իրենց

դպրոցաց մէջ, անմիջապէս որ տղայք քիչ շատ գրել կարգաւ գիտնային, անոնց ձեռքը կուտային բանաստեղծները՝ առողջանութեամբ կարդալու, բացատրելու եւ ի բերան ուսանելու համար: Հոմերի Իլիականն ու Ոդիսականը Յոյն տղոց ընթերցանութեան սովորական դասագրքերն էին, որոց վրայ կ'աւելնային Հեսիոզ, Սոդոն, ուրիշ եղբերեգակներ ու ողբերգակ բանաստեղծք: Ասոնց վրայէն կ'ուսուցուէր լեզուն, ու միանգամայն բարոյականը, զոր ուսուցիչը իր բացատրութեանց մէջ դուրս կը հանէր մեկնելի հատուածէն: Պղատոն եւ Արիստոտել եւս քերթուածոց ընթերցումն եւ ուսումնասիրութիւնը կը յանձնարարէին, բայց Պղատոն ամբողջ երկասիրութիւններ տղայոց ձեռքը տալէն աւելի հատընտիր հատուածները նախամեծար կը համարէր, վասն զի կը խորհէր թէ առաջիկա կրնան բարոյականի տեսակէտով խորշելի հատուածներ պարունակել: Սպարտա, հակառակ իր բարուց խստութեան, չէր մերժեր բանաստեղծութիւնը. ընդհակառակն անական լուրջ ու բարոյալից բանաստեղծութիւնը շատ կը յարգէր իր պատանիքն ու կուսանքը կը վարժեցնէր ոչ միայն երգելու վեհաշունչ երգեր, այլ եւ յօրինելու նոյնպիսի տաղեր ու նուագներ: Բանաստեղծութիւնը այդ ժողովրդեան անունըն էր իր բոլոր հասակներուն մէջ. առանց անոր կրթութիւն չկար, ոչ կրօնական տօն, ոչ ժողովրդական հանդէս, եւ իր զբօսանքներուն ու խաղերուն, երգին հետ ընկերացեալ կամ անջատ, կը խառնէր ան իտէալի արբեցութիւնը, ազնուարար աւիւնը գեղեցկին:

* * *

Վերջացնենք մեր սոյն համառօտ տեսութիւնը վեր առնլով հնոյն ելլադայ դաստիարակ-փիլիսոփայից վարդապետութեանց մի քանի այլ ուշագրու կէտերն ալ:

Պղատոնի վարդապետը, Սոկրատ, իրեն յատուկ կերպ մ'ունէր ուսուցման, որ արժանացած է իրաւամբ ամէն ժամանակաց մանկավարժներու ուշադրութեան եւ սքանչացման. դայն ի գործ կը դնէր սոփիստից հետ իւր վիճաբանութեանց եւ իւր աշակերտաց հետ իր հրահանգիչ խօսակցութեանց մէջ: Մեկնելով ամենայայնի նախագասութենէ մը, ճարտարօրէն շարայարեալ հարցումներով, կոչում ընելով հակառակորդին կամ աշակերտին ու-

ղիզ բանին ու դատողութեան, կ'ստիպէր հակառակորդը ետ առնուլ իր կարծիքը՝ տեսնելով զայն հետեւութենէ ի հետեւութիւն մի անհեթեթ նախադասութեան յանգած, ուստի եւ իբրեւ սուտ կամ սխալ խայտառակուած, եւ կամ իր աշակերտն կը բերէր ինքնին ընելու ճշմարտութեանց գիւտը: Այս մեթոտը, թէ եւ ոչ ուսուցման առին նիւթոց պատշաճ¹, եւ սահմանի մը մէջ կիրառելի, ընտիր է աշակերտին իմացականութեան զարկ տալու, անոր մտաւոր ինքնաբեր գործունէութիւնը գրգռելու եւ քաջալերելու, ինքն իր վրայ անգրադառնալ վարժեցնելու եւ մտածել գրողելու համար զայն. աշակերտը ինքնին իր սխալմանց վերահասու կը լինի, եւ ինքնին կը վերլուծէ իր զգացողութիւնքն ու ըմբռնումները, եւ ընդհանուր կամ մասնաւոր իրողութեանց հետեւանքներուն կը թափանցէ ինքնին, եւ երբ միաքն ինքնին ճշմարտութեան մը կը խելամտէ, ալ ան իր սեփականութիւնն է, ոչինչ կրնայ կորզել զայն անկէ: Ահա ասոր համար արդի մանկավարժութիւնը ջերմապէս կը յանձնարարէ Սոկրատեան մեթոտը:

Գիտելի է որ մայրական դպրոցներու, մանկապարտեզներու դազմանց գաղափարը կայ Պլատոնի խօսքերուն մէջ, երբ կ'ըսէ որ երեքէն վեց տարեկան տղայք, աղջիկ եւ մանչ ի միասին, իրենց մայրերուն եւ ստնտուններուն հսկողութեան տակ ազատօրէն պիտի ընեն այնպիսի զբօսանքներ որք յարմար ըլլան Փիղիքապէս եւ իմացականապէս զանոնք զարգացնելու:

Նոյնպէս նշանակելի է որ Պլատոն, արդէն իր ժամանակին մէջ, Քրիստոսէ չորս դար յառաջ, իրագիտական, առարկայական դասեր կը յանձնարարէ, երբ կը պատուիրէ որ, թուաբանական գործողութեանց նախնական վարժութիւնները դիւրացնելու համար, տղոց մէջ բաժնուին խնձորներ ու պսակներ, ոսկիէ, արծաթէ կամ արոյրէ եւ ուրիշ նման նիւթերէ շինուած փոքրիկ շէշեր, որպէս զի պարտաւորուին զբօսելով թուոց գիտութեան դիմել:

Երբ մէկ կողմէն Սպարտական դաստիարակութեան արդեանց մէջ կը տեսնենք նոյն իսկ դաստիարակութեան մեծ զօրութիւնը,

¹ Ընդհանրապէս ընդհանուրէ մասնաւոր հետեւութիւններ հանել եւ զգայարանաց ըմբռնումներու եւ փարձառական ծանօթութեանց վրայ վերլուծման, բազդատման ու հանրացման գործողութիւններ կատարել տալու յարմար է:

վասն զի լիկուրգոս կրթութեան միջոցաւ կրցաւ իւր դիւանն համապատասխան սերունդ մը պատարաստել, թէ եւ անձուկ խտէալի մը համեմատ եւ յաճախ բռնազբօսելով մարդուն բնական հակամիտութիւնները, — ինչ որ եւս աւելի պայծառօրէն ցոյց կու տայ կրթողական գործողութեան ազդեցութիւնը, դժուարին ըլլալով իրեն գէմ ունենալ բնութիւնը —, միւս կողմանէ կը տեսնենք որ դաստիարակութեան ալ մեծագոյն նեցուկը, արդիւնաւորութեան ապահովագոյն պայմանը սովորութիւն կամ ունակութիւնն է, որ կ'ստացուի մի եւ նոյն գաղափարաց եւ զգացմանց շրջանակին մէջ միտքն ու սիրտը յաճախագոյնս բերելով ու մի եւ նոյն գործողութիւնները կրկնել տալով, մանաւանդ բարոյականի տեսակէտով որ վերջնական նպատակն է դաստիարակութեան: Պղատոն եւ Արիստոտէլ երկուքին եւս կը պնդեն սովորութեան մեծ զօրութեան վրայ, խստիւ պատուիրելով խնամով ընտրել ամէն ինչ որուն հետ մանուկը պիտի ունենայ ամենօրեայ կամ յաճախակի շփում, դաստիարակ, ընկեր, գիրք: «Անտարբեր բան մը չէ, կ'ըսէ Արիստոտէլ, մատաղագոյն հասակէն այս կամ այն կերպ գործելու սովորիլ. ընդհակառակն յոյժ կարեւոր բան մ'է այն, կամ մանաւանդ, ամէն ինչ է այն, ամէն բան անոր մէջն է:»

(Մասիս, Մանկավարժական Հանդէս, նոր շրջան, Թիւ 9 —10, 1894:)

17. ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎՈՐԹՈՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՆԷՆ

Քառորդ դարու յիշատակներ

(Նամակ առ Տ. Ա., Խմբագրապետ Մ—ի-ի)

Մեծայարգ եւ սիրելի Խմբագրապետ,

Ձեր նամակաւ կ'ուզէք որ Մասիսին համար ի գիր առնում Պերպերեան վարժարանի բացման պարագաները՝ 25 տարի առաջները երթալով իմ յիշատակներուս մէջ: Ձեր համակրալից առաջարկին պատասխանել կը փութամ, թէ եւ հարկ ըլլայ ինձ գուցէ կրկնել, գէթ մասամբ, ինչ որ դեռ երեկ իրազեկ բարեկամ գրիչ մը կը յիշեցնէր Բիւզանդիոնի մէջ: Գատըգիւղ, Լապին Եկեղեցւոյ փողոցին մուտքը, միջակ մեծութեամբ տան մը

Քչ կը հիշուէր Պէրպէրեան վարժարանը լռին ու անձայն կերպով: 1876 տարւոյն դպրոցական արձակուրդի ամիսներուն քչ, ու Սեպտեմբերին ալ, անդու ու կատաղի պայքար մը մղած էի նիւթական հազար ու քէկ դժուարութեանց դէմ՝ հասնելէ յառաջ Հոկտեմբեր 1 թուականին, ուր դասերու սկզբնաւորութիւնն ազգարարող առաջին զանգակն հնչուեցաւ Պէրպէրեան դպրոցին: Առաջին դժուարութիւններն հարթուելուն եւ վարձուած տան պայմանագրութիւնը կնքուելուն պէս թուած գացած էի Մանգումէի եւ Մասիսի խմբագրատունները բացման Ազդերը հրատարակութեան տալու: Կանխաւ խոստացուած մի քանի սակաւաթիւ աշակերտներ ներկայ էին Հոկտեմբեր 1ի առաւօտուն, երբ մի քանի ուսուցիչներով վեր սրահը ելանք դասերն սկսելու: Ցունը, որ այժմ այրած է ու տեղն աւերակ ձեացած, երկու յարկ ունէր երեքական սենեակով. առաջին յարկը՝ բաւական ընդարձակ սրահով մը՝ դասառութեանց յատկացուցեր էի, ու երկրորդ յարկը՝ ննջարանի, քէկ սենեակն ինձ մասնաւորելով իբրեւ աշխատելու ու ննջելու սենեակ: Գետնայարկին վրայ երկու սենեակներ կային. մին խօսարան ըրած էի, եւ միւսը՝ ձաշարան: Փոքրիկ պարտէզ մ'ալ ունէր այդ շէնքը: Ար յիշեմ որ առաւօտուն այդ խօսարանին քչ ժողովուեցան քէկ քանին այն ուսուցիչներէն, հայ թէ եւրոպացի, որք յանձնառու եղած էին պաշտօնավարել վարժարանիս քչ, անշուշտ ի սկզբան բազմապահանջ չըլլալու եւ նոյն իսկ վճարման մասին համբերատար գտնուելու հաճոյակատարութեամբ: Այսին նաեւ, կարծեմ, քէկ երկու ծնողք: Հոն եղաւ բացումը քանի մը պարզ ու դողդոջ խօսքերով զորս արտասանեցի. լաւ չեմ յիշեր ըսած խօսքերս, բայց անշուշտ սրտագին նուիրում մը կը խօստանային սկսուած գործին, ու մանաւանդ երկնից օգնութիւնը կը հայցէին անոր յաջողութեանն համար: Անկէց ետքն էր որ, ինչպէս ըսի, վեր ելանք դասախօսութեանց սկիզբն ընելու:

Մեր առաջին աշակերտները գիւղին Արամեան վարժարանէն բաժնուելով եկան մեզի, որոց քէկ քանին բարձրագոյն կարգէն. այս վերջնոց հետ միացան դեռ նոր փակուած Շահազարեանի քանի մը սաներ ու կազմեցին Գ. դասարանը: Ասոնցմէ երեքը յաջորդ տարւոյ վերջն աւարտելով իրենց շրջանը՝ եղան

մեր անդրանիկ պսակաւորները: Այսպէս տարի առ տարի չէր որ կազմեցինք մեր դասարանները. նշնպէս առաջին օրէն բաւական ընդարձակ ծրագիր մը գործագրութեան դրինք՝ ուսուցիչներու բաւական մեծ թուով մը: Առաջին տարուան մէջ Գ. Զարարեան՝ Ուսողութեան, Ի. Մուրաբեան՝ բնական գիտութեանց, Ա. Գարամաթոսեան՝ օսմաներէնի, Յ. Սեթեան՝ Փրանսերէն-հայերէնի, Մ. Ռու՝ Փրանսերէնի, Չարլս Ռոպէրզս՝ անգլիերէնի, Ֆերտինանտ Ֆիլիք՝ գերմաներէնի, Մ. Տիրացուեան՝ գծագրութեան, Ն. Թաշճեան՝ երաժշտութեան, Ս. Սուրէնեան՝ դաշնակի դասեր տւանդած են, բաց ի ընդհ. հսկողութեան եւ օգնական-ուսուցչութեան պաշտօն վարող մի քանի այլ անձերէ ու Տնօրէնէն որ ստանձնած էր հայ եւ Փրանսերէն լեզուաց, գրագիտութեան, ընդհանուր եւ մատենագրական պատմութեանց դասեր: Ի՞նչ բան կ'ապահովէր ուսուցչաց թոշակներուն վճարումը, որչափ ալ ի սկզբան համեստ եղած ըլլային իրենց պահանջումներ: Հոկտեմբեր 1ին երկու գիշերօթիկներ արձանագրուած էին, լեւոն Պ. Ֆնտգլեան եւ Համբարձում Այնաճեան (Շապին Գարահիսարցի). ասոնց թիւը 7ի հասած էր 1877 մայիսին: Նշնպէս սակաւաթիւ էին արտաքինք, եւ առաջին դպրոցական տարին վերջացած պահուն՝ ընդ ամէնը, ներքին թէ արտաքին, 28 աշակերտ ունեցած ենք: Երկրորդ տարւոյն վերջը, ուր մեր առաջին շրջանաւարտներն ունեցանք, ընդհանուր աշակերտաց թիւն հասած է 37ի, որոց 19ը գիշերօթիկ: Այս պայմաններուն մէջ կը հասկցուի առաջին քայլերուն անհնարին գծուարութիւնը: Ստիպուած էի դպրոցական օրէն յետոյ մասնաւոր դասերու վազել, որոցմէ բաւական թուով ունէի՝ Գատըգիւղի տուաջնակարգ ընտանիքներու մէջ, ու ոմանց ալ գիշեր կ'երթայի: Բայց ալ դպրոցի դասեր չունէի. ցերեկն ամբողջ աշակերտներուս կը պահէի. թողուցի իսկ ֆուէռներու վարժարանին մէջ ունեցած դասս: Այս մասնաւոր դասերէն առած վարձքս բաւական նպաստ մ'էր քնձ դպրոցական ծախուց համար: Պէտք է որ շնորհակալութեամբ յիշեմ հոս ֆնաքլեան բարեյիշատակ Պետրոս Էֆէնտին, որ հաճած էր դպրոցատան 70 ոսկի տարեկան վարձքին երաշխաւոր ըլլալու — 12 ոսկու կանխավճար մ'ըրած էի Արամեանէն ստացած վերջին երկու ամսականներովս —, եւ որ առաջին մէկ երկու

մասնավճարներն ըրաւ՝ հաշուակցելով յետոյ մեղ հետ, վասն զի մեղ յանձնած էր իր երեք մանչ զաւակներն ու տանը մէջ կը դասախօսէի իր աղջկան: Նաեւ պէտք է որ յիշեմ Եօզղաղցի Յակոբ աղա անուն բաւական ունեւոր ատաղձագործ մը, որ ապա-ռիկ շինած էր իբր 40 ոսկւոյ արժէքով գրասեղան, գրատախ-տակ, ամպիոն, ճաշասեղան:

Հետաքրքրական է աչքէ անցընել, մեր գպրոցական ար-ձանագրութեանց հին տուճարներուն մէջ, առաջին տարիներու ամսավերջի քննութեանց ասան քննիչներու — տարեկից ու երէց պաշտօնակիցներու եւ այլ ուսումնական անձերու — գրաւոր վկայութիւնները, ըստ սովորութեան մը որ կար այն տեսները եւ զոր մեր չորրորդ տարիէն վերցուցինք մեզ համար: Բայց անշուշտ այն սկզբնական տարիներուն մէջ շատ քաջալերիչ եղած են մեզ ձեռնհասներու գոհունակութեան վկայութիւնները: Այդ ար-ձանագրութեանց մէջ այսօր անհետացած դէմքերու ձեռագրերը կան, Սրուանձտեանց Գարեգին վարդապետի, Ս. Գ. Գ. Փափա-զեանի, Եղիազար Մուրատեանի, Սիմոն Միքայէլեանի: Թող ներուի յառաջ բերել այս վերջնոյն, որ Ուսողութեան ուսուցիչս եղած էր Խասգիւղի Ներսիսեան վարժարանին մէջ, տուած համառօտ ու պարզ վկայութիւնը, որուն մէջ հօր մը ձայնը կը կարծեմ լսել որ մեծութիւն կը գուշակէ իր զաւակին գործին մէջ եւ այդու կը յուսագրէ ու կը խրախուսէ:

«Քանակագիտութեան քննութեան ներկայ գտնուելով՝ գոհ եւ ուրախ եղայ աշակերտաց պատասխաններէն, եւ քիչ ժամա-նակէն կը յուսացուի որ առաջին կարգի գպրոց պիտի ըլլայ:

77 յուլիս 19:

Ս. Միքայէլեան:»

Հեռի՛ յինէն առաջին կարգի բառերուն պատուասիրա-կան ու քաջալերական չափազանցութենէ տարբեր իմաստ մ'ըն-ծայելու յաւակնութիւնը. բայց նայելով այսօրեայ 25 ամեայ քիչ թէ շատ յաջողակ յարատեւութեանը գործոյն զորնա դեռ իր որ-րանին մէջ կը դիտէր՝ թողան մը կենսականութեանը վրայ պապու մը յայտնած վստահալից եւ ցնծալից նախատեսող ներշնչմանը պէս բան մը տեսնել կը փորձուիմ այդ սողներուն մէջ՝ գրուած ձեռքէ մը, զոր, աւանդ, մահն ընդհուպ պիտի գօսացնէր, եւ կը յուզուիմ:

Դպրոցական Գ. տարւոյն (1878—79) սկիզբները մեր գիշերօթիկ աշակերտաց թիւը սկսաւ շուտով աճիլ. նոյեմբերի մէջ արդէն 25ը անցած էր եւ երթալով յաւելնալ կը խոստանար: Ընդարձակագոյն յարմար շէնք մը գտնել Գատըգիւղի մէջ կարելի չէր երեւեր. ուստի ստիպուեցայ թողուլ Գատըգիւղը եւ անցնիլ Իւսկիւտար: Գատըգիւղի ծնողքներ շատ ստիպեցին զիս մնալ ու բաւականանալ այդքան աշակերտով. երկիւղ ալ կը յայտնէին որ մեծագոյն թիւ մ'աշակերտաց գուցէ դժուարութեանց մասնէր զիս ու անկարողանայի վարել բազմապահանջ գործ մը: Չանսացի, փոխադրուեցայ Իւսկիւտար (Իճասիէ) ուր ընդարձակագոյն ասպարէզ մը գտայ. գիշերօթիկներու թուոյն հետ արտաքիններու թիւն ալ շատցաւ շուտով: Ջարւոյն վերջը 50 եղած էին գիշերօթիկները, ու Գ. տարեշրջանը արդի շէնքին մէջ (Սէլամսրզ) սկսանք: Նոյն իսկ այդ տարեշրջանի առաջին ամիսներուն պարտաւորուեցայ վարձել մեր դրացի Օտեանց ընդարձակ տունն ալ, այժմ Ամերիկեան Հոմին միացած, իբրեւ ննջարան միայն գործածելու համար, այնքան մեծ էր հոսանքը գիշերօթիկներու, աւելի քան ութսուն: Այս հոսանքը չարունակուեցաւ սակայն, նուազեցաւ իսկ ապա. հարկ եղաւ ինձ յաջորդ տարին ամիսփոփիլ արդի տան մէջ: Ու հոն ենք քսան եւ մէկ տարիներ է ի վեր, ելեւէջներ ունենալով թէպէտ նիւթական յաջողութեան մասին, այլ անընդհատ յարատեւութեամբ գործոյն:

Գատըգիւղէն բաժանումը, սակայն, բաւական ցաւագին եղաւ սրտիս: Խասագիւղէն հոն փոխադրուած 1872ի վերջերէն ի վեր՝ 6 տարի բնակած էի այդ թաղին մէջ, ու շատ սիրած էի զայն: Հոն կանուխէն աշխատիլ սկսած էի կրթական գործին, աշակերտներ հասուցած որոցմէ փայլեցան Միհրան Աբբանազ եւ Յարութիւն Գիմաքսեան: Համակիրներու շրջանակ մը կազմած էի իսկ հոն, եւ իբր ծննդավայր մը ընտանի եղած էր ինձ: Բոլոր փողոցները ծանօթ էին ինձ, եւ մանաւանդ բոլոր ծովեզերքները՝ որոց վրայ թափառած էի սրտի թարմ զգացումներով: Շքեղ վերջալոյսերու հանդէպ քանիցս անյագ կանգ առած էի երկար, ու Մօտայի հրուանդանին ծայրէն որչափ անգամներ յափշտակուած ընկղմած էի՝ երազալից՝ կապոյտ անհունութեան մէջ զոր ծովը կը պատկերէր, կամ երեկոյի ստուերներուն մէջէն դէպի Ֆէնէր-Պաղ-

չէի փարոսը մագնիսուած, ժամերով անշարժ: Իւսկիւտար փոխադրութեանս առաջին ամիսներուն մէջ պարզապէս ծովուն հայրենաբաղձութիւնն ունէի. ստնահաս աղու մը պէս դժբաղդ կը զգայի ինքզինքս: Ընդերկար պահեց Գասըգիւշ իմ վրաս իր դիւթութիւնը, եւ մէկէ աւելի անգամներ փորձ փորձեցի հոն դառնալ, բայց միշտ յարմար չէնք մը գտնելու դժուարութիւնները եւ մղեցին զիս: Կամաց կամաց Իւսկիւտար անոր տեղն առաւ իմ որտիս մէջ: Անոր պողոտայներուն լայնութիւնը, անոր բարձրութիւնները սկսայ սիրել, ու անոր եկեղեցիներուն մեծութիւնը, Ս. Խաչին սուուերները, Ս. Կարապետին առատալոյս պայծառութիւնը, եւ Իւսկիւտարցի հայ ժողովրդեան բարքերուն առաւել պարզութիւնը: Մարդ կը սիրէ այն տեղերը որոց վրայ իր քրտինքը կը թափէ. յամառ ու անվրդով աշխատութեան յարմարագոյն վայր մ'էր Իւսկիւտար. կամաց կամաց ինձ աշակերտեալներու նորահաս սերունդներ կը կաղմուէին հոն, որք ամէն քայլիս դէմն կ'եննէին՝ հոգւոյ ազգականութեան ժպիտ մը իրենց աչքերուն մէջ: Բայց Իւսկիւտար պիտի շղթայէր զիս երջանկութեան եւ դժբաղդութեան ամենէն ամուր շղթայներով: Հոն, դպրոցական մեղուանցիին մէջ, իմ ընտանեկան բջիջս պիտի կաղմէի. անոր ծառերուն շուքին տակ պիտի պատսպարէի իմ բոյնս, անոր պարտեզներուն մէջ ամենէն երջանիկ ժպիտներս պիտի ժպտէի, ու, աւանդ, անոր հողերուն վրայ ամենէն լեղի արցունքներս պիտի լայի...:

Վերեւ ակնարկուած բարեկամը գրած էր թէ ոմանցմէ գուցէ տասնհինգութիւն մեկնուելու աստիճան միօրինակութեամբ մը կը սահին օրերս, մի եւ նոյն գործը կրկնելով ամէնքն ալ, մի եւ նոյն վաստակը բերելով շարունակ, իրարու ետեւէ, անփոփոխ, անձանձոյթ, եւ ինք ասոր մէջ կարողութիւն մը կը գտնէր: Կարողութիւն կամ տկարութիւն, չգիտեմ, բայց ներքին զգացումն ու համոզումն յամառօրէն հաւատարիմ գտած են զիս միշտ ու որոշ կերպով ձեւացուցած կեանքիս տարազը, պարտականութեան պահանջատուութիւնը տալով անոր: Հիմայ դժբախտ, բայց սրտակէզ վշտիս հաւատարիմ, կը շարունակեմ միւս կողմէ հետեւիլ այն համոզումներուն որք զիս մղեցին առանձին վարժարան մը հիմնելու: Կը հարցնէք ինձ, սիրեցեալ բարեկամ, թէ ինչ կրթասիրական իտեալ ունեցած եմ զայն հիմնելու ատեն: Իտեալս շատոնց

արձանագրած եմ վարժարանիս Յայտագիրներուն ճակատը. «Պէրպէրեան վարժարանի նպատակն է պատրաստել Ազգին լուսամիտ եւ ազնուասիրտ անդամներ», որք աննախապաշար բազմակողմանի կրթութեամբ մը մշակուած մտքեր, ուղղաբարոյ եւ բարեսէր ընթացքով Պետութեան եւ Ազգին պատուաբեր ու շատակար անհատներ, սիրոյ ու փափկութեան ընդունակ հոգիներ ըլլան: Հանրային կրթութեան մասին կայսերական կառավարութենէն արտօնուած անհատական գործունէութեան շրջանակին մէջ ինքնուրոյն ուժերով ու համոզումներով գործել նախընտրեցի, եւ այսօր, մտացի, պարկեշտ ու արդիւնաւոր գործունէութեան այլեւայլ ասպարէզներուն մէջ փայլող Պէրպէրեան Սանուց կարեւոր թուին հանդէպ, կ'ըսեն ինձ թէ իտեպլս ըստ կարի իրագործուած է:

(Մասիս, 1901, Երկրորդ շրջան, Թիւ 43:)

18. ՃՈՒՅՑՈՒՆԵՐԻՆ ԱՎՈՆ

(1901 Հոկտեմբեր 28)

Բարձրաշնորհ Սրբազան Հայր, Գերապատիւ Ս. Հարք, եւ Մեծաշուք Տեառք եւ Տիկնայք,

Երբ, քսան եւ հինգ ամեր յառաջ, Հոկտեմբեր ամսոյ 1ին, առաջին դասերը կ'սկսէին Պէրպէրեան վարժարանին, կրնայի մտքէս անցունել թէ անզօր անհատի մը կողմէ հիմնարկուած այդ զաղփաղփուն հաստատութիւն, քառորդ դարու շրջան մ'անընդհատ բոլորելէ յետոյ, իր գոյութեան 26^{րդ} տարին պիտի թեւակոխէր համակրութեան այսպիսի խանդավառ ու միահամուռ ցոյցերու մէջ, ցոյցերու որք հայ ժողովրդեան ամէն խաւերէն բղխին, այնքան բարձրերէն — մինչեւ Հայրապետական գահերէ — գան որքան հեռուներէն, այնքան եկեղեցականէն որքան աշխարհականէն, այնքան ճոխէն որքան համեստ արհեստաւորէն, այնքան ընտանի սանէն որքան այլուր աշակերտեալէն, այնքան գրականէն որքան ուսմկէն, աշխուրներէն որպէս մանուկներէն: Նոյն իսկ քանի մ'ամիսներ յառաջ որ քսան եւ հինգ տարիներու յարատեւութիւնն իր գործը կատարած ու երբեմնի անստոյգ ապագան իրականացած բաւական երկար անցեալի մը փոխած էր, այդպիսի

Տեղապատկեր մը իրական ցնորք մը միայն պիտի թուէր իմ մտաց, զի այդ յարատեւութիւն, ինքնին որքան ալ արժէք ունենայ, առանձին չպիտի արդարացներ զայն յաչս իմ: Այդ ցնորքը, սակայն, իրականութիւն մ'է ահա. գոհութեան բարբառք, խնդակցութեան արտայայտութիւնք, օրհնութեանց ձայներ ու բարեմաղթութեանց խօսքեր կը հնչեն այս խոնարհ յարկին առկա սիրոյ լայն պսակ մը կը բոլորի անոր շուրջը, բազմախուռն բարեկամ հոգիներու ըզձից ծաղկաբուրմամբ խնկաւէտ մթնոլորտ մը կը լնու զայն ու կը շրջապատէ զայն, եւ անոր հիմնադիրը՝ յուզուռն շուարած՝ չգիտէ ինչպէս պատասխանել բոլոր այն աջերուն որք, համակրանաց նիւթական թէ բարոյական ընծայներով ծանրաբեռն, հորիզոնին այլազան անկիւններէն առ ինքն կը կարկառին, բոլոր այն ձայներուն որք սրտաբուղիս ողջոյն մը կը բերեն իրեն՝ հեռագրի, նամակի, ուղերձի, գրական յօդուածի կամ քերթուածի, բերանացի շնորհատութեան այլ եւ այլ ձեւերուն աակ: Ու Ազգին պատկառելի Հոգեւոր Գլուխը, որ երկու ամիս յառաջ իր ձեռօք ներկայացուցած էր այս շատատուութեան վարչին կայսերական բարձրաշնորհ բարեհաճ գնահատութեան թանկագին նշանակը, կրօնական հոգեւոյզ սրբանուէր պաշտամանց նախագահելէ եւ իր ամենէն պանծալի ու պանծացուցիչ ակադեմական քարոզներէն մին այս կրթական տօնին նուիրելէ յետոյ, կը հաճի գահերէց բազմիչ համակրանաց ու խրախուսանաց հաւաստիքներ ի յայտ բերող վեհ Ակումբի մը, որուն իրենց ներկայութեան շուքը կ'ընծայեն ազգային եկեղեցական եւ աշխարհական պաշտօնական մարմնոց, Մամլոյն, Ուսուցչութեան եւ համազգի Գրականութեան արժանայարգ ներկայացուցիչք, — շրջապատած Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին պատգամաւորները, — իրենց երիտասարդ նորափայլ արժանեացու ձրից ծաղիկներուն զարդը՝ նախկին Սանուք, եւ ժողովրդական գոհունակ զգացումներուն ջերմութիւնը՝ Ծնողք եւ բարեկամք, ամէնքը՝ ներկայ թէ բացակայ մասնակիցք՝ պատասխանելով սիրախանդ հրաւերին Պատրիարքական Շրջաբերական Կոնվակին որ մարմին կուտար ազնուազգած նախկին Սաներէ յղացուած խորհրդոյն, որ, Նորին Ամենապատուութեան գրչով շարագրուած, ինքնին բարձրարժէք գնահատում ու վարձք մ'էր անգին, նախաքայլ

միայն, սակայն, յետագայ այնքան բարեյոժար ջանից՝ ի գլուխ փոյթեռանդն Յանձնաժողովոյն Յորեղինի, եւ զոր պիտի գար պսակել ի վերջոյ Նորին Բարձրաշնորհ Սրբազնութեան պատուական նուէրը իւր մեծադիր լուսանկարին՝ օրհնածիր մակագրութեամբ ուր կը հաճէր պատուել զմեզ «Հայր Զարգացելոց», վերակոչմամբ եւ վարժարանիս հիմնարկութեան թուականը նուիրագործել խորհրդաւոր տառագրութեամբ (Ռ. Պ. Ն. Զ. = 1876):

Կրթութեան ու լուսաւորութեան խոնարհ գործաւորի մը համեստ շրջանակին ու համեստ ակնկալութեանց բաղդատմամբ այսքան ստուար համեմատութիւններ ստացող առ նա եւ առ իւր գործն համակրանքի այս մեծ ցոյցին բացատրութիւնը կը ջանամ գտնել, եւ կը գտնեմ թէ երբ ժողովուրդներ համոզում մը, գաղափար մը ուզեն շեշտել, զայն կ'անձնաւորեն անհատի մը վրայ որ կը թուի իրենց իբրեւ թանձրացում, իբրեւ իրականացեալ բացատրութիւնը այդ հաւատոյն, այդ խորհրդոյն, թէեւ իրականն այդ գաղափարական ըմբռնումը լիովին արտայայտելու կատարելութենէն պակասի: Եւ ահա՛ հայ ժողովուրդը, խորապէս թափանցուած դաստիարակութեան գործոյն նուիրականութեան, մեծութեան ու կարեւորութեան գաղափարով, յիս կը հաճի խորհրդանշան մը տեսնել այդ գործոյն ու իւր կրթասէր խանդին վկայութիւն ու գոհացում տալու եղանակ մը կ'ընէ պատուոյ ու քաջալերութեան երաշխիքները զորս առ իս շուայել արժան կը դատի: Յարօրէն յաւակնութիւն մը կ'ըլլար ինձ անոր հոգեբանութեան այս կէտն անտեսել ու իմ արժանեաց, որ ոչինչ ունի փայլուն, վերագրել ամբողջութիւնն այն սրտազեղ խանդավառութեան որ կ'արտայայտուի Պէրպէրեան անուան շուրջը: Էր երբեմն, մտքի գործաւորը, գրքի ու գրչի մարդը, ուսուցիչը, արհամարհուած արգահատելի եակ մ'էր յաչս բազմաց, ոչինչ աւելի բարձր, մեծամեծաց տուններուն մէջ, քան ծառայները որոց հետ կը ճաշէր: Տիրացու, վարժապետ անունները՝ որովք կը կոչէին զայն՝ անարգական տիտղոսի հոմանիշ էին, կէս-ապուշ վերացամիտ մարդու, քիչ մը վհուկ, որ գիլքերու մէջ աշխարհքը կը մոռնար, բառերու օգային հնչիւնը մետաղին դրական հնչիւնէն նախադաս համարելու միամտութիւնն ունէր, որ լաւ էր առ առաւելն զիրենք զբոսցնելու եւ իրենց տղոց չարաճճի քմահա-

Ճոյից նշաւակ ըլլալու: Այդ թիւը տեսութիւնը տակաւ ուղղուեցաւ Հայ ժողովրդեան մէջ. գիտութեան ու կրթութեան պէտքին զգացման աճելուն, ինչպէս նաեւ ուսուցչին ալ այդ պէտքին եւ իր կոչման լաւագոյնս պատասխանելու ջանքերուն չափով՝ վարժապետը այրակերպեցաւ, բարձրացաւ անոր աչքին առջեւ ու տակաւ նուիրական հանգամանք մ'իսկ սկսաւ զգենուլ, իրրեւ աշխարհիկ քահանայն նոր ժամանակներուն: Մտքերու մէջ կատարուած այս երջանիկ բարեշրջումը կը շեշտեն դպրոցին մէջ ու հրապարակին վրայ լուսաւորութեան ծառայող մարդոց մատուցուած սոյնօրինակ պատիւներ, իրենց անձէն աւելի իրենց ներկայացուցած գաղափարին ընծայուած յաւէտ: Վարժապետութիւնն է մանաւանդ այս փառաւորման առարկան:

Ի մասնաւորի՝ Պէրպլերեան վարժարանի արդիւնաւորութեան նկատմամբ տրուած ցնծագին ու շքեղ այս վկայութիւն, ներուի ինձ Ազգին խորհող ու առաջնորդող դասակարգերուն կողմէ հանգիստուոր գնահատումն ու վաւերացումը համարել այն կրթական սկզբանց որք անոր Տնօրէնը առաջնորդեցին իր 25 ամեայ գործունէութեան մէջ: Երկու են անոնք էապէս: Առաջինն այն է թէ կրթական գործը գերազանցապէս բարոյական գործ մ'է, թէ դաստիարակը հոգիներու յանձնառութիւն մ'ունի եւ հետեւապէս բարոյական ծանր պատասխանատուութիւն, թէ մաքուր ու ամուր բարոյականով մը զինել իրեն յանձնուած սերունդները՝ առաջին ու հիմնական պարտականութիւնն է դաստիարակին, եւ թէ կրթական գործին մէջ բարձրագոյն գերակշիռ նպատակը Դաստիարակութիւնն (éducation) է եւ անոր իբրեւ միջոց պարտի ծառայել ու ստորագասուիլ Ուսումը (instruction): Երկրորդ սկզբունքը կրթութեան բոլորամասնեայ, ամբողջական ըլլալն է՝ որով դաստիարակութիւնը կը լինի միանգամայն բարոյական, մտաւորական, գեղեցկագիտական ու ֆիզիքական, եւ մտաւորականը՝ բազմակողմանի՝ կ'ընդգրկէ առանձինն գրականն ու գիտականը, պատմականն ու իմաստասիրականը, տեղականն ու արտաքինը, սեփականն ու օտարը, տեսականը թէ գործնականը: Պինդ համոզուած այդ սկզբանց, գիտակից դաստիարակի ու դպրոցավարի կոչման պահանջներուն ու անոր սրբութեան զգացմամբ տոգորուն, կրնամ ինքզինքիս վկայութիւնը տալ իմ խղճիս

մէջ — ինչ որ պարկեշտութեան պարտք մ'է, ոչինչ աւելի — թէ իմովսանն ջանացած եմ հաւատարիմ մնալ անոնց, ոչ բանի մ'ուզած զոհել կամ ստորագրաս Կնել զանոնք, ո՛չ մէկ հնարաւոր զոհողութեան ու ճգան առջեւ նահանջած՝ ապահովելու համար այդ սկզբանց գործադրութիւնը, գոհացում ատլու այդ պահանջներուն, խօսքի պատուէրին քով գործի օրինակը դնելու, աննեղ մնալու այդ սրբութեան: Ինչ որ թերի էր յիս ու գործիս մէջ՝ ջանացած եմ ընուլ, ինչ որ տկար՝ զօրացնել, ինչ որ թոյլ՝ պնդել, եւ պէտք է որ խոստովանիմ թէ այդպիսի ըմբռնում մ'իմ պաշտօնիս՝ մեծապէս սատարած է անձնական յառաջդիմութեանցս, այնպէս որ կրնամ ըսել թէ ես ալ իմ վարժարանիս աշակերտն եմ մասամբ ու իմ բարոյական եւ իմացական մշակումէս շատ բան կը պարտիմ անոր: Ու արդեանց գեղեցկութիւնը կը քաջալերէր զիս շարունակ, եռանդս ու աշխոյժս կը բորբոքէր անդուլ, կիրք մը կ'ընէր իմ գործս ինձի, դաստիարակի խիղճս երթալով խստապահանջ կը սրէր, միշտ աւելի անդիմադրելի դարձնելով ուսուցանելու հրապոյրը, տակաւ աւելի բուռն՝ ուսանողաց օգտակար ըլլալու տենչը, աւելի քաղցր ու ոգեւորիչ՝ կատարուած պարտականութեան զգացումը:

Այսպէս, մտադիր եղայ միշտ աշակերտներուս մէջ նա մանաւանդ բարոյական մարդը շինելու, նկարագիրը կազմելու, որքան որ իմ շուրջ, դուրսը, մտածելու կարի դրական կերպ մը, սովորական եղած, թուէր հեգնել մեր բարոյագիտական ուղղութիւնը: Ա՛յ ուզէի որ ընթերցուածք, թարգմանութիւնք, արտասանութիւնք, շարագրութիւնք ծառայէին ո՛չ միայն լեզուներուն արտաքին ձեւն ուսնելու կամ իրողութեանց ծանօթութիւններ աւելցնելու, այլ նաեւ դասարանաց ընթացքին մէջէն աշակերտաց մէջ բարոյական պարտականութեան զգացումը ու բարոյական գեղեցկին ճաշակը մշակելու եւ պատրաստելու զիրենք, բոլոր գիտական, գրական եւ իմաստասիրական ուսմանց աջակցութեամբն, լաւապէս ըմբռնելու բարոյական գիտութեան խորհրդածուած դասերու շարքը որ պիտի պսակէր իրենց կրթութեան ընթացքը: Խորհրդածուած, իմաստասիրուած բարոյականի դաս մը, հիմնուած մարդուն հոգեբանութեան եւ մարդկային մտքին ու ընկերութեան զարգացման պատմութեան վրայ, այո՛, անհրա-

Ժեշտ լրացուցիչն համարած եմ ես ճշմարիտ ու կատարեալ դաս-
 տիարակութեան մը: Մարդը. ֆիզիքական ու մտաւոր ուժերու
 ամբողջութիւն մ'է. պէտք է որ այդ ուժերուն բարւոյք ու բա-
 րերար կիրառութեան օրէնքները գիտնայ, եւ բարոյականի ամէն
 պատուէրը խախուտ են՝ եթէ բանականութեան սկզբունքներուն
 հետ համաձայնութեան գրուած չեն, եւ այնքան մաքին համո-
 ջուճներն որքան այդ համոզմանց ներգործութեամբ սրտին գի-
 տակից ու ուժեղ գրգռումները չեն եղած: «Սշխատինք լաւ խոր-
 հելու, ահաւասիկ բարոյականի սկիզբը» (Travillons à bien
 penser, voilà le principe de la morale), կ'ըսէր Բասքալ, եւ
 աստի քանակական ու բնական գիտութեանց քով ու անոնց վե-
 րեւ կենսական առաջնակարգ կարեւորութիւնը բարոյական-ընկե-
 րական գիտութեանց, այն է իմաստասիրական ուսմանց: Վար-
 ժարանիս Բ, տարիէն, ուր մեր առաջին ընթացաւարտ կարգն
 ունեցանք, սկսանք մշակել փիլիսոփայութիւնը մեր վարժարանին
 մէջ, չնայելով մեր տկարութեան՝ այլ զայն զօրացնելու յարատեւ
 հետապնդութեամբ, ոչ ի զարդ ինչ կամ առ սնափառութեան,
 այլ աւագ օգտակարութեանն համոզմամբ, այլ իբրեւ ուսում որ
 բոլոր ուսմանց կամարին կապը (clef de voûte) պիտի ըլլար,
 զանոնք ամէնքն իրենց գերագոյն միութեան վերածող ու գերա-
 զանց վախճանին կապող, իւր անձին ու մարդկային կոչման գի-
 տակցութիւնը պիտի տար ապագայ մարդուն, կեանքին նպատա-
 կին ու հարկադրած պարտականութիւններուն ըմբռնումը պիտի
 պայծառացներ զօրացներ կեանքի պայքարին ու ընկերականու-
 թեան կոչուող էակին մէջ: Ինչ որ ներքին գէմյանդիման տեսու-
 թեամբ մը կանուխէն ըմբռնած էի՝ այսօր օրուան խնդիր մ'է
 յեւրոպայ. Ալֆրէտ Ֆուլյեէ Գաղիացի իմաստասէրը գիրք մը կը
 հրատարակէ այս տարի, „La réforme de l'enseignement par la
 philosophie“ («Ուսուցման բարենորոգումը փիլիսոփայութեան
 միջոցաւ»), ու կ'ուզէ որ ոչ միայն իմաստասիրութիւնն անհրաժեշտ
 պատկն ըլլայ երկրորդական ուսմանց՝ աւանդուելով յատուկ մաս-
 նագէտ ուսուցչէն, այլ եւ բոլոր այլ ճիւղերու ուսուցիչք փիլի-
 սոփայական ոգի ու մշակութիւն ունեցող մարդիկ ըլլան, որպէս
 զի անպիտօրէն մանրամասնեալ ու ծանրաբռնեալ յաւակնոտ
 ներկուռութեան մը (érudition) մէջ չկորսնցնեն կարեւորն ու

գլխաւորը, որպէս զի կարծեցեալ ազատախոհութեամբ մը, այլ յաւէտ ըմբռնման անձեռնհասութեամբ, բարոյական եւ ընկերական խնդրոց վրայ չմոլորեցնեն ուսանողին միաքն ու խիղճը, եւ որպէս զի բարձրանկատ համերաշխութեամբ մը ապահովեն դաստիարակութեան գերագոյն նպատակին յաջողութիւնը, որ է մարդկային ընկերութեան համար առողջ ու ազնիւ տարրերու պատրաստութիւնը: Ալֆրէտ ֆուլյեէ համարձակութեամբ կը գոչէ, «Միակ մանկավարժութիւնը՝ փիլիսոփայութիւնն է» (՝La seule pédagogie, c'est la philosophie«):

Բարոյական-իմաստասիրական կրթութեան այս սկզբունքին քով զուգաբայլ գործակից եղած է մեզ նաեւ, որպէս ըսի, բազմակողմանի բոլորամասնեայ կրթութեան սկզբունքը: Արեւիկն արդէն մեծ մասամբ պայմանն է առաջնոյն ու լայն ու ամուր խորիսի մը կը պատրաստէ անոր: Օգտակարութիւնն ամբողջութեան մէջ է, վասն զի մասունք զիրար կը լրացնեն ու կը զօրացնեն: Հոգին մշակելու ատեն զանց չընել մարմինը, ու այս ոչ միայն մարմնոյն ուղղակի օգտին համար, այլ նաեւ հոգւոյն որ մեծամեծս կը շահի մարմնոյն ու առողջութեան ընծայուած խնամքէն, մարմնակրթական մարզանքէն ու կազդուրիչ զբօսանքէն. — Սիրտը կրթելու ատեն զանց չընել միտքը, ոչ միայն վասն զի մտքին լուսաւորութիւնը բանաւոր էակին ճշմարիտ կարն ու զօրութիւնն է, այլ նաեւ վասն զի լաւ խորհող ու լուսաւորուած բանականութիւնն ապահովագոյն ընկեր եւ ուղեցոյց մ'է սրտին, անոր բնական ազնիւ ձգտումներն ամրացնող, անոր մէջ բարւոյն գիտակցութիւնը պայծառացնող, կրից անկարգ թափին ընդգիմագործող ու զգացմանց ու յուզից մէջ բարբերար հաւասարակշռութիւնն հաստատող. — Մաքին զարգացման մէջ չդիտել միայն այն հրահանգներն ու ծանօթութիւնները որք ապրուստ շահելու ու վասակելու խնդրոյն մէջ կրնան անմիջական ու յայտնի օգտակարութիւն մ'ունեննալ ըստ միջավայրին, այլ եւ զանոնք որք մտքին կարողութիւնքը կը սրեն ու կը զարգացնեն, անոր լուսաւորութիւնը կ'աճեցնեն, անոր հասկացողութիւնը կը խորցնեն, կը նրբացնեն ու կը բարձրացնեն, եւ որք ուսնիլը, դպրոցէն ետքն ալ, շարունակ ուսնիլը սիրելի ու գիւրիկն պիտի ընեն անոր, քննասիրութեան ոգին մշտաբորբոք ու իմացական հաճոյքներու աղբիւրները մշտաբուղիս պիտի

պահեն անոր մէջ, — բարձրագոյն օգտակարութեանց օճան՝ որք որքան ի սկզբան ու ամենուն ոչ զգայլի՝ սակայն անհատին ապագայ մտաւոր արժանաւորութեան, ինչպէս եւ իր յատուկ ասպարիզին մէջ արագ ու փայլուն յառաջդիմութեանց մեծագոյն գրուականները պիտի ըլլան. — Մարդը պատրաստելու ատեն շնկատել միջավայրին ո՞ր վայրկեանին մէջ սահմանափակ մարդը, այլ տարածել անոր եսը միջոցին ու ժամանակին մէջ, գիտակցիլ տալ անոր մարդկութեան ընկերական, իմացական-ու բարոյական կեանքին՝ իր ամէն մասանց ու երեւոյթներուն մէջ, ու պատրաստել մարդը, լայն համակրութեամբ, անձուկ եսութիւններէն ու մոլեռանդ ատելութիւններէն զերծ, որ տոհմին ու երկրին, ժամանակացին ու նորին սիրոյն հետ գիտէ հաշտեցնել օտարին, հեռաւորին ու հինին սէրը, որ կ'ընդլայնէ իր եութիւնը, կ'ընդարձակէ սիրտը, կը մեծցնէ միտքը. — Ղերջապէս, Ֆիզիքական, մտաւորական ու բարոյական հրահանգաց խառնել գեղեցկագիտական մարզանքն ու կրթութիւնն ալ՝ գեղարուեստական ճիւղերու մշակմամբ, գծագրութեամբ եւ երաժշտութեամբ, ու ի վեր քան զամենայն՝ բանաստեղծութեամբ, զնելով տղոց զգայարանքն ու երեւակայութիւնը գեղեցկին, իտէականին իրացումներուն գիմաց, տալով անոնց ըմբռնելու զանոնք, սոգորուիլ անոնցմով, մարզելով զիրենք նմանողութեան ու արտագրութեան փորձերու, նկարներու, երգերու, արասանութեանց ու գրական շարադրութեանց մէջ, ու այս ոչ միայն գեղեցկին ուղղակի տուած ու բոլոր կեանքին համար վերապահած ինքնուրոյն քաղցրութիւններուն համար, այլ եւ այն թանկագին նպաստին համար զոր գեղեցկին զգացումը կը բերէ բարոյական կրթութեան: Ահա թէ ինչպէս հասկցած ենք բազմակողմանի կրթութիւնը եւ անոր օգուաները, եւ հաւատքով ու խանդով գործադրած, կատարելագործելով տակաւ մեր ծրագիրը, մեք մեզէն բազմապահանջ:

Յետ քիչ թէ շատ սկեպտիկութեան շրջանի մը ուր մեր աւանդած կրթութիւնը քիչ մը շատ ծանրաբեռնուած, քիչ մը շատ գաղափարական կը գտնէին, հետեւաբար ուսանողաց ժամանակին եւ ոյժերուն աւելի կամ նուազ յանօգուտս վատնիչ, եւ զմեզ անձնական հայեացքներու ու ճաշակներու անիրաւ յամուութեամբ կառչող փակչող միտք մը, (թէ եւ ոչ նուազ շատ կա-

Նույնն շասարակութեան ցոյց տուած վստահութիւնը բաւական եղաւ գոյացնելու մեր գործին շարունակման անհրաժեշտ նիւթական միջոցները), ի տես գեղեցիկ արդեանց, ի տես սկզբունքի ու նկարագրի տեր՝ գեղեցիկ մտաւորականութեամբ մ'օժտուած, ազնիւ, պատկեշտ ու գործունի, առ պետութիւնն իւր պարտուց հաւատարիմ, Ազգին պատուաբեր սերունդին, զոր կազմած ըլլալ մեծագոյն փառքն է Պէրպէրեան Ղարժարանին, անոր աւանդած տեսլապաշտ՝ այլ ոչ նուազ եւ գործնական կրթութիւնը ուղղող, ոգեւորող ու բեղմնաւորող այս սկզբունք տակաւ հասարակաց համագումր եղան գրեթէ, ու գործչէն աւելի անոր սկզբանց յարգանք կը մատուցուի այսօր, իսկապէս, ինչ որ կարեւորագոյնն է, եւ ինչ որ անշուշտ բուն շնորհաւորելին է, վասն զի ճշմարտութիւնը անսպառօրէն բեղմնաւոր են, իսկ անհատը՝ ժամանակաւոր միայն . . . :

Յանհունս շնորհակալ իմ Ձեզ, Սրբազան Յէր եւ Հայր, որ հոգեկան զգացումներու նուրբ հասկացողութեամբ մը, Ձեզ յատուկ, առաջին օրէն տրամադրութիւն ցոյց տուիք այսօրեայ կրթական ատեն սկսելու հոգեպաշտօն եկեղեցական արարողութեամբ մը՝ նուիրեալ պաշտելի յիշատակաց ծնողացս ու տարաբախտ Տիկնոջ՝ որոց անուանք յաւէտ անբաժան են գործէս որպէս անունէս ու սրտէս: Անհատը եթէ շատ անգամ հանրօգուտ գաղափարաց փոխ կու տան իրենց անունը որ ժողովրդոց ձեռքին մէջ պատրուակ մը կը լինի անոնց ընծայուած մեծարանաց, միւս կողմէ իրենց վրայ կը գումարեն պատիւներ որք իրաւամբ շատերու մէջ պարտէին բաժնուիլ: Գործիչ ու արտագրիչ անհատը ուժերու խտացում մը, ազգեցութեանց համարդիւնք մ'է, եւ իւր գործոյն ու արդեանց մէջ նա կը համադրէ բազում ներգործութիւններ որք յայլոց կու գան: Պաղօյն համար զոր կ'արտագրէ ծառը ինչեր չի պարտիրօղոյն ուրկէ կ'առնու թթուածինը զոր կը շնչէ ու ածխական թթունն յոր բնածուխն իւր հիւստեանքին մէջ կը տարրացնէ, եւ հողոյն՝ ուրկէ զինք անուցանող աղբը կը բաղէ: Որդին իր հօրն ու մօր կը պարտի յաճախ լաւագոյնը իւր էութեան՝ Ֆիզիքական ու բարոյական փոխանցուած յատկութիւններով, զի շատ անգամ ինչ որ ժառանգական ձրի շնորհ մ'է զաւկին՝ հօր կամ մօր քով կամքով ու ճգամբ ստացուած կարողութիւն մը

կամ առաքինութիւն մ'եղած է, ինչ որ բուն արժանիքը կը կազմէ՝ որ կամաւոր ճիգերով գոյացուցուած արգիւնքին մէջ կը կայանայ իսկապէս: Արդարութեան հարկ մը հատուցիք, փիլիսոփայութիւնը խառնելով կրօնքին հետ, Բարձրաշնորհ Արքազան Ցէր, օրհնելով յիշատակը հոգելոյս ծնողացս եւ հրճուեցնելով իրենց հոգիները՝ իրենց զաւկին գործունէութեան յիշատակութեանն առթիւ Ձեր նուիրական մաղթանաց առարկայն ընելով զիրենք: Իսկ թէ Երկինք ուզէր որ կենդանի ըլլար ու ներկայ այս հանգիսին այն հրեշապէր զոր կենակից ու գործակից առաւ ինձ, իրեն իրաւամբ պիտի վերբնծայէի — այժմ սեւ ու փշոտ հողակոյսին միայն զարդ — այս ծաղկունքն ու դափնիներ, զի ան իմ հոգեկիցս, իմ լաւագոյն բարեկամս ու հզօրագոյն աջակիցս էր, զի ան էր որ այնքան տարիներ իր անձնուէր սիրոյն խաղաղիչ, սփոփիչ, սրտապնդիչ, աստուածային ժպիտը շողացուց ճակատիս վերեւ՝ իբրեւ մաայլ դժուարուածներու վերեւ աստղի մը յուսութիւն կենսատու շողը, զի ան էր որ ասպարիզին անխուսափելի լեղիութիւնները քաղցրութեամբ կը մեղմէր եւ կը հզօրէր զիս ըմպել, զի ան էր որ իր գորովագութ անձնուէր սրտով, իր ազնուախոհ վեհ հոգիով զօրաւիգ էր ինձ՝ իբրեւ մայր չքնաղ՝ մեր սանուց բարոյական ու ֆիզիքական խնամածութեանն համար, զի անոր կնոջական պահպանող ոգին օգնութեան կը հասնէր ինձ երբ կը դեղեւէր կորովս ու կը խոնարհէր, երբ հեռուն տեսիլը կ'աղօտանար, եւ իր աջով քանիցս բռնած է զիս անկուծի եզրը, ան, խոհեարու ներշնչող Մուսայն, հոգւոյս վրայ մշտանորոգ առուգութիւնը թափող ոգին, արեւը օրերուս: Աւանդ, պէտք է որ այսուհետեւ մինակ քալեմ պարտաւորութեան ճգնալից ճամբան, մերկ այն ծաղիկներէն զոր նա, քայլիցս ընկեր ունեցուկ, կը ցանէր անոր վրայ, աշխատիմ անսփոփ ու տառապագին, ու քրտինքներուս հետ արցունքներս ալ խառնուին: Կարի դժնդակ չէ՞ փորձը, ո՛վ Ցէր . . . :

Ինչպէս չյիշել եւ զձեզ ու մեծ բաժինը երախտագիտութեան ձեր արգեանց ու առ ձեր յիշատակն պատկառու յարգանաց՝ կրթութեան գործին ի պատիւ այս ամսին մէջ, ո՛վ դուք որ այս վայրկենիս երկինքէն կը դիտէք ձեր սանը զոր այնքան սիրեցիք եւ որու մտաց ու սրտին առաջին մշակներն եղաք եւ որ կո-

չուեցաք Ներսէս Վարժապետեան, Թորոս Չօրայեան, Դաւիթ Կէօնճեան, Սիմոն Միքայէլեան, եւ դու եւս, խորախոր հմու-
թեամբ ու հօր իմացականութեամբ աւագ այր ու ճշմարիտ
վարդապետ-փիլիսոփայ արդարեւ, ով դուն որ՝ Սահակին ու Եզ-
նիկին նախանձորդ՝ նոցա ոսկեայ բարբառոյն առաջին ճաշակը մեզ
տուիր ու կիրքը մեզ ածանցեցիր որ ա՛լ չպիտի մարէր մեր մէջ, եւ
որ այսօր մտաւոր ճոխափայլ լոյսիդ աղօտացած ու տարտամ նշոյլ-
ներովը միայն, աւանդ, կը նայիս մարդոց, ով մեծդ Գարագաշեան,
ով իմ բօլոր Ուսուցիչներս, մաքիս դայեակները, նկարագրիս նա-
խամարզիչները, մտաւորականութեանս ծնողները, ընդունեցէք,
իբրեւ մեծ հայրեր, Սանուցս՝ ձեր թոռներուն սիրոյն հաւատստեաց
մէջ, որպէս եւ ամենուն, ձեր բաժինը որ մեծ է:

Վարժարան մը, մանաւանդ, բազմայօդ մեքենականութիւն
մ'է, բազմամասն գործարանաւորութիւն մը, ուր մէկէ աւելի ա-
նիւներու, գործարաններու գործողութեանց ու յատուկ գերերուն
զուգորդութիւնն ու փոխադարձ աջակցութիւնն հարկաւոր են որ-
պէս զի գործն իր արդիւնքն իրացնէ ու ծառայէ իւր վախճանին:
Հարկ է ըսել թէ Պերպերեան Վարժարանի վարիչը միշտ խնա-
մով ընտրուած ձեռնհաս անդամներէ բաղկացեալ ընտիր Ուսուց-
չական Մարմիններէ շրջապատուեցաւ, որք իրենց արդիւնաւոր աշ-
խատութիւնքը զուգորդեցին իրեններուն եւ նպաստեցին կազմելու
համերաշխ տարրերէ բաղկացած բազմաճոխ ու բազմապիսի այն
կրթութիւնը որ այս վարժարանինը եղաւ, եւ անոր արտադրած
տարեկան գեղեցիկ հունձքերուն մէջ իրենց քրտանց ու վաստա-
կոց մասն ունեցան: Քսան եւ հինգ զպրոցական ամբուս երկար
շրջանին մէջ 100 է աւելի ուսուցիչներ, հայ, թուրք, յոյն, ֆրան-
սացի, զուիցիւրացի, անգլիացի, գերման, մասն կազմած են վար-
ժարանիս Ուսուցչական Մարմիններուն, եւ եղան ու կան անոնց
մէջ որք երկարամեայ աշխատակցութիւն մ'ունեցան կամ գեռ
ունին մեզ հետ, որպէս Տեսաբն Չաքարեան, Մուրատեան, Աւան-
ձար, Լէսքան, Մաթէ, Չօլաքիաիս, Տրդ. Սեղառեան, Կոճիկ,
Արիկեան, Աբրահամ, Սեթեան, Կարապետեան, Նիկողոսեան,
Թաշճեան, Խորասանճեան, Սրապեան, Թահթաճեան, Պոյաճեան,
Պերպերեան, Թագւորեան, Անդրէասեան, եւ այլք. — Ի սոցանէ
իւրաքանչիւրն կարեւոր տաղձ մը բերած է շէնքին ամբողջու-

Թեան, ապա եւ այդ ամբողջին գնահատումը կը վերլուծուի տաղձներուն գնահատմանց:

Բայց, Բարձրաշնորհ Ս. Յէր, Գերաշնորհ Ս. Հարք, Ցեարք եւ Ցիկնայք, երբ կը մեկնեմ այսպէս խորհուրդն այս հանդիսի ու անձին տակ՝ տեղաւոր ու վաղանցուկ՝ գաղափարը ցոյց կուտամ, միշտ զօրութիւն եւ միշտ կեանք, ու բարդ եութեան մը տարրերուն մէջ կը բաժնեմ ծաղիկները պատուոյ լայն պսակին՝ կարի ծանր անհասական համեստ ճակտին համար, այսու կը նուազեցնեմ երախտագիտութեան պարտուցս մեծութիւնը որով սրտիս մինչ խորը տոգորեալ եւ զգածեալ կ'զգամ ինքզինքս այսօր որ ինձ կը տրուի վայելել Սանուցս անհուն սիրոյն եւ Ազգիս ներոյժ գուրգուրանքին շքեղ ու անմոռանալի արտայայտութիւնքը, ինչպէս ալ վերլուծուին անոնք իրենց գաղափարային իսկութեան մէջ: Պատիւը ընել անհասին զայն բացատրութիւնն ընելու մի կենսաւէտ գաղափարի, անոր մէջ տեսնել մէկէ աւելի ճառագայթներու վառարանը, այս իսկ չէ՞ մեծագոյն պատիւը զոր անհասի մ'ընծայէ համայնքը: Միշտ ժողովուրդները իրենց սիրածներուն մէջ իրենք իրենց վրայ կ'զմայլին, իրենց ցեղին ոգւոյն կը յառին եւ իրենց վայելքին կամ վերելքին առարկայ կամ պատճառ բարւոյն է որ պարտական կ'զգան զիրենք: Մեծ անձնասէրներն են անոնք, բայց եւ իրենց անձնասիրութիւնը, միակ օրինաւորն ու վսեմ անձնասիրութեանց, կը մտանանշէ անհատին՝ բարին որուն իբրեւ անդամ մ'ամբողջին, հետապնդել պարտի ան անձնական զօհողութիւններով, հանրային եսութիւնը գնելով որ գեղեցիկ է՝ անհասական եսութեան տեղ որ տգեղ ու պժգալի է: Համայնքի եսին այդ անդրադարձումներէն համարուիլ՝ առ որ իր պաշտելի եսամոլութեամբը դառնայ այն, այս իսկ չէ՞ մեծագոյն հանրային պատիւը, եւ այսպիսի պատիւ մ'է որուն իր տեսլականի աւելնին մէջ, թերութեանց անուշագիր, կ'արժանացնէ այսօր Ազգը իր բարւոյն խոնարհ սպասարկուններէն մին:

Երախտագիտական զգացումներու ամենախոնարհ ձօնս՝ իբրեւ դաստիարակութեան գործիչ զաւակը Երկրին՝ նախ առաջին կը համարձակիմ բարձրացնել յոտս կայսերական Գահոյից Օսմանեան Պետութեան, որու բարձրէն սիւռուած պահապան մեծաշուք հովանոյն ու կրթասէր պաշտպանութեան տակ կ'ապրին, կը բազ-

մանան ու կը զարգանան՝ բացի պետական մազմութիւ ուսումնարաններէն՝ դպրոցներ ղանազան հպատակ եւ օտար ազգաց եւ հասարակութեանց, ինչպէս ծնունդ առաւ, ապրեցաւ ու բարգաւաճեցաւ՝ ի մէջ այլոց՝ Պէրպէրեան վարժարանն, իւր կրթիչ ու բարոյացուցիչ նպատակին բոլորական անձնուիրութեամբ, գերազանց շնորհքը վայելելով նաեւ, Նորին Վեհափառութիւն Օգոստափառ Սուլթանէն առ Հիմնադիր-Տնօրէնն պարգեւուած պատուանշանով պատուեալ, արժանանալու վեհապետական թանկագին գնահատութեան:

Շնորհապարտութեան զգացմանցս ջերմ հաւաստին կը նուիրեմ խննարհաբար Ամենապատիւ Ս. Պատրիարք Զօր, որ այնքան անկեղծ ու որդեսէր համակրանօք գրկեց, հովանաւորեց ու եռանդագին գործակցութեամբ մարմնաւորեց այս տարեդարձական ձեռնարկին գաղափարը, եւ, իր գրովն ու խօսքով ու գործով ու նուէրով, այնքան անմոռանալի ապացոյցներ տուաւ իր թանկագին համարմանն ու բարեկամական վերաբերմանն առ իս եւ առ հաստատութիւնս մասնաւորապէս եւ առ կրթական գործն ընդհանրապէս: — Շնորհակալութիւն սրտագին առ Պատկառելի վարչութիւնն ազգային, որ առհասարակ շրջանակի մէջ վաւերեց ու արտօնեց մեր Սաներու նախաձեռնութեամբ եւ Ս. Պատրիարք Զօր միջոցաւ ներկայացուած խորհուրդը յորեւելեական յիշատակութեան, ու այսպէս պաշտօնական գնահատման բացառիկ պատուոյն ու վարձքին զմեզ արժանաւորեց:

Անհուն շնորհակալիք ու որդիական երախտագիտութիւն յաւերժ Եկեղեցւոյ վեհագոյն աթոռներուն արժանացած կրօնական այն ամենաբարձր Անձնաւորութիւններուն, որք Սիօնէն ու Զմիւռնիայէն իրենց սրտաբուղիս հայրական օրհնութիւններն ու նուէրները մեզ յղեցին, Ս. Գրիգոր Լուսաւորչէն մինչեւ Ներսիսեանքն ամէն հարց անունովն զմեզ ողջունելով, ինչպէս սրտազեղ գեղեցիկ խանդով կը գրէր Ամեն. Տ. Մեծբոսնիկ Սրբազան: Շնորհակալութիւն Չամչեան Տ. Բարթողիմէոս, Դիմաքսեան Տ. Հմայեակ, Երէցեան Տ. Գէորգ եւ Պալեան Տ. Տրդատ Սրբազան Եպիսկոպոսաց, որպէս եւ Կարնոյ առաջնորդական Տեղապահ Տ. Զաւէն Ծ. Վ. ին, Շապին-Գարաշխարի առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վ. ին, Տ. Յովհաննէս Մկրեան Աւագ քահանային, Բարիգի

Հայոց հոգեւոր հովիւ Յ. Վառժապուհ քահանային եւ այլոց հոգեւորականաց, եւ ի մասնաւորի՝ Արմաշու Դպրեվանոց վերատեսուչ եւ ուսուցչապետ Յ. Եղիշէ Եպ. Դուրեանի եւ ձեռնասուն վարդապետաց ու նոցին ներկայացուցիչ Գեր. Յ. Բարգէն վարդապետի, որոց ամենուն շնորհաւորական ջերմ մաղթանքն եւ նուիրաբերութիւնք, յաւելնալով առաջիններուն, մեր արժանաւոր հոգեւորականութեան թանկագին համակրանաց վայելման զգացումը կ'ամբողջացնեն մեր մէջ՝ շնորհապարտ յուզումներով ընկերացած:

Բիւր շնորհակալիք զգածեալ սրտիս խորերէն առ ամբողջութիւնն պատուական պաշտօնակցացս Կ.Պոլսոյ եւ առ Պատ. Ուսումական Խորհուրդն Կեդր. Վարչութեան՝ շքեղ պատուանիշ Յիշատակին համար զոր հաճեցան խորհրդանշանն ընել իրենց եղբայրակցական արծաթ եւ ոսկի զգացումներուն, եւ Պէրպէրեան վարժարանի հնձուած ու հնձելի արգասեաց, արդէն ծաղկած ու ուռճացած արգեանց ու ծաղկելի յուսագեղ կոկոններուն, ինչպէս գերազնիւն Տօքթ. Թորգոմեան՝ արժանաշատ Ատենապետն Կրթական Խորհրդոյ հաճեցաւ մացատրել պատուասիրաբար: Փոխագարձ սիրոյ ու բուռն շնորհակալութեան ողջոյն մը այն Ուսուցչաց եւ Ուսանողաց, կրթական Մարմնոց եւ Անձնաւորութեանց, որք Լայպցիկի Համալսարանէն, Կարնոյ Սանասարեանէն, Վանայ Երամեանէն, Բաբերդի Արամեանէն, Կեսարիոյ Կիւմիւշեանէն, Զմիւռնիոյ Մեսրոպեանէն, Այնթապի Վարդանեանէն, Ամերիկեան Ռոպէրդէն եւ յայլոց, իրենց համակիր զգացումներուն եւ իղձերուն գրաւականները մեզ հասուցին հեռագրով, նամակով ու ընծայաբերութեամբք, որոց մէջ Վանայ Համբարձում էֆ. Երամեանինը՝ գեղափայլ ցոլք մ'այնքան նուիրատուին սիրալոյս հոգւոյն որքան իր բնագաւառի ճարտարներուն գեղարուեստական նուրբ կարողութեանց ու ճաշակներուն, ու Գրիգոր էֆ. Մարգարեանինը՝ մտաւոր կենացս օրրան սրբայուշ վարժարանին ու Յառաջդիմութեան Անդրու վարին պատկերաց խորհրդաւոր զուգադրութեամբը՝ սրտի ու մտաց խորութիւններէն բղձող ու խորութեանցը մէջ մխուղ ցայտում մը սիրոյ ու հանճարի, սրտին որ անցելոյն կը նայի, մտքին որ ապագային կը խորհի, յուշերով, խոհերով, թելադրութիւններով աւլի գործ մը հրաշալի:

Հնորհակալութիւն անբաւ բոլոր ազնուախոհ նուիրատուաց, որք ամէն դասուց պատկանեցան, հարուստ թէ աղքատ, նախկին սան թէ արդի, սան թէ ոչ-սան, գրչի մարդ թէ բրչի, եկեղեցւոյ մարդ թէ աշխարհի, եւ որք ամէնքն յօժարափոյթ բացին իրենց քսակը զոհաբեր հնչուն արտայայտութիւն մ'ընելու ի նպաստ դպրոցին, սիրուած դպրոցին նորոգման կամ նորաչէն կանգնման գաղափարին, ու պերճախօս է պատկառելի թիւը գումարին ուր հասուցին իրենց նուէրներ: Ի՛նչ յուզիչ յուզում մը նուիրումի. — հարուստը չէ միշտ որ կու տայ, կամ հարստութենէ չէ միշտ որ կը արուի. պարզ այլ գրասէր կօշկակար մը կօշիկ մը կը կարէ որպէս զի անոր գինը նուէր տայ դաստիարակին. նախկին գրաշար մը, յանձնակատար մը հիմայ, այլ ո՛չ հարուստ մը, ու հայր որդուց, կը յիշէ համեստ գրողին նախախայրեաց շարողն եղած ըլլալ, ու 5 ոսկի կը բրցնէ իր խնայողութենէն՝ գրագիտութեան ու գրքի հանդէպ իր հաւատքը հաստատելու համար: Ո՛հ, այդ խոնարհներուն մէջ ի՛նչ հանք ազնիւ զգացումներու. գեանին խորը թաքուն անոյշ աղբիւրներուն պէս՝ լուրջ ու պարզ ժողովրդի սրտի խորն ի՛նչ հոսանք վեհըզմիկ յոյզերու: Երբ կանգնի նորաչէն մասը Պերպերեան վարժարանին, նորակերտ Ֆաճարը դասերուն, ի՛նչ ազնիւ զգացումներ պիտի պատմէ, ի՛նչ ազնուական խոհեր ու յուզումներ տարրացուցած պիտի լինի իր պատերուն մէջ, ու նուազ պերճարան, նուազ շայեկան ու ազդեցիկ չպիտի ըլլայ բարւոյն այն դասը զոր այդ պատերը պիտի տան իւրեանց լուին անշարժութեան մէջ...

Բայց աւարտեցի՞նք մեր շնորհակալութեանց շարքը. — Ո՛չ երբեք: Այլ ի՛նչպէս շնորհակալ ըլլալ գրական փայփայիչ դրուատալից գնահատութեանց այն անընդհատ ու երթալով աճած գետի մը նման ճոխացող շարքին համար, որ ահա՛ ութ ամիս է կը շարունակուի ազգային Մամլոյն մէջ՝ անձիս ու գործոյս նկատմամբ ներողամիտ ու խանդոտ դատաստաններով, իտէականացնող ջերմագին համակրութեամբ, ներդաշնակ լայն ու երկար մեղեդիի մը պէս, հոգիս շոյելով, օրօրելով, պայլեցնելով, համաձայնուած ընդհանուր բալեացակամ արամագրութեամբ մը, կարծես, բալասան գնելու վիրաւոր հոգիի մը ու յոգնած գլուխ մը հանգչեցնելու: *Բիւզանդիոն, Արեւելք, Սուրհան-*

դակ, Մանգուվէ, ծաղիկ Օրթերթք ու Արեւ. Մամուլ, ու Մասիս, ու Լոյս, ու Հանրագիտակ Հանդէսքն ու Շաբաթաթերթք այս երկար նուագերգութեան իրենց մասնակցութիւնը բերին՝ խմբագրական մեծարժէք տեսութիւններով կամ գրագէտ աշխատակիցներու գեղասիւս գրուածներով, ու երէկ Մանգուվէի մէջ հանձարեղն Թէոդիկ՝ սիրոյ ներշնչման տակ՝ գաղափարը կ'ունենար մէկ թերթի մէջ խտացնելու Պէրպէրեան նախկին Սաներու՝ այլ արդէն վարպետ դարձած գրողներու մտածումները, յուշերն ու տպուորութիւնները՝ իրենց մարոյական կեանքի որբանին ու դաստիարակին շուրջը թեւածող, ու զգլխիչ փունջ մը կազմելու ինուէր իւր վարժապետին: Ընդհանրապէս խորհրդակցութեամբ շուրջ հակառակ յուզումներով կարգացած եմ՝ խոր այդ ներբողալի գնահատումները՝ որք իմ համեստ կարողութեանցս վրայ պիտի կրնային թիւրել դատաստանս, եթէ ստուգիւ, երէկ խմբագրականի մը մէջ անարկուածին պէս, տկարութիւնն ունենայի ողորջանաց ծուխէն չափազանց ախորժող մ'ըլլալու, եւս առաւել այս պարագային մէջ ուր գովեստք որքան համակրութեանէն, սէրէն առաւելազանցուած՝ նշնքան անկեղծ են եւ սրտաբուլիս: Բայց եթէ այդ գրութիւնք իմ իսկ յատկութիւններուս վրայ շատ չէին համոզեր զիս, շատ ման կ'ըսէին ինձ անոնց հեղինակաց հոգիներուն աղնիւ խորութեանց ու յատկութեանց վրայ, ու զմայլումով կը ծռէի անոնց վրայ:

Նախկին սաներս, ի մասնաւորի, այդ գրութիւններով չէր միայն որ տուին ինձ իրենց վարժարանին քսանեւհնգամեկին առթիւ իրենց սիրոյն հաւաստիքը: Նոքա՛ յղացան խորհուրդը այդ թուականին հանդիսօրէն յիշատակութեան, ու կանուխէն փափաքն ու նախապատրաստական խորհրդակցութիւններն ունեցան դպրոցին համար մնայուն բարիքի մ'առիթը ընելու դայն. նոքա՛ առին նախաձեռնութիւնը ձեռնարկին, ու անոնցմէ կազմուեցաւ Թանձնաժողովը որ բոլորեցաւ Նորին Ամենապատուութեան շուրջը եւ իր բարձրաշնորհ Նախագահին քաջալերիչ եւ իմաստուն հովանաւորութեան տակ գործեց ժրութեամբ, Պէրպէրեան սաները յատկանշող պատուասէր լուրջ ոգին ու յամառակամ աշխատութիւնը գնելով գործին մէջ: Եւ այսօր, իրենց փափաքին հասած, գոհ են. նոր ապացոյց մը տուին իրենց վեհ զգացումնե-

րուն, պատիւ բերին դպրոցին ու իրենց, — ինչպէս միշտ եղած են պատիւը դպրոցին, կենդանի գովեստն անոր, ու զօրաւորագոյն Տիմեբը անոր համբաւին: Ապրին:

Իսկ այս աւուր մեծապանծ ու խրախուսալից յիշատակներուն մէջ պիտի փայլին յաւէտ ներկայութիւնքն ու հնչեն բա. նախօսութիւնքն մէկ կողմէ Վեննական Պատ. Միութարեան Միաբանութեան ուսումնապերճ ներկայացուցչին՝ Գեր. Հ. Գա. բրիէլ Վ. Մէնէվիչեանի, եւ միւս կողմէ՝ Յունաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր պատգամաւորաց՝ Յոյն վարժարանաց ընդհ. տեսուչ Գեր. Յէր Ղըրղորիոս Արհիմանտրիդի եւ մեր վաղածանօթ բարեկամ եւ հայագէտ Մեծայարգ Տիմիդրիոս էֆ. Չօլաքիտիսի, առաջինը բերելով մեզ վկայութիւնը թէ դաւանաբանական խնդիրը չեն արգիլեր ազգի մ'այլ եւ այլ մասերը համերաշխ լուրջ ջանքերով աշխատակցելէ ի նպաստ լուսաւորութեան եւ յառաջադէմ զարգացման ազգին, եւ երկրորդը՝ թէ բարոյականութիւն ու գիտութիւն հայրենիք չունին, թէ յօգուտ բարւոյն ու ճշմարտին ամենէն խնարհ ջանքերը ամենուրեք եւ ամենէն բարձր անձնաւորութիւններէ կը գնահատուին, եւ թէ կրթութեան ծառայել ծառայել է մարդկութեան: Փափք իրենց եւ երախտագիտութիւն:

Շնորհիւ առատաձեռնութեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Յանձնաժողովոյ կողմէն պատասխանող համակողմներուն, Պէրպէրեան վարժարանը բախտը պիտի ունենայ ինքզինք նորոգուած եւ ընդարձակուած տեսնելու. — բայց յուսամ թէ նուիրատուք պիտի ներեն ինձ որ իմ արամադրութեան տակ այնքան բարեսիրաբար դրուած գումարը այնքան եսասիրօրէն չգործածեմ, նոյն իսկ եթէ այս եսն է իրենցմէ սիրուած Պէրպէրեան վարժարանը: Ուստի ներուի ինձ յայտարարել թէ նուիրատուութեանց գումարէն՝ ըստ թելադրանաց սրտիս՝ կը փափաքիմ 100 ոսկւոյ նուէր մ'ընել իբրեւ մասն հաստատուն դրամագլխոյն Ուսուցչաց Օգնութեան նորահաստատ Սնտուկին, ի յիշատակ Ողբացեալ Ամուսնոց, — 30 ոսկւոյ գումարով մը մասնակցիլ Պատ. Ուսումնական Խորհրդոյ ի նպաստ Վանայ բազմարդիւն Երամեան Որբանոց — վարժարանին ձեռնարկելի հանգանակութեան, եւ 20 ոսկի նուիրել ողբացեալ մեծանուն գրագէտ — դաստիարակ

Մամուրեան Մատթէոսի յիշատակին կանգնելի մահարձանի մը ծախուց ի նպաստ: Յուսամ՝ բոլոր նուիրատուացս, Պատ. Յանձնաժողովոյն ու Բարձրաշնորհ Ս. Նախագահին ի հաճոյս կը լինին այս դոյզն նուիրմունք յօգուտ եւ ի պատիւ պաշտօնակցաց՝ որք միեւնոյն հանրօգուտ նպատակներուն — դպրոցի ու գրականութեան — որք առիթ եղան խոնարհ աշխատաւորիս նուիրուած այս քաջալերանաց ու պատուոյ ցոյցերուն, ծառայած են, կը ծառայեն կամ պիտի ծառայեն: Բաց աստի, Պէրպէրեան վարժարանը յանձնառութիւնը կ'ստանձնէ պարտաւորիչ ու հաստատուն կերպով ձրիավարժ պահելու իր մէջ 5 աղքատիկ եւ ուշիմ պատանիներ, ի յիշատակ Յոսեփինիս եւ ի հաշիւ սոկոսի ընծայաբերուած իբր 1200 ոսկւոյն, անոնցմէ մին միշտ խասգիւղի Ս. Ներսիսեան վարժարանէն առնելու պայմանաւ:

Ի՞նչ է այս յարգանքն ու քաջալերութիւնը նուիրուած դպրոցին ու գրականութեան, եթէ ոչ յարգանք ու ճիգ բարւոյն, ճշմարտին ու գեղեցկին, որոց ծառայել գերագոյն նպատակն է դպրոցին ու գրականութեան: Ու ճիգը բարւոյն, ճշմարտին ու գեղեցկին ձգտումը չէ՞ դէպ ի կատարելութիւն, դէպ Աստուած: Մեր բոլոր բարի ու անկեղծ ջանքերն ու ըղձանք պաշտօն մ'են ասպա Աստուծոյ բարձրացած: Փառք Անոր անուան: Անոր կը ծառայենք ամէնքս, եւ նորք որք բարի ջանքերը կը ճգնին ու բարի ըղձանքը կը տենչան, եւ նորք որք կը վարձատրեն ճգնուած այդ ջանքերն ու տենչացուած այդ ըղձանքն: Թող Նա զօրաւիգն ըլլայ ամենուս:

(Արեւ. Մամուլ, 1902, Թիւ 2.)

19. ԿՅՏՈՐԵԼՈՒՄՈՐԹՈՒՄ

(Հուսկ Բանք՝ աւ ընթացաւարտս Պէրպէրեան վարժարանի, 1903 ամբ:)

Սիրեցեալ որդեակք իմ,

Վերջին խօսքերս ձեզ ուղղելու համար եթէ կը դառնամ առ ձեզ «որդեակ» բառով, ո՛չ թէ անոր համար է որ այս ամբախտը կու տայ ինձ ուրախութիւնը — աւանդ, ոչ առանց ար-

Նախորդ տարիներու Հոսկ Բանքէն երկուքը հրատարակուած են Մարտի 1-ի 1-ի մէջ, եւ տասը Դաստիարակի 1-ը Իտիւրէին մէջ:

ԴԳՐՈՑ ԵՒ ԴԳՐՈՒԹԻՒՆ

տասուլաց խառնուրդի — տեսնելու ձեր կարգին մէջ նոյն իսկ իմ հարազատ որդիս, այլ վասնզի զձեզ զամէնքդ կ'զգամ ու զգացած եմ միշտ իբրեւ իմ զաւակներս, անոնց նման երկինքէն իմ խնամոցս ու սիրոյս աւանդուած էակներ, եւ վասնզի ոչ նուազ քան անոնց՝ յար ձեր բարւոյն անձնուէր ըլլալու պարտաւորութիւնն զգացած եմ մէջս: Այս վայրկենիս ալ ձեր ամենուդ համար մի եւ նոյն իղձերով ոգեւորուած կ'զգամ իմ սիրտս, երբ զձեզ հասած կը տեսնեմ դպրոցական կեանքի վախճանին, քննական փորձերու պսակը ձեր գլխուն վրայ ու երկրորդական աստիճանաց վկայականը ձեր ձեռքին մէջ, ու կը նկատեմ — ու երբ չեմ նկատած զայն — ձեր ապագայ կեանքի, ձեր գործնական կեանքի հարցը որ այժմէութեան առաւել քան երբեք շեշտուած ու պահանջկոտ հանգամանքով մը կը կանգնի մեր առջեւ այս պահուս:

Մէկ բառով ըսելու համար, սիրելի որդեակք, իմ բոլոր իղձերս — ու կը հաւատամ որ ձեր ամենուդ ալ ծնողաց իղձերը կը նոյնանան իմիններուն հետ —, կ'ըզամ ու կը մտաբերեմ որ միշտ ու հետզհետէ աւելի լեցուն լինիք կեանքով, արդեամբք ու երջանկութեամբ: Կեանք մը տուած ենք ձեզ, կեանք մը մարմնոյ եւ հոգւոյ. — (ի՛նչ մեծամիտ եւ յանգուգն խօսք ըսի. ամէն կեանքի տուողն անսպառ Աջբերն է գոյութեան, զօրութեան ու հանճարոյ, եւ միջոցներ ու միջնորդներ են միայն ծնողք եւ դաստիարակք.) — կը ցանկանք որ լեցուն ու աճեցուն ըլլայ այդ կեանքը, ու արդիւնալից ըլլայ, վասն զի ապրիլը գործել ու արտադրել է, եւ երջանիկ ըլլայ, վասն զի բնական է ապրողին երջանկութեան տեսչալ, եւ վասն զի լաւ գործունէութեան մը՝ մեր բանականութիւնը արդար վարձքը կը համարի երջանկութիւնը: Բայց կեանքն ու արդիւնաւորութիւնն եւ երջանկութիւնն իրենց պայմաններն ունին, որպէս զի պահեն իրենց բնական առնչութիւններն, ու իրենց փոխադարձ ազդեցութիւնքն ի գործ դնեն ու ապահովեն զիրար: Մեր իղձերուն իրականացումն ուրեմն կեանքի կանոններ կ'ենթադրէ, եւ ինչպէս ցարդ ձեր բարի կամեցողութեան նպաստը բերիք այդ իրականացման առաջին պայմաններուն համար, որոնք բարւոք կրթութեան մը ստացման մէջ կը կայանային, նոյնպէս եւ յետ այսորիկ ձեր բարի կամեցողութեան, հիմայ աւելի գիտակից, աւելի լուսաւորեալ, ու տակաւ աւելի զօրա-

ցած ձեր բարի կամեցողութեան ապաստան պիտի ըլլայ ձեր ապագայի մասին, որ այժմէն կ'սկսի ներկայն ըլլալ ձեզ համար, մեր տածած ցանկութիւններուն կատարումը, զի անոր պահանջած կեանքի կանոններուն հետեւիլը գործն է մի առողջ, ուղիղ, լաւատանջ, բարի ու արի կամքի: Գիտեմ որ հետաւորութիւնը իր սահմաններն ունի, գիտեմ սր կամքէն անկախ ոյժեր կան բնութեան եւ ընկերութեան մէջ, բայց նաեւ կը հաւատանք ու հաւատացէ՛ք որ բարւոյն իրագործման մէջ ինքնին մեծ զօրութիւն մ'է բարի կամքը. — «Կամելը կրնալ է», գիտէք մեծ առածը — ու եթէ լաւը ֆիզիքական ու բարոյական կարգաց մէջ իր խոչընդոտներն ունի, ունի նաեւ իր օժանդակներն անոնց մէջ: Անոնք որք բնական սիրով մը զմեզ կը սիրեն, անոնք որք հայրական ու բարեացակամ իշխանութեամբ մը զմեզ կը վարեն, անոնք որք բարւոյն անշահախնդիր իղձովը կը վստիսն ու բարերարելու աենչն ունին, մարդկային համակրութեան ու համերաշխութեան զգացումները, եւ գործակցութեան ու փոխադարձ ծառայութեան պէտքերը, մեզմէ իւրաքանչիւրին երկինքէն իբրեւ թանկագին դրամագլուխ արուած յատուկ ձիրքեր ու արամադրութիւններ, ու արտաքին բնութեան ծոցին մէջ ճարտարունեսա ու աշխատասէր ձեռքերուն հրաւէր կարգացող այնքանի՜ թաքուն գանձեր՝ բարւոյն իղձը քաջալերող, յուսադրող ու զօրացնող զօրութիւններ չե՛ն միթէ. բաւ է որ իւրաքանչիւր ոք ամենէն առաջ ինք բարեկամն ըլլայ ինքզինքին, բարւոյն ճշմարիտ փափաքն ունենայ, ու ամէն բանէ աւելի իր ոյժերուն ու աշխատութեան ապաւինիլ գիտնայ, ինչ որ առաջին պայմանն է օգտուիլ կարենալու՝ արամադրելի ամէն ուրիշ նպատաւոր միջոցներէ:

Ապրիլը գործել է, ու գործելն է իրականացնել կարողութիւններ որք կարելիութեանց ձեւին տակ թաքուն կը մնան մեր մէջ: Արիստոտելի գոյութեան տեսութիւնն է այս, գիտէք, այնքան խորին, այնքան իմաստուն: Բաց ի կատարեալ էակէն որ չի փոփոխիր, զի նա ոչինչ ունի թերի իր մէջ՝ լրանալի կամ ուղղելի, ամէն ստեղծեալ կամ անկատար էակ նիւթ է եւ ձեւ, կարողութիւն է եւ գործ, ու կատարելութեան բնագոյի մը մղման կամ ձգողութեան տակ ձեւը նոր նիւթ մը կը լինի նոր ու լաւագոյն ձեւի մը, արգիւնագործուածը նոր կարողութիւններով, կարելութիւններով

յղի է որք կ'ուզեն իրագործուիլ, ի յարգ եւ ի կերպարան գալ: Այսպէս ճշմարիտ կեանքը ձեւէ ի ձեւ վերելք մ'է, արդիւնագործուիլ յարդիւնագործում յարատեւ կատարելագործում մ'է: Այս շարժումը դէպ ի յառաջ, այս շարժումը դէպ ի վեր կը չափէ կեանքը: Որչափ կ'առաջանայ՝ այնչափ կ'ապրի էակը, այսինքն այնչափ ապրած է, գործած է, յատկութիւններ զօրութենէ ի գործ մերած է: Երբ բոյսն իր ծիլերն ու բողբոջները, իր տերեւներն ու ծաղիկները, իր պտուղները հետ զհետէ չերեւցունէ ու չնորոգէ, եւ իր ցողունն ու ձիւղերը հետզհետէ չբարձրացնէ, չտարածէ ու չբազմապատկէ, չենք հաւատար իր կեանքին: Երբ մարդ էակն, իրրեւ Փիզիքական եւ բարոյական էակ, հետզհետէ ի յայտ չբերէ իւր բնութեան գաղափարականն ըստ կարի իրականացնող յատկանիշերը, իր մէջ եղած ընդունակութիւնները ամէն օր չարդիւնացնէ, ու նոյն իսկ տակաւ կատարելագոյն կեանքի մ'արդիւնները չչարգէ՝ մինչեւ ուր որ հնար է իրեն երթալ, չենք հաւատար՝ այդ տեսակէտով՝ անոր կենսաւորութեան, անոր կատարել կենդանութեան: Բան մը կը կաղայ անոր մէջ, ու կը խանգարէ ներդաշնակութիւնը. ան չ'ապրի լեցուն ու առատ կեանքով մը, ու չ'ենք կատարելապէս դուրսնիլ թի ատաղձային վիճակէն: Հատոր մ'է քարի, ուրկէ դուրս չի գար գեղատաշ պատկերը որ անոր մէջն է: Այսպէս երբ կ'ըղձանք որ դուք լեցուն ըլլաք կեանքով, կ'իմանանք որ դուք ձեւակերպէք ձեր վրայ ու ձեր մէջ մարդկային կեանքի բովանդակ նիւթը կամ ատաղձը որ ձեր մէջն է: Պատանեկութիւնը, սկզբնիկ այդ հասակը որ ձեր մէջն է, համակ խոստում է, խոստում Փիզիքական ու բարոյական լիափութիւթ կեանքի, որուն ամբողջական իրացմանն համար եթէ պայմաններ կան ճակատագրային ու անկախ ձեր կամքէն, բայց միշտ նախաձեռնութեան մեծ ու կարեւոր բաժին մը թողուած է ձեր եսին: Առողջութիւնը, հակառակ իր մնախօսական պայմաններուն որք մեքենաբար կը կատարուին մեր մէջ, գիտէք որ մեր գիտակից ու կամաւոր, ապա եւ պատասխանատու, գործունէութեան հետ լայն առնչութիւն մ'ունի: Անպատակ ու անհեռատես անխոհմութիւններ, անօգուտ վտանուաքներ ոյժերու, յախուռն անզգուշութիւններ, ու անբարեխառն հաճոյամոլ բերուածներ կրնան ընդ միշտ վտանգել զայն, կասեցնել կանոնաւոր ու գեղեցիկ զարգա-

ցումը մարմնոյն ու հասակին, եւ, մեղապարտ ընդդիմագործութեամբ մը մայր բնութեան, տարածամ ցամփեցնել իսկ, աւանդ, կեանքի աղբւրը մի այնպիսի կազմածի մէջ զոր յորինելու ատեն տարբեր դիտումներ ունեցած էր նա: Առողջութիւնը, գեղեցիկ առողջութիւնը երիտասարդութեան, որ յետագայ տարիքներուն մէջ ալ կ'ապահովէ ընդհանրապէս մարմնոյն եւ հոգւոյն առողջաւէտ ներդաշնակ գործունէութիւնը, առաքինութեան մը չափ վերագրելի պատուաբեր է անձին, վասն զի խիստ շատ անգամ արդիւնք ու վարձքն է հեռանկատ մտքի, բարեխառն զգայնութեան եւ իմաստուն զօրեղ կամեցողութեան: Հոս անգամ մ'ալ կ'ուզեմ շեշտել ձեզ այն ճշմարտութիւնը որուն թերեւս այնքան ուշադրութիւն չի գարձուիր, վասն զի հակառակը միայն գրեթէ կը կրկնուի յաճախ. — այն է թէ՛ եթէ ճշմարիտ է որ առողջ մարմինը առողջ մտքի մը պայմանն է, ոչ նուազ եւ թերեւս աւելի գործնական ճշմարտութիւն մ'է — մանաւանդ մարդուն ինքնավար տարիքին համար — թէ առողջ միտքն ալ առողջ մարմնոյն պայմանն է, վասն զի առողջամիտ ու լաւակամ հոգւով է որ մարդ կը տիրէ իր մարմնոյն, գիտէ խնայել անոր ուժերը ու դնել զանոնք ի սպաս բարոյական եւ ընկերական կեանքի պարտականութեանց:

Այս բարոյական եւ ընկերական կեանքն է մանաւանդ բուն կեանքը մարդուն որ պիտի ապրի զայն իր ֆիզիքական, իմացական ու զգացական ոյժերով: Ինչ որ, իբրեւ բարոյական եւ ընկերական էակ, մեր մէջ ունինք տեսլապէս, զօրութենապէս, զայն յարդիւնս բերել, զայն իրագործել, ձեւ տալ նիւթին, այս պիտի ըլլայ մէն մի անհատի կեանքին գործը, կեանքն իսկ, ապրիլը անոր համար, ու այս պիտի ըլլայ արդիւնաւորութիւնը անոր կեանքին: Այնքան աւելի լեցուն պիտի ըլլայ կեանքով եւ արդիւնաւորութեամբ որքան աւելի յաջողի ընելու զայդ: Նոյնը կ'ըմբռնենք ու կը ցանկանք ձեզի համար կեանքի ու արդիւնաւորութեան լիութիւն ըսելով: Այդ լիութիւնը իրողութիւն մը դարձնելու համար դուք նոյն իսկ նպաստաւորագոյն պայմանի մէջ կը գտնուիք, քանի որ բազմակողմանի կրթութիւնը լուսաւորած է ձեր մէջ բանը, սուրբուցած է կարողութիւնները, նրբացուցած է զգացումները, մարդած է կամքը, ապա եւ նոյնքան զօրաւոր մղում եւ ընդունակութիւն կազմուած է ձեր մէջ, որ դժուարութիւնը

նուազեցնելով կ'աւելցնէ ձեր պատասխանատուութիւնը, մի եւ նոյն ատեն մեր ակնկալութեանց քաղցր երաշխիքներ ընծայելով: Բարոյական եւ ընկերական արդիւնալի կեանքով ապրիլ, ախպար անհատականութիւններ դառնալ, գոհունակութիւն եւ զմայլում գրգռել ձեր շուջը, եւ ձեր կեանքը կեանքի խմոր մ'ընել ուրիշներուն՝ ձեզ մանաւանդ անկ է, ձեզմէ մանաւանդ յուսալի է, ձեզմէ՛ որ բնական տրամագրութիւններու հողին մէջ դրիք պարտացուցիչ տարրեր, արգասաւորելի սերմունք այնքանի: Բազմակողմանի եղաւ ձեր կրթութիւնը, բազմակողմանի թող ըլլայ ձեր զարգացումը: Անշուշտ պիտի ընտրէք ձեզ, կամ ընտրած էք արդէն, ձեր ու պարագայից յարմարութիւններուն համեմատ, մասնագիտութիւն մը, յատուկ ասպարէզ մը, անով աւելի մասնաւորապէս ծառայելու համար մարդկային ընկերութեան եւ ստեղծելու ու ապահովելու ձեզ դիւրակեցութեան պայմանները, բայց այս չի նշանակեր թէ սահմանափակ պարտիք մնալ անոր մէջ: Այլա՞մերժ ուշագրութեան մը վտանգները յայտնի են ձեզ արդէն, ու անձուկ միտք մ'ու հոգի մ'ըլլալու համար չէ որ ընութիւնը ամենուն մէջ ամբողջութիւն մը դրած է կարողութիւններու՝ աստիճաններ միայն զանազանելով, անշահանդիր ընդհանուր տենչ մը գիտնալու, հետաքրքրութիւն մը տիեզերական, ինքզինք բազմազան կարողութիւն մ'զգալուն մէջ ազնիւ հպարտութիւն մը եւ մէն մի ճաշակի գոհացման մէջ ինքնուրոյն հրապուրիչ հաճոյք մը: Առջինները չէին ճանչեր արգի մասնական մարդը. Սոկրատ արձանագործ, բանաստեղծ ու փիլիսոփայ էր. Կեսար՝ ռազմագէտ, քաղաքագէտ, ատենաբան ու մատենագիր. յանձին Ապելլարի՝ Միջին դարու մէջ՝ կը միանային առաջին ատենաբանը, առաջին փիլիսոփայն, առաջին բանաստեղծը ու առաջին երաժիշտը իր ժամանակին. Աերածննդեան շրջանին մէջ Լէոնար տը Վինչի նկարիչ, քանդակագործ, երկրաչափ, մեքենագէտ, ճարտարապետ էր միանգամայն, ու մշակած էր նաեւ դպրութիւնները եւ հնչեակներ գրած: Նոյն իսկ նոր ժամանակներու մէջ չեն պակսիր երեւելի օրինակներ. Լայպնից քանակագէտ, աստուածաբան, իրաւագէտ, լեզուաբան էր. Կեօթէ միայն գերազանց բանաստեղծ մը չէր, այլ եւ գիտուն մը, գտիչ մը: Իրաւ է թէ ծանօթութեան եւ ուսումնասիրութեան առարկայ-

Ներու՛ն տակաւ բազմապատկիչն ու բազմաճիւղօքը սահմանաւորել կը պարտաւորեն հետախոյզ ու արդիւնաբար ճիգը, մանաւանդ մասնագիտութեանց տեսակէտով, եւ բնական տրամադրութիւններ զմեզ առաւել կամ նուազ յարմարագոյն ըրած կը թուին այս ու այն ճիւղերուն. բայց միշտ կարելի է բազմակողմանի զարգացումը, ու պէտք մը եւս, մաքին լիաճօխ ու առաւել ներդաշնակ փթթմանն համար, այն փոխադարձ նպաստին համար զոր միշտ կարողութիւնք եւ տաղանդք կ'ընծայեն իրենց մէջ, եւ վերջապէս վասնզի անհատին տրամադրութեան տակ գանուած միջոցներու շատութիւնը կեանքի պայքարին մէջ մեծագոյն յոյս մ'է յարողութեան, գործելու եւ արտադրելու, օգտակար ըլլալու աւելի յորդ ընդունակութիւն մը:

Մասաւորականութեան ու տաղանդի տեսական ու գործնական զարգացման քով՝ բարոյական եւ ընկերական սկզբունք, զգացմունք եւ առաքինութիւնք եւս պարտին առնուլ ձեր մէջ իրենց բովանդակ կարելի զարգացումը, առանց որոց կեանքը չի կրնար առնուլ իր բոլոր լիութիւնը, ձեր գործունէութիւնը՝ իր բոլոր արգասաւորութիւնը: Առ ի՞նչ օգուտ երբ գիտնաք, կարողանաք, կերտէք ու շահէք, բայց ձեր կեանքը բարոյապէս յարտաւել քանդում մը, մշտակայ կորուստ մ'ըլլայ: Ա՛րսէի քիչ մը յառաջ, հոգւոյն, այն է բարոյականութեան առողջութիւնը պէտք է մարմնոյն առողջութիւնն ապահովելու համար, իսկ հոգւոյն, այն է մեր մէջ բարոյական էակին կեանքին նոյն իսկ հիմն է այն: Բարոյապէս չչինուած կամ հիւանդ հոգին, ուր չկան կամ խանգարուած են կեանքի սկզբունքները, ուր չեն զօրացած բնատուր զարգասանչ ըղձանքը, անձնական արժանապատուութեան զգացումը, նմանեաց մէջ ազնուօրէն որոշուելու եւ յարգարժան ըլլալու փոփաքը, համակրական խանդաղատանքները, վսեմ հիացումներն ու խանդալից ձգտումներն դէպ ինչ որ մեր մէջ սկզբան մեծութիւն մը կը յայտնէ ու ապագայ ճակատագրաց վեհութիւն մը կը մասնանշէ, այնպիսի հոգի մը, կ'ըսեմ, չի կրնար երեւան բերել մարդկային ճշմարիտ կեանքի մը կատարեալ գաղափարականը ու համապատշաճ գործունէութեան մ'արդիւնքները: Արդար ինքնասիրութիւն մը միայն կը գործէ անօր մէջ, որ անհատին մէջ գեղեցիկ փթթումներուն սննդատու չէ, այլ ստորին ախորժակ-

ներուն եւ իւրացումներուն. յարգելեաց յարգանքին արժանանալու իղձը արգելք չի կանգնիր անոր մէջ անկումներուն ու ստորնացումներուն, ու չի խթաներ գործունէութիւնը դէպ ի արտադրումն օգտակարին: Իր համակրութիւններն անսոնական կիրք են աւելի քան բարոյական էակի գորովանք. ընտանիք ալ կազմէ, չի գիտեր ո՛չ ամուսին, ո՛չ հայր կամ մայր ըլլալ ճշմարիտ. տունին անուշիկ դրախտային հրապոյրը, ամուսնական հոգեխառն միութեան ի միասին խմուած նեկաարին սրտահեշտ քաղցրութիւնը, զաւակներուն աչքին մէջէն նայող անմեղ հոգիին խորհուրդն ու դիւթանքն անծանօթ բաներ են իրեն, ու հետեւապէս օչեն ներշնչեր իրեն ո՛չ այն լիապարար զգացումը կեանքին որ ընեն լ կուտայ կեանքը, եւ ո՛չ այն լիազօր կորովը կամքին որ գործելու եւ անձնուիրուելու կարողութիւնները կը բեղմնաւորէ անպայման: Համայնքը, երկիրը ի՛նչ կրնան յուսալ այնպիսի հոգիէ մը, ուր ընկերականութեան ոգին, որով մարդ ինքզինք կենսակից մասը կը զգայ այդ ամբողջներուն, եսականութեան անկերպարան նիւթին մէջ թաղուած մնացած է անյարդ եւ անզարդ, հետեւապէս ոչ արդիւնական ձեւ զգեցած: Անոնց կեանքովը չէ՛ լիացած իր կեանքը, անոնց բախտն ու անբախտութիւնը չեն արձագանգեր իր մէջ. իր կարողութիւնք ապարդիւն են անոնց բարեոյն համար, թէ եւ լինի տաղանդներ զարգացուցած, թէ եւ լինի հարստութիւններ բարդած: Ո՛հ, ամէն օր չե՛նք տեսներ այդ զարգացած կամ ճոխացած անօգուտներէն, զորս չի յուզեր բնահանրային կեանքով շահագրգռուելու ու անոր աջակցելու իղձը: Իրենց կեանքն ալ, սակայն, նոյնքանով չի՛ նուազիր ու աննշան չի դառնար իր եսամոլիկ անձկութեան ու ինքնազէտ մենութեան մէջ, երբ հանրութիւնն եւս՝ անոնց անտարբեր՝ չի լայնցներ ու չի յաւերժացներ անոնց գոյութիւնն իրենին հետ: Ո՛հ, այդ անձկութիւնն ու մենացումը ձերը չպիտի ըլլան, գիտեմ ես, դուք որոց սիրտը դպրոցական գրասեղանին վրայէն իսկ կը բաբախէր յանուն անոր որ ծողովորդին ու Եկեղեցւոյնն ու Երկրինն էր, որ եւ այնքան յօժար էր բերելու իր լուման յօգուտ հանրային կարօտութեանց: Ընդհակառակն, տակաւ պէտք է որ լայննայ այն՝ բացուելու համար մարդկային համապարփակ համակրութիւններու, ըստ բանի լատին Մատենագրին թէ՛ «Մարդ եմ, եւ ինչ որ մարդ-

կային է՝ ինձ օտար չէ՛, Առաւելագոյնը չէ՛ որ կ'ապահովէ նուազագոյնը, եւ երբ ազնիւ մարդը անասնոյն ու բոյսին կեանքին համար իսկ բարբախում մը զգայ իր մէջ, ի՞նչպէս իր նմաններուն, իր քաղաքակցին, իր դրացւոյն, իր ընտանւոյն սէրը չյուզէ զինքը, չգործէ իր մէջը:

Բարոյական եւ ընկերական կեանքի այս ազնիւ սկզբունքներն ու զգացումներն իրենց անսպառ անունդ ու զօրութիւն կը հայթայթեն բարձրագոյն սկզբան ու բնազդումի մը մէջ, որ է Տեսլականին սկիզբն ու բնազդը: Ճշմարտութիւնները, բարութիւններն ու գեղեցկութիւնները, որոց հասնի մարդ իր յղացումներուն ու գործունէութեան մէջ, չեն յագեցնէր զինքը. իր հոգին մտածութեան ու ճշմարտութեան աւելի լուսապայծաւ ու լայնասփիւռ հորիզոնի մը, իրացեալ բարութեանց աւելի մեծ գումարի մը, գեղեցկութեան աւելի շքեղ ու կատարեալ մարմնաւորման մը կ'անձկայ, իւրովստան հասնիլ եւ ուրիշներն հասցնել կը կամի, ցորչափ բարոյական զօրութիւնը կ'ապրի իր մէջ ու ի գործ կը ձգտի, ցորչափ նիւթ կը գտնէ իր մէջ ձեւ ու տարազ ստանալու, բացատրուելու, իրականանալու: Տեսլականին անձուկոյն օժտուած է մարդը, ու անոր սաստկութեան աստիճանը՝ անոր ազնուականութեան ու զարգացման աստիճանացոյցը: Երաշխիքն է այն մեր առաքինութեանց, մեր յառաջդիմութեանց մղեչ զօրութիւնը, մեր ճիգերուն ու զոհողութեանց քաջալերիչ ոգին, մեր վերելքներուն բարբախուն երկնասլացիկ թեւը: Անով եղան ու կը լինին մեծ պաշտողները, մեծ խորհողները, մեծ գիտունները, մեծ բանաստեղծները, մեծ արուեստագէտները, մեծ հնարողները, մեծ բարերարները, եւ ամենէն խոնարհ կարողութեանց տէր գործողն ալ դէպ ի լաւն ու լաւագոյնն անկէ կը քաղէ զինք մղող զօրութիւն մը: Անոր նուիրական կայծն ու խանդը ձեր սրտերուն մէջ ունեցէք միշտ վառ: Տեսիլն է այն ճշմարտին, տեսիլը գեղեցկին, տեսիլը բարւոյն՝ իրենց անհասանելի կատարելութեան մէջ, եւ այդ տեսիլները գերագոյն էակի մը յայտնութիւնը չեն մեր մէջ, գերագոյն էակի մը, իրականացում այդ կատարելութեան: Անհուն Կեանքին, Զօրութեան, Սիրոյն, Լուսոյն զգացումը չեն տար մեզի: Տեսլականին պաշտամունքը գերագոյն փթթումն է հոգւոյն, գերազանցօրէն գիտակից պաշտօնը, կրօնին իսկութիւնը մեր մէջ:

անոր աւիւնը մեծագոյն աղօթքն է մեր հոգիէն մշտաւարաց առ Աստուած եւ մեծագոյն նշանը Անոր ներկայութեան մեր մէջ: — Ո՛հ, այո՛, մանուկն ու մանկամիտ մարդը Աստուածայնոյն գաղտփարը կը գտնեն իրենց առաջին նայուածքներուն մէջ դէպ յերկինս, ու խոհուն մարդը «կրօնագգած է, ինչպէս կ'ըսէ Ռընան, այն վայրկենին ուր անհունին իմացումը (ծնած) կը գերազանցէ իր մէջ մտահաճութիւնը կամ կիրքը:», — Այսպէս ձեր զարգացումը իր վերելքին մէջ կը յանգի Աստուածայնոյն խորհրդածուած շաւառքին, որ միայն կը մեկնէ անհունութիւնը որ կը շողայ մեր գլխոց վերեւ, տեսլականը որ կը ճառագայթէ մեր հոգիներուն մէջ, բացարձակութիւնը որ մաքին սկզբունքներուն եւ խղճին հրամաններուն խորն է, հակառակ սկեպտիկներու, նիւթապաշաներու, դրականներու քանդիչ ժխտումներուն, որք պէտք է «մակերեւութային մտաց», նշանն ըլլան, ըստ Ռընանի որ կ'ըսէ, «Մակերեւութային միտքը, որ չի տեսներ կեանքի աստուածային իմաստը, չէ՛ միթէ գերազանց անաստուածը:»

Անշուշտ այդ շաւառքը, պահանջը մեր բանականութեան եւ մեր հոգեկան ու բարոյական ամէն տեսլականդ ձգտումներուն, պիտի կազմէ ձեր կեանքի իմաստասիրութիւնը, իբրեւ արգելիչ թուումը մը ընդդէմ ուրացամիտ հակումներու, եւ պիտի զօրացնէ ձեր մէջ զգացումը թէ մարդուն վաղանցիկ կեանքը անվերջ գոյութեան ու դեղեւկոտ կամքը բացարձակ կամքին հետ կապուած է, եւ թէ ազատակամ դեր մը նշանակուած է իրեն՝ բարւոյն իրացման ու տիեզերական կարգին մասնակցութեան մէջ, որ կարող է բացարձակ անկորնչելի արժանիք մը ստեղծել իրեն եւ իր կեանքին: Նա՛ է բարոյականութեան զօրաւոր խարիսը. խորախորհուրդ մաքուր ըսած է Զուիցերացի իմաստասէր մը, Սըքուէրան, «Աստուծոյ հաւատալ Պարտքին հաւատալ է:», Այդ շաւառքը Գիտութեան մեծ քոյրը պիտի ըլլայ ձեր մէջ, ու անսպառ պիտի պահէ Սէրը, Յոյսը եւ Աշխատութիւնը, կեանքի այդ մեծ աղբափները, որոնց պէտք ունիք, Տեսլականի առաջնորդութեան տակ, հետամտելու համար կեանքի աղնուագոյն ձեւերը իրացրնելու ձեր մէջ եւ ձեր շուրջը:

Ար մազթեմ, ո՛վ Որդեակք սիրեցեալք, որ իրականանայ ձեզ համար մեր սրտերուն այն իղձն ալ որով զձեզ կը ցանկանք

նաեւ երջանկալից, ո՛վ դուք որոց երջանկութեանն համար ամէն
 ժամ իրենց կեանքը տալու պատրաստ են անոնք որ պինդ զձեզ
 սիրեցին ու կը սիրեն: Բանականութիւնը սրտի այդ տեսլականը,
 զոր երջանկութիւն կ'անուանենք, առաքինի ու բեղուն գործու-
 նէութեան մը ծաղիկն ու վարձքը կը ճանչէ: Չարգացեալ հոգ-
 ւոյն ընդլայնումներուն, գեղեցիկ արդեանց տեսիլին ու առթած
 անգորութեանց, ընտանիքի սէրերուն, մարդոց յարգանքին ու
 համակրութեան, բարերարութեան երախտագիտութեան, հան-
 դարա խղճին պայծառութեանց մէջ երջանկութեան գումար մը
 կայ արգարեւ առողջ հաճոյքներու եւ վեհ գոհացումներու ձեւին
 տակ, որ ձեր բաժինը պիտի կրնայ ըլլալ՝ երբ ուզէք, վասն զի
 մեծ մասամբ ձեր կամքէն կախեալ պիտի ըլլայ: Իմաստուն կեանքը,
 բարեխառնութիւնն ու չափաւորութիւնը նաեւ պիտի կրնան
 նպաստել մտքուր հաճոյքներու ընդերկար ընդունակ պահելու
 զձեզ ու զերծ անօգուտ հետամտութեանց տագնապներէն: Ինչ
 որ բախտին բաժինն է, ո՛հ, ջերմ իղձերով կը մաղթենք որ այն
 անոր մշտապէս ժպտը ըլլայ ձեր գլխոց վերեւ, մշտափայլ ճառա-
 գայթը ձեր երկնքին մէջ, մշտածոր մեղրը ձեր բաժակին մէջ,
 մշտածիլ ծաղիկը ձեր քայլերուն տակ, մշտալիբ հովը ձեր առա-
 գասաներուն մէջ, մշտանուագ բերկրանքը ձեր հոգիներուն մէջ,
 ու սիրելիներու մշտանուէր սէրն ու գորովը անոնց շուրջը: Բայց
 դուք պիտի գիտնաք բարւոյն նայիլ աւելի քան անոր վարձքին,
 պարտքին նայիլ աւելի քան հաճոյքին, ձեզ յաղթել աւելի
 քան հարկաւորութեան, սիրոյն հաւատարիմ արցունքն ընդունիլ
 աւելի քան մոռացկոտ ծիծաղը, Պատուոյն հաւատարիմ զրկումը
 քան պատուազուրկ վայելումները, եւ յետոյ, մեծագոյն սփոփիչ,
 պիտի ունենաք ձեր հոգւոյն մէջ հաւատքը Աստուծոյ արդարու-
 թեան եւ ձեր իրաւունքին վրայ՝ երբ լաւ ապրեցաք: Երթայք
 բարեաւ:

(*Բիւզանդիոն*, 1903, Թիւ 2080.)

20. ՊԱՏՈՍԽԱՆՆՈՏՈՒՈՒԹՅԱՆ ԿՆՈՆՔԸ

(Հուսկ Բանք առ ընթացաւարտս Պէրդերեան վարժարանի, 1904 ամի):

Սիրելի ընթացաւարտ սանուկք իմ,

Ձեր կենաց խորհրդաւոր մէկ վայրկենին մէջ կը գտնուիք: Դպրոցականի կեանքը կ'աւարտէք, ու այս վայրկենես կը սկսիք ապրիլ քաղաքացիի կեանքը, այսինքն անոր կեանքը որ, գիտակ — կամ գիտակ համարուած — իր պարտքերուն եւ իրաւանց, բարոյական, ընկերական ու պետական օրէնքներուն հովանւոյն տակ, իր կեանքը պիտի ապրի ինքնիրմէ կախեալ, իր գործերուն պատասխանատու, իր ուժերուն ապաստան: Ու եթէ կրկին ուսման ասպարէզ մ'ալ թեւակոխէք, ուսանող քաղաքացի մը պիտի ըլլաք, ոչ եւս այլ դպրոցական աշակերտ: Այս վայրկենես սկսեալ, ազատակամ գործունէութեան բաժինն հետ պարտքի ու պատասխանատուութեան բաժինն ալ կ'առաւելու ձեր մէջ, եւ անոր համար կը հասկնամ տեսակ մ'ինքնասեռ յուզումը որ կը տիրէ ձեր վրայ, նման թռչնոյն որ կը պատրաստուի, սրտատրոփ, մայրենի բոյնին ու թեւերուն պաշտպանութենէն դուրս, առաջին անգամ սլացքը փորձել միջոցին մէջ: Պարտք մը սեպած եմ ինձ միշտ այս խորհրդաւոր պահուն լսելի ընել դպրոցական յարկէն մեկնող իմ սաներուս վերջին մի քանի խօսքեր, մի քանի յետին խրատներ, ամփոփող ու շեշտող վարժարանին բարոյական ուսուցումը, որ եթէ իրենց համար կրկնութիւն մ'ալ ըլլան ըսուած ու յեղյեղուած սկզբանց, սակայն, այս հանդիսաւոր պարագային, մասնաւոր սրտագին բան մ'ունին խօսողին ու լսողին համար, հետեւաբար եւ սրտաթափանց բան մը, որով պիտի կրնան, կը յուսամ, այս օրէն յետոյ, տարիներէ վերջն ալ, արձագանգ մը պահել մտաց ու սրտից մէջ: Նշը կ'ընեմ այս պահուս եւ ձեզ համար:

Անպատասխանատու կամ գրեթէ անպատասխանատու կեանքի մը կը յաջորդէ ձեզ համար պատասխանատուութեան կեանքը. գրեթէ կ'ըսեմ, վասնզի արդէն բաւական տեսնէ ի վեր թողած էիք մասնութեան անգէտ ու անգիտակից շրջանը ուր մարդկային էակը գիշերի մը մէջ է, դեռ չի ճանչեր ու չի տեսներ իրականութիւնը կեանքին, զգայարանական կեանք մ'ունի:

միայն բայց ոչ բանաւոր, թերեւս իրաւունքներ կը զգայ՝ բայց ոչ տակաւին պարտքեր, ուր զինքը մղող բաղձանքներ ունի՝ բայց ոչ զինքն առաջնորդող կամք մը, անոր համար ալ չի կրնար բառին բովանդակ նշանակութեամբ, պատասխանատու համարուիլ իր գործերուն որք չեն ամբողջովին ու արդարապէս վերագրելի իր անձին։ Գեռ անձ ալ չէ կատարեալ, այլ միայն նիւթը անձին, վասնզի, ինչպէս գիտէք, բանականութիւն ու ինքնակամութիւն անձը կազմող տարերքն են, եւ աղուն մէջ դեռ յոյժ անկատար են ասոնք։ Սակայն գուց այժմ ամբողջապէս ունիք կատարեալ պատասխանատուութեան մը տարերքն ու պայմանները. ձեր բանականութիւնը ոչ միայն արթնցած, այլ եւ զարգացած է. ձեր մէջ կազմուած է բարոյական կենցաղի մ'իտէալը, հետեւաբար յայն դիմելու պարտքին ու անկէ բղխող պարտականութեանց գիտակցութիւնն, այն ոյժին գիտակցութեանն հետ որ է կամքը ձեր մէջ, եւ որով կարող կը զգաք զձեզ՝ հնարաւորին սահմանին մէջ՝ իրականացնել ձգտիլ տեսլականը ձեր մէջ եւ ձեր շուրջը։ Անձեր էք գուց այլ եւս, ու կը պարտիք ըլլալ լաւ անձեր, ընտիր անձնաւորութիւններ. որչափ աւելի իրականացնէք մարդկային անձին կատարելութեան տիպը ձեր վրայ, այնքան մեծ պիտի ըլլայ ձեր բարոյական արժանիքը, եւ որչափ ստոր մնաք անկէ, այնքան աւելի յանցաւոր պիտի նկատուիք գուց։ Պատասխանատու էակներ էք. պատասխանատուութեան կեանքն սկսած էք ապրիլ։ Անշուշտ մանուկին անպատասխանատու կեանքը չէր աղուորը, գեղեցիկը, որչափ եւ երջանիկ թուի այն իր միամտութեանն ու անիութութեանը մէջ։ Մանուկին մէջ մարդը կը քնննայ՝ արթննալու համար օր մը եւ իր կեանքը ապրիլ սկսելու որ ճշմարտապէս պարտքի ու ճիգի կեանք մ'է համակ։ Պարտքերու լուծն է մարդուն արժանապատուութեան պայմանը, անոր ազնուականութեան ոսկի մանեակը։ Անասունն ալ անպատասխանատու է, բայց ոչ որ պիտի ուզէր խոզ մ'ըլլալ։ Մարդուն պատիւն է բարոյական իտէալին հանդէպ պատասխանատուութիւնը, անոր պատիւն են ճիգերը զորս կը ձգնի յանուն այդ իտէալին, տառապանքը զոր կը տառապի անոր հետամտութեան մէջ, եւ յաղթած է ու իրաւունք ունի դարձեալ հպարտութեամբ վեր կանգնելու իր ճակատը, նոյն իսկ երբ անասնականու-

Թեան ու ճակատագրին դէմ իր վերելքի ճգնութիւններուն մէջ կ'իյնայ ընկճուած, բաւ է որ, իր պատասխանատուութեան գիտակից, կուռած ըլլայ նա անկեղծ, անխոնջ ու յար վեհաստեղ: Այդ պատասխանատուութեան զգացմամբ մարդը կոչուած է ինքն իսկ կերտողն ըլլալու իր կեանքին, մանաւանդ թէ արուեստագէտն ըլլալու անոր, անոր գեղեցկութիւնն յօրինելու, ինչպէս քաջարուեստ ճարտարապետը գեղեցիկ կը կառուցանէ շէնքը որ անցորդը կը կեցունէ հիացիկ, ինչպէս վարպետ երգահանը գեղեցիկ կը ներդաշնակէ երգը, որ ազնիւ զգացումը կամ խորհուրդը դուրս կը ցայտեցնէ կենսալի, հրապուրիչ, սրտազգեցիկ: Ու այն ատեն ինչ փոթ աբուեստագիտին որ առաւապեցաւ, որ յոգնեցաւ, որ զրկումներ կրեց ու աննիւթ գաղափարը մարմնանալ բնագոտելու համար ըմբիշի մը գիրկընդխառն կռիւնները կուռեցաւ անոր հետ. կ'օրհնէ իր ճիգերը. անոնց կը պարտի արարչական հպարտութիւնը որ իր կուրծքը կ'ուռեցնէ ու հոգեկան անհուն հաճոյքը զոր կը զգայ իրականացեալ գեղեցիկ յղացումին առջեւ որ իր գործն է: Այդպիսի գործ մ'է ու պարտի ըլլալ ամէն մարդու կեանքը, որուն տեսլականը ամէն մարդ, մանաւանդ մշակուած ու զարգացած անհատը, կը գտնէ իր հոգւոյն մէջ, անոր ճշմարտախոյզ, անոր գեղեցկատենչ, անոր բարեխէր բնազդներուն ու ձգտումներուն մէջ, անոր մէջ զգալով պարտաւորիչ հրաւեր մը որ պարտքերն ու պատասխանատուութիւնը կը հիմնէ, ըստ որում ինքնայոժար գործողութեան սկիզբ մը կը կրեմք միեւնոյն ատեն՝ որ կրնայ պատասխանել այդ հրաւերին, որ մանաւանդ պարտի ուզել պատասխանել՝ ընելով կարելին, անկարելոյն միայն ոչ ոք ըլլալով պարտաւորեալ:

Պատասխանատուութեան զգացումը ամէն պարտքերուն մէկ մէկ ձայն կուտայ, որով անոնք, իբրեւ մէկ մէկ պահանջատէր, կը կանգնին մեր դիմաց եւ գոհացումը կը պահանջեն իրենց: Պղատանի «Կրիտոն»-ին մէջ կը կարդանք որ երբ Սոկրատի բարեկամները կը խրատեն անոր փախուստ տալ բանտէն ու կորզել զինք մի անարդար մահէ որուն դատապարտած էին զայն իր երկրին դատաւորները, «Հապա ի՞նչ պիտի ըսեն օրէնքները,» կը գոչէ Սոկրատ՝ օրինաց անհնազանդութեան գաղափարին առջեւ սուկացած, անոնց հնազանդութեան պարտքը զգալով անողորմ դատա-

խաղի մը պէս իրեն դէմ տնկուած ու խոժոռ բարկացոյտ նայ-
ուածքով նայելով իրեն: Այո՛, պատասխանատու ըլլալ, այնքան
դատաւորներ, այնքան դատախազներ ունենալ է իր մէջ, իր շուրջը,
իրեն հանդէպ որքան կը զգայ մարդ պարատուութիւններ. այլ
եւ, պարտուց գոհացման պարագային մէջ, նոյնքան բերաններէ
սրտահեշտ գովեստը կը բղխի մեզ համար որ մեր անձնական
արժանեաց գումարը կը յաւելու. բոլոր գոհացուած պարտքերը
մէկ մէկ ծաղիկ կը նուիրեն մեզ որով կը հիւսուի մեր արժա-
նիքին վեհ պատկը: Բայց պէտք է վախնալ անոնց դժգոհութեան
բաղա՞ ձայնքէն, ու Սոկրատին պէս ըսել մեզի “ինչ պիտի ըսեն
օրէնքները,» ամէն վայրկեան որ սպրդէր մեր մէջ զանոնք ոտնա-
կոխ ընելու հակամէտ տրամադրութիւն մը: Ու պարտքերու զան-
ցառութեան պարագայներուն մէջ, երբ մեր մէջ մոլի աննչքը,
խեռ կրքերը խեղդած են պարտուց ձայնը, երբ Անիրաւութիւնը,
Ասելութիւնը, Նախանձը, Բանտարկութիւնը, Անառակութիւնը
յաղթանակ տարած են մեր մէջ, ի՛նչ ստորնացում, ի՛նչ ամօթ,
ի՛նչ սայրասուր խայթեր մեր խղճին մէջ, վասնզի, անտեսուած
անարգուած պարտքերը, մէկ մէկ պատժածուի փոխակերպուած,
կը շարճարեն մեր հոգին, կը հալածեն անխնայ նման կատաղի-
ներուն որք Յունական ողբերգութեան մէջ կը լլկէին Ուլթեստէսի
հոգին մինչեւ իսկ քնոյ խաղաղական պահերուն մէջ: Ո՛հ, այո՛,
պարոններ, այսպիսի՛ է պատասխանատուութեան զգացումը մար-
դուն մէջ որ անհատին զարգացման համեմատ ալ կը սրի,
ինչպէս նաեւ կը բազմապատկին պարտքերն այդ զարգացման
չափով, որպէս, գիտէք, քաջ վճուած է Տիւբլը՝ ըսելով “Մարդ
որքան աւելի լոյսեր ունի, այնքան աւելի պարտքեր ունի կատա-
րելու (plus on a de lumières, plus on a de devoirs à remplir.)
Այդ զգացումը մեր բարոյականութեան հիմը, վկայն, պահպանն է-
գոհացուած, ան կը շինէ մեր պատիւը, մեր երջանկութեան մե-
ծագոյն պայմանն է, տժգոհ մնալով՝ մեր ճակտին շառագունանքը
կ'ըլլայ, արտաքին պատիւներուն ներքին հեղեղութիւնն ու ժխտումը,
մեր կրծող որդը, ամէն վայելքներուն խորը զանոնք դառնացնող
լեզին ու թոյնը: Ու գիտէք թէ պատասխանատուութեան վաւե-
րացումին մէջ միայն մեր ներքին գոհունակութիւնը կամ խղճա-
հարուստիւնը չկայ, թէեւ անոնք ըլլան ամենէն սաստիկները.

Ժպտող կամ խոժոռող Պարտուց ետեւ կան գոհ կամ ցաւած դէմքերը Ընտանիքին, Ազգին, Երկրին, Մարդկութեան, Աստուծոյ, ըստ այնմ որ մեր մէն մի արարքին համար վերաբերութեան մէջ եղած ենք Ընտանիք, Ազգ, Երկիր, Մարդկութիւն նուիրական անուններով կոչուող հոգիներու խումբերուն կամ զանոնք կազմող անհատներէն սոցա կամ նոցա հետ, — իսկ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ ենք այս ամենուն ալ առթիւ, քանի որ մեր ամէն պարտքերն ալ առ Աստուած պարտականութիւններ են, քանի որ Արդարութիւնը եւ Սէրը զոր կը պարտինք մեր շուրջ եղողներուն՝ Աստուծոյ կամքն ու իսկութիւնն են ու մեր ամենօրեայ աղօթքներով կոչուած Անոր թագաւորութեան տարեւրբը: Պատասխանատուութեան ձայնին չանսացողը, Պարտուց զանցառողը ապա Ընտանիքին արցունքը, Ազգին ու Եկեղեցւոյն անէծքը, Երկրին դատապարտութիւնը, Մարդկութեան դժգոհակնքն ու եպերանքն ունի իրեն դէմ, ու իր վրայ ծանրացած, սեւ սեւ կէտեր իր կեանքին, սուր սուր փուշեր իր սրտին, իսկ Պարտաճանաչն ու Պարտակատարը անոնց ամենուն յարգանքը, գոհութիւնն ու օրհնութիւնը կը վայելէ, եւ Չարին ու Ապիրատին դէմ իր երեսը դարձնող ճշմարտութեան, բարութեան եւ գեղեցկութեան Գերագոյն Ոգին, Աստուած, գոհ է իրմէ ու լսելի կ'ընէ անոր հոգւոյն իր երկնային բարբառը, « Աղնիւ, ծառայ բարի՛ եւ հաւատարիմ, իսկ մեր առ մեր անձն ունեցած արժանապատուութեան ու կատարելագործման Պարտուց ետեւ, որովք կը պարտինք մեք չսորոնանալ մեր բանաւոր ու ինքնակամ էակի վեհաստեղծ բնութեան մէջ ու ջանալ յար բարձրանալ սրբագրելով մեր թերութիւնները, մշակելով ու զարգացնելով մեր կարողութիւններն ու առատացնելով միշտ մեր մէջ լուսոյ եւ սիրոյ ճառագայթները ու զօրացնելով մեր կամքին մղումը դէպ ի լաւագոյնը, դէպ ի բարին ու մեր սրտին սլացքը դէպ ի Սէրը, դէպ ի Գեղեցիկը, այդ Պարտուց ետեւ, — հարցնէ թերեւս մէկը — ո՞ր անձնաւորութիւնը կը կանգնի երկրի վրայ իբրեւ պահանջող մեզ դէմ, քանի որ անոնք մեր անձին միայն կը պատկանին ու չունին իրենց դէմ իրաւունքներ ուրիշ անձերու վրայ մարմնաւորեալ, ու իրենց գոհացմամբ կամ զանցառմամբն թուիր նպաստել կամ վնասել մի այլոյ բարիքին: Այդ անձնաւորութիւնը, գիտէք, նոյն իսկ

իտէալ մարդն է մեր մէջ, իտէալ անձը, զոր մեր բանականութիւնը կը ծրագրէ եւ զոր մեր կամքը կը պարտի մարմնաւորել, իրական մարդուն հետ նոյնացնելով զայն տակաւ մեր վրայ. բաց աստի, կայ բացարձակապէս անձնական պարտաւորութիւն, ու միթէ ամենէն անձնականներն ալ չե՞ն դարձեալ ընկերական պարտքեր, քանի որ մարդկային անհատը սահմանուած է ընկերութեան մէջ պարելու, ու անհատին բարի կամ չար հանգամանքն ու արարքը հարկաւորապէս կը ներգործեն բարերար կամ վնասաբեր կերպով իր շուրջ, իրեն հետ ապրող մարդկային եակներուն վրայ: Ընկերային մէն մի անհատ ընկերութեան համար կրնայ օրհնութիւն մը կամ անէծք մ'ըլլալ:

Պատասխանատուութեան խնդրոյն մէջ ի հարկէ ուղիղ է խորհիլ թէ մարդ այն գործոց միայն պատասխանատու է որք իր կամքէն կախում ունին, հետեւապէս եւ անպատասխանատու ամէն այն բարեաց կամ չարեաց համար որք բնութեան գործն են, ճակատագրային ոյժերու լաւ կամ յոռի արգասիք: Այսպէս, բնական ձիւքեր կամ բնական թերութիւններ չեն վերագրելի մարդուն որ ոչ իրաւունք ունի առաջիններով պարծիլու կամ պարտաւոր է վերջիններով խղճահարելու. նոյնպէս եւ մշակ մը իրաւունք չունի բնապէս յուսթի անդաստանաց առատ արգասաւորութեան պատիւը իր անձին վերագրելու, որպէս եւ ոչ յանցապարտ պարտի զգալ ինքզինքն ողողումի մը համար որ յեղակարծումն կուգայ քերել գերփել իւր արար ու փճացնել իր աշխատութեան արդիւնքը՝ իր ընտանեաց հացն ալ առնելով տանելով իր հետ: Ստոյգ է այս. բայց ըսած եմ ձեզ, Պարոններ, ու կը փափաքէի որ յուշի կապէիք զայն ուժով, մասամբ միայն ճշմարիտ է այս, — վասնզի մարդոյն նախատեսութիւնն ու կամքն ու ճիգն կարող են շատ անգամներ բնութեան թերութիւնները սրբագրել, կամ աղետաբեր պատահարներուն առաջքն առնուլ, — մինչդեռ յուսթիւնն ու անփութութիւնը լաւագոյն ձիւքերն ու նպաստաւորագոյն պայմանները կրնան ամլութեան դատապարտել: Որքան ձիւքեր ընդունայն կը կորսուին, վասնզի աշխատութեան ու ինքնամշակութեան տենչը կը պակսի, եւ աշխարհիս մէջ ի՞նչ արգաւանդ հողերու վրայ չուտական, մերկ ու նօթի կ'ապրին մարդիկ առ ի չգոյէ նախաձեռնութեան ոգւոյ,

եւ առ ծուլութեան որ չգիտէ օգտուիլ տրամադրելի առաւելու-
 թիւններէն, ու կը թողու հոսիլ անցնիլ իրմէ քանի մը քայլ
 անդին սահող ջինջ առուակը, ծարաւէն տանջուիլը նախամեծար
 համարելով քան դէպ զովարար կազդուրիչ աղբիւրները քանի
 մը քայլ առնելու յոգնութիւնը. — միւս կողմէ նաեւ ամբաս-
 տան Նախախնամութեան անգթութենէն իրեն դէմ՝ մինչդեռ
 չղանտացին իր մօրուտ ճախճախուտ ու յաճախ ծովէն շահուած
 հողերը կը մշակէ իր կանգնած թումբերուն պաշտպանութեան
 ապաստան, Զուլիցերացին իր ապալեր քարաժայռերն ու սառ-
 նալեռներն իսկ օգտակար ընելու հնարքը կը գանէ, ու անձուկ
 երկրի մը մէջ խտացեալ Պելճիացիներն մեծագոյն ազգերու հետ
 կը մրցին ճարտարութեամբ: Թլուատ, կակազոտ ու անհամարձակ
 Գեմոնթէնը, իր յամառ ճիգերուն շնորհիւ, Յունաստանի գերա-
 զանց ատենաբանը կը դառնայ, հրապարակին վրայ ծովակոյտ
 խոնոտող բազմագոյ ժողովրդեան ժխորին ախրող ու նախանձ-
 ընդդէմ կիրքերու եւ կամքերու մրկուտ կոհակները սանձող, —
 եւ ի ծնէ կայր, խուլ ու համր Ամերիկուհին Լօռա Պուիճման, ան-
 վհատօրէն հաստատամիտ կամքի մը գործած հրաշքովը, բարոյ-
 ական եւ մտաւորական կատարեալ կեանքի մը կը ախրանայ, գրել
 կարդալ ու շարագրել կ'ուսնի, օրհնեղանքներ կը հեղինակէ եւ ուրիշ-
 ներուն ուսուցիչ կը նստի իր կարգին: Այսպէս նաեւ շատ մը
 շուայլ ու շուայտ կեանքով իրենց հայրերուն թողած հարստութիւնը
 փճացնելով անոր աւերակներուն վրայ խեղճուկրակ նստող
 Ամիրայի զաւակներուն կը հակապատկերի իր գործոց զաւակը
 եղող ճոխը որ մանկութեան մէջ պատառ մը հացին կարօտը կը
 քաշէր եւ որուն իրաւամբ բարոյական արժանիք մը կը կազմեն
 իր ճակտին քրտինքներովն ստեղծած հարստութիւնը ու վայելած
 առատութիւնը: Ի՞նչ տարբերութիւններ, ի՞նչ օրինակներ, որք
 մեզի կ'ուսուցանեն պատասխանատուութեան բաժնին ընդար-
 ձակութիւնը հոն իսկ ուր կը թուի ամենափոքրն ըլլալ, ապա եւ
 ահագին համեմատութիւնքն ուր կը համի անդ ուր բնատուր
 կամ ժառանգեալ առաւելութիւններ կը չքանան մեր թերու-
 թեամբ կամ չեն արդիւնաւորիր այնքան որքան պիտի կրնային
 եթէ ուզէինք՝ բարոյն անկեղծ նախանձաւորութեամբ ու անխոնջ
 հետապնդութեամբ: «Որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ»,

կըսէ Տէրունական բանը, որ թաղուած քանքարներուն առ-
կո՞նք ալ կը թուի շոշափել այս կէտը եւ յանդիմանել բա-
րոյական ու Ֆիզիքական երկնաշնորհ դրամագրութիւնները ան-
շահագործ թողող կամազուրկ պղերգներն ու թուլամորթները:
Ի՛նչ ամօթ ու դատապարտութիւն այնպիսիներուն, ու քանի
պատիւ անոնց որք դժուարութիւններէ, գրեթէ անկարելիութիւն-
ներէ իսկ գուրս կը բերեն յաջողութիւնը, տաղանդներ կը ստեղ-
ծեն հոն ուր բնական տրամագրութիւնը կը բացակայէր, լոյս կը
ստեղծեն հոն ուր աչքը կը պակսէր, ծաղիկներ կը բուսցնեն
աւազներու մէջ, սկիհանոսներու յատակը կը մխրձին վեր բերե-
լու համար մարգարիտները որք հոն, խորն են ալուց:

Պատասխանատուութեան այս խնդրոյն մէջ կայ մի այլ կէտ
եւս զոր մատնանիշ ըրած եմ ձեզ բարոյախօսութեան դասերուս
մէջ եւ որուն վրայ եւս կ'արժէ միշտ պնդել, Ազնիւ Սաներս:
Ընդհանրապէս կ'ըսուի որ մարդ իր գործին միայն պատասխանա-
տու է, իւրաքանչիւր անհատ իր ըրածին: Բայց այս ալ մասնակի
միայն ճշմարիտ է: Քիչ մը յառաջ խօսքը կ'ընէի այն ազդեցու-
թեան զոր մարդկային անհատը ընկերական կեանքի մէջ ի գործ
կը դնէ հարկաւորապէս իր նմանին վրայ, ազդեցութիւն մը
նպաստաւոր կամ աննպաստ, եւ այս ի հարկէ կ'ենթադրէ պա-
տասխանատուութեան բաժին մը: Սակայն անշուշտ շատ աւելի
կը մեծնայ այս բաժինը անոնց մասին որք կեանքին մէջ ուզակի
ենթարկուեցան մեր ներգործութեան, իբրեւ մեր զաւակները,
իբրեւ մեր աշակերտները, իբրեւ մեր ստորակարգեալները, իբրեւ
մեզմէ հովուուած կամ առաջնորդուած անհատներ, իբրեւ մեզ
ընթերցող կամ մեզի ունկնդրող հոգիներ: Այո՛, բոլոր այսպիսեաց
գործերուն մէջ պատասխանատուութեան աւելի կամ նուազ մեծ
բաժին մը կ'իյնայ ամէն անոնց որք արեան կապերով, ընկերական
դիրքով, շահուց առնչութեամբ, պաշտօնի, խօսքի կամ գրչի
հեղինակութեամբ ո՛ր եւ է զօրութիւն մ'ունին զոր ի գործ կը դնեն
անոնց վրայ, եւ անոնց սկզբունքներուն, զգացմանց ու նկարագրին
կազմութեան կամ փոփոխման մէջ դեր ունին: Եթէ մտքդը կը
գործէ իւր սկզբանց ու համոզումներուն, իւր զգացմանց ու հակա-
միաութիւններուն, վերջապէս իւր նկարագրին համեմատ, ապա
բացայայտ է թէ անոնք որ մեզ կըթեցին, մեզ մեծուցին, կեան-

քին մէջ մեր առաջին քայլերն ուղղեցին, ու անոնք ալ որ ամէն օր մեր խորհելու եւ զգալու, հետեւապէս մեր գործելու կերպերուն վրայ ուղղակի կամ անուղղակի կը ներգործեն, անոնք պատասխանակից են մեզ հետ, անոնք “հոգիներու բեռ մը” (charge d’âmes) ունին զոր ստանձնած են եւ զոր պարտին տանիլ այնպիսի կերպով մ’որ պատուաբեր ըլլայ իրենց, ըլլալով օգտակար այդ հոգիներուն ու անոնց շուրջ եղողներուն: Հայրական, ուսուցչական, վարդապետական, առաջնորդական, գործադրական, գրական ու խմբագրական պատասխանատուութիւններ կան, այո, որոցմէ ամէն անհատ պիտի ունենայ իր մասը իր գործօն կեանքի շրջանին մէջ, եւ, ո՛հ, պէտք է դողալ անոնցմէ: Ֆրանսացի երեւելի վիպասանը, Բօլ Պուոժէ, որ վարդապետին ի վերայ Աշակերտին ի գործ դրած ազդեցութեան ու անոր գործոց մէջ պատասխանատուութեան մէկ աղիտաւոր պարագայն ուսումնասիրած է իր “Աշակերտն (Le Disciple)”, անուն վէպին մէջ, յառաջաբանին մէջ, զօր կ’ուղղէ առ վաղուի քաղաքացին Ֆրանսայի, առ Ֆրանսացի Պատանին, իր հեզինակի պատասխանատուութեանը մտածելով, կ’ըսէ. “Ի՞նչ քաղած, ի՞նչ ժողոված պիտի ըլլաս մեր գործերէն. խորհելով այս բանին վրայ՝ չկայ պարկեշտ գրական մարդ մը, որքան եւ աննշան ըլլայ, որ չպարտի սարսափիլ պատասխանատուութենէ...: Դուն Աշակերտին մէջ պիտի գտնես այդ պատասխանատուութիւններէն միոյն ուսումնասիրութիւնը: Իցիւ փաստ մ’ստանայիր անկէ՝ որ այս տողերը քեզ գրող բարեկամը, ի չգոյէ այլ արժանեաց, ունի գէթ իր արուեստին լըջութեան խորապէս հաւատալու արժանիքը:”, Եւ խորհիլ որ մեր մէջ, գրագէտի պատասխանատուութեան խնդիրն յուզուած ատեն, կը գտնուին գրողներ որ ըսեն թէ գրագէտը բոյսի մը պէս է, վարդ կամ մոլեխինդ ըստ բնութեանն, բայց ո՛չ իր անուշահոտ բոյրին համար գովեստի արժանի՝ երբ վարդ է, եւ ո՛չ դատապարտելի իր ծորած թոյնին համար՝ երբ մոլեխինդ է: Ո՛հ, ի՞նչ քան զգաղիտկանն աւելի մեծ յառաջդիմութիւն մեր աղքատիկ գրականութեան մէջ... անշուշտ հակառակէն հասկցուած: Մարդը բոյս է որ, նոյն իսկ անբան անասուն է որ անպատասխանատու ըլլայ իր գործին ու անոր արդեանց, Բնք որ գիտէ բարին ու չարն ու պարտականութիւն ունի բարին ընտրելու, Բնք որ բարոյական էակ է եւ որոյ

կամաւոր կամ սովորեալ գործունէութեան ամէն ձեւք վերագրելի են իրեն՝ իրենց մօտաւոր ու հեռաւոր հետեւանաց մէջ: Այո՛, « հոգիներու բեռ ունինք ու պիտի ունենանք ամէնքս ալ, ու պարտիմք զգոյշ ըլլալ, երբ կը խօսինք, երբ կը գործենք, երբ կը հրահանգենք, երբ կը հրամայենք, երբ կը հիանանք կամ կը պարսաւենք անոնց առջեւ եւ ի լուր, որպէս զի մի՛ գուցէ գայթակղեցնենք այդ հոգիները, քանզիչ մտածում մը կամ թունալի զգացում մը սարդեցնենք անոնց մէջ, թելադրութիւն մը չարի, ապագայ ախտի մը սերմը, բարոյական կամ ֆիզիքական քայքայումի միջբրոյ մը: Քրիստոնէութեան Մեծ վարդապետն ալ, մտածելով առ իւր աշակերտս իր պատասխանատուութեան վրայ, կ'ըսէ. « Եւ ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին եւ նոքա սրբանլք ճշմարտութեամբ »: Իրենց ազդեցութեան ենթարկուած հոգիներուն բարւոյն համար ինքզինք սրբացնելու այս պարտականութիւնը չի վերաբերիր ամէն անոնց որք հեղինակութիւն ունին այլոց վրայ: Ծնողքներ, դաստիարակներ, վարդապետներ, առաջնորդներ, գրողներ, ձեզի չ'նշողուիր Քրիստոսի խօսքը: Որչափ մեծ է ձեր պատասխանատուութեան բաժինը նոր սերունդներուն մոլորութեանց, մոլորութեանց, մտքի խաւարին ու սրտի ապականութեան, զեղծ բարուց, անյաջողութեանց, անկմանց, աղտոտ ու եղեռնական արարքին մէջ, գո՛ւք որ ուսուցումն ու բարոզն ունեցաք ձեր շրթանց վրայ, վարձքը կամ սաստը ձեր ձեռքին մէջ, դրուատիքը կամ պարսաւը ձեր խօսքին կամ գրչին տակ, հեղինակաւոր օրինակին լծակը ձեր անձնաւորութեան: Եթէ օրինական ասեանները աննկատ թողուն սովորաբար այդ բաժինը, սակայն ընկերութիւնը կը դատէ եւ կը հատուցանէ, եւ ի վեր քան զամենայն ձեր խիղճը պարտի դատախազ կանգնիլ ձեզ եւ յայսմ: — Թաւելցնենք, ամբողջացնելու համար, եւ այն պատասխանատուութիւնը որ ի հարկէ կը յառաջանայ անտի զի չ'ըներ մարդ, իր շրջանակին մէջ, բոլոր այն բարիքը որուն կարող է իր բարոյական ու նիւթական միջոցներով — վասնզի կարել պարտիլ է —, ու չ'արգիլեր բոլոր այն չարիքը որ իր հակազդեցութեամբ պիտի կրնար խափանուիլ: Գիտէք որ Բարոյական Օրէնքը չի պատուիրեր միայն չարը չգործել, այլ եւ ըստ կարի առաջքն առնուլ չարին եւ իրագործել բարին, ու մեր բարեացակամութեան թերու-

թեամբ ի լոյս չեկած բարիքը կամ չվեժած չարիքը յերաւի վերագրելի պարտին լինել մեզ:

Ահաւասիկ, Սանունք իմ շրջանաւարտք, որպիսի պատասխանատուութիւններ կը ստանձնէք դուք մտնելով գործնական կեանքին, մարդու կեանքին ասպարիզին մէջ, որուն ձեր առջեւ հանելիք կացութիւններուն, ձեզ առաջարկելիք դերերուն իւրաքանչիւրն ունի իր պարտականութիւնները, ապա եւ պատասխանատուութիւնները: Վախցէք ասոնցմէ, ոչ թէ անոնց բեռը ձեր վրայէն նետելու համար, վասնզի այդ բեռերն են որ ձեր կեանքերը մեղմալից ու արժանալից պիտի ընեն, այլ զանոնք կրելու եւ անոնց հարկադրած օգտակար ու կեցուցիչ վաստակները ըստ արժանւոյն կատարելու եւ ձեր պատասխանատուութիւնը ձեզ ի փառս դարձնելու համար: Այո՛, ձեր փառքը այնքան աւելի պիտի ըլլայ որքան դուք աւելի ստանձնած պիտի ըլլաք պատասխանատուութիւններ ու խղճի մտօք կատարած ձեր պարտականութիւնները, որք պիտի բղխին ձեր վերաբերումներէն առ ձեր անձն, առ ձեր ընտանիքն, առ ձեր Ազգն ու Եկեղեցին, առ ձեր Երկիրն ու Պետութիւն, առ Մարդկութիւն, առ Բնութիւն, առ Աստուած, եւ են ու պիտի ըլլան արժանապատուութեան ու մշտառաջ զարգացման պարտքեր ձեր անձին նկատմամբ, խղճող Արդարութեան եւ զոհարքեր Սիրոյ պարտքեր ձեր նմանեաց նկատմամբ, գեղապաշտ ու խորհրդապաշտ հոգւոյ պարտքեր առ Բնութիւնն, ու կատարելութեան վերելքին մէջ միշտ բարձրացող առաքինի անձին պարտքերը առ Կատարեալ Էակն, առ Աստուած: Մեծ եղած պիտի լինի յայնժամ ձեր կեանքը, բարւոք լցուած Պատասխանատուութեան դասիտիվը գեղապասկ, եւ, հակառակ մարդուն օրերուն սակաւութեանն, մաքուր ու լուսափայլ, անանց հետքեր դրոշմած երկրի վրայ: Առ այդ իմ ամէն իղձերս ձեզի: Երթայք բարեաւ:

(Արեւելեան Մամուլ, 1905, Թիւ 1):

21. ՊՍԾԻԻԸ

(Հուսի Բանք առ Ընթացաւարտ Պէրդէրեան Վարժարանի 1915 ափ.)

Սիրեցեալ Ընթացաւարտ Սանունք իմ,

Թեպէս եւ տրամութիւն մը կ'զգաք այժմ, մնական ամէն ազնիւ հոգիներու, յաժնուելով սովորեալ վայրերէ եւ դէմքերէ զորս վարժուած էիք տեսնել եւ սիրել, սակայն գիտեմ որ քաղցր զգացում մ'ալ կը ընցնէ ձեր սիրտերը այս վայրկենիս՝ տեսնելով զձեզ առարկայ ծափերուն, գովեստիցն ու համարման հոս ժողովուած ընտիր այս ակումբին, որուն կը նախագահէ Ազգին հոգեւոր Պետը, ուր Պետութիւնը իւր ներկայացուցիչն ունի, ինչպէս նաեւ ընկերութեան ամէն պատուաւոր Դասեր՝ իրենց երեւեցուցիչները, ի ձեռին բռնած ձեր իմացական ու բարոյական արժանեաց առհաստաչեայ ձեր այդ վկայականներն՝ Երկրորդական Նրթութեան, եւ այդ մրցանակներն՝ պսակ ձեր անխոնջ ջանքերուն, ձեր արդիւնաշատ աշխատութեան: Այդ զգացումը Պատուոյ զգացումն իսկ է, իր միջավայրին մէջ իր նմանեաց, իրեն հաւասարներուն եւ իրմէ մեծերուն համարման եւ յարգանքին արժանացած ըլլալու զգացումն, որ մարդկային սրտին ազնուագոյն մնական զգացումներէն մին է, բարոյական կեանքի զօրաւոր ազդակ մը ու դրդիչ մը յառաջդիմութեան: Այդ զգացումն արդէն իր դերն ունեցաւ ձեր դպրոցական գործունէութեան մէջ, վասն զի, ի մէջ ուրիշ շարժառիթներու որք քաջութիւն տուին ձեզ ուսման դժուարութիւններուն յաղթելու, ինչպէս ապագայի մտահոգութիւնը, գիտնալու հետաքրքիր տենչը, ճշմարտին գեղեցկագիտական հրապոյրը, նաեւ ոչ նուազ դրդեց զձեզ յառաջադէմ նկրտիչ ձեր ծնողաց եւ ձեր ուսուցչաց համարումը գրաւելու, ձեր ընկերաց մէջ ընտրուելու եւ անոնցմէ յարգուելու, ձեր ընտանիքին ու ձեր դպրոցին պատուաբեր հանդիսանալու փափաքը: Ամբողջ դպրոցական շրջանին մէջ այդ փափաքին բարի բարի արդիւնքները շօշափելէ ու վայելելէ յետոյ, ահա՛ անոր վերջնական գեղեցիկ պտուղը կը վայելէք դուք այսօր, պսակաւոր կանգ առած Վարժարանին սեմին վրայ, ու պատրաստ թռչելու Համայնքին ու Երկրին թեւերուն մէջ, որք իրենց ներկայացուցիչներուն միջոցաւ՝ զուարթ եւ յուսալից՝ կ'ողունեն զձեզ, հրա-

ւիրելով զձեզ ընկերային գործունէութեան խոստանալից ու պրտաշալից դաշտերուն մէջ:

Շնորհաւորելով զձեզ Պատուոյ այդ ազնիւ զգացման համար որով ոգեւորուեցաք ձեր ուսանողական կեանքին մէջ ու այն ընտիր արդիւնքներուն համար զոր ստացաք, պիտի փափաքէի, այս վերջին անգամ որ կը խօսիմ ձեզ, որ այդ զգացումը միշտ վաճ պահէիք ձեր սրտին մէջ, որ պիտի շարունակէ զօրաւոր նեցուկ մ'ըլլալ ձեզ կեանքի ասպարէզին մէջ, վեր բռնելով զձեզ Պատուոյ ճամբուն վրայ եւ դէպ ի լաւը, դէպ ի լաւագոյնը ձեր ձգտումները զօրացնելով:

Պատուաւոր անհատ մ'ըլլալ ընկերութեան մէջ, յարգանքի եւ վստահութեան արժանի, իդձ մ'է զոր ամէն առողջ հոգի պարտի ունենալ, եւ որ արդէն բնական յօժարութիւն մ'է մարդուն մէջ: Ի՞նչ վայելում մ'է այդ, ի՞նչ վարձք, ի՞նչ ազնիւ հպարտութեան մ'առիթ, եւ ի՞նչ ոյժ: Մարդ մ'ես դուն, քու արժանիքիդ համար արժէք ունեցող, մարդ մ'ես դուն ընտրուող մարդերու խում մէջ, որուն առջեւ ճշմարիտ մեծարանքի զգացումով մը կը խոնարհին ամէնքն, որուն կը համակրին իրբեւ մէկու մը որ մարդկութեան ազնիւ տիպարներէն մին է, որ մարդկային ընկերութեան մէջ ամուր միութիւն մ'է եւ լուրջ զօրութիւն մը յորմէ բարիք միայն կ'ակնկալուի այլոց համար, որուն ճակտին վրայ ոչ մէկ արատ կ'աղարտէ անոր մարդու անունը, եւ որ կրնայ, համարձակ ու անվեհեր, ներկայանալ ամէն անդ, վստահ թէ ոչ ոք պիտի պահանջէ իրմէ խորուած իրաւունք մը, ոչ ոք պիտի յանդիմանէ իրեն զանց առնուած պարտք մը այն պարտքերէն զորս իր վիճակը եւ իր մարդ էակի հանգամանքը կը հարկադրեն իր վրայ: Ո՞չ ապաքէն միշտ նախանձախնդիր եղաւ իր համբաւին անբռնութեան, ոչ ապաքէն միշտ ուղիղ վարմունքով մ'ու պարկեշտ եւ օգտակար գործունէութեամբ անվճար ջանաց պահել ու յաւելուլ իսկ այլոց բարի համարումն իր մասին, ու յանձն առաւ զընկերները, մերժեց ապօրէն շահերն ու անխոստովանելի յաջողութիւնները՝ հաւատարիմ փառլու համար Պատուոյն, որպէս զի ոչ մէկու մ'առջեւ ամբողջ կարմրի, ոչ մէկու մ'առջեւ ստիպուի իր ճակատը խոնարհել ակնկոր: Ահա՛ պատուաւոր մարդը: Պատուոյն սէրը, Պատուոյն մտադրութիւնը ան-

կուճե՞նքու զէ՛մ զգուշացուցիչ մը, խափանարար մ'է իրեն, մա-
նաւանդ թէ գիտէ որ անգամ մ'իր պատիւը կորուսանելէ յետոյ՝
որքան դժուարին է վերստանալ զայն, ինչպէս կ'ըսէ բարոյախօս
պուէտն Պօպոյ իր սա տողերուն մէջ.

L'honneur est comme une île escarpée et sans bords;
On n'y peut plus rentrer dès qu'on en est dehors.

(Պատիւը կզգի մ'է սեպացեալ եւ առանց ասիւնքի. մարդ
չի կրնար այլ եւս հոն մանել վերստին, անգամ մը որ դուքս
մնայ անտի:) Եւ, ո՛հ, ի՛նչ ցաւագին եւ յուսահատական է ինք-
զինք զըկուտծ զգալ իր նմաներուն յարգանքէն, պատուազուրկ
զգալ ինքզինք. անձնասպանութեան շարժառիթ մ'է ան շատ
անգամ, եւ շատեր ալ կան, զորս այդպիսի յուսահատութիւն մը,
բառնալով իրենցմէ ամէն բարոյական ոյժ ուղղութեան ճամբուն
մէջ յարատեւելու համար, կը նետէ մոլիներու եւ շարերու
խուճերուն մէջ, ընկերութեան դէմ դարձնելով զանոնք, այլ
եւս ֆէտասկար տարրեր ու վտանգաւոր միջրոպիներն եղած մարդ-
կութեան: Զի իր նմաններէն ինքզինք յարգուած զգալու գի-
տակցութիւնը բարոյական նեցուկ մ'է, եւ թերեւս միակը շա-
տերու համար որք այն ատեն համարում կ'ունենան իրենց վրայ
երբ այլք համարում կը ցուցնեն իրենց, անկարող այլազգ գնա-
հատելու զիրենք, եւ անձին այդ գնահատումը որքան կարեւոր է
հաստատուն քայլելու համար բարոյական կեանքին մէջ: Պատուա-
ւորութեան տենչը ճշմարիտ խթան մ'է ամենուն համար. յար-
գանքի, գովեստի ու հիացման առարկայ դառնալու փափաքը, որ
փառասիրութիւնն է իր յարձրագոյն ձեւին մէջ — եւ գիտէք որ
ազնիւ փառասիրութիւն մը երբեք դատապարտելի չէ — կը մղէ
գիմազրուելու դժուարութեանց, առ ոտն կոխելու խոչ եւ խուժ,
մինչեւ որ մարդ հասնի իր նպատակին, գրաւէ իր փափաքած
փայլուն գիրքն ընկերութեան մէջ, կորզէ յաջողութեան դասինն
ու փառքի պսակը գիտութեան, ճարտարութեան, արուեստի,
գրականութեան, ուսուցչութեան, եկեղեցականութեան, աշխար-
հավարութեան ասպարէզներէն միոյն կամ միւսին մէջ: Պատիւը,
բարի անունը անժխտելի հարստութիւն մ'է նաեւ ընկերութեան
մէջ. ան կը ծնուցտնէ վստահութիւնը, որ գործնական կեանքին

մէջ վարկ կը կոչուի եւ որ այնքան կը նպաստէ մեր ուժերը մազ-
 մապատկելու եւ մեր ճիգերուն արդիւնաբերութիւնը յաւելցնե-
 լու, օգտուիլ տալով մեզ նաեւ այլոց արամադրութեան տակ
 գտնուած արատաւորիչ միջոցներէն: Իսկ այդ պատուաւոր անունը
 ինչ պատուական ժառանգութիւն է թողլու համար մեր զաւակ-
 ներուն, մեր յաջորդներուն: Չպիտի ըսեմ թէ ի չգոյէ գրամա-
 կան ժառանգութեան այդ կրնայ բան մ'արժեւ. ո՛չ, այլ վստա-
 հութեամբ պիտի ըսեմ թէ լաւագոյն ժառանգութիւնն է այդ,
 եւ նիւթական հարստութիւնը ըլլայ կամ չըլլայ՝ կարեւորագոյնն
 է դա. բարեհամբաւ մարդուն զաւակները արդէն կեանքին
 սկզբնաւորութենէն համակիր ոգիներ կը գտնեն իրենց շուրջն՝
 յօժարամիտ օժանդակելու իրենց առաջին քայլերուն, ի յար-
 գանս յիշատակի իրենց հօր, եւ յետոյ՝ սա մնական խորհրդով
 որ բարի մարդուն որդիք ընդհանրապէս ժառանգորդ են անոր
 բարոյական յատկութեանց եւ յաճախ անկէ վերջ կը շարունա-
 կեն այն առաքինութիւններն որովք հայրը փայլեցաւ իր կեանքին
 մէջ: Ու Պատուոյ այդ ժառանգութիւնը խթան մ'աւելի է որդւոց
 համար, որք կը զգան անոր պարտաւորեցուցիչ հանգամանքը,
 ինչպէս կ'ըսէ գաղիական առածը՝ թէ Noblesse oblige —
 «Ազնուականութիւնը կը պարտաւորէ», — ու ժառանգեալ
 ճշմարիտ ազնուականութիւնն անշուշտ պատուալից յիշատակն է
 ծնողքներու գեղեցիկ կեանքին, որոցմէ կ'իջնէ մարդ, ազնուակա-
 նութիւն որ արտաքին տիտղոսներու պէտք չունի բնաւին, եւ որ
 ժառանգութիւն թողուած գանձի գաղափարին հետ ալ առնու-
 չութիւն չունի ամենեւին, վասն զի կարի բարձր է անկէ: Եւ միշտ
 պատուաւորութեան մի հարկեցուցիչ պայմանն է — նաեւ մի
 արդիւնքը անոր — որ որդին պատիւ մ'ըլլայ իր ծնողքին ու սա
 հպարտ զգայ ինքզինք անով, ընտանիքին պսակն ու պարծանքն
 ըլլան զաւակները, եւ ուրիշ խումբերուն որոց կը պատկանի —
 Ազգ, Երկիր, Եկեղեցի, դպրոց, դասակարգ — պատիւ բերէ ու
 պատիւն յաւելու մարդ իր արժանիքովն ու արդիւնքովը: Ընկե-
 րութեան կողմէ վայելուած համակրութեան այնպիսի բարոյական
 արժէք մը կ'ընծայէր Սկովտացի իմաստասէրն Ատամ Սմիթ որ,
 ինչպէս գիտէք, անոր վրայ նոյն իսկ բարոյական դրութիւն մը
 կը հիմնէր, — համակրութեան բարոյականը — զայն համարե-

ըով միակ եւ պայծառ ստուգանիչ անհատին բարոյականութեան ու գործերու ընտրութեան մէջ ալ բարւոյն ու պարտականութեան ապահով ուղեցոյց:

Բայց մենք չպիտի երթանք այդքան հեռուն. ընկերական համակրութիւնը ոչ թէ պատճառն է գործերու բարութեան, այլ անոր արդիւնքն է. կը համակրինք գործողի մը, վասն զի բարի է անոր գործը, բարի են սկզբունքներն որոցմէ կը ներշնչուի ան իր վարմունքին մէջ, եւ այսպէս իր բարոյական գործն ու սկզբունքներն են որք կը բռնադատեն համակրութիւնը, այլապէս՝ արդիւնքը պատճառին տեղ առնելու սխալ իմաստասիրութիւնն ըրած պիտի ըլլայինք: Մեր նմաններուն համակրութիւնը գեղեցիկ վարձատրութիւն մը եւ զօրաւոր ներշնչիչ մ'է մեզ բարւոյն համար, վասն զի ընկերութիւնը ընդհանրապէս անաչառ գիտներ՝ այն հեռաւորութեան մէջ ուրկէ կը դատէ, եւ վասն զի գիտներ նաեւ որ որքան մարդիկ իրենց անձին վրայ իրենց դատաստաններուն մէջ ներող ըլլան առ անձն բնական տկարութեամբ մը, այնքան խստադատ են՝ երբ խնդիրը ուրիշները դատելու վրայ ըլլայ, եւ դժուարաւ կը հաւանին տալ ուրիշներուն իրենց գովեստն ու հաւանութիւնը. ամենէն մոլին բժախնդիր մ'է այլոց արարքին, եւ Յիսուսի օրերէն մինչեւ այսօր ալ շատեր իրենց եղբօր աչքին շիւղը կը տեսնեն՝ առանց տեսնելու գերանը որ իրենց աչքին մէջն է: Այսպէս դժուարին է ընդհանրապէս այլոց բարի համարմանն ու յարգանքին արժանանալ, որով եւ արժանանալն իրաւամբ կրնայ գգուել մեր խիղճը եւ անոր փափաքը մեր բնութեան ազնիւ մէկ դրդումը համարուի: Բայց ընկերութեան բաղադրութիւնը ամենուրեք նոյնը չէ. հոս կամ հոն, կրնայ ըլլալ որ հասարակութիւն մ'ըլլայ աւելի կամ նուազ ապականեալ, աւելի կամ նուազ նախապաշարեալ, ճշմարիտ բարին իմանալու մասին աւելի կամ նուազ տհաս. այդպիսի վիճակ մը ի հարկէ պիտի թիւրէ անոր բարոյական դատաստանը, գովել պիտի տայ անոր ինչ որ դատապարտելի է ու դատապարտել ինչ որ գովելի է: Շամֆօն կը հարցնէր «Ո՞րչափ տխմարներ պէտք են հասարակութիւն մը կազմելու համար, » եւ կ'աւելցնէր «Այն եղանակը որով գովեստն ու պարսաւը բաշխուած կը տեսնեմ՝ ամենէն պարկեշտ մարդուն վտտահամբաւ ըլլալու բաղձանքը պիտի

տար՝, շերտերդ Սրենսէր իր Փորձք ի վերայ Յառաջդիմութեան անուն գործին մէջ, խօսելով «Առեւտրական բարքերու վրայ, դիտել կուտայ թէ նիւթական հարստութեան եւ անոր արտաքին ցուցադրութեանց մեր դարուն մէջ ընդհանրապէս ընծայուած յարգն ու պատիւն ի՞նչ յոռի ազդեցութիւն ի գործ կը դնեն բարուց վրայ, եւ անոնց կը վերագրէ բոլոր այն չարաշահութիւնքն ու խարդախութիւններն որոցմով ապականուած է այսօր առեւտրական աշխարհը: Ցեսականապէս ուսուցուած դասերը՝ անձնագրհոթեան ազնուութեան, տաղանդին պարտուպատշաճ յարգութեան, գերամարտի կեանքի մը գեղեցկութեան մասին՝ շատ շուտով կը չէզոքացուին փորձառութենէն. փարթամութեան մատուցուած մեծարանքը զամէնքը կը մղէ շահելու եւ հարստութիւն դիզելու առանց երբեք նայելու միջոցներուն որակին, ամենէն անպարկեշտներն ալ ըլլան անոնք: «Եթէ, կ'ըսէ, չարագործ հարուստը, յետ սաճարին մէջ մտիկ ընելու քարոզի մը որ մասնանիշ կը դատապարտէ այն անպարկեշտութիւնները որովք յանցաւոր է ինք, եկեղեցւոյն դուռը կը գտնէ իր դրացիներն որք գլխարկնին կը հանեն իրեն առջեւ, միթէ այդ լուծեայն հաւանութիւնը կարող չէ՞ ջնջելու իր բոլոր լսածներուն ազդեցութիւնը:», Այսպէս մոլորուած հասարակաց գատաստան մը, ապականուած հանրային կարծիք մը կրնայ մոլորութեան պատճառ ըլլալ ուրիշներուն համար, աշխարհի սեմէն իրենց ոտքը ներս դնող դեռահասներուն համար մանաւանդ, որք հանրային համարման ու համակրութեան արժանանալու անկեղծ եւ օրինաւոր փափաքովն են ոգեւորուած:

Բայց չէ՞, դուք այսպէս չպիտի խորհիք: Դուք պիտի ուզէք միջավայրին մէջ, ուր պիտի ապրիք, հանրային յարգանաց եւ համակրութեան արժանանալ ուղիղ ու պարկեշտ վարմունքով մը, խղճամիտ ծառայութեամբք, առանց բնաւ եղծանելու ձեր բարոյական սրբութիւնը, առանց նուաստացնելու ձեր բարոյական արժանապատուութիւնը: Դուք գիտէք նաեւ ընկերութեան անկատարութիւնը, հանրային բարոյականին տկարութիւնները, դուք որ հաճոյքի ու շահու ընթացիկ բարոյականներուն թերութիւն-

ներն ուսուճասիրած էք ու անոնց տգեղութիւնն ըմբռնած, դուք որ մարդկային արժանապատուութեան վրայ այնքան բարձր գաղափար ունիք եւ գիտէք թէ պարպն է շնուաստանալ, չինալ ձեր բանաւոր ու ազատակամ էակի բարձրութենէն եւ ուղղել ձեր բոլոր ուժերը, ձեր բոլոր գործունէութիւնը դէպ յիրացուճն ձեր մէջ եւ ձեր շուրջը մարդկային անձի իտեալին, որու տարերքն են անկախ նկարագիր, մաքուր խիղճ, ճշմարտասէր, բարեացակամ ու գեղատենչ հոգի: Բուն պատիւը, ճշմարիտ պատիւը չի կրնար երբեք հաշտ ըլլալ այնպիսի արարքներու հետ զորս կը դատապարտէ բարոյականը, որքան ալ միջավայրի մը մէջ շատ ըլլայ լուելեայն անոնց հաւանող եւ յոռի համերաշխութեամբ մը յայնս քաջալերող մարդերուն թիւը: Մեզ ընծայուած պատիւը, մեզ համար ճշմարիտ բարոյական քաղցրութիւն մ'ու վարձք մ'ըլլալու համար, պէտք է որ մեր խղճէն վաւերացուի, պէտք է որ նախ ներքնապէս վկայենք մենք մեր արժանաւորութեան, վասն զի խիղճը՝ իբր բանականութեան ձայնը՝ առաջին անաչառ դատողն է մեր մէջ, հակառակ մեր անձին համար մեր տկարութիւններուն, եւ երբ դժգոհ է ան մեր մէջ, անօգուտ է որ եւ է ձայն որ դրսէն գովեստ կարդայ մեզ: Ճշմարիտ պատուաւորութեան առաջին պայմանն է նոյն իսկ մեր յարգանքը մեզ նկատմամբ: Գաղիացի վեհախորհուրդ բանաստեղծն, Ալֆրէտ սը Ալինի ըսած է. «Պատիւը խիղճն է, բայց բարձրացեալ խիղճը, իր անձին եւ իր կեանքին գեղեցկութեան յարգանքն է՝ տարուած մինչեւ ամենամաքուր բարձրութիւն եւ մինչեւ ամենաջերմ տենչն ու եռանդն:» Ժիւլ Սիմոն՝ գաղիացի իմաստասէրն ալ կ'ըսէ. «Պէտք է գիտնալ հպատակիլ անոր զոր հանրային կարծիքն ունի արդար եւ ընդունելի, եւ, մնացորդին համար, հետեւիլ մի միայն իր խղճին եւ ի հարկին յանձն առնուլ կարծիքին անիրաւութիւններն առանց պոստելու:» Այդ կարծիքին թիւրումներուն մէջ անշուշտ բարիներուն եւ իմաստուններուն կարծիքն է նախապատիւ, եւ անոնց հաւանութիւնն է մանաւանդ պատիւը քան անոնց, թէեւ ըլլան բազմութիւ, որք, ծածկելու կամ արդարացնելու համար իրենց լայրութիւնները, պատրաստ են խունկ ընծայելու ամէն գարշալութեանց, կամ իրենց բարոյական հասակին տհասութեան մէջ դեռ անգիտակից են ճշմարիտ բարւոյն: Իսկ որոշելու համար բարի-

ներն ու իմաստունները չարերէն ու տխմարներէն՝ դարձեալ չափ եւ կշիռ ձեր խիղճն է ձեզ, ձեր զարգացեալ ու նրբացեալ խիղճը, որպէս կազմեց զայն բարոյական կրթութիւնը, ազնիւ սկզբունքները զոր ստացաք: Ապա, ինչպէս կը տեսնէք, ճշմարիտ պատուոյն Տիմը գնահատութիւնն է ձեր խղճին, անոր պայմանը՝ խղճամիտ վարմունքը, ուղիղ եւ անբիծ կեանքը, բարի, գեղեցիկ եւ արդիւնարար գործերը, եւ առաջին նշան՝ այն գոհունակութիւնը զոր անոնցմով կը զգայ խիղճը մեր սրտին խորը:

Եզրակացնելով, կրնանք ըսել թէ խիղճը մեր մէջ մարդկային արժանապատուութեան պահանջն է, եւ թէ ուրեմն ամէն ճշմարիտ պատուոյ եւ արժանիքի խորը այդ արժանապատուութիւնը կայ: Խիղճը եթէ պարտուց վկայն ու դատախազն է, պարտքն ալ, ինչպէս գիտէք, հաւատարիմ մնալն է մեր իսկութեան: Մեր բնութեամբ մեք բանաւոր էակներ ենք, բարին ըմբռնելու եւ տիեզերական կարգին մասնակցելու կարող եւ մեր ազատ կամքով պարտաւոր գործադրելու ինչ որ բանիւ ըմբռնուած բարին ու կարգը կը հրամայեն մեզ: Ա՛յդ մեր մարդկային արժանապատուութիւնը կը կազմէ, եւ առաջին պարտքը՝ յորմէ յոր միւսները կը բղխին՝ պինդ բռնելն է այդ արժանապատուութիւնը, կամ, ուրիշ բառերով, չստորնացնել բանաւոր ու ազատակամ անձը մեր մէջ, չնկատել զայն երբեք իբրեւ միջոց, ինչպէս գեղեցիկ կը ճշդէ ֆանդ, այլ նկատել զայն միշտ իբրեւ վախճան մը եւ զարգացնել ու զօրացնել զայն, մեր մէջ եւ այլոց մէջ, զի մարդկային անձը՝ իբր այն, արժանի է յարգանաց, ամենուրեք, այնքան մեր մէջ որքան այլոց մէջ: Եւ աստի՛ մեր բոլոր պարտքերն առ անձն եւ առ այլ մարդիկ, նոյն իսկ մեր պարտքերն առ Աստուած եւ առ բնութիւնն որ զմեզ կը շրջապատէ, — մեր պարտքերն զգուշանալու այն ամէն բանէ որ կրնայ մեր ֆիզիքական եւ բարոյական կարողութիւնները խաթարել եւ ձգտելու այն ամէն բանի որ կրնայ ամրացնել եւ փայլեցնել մեր նոյն կարողութիւնները, մեր պարտքերը չանիրաւելու երբեք մեր նմանեաց՝ այլ համերաշխ գործակցութեամբ եւ սիրայօր ընկերութեամբ ձեռնտու եւ աջակից ըլլալու անոնց, սիրելու զանոնք, բարի որդիներ, բարի եղբայրներ եւ բարի հայրեր, բարեացակամ մարդեր, Պետութեան, Եկեղեցւոյն եւ Ազգին մէջ առողջ տարրեր եւ բա-

բերար յոժեր ըլլալու, զՍասուած սիրելու եւ իր գործերուն մէջ զՆա հետզհետէ աւելի լաւ ճանաչու եւ իր արարածոց մէջ նոցա արարիչը յարգելու, կեանքին խնայելու ամենուրեք եւ Բնութեան գեղեցկութիւններուն մէջ թաքուն խորհուրդը իմանալու եւ անոնցմով խորհրդանշանուած կատարելութիւնը պաշտելու: Անփոյթ ըլլալ մեր մարդկային արժանապատուութեան՝ անփոյթ ըլլալ է մեր բոլոր պարաքերուն. անփոյթ ըլլալ մեր մաքին յարասել զարգացման, անձնատուր ըլլալ մելութիւններու որք մարմին եւ հոգի միանգամայն կը փճացնեն, յանձն առնուլ նուաստացումներ որք մեր կամքը կը չքացնեն, ապրիլ իւրեւ բոյս եւ իբրեւ անասուն, անարգ հաճոյքներու եւ նիւթական շահու միակ հետապնդութեան մէջ կորսնցնել ամէն տեսլական, անձուկ եսը դնել ամէն բանէ վեր, զեռունի մը պէս սողոսկելով ապրիլ՝ առ յաւէտ անգէտ այն լուսազեղ անհունութիւններուն զորս արտոյտին երկնաթուիչ արեւաբաղձ հոգեակը կը զգայ, եւ անցնել իր կեանքը խողի մը նման գետնին գարշութեանց մէջ ոնգամուխ, ահա խաթարումը մարդկային արժանապատուութեան, քայքայումը վսեմ պատկերին զոր Սասուած իր բանին ու ազատ կամքին վեհագոյն տիպովը դրոշմած էր: Երբ մարդկային արժանապատուութիւնն իսկ է որ կը խաթարի, ուր կը մնայ պատիւը, մինչդեռ անոր հաւատարիմ ու պատկառ կեցող անձը յարգելի ու պատկառելի կը մնայ, թէեւ աղքատութեան, կղզիացման մէջ լքուած իր խղճին հետ: — Իմ վերջին խանդակաթ ողջոյնս ձեզ նուիրելով, ո՞վ իմ սիրելի ընթացաւարտ սաներս, կը մաղթեմ որ միշտ ու տակաւ առաւելելալ վայելէք ճշմարիտ պատիւը, բարիներուն եւ իմաստուններուն յարգանքը, պարկեշտ, բարեջան ու արդիւնալից կենցաղի մը քաղցր պտուղը, մաքուր ու անդորր խղճի մը սուրբ հեշտութեամբը լեցուն վսեմ գոհունակութիւնը: Երթայք բարեաւ . . . :

(*Քիւզանդիոն, Թիւ 2685, 1905:*)

22. ՊՈՏՈՒՆԵՐԻՆ ՈՒ ՀՐԱՉՆՈՒՄԻ ՊՈՏԻՐ

(Գրողական յեշտականք)

Ա.

Պատուելին¹ յաղթահասակ մարդ մ'էր. վաթսուն տարեկան կար այն ատեն: Երբ աղօթքներու ժամանակ գլուխը կը բանար, գանկը՝ հերազուրկ՝ կը փալփէր արծաթանման, ու քթանի պէս ճերմակ էին գլխուն շուրջը մնացած մազերը: Կեանքը ահօսներ գծած էր ճակտին վրայ, եւ միշտ գերծուած մաքուր երեսին վրայ խորշոճներ կային ձեւացած: Բայց հակառակ ծերութեան այս անհերքելի նշաններուն, Պատուելին առոյգ ու կորովալից երեւոյթ ունէր, եւ տակաւին երկար ասպարէզ մը չափել կը խոստանար: Իր այտերը առողջ կարմրութեամբ մը երգունուած էին գրեթէ միշտ, խոշոր աչքերը մշտավառ հուր մը կը ցոլացնէին, եւ իր պերճ կլափը, որ իր ծնօտին տակ կը սոնքար, միանալով թանձրամիս ուռուցիկ ծոծրակին եւ ընդհանուր արծուային դիմագծութեան, ֆիզիքական ու բարոյական պատկառելի ոյժ մը կը շնչտէր: Քալուածքը՝ ուղիղ եւ սեգ, գլուխը՝ բարձր ու կանգուն, ձայնը շաչուն ու ուժգին էր: Երկար սաքօ մը կը հագնէր սեւ չուխայէ, փայլուն ու ճոնչուն կօշիկներ. միշտ խողանակուած էր իր հագուստը, ոչ երբեք փոշի մը իր կօշիկներուն վրայ. — մաքրութեան ծայրայեղ նախանձախնդիր մարդ մը: Իր սովորական մէկ շարժումն էր, մեքենաբար, արագ արագ թօթուել իր քղանցքները՝ իւր անոնց փոշին թօթափելու համար, որմէ զերծ էին սակայն: Քիթը սրբելու համար կարմիր մեծ թաշկինակ մը կը հանէր, խաւ խաւ ծալուած, շոնչիւնով կը խնջէր, եւ յետոյ դարձեալ մի եւ նոյն ձեւով ու զգուշութեամբ կը ծալէր՝ բազմիցս մաքրելէ ու շորցնելէ յետոյ ոնգունքն ու պխերը:

Շուկայէն ու աշխարհքէն անցնելով մտած էր դպրոց: Տիրացու-Վարժապետի խոնարհ ու երկչոտ երեւոյթը չունէր բնաւ, ընդհակառակն ամիրայի պերճ ու հպարտ սեւիլը: Չէլէպի կը կոչէին զինքը, եւ երբ թաղականները պատուելի բառը

¹ Պատուելի Թէոփորոս Ջորպեան, որ վաթսունական թուականներուն, իրեւ անօրէն-գառախարակ, կը պաշտնավարէր խառգիւղի Ս. Կերսիկեան վարժարանին մէջ:

կ'արտասանէին անոր համար, համոզումի շեշտ մը կար իրենց ձայնին մէջ: Ճեզայիրլեան Ամիրայի մաքսային գործերուն մէջ պաշտօնավարած ու հազարաւոր ոսկիներու հետ խաղացած էր: Արմաշու վանքին կալուածներուն ալ վերատեսուչն ու մատակարարը եղած էր: Ա'րսէին թէ խաւրիէն գիացած էր ժամանակաւ, բայց հայերէնն, ամենէն խրթին գրաբարը, ապահովապէս գաղտնիք չունէր իրեն համար: Հ. Արսէի, Հ. Եղուարդի սաղաշափեալ երկասիրութիւններէն շատ բան ի բերան ուսած էր եւ կ'արտասանէր յաճախ իրեն յատուկ պերճահունչ առողանութեամբ ու վեհաշարժ ձեւերով, այնպէս որ, թէ եւ այն ասին շատ բան չէինք հասկնար, կը զգայինք թէ խորին էր Պատուելիին հմտութիւնը ու այդ աողերուն իմաստը՝ կարի բարձր, երբ կը անսնէինք զինքը համակ ոգեւորուած ու ոտքով ձեռքով օդին մէջ շարժուն ու ճօճուն, իր արտասանած աողերուն բոլոր մեծութեամբը սոնքացած ու ալ աւելի հսկայակերպ հասակ մը ստացած փոքրերուս ապշած աչքերուն առջեւ: «Պազանը», այս էր իր սովորական բացագանչութիւնը, երբ ուզէր գերազանց ուժի մ'առջեւ — բարոյական թէ ֆիզիքական — իր հիացումը պոռթկաւ: Հայր Արսէն Բագրատունւոյն անունը, իբր հայերէն լեզուի ու բանաստեղծութեան գերազանց «գազան», ին, «հրէշ», ին, օրը մէկ քանի անգամ կու գար իր շրթանց վրայ, միշտ զարմանալից ու պատկառոտ շեշտով մը: Ինքն եւս կը առղաշափէր ու բանաստեղծ էր իր ժամերուն, յատկութիւն զոր պահեց շատ ուշ, եւ որոյ արդիւնքները վայելելու բախար կ'ունենային մանաւանդ անոնք որք Պատուելիին քիւքը պարարող նուէրներով անոր խանդը կը բորբոքէին:

Ասան զի — ըսի՛, չեմ գիտեր — Պատուելիին զօրաւոր կամ տկար մէկ կողմէ էր քիւքը: Ա'յնքան համեմաճոխ ախորժահամ կերակուրներուն սէրն ունէր որքան համով հոսով քերթուածներուն: Անոնք ալ բանաստեղծութիւններ էին կամ բանաստեղծութիւններ կ'արժէին իրեն համար, եւ լսած ենք շատ անգամներ իր խանդալից ներբողները իր մօտ թէ հեռու ժամանակներ վայելած սեղաններուն մասին, որոց յիշատակը բնաւ չէր կորսնցներ: Իսեղճը, կ'ըսէին, շատ յուսախաբութիւններ կրպժ էր իր կեանքին, մանաւանդ իր ընտանեկան սէրերուն մէջ: Անոջմէն

խաբուած ու բաժնուած, չէր խնդացած նաեւ իր ղաւակներէն, որոնք ցիր ու ցան եղած էին, ոմանք բոլորովին վաւթարացած: Անցեալ հեշտագին տպաւորութիւններէ կ'երեւի թէ միայն խորատիկներու թողածներն էին որք պահած էին իրենց անուշութիւնը, ընթերցումներու յուշերուն հետ միասին, ու ներկային մէջ ալ, այն ատեն ու անկէ վերջն ալ, ամենէն աւելի երկու բանի կը փափաքէր — համով հոտով կերակուրի ու համով հոտով հատորի: Անոնց հետ թէ միանար մաքուր ձեռք մը լաթը, զոր տարիներով կը հագնէր անաղարտ, ալ բանի մը չէր փափաքեր: Դիողինէսին պէս — «գազան», մ'ալ ան, ինչպէս կ'ըսէր, անուանի շնականը — բաւական անկախութիւն ու քաջութիւն կը զգար իր մէջ կարենալու համար պատասխանել Աղեքսանդրի մը հարցման, «... որ մէկդի կենայիր արեւս չխափանելու համար», — «Ի՛նչպէս էք, Պատուելի», — «Ի՛շխանի պէս», կը պատասխանէր հպարտ շեշտով մը կլափը ցնցելով, երբ, իր փայլուն արտակօշիկներուն վրայ բարձրացած, ճոխ կը ձեւէր դպրոցի մը նրբանցքին մէջ, կամ թէ կ'անցնէր շուկայէն՝ մէկիկ մէկիկ ընտրելով կոտելի քարերը:

Ինչպէս կը տեսնուի, հեռու էր սակայն Դիողինէսներու դպրոցին կատարեալ հետեւող մ'ըլլալէ, ինք որ իր անհրաժեշտներուն մէջ կը դնէր այնպիսի բաներ որք ծիծաղելի աւելորդութիւն ու պերճանք պիտի թուէին կարասաբնակ իմաստասիրին ու անոր հաւատակիցներուն: Մասամբ եպիկուրեան մը կրնար նկատուիլ, տեսնելով իր տկարութիւնները ճաշակի իրաց մասին, — եպիկուրեան մը, բառին ո՛չ անազնիւ իմաստովն անտարակոյս, ըստ որում այդ տկարութիւնը ու պահանջմունք այնքան կը վերաբերէին մտաւորական ու ներքին ոլորան ստոմոքսային ու արտաքին գոհացումներու: Սիրահար մ'էր նաեւ Ստոյիկեան վարդապետութեան, — վասն զի Պատուելին գրականութեան չափ կը հետաքրքրուէր նաեւ փիլիսոփայական դրութեանց, մանաւանդ հիններուն, որոցմէ կ'ընտրէր ինչ որ իր բնածին խրոխտութիւնը եւ ամէն սեռերու մէջ ուժի նկատմամբ իր ունեցած համակրութիւնը կը գգուէր: Ստոյիկեանց կամքի, այն է բարոյական կորովի, վարդապետութիւնը իր սիրած, իր պաշտած բանն էր: Անոր համար թերեւս նաեւ ըմբշամարտութեան տեսարաններ մասնաւոր հաճոյք կը

պատճառէին իրեն. Գիւցազներգութեանց մէջ մենամարտի նկարագրութիւնը, ինչպէս Ուրիականին մէջ Աքիլլէսին ու Հեկտորին, կը դիւթէին զինքը, ոչ միայն վասն զի Ֆիդըքական ուժը միշտ ուժ մ'էր, ուստի եւ գերազանցութիւն մը, — եւ առ այդ ոչ սակաւ կը պահէր որիմպական խաղերու սիրահար Տնոց ճաշակը —, այլ եւ վասն զի ի հանդէս բերուած դնդերական զօրութիւնը նաեւ կամքի զօրութեան մ'արտայայտութիւնն էր, գէթ մասամբ, ու ամէն պարագայի մէջ անոր, ու մտքի կորովին ալ, նպաստաւոր մարդանք մը: Գպրոցին մէջ, բառին բուն նշանակութեամբ, ըմբշամարտիկ մարզանքներ կատարել կու տար աշակերտաց: Վարժարանին մեծ սրահին մէջ, մրցասէր պատանիք մարմնական ուժի, ճապկութեան, արագոտան դիւրաշարժութեան փորձեր կը կատարէին, բաճկոն ու մերթ շապիկ ալ մերկացած, նստարանաց մէջէն զիրար հալածելով՝ զիրար բռնելու հետամուտ, կամ մէջտեղի բացավայրին մէջ՝ իրարու փաթթուած՝ զիրար զգեանելու ճգնաջան, մինչ շուրջանակի գրասեղանաց վրայ նստած խոնուած էր աշակերտաց հանդիսատես բազմութիւնը, մէկ մասն ալ բարձրաւանդակ ամպիոնին վրայէն իբր դիտանոցէ մ'ի զնին: Օր մ'ալ, աւանդ, մեր դասընկերներէն մէկուն՝ որ կը մրցէր՝ ինչալ նուազիլը տեսանք աժգունելով. խեղճին սոնոսկըր կուրած էր. պատգարակով տուն փոխադրեցին զինքը: Երեք ամիս պատուելին ծախքով դարմանուեցաւ, ու այլ եւս փակուած էր գօտէմարտիկ մրցութեանց շրջանը:

Բ.

Հրաշեայ, որուն անունը կը տեսնուի մեր խորագրին մէջ, գպրոցական պատանեակ մ'էր այն վարժարանին մէջ որու կ'ակնարկենք: Զինքն, աւելի փոքր հասակի մէջ, ներկայացուցած ենք արդէն ուրիշ գրուածքի մը մէջ, իբրեւ այրի աղքատիկ մօր մ'ուսումնասէր յուսատու որդին: Քանի մը առիթներ յետոյ գպրոցին մէջ եղած էր մին աննցմէ որոց նաեւ «գազան» վերագիրը կու տար Պատուելին, վասնզի յաջողակ եւ քաջ էին իրենց դասերուն մէջ, «դասերը կը լափէին», իր բառերով, ու չէ՞ որ լափել գազանային գործողութիւն մ'է: Հրաշեային վրայ մինչեւ իսկ մասնաւոր համակրութիւն մը կը տածէր, զայն հրապարակային

գովեստից նիւթ ընելով ու առանձին հօգածութեան առարկայ: Սակայն այս համակրութիւնը մէկէն ի մէկ չէր եկած. դէպք մը — պատժոյ պարագայ մը — մանաւանդ մեծապէս նպաստած էր անոր, ի վեր հանելով հաւանօրէն ազազուն տժգոյն պատանեկին տկարութեան մէջ ման մը որ թաքուն բարոյական ուժի մը յայտարարը երեւցած էր Պատուելին ու իր Ստոյիկեանի հօգին մագնիսած:

Պատուելին պերճաբան բարոյախօս մ'էր: Շաբթուան մէջ յատուկ օր մը վերապահած էր իրեն բարոյականի ընդհանուր հրապարակախօսութիւն մ'ընելու համար Ուսումնասրահի աշակերտաց ամբողջութեան, ու ցերեկուան ճաշին նախընթաց ժամ ընարած էր առ այդ: Բոլոր կարգաց ուսանողք, մեծ ու պզտիկ, պարտէին գիրք ու տետրակ վերցնել պահել եւ ունկնդրել իրեն, լուռ, երկիւղած: Նա ընդհանրապէս կը մեկնէր լատին Սենեկայի ճառերն եւ Իտալացի Էմ. Թեսաւրոսի Բարոյական Իմաստասիրութեան գլուխները, իրենց գրաբար թարգմանութեանց վրայէն: Իր դասախօսութիւնը կրնար հասկանալի ու շահագրգռիչ ըլլալ վերին կարգերու աշակերտաց համար, բայց այն կարգին համար՝ որուն կը պատկանէր Հրաչեայ, իբր 10—11 տարեկան այն ատեն, եւ որ յետիններէն էր ու Սրահին վերջին գրասեղանները կը գրաւէր, գրեթէ բոլորովին անիմաց կը մտար: Օր մը, Պատուելին, ըստ սովորականին, իր բարոյական Իմաստասիրութեան դասը կ'ընէր ոգեւորութեամբ: Բոլոր Սրահը լուռ էր, վասնդի երբ կը խօսէր, բնաւ ձայն ու շշուկ չէր ուզեր, ու պէտք է ըսել թէ գիտէր լուռութիւն ստանալ, ու տղայք իր բարկութենէն կը վախնային: Հրաչեայ բան մը չէր հասկնար ի հարկէ այդ բարձր ու խրթին խնդիրներէն, բայց, չուզելով ալ ժամանակն անօգուտ անցընել, գլուխը գրասեղանին եղբրքին կրթնցուցած՝ անտես մնալու համար Պատուելիէն՝ գիրք մը կը կարդար, — ճաշէն վերջը տրուելիք դասի մ'ի բերան ուսումը, հաւանաբար: Նոյնը ըրած էր նաեւ իր քով նստող ընկերը, առանց իրարու ըրածը գիտնալու, անհազորդ իրարմէ: Յանկարծ Պատուելին կ'ընդմիջէ դասախօսութիւնը, ամպրոպի մը պէս՝ բարձր ամպիոնէն վար իջնելով կը հասնի Հրաչեայի եւ իր ընկերոջ քով, առանց որ եւ է քննութեան կամ հարցման, վստահ անոնց յանցաւորութեան վրայ

իրրեւ գրասեղանին տակէն գաղտնաբար խօսակից, երկուքը մէկանց բռնելով կը տանի կը նետէ նախակրթարանի Սրահը որ յարաբերութեան դուռով մը կը հաղորդակցէր Ուսումնարանին հետ, եւ հոն պաշտօնավարող դաստիարակին որ միանգամայն պատժածու պաշտօնեայն էր Պատուելին ու իբր այն՝ այդ պաշտօնին գործի ու խորհրդանշան գաւազանը յարածամ ի ձեռին կը կրէր, կը գոռայ զայրագին. «Տասը հարուած այս անիծից արմատներուն, բոսիկ», Իսկոյն երկու աղաք կը բերեն Ֆայլախանը. Հրաչեայ եւ ընկերը կը պառկին իրենց կոնակին վրայ, խարտեաչ մազեր գետնի փոշոյն մէջ թաթաւուչ. պատժածուն կը մերկացնէ իրենց ոտքերը, տանջանարանին չուանէ լարին մէջ պինդ պրկել կուտայ զանոնք, եւ կ'իջեցնէ գաւազանի հարուածները այնքան անզգայօրէն որքան իրեն համար սովորական գործ մ'է ըրածը, ու այնքան ուժգին որքան կ'ուզէ եռանդ ցոյց տալ իրրեւ հըռ հաճոյակատար իր գլխաւորին հրամանին: Հրաչեայ, առանց կակնաբարձ բողոքի կամ աղերսաւոր ծամածուծութեանց, կը կրէ պատիժը անմռունչ, եւ իր պատժակցին հետ ժողվելով կօշիկներն ու գուլպայները, զսպուած խեղդուկ լացով մը, կոշկոճուած ոտքերուն վրայ կաղ ի կաղ քայլելով, կը գառնայ իր տեղը: Պատուելին, գոհացեալ, կը շարունակէ ճառախօսութիւնը Պարտուց գիտութեան վրայ:

Քիչ յետոյ, ճաշի զանգակը կը հնչէ, աղաք կ'աղօթեն ու ճաշարան կ'իջնեն: Հրաչեայ կը մնայ Սրահին մէջ իր տեղը: Արդէն չ'իջներ ան ճաշարան. իր ցերեկուան ճաշի համար հետ բերած կարմրցած հացի երկու չոր շերտերը, զորս թաշկինակի մը մէջ փաթթած է, ճաշարանին մէջ ծաղրելի կամ արգահատելի պիտի երեւէին. չափազանց հպարտ էր այդ ծաղրին կամ արգահատանքին ենթարկուիլ ուզելու, ինչպէս նաեւ ուրիշներու սակառին առ գթութեան առաջարկուած մասնակցութիւն մը յանձն առնելու համար: Ուստի, այդ օր ալ, վերը կը մնար, առանձին ու անտես, իր աշտուճ հացը ծամելու համար: Պատուելին իր ամպիոնին վրայ էր. անտեսն իր առջեւ բերաւ իր ճաշին համար թաղական կամ հոգաբարձու հարուստ աղայի մը տունէն ըստ կարգի ղրկուած լայն ափսէն, ուր կ'երեւէին մէկէ աւելի պղնձեայ անագափայլ պնակներ, կափարիչներով գոցուած, որոցմէ քմահրա-

պոյր բուրուճներ ծաւալեցան սրահին մէջ, երբ Պատուելին զանոնք իրարու ետեւէ բացաւ՝ անոնց պարունակութեան վըայ կանխաւ ամբողջական գաղափար մը կազմելու եւ իր ակորժակը պատրաստելու համար: Մինչ նա իրեն մեծարուած կերակուրները կը ճաշակէր յայանի հեշտանքով, անդին Հրաչեայ, իր դարակին առջեւ ծռած, մէկ կողմէն կուլար (իւր չարագան խեղճ ոտքերուն ցաւը զինք կը տառապեցնէր), միւս կողմէն իր ցամաք հացը կը խածնէր ու մի եւ նոյն ատեն՝ գիրքը բացած՝ դաս կը սերտէր:

Այս տեսարանը չվերհասցաւ Պատուելին աչքերէն. կ'երեւի թէ ցնցում մ'զգաց իր հոգւոյն մէջ, խղճի խայթ մը, զղջում մը. ո՞ գիտէ, թերեւս արցունքի կաթիլ մը, հակառակ իր ստոյիկութեան, աչքէն ինկաւ իր առջեւ ունեցած պնակին մէջ. շատ կարելի է որ այն օր չկրցաւ կուշտուկուռ ուտել իր ճաշը, ըմբռննել լիովին իւրաքանչիւր կերակրոյ համն ու հոտը: Ամէն պարագայի մէջ, երբ ճաշարանէն վեր ելան տղայք, երբ զբօսանքը լնցաւ, ու դարձեալ, դասերու վերսկսումէն յառաջ, սովորական աղօթքը երգուեցաւ, Պատուելին Հրաչեային ջերմ ու զգածեալ մէկ գովեստն ըրաւ ի լուր աշակերտաց, ու անկէ յետոյ ան իր սիրական «գազան» էր:

(Բիւզանդիոն, 1903, Թիւ 2001.)

23. ԳՊՐԹՈՏԱԿԱՆ ՄԱՐՄԵՆՈՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

ՊՈՏՐԻՈՐՔՈՐԱՆԻ ՄԷՋ

(Ուղերձ առ Սրբազան Պատրիարք հայրն)

Նոր տեսարան կը պարզուի մեր աչաց առջեւ: Մայրաքաղաքիս համայն հայ վարժարանաց Ուսուցչութեան եւ Ուսանողութեան ներկայացուցիչք, շրջապատած Ն. Սրբազնութիւնը՝ Զատկական շնորհաւորութեան առթիւ, նոր տօն մը, նոր հանդէս մը հաստատած են, որու բարոյական նշանակութիւնը մեծ է, եւ ըստ այսմ անոր հաստատութիւնը շնորհաւորելի արդարեւ:

Աստահ եմ թէ համայնից զգացման թարգման կը լինիմ, եթէ ջերմ շնորհակալութեանց հաւաստիքն յայտնեմ Ամեն Ս. Պատրիարք Հօր, որ բարեբաստիկ գաղափարն ունեցաւ այսպիսի

Հաստատութեան մը եւ կրթասէր ու որդեսէր ոգւով իր մօտ հրաւիրեց զանոնք որք Ազգին մատաղ սերունդն ու կոկոններն են անոր ապագային, եւ զանոնք որք իրենց վրայ կը կրեն անոնց բարեգր պատրաստութեան ծանր պատասխանատուութիւնը:

Ար խորհիմ որ մեր սիրեցեալ Ս. Պատրիարք Հայրը, իր շուրջ բոլորելով ազգին կրթական այլեւայլ մարմիններուն պատգամաւորները՝ իրենց Սաներուն մէկ մէկ փունջոյն ի միասին, կ'ուզէ շեշտել այն մեծ կարեւորութիւնը զոր ունի մանկութեան ու պատանեկութեան դաստիարակութեան գործը, զոր արդէն իսկ, ի սկզբանէ իր պաշտօնավարութեան, մասնաւոր առարկայ ըրած է իր ուշադրութեան: Չկայ ամ — եւ մերթ քանիցս տարւոյ մէջ — ուր Ն. Սրբազնութիւնը չայցելէ բոլոր կրթական յարկերը, անձամբ շփման եւ հաղորդակցութեան մէջ չմտնէ Ուսուցչաց եւ աշակերտաց հետ, Յիսուսօրէն գգուելով փոքրիկները, ընտանեբար խօսելով անոնց հետ ու քաջալերելով զանոնք: Շաքարը զոր բաշխել կուտայ անվրէպ՝ կը խորհրդանշանէ իր հայրական սիրոյն քաղցրութիւնը: Ի՞նչ ոգեւորութիւն է որ կը տիրէ այդ այցելութեանց միջոցին դպրոցաց մէջ. այո՛, գորովալից Հօր մ'այցելութեան սպաւորութիւնն է զոր ունին Ուսանողք. ամէնք ի համայր կը դիմեն Պատրիարքական Աջոյն, որ կ'օրհնէ զիրենք եւ որուն օրհնութեանց տակ իրենց ուսանողի բարի կամեցողութիւնները պնդուած ու զօրացած կը զգան նորա: Ա՛րմառնեն թէ մեծ բան է դպրոցը, եւ թէ ժողովուրդ մը քաղցր յոյսեր կը տածէ իր մատաղ սերունդին վրայ, զորս ներկայ մտադիւր աշխատութեամբ ապահովել կը յորդորուին, որպէս զի մի օր կարենան իրականացնել զայնս, բարի մարդու, բարի քաղաքացոյ, բարի հայու առաքինութիւններն ու օգտակարութիւնքն անձնաւորելով իրենց վրայ:

Երբ մէն մի տարի Ազգին Ս. Հօր կողմէն այս քաջալերիչ այցն ու օրհնութիւնները կ'ընդունին, պէտք ու պարտք չէ՛ր որ դպրոցական մարմինք ալ տարին օր մը գէթ, փոխարէն այս հոգածու գորովին շնորհներուն, փոխադարձաբար գային իրենց որդիական զգացմանց հաւաստիքը բերել առ Նորին Ամենապատուութիւն:

Ա՛յո՛, Սրբազան Հայր, շնորհակալ ու երախտապարտ է Ձեզ Հայ Ուսանողութիւնն այն սիրոյն համար որուն հանապազ կ'ըն-

գունի անհերքելի ապացոյցներն, այն իմաստուն խրատուց ու յորդորներուն համար զորս կը շռայլէք իրեն, եւ իր յառաջդիմութեան մասին Ձեր տարած անդուլ խնամքներուն համար: Ընորհակալ եւ երախտապարտ է Ձեզ չայ Ուսուցչութիւնն այն յորգանքին համար զոր կ'ընծայէք իրեն, զոր կը պահանջէք իրեն համար Ազգին մեծերէն ու փոքրերէն, եւ այն հոգածութեանն համար զոր ունիք անոր ներկային ու ապագային նկատմամբ, Դուք իսկ վարժապետ եղած ըլլալով եւ Ձեր հոգւոյն մէջն իսկ բարախիըն զգալով անոր վաստակալից ու յաճախ ցաւած հոգիին:

Ձեր Աթոռոյն բարձրէն Ձեր ցոյց տուած այս կրթական փոյթն ու հոգածութիւն բոլոր Ազգին սիրաբ գոհութեամբ կը լեցնեն, չայր Սրբազան, վանքի կը զգայ բովանդակ Ազգը թէ իր բարօրութեան մեծագոյն հիմն է լուսաւորութիւնը, Ուսմանց, Գիտութեանց եւ Արուեստից մէջ յառաջդիմութիւնը, ինչպէս որ ցարդ, խաղաղիկ, առ այդ ջանացած է ընդ հովանաւորութեամբ Օսմանեան Վայսերաց, ու կը շարունակէ ջանալ արդի Օգոստափառ Վայսեր կրթաւոր հովանոյն տակ, որու կը պարտի դիրութիւններն ու արածութիւններն զորս ունի եւ կը վայելէ իր լեզուն եւ դպրութիւնքը մշակելու, իր մատաղ սերունդը մարզելու իր կրօնին, երկրին ու այլ լեզուաց ու զանազան ուսմանց հրահանգաց մէջ եւ պատրաստելու զայն օգտակար ու պատուաբեր տարր Օսմանեան Պետութեան:

Մեծ է ու մեծագոյն պիտի ըլլայ, կը հաւատանք, արդիւնքը պատրիարքական կրթասիրութեան ոգւոյն ու մանաւանդ կրթական խնդրոց մէջ իր յայտնի ձեռնհասութեան: Ար յուսանք որ մեր կրթական յարկերը՝ Ձեր պահանջոտ հսկողութեան տակ հետզհետէ աւելի հաստատուն ու մեծ քայլեր պիտի առնուն, դրուած բարի հիմունք աւելի եւս պիտի ամրապնդուին, ինչ որ դեռ միայն օրինադրուած է՝ պիտի իրապէս գործադրեալ դառնայ, Ուսմանց պիտի զուգորդին Արհեստք, Վարժապետանոց մը պիտի շատցնէ թիւը գիտակից ու տեսականօրէն ձեռնհաս Ուսուցիչներուն, եւ հետզհետէ աւելի լուրջ կրթութեամբ մը օժտուած դուրս գայ նոր սերունդը նոյն այն յարկերէն ուր կը պատրաստուի: — Ար յուսանք նաեւ, Սրբազան չայր, որ Ազգին դրամատէր Մարմինն ալ հետզհետէ աւելի զգացում ու եռանդուն վերաբերում ցոյց

տայ առ կրթական գործն, դէպ ի կրթական ու յառաջընթացական պէտքերն Ազգին, Չեր իմաստուն առաջնորդութեան ու պերճախօս յորդորանաց եւ ուշագրաւ օրինակներուն ազդեցութեան տակ, եւ ինչ որ կայ թերի — եւ քանի՛ շատ են անոնք դեռ. — մեր դաստիարակութեան մէջ եւ ինչ որ մանաւանդ նիւթական միջոցներու կը կարօտի, լըուի տակաւ առ տակաւ, եւ Չեր Պատրիարքութեան շրջանը — որուն երկարումը կը մաղթենք — ներկայացնէ փայլուն էջ մը մեր կրթական պատմութեան, ըստ յառաջդիմասէր փափաքանաց եւ ջանից Չերդ Ամենապատիւ Սրբազնութեան, որոյ թոյլ տուք ինձ այս առթիւ համբուրել Աջն՝ Ջատկական ջերմագին բարեմաղթութեամբք եւ ըզիւք:

(Արեւելեան Մամուլ, 1904, թիւ 17:)

24. ԿԻՒԻԿԻՈՑ ՎԵՆՇՈՅՆՈՐՀ Ս. ԿՈԹՈՂԻԿՈՍԸ

ՊԵՐՊԵՐԵՆՆ ՎՈՐԹՈՐԱՆԻՆ ՄԷՋ

(Տնօրէնի Ուղերձը)

Հոգեւոր Տեր եւ Հայր Պատուական,
Մեծ է պատիւը զոր կ'ընէք այսօր Պէրպէրեան վարժարանի, յայց ելնելով անոր: Այս այցը, յիշատակելի, անմոռանալի, անոր տարեգիրներուն մէջ պիտի մնայ իբրեւ գերազանց նշան գնահատման եւ քաջալերութեան առ նա, եւ նոյնպէս երախտագիտութիւնը՝ զոր կը ծնցնէ այն՝ հանդէպ Չեր Սրբազնասուրբ Օծութեան, պիտի մնայ անջինջ քանդակուած Պէրպէրեան վարժարանի Ուսուցչական եւ Ուսանողական Մարմնոց սրտերուն մէջ առհասարակ:

Քիրտ եւ աշխատութիւն կը վարձատրուին երբ կը պտղաբերին. մայց կը վարձատրուին նաեւ, ու մանաւանդ իրենց արտադրիչ ուժին մէջ կը բազմապատկուին առաւել, երբ բարձրէն կը գնահատուին, երբ ազգաց ու ժողովրդոց մեծափառ գլուխներէ կ'ընդունին առհասառաջայ համակրանաց, սիրոյ, հաւանութեան եւ խրախուսանաց:

Եւ այժմ ահա՛ մի այսպիսի պատիւ, մի այսպիսի չքնաղ եւ թանկագին, վարձահարուստ ու խրախուսալից պատիւ է զոր վայե-

լել կը վիճակի այսօր Պէրպէրեան վարժարանի՝ այն շնորհաբեր բարեբաասիկ այցելութեամբն զոր Չերզ վեհաշնորհ Սրբազնութիւն կ'ընէ անշուք յարկացն անոր, ու այն երջանկաբեր նուիրական օրհնութիւններովն զոր կը բերէք մեզ այսօր: Չեր մեծաշուք ներկայութիւնը դպրոցական այս համեստ ակումբին մէջ, Չեր հայրական վեհ ձայնին օծարից շեշտերը հնչուած մեր որմոց մէջ, Ներսիսեանց եւ Գրիգորիսեանց շնորհափայլ Յաջորդին կերպարանը պատկերացուած այս խոնարհ շրջանակին մէջ, Չեր աջն՝ օրհնալից՝ տարածուած մեր գլուխներուն վրայ, ո՛հ, շնորհներ են, Հոգեւոր Յէր, որ չեն կրնար մոռցուիլ, որ չեն կրնար ըստ արժանւոյն գնահատուիլ, եւ որոց բարոյական պնդիչ, կազմուրիչ, շինիչ ու մեծացուցիչ ոյժն ու զօրութիւնը մեծ են յոյժ: Եկեղեցւոյ բարձր ու դարաւոր Աթոռի մը աստուածաբեալ Գահակալէն եկած պսակիսի շուք ու քաջալեր ինչպէս կը խրախուսեն Ուսանողը իր ճգանց մէջ՝ երբ կը տեսնէ իր վաստակը տուարկայ բարձրագոյն համակրալից դիտողութեան, եւ Ուսուցչին ու Գաստիարակին որքան կ'աւելնայ հաւատքը իր գործին վրայ, երբ ազգի պատուական ու գերագոյն Հայր մը, այնքան չքնաղ շնորհօք ու երկնապարգեւ ձրիւք զարդարուած Հայ ապետ մը այսքանի գուրգուրակը կը շրջապատէ զայն ու առ ինքն կու գայ, իբրեւ ազգային գոյութեան ու շինման գործաւորի մը, գոչելու իրեն. «Ա՛զնիւ, սուրբ եւ օրհնեալ է աշխատութիւնդ, անմահ են քրտուկդ իրենց կենսագործ արդեանց մէջ:»

Ահա ինչպիսի է նշանակութիւնը Չեր այս օրհնաբեր շնորհասփիւռ այցիլն եւ որքան մեծ եւ խորին է երախտագիտութիւնը որով կը տոգորէ մեր Ուսուցչութեան եւ Ուսանողութեան սրտերը:

Մենք ալ մեր շնորհապարտ հոգիները կը պարզենք Չեր առջեւ, Հայր պատուական, եւ մեր մաղթանքն ու իղձերը — մեծերուն մաղթանաց ու ըղձից խառնուած մատաղ անմեղ հոգիներունը — կը բարձրացնենք առ Աստուած: Ապրիք դուք, ապրիք յամս յամայր, ո՛վ վեհաշնորհ Հայրապետ, արժանընտիր Կաթուղիկոս Տանն Կիլիկիոյ: Հայ. Եկեղեցւոյ գունդագունդ զաւակաց սիրտք բուռն սիրով կը բերուին առ Չեղ, որ բարձրագոյն աստիճանին հետ՝ ուր բարձրացուց զՉեղ Եկեղեցին՝ միալուծ կը բերէք յանձին եւ համապատասխան բարձր մշակուած

յատկութիւններ եւ կարողութիւններ, կը փարին Չեր Աթոռին, կը բաղձան երկար ամօք տեսնել զՉեզ բազմած Չեր պատմական դարապանծ Աթոռին վրայ, գոհ եւ բերկրեալ այն գեղեցիկ արգասեաց վրայ զորս պիտի բուսցնեն Չեր անձնուէր քրտուկը, Չեր բարեգործ ձեռներ, յիրացումն Չեր հայրագութ սրտին փափաքանաց, եւ որովք նոր փառք ու շուք պիտի ընծայէք անոր, ընդ բարձր հովանեաւ Օսմանեան փառապանծ Գահուն եւ արգիւնարար ուժերովը զորս պիտի քաղէք կայսերական հաճութեան մէջ, որու յայտարար շնորհաց Չեր արժանացումը ուրախացուց բովանդակ Ազգին սիրար:

Իցիւ Երկիրք իր հզօր թեւոց տակ պահէ եւ պահպանէ զՉեզ, դնէ զիմաստութիւն իւր դարանակալ առընթեր Չեր Աթոռոյն, դիւրացնէ Չեր քայլեր եւ բեղմնաւորէ Չեր ջանքերն ի մշակութիւն դաշտի Ս. Եկեղեցւոյն եւ ի մտաւոր եւ հոգեւոր շինութիւն Չեր Հօտին: Կեցցէ Վեհաշնորհ Տ. Տ. Սահակ Բ. Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ:

(Արեւելեան Մամուլ, 1904, Թիւ 49:)

25. ԳՊՐՈՑԻՆ ՅԱՐԱԿԱՆՆԵՐԸ¹

1. ԵՐԳ ԳՊՐՈՑԻ

Ո՛վ յարկ վըսեմ, աուն սրբանուէր,
Ընկալ սրտից մեր օրհներգներ:

Անո՛յշ որորան մատաղ մեր տիոց,
Ուր զուարթ սահի այգ կենաց ոսկեզօծ,

¹ Այսպէս կոչել մեր մէջ ի վաղուց պաշտօն գառած ենք մեր «գլորոցական երգերը, ըստ որում մեծաւ մասամբ գլորոցական տարւոյ զանազան հանգիստական աւիթներուն պաշտօնաւած՝ իրենց յասուկ ժամանակներուն կ'երգուին ու երգուած են երկար ատենէ ի վեր, կրթութեան խանգը արծարծելով գլորոցական մատաղ սերունդներու որտին մէջ: Ոմանց եզանակներն եւրոպական են, «յլոցն յօրինած են Վարժարանին երաժշտութեան Ուսուցիչը, նա մանաւանդ Աւետիս Էֆէնտի խորառանձնան

Ուր մեզ որորեն հողմուկք երկնաշունչ
Եւ հրեշտակք ի մեզ ցանեն վարդից փունջ,

Ուր փրկարար ջամբէ մեզ կաթ
Իմաստութիւն, մայր խանդակաթ:

Պարտէզ մանաւոր, զոր խնկեն ի բոյր
Բարւոյն, ճշմարտին ծաղկունք գեղաթոյր,
Որոց զհիւթ ծըծեն հոգիք մեր անյագ,
Կազմել իմաստից մեղըր անպակ:

Ո՛վ յարկ վըսեմ, տուն սրբանուէր,
Ընկալ սրտից մեր օրհներգներ:

Աշխարհն է մի ծով ուր գոռայ մրրիկ,
Դպրոցն անխրոով ծոց մ'է հանդարտիկ,
Ուր չիշխեն փրչել մահահոտ քամիք,
Եւ պարզի վերեւն անամպ մի երկինք:

Բայց շուտ կը հասնին փոթորկոտ օրեր,
Կեանքն է մի պայքար, շատ ունինք պարտքեր.
Դպրոց մեզ վառէ լուսով եւ սիրով,
Խութին ու վըհին յաղթենք անոնցմով:

Տաճար հրաշագործ, վըսեմ ձուլարան,
Ուր կապարն յոսկի, նիւթն յոգի դառնան,
Եւ դու կերտես, դձու, զապագայն:

Մանկանց սիրելի,
Ազգաց պաշտելի,
Քեզ փառք, ո՛վ դպրոց,
Լուսո՞յ վառարան:

(Բուրաստան Մանկանց)

2. ԵՐԳ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

ՊԻՅ ԵՂԵՐԴԵՅ

Աշխատութիւն, մեր զօրութիւն,
 քեւ կը լինինք մէք աննըկուն.
 Պատիւ քեզի, քեղ օրհնութիւն,
 Ո՛վ ստեղծիչ Աշխատութիւն:

Ո՞՞ ԵՂԵՐԴԵՅ

Երկիր խոպան էր, անմըշակ,
 Փուշ ու տատասկ ծածկէր համակ.
 Զայն վաստակ
 Ի շէն, ի դրախա փոխեց արագ:

ԱՅԷ ԵՂԵՐԴԵՅ

Մեր միտքն անհերկ դաշտ մ'է նոյնպէս,
 Մացառամուլ. ժիր թէ վարես,
 Լուսագէս
 Հունձք գիտութեան կանգնին դէզ դէզ:

ՊԻՅ ԵՂԵՐԴԵՅ

Աշխատութիւն, մեր զօրութիւն... Եւայն՛ն:

* * *

Ո՞՞ ԵՂԵՐԴԵՅ

Անգէն էր մարդ եւ կը դողար
 Դէմ գազանաց, տարերց տրկար.
 Բայց զաշխարհ
 Նուաճեց իրեն ճիգն անդադար:

Այլ յաշխարհ

Տրկար եմք մեք, եւ մեր ոտքեր
Կը գողգոջնն ի զառիվեր:

Անվեհեր

Թէ քայլեմք միշտ, պըսակն է մեր:

Պար աշխարհ

Աշխատութիւն, մեր զօրութիւն... եւն:

* * *

Ո՞՞ յաշխարհ

Երկինք՝ կայծակ,
Երկիր՝ խարակ,
Ծովը՝ կոհակ
Ունէր, սակայն
Այդ ամենայն
Փշրեց վաստակ:

Այլ յաշխարհ

Ի՞նչ փոթ, դժուար
Է թէ համար,
Կամ դանն՝ երկար.
Ամեն կնճիռ
Կը լուծուի, ժիր
Թէ գործեմք յար:

Պար աշխարհ

Աշխատութիւն, մեր զօրութիւն... եւն:

* * *

Ո՞՞ յաշխարհ

Աշխատողին
 Քաղցր է բաժին.
 Խինդ սրտագին,
 Անդորր, հանգիստ,
 Օրեր անվիշտ
 Քրտանցն են գին:

Այլ յաշխարհ

Դիմենք արագ
 Ի նըպատակ.
 Ուղղոյն ի ծագ
 Յողժականին
 Մընան դափնին
 Ու մրցանակ:

Պար աշխարհ

Աշխատութիւն, մեր զօրութիւն,
 Քեւ կը լինինք մեր աննըկուն.
 Պատիւ քեզի, քեզ օրհնութիւն,
 Ո՛վ ստեղծիչ Աշխատութիւն:

(Բուրաստան Մանկանց)

3. ՄԻՇՏ ՅԱՌԱՂ, ՄԻՇՏ ԱԵՐ

(Քայլերդ Ուսանողաց)

Միշտ յառաջ, եղբարք, միշտ վեր,
 Այս լինի ուխտ սրտից մեր.
 Ո՛չ երբեք ասեմք «բաւ է».

Կասիրն է երթալ ետ ետ,
 Որ չ'եներ՝ անկման է մէտ.
 Լաւագոյն լաւէն լաւ է:

Ուսեր եմք, ալ ուսանիմք.
 Լուսոյ դեռ շաա պէտք ունիմք,
 Տըգիտին անկ է պարծել.
 Ընդարձակ է ասպարէզ,
 Շապք յառաջ են քան ըզմեզ.
 Քայլել հարկ է, միշտ քայլել:

Անդ հեռուն փայլի Բարին,
 Վեհ պատկեր մ'ենթերային,
 Գերակայ վըսեմ՝ աիպար.
 Յայն դիմել պարտ է անդուլ,
 Յայն ի կէտ միշտ քայլ առնուլ.
 Թող վերելքն ըլլայ դժուար:

Այլք պարծին ի քար կոթող
 Եւ ոսկուղ լինին յաղթող.
 Բարձրը անչ կրեմք ի սրտի.
 Վեհ արդեանց հանեմք կարկառ.
 Տակաւ վեր յերկին պայծառ,
 Եւ Անմահն ընդ այն ժպտի:

Յարեգակ թեւէ արտոյտ,
 Լուսափայլ յերկին կապոյտ.
 Ազնիւ իղձ մ'ունի համն այն.
 Տեսլականն է մեր հոգւոյն
 Այդ արեւը շողջողուն.
 Սաւառնի՛րնքն ալ դէպ յայն:

Քան զերէկ մեծ եւս այսօր,
 Քան զայսօր վաղին հրզօր.
 Նորին հինը չի բաւեր.
 Յառաջդէմ՝ քան ըզնախնին
 Հարկ է զի որդիք լինին.
 Միշտ յառաջ, եղբարք, միշտ վեր....:

4. Ե Ր Գ Մ Ր Ց Ա Ն Ա Կ Ա Ց

Պար աշխիբբոց

Ողջոյն, ս՛վ օր
 Հանդիսաւոր,
 Դու որ ըզմեր
 Լընուս իղձեր.
 Արեւուդ լոյս
 Քանի՛ անոյշ
 Է մեր հոգւոյն.
 Քեզ շահ ողջոյն:

Ո՞ն յաշխիբբոց

Ձի մեծաշուք այս տեսարան,
 Է մեր փառաց հանդիսարան.
 Մեր հարքն ու մարք ահա՛ բազմեր.
 Յաղթանակաց մեր վրկայներ.
 Հայ Ազգութեան Աւագանի
 Պատրաստ ի ձօն ունի դափնի:
 Ո՛հ, զի՛ քաղցր է յայս վեհ կաճառ
 Պըսակ ի գլուխ առնուլ պայծառ:

Պար աշխիբբոց

Այո՛, այո՛,

Ձի փառաւոր

Արժանաւոր

Գող պըսակի,

Մըցանակի՝

Յայս վեհախումբ

Ի պերճ աղումբ.

Այո՛, այո՛:

Ո՛հն՛ յաշխերոց

Աշխատասէր Ուսանողին սիրտն արդ բերկրի.

Ծոյլին ճակատ ամօթահար կը կարմըրի:

Ո՛հն՛ յաշխերոց

Վաստակն էր դժուար,

Մեր ճակտէն ի վար

Քիրտն հոսէր շիթ շիթ.

Բայց ո՞վ չի մոռնար

Ճըգունքն անդադար

Յայս օր բերկրաւիթ:

Պօր աշխերոց

Ո՛հ, երանի՛ քաջ մարտիկին

Լուսոյ կըռուին.

Ճգնեցաւ անասան,

Արդ պանծայ յաղթական:

Ո՛հն՛ յաշխերոց

Զխարդ ցնծան սիրտը մեր ծնողաց,

Ու ամենուն դէմքն է ժպտուն,

Հոգեր ցրուած

Իրենց ճակտուն:

Այլ յաշխերոց

Յուսոյ նըշյլք խառնըւին
Ուրախութեան արցունքին:

Ո՞՞ յաշխերոց

Ի հորիզոն մեր ապառնւոյն
Հային զըւարթուն:

Պար աշխերոց

Մեր ծաղկըներ
Պիտ' տամք նըւէր
Իւրեանց գլխուն,
Ջերդ ճաճանչներ
Փայլող ի ձիւն
Լերանց ճակատուն:

Ո՞՞ յաշխերոց

Մրցանակաց այս պերճ հանդէս
Թող նոր խրախոյս վառէ ի մեզ.
Անվըհատ
Ելնեմք բլրոյն ի գագաթ:

Ո՞՞ յաշխերոց

Անդ ի սար,
Վառ ի վառ,
Պըսակ պերճափառ
Շողայ յերկնից վար.

Ոսկեամուտ

Անուն կայ վըրան
Յառաջդիմութեան:

Պար աշխիբրոց
 Խլն՝մք զայդ պըսակ,
 Փառաց հրաւիրակ,
 Մըխիլ ի ծոց
 Ապագայի
 Ուր դեռ հոծ
 Մեղ պահի
 Պատուի
 Անանց
 Գանձ:

Ծ. Ե Ր Գ Հ Ր Ա Ժ Ե Շ Տ Ի

Ուսումնասիրոց

Յետ վաստակոց մշակին հնչէ ժամը հունձքի,
 Ահա՛ եւ մեր անդուլ ճըգանց վախճանն հասնի:

Ո՛վ գեղեցիկ
 Օր երջանիկ,

Յորում ի ծայր ասպարիզին
 Մեզ կ'ընծայի շքեղ դափնին:

Ո՞՞ յուսումնասիրոց

Աշխատութեան ո՛վ սուրբ օրէնք փրկաւէս,
 Քանչոք է մարդոյ ապրիլ լուծիդ տակ յաւէս:

Պար աշխիբրոց

Կըռանին ի թոպ
 Կայծականց անձրեւ
 Թափէ սեւ երկաթ,

Քարն անտաշ անձեւ
 Պատկեր սրբակոփ
 Դառնայ լուսակաթ:

Այլ յոսոսմանարդից

Զօր ամենայն բրիչ իւր հերկեց մեր մըտաց արտ,
 Անբեր էր նա եւ անղարդ.
 Ծաղկունք հոյլ ի հոյլ
 Ծըլեցան բոյլ ի բոյլ,
 Բուրեն բոյր ի բոյր,
 Փայլին թոյր ի թոյր:

Պար ուղիբերաց

Եւ հեշտանայ սիրտ ծընողաց ու Ազգին
 Ի տես նոցին՝ յոր ըզմայլն եւ Երկին:

Ո՞ն յալ — ոսոսմանարդից

Սակայն ընդէր շեթք արտասուաց
 Յայս ի հանդէս ինդի՝ փառաց
 Ընդ այտ ձեր լըռին
 Կը հոսին մեղմին:

Ո՞ն յոսոսմանարդից

Դառն է մեր սրտից թողուլ զօթեվան
 Ուր բարեբաստիկ մեր ալք սահեցան,

Ուր հարց մեր հոգւոյ
 Ըստուեր գորովոյ

Սփռէր վերայ մեր գլխոց,
 Մեղ ապաստան՝ իւրեանց ծոց:

Ուսման արդի

Եւ անլաց

Աչք անթաց

Ի ձեր գրկաց

Մարթ է, եղբարք, գընալ ի բաց:

Ո՞ն է դատելուս

Ըզձեզ պարտուց կը կոչէ ձայն,

Յօժարափոյթ դիմեցէք յայն.

Մըտացդ ըզլոյս, սրտիցդ ըզսէր

Տո՛ւք Համայնքին ձեր ի նըւէր.

Չեզմով երկրի վըրայ

Բարին յաւեընայ:

Ուսման արդի

Երթանք ի պարտ,

Կենաց ի մարտ.

Մեր հուսկ ողջոյնն ա՛ռ, քաղցրիկ Տուն,

Սիրոյ, լուսոյ կենսաւէտ բոյն:

Բարեան մընայք, հոգւոց մեր Հարք,

Չեր յուշն անմեռ ի մեզ: Եղբարք,

Եւ դուք բարեան

Մընայք, բարեան:

Ոչ Ուսման արդի

Բարեան երթայք.

Եղիք մեծ Հայք,

Ազգին պըսակ,

Մեզ օրինակ:

Անբիծ օրեր, ճշմարիտ փառք

Չեզ կը մաղթենք, ո՛վ մեր եղբարք:

Պարապետ

Ընդհուպ կրկին

Պարապետ գրոշին

Ցակ եւ պատուոյ ի ճանապարհ

Կը գաննէք զիրար:

6. Ե Ր Գ Ա Ր Չ Ա Կ Ո Ւ Ր Դ Ի

Արդ հանգստեան սկիզբն առնուն հեշտ օրեր,
Թռչնոց նրման պարկէմք անկապ մեր թեւեր.
Լերինք եւ դաշտք մեզ հըրուէր կը կարդան,
Դասարանին որմուկք բարեաւ թող մընան:

Աշխատեցանք, արդար է որ

Քիչ մը զբօսնունք, վայելենք օր.

Ո՛չ միշտ աղեղ մընայ լարուած,

Ո՛չ միշտ յարօր եզինք լծուած.

Եւ երբ մեզ պէս իւր գլխոյն մարդ

Դասինիներու ածեց վեհ զարդ,

Արժան է որ նոցա վըրայ

Պահ մը հանգչի, սիրան իւր խնդայ:

Արձակուրդի ո՛վ քաղցր ամիս ցանկալի,

Իւր հաճոյքով մեզի համար ծոցդ է լի.

Արեւդ է ջերմ, լուսինդ՝ պայծառ, ըզքեւ պար

Պըտոյտ, երգ, խաղ, ոստիւն, արշաւ կազմեն յար:

Լեռներն ի վեր մերթ մագլցել,

Մերթ դիւր դաշտի մէջ վազվազել,

Երբե՞նք օրիւլ յալեաց ի ծուփ

Կամ ընկողմիւ առուակին հուպ,

Երգել թռչնոյն հետ յանտառին,

Քաղել ծաղիկ, պըտուղ ծառին,
 Ի շող, ի բոյր միշտ արբենալ.
 Ո՛հ, Ի՛նչ հաճոյք ամէն օր ալ:

Եւ Ի՛նչ հրահանգ խառնեալ ի զբօս շայեկան
 Պիտ՝ ընծայէ մեզ բընութիւն հրաշագան.
 Տեր՛ւին, ծաղկին, թեւոց վերայ միջատին
 Պիտի կարդամք խորին խորհուրդքն Արարչին:
 Անհոն մատեան, որոյ էջեր
 Են ծով, երկինք, սար ու ձորեր,
 Եւ որ ունի աստեղեայ տառ
 Ու ծաղկագիծ հոսեւան բառ:
 Վըսեմական այն թերթերուն
 Մէջ՝ ի ձեռին քերթող, գիտուն,
 Ձի գեղեցիկ է թարթափիլ,
 Դիտել, խոկալ եւ ըզմայլիլ:

Գեղազըւարձ Արձակուրդի ժամք հեշտին
 Սահին այսպէս, միաք եւ մարմին կազդուրին,
 Մինչեւ կրկին դառնան աւուրք վաստակոց,
 Դիմենք զըւարթ լուսոյ տաճարն՝ ի դպրոց,
 Ի ձեռն առնուլ դաս ու համար,
 Մըտաց երկունս երկնել դժուար,
 Ի գիր կըքել քրտնոտ ճակատ,
 Քիչ զբօնուլ, աշխատիլ շատ,
 Ձի քայլ մի եւս առնուք յառաջ,
 Խաւարին դէմ՝ եւս ըլլալ քաջ,
 Փութով հասնիլ յըղձալին կէտ
 Ում մեր ծընողք կան ակընդէտ:

(Պատկեր Աշխ. Գրականութեան)

7. Ե Ր Գ Ա Ռ Ա Ի Օ Տ Ո Ւ

Այգն Ինչ կ'ըսէ քեզ, այգը նորածագ,
 Երբ ծիրանեփայլ ծայր կու առ յերկին.
 Ինչ կ'ըսէ քեզի աշխոյժ ծիծեռնակ,
 Ու մեղմիկ մրմունջ առուտու հովին:

Ո՛վ դու պատանեակ, այգը նորալոյս
 Քեզ գոչէ «Արի՛, ժամը կ'անցնի վաղ.
 Մի՛ դու վըստահիր ժպտին իմ անոյշ,
 Անոյշ ու սիրուն, բայց սուղ է, աւանգ՛»

Շուտափոյթ թեւով այսպէս կը սահի
 Նաեւ մանկութեան ժպտուն եղանակ,
 Փայլակ մ'որ ահա մութին մէջ փայլի,
 Բայց հազիւ փայլած՝ կը մարի արագ:

Թռչելով թեթեւ, ծիծեռնակ կ'ըսէ.
 «Արի՛ ի վաստակ, առւտ քեզ կոչէ.
 Շուտ ամառն իրեն վախճանին գիմէ.
 Արի՛, ընդ երկար մընալ օրէն չէ՛»

(Իտալականին նմանողութեամբ)

8. Ե Ր Գ Մ Ա Ր Դ Կ Ա Յ Ի Ն Կ Ո Չ Մ Ա Ն

Մարգն է վե՛հ արարած,
 Վե՛հ կեանքի սահմանուած,
 Արարչին սուրբ պատկեր
 Յիւրեան դրոշմըներ:

Մարդ ենք մէք ըստեղծուեր,
 Վըսեմ ձրիւք օժտուեր,
 Անսանոց գեր ի վեր
 Բանիւ բարձրացեր:

Բանն է լոյս մեր մտքին,
 Սէրն է կեանք մեր սրտին,
 Մեր վախճանն է բարին,
 Յայն ձգտի հոգին:

Բանն ի մեզ յայր փայլի,
 Սէրն ի մեզ յայր վառի.
 Արժանի մեր կոչման
 Ըլլալ ընծիք ջան:

9. Ե Ր Գ Կ Ե Ն Ա Ց

Կեանքն է պայքար, յաղթե՛ն է դժուար.
 Խոչք եւ խուժք են անթիւ անհամար.
 Վատին ու ծոյլին կեանքն է շատ տըխուր,
 Յաջողութիւնը՝ քաջին տըրտուր:
 Դասինին՝ գործողին մրցանակն արժան,
 Անգործին նրսեհ կը լինի դաժան.
 Մինչ մեք դանդաղինք, այլք ըզմեզ գըլեն,
 Ու մեզ հեռուէն ծաղըր կ'արձակեն:

Լուրջ է կեանքը, պարտքեր շատ ունի,
 Բարւոյն սիրող կամք պէտք է արի.
 Մեղկ ու հեշտ ուղին կորստեան տանի,
 Ո՛վ որ կը ճգնի՝ ան վայելքն ունի:
 Ո՛վ կը կատարէ իր պարտքն անգաղար՝
 Անորն է հանգիստ խղճի մը արդար.
 Գործել պարտի մարդ բարին ու իրաւ,
 Որ բաժին առնու գոհութիւնն անբաւ:

Աշխատելու կեանքն է ասպարէզ,
 Խող թոյլ գրգանք չըփորձեն ըզմեզ.

Լոյս ճշմարտութիւն բարիքն է մտքին,
 Մէր բարեգորով ոյժն է սրտեկին.
 Գիտութեանց ծրծենք հիւթը կենսատու,
 Մեր սիրան յար տենչայ ազնիւ բաներու.
 Վե՛հ գաղափարին վըսեմ սիրահար,
 Մեր հոգին ջանայ արփաթեւել յար:

Արագ թեւով կ'անցնին մեր օրերը,
 Գարուն հասակ սահի զերդ ստուերը.
 Հասուն տիք շուտով յայլս խոնարհին,
 Վերջալոյսն օր մը կը հասնի կեանքին:
 Ի՞նչ մընայ մարդուն անցմանը նըշան,
 Խէ ոչ յիշատակ արդեանց բարութեան.
 Վաղանցիկ կենաց մեր անանց վըկայ,
 Գեղեցիկ մեր գործն արձան թող կենայ:

(Ժաղիկ Հանդէս, 1904)

10. Ե Ր Գ Ե Ր Գ Ո Յ Ն

(Վաւերք)

Երգենք, եղբարք, երգն անոյշ է,
 Չանձրոյթ լըքում նա կը բուժէ.
 Կը թեթեւնայ վաստակ,
 Երբ շրթանց վրայ կը թեւածէ
 Ե՛րգը սիրուն, երգն անուշակ:

Երկինքէն իջեր երգերու հրեշտակ,
 Երկնային հեշտից տալ անգին ճաշակ.
 Թմրած հոգւոյն շնորհէ թեւեր հըրեղէն,
 Ու դիւթական հրմայք բղխին քընարէն
 Որ լուսեղէն երազոց մէջ մեզ կ'օրրեն:

Թող չարերուն հոգին

Մընայ աներգ լըռին.

Թող երգէ եռանդուն

Սիրաբ պատանւոյն, անմեղ, երազուն.

Գարուն ցնծուն երգ մ'է համակ,

Մեր ալ թող հնչէ երգոյն աղաղակ.

Մենք ալ գարնան թռչուններ ենք,

Գեղգեղաձայն եւ մենք երգենք:

Ինչ որ գործէ, հրճուի, որբայ՝

Իր երգն ունի ան աներկբայ,

Երգ մը որ լայ կամ թէ խնդայ:

Մեղուն կ'երգէ երբ ծաղկանց հիւթ քաղէ.

Մըշակն ալ արտին մէջ իր երգը մըմնջէ.

Խոխոջանքը չէ՞ տրտում երգն առուակին,

Երբ շրջի ծաղկանց տալ համբոյր յետին,

Ու ծառոց գիրկ զեփիւռք երգով մը կ'որորին:

Երգով վըսեմ քերթողներուն

Հոգին ի մեզ խայտայ թրթռուն.

Երգին թեւոց վըրայ մեր սիրտ կը բարձրանայ

Դէպ յիտէալն ի գերակայ.

Գեղեցկին յոյզ հոգւոյն ցունց տայ:

Մոռնանք երգով իրականը ստոր, սըխուր.

Բարձր ոլորտի մէջ կը շնչենք վեհ ու մաքուր:

Ի վեր, ի վեր, նուագին թեւոց վերայ ի վեր,

Լոյս եթերաց մէջ պարզելու վեհ թըռիչներ:

Երաժշտութիւն,

Վառէ՛ մեր սիրտ, ոգեւորէ՛ մեզ դաշնակացդ ի բաբախիւն.

Մեր խինդն ու արտմութիւն

Վեհանանք քեզմով, առնո՛ւն սրբութիւն . . . :

(Ժաղիկ Հանդէս, 1904)

11. Ե Ր Գ Ո Ղ Ջ Ո Ւ Ն Ի

(Աւ Վեհաշորհ Թ. Յ. Սահակ կաթողիկոս Գանն Աեկեկոյ)

Ողջնք քեզ, Հոգեւոր Յէր,
Որ առ մեզ յայց ես ելեր.
Գալուստդ է մեզ շնորհաբեր.
Յայս համեստ յարկ խոնարհիս
Յաթողոյդ ուր դու բազմիս.
Յամս յամայր կեցցեն յաստիս:

Որդեգութ չայր դու Ազգին,
Թանկագին գոհար պսակին,
Աթողոյդ փանօքը անգին:
Կեցցեն միշտ որ Աջոյդ աակ
Ժողովուրդք, սիրով անքակ,
Ապրին յար գոհ, ամրափակ:

Ոգի մ'ես թեւատարած
Հայցելու Երկնից շնորհաց
Չօնն հոգւոյդ քու ղաւակաց.
Աչքերուդ ցօղ, քիրա ճակտուդ
Կը հոսին ի նոցա գութ,
Յար ի սէր Եկեղեցւոյդ:

Մեծի Հօրդ եւ մեք որդիք,
Կը խնդրեմք քո վեհ օրհնիք
Յայս արխեղծ մեր մատաղ տիք:

Օրհնէ՛, Տէր, որ զօրանան
Մեր քայլեր դէպ յապագայն.
Կեանց յաւերժ դու անսասան:

(Արեւ. Մամուլ, 1904)

12. 20 Ն Ե Ր Գ

Ա. Ա. Ա. Ս. Պատրիարք Հայրն
Բարձրաշնորհ Տ. Տ. Մաղաբեա Ս. Արքեպ. Օրմնեան

Դժու ես, Տէր, Ազգին ընտրեանլը,
Որ նըմա կ'առաջնորդես.
Քեզ պահէ՛ երկնից Բարձրեանլը
Որ ի լոյս զայն միշտ վարես.
Հայր, բիւր կեցցես:

Ո՛վ դու, Տէր, լեռներուն ծայրը
Շողածագ արեւն ես մեզ.
Մեր հոգւոց ջերմագութ հայրը,
Քո սիրով մեզ կը տածես:
Հայր, բիւր կեցցես:

Ո՛հ, վեհիդ շնորհաբեր այցը
Կենսատու խրախոյս է մեզ.
Խըրատուդ հոգեսուն հացը
Վիառատ մեզ կը ջամբես:
Հայր, բիւր կեցցես:

Ջերդ Յիսուս, մեծ վարդապետը,
Մանկրտին դու կը սիրես.
Ու, խոնարհ, խօսիս մեր հետը,
Գգուալից աջ մեզ պարզես:
Հայր, բիւր կեցցես:

Երբ զըւարթ է վե՛՛հ քո ղէմքը,
 Գոհունակ տեսնեմք ըզքեզ,
 Ա՛յդ է մեր անուշակ վարձքը,
 Ազգն իսկ է որ ժպտի մեզ:
 Հայր, բիւր կեցցես:

Սընծայեմք քեզ մեր հոգիքը,
 Փոխարէն սիրոյդ առ մեզ.
 Շնորհէ՛ մեզ քո սուրբ օրհնիքը.
 Մեր սրտից իղձք միշտ առ քեզ:
 Հայր, բիւր կեցցես:

13. Ե Ր Գ Լ Ո Ւ Ս Ո Յ

Արեւ մըտաց, ո՛վ լոյսըդ դու կենսաառու,
 Քեզ խունկ կընծայեն հոգիք մեր յաւէտ.
 Անհուն բարեաց առաա աղբիւրն ես, ո՛հ, դու,
 Մարդկութեան ուղւոյն դու ջան՛ փրկաւէտ:
 Առանց քեզի կոյր խարխափէ մարդն յերկրի,
 Ու տիեզերքը քառս մ'է մըլթին.
 Քողածածուկ թաքչին իրաւն ու բարի,
 Համայնից օրէնք քեզմով կը պարզին:

(Յանկերդ ո՛ր ին իրինս-ի մէն մի սոսնէ յետոյ):

Քեզ փանօք, քեզ փանօք, հոգւոց դու զամպար,
 Առանց որոյ արփին է խաւար.
 Քեզ փանօք, քեզ փանօք, լոյս աստուածային,
 Քեզմով հոգիք յանհունն հային:
 Շողիցդ անձկաւ կ'ըղձայ մեր հոգին,
 Ճառագայթիդ եմք մեք կաթոգին.
 Թափէ՛ ի մեզ, լոյսդ իմանալի,
 Թափէ՛ հոսանքըդ կենսալի:

Մեզ ճշմարտին նոր նոր մարզեր մերկանաս,
 Հրաշալեաց ի տես հոգիք մեր կ'ապշին.
 Բարւոյն, Գեղոյն տեսիլքը վեհ ցոյց մեզ տաս.
 Ցենչ, հաճոյք անարգ ոտից տակ փշրին:
 Կը մեծնամք մէք քանի շատնայ շողդ ի մեզ,
 Աստուծոյ Բանին ցոլքն է յարաճուն.
 Վըսեմ հեշաանք մըխըրճիլն է յար ի քեզ,
 Լուսապսակ ճակատ փառքն է գերագոյն:

Դառն է լինել կալանաւորը Մութին,
 Մտքին քան մարմնոյն ահեզ են կապանք.
 Դարք ու աշխարհք այն հոգիին կը բացուին
 Ոյր ինկան ձեռքէդ աչքին կեղեւանք:
 Հանճար, վաստակ քեզմով արդեամբք են բեղուն,
 Ծաղկալից պանծան ուտանն ու դաշար.
 Ազանց ողբ են պայծառութեամբդ ողողուն
 Երկինք ու երկիր կը պճնեն բախար:

26. ՀՈՐԻԻՐ ԲՈՐՈՅՈՎԱԸՆ ԵՐԿՑՑՂՍԵՈՎՔ

(Բարոյական իրատարանութեանց իբրև բնարան ծառայելու համար գրուած)

1. Յարատեւող ճիգին առջեւ չկայ բան մ'որ դիմանայ.
 Դըժարը՝ դիւր, անկարելին հընարաւոր կը դառնայ:

2. Իր սեփական իրաւունքէն մի զրկեր զոք, լե՛ր արդար.
 Խաղաղութիւնն այսպէս մարդոց մէջ մընայ յար անվըթար

3. Նոյն խըմորէն ստեղծուեցան ամէն մարդիկ նոյն տիպար.
 Եղբայրներ ենք մէք բախտակից, սիրենք ամէնքըս զերար:

4. Մի նախանձիր դու ընկերիդ . հոգերըդ քեզ չե՞ն բաւեր .
Ինչու կ'ուզես որ անոր բախտն ալ տայ քեզի նոր ցաւեր :
-
5. Ի՞նչ փոյթ ձեզ թէ ապերախտ են մերթ երախտիք առնողներ .
Բարին բարւոյն համար միայն պարտ է գործել , եղբայրներ :
-
6. Եղի՛ր ասող դու չարութեան , արգահասող բայց չարին .
Նա մոլորեալ մ'ու հիւանդ մ'է , բուժէ՛ թերեւս զայն բարին :
-
7. Դրամով միայն չէ՛ որ մարդիկ բարիք կ'ընեն իրարու .
Արտին սէրը յայտնըւելու բիւր բիւր ձեւեր փոխ կ'առնու :
-
8. Ի՞նչ քան անգութ ոխերիմներ . մարդ ունենալ կարենայ ,
Թող գիտնայ որ մեծագոյնը լինել միայն ինք կրնայ :
-
9. Հընազանդէ՛ դու Օրինաց , Իշխանութեանց լեր յարգող .
Անոնց շնորհիւ ննջես անդորր , ընչքիդ՝ պատուոյդ մերժի գող :
-
10. Անկեղծ եղի՛ր , Ճշմարիտ մարդ , խօսքըդ սրտիդ արձագանգ .
Կեղծող մարդը սին ստուեր մ'է , ո՛չ մարդ , մարդու լոկ
պատրանք :
-
11. Չախողանքըդ միշտ , գանգատող , մի դու բախտին վերագրեր .
Բախտը յաճախ մօտէդ անցեր , աչքերըդ փակ՝ չես տեսեր :
-
12. Քու սեղանիդ , դրամիդ համար բարեկամներ կան հազար ,
Բայց մի՛ խաբուիր , շատեր սիրոյդ մազ մ'իսկ զոհել չեն
յօժար :
-
13. Օտար երկրի մէջ դու տեսի՛ր տոհմակիցըդ միանգամ .
Պիտ' զարմանաս՝ ինչու առաջ չէիր առած այդքան համ :
-

14. Պատուոյդ վերայ դու գուրգուրա՛ զերդ թանկագին մի գոհար .
Թէ կորուննես զայն, կրկին ձեռք անցունելն է շատ դժուար :
-
15. Բարձրին նայէ, միշտ դէպ ի վեր նկրտէ դու ելնելու .
Չը հասնիս ալ, այդ ճիգ ըզքեզ վար սահելէ կ'արգելու :
-
16. Ճշմարտութիւնն ըսէ՛ դու միշտ, կամ լըռութիւն պահէ՛ զգուշ .
Ընկերութեան լուծիչ թոյն է վատ ու նենգոտ սուտը դուժ :
-
17. Շողջորթին խունկը աչքիդ տեսութիւնը կ'աղօտէ .
Գաճաճն իրեն հսկայ թըւի, ծիծաղ շարժէ, պոռոտէ :
-
18. Պարսաւանքը ա՛լ աղէկ է երբ քու թերիդ կը ջնջէ,
Քան գովեսար շողջորթիչ որ օդալից քեզ փրչէ :
-
19. Ոսկիներու դէզին վըրայ ագահն աղքատ կը նստի,
Ոսկիներու հեղեղէն վերջ շըռայլն աղքատ կը փրտի :
-
20. Ծախսէ, խնայէ. այսօրն ու վազ դու գոհացուր երկուքն ալ
Ո՛չ բնաւ ագահ, ո՛չ ալ շըռայլ . անտեսող լաւ է ըլլալ :
-
21. Եթէ իրաւ ժամանակը մարդուն գանձն է մեծագոյն,
Ապա անոր անտեսութիւն՝ իմաստութիւն լաւագոյն :
-
22. Կուգան օրեր, երաշխաւոր յաջորդներուն չեն սակայն .
Եկողք ինչ որ մեզ կրնան տալ՝ ստանալու ջանանք զայն :
-
23. Աշխատութեամբ օր կը կարճի, կեանքը սակայն կ'երկարի .
Ա՛յն ատեն մարդ կ'ազատագրի, երբոր անոր է գերի :
-
24. Ամուսնացիր, բոյն շինէ քեզ, սիրոյ օջախ պատրաստէ .
Կեանքի ձիւնին բուքին տակը քու ապաւէն ջերմոցդ է :
-

25. Աշխարհի մէջ չեք վայր անոյշ քան ծոց երկրին հայրենի.
Յոյսն ու սէրը ժպտին քեզ անդ, քեզ հողն ու մարդ՝ ընտանի:
26. Յուշն ու յոյսը, սէրն ու վէրը մեր բնիկ հողին մեզ կապեր.
Անոր լոյսով լոյս ենք տեսեր, անոր օգովն ենք շնչեր:
27. Խաչը սէր է, խաչը զոհ է, խաչին կրօնքով պարծեցէք.
Խաչին ստոյգ աշակերտներ ըլլալու միշտ ջանացէք:
28. Աշխատողի ճակտին քիրտը պէտք է երկիրը թրջէ.
Առանց տաօր երկրէ երկնէ բարիք յուսալ հընար չէ:
29. Տալն առնելէն աւելի է, տուրքոտ ըլլալ սիրէ, տուր.
Քրտակիդ մէջ պարապ կեցած ոսկին փրկէ կեանք մ'այլուր:
30. Արդար վաստակդ ինչո՞ւ պղծես նենգոտ շահի տալով մուտ.
Պակաս ըլլայ այդ շահամասն, ու մնայ վաստակըդ թող զուտ:
31. Մաքրասէր մարդն հոգածու է մաքրութեանն ալ իր հոգւոյն.
Մարմնով, շրով աղտոտ մարդուն սիրտն ալ աղտից յաճախ
բոյն:
32. Կարծիքներու ընդհարումէն մտքին համար լոյս ժայթքէ.
Բայց վէճն ազնիւ պարտի ըլլալ, զերծ անձնական լուտանքէ:
33. Քսակէդ եթէ ոչ դի դու դոյզըն օգուտ կը հանես,
Ի՞նչ իրաւամբ ուրիշներէ դրամիդ յարգանք պահանջես:
34. Սիրէ լըսել հանգարտաբար այլոց տարբեր կարծիքին,
Եթէ ոչ չես դու արժանի ներողութեանն ուրիշին:
35. Երբ ուրիշին կեանքն ու պատիւն ու ինչքը քեզ չեն յարգի
Ի՞նչպէս քուկինքդ ըլլան այլոց մեծարանքին արժանի:

36. Բանին լուսով մենք, մարդ էակ, անասունէն ենք տարբեր.
Այդ լոյս մեր մէջ որքան շատ է՝ նոյնքան ալ մենք մարդ
ենք վեր:
-
37. Մի կարծեր թէ յոխորտանքով մարդուն յարգը կ'աւելնայ.
Ադամանդին խօսի արժէք, մինչ տուփին մէջ լուռ մընայ:
-
38. Չարին դէմ չար մի գործեր դու, յաղթէ՛ չարին բարիով:
Մութն ըզմութը չի վաներ բնաւ. կը ցնդի մէզն արեւով:
-
39. Ամէն բանի չափ ու սահման դըրաւ բնութիւնըն օրէն.
Աւանց անոր ծով կը խուժէ, ու մարդ գործէ ապօրէն:
-
40. Միշտ պարտք մը կայ կատարելու, ցորչափ օր կայ ապրելու.
Անոր համար անձնասպանը պարտքն անկատար կը թողու:
-
41. Բարի որդին, ընտանեւէր որդեխընամ հայր բարի,
Անտարակոյս է մի պարկեշտ քաղաքացի իւր երկրի:
-
42. Սխալ է թէ կ'անցնի անցեալ. ան չի՛ անցնիր, կը կենայ.
Ան մեր կեանքն է, մեզ շահ ու զէն, պատիւ, ամօթ, ան մընայ:
-
43. Իբր իր ձայնին արձագանգը Աստուած մեր մէջ խիղճ դըրաւ.
Մի խեղդեր պայն, մահկանացու. ան քեզ կ'ըսէ "Գործէ՛ լաւ":
-
44. Տես թէ ինչպէս բնութեան մէջ կարգով կ'երթայ ամէն բան.
Չըմեռը՝ ձիւն, գարնան՝ ծաղիկ, հունձքն՝ ամառին, միրգն՝
աշնան:
-
45. Բնութեան կարգ քեզ դաս մը տայ համբերատար ըլլալու.
Պըտուղ արդիւնք կ'սպասես մերթ՝ ատեն չանցած հասնելու:
-

46. Մի ցաւցուններ քու նըմանըդ ո՛չ մարմնոյն մէջ, ո՛չ հոգւոյն.
Ցաւը ի բաց փարատէ դուն էակներէն ըզգայուն:
-
47. Ցառապելոյն արցունքն աչքին ցամքեցունել դու սիրէ՛,
Ինչպէս արեւ ցայգին շաղով թաց տերեւը չորցունէ:
-
48. Երկրին վըրայ գործիք մ'եզեր դուն աղէկին շատնալուն.
Խօսքըդ, գործըդ եւ օրինակդ սերմը ցաննն միշտ բարւոյն:
-
49. Ցաճար, մկկիթ, սինակոկ քեղ միտնգամայն սուրբ ըլլան.
Նոյն մեծ ճեսիլ ամենուն մէջ իր բոյնն ունի ու խորան:
-
50. Զգոյշ գընացք առաջքն առնուն աղիտարեր վըտանգաց,
Մինչ անխորհուրդ փոքրիկ քայլ մը պատճառ կու տայ մեծ
չարեաց:
-
51. Գայթակղեցնել միամիտ հոգին կառչած իրեն հաւատքին՝
Խլել է նաւէն խարխախն որ իր ապաւէնն է դէմ մըրըկին:
-
52. Թէ վարդ անկես փունջ կը քաղես, իսկ թէ տատասկ՝ խայթ
հնձես,
Թէ հեռ ցանես՝ քէն կը ժողվես, համբոյր՝ թէ սէր սերմանես:
-
53. Համեստ ըլլալ անսընապարծ՝ այն յատուկ է գիտունին.
Յոխորտանօք մեծարանել տըգէտներու է բաժին:
-
54. Ժառանգութիւնը մեծագոյն զոր մարդ թողու իր զաւկին՝
Ուղեղ մարդու, պարկեշտ անձի մաքուր անունն է անգին:
-
55. Դոյզն ինչ բարին ինչո՞ւ համար արհամարհել զի քիչ է.
Քիչը քիչին յաւելնալով շատ կը լինի, այնպէս չէ՛:
-

56. Փոքրիկ մեղքին ալ մի՛ ըլլար ներողամիտ դու բընաւ.
Երես առած փոքրը բերէ իր մեծ եղբայրը տակաւ:
-
57. Ամէն ներուժ ներելի է բաց ի անկէ որով մենք
Մեր թերութեանց դուռ կը բանանք, մեր յանցանաց կը նե-
րենք:
-
58. Մրցմամբ ճրգամբ գերազանցել ջանալն ազնիւ աննչ մըն է.
Ուրիշներուն անկմամբն ուզել բարձր երեւիլ՝ այդ վասն է:
-
59. Ի՞նչ օգուտ մեծ երեւիլ երբ մարդ իրօք փոքր ու նկուն է.
Հին խօսք է թէ երեւելու ապահով կերպն ըլլալն է:
-
60. Մեզի տալով տըղան՝ Երկինք մեծ պարտք դնէ մեր ուսոց.
Մեր ծոցն իրեն մարմնոյ հոգւոյ կեանքին ըլլայ թող ջերմոց:
-
61. Որպէս զի դուք, ծընողք, ըլլաք ձեր զաւակաց լաւ տիպար,
Նըկարագրի ձեր թերիներն ալ ուղղելու գըտէք ճար:
-
62. Պատշտու ծառն ամէն ամառ իր պտուղը կը բերէ.
Երկու գործով մի՛ ըլլար գոհ, օգտակար գործն յա՛ր ըրէ:
-
63. Առն ու կընող ինչո՞ւ համար խըտիր դընել յանցանքին.
Հաւատարիմ միմեանց մնալու մի եւ նոյն ուխտը չըրի՞ն:
-
64. Երկնից խորքը, կեանքի խոհի աղբիւր անհուն Զօրութեան
Թէ չը հաւտաս, ի՞նչպէս խորհուրդն ապա մեկնես Գոյութեան
-
65. Սկզբունքներն ու մարդիկը արդիւնքներէն գատեցէք.
Շառն իր պտղէն կը ճանչցրուի, դուք ամէնքըդ լաւ գիտէք:
-
66. Հարսանեկան ծէսք եւ աղօթք չեն ծառայեր մի բանի,
Պսակուողներուն թէ հոգիքը չի կապեր սէր կենդանի:
-

67. Իր հացն ուտել անկախօրէն, մաքուր քրտամբն իր ճակատին,
Ի՞նչ հաճոյք է, հրպարութեան իրաւունքի ի՞նչ վեճ գին:
-
68. Բուն արժանիքն յաւակնոտի չ'առնուր պոռոտ ձեւ բընաւ,
Արժանազուրկ փըքացօղն է ծիծաղաշարժ հնդկահաւ:
-
69. Բարերարը իր բարիքէն տոկոս պիտի չսպասէ.
Բայց ապերախան ալ պժգալի մի հըրէչէ պակաս է:
-
70. Անկեղծութեան, անձնուիրութեան չըհաւատացող մարդիկը
Կ'ապացուցնեն թէ եսամոլ, կեղծ են իրենց հոգիքը:
-
71. Ընտանեկան յարկին մէջն է հաճոյքը սուրբ ու մաքուր,
Անկէ անդին հոգեպարար երջանկութիւն խնդրել՝ զո՛ւր:
-
72. Զոյգ բարեկամք միմեանց համար մի այլ ես են, չինք ըսին.
Բայց ձշմարիտ մըտերիմներ գտնելն է զե՛ դժուարին:
-
73. Բարեկամ լո՛կ առաքինի հոգիք կարող են ըլլալ,
Իսկ անձնասէր, կեղծ մարդիկ՝ լո՛կ անոր դիմակն ունենալ:
-
74. Առաքինի ըլլալու չի բաւեր ըլլալ լո՛կ արդար,
Արդարութեան պիտ' յաւելնայ գործօն Սէրը բարերար:
-
75. Ճիւանդ մըն է իր ծեր ծընողքն երեսի վըայ ձգող որդի.
Արժան է որ մնայ անորդի, կամ անգղ ուտէ անոր դի:
-
76. Երբ ծընողաց լուծէն ըզքեզ ազատ ըրաւ ա՛լ հասակ,
Մի՛շտ յարգանքի, սիրոյ լուծին առ այնս մընաս հպատակ:
-
77. Երբ այլք պատուոյդ վստահեր են, եւ դուն անոնց կ'ընես դաւ,
Ըսել է որ այդ պատիւը չունիս եղեր վու բընաւ:
-

78. Արգարադատ ըլլալու քեզ թող սխալ արգելք չը լինի.
Խոստովանիլ իր թշնամւոյն արժէքն է գործ մեծ սրտի :
-
79. Քաղաքավար բարը մարդոց դէմ արդարութեան մի պարտք է,
Անոնց մարդու նրկարագրին մատուցուած մի յարգանք է :
-
80. Հաւատքն հեգնող սկեպտիկը որ զինք կարծէ միտք հրժօր՝
Մըտածող մ'է առանց թռիչի, եւ սիրտն ոչինչ ունի խոր :
-
81. Ինչո՞ւ խառնուիլ իրաց մէջ որ քեզմէ հեռու կամ վեր են.
Ունայնախօս շաղակրատանք Ինչ վընասներ կը բերեն :
-
82. Քննել իր շուրջ, կշռել իր ոյժ, եւ դիմացինը ճանչնալ
Խոհեմութիւնն է, որ թէ չկայ՝ ոչինչ բան է մեծ ոյժն ալ :
-
83. Բաղձանքներու չափն անսահման, ամէնք մեզի կը ժպտին.
Բայց ունենանք այնպիսիներ որք յանկ են մեր հասակին :
-
84. Սպանիական դղեակները իրականը տան մոռնալ.
Անոնց ապշած մարդուն ձեռքէն գուցէ երթայ իր հիւզն ալ :
-
85. Հիմն ամուրցո՞ւր խախուտ տունին թէ ելնել նոր յարկ կ'ուզես,
Թէ ոչ նորին հետ հընոյն ալ կործանուելուն պատճառ ես :
-
86. Այն հովիւին հետեւեցէք դուք, առաջնորդք ամենայն,
Որ կորսըւած մէկ ոչխարն ալ փնտուել գընաց, ու գտաւ զայն :
-
87. Տառապանաց համբերատար ըլլալու մեծ օրինակ՝
Մեծ վարդապետն որ Գողգոթա քաղց խաչը յիւր կոնակ :
-

88. Պաղարերէ՛, գու անվըրէպ պարտքըդ ըրէ՛, ու եթէ
 Կ'ոխերմանան քեզ չարակամք ու յաչաղկոտք, դու... Ժպտէ՛:
-
89. Կայ՛ հատուցում. յաճախ յաստիս չարն իր պատիժ կ'ընդունի.
 Խոյս տըւո՞ղն. — այդ անդըրշիրմեան կեանքի մեզ փաստ կը
 լինի:
-
90. Խղճի անդորրն անոյշ գտնել տըւաւ տանջանքն անիրաւ.
 Ներքին խայթը տանջանք մ'ըրաւ վայելքն ու փառքը անբաւ:
-
91. Բարոյական պարտքին վախճան չէ՛ բնաւ ապրիլն ընդ երկար,
 Այլ ապրելու նըպատակն է իր պարտքն ընել անդադար:
-
92. Երկար կեանքը այն չէ՛ որ մեծ կը հաշուէ թիւ ամերու,
 Այլ այն որ ցոյց կուտայ երկար շար մը ազնիւ գործերու:
-
93. «Ակաս մակաս, աս էր պակաս» հայ առածին տեղն է ալ,
 Երբ երէկի աշկերտն ելնէ իր վարպետին խըրտառ տալ:
-
94. Գո՛ւ կատարէ գործըդ անձամբ, ու այսօր իսկ թէ՛ հընար.
 Ուրիշն ու վաղն յաճախ խարդախ պաշտօնեայք են մեզ համար:
-
95. Անխոնջ ջանքէ ետք երբ բարի իղձն ելած է ի գըլուխ,
 Ի՛նչ սուրբ խնդի սրտերու մէջ կը հոսեցնէ մի յորդ ուղիս:
-
96. Դու մարմնական հաճոյքներուն մ'ըլլար մոլի, անձնատուր.
 Բաժկին խորը նոքա թողուն յաճախ թոյն, ժահր ու մըրուր:
-

97. Լոյսը մտքին, սէրը սրտին, ոյժը կամքին, ասոնք են
Մարդ էակի արժանիքին բուն տարերքը ապաքէն:

98. Արենափայլն՝ ճշ եւս ցոլայ այլ մարդկութեան հորիզոն,
Այլ Լոյսն ըլլայ անոր արեւ, ու մթնոլորտ՝ Սէրը հոն:

99. Թռչունն ինչո՞ւ դու կը բանտես, ծաղիկն ինչո՞ւ կը փետես.
Ուր որ կեանք կայ՝ հոն քեզ գըլթոյ պարտք մը պէտք է որ
գանես:

100. Խոհուն էակ, մարդ բընութեան մէջէն անցնիլ կը պարտի
Ինչպէս քուրմը խորհրդալից տաճարին մէջ պըտըտի:

(Արեւելեան Մամուլ, 1905, Թիւ 17)

Գ Պ Ր Ո Ց Ե Ի Գ Պ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Գ Ր Ա Կ Ա Ն Ն Ի Ի Թ Ե Ր

1. ԺՈՂՈՎՐԳԵԱՆ ՈՒ ԳՐԱԳԻՑԻՆ ԱՅԽԱՐՀԱՐԱՐՆԵՐԸ

Ա.

Գրաբարի ու Աշխարհաբարի վեճը պարբերաբար կը նորոգի մեր Մամուլն մէջ: Այս օրերս վերստին սկսան երեւիլ լրագրաց ոմանց մէջ այս խնդրոյ մասին կարգ մը յօդուածներ, բայց ուշագրաւ է սա կէտ թէ ալ անոնք, որք զերեկը աշխարհաբարեան կը կոչեն, առանձին կը վիճարանին, առանց ընդդիմախօս ունենալու: Չի կրնար ըսուիլ թէ Տրքդ. Սեւեանի գրուածքն յարոյց այս խնդիրը, վասն զի Տրքդորը աշխարհաբար ու գրաբար ընդունելու հիմնական խնդիր չյուզեց, այլ քննադատեց կարգ մը բառեր ու գրելու ինչ ինչ կերպեր, որոց կարելի էր պատասխանել առանց խնդիրն ընդհանրացնելու, ցուցնելով՝ զոր օրինակ՝ թէ Տրքդորը ծայրայեղութեամբ դատած է եւ թէ իւր դատապարտած բառերուն ոչ ամէնքն երեկի հնարուածներ են, ոչ ամէնքն խորթ, ոչ ալ ամէնքն անիմաստ: Նոյնը կրնային ընել մանաւանդ ակնարկեալ հեղինակներն Տրքդորին չհաւնած բացատրութեան ձեւերուն համար: Ո՛չ. ընդդիմախօս չունին, բայց կ'ենթադրեն ունենալ ու անոնց կը վերագրեն կարծիքներ զորս ապա հերքելու գոհունակութիւնը կը պարգեւեն իրենց անձին: Չոր օրինակ, Գ. Ֆնտզլեան էֆէնտի կ'ըսէ¹ թէ գրաբարամոլք կը կարծեն որ աշխարհաբար ձեւերուն ամէնքն ալ համեմատաբար նոր ժամանակաց ծնունդ են, եւ ըստ այսմ կ'ենէ ցոյց աալ թէ այս ինչ

¹ Տե՛ս «Մատի», Թիւ 3967, 8, 9:

կամ այն ինչ ձեւոյն հնութիւնը կը հասնի մինչեւ է կամ նոյն իսկ է դար: Բայց ո՞վ ըսեր է վայդ եւ ո՞ր. չիք վկայութիւն: Գարձեալ նոյն յօդուածագիրը կ'ըսէ թէ մեծ է գրաբարեաննեւրուն արհամարհանքը ժողովրդին գործածած բառերուն եւ առուձներուն համար. բայց ինչէն գիտէ, ո՞ր յայտնուած է այդ արհամարհանքը. տարբեր ճաշակ ու համոզումներ ունենալն արհամարհանք չի նշանակեր. բայց ո՞ր գրաբարեան չէ գործածեր քիչ, փնտռել, ուզել, ընել, պտտիլ, քով, տակ, ետիւն, ետեւ, զոց, գէշ, վարպետ, ինչո՞ւ, հոս, հող, հոն եւ այլ ասոնց նման զուտ ուսմիտէն բառեր: Գուցէ իրենք, աշխարհաբարեանի դաւանանքն ընդունելէ յառաջ, այդ կարծիքներն ունէին աշխարհիկ ձեւերու եւ բառերու մասին, եւ հիմայ կը կարծեն թէ գրաբարեան համարուածներն անպատճառ այնպէս կը խորհին:

Ըստ իս, յորմէ հետէ ոչ ոք կը պնդէ թէ պէտք է գրաբար խօսիլ ու գրել մեր գաղափարաց ամենօրեայ արապայտութեան համար, եւ նոյն իսկ ոչ ոք կ'ըսէ թէ գրական գործեր միայն նախնեաց գրական լեզուով պէտք ու կարելի է գրել, գրաբարի ու աշխարհաբարի վէճն հիմնապէս՝ սկզբամբ լուծուած լինցած է: Այդպէս խորհիլը կ'ենթադրէր բնաւ ջանք չընել աշխարհաբարի զարգացման, եւ ասանկներն աւելի պէտք է փնտռել այն մինչեւ 1862ի ատենները գրողներուն մէջ, որոց «զուտ, կենդանի, խօսուած լեզուի մը պէս կենսակիր», աշխարհաբարին այնքան կը հաւնի օնտգլեան էֆէնտի, Դիտակ Բիւզանդեանի՝ հին Բագմավէսիներուն, Ջօհալի ու Երեւակի՝ ու սոցա լեզուին նման ուսմիտիս աշխարհաբարով գրուած հրատարակութեանց հեղինակներուն մէջ: Հիմայ խնդիրն աշխարհաբարը զարգացնելու եղանակներուն վրայէ, որ սկզբան խնդիր չէ, եւ որուն մէջ գրաբարն իբրեւ միջոց կը մտնէ, ոչ թէ իբրեւ նպատակ: Արդ, այս տեսութեամբ՝ գրաբարի ու գրաբարասէրներու դէմ զինուիլ անգիտանալ է անշուշտ նոյն իսկ մեր գրական արդի աշխարհաբարին զարգացման պատմութիւնն ու ամէն աշխարհաբարներուն կամ ուսմիկ լեզուներուն գրականանալու օրէնքը, ուրանալ է գրաբարի մատուցած մեծ ծառայութիւններն, ու վտանգաւոր ձեռնարկ է, որ կ'սպառնայ կասեցնել լեզուն իւր յառաջդիմութեան ընթացքին մէջ: Եւրոպական լեզուաց զարգացման պատմութիւնն ուսումնասիրողը քաջ

գիտէ թէ որքան երախտապարտ են անոնք Հին դասական լեզուաց, հելլենարէնի ու լատիներէնի, եւ ցայսօր իսկ ո՛չ ապաքէն Եւրոպիոյ քաղաքակրթեալ ժողովուրդք կը յամառին պահել իրենց դասական դաստիարակութեան դպրոցներուն մէջ յոյն ու հռովմէացի դպրութեանց ուսուցումը, իբրեւ մատենագրական արուեստի ու ճաշակի թանկագին ու անմերժելի հեղինակութեանց: Իսկ որչափ աւելի մեր հայ աշխարհիկ գրականութեան զարգացման համար օգտակար եղած է ու անոր ուսմանն ու մշակման համար միշտ կարեւոր առաջնորդ ու ձեռնառու պիտի ըլլայ գրաբար հայերէնը, որ նոյն լեզուն է նորին հետ, որ զնորն խօսող ու գրող ժողովրդեան անցեալ մտաւորական կեանքը կը պատկերէ ու միեւնոյն ցեղին նախնեաց հանձարը կը ցոլացնէ:

* * *

Եթէ աշխարհաբար լեզուին տեսակէտով գրաբարամոլութիւնը կրնայ ֆեասակար ըլլալ եւ հետեւապէս դատապարտելի, ո՛չ նուազ եւ թերեւս աւելի ֆեասակար ու դատապարտելի է աշխարհաբարամոլութիւնը, կամ աւելի ճիշդն ըսենք, ռամկամոլութիւնը: Ռամիկ լեզու մը չի կրնար զարգացեալ գրականութեան մը գործի դառնալ՝ առանց գրական Հին կամ նոր լեզուի մ'ազդեցութեան տակ կերպարանափոխուելու: Նոյնն եղաւ Արեւմտեան Հայոցս ժողովրդեան լեզուին համար. նա՛ եղաւ մեր այսօրուան գրական աշխարհաբարն, որ արդարեւ այժմէն իսկ ըստ բաւականին ունի յինքեան ճոխութեան, վայելչութեան, ուժոյ հանգամանքներ, թէ եւ տակաւին կը պակսին իրեն հաստատութեան, գիտական ու իմաստասիրական ճշդութեան, պայծառ սեղմ ու կորովի շարագասութեան յատկութիւններն: Արդ որո՞ն շնորհիւ կատարուեցաւ այս բարեշրջումն ժողովրդական ռամիկ լեզուին. — Տարակոյս չկայ որ նախ գրաբարի ազդեցութեան, եւ յետոյ գաղիներէնին: Գրաբարը ռամկօրէնը մաքրեց օտարութիւններէ ու խորթութիւններէ, ճոխացուց անոր բառարանը, հարստացուց անոր երանգատուփը, բարձր իմաստներն ու նոր մտքերը բացատրելու յարմար բառից եւ ձեւոց մթերքն ու ատաղձը մատակարարեց, իսկ գաղիներէնը գրական արուեստը կատարելագործեց, գաղափարաց ճոխութիւն բերաւ, մտածելու

եւ բացատրելու ձեւերը զանազանեց նրբացուց, շարադրութեան կարգին վրայ ներգործեց, եւ արտայայտութեան հազարուակ պէտքեր զգալի ըրաւ, որք մեծաւ մասամբ գրաբարին առաջարկուած մէն մի խնդիրներ եղան: Ժողովրդական լեզուին բառերու ու ձեւոց կոյր ու անձկամիտ յարում մը պիտի արգիլէր անտարակոյս անոր յառաջացումը, եւ սակայն անկարելի էր այդպիսի յարում մը. բարեշրջութեան հարկաւոր օրէնքը պիտի գործէր, ճոխագոյն լեզուի մ'օգնութեան դիմելու պէտքն զգալի պիտի ըլլար, եւ պիտի յառաջ գային անոնք որք մեղադրուեցան յոմանց եւ կը մեղադրուին ցարդ իբրեւ գրաբարեան, բայց որք այնքան նպաստեցին աշխարհաբարին գրաբարով աճելուն, զօրանալուն ու գեղեցկանալուն: Առանց անոնց գուցէ ցայսօր ըսէինք ու գրէինք. «Հայխին հախին ասխըտար իֆտիրա, իլլէ աս խազալը քէրթէին. եանի իրաւ պիլէ ըլլայ, կէնէ ես անանկ պէլլէմիշ եմ ըսեր քի հախ լախըրտոլյին ալ սըրաւն կայ, եւն», ինչպէս Հ. Արսէն Այտրնեան յառաջ կը բերէ իբրեւ նմոյշ Կ.Պոլսոյ գաւառականին: Եւ կամ դեռ Տէրոյնցի պէս պիտի գրէինք, «Կաղեր հնարելը Յունաստանի մէջ առաջին բերանը շատ աղէկ հնարք մըն էր: Շատ տեսակ վազելներ եւ ծեծկըվիրներ, գօտէմարտութիւն (բէհլիվանութիւն), բռնամարտութիւն (եուրուք տէօյիւշիւ), համայնամարտութիւն, որ ամէն տեսակ ծեծկըվիլ կ'ըլլար: Առնելիքնին տերեւներէ հիւսված պսակ մը եւ հասարակութեան ծափ զարնելը եւ համբաւը զրուցվիլն էր, բայց անոնք այս բաներս արծաթէն եւ ոսկիէն վեր կը բռնէին», Ահա՛ այն «մեծ եւ սուր մտքին կոկիկ, ճկուն աշխարհաբարը, որ մեր օրուանն ըլլալ կըթուի», որպէս հիացմամբ կը դատէ Ֆնտգլեան, որ սակայն, չեմք գիտեր ինչո՞ւ, գործնականի մէջ կ'ըզգուշանայ անոր հետեւելէ:

* * *

Ո՛չ, լեզուն զոր այսօր կը գրենք, մեք, դուք եւ ուրիշներ, ժողովրդին լեզուն չէ, եթէ «Ժողովուրդ», բառով պէտք է իմանալ անգրագէտ դասը, ռամիկը: Սխալ է ըսել Ֆնտգլեանի հետ թէ «Ժողովրդին բառերով ու ձեւերով այսօր զարգացեալ մշակեալ դասակարգը կ'արտայայտէ իր միտքն ու զգացումները»,

Այդ վճիռն՝ զարգացեալ մասց արտայայտութիւն՝ ինքն իր մէջ ունի իր հերքումը. ժողովրդեան ոչ-ղարգացեալ, ոչ-մշակեալ դասակարգին խօսելու սովորական կերպն է այդ. առօրէ իր բառերն են, իր ձեւերն են. գիտէ թէ ինչ է զարգացեալ, մշակեալ. կը ճանչէ այդ բառերու փոխաբերեալ իմաստը. գրաբարի անցեալ ընդունելութիւնը սովորական են իրեն. դասակարգը կը հասկնայ, իր բանն է. արտայայտել լուսնի է երբեք որ եւ է անգրագէտ մարդու բերնէ: Այդ ձեր լեզուն է, այո՛, որ գրագէտ ու զարգացեալ մարդ էք ու գրական մշակեալ լեզու մը, զրաքար մը, կը գործածէք, ինչպէս ժողովուրդը կը կոչէ ձեր այդ լեզուն, բայց իրը չէ, ձեր լեզուն որ, ինչ որ ալ ըսէք, չէ զերծ հին գրաբարի ձեւերէն՝ ժողովրդեան անսովոր, եւ որ ունի իր մէջ հազարումէկ գրաբար խրթին բառեր, արուեստաւոր կազմութեամբ, վերացեալ նուրբ իմաստներով, փոխաբերեալ առուձեւերով, ուսուձեական յատուկ նշանակութեամբք, որք ամէնքն ալ անիմանալի ու անծանօթ են ժողովրդին: Գուրբ եւ ձեր ընկերք, հակառակ ձեր բռուն ջատագովութեանց ժողովրդեան լեզուին սղման եւ պարզման յատկութեանց, կը գործածէք գրաբարի հօլովման ու խոնարհման յատուկ ձեւեր. կը գրէք, մեզ նման, ոգւոյն, զրուածոց, մաշման, փոփոխութեանց, Մխիթարեանք, Մխիթարեանց, Անգլիացւոց, պահանջմանց, կարծենք, գոգցես, ի տես այդ առաքեալի, ուսուցած, կը մատուցանեն, կը հատուցանեն, կը սնուցանեն, վերանալ, հիւանդանալ, աղքատանալ, սնանիլ, ուսանիլ եւն եւն: Կը գործածէք այն գրաբար բայերն որք մեր ժողովրդական լեզուին մէջ խափանուած են եւ որոց տեղ ժողովուրդն ունի ուրիշ բառեր, ինչպէս խնդրել (ուզել. խնդրել ժողովրդեան լեզուին մէջ խնդիրք ընել է Ասաուծմէ, թագաւորէն եւն), լուծել (քակել), ուսնիլ կամ ուսանիլ (սորվել), գծել (քաշել), շրջիլ (պտտիլ), հերքել (ջրել), սնուցանել (նայիլ, հաց կերցունել), երկնչիլ (վախնալ), ոռոգել (ջրել), սպառիլ (հասնիլ), ընկանել (կոտրել), եւն: Իսկ ձեր շարագասութիւնը գազիական է աւելի, որքան կը ներէ աշխարհաբարի կարգը կամ համաձայն այն տրամաբանական կարգին որուն շատ աւելի ընդունակ է գրաբարը՝ առանց զայն իր բացարձակ օրէնքն ընելու, ինչպէս երբ կը գրէք, «Ուրեմն հարկ էր

գրել աշխարհաբար, եւ հնազանդեցան, ակամայ, այս հարկին,, նոյնպէս երբ կը գրէք, “Եւ այդ փոփոխութիւնն է որ հիմայ մեզ այնքան տարօրինակ կը ցուցնէ հին ձեւը լեզուի,, Եր տեսնէք որ, հակառակ ժողովրդական աշխարհաբարի սովորական կարգին, դուք բայը իւր խնդրէն առաջ կը դնէք եւ երբեմն ալ յատկացուցիչը իւր յատկացեալէն յետոյ: Դուք աշխարհաբարին սղած կամ այլափոխած բառերը կը գործածէք իրենց գրաբարի վերահաստատեալ ձեւերովն, ինչպէս այրիլ (էրիլ), այր (էրիկ), եղքայր (աղբար), երանի (երնէկ), կանգնիլ (կայնիլ), ծագիլ (ծաթիլ), թօթափել (թօթուել), դատարկ (դարտակ), մանր (մանար), ծանր (ծանար), ցերեկ (ցորեկ), եւն, եւն:

Բ.

Արդարեւ ժողովրդական լեզուներուն յատուկ է պարզելու բայց այդ պարզումը միայն հոլովմանց ու խոնարհմանց եղանակներու մասին չէ, այլ աւելի հեռուն կ'երթայ եւ ուրիշ բաներու վրայ ալ կը տարածուի: Ժողովուրդը չի գիտեր ու չ'ուզեր գիտնալ ու որոշել զլիաւոր գաղափարի մ'այլ եւ այլ զանազանութիւնները, գոյներն, եւ յաճախագոյնս միայն մէկ բառ ունի գրագիտին հոմանիշներուն գիմաց: Նա ծար, հեր, վարս, մազ, գէս, ստեւ բառերուն մէջէն մազը գիտէ. աղջկան մազը, ձիւն մազը, ուղտին մազը, այծին մազը կ'ըսէ: Նա միայն ճայն (ձան) բառով կը բացատրէ մարդուն, բազմութեան, անասնոց, հովին, ծովին, ծառին, ամպին, մրրկին, նուագարանին, մետաղին լսելի ըրած ձայնական թրթռումները, զորս կը զանազանէ գրագէտը ճայն, հնչիւն, ճիչ, աղաղակ, խղուրդտիւն, բարբառ, գոչիւն, շկահիւն, մայիւն, մլխաիւն, բզզիւն, բառաչ, պոչիւն, մորնչիւն, կաղկանծիւն, խրխինջ, վրնջիւն, շաչիւն, շառաչիւն, բովբիւն. սոսաւիւն, խօշիւն, մրմունջ, խոխոջ, կարկաջ, բախիւն, թինդ, ճողփիւն, զոռիւն, բարբախիւն, տրոփիւն, դոփիւն եւն բառերով: Նա չի գիտեր ճաճանչ, ճառագայթ, շող, նշոյլ, փայլ, շառայլ, շառափ, պատշէկ, այլ այս ամենուն դէմ ունի միայն լոյսը (լուս): Գոյն, թոյր, երփն, երանգ բառերէն միայն զոյնը գիտէ: Զիւն ազիւն, շան կամ առիւծին ձեւը, ձկան տտունը, վարսամին գէսը իրեն համար պոչ են առ-

հասարակ: Կազմել, յօրինել, կերտել, հաստել, կառուցանել, յարդարել, հեղինակել, նկարել, կոել, կոփել բառերուն իմաստի զանազանութիւնք գոյութիւն չունին իրեն համար եւ ամէնքն ալ իրմէ կը բացատրուին շինել բայով, տուն շինել, գիրք շինել, պատկեր շինել, արձան շինել, եւայլն: Հանդերձ, զգեստ, ձորձ, տարազ իրեն համար լաթ են: Վէժմ, զիլ, ժայռ, քար, բոնարքար, ործաքար, ակն բառերուն մէջէն քարին միայն ծանօթ է: Զարդարել, պճնել, պաճուճել, շքեղազարդել, գեղազարդել իրեն համար շտկել են, եւն: Այսպէս ժողովրդեան բառարանը շատ աղքատ է հոմանիշ եւ մերձիմաստ բառերու մասին եւ հետեւապէս անբաւական՝ զարգացեալ մտքին համար որ նմանութեանց մէջ տարբերութիւնքն ալ կը նշմարէ եւ զայնս բացատրելու հարկը կ'զգայ, մանաւանդ թէ, ի պէտս իւր նուրբ ճաշակին ու արուեստին, երանգաց ու ձայնից զանազանութեան պէտքն եւս ունի:

* * *

Դարձեալ, բարդութեան եւ ածանցման մասին ժողովրդական լեզուին բառակազմական արուեստը շատ անկատար է ըստ ինքեան: Թէ եւ ռամիկ լեզուն ունի իրեն յատուկ բարդ բառերն (ծուռբերան, ծովիղ, ծուղափակ, ծակաչք, կտրեկցուկ, խօսմուկ, տնորդիք, վարպետորդի, թուքումուր, արունկզակ, բացբերան, հաւկիթ, մոմլաթ, երկանթաթիկ, մայրնմանակ, ողջոյնձեւ, բանթող, աստուածավախ, բարեւագիր, լեղապատառ, քարսիրտ, բուխսիրտ, արեւազարկ, կունտուկլոր բառից եւ նմանեաց պէս), եւ իրեն օտար չէ բարդելը, մանաւանդ առանց ւա յօդի, բայց սա ստոյգ է որ իրեն սովորականն է գործածել պարզ բառեր եւ բաղադրեալ իմաստները մէկէ աւելի բառերով վերլուծեալ ձեւով յայտնել, եւ աստ պէտք է դիտել թէ՛ եթէ ռամիկը բառը կը սղէ, բացատրութիւնը կ'երկարէ: Երկինքէն դրկուած, իջած կ'ըսէ փոխանակ երկնառաք, երկնիջակ ըսելու, տերեւներով հիւսուած կ'ըսէ փոխանակ տերեւահիւս ըսելու, վեր կը բռնէ կ'ըսէ փոխանակ կը նախընտրէ, կը նախապատուէ ըսելու, աղէկութիւն ուզող՝ փոխանակ քարեացակամ, կրակէն էրած՝ փոխանակ հրկիզեալ, սիրտ քաշող՝ փոխանակ

սրտագրաւ, երեք յարկով փոխանակ եռայարկ, երեք ուտքով փոխանակ եռոտանի, դիւրին հասկցուելիք՝ փոխանակ դիւրիմաց, դիւրըմբոնելի, լեռան պէս բարձր՝ փոխանակ լեռնաբերձ, կուրծքին ոսկորը՝ փոխանակ կրծոսկր, սիրտը կուտրած՝ փոխանակ սրտաբեկ, սրտառուչ ըսելու, եւն: Արգ, առէք, զոր օրինակ, Ա. 2. ի լեռան ծաղիկը մակագրեալ բանաստեղծութիւնը (հրատարակեալ ի Մասիս, Թիւ 3968) եւ համընցէք անոր մէջ տեսնուած գունագեղ բարդ բառերն, մանաւանդ ածականներն (հեշտօրօր, դալկահար, սայրասուր, նորատի, փառաշուք, լեռնայած, հիւթագեղուն, մրկազայր, ոսկեճամուկ, հրալիր, ճախրասլաց, ակնաշաց, լուսամած, եւայլն.), եւ ըսէք թէ այդ ժողովրդեան լեզուն կը խօսինք ըսողները զարմանալի պատրանքի մը ենթակայ չե՞ն կամ չե՞ն ուզեր ենթարկել իրենց ընթերցողները: Ժողովուրդը, գրքերու մէջէ հին ու նոր գրական բարբառքը չուսանող մէկը ոչինչ կը հասկնայ այդ բառերէն ու անոնց գիտուն կազմութենէն, որոց շատին տարբրքն ալ զուտ գրաբար են: Ու ֆնտզիւան կ'եղնէ ըսել թէ «գրաբարեանք գրքի՛ բառեր, գրական ասուճնիր միշտ կը գործածեն, երբ կը կենայ խօսուած լեզուին բառն ու ասուճը, կենսալիր, ազդեցիկ, ուժեղ, դիւրիմաց»: Արդեօք այս վերջին բառերն ալ ժողովրդեան շրթանց վրայէն քաղեցին:

Նոյնը պէտք է ըսել ածանցներու մասին ալ: Մեր արդի գրական լեզուին սովորական դարձած ածանցական բազում մասնիկներ անսովոր են ժողովրդեան լեզուին: Սա ունի իրեն ընտանիներն ու յատուկներն, ան (հաջան), էք (ըօրհնէք), չէք (աւուրչէք), ծու (չինծու), իկ, ուկ (ազուորիկ, տաքուկ), ցու (տիրագու), ուի (աչուի, սեւաչուի), պան (ըորեպան), ուտ (քարտ), բայց կան այլ եւ այլ մասնիկներ որոց անընտել է, ինչպէս (ա)կան, օրէն, բար, ային, եայ, եղէն, եղ, ուտ, ոյթ, արան, իչ, ոտի, գին, ոյց, եցիկ, ին, իւն եւայլն, եւ զորս արդի գրական աշխարհաբարն հին գրաբարէն կը ծանչէ: Նախադաս մասնիկներն ընդհանրապէս, իսկ յոյն մասնկանց նմանօրէն շինուածներն (դեր, ներ, գեր, ստօր, շաղ, արամ, բաղ, արդ, ենթ, յար, շար, փաղ, վեր, պար, տար, փոխ, մակ, հակ, հոմ, համ) բացարձակապէս օտար են իրեն: Այս մասին ալ ու-

միկը սովոր է վարիչ վերլուծական եղանակաւ. յաճախ կը հո-
լովէ բառը կամ նախադրութիւն մը կը յաւելու փոխանակ
ածանցելու, մէկէ աւելի բառ կը գործածէ ածանցեալ միակ բա-
ռին իմաստն յայտնելու համար: Աստուածային շնորհ չ'ըսեր,
այլ Աստուծոյ շնորհք, չ'ըսեր մարդկային բնութիւնն՝ այլ
մարդու բնութիւնը, ոչ ուժեղ կամ ուժգին՝ այլ ուժով, ոչ
արծաթեայ, պղնձի, ոսկեղէն՝ այլ արծաթէ, պղնձէ, ոսկիէ,
ոչ անբուժելի, անդարման՝ այլ չբժշկուելիք, տէրման
չունեցող, ոչ ստորերկրեայ՝ այլ գետնին տակի, ոչ գերեր-
կրեայ՝ այլ երկրէս վերի, եւ այլն: Ապա ուրեմն մեր եւ ձեր
լեզուին շատ մ'ածանցեալ բառերն իրենց կազմութեամբ անհաս-
կանալի են ժողովրդեան ու իրենը չեն: Եւ ձեր պարբերութեանց
գիտուն ու ճարտարարուեստ կազմութիւնը, շաղկապներով ու յա-
րաբերական դերանուններով սերտիւ յօդաւորեալ, կը կարծէք
թէ ժողովրդեան խօսելու կերպերուն շատ համաձայն բան մ'ըլ-
լայ եւ գէթ դիւրամտաչելի անոր մտաց: Չմոռնանք բառից այն
շատ մ'առուձներն զորս ստացած են, անկախաբար իրենց նախնա-
կան իմաստէն, ընդլայնմամբ կամ սեղմմամբ այս վերջնոյն, գոր-
ծածուելով իրրեւ ուսումնական բառ զանազան ուսմանց եւ գի-
տութեանց մէջ, եւ այն բառերն ալ զորս սոքա յարմարած ի
լոյս բերած են իրենց պէտքին համար, ռամկին անսովոր գրաբար
ձայնը յաճախ սովորական ընելով գրական նոր լեզուին մէջ, —
առմունք եւ բառք որոց գիրքն ու դպրոցը միայն կարող են սով-
րեցնել գործածութիւնն: Յայտնի է թէ մեր Պոլսոյ ռամկորէնն
ըստ ինքեան շատ աղքատ է յատուկ ոճերու մասին, եթէ ի բաց
առնունք թուրքերէնի նմանութեամբ շինուածներն, որք չէին
կրնար անխտիր առհասարակ անցնիլ գրական լեզուին մէջ
առանց տալու անոր տարբեր երեւոյթ մը: Գրաբարի ազգեցու-
թեան տակ նոր գրական լեզուն այդպիսի արշաւանքի մը վտան-
գէն քիչ թէ շատ զերծ մնաց, ներմուծելով՝ փոխարէն՝ գրաբար
համապատասխան բառեր եւ ասութիւններ եւ այս կերպով մա-
քրուելով, ազնուանալով ու հարստանալով միանգամայն: Այժմ
գրականութեան ընտանի եղած են ի գուլթածել, ի գործ դնել,
առկախ թողուլ, ի նկատ՝ ի քնին առնուլ, զանց առնել,
անտես ընել, ի բերան ուսանիլ, միտ՝ ուշ դնել, ձեռնտու

ըլաւ, փոյթ՝ խնամ տանիլ, ջանադիր ըլաւ, ձեռք կարկառել, մագալուր ազատիլ, ցոյց տալ, տուն տալ, ի բաց առնուլ, ի նպաստ, յօգուտ (մեկուն), ի վարձ, ի քաջալեր, յանձին (անոր), ի պաշտօնէ (ծանուցանել), յականէ յանուանէ (յիշատակել), առ այս, ի վիճակի (ըլաւ), ըստ մեծի մասին, ըստ այսմ, ընդ հսկողութեամբ, ի հարկէ, եւայլն, եւայլն գրաբար կամ գրաբարկերպ ոճեր, նախդրիւ հոլովներ ու մակայակերպներ: Աւելորդ է ըսել թէ աշխարհաբարի մէջ խափանուած մնացած կամ համարուած գրաբար բայեր կամ բայից նշանակութիւնք՝ բարդութեանց ու անանցմանց մէջ սակայն միշտ անարգել երեւցած են իրենց արմատովն ու հին նշանակութեամբն, որպէս՝ դակահար (հարկանել), քահահատ (հատանել), շանթընկէց (ընկենուլ), սեւազգեաց (զգեւուլ), աղեղնածիզ, ձգողութիւն (ձգել), ակնարկ (արկանել), բազմավաստակ, անընթեռնի, անմատոյց, գահավէժ, եւայլն:

* * *

Այսչափը, կարծեմ, բաւական է ցոյց տալու համար թէ ինչ որ այսօրուան գրական աշխարհաբարը կ'անուանեմք, նոյն իսկ այն զոր կը գրեն ժողովրդական լեզուի ջերմագոյն պաշտպաններն, բազում իւրք հեռացած է ժողովրդեան աշխարհաբարէն ու մերձեցած հին գրաբարին, եւ ինքն ալ երկրորդ գրաբար մ'եղած է գրելի: Անշուշտ միշտ հոլովման, խոնարհման, նախդրաց ու խնդրառութեան դրութեանց մասին քերականութեան հիմը ուսմիօրէնինն է, որ զինքը հինէն որոշող գլխաւոր յատկանիչն է, բայց գրաբարի քերականութիւնը կը պահէ դեռ, չափով մը, իր օրէնսդիր իշխանութիւնը որ ժամանակին հետ ալ աճած է եւ ոչ նուազած. փոխարէն՝ բառից մթերքն ամենամեծ մասամբ գրաբար եղած է, եւ քերականութեան բառակազմական մասն ընդունած է անպայման գրաբարի օրէնքները: Լեզուի խնդրոյ մէջ կարեւորութիւն ունեցող բանը, մանաւանդ գրականութեան տեսակէտով, միայն հոլովման ու ընորդման յանգաւորութիւնքը չէ, այլ անոր բառերու պաշարը, կցելու եւ բարդելու հանգամանքները, շարադասութիւնը, գաղափարական զարգացումը եւ արտայայտութեան միջոցներու ամբողջութիւնը: Այս ամէն տեսակէտներով կարելի չէ մեր աշխարհիկ գրականութեան

լեզուն կտրել բաժնել գրաբարէն, որմէ ինչպէս իւր ծնունդն առած է, նոյնպէս դեռ իւր զարդարանքը, մանաւանդ թէ դեռ հոգին ու շունչը կ'առնու», կը գրէր Հ. Արսէն Այտընեան: Նոյն հոյակապ աշխարհաբարագէտը կը գրէր նաեւ, «Միշտ ստոյգ կը մնայ թէ նոր լեզուի մը բոլոր գանձը հնոյն մէջն է, եւ հինն ստացողը տիրած է նորոյն վրայ»: Այս գանձէն գրական աշխարհաբարը լիարուսն քաղեց ցարդ Ալիշանի, Այտընեանի, Գարագաշեանի, Վիննայի եւ Վենետիկոյ այլ Հարց, Պէշիքթաշեանի, Թերզեանի, Իթիւճեանի, Օսեանի, Երեւնցի, Տէմիրճեպաշեանի, Սեթեանի, Քեչեանի, եւ նոյն իսկ Մամուրեանի, Գուրեանի, Պարոնեանի գրիչներով, որք իրենց ճոխ մտաց եւ յորդազեղ սրտին բացատրութիւն տալու համար՝ ուսմկորէնով չբաւականանալով ու կատարելագոյն ոճ մ'ունենալու հետամուտ, աւելի կամ նուազ գիտակցաբար, գրաբարի հարուստ բովը շահագործեցին եւ եւրոպական լեզուաց ծանօթութեան թելադրած կատարելագործումներն իրացնելու միջոց մ'ըրին զայն, ու այսպէս գրաբարեան եղան ամէնքն ալ, անշուշտ գոյնի ու աստիճանի զանազանութեամբ: Նորագոյն գրիչներն ալ գրաբարեան են, քանի որ կը գործածեն իրենց նախորդաց պատրաստած գրական լեզուն, ու խօսքով միայն ժողովրդական են, որպէս ցոյց տուինք: Քանի մ'եր, քանի մ'երու, քանի մ'ի, քանի մ'երով աւելի, եւ մերթ ալ՝ մանաւանդ ժողովրդի լեզուն ու բարբը ներկայացնելու առթիւ՝ քանի մը ռամիկ ու թուրքերէն բառեր մեծ ու հիմնական փոփոխութիւն մը յառաջ չեն բերեր: Պէտք է զիրար հասկնալ. աւելորդ նախանձընդդէմ վէճեր դպրոցականաց կը վայլեն: Եթէ ժողովրդեան լեզուն կը ջառագովեն, թող ընդունին զայն պարզապէս: Եթէ ոչ՝ ինչ կ'արժէ միշտ եւ շարունակ խնդիր յարուցանել երկու բայի, մէկուկէս նախդիրի, հին կամ նոր առումի մը: Իրենց մօր ծիծը ճանկուտող մանուկներու չէն նմանիլ գրաբարին դէմ գրաբարով յարձակողները: Լուսագոյն է որ գրեն իրենց հասկացած կերպովը քան վիճին, եւ գրաբարն հարուածելէն աւելի զայն ուսումնասիրելէն անշուշտ կրնան ծագիլ օգտակար արդիւնք գրագիտին, գրագիտութեան եւ ազգին համար:

(Արեւելք, 1892, թիւ 2624—5:)

2. ՆՈՐ ԳՐԱՂՆԵՐԸ

Գրական ասպարիզին վրայ վերջին ատեններս հրեւան եկողներէն ոմանք կրկնակի աշխատութեան մը դատապարտած են իրենք ղիրենք. աշխատութիւն՝ մէկմը ծնունդ տալու իրենց մաքի յղացումներուն, եւ մէկ մ'ալ ջատագովութիւնն ընելու իրենց արտադրութեանց, իրենց գրելու կերպերուն, բան մը որոյ անհրաժեշտ մասը կը կազմէ՝ ըստ իրենց՝ պարսաւն գրեթէ ամենայնի որ գրուած է իրենցմէ յառաջ: Սորա ոչ միայն կանխահաս գրագէտներ են, այլ եւ նորանշան քննադատներ, որք գպրոցական գրասեղաններն իսկ ձգած ըլլալու պէտք չեն զգացած Վիլմէնի, Սէնդ-Պէօվի, Թէնի գրիչը ձեռք առնելու համար: Պէտք ալ չունին սպասելու որ այն անձինք որոց վրայ կը յարձակին՝ բան մը գրէին իրենց դէմ. հեռուէն հեռու լսուած կցկտուր խօսքեր, դիմաց վրայ «նշմարուած դժգոհութեան ինչ ինչ ծամածուռումներ», կը բաւեն իրենց պատերազմիկ խանդը բորբոքելու. արդէն հերիք չէ որ այդ անձինք չեն փութացած իրենց հիացումն յայտնել իրենց: Ահա՛ բուն եւ սկզբնական մեղքը: Եւ իրենք այնքան միամիտ չեն որ չգիտնան թէ իրենք արեւն են ու նորա տժգոյն աստղեր որ կը կորնչին ի ծագել իրենց: Ատենէ մ'ի վեր լուծ են անոնք, յորմէ հետէ իրենց փողը կը հնչէ. ինչ կը նշանակէ այս լուութիւն, արհամարհանք. ո՛հ, ո՛չ. ո՞վ կը համարձակի. անշուշտ ապիկարութեան զգացում, պարտութեան ամօթ:

Մտաբերեւ գրական ամէն նոր սերունդ որ հրապարակ կ'ելնէ՝ աղէկ կամ գէշ՝ նոր բան մը կը բերէ հոն, նոր ոգի մը, նոր կերպ մը, արդիւնք ժամանակին յեղաշրջման, տիրող մատենագրական սեռի մը կամ մատենագրաց ազդեցութեան, նորասիրութեան ոգւոյ, ուժ առած իմաստասիրական վարդապետութեան մը ներգործութեան, եւ այլն: Բայց ոչ ինչառանց կապի է անցելոյն, նախընթացին հետ, եւ նոր գրագէտն, ինչ որ ըլլայ, անշուշտ իր գոյութեան տարերց կարեւոր մէկ մասն առած է իր նախորդներէն, թէ եւ անոր գիտակցութիւնը չունենայ կամ չուզէ զայն խոստովանիլ:

Մենք, երբ գրել սկսանք, երախտագիտութեան պէս բան մը կը զգայինք Գարագաշեաններու, Իւթիւճեաններու, Մամուրեաններու, Չիլինկիրեաններու, Թէրզեաններու, բոլոր Մխիթարեան-

ներուն, եւ նոյն իսկ փափազեաններու նկատմամբ: Այդ անուններն կապուած էին ու կը մնային միշտ մեր մտաւոր կեանքի առաջին զարթմանց յիշատակներուն հետ. իւրաքանչիւրը բան մը սովորեցուցած էր, քայլ մ'առնուլ տուած էր մեր մտքին, մի գաղտնիքն հաղորդած մեզ խորհելու եւ բացատրելու արուեստին. եւ քանի կը մեծնայինք, լաւագոյն եւս կը գնահատէինք զիրենք, մեր սիրտն ալ մեզ օգնելով: Այս նոր քննադատ-գրագէտներուն համար ամէն ինչ իրենց օրով կը սկսի, իրենք հիմ գրած են հայ լեզուին ու գրականութեան. նախորդք ոչինչ էին ու են պարզապէս. հազիւ այս ընդհանուր դատապարտութենէն կ'ազատին մէկ երկու անձինք որք կանխաւ զիրենք զրուատած ըլլալու խոհեմութիւնն ունեցած են, եւ յետոյ... մէկ երկու մեռեալներ: Եւ սակայն նախորդք իրաւունք ունին կարծեմ գէթ քիչ մ'աւելի ազնուութիւն, քիչ մը նուազ յաւակնոտ դատումներ սպասելու իրենցմէ, մանաւանդ թէ ի նոցանէ ոմանք ուղղակի դասախօսած ալ են իրենց:

Եւ սակայն ի՞նչ է այդ հիւնքը ըսուածներուն թերութիւնը: — Նախ ընթերցողը պարտի գիտնալ թէ հիւնքը եւ նորքը ըսելով հասկնալու չէ 17^{րդ} դարու մէջ յուզուած Նշանաւոր գրական պայքարն հնոց եւ նորոց (la querelle des anciens et des modernes), յուզուած նախ ի Գաղիա, եւ ապա տարածուած յԱնգղիա եւ ի Գերմանիա, պայքար որոյ առարկայն էր բազմատուութիւնն հին յոյն եւ լատին դասական հեղինակաց ու ժամանակակից մատենագրաց գրական արժանեաց: Ո՛չ. մենք հնութիւնն այդքան հեռուները չենք տանիր. այդ անդրջըհեղեղեան բան մը պիտի թուէր մեզ ու գրոց երկար տաղտուկ ուսումնասիրութիւններ հարկադրէր, որք ժամանակ ալ չպիտի թողուին մեզ մեր թափառայած գիտողութեանց. մենք մանաւանդ շուտ ու շոգեպինդ կ'ապրինք, ու 10—15 տարի բաւական են շինելու համար մեզ մեր fossilները. մեր քննադատից համար հիւնքն ուրեմբ են 70էն ի վեր գրողներն, իսկ նորերն են 80—85էն ասդին գրողներն: Աւելի անփութ պ նշան մը եթէ կ'ուզէք, գրողներուն շարադրութեանց մէջ կ'ընեցէք քրաքարի քանակն. եթէ գրուածն ի գրաբար կը միտի՝ հին գրողն է, իսկ եթէ ի ռամիկն՝ նորի: Մի եւ նոյն բանը հիւնքուն ոճին թէ նշանն է թէ՛ ոճիրը:

Միայն թէ ներելի է անշուշտ հարցնել թէ ի՞նչ մեղք կայ իր գրուածին քիչ մ'աւելի գրաբար գոյն տալուն մէջ, եւ ի՞նչ էական տարբերութիւն այդ գոյնին քիչ մ'աւելի բաց կամ մոտեմ ըլլալուն մէջ, քանի որ մեր այսօրեայ գրական աշխարհաբարին վրայ զգալի կերպով կը տեսնուի գրաբարին հզոր ազդեցութիւնը: Եթէ այդ նորոց համար անտանելի բան մ'է աստի 15 տարի յառաջ տպուած գրքի մը մէջ տեսնել «յերկիր ինկած զայն շքեղացնելոյ եւ կեանքն քաղցրացնելոյ համար», ի նման տողեր, ի՞նչ պէս ապա կը հանդուրժեն նոյն իսկ այն թերթին մէջ, յորում այս խժրիժը կ'ընեն, տեսնել գրագէտի մը զոր իրենցմէ կը համարին, սա գրաբարեան ձեւերը. «Հայկ եռանդագին խօսէր առ Նուարդ. —, . . . «Եւ երթանք յանտառ», — «... ո՛չ ալ գտնինք», — «Մինչ յերկնից արեւ . . .», (Տես Սիրահարութիւն, քերթուած Աղեք. Փանոսեանի): Իսկ աշխարհաբար թէ գրաբար են նոյն թերթին մէջ հրատարակեալ Ե. Տեմիրձեպաշեանի սա տողերը. «Մինչ քերովբէք լուսազգեցիկ, — Մերթ ծնրադիր մերթ պարանցիկ, — Անվերջալոյս գաւառաց մէջ — Ի զմայլ ըզՏեր՝ ըզլոյսն անշէջ — Պաշտէին յար, աչք համբարձիկ, եւ այլն: Եթէ առարկեն թէ ոտանաւորը չէ կարող բոլորովին առանց գրաբարի ըլլալ, իրենց «վերջնական ձեւ առած» աշխարհաբարին վրայ նպաստաւոր գաղափար մը չեն տար. Ֆրանսացիք տարբեր լեզու, տարբեր քերականութիւն ունին արձակի ու ոտանաւորի համար. այդ «լեզուային հրէշը», այդ «գրաբարի եւ աշխարհաբարի անիմաստ այլանդակ զուգաւորումը» ոտանաւորի մէջ կը կորսնցնէ՞ իր «անօրինակ ահռելի» ութիւնը: Ի՞նչ հակասութիւն. ոտանաւորի մէջ հին էք ու արձակի մէջ նոր, տարօրինակ բան չէ՞ այդ: Իրենք, իրենց նախորդներէն ուսած ու երէկ հրապարակ ելած, յաւակնութիւնն ունին կարծելու թէ իրենց օրինակը կ'առաջնորդէ, կը բարեփոխէ զանոնք, վասնզի այսօր աւելի աշխարհաբար կը գրեն եղեր քան 15 տարի յառաջ: Արնային 9 տարի յառաջ (երբ իրենք գոյութիւն չունէին դեռ) գրուած գրքի մէջ տեսնել այդ աւելի ժողովրդական աշխարհաբարը, զոր օրինակ Մարդիկ եւ իրքի մէջ, որոյ պարունակած յօդուածոց շարքը 1883 եւ 84 թուականներուն գրուած է: Բայց բան մը կայ զոր կը խոստովանինք. մեր գրութիւնք չեն եղած երբեք ռամիկ բացատրութեամբք,

նոյն իսկ Թրքական բառերով (խըյախ, սաթըճը, քարլախ, չալմալը, են) «պիսակաւորեալ» որպէս իրենցներն, ինչ որ վերջին նորութեան, բնապաշտութեան, արտաքին զգալի գոյնը կ'ընծայէ անոնց: Եւ ահա՛ ասոր համար մենք ու մերոնք անհասկընալի կը ձեանք ժողովրդեան, մինչդեռ պառաւ խաթունը արցունք կը թափէ ուկնդրելով իրենց գրածներուն ընթերցման. մեզ կը ծափահարեն առանց հասկնալու, տխմարները. իսկ հիմայ իրենք կը կարդացուին ամբողջ հայ ազգէն եւ անշուշտ կը ծափահարուին ամենէն ալ: Շատ լաւ. միայն թէ, ռամկօրէնը հետ զհետէ մտքերելով գրական ազնուութեան բարձրացնելէ յետոյ, հայ գրագէտին տակաւ վերադարձն ի ռամկօրէն ինչպէս պէտք է մեկնել. — հա՛, ներեցէք, քիչ ձեաց կը մոռնայի. — անկապաշտութեամբ. ո՛չ ապաքէն տէքատամներ, անկապաշտներ կան ի Բարիզ:

Օտեանի մէկ նշանաւոր նամակին սա խօսքին վրայ մտածելու էիք, դուք որ անոր անունն յաճախ կը յեղյեգէք. «Այլ թէ ինչ ալ ըլլայ, աշխատեցէք, ո՛վ դուք որ աշխարհաբառի էք կողմնակից եւ դուք որ գրաբառի...», ու լայն կերպով ըմբռնելով գրականութիւնը, երկու նախդրի ներկայութենէն կամ բացակայութենէն, մի քանի բառերու վերջահորովին տարբերութենէն պատուարներ ստեղծելու չէիք. այդ սեսակ զանազանութիւններ, եթէ երբեք ինպաստ ձեզ ալ համարուին, պարծանքի շատ կարեւոր առիթներ չեն անշուշտ:

Բայց ուրիշ տարբերութիւններ կան, աւելի էական, աւելի ծանրակշիռ: Հիները գիտակ են քերականական կանոնաց, ոճոյ ձեւոց ու յատկութեանց, իսկ նորերը աչքերնին խոշոր խոշոր կը բանան՝ եթէ իրենց հարցուի թէ ինչ տարբերութիւն կայ վսեմին եւ վսեմ ոճին մէջ, մտածման եւ զգացման վսեմներուն մէջ. պիտի կարծէին թէ ձաբոներէն կ'ուզեն խօսիլ իրենց հետ...: Այս տգիտութիւն, քիչ մը կեղծ, իրենց պատիւն է, եւ արդէն, իրենց խելքով, ո՛չ ապաքէն ճամբարիտ գրագէտը պարտի տգէտ ըլլալ կատարեալ ըլլալու համար մտքին. ստեղծականութիւնը պիտի ճնշուէր մեռնէր ստացեալ գաղափարներու կոյտին տակ, ու յետոյ սկզբնատիպ գրագէտ մը չպիտի ըլլար: Գիտցուելու, կարդացուելու արժանի բան եթէ կայ, այն ալ կ'երեւի թէ միայն Զօլան ու Յօսէն

է ու Փիկարօն: Սակայն այդ « գրագիտական կանոններ », ըսուածները, զորս կ'արհամարհեն, սկզբունքներ են գրական քննադատութեան, որք կը ծառայեն գրական գործոց գեղեցկութիւնքն ու թերութիւնքն որոշելու, ոճի ու բացատրութեան տարբերութիւններն ըմբռնելու, անուանելու, գիտակցաբար ճաշակելու զայնս: Կան որ ճաշակի ընդհանուր ու անյեղի կանոններ են, մարգկային բանականութենէն բղխած, որք Ուլրատիոսէն ցայսօր նոյն են, եւ կան որ դարուն, դպրոցին, ուսուցչին համեմատ բարեփոխուած, ընդլայնուած կամ սեղմուած են: Ինչպէս ճարտարապետական արուեստն իր յատուկ բառերն ունի անուանելու համար շինուածոց զանազան մասերը, զարդոց զանազան ձեւերը, ոճի ու կերպի տարբերութիւնները, նոյնպէս եւ գրագիտական ունի իրեններն՝ անուանելու, դասակարգելու համար մարգկային խօսքին մէջ դիտուած կերպակերպ ձեւերն զգացման ու մտածման արտայայտութեան: Այս ամէնը ճաշակը կ'առաջնորդէ, կը լուսաւորէ, ու կրնայ անօգուտ չըլլալ, մինչեւ իսկ տարրական ծանօթութեանց կարգն համարուիլ, քիչ թէ շատ գրական կրթութիւն ստացած մարդոց համար: Այդ ձեւերուն ամէն գրուածներու մէջ, արձակ թէ ոտանաւոր, կարեւր է պատահիլ, եւ ոչ թէ միայն ակնարկուած գրագիտաց գործերուն մէջ: Եթէ այս բան ծիծաղելի կ'ընէ զիրենք, ապա ծիծաղելի են ամէն գրագէտք ու ամէն խօսողք ալ, ամէն մարդիկ ալ. վասն զի ինդիրը բառին կամ անունին վրայ չէ՝ այլ կերպին վրայ. առանց անունը գիտնալու՝ ամէն օր մարգկային խօսից մէջ այդ ձեւերն ի կիր կ'առնուին. ամէն ուամիկ Պ. Ժուռտէն մ'է որ « արձակ կը խօսի առանց գիտնալու », շոմբէն, Ախրգիլէն, Գեմսթենէն, Կիկերոնէն, Շէքսպիրէն, Միլտոնէն, Շիլլերէն, Ֆէնըլոնէն, Հիւկոյէն, Լամարթինէն քաղուած են այն ձեւոց եւ յատկութեանց օրինակներն զորս Գրագիտութեան դասագրքերը կ'ուսուանասիրեն: Յանցաւոր են ասոնք կամ արդեօք արհամարհելի՞ ձեղ համար, վասնզի իրենց գրածներուն մէջ կան եղեր տարակուսութիւններ, դիմառնութիւններ, հաղորդակցութիւններ, հակադրութիւններ, եւն: Եւ սակայն հոս պէտք է որ յանգի ձեր արտայայտած արհամարհանքն գրագիտական ձեւերու մասին:

Աւելի հիմնական տարբերութիւն մը, խաւարը լոյսէն զատող անջղպետի մը պէս, այն է որ իրենք « բնապաշտ » են, իրենք

մեծ ու ընդհանուր գծերով չեն բաւականանար այլ մանրամասնութիւններ կը փնտռեն, միշտ նոր, զանազան, անսպասու, եւ իրենց էջերն «իրականութեան զգայութիւնը սուտը», կեանքով համակ թրթռուն էջեր են, ու անձինքն՝ զորս կը պատկերեն՝ ոչ այլ եւս վերացական էակներ, այլ «միս ու ոսկոր ունեցող մարդիկ»։ Իրենք մարդը կը փոխադրեն մարդկային հոգւոյն մանուածներուն մէջ ուր կը պտտին, դիտողութեան ջահն ի ձեռին, անցնելով «մեծ պողոտայներէն, մանելով կողմնակի փողոցներն ու մինչեւ իսկ ամենէն պզտիկ խորշերը»։ Թող ընթերցողը չզարմանայ այս վերջին տողերուն վրայ. կ'երեւի թէ գրողը մարդկային հոգին նման կ'երեւակայէ Բերայի կամ Ղալաթիոյ փողոցներուն որք այնքան ծանօթ են իրեն, իբրեւ ծակուծուկ շրջող ու դիտող (ոչ թէ «գիշերնոցով») գրագիտի։ Անձնագովութեանց այս շառաչաձայն լեռնակուտակ ալիքը տեսնելով՝ մարդ պիտի կարծէ թէ այդ նորերու իւրաքանչիւրը մէկ մէկ ֆլուպեո, Չոլա, Սի տը Մօրասան է. բնապաշտ դպրոցին խանդով յափշտակուած, պահ մը կարծես իրենց վարպետներուն տեղ դրած ու անոնց արտադրութեանց հեղինակ երազած են իրենք զիրենք. ապա թէ ոչ վէպի մը, քանի մը վիպակներու, քանի մը պատկերներու համար ներերի՞ է այսքան արմուկ։ Ղալաթոյն չէ՞ մանաւանդ որ ուրիշներն ընեն այդ արմուկն իրենց համար, հոչակեն այդ կարողութիւնները։ Ի՞նչ է այդ իրական կամ բարեպաշտ դպրոցն որոյ վարպետն իսկ, Չոլա, չէ կրցած իր սկզբանց ճշգրիտ կիրարկութիւնն ընել իւր վիպասանութեանց մէջ, որպէս կը դատէ ու կը հաստատէ նշանաւոր գրական քննադատն, Ժիւլ Լըմէդը։ «Չոլա, կ'ըսէ, քննադատ մը չէ, ոչ ալ բնապաշտ», (naturaliste) վիպասան մը, այն իմաստով որով կը հասկանայ զայն։ «Ընդհակառակն «իտէապաշտ», (idéaliste) մը կը գտնէ զայն, թէ եւ ի հակառակէն, իրականութիւնը չափազանցող, «աւելի հնարող քան դիտող, որ ուզելով պատկերել դաս մը, ջոկ մը, զոր վեր ի վերոյ կը ճանչէ, եւ զոր որեւէ կերպով մը կ'երեւակայէ նախ քան որեւէ ուսումնասիրութիւն, կը յղանայ գործողութիւն մը շատ պարզ ու շատ լայն, ուր ստուար խումբեր կարենան շարժիլ եւ ուր լրիւ երեւիլ կարենան խիստ ընդհանուր տիպերը»։ Չոլա իր «Փորձառական վէպը», անուն գործին մէջ կ'առաջարկէ, հետեւելով

գիտութեան, վէպը գործիք մ'ընել ընկերական երեւութից վիրոր-
 ճարկութեան, ու կը ծաղրուի, վասնզի վիպասանն առառուեցն
 դիտողութիւններ կրնայ ըրած ըլլալ յառաջ քան վիպագրեցն,
 իսկ վէպն երբեք չի կրնար փորձ մը, ստուգման միջոց մը նկա-
 տուիլ, քանի որ գործողութիւնը ո՛չ թէ բնական՝ մեզմէ անկախ
 ընթացքի մը պիտի հետեւին, այլ մեր տուած ուղղութեան, որ
 առառուելն արդիւնք կրնայ ըլլալ մեր դիտողութեանց որոց մէջ
 միշտ մեր եսը, մեր ակնոցին գոյնը կայ: Իսկ գալով Զոլայի՝ իբրեւ
 վիպասան՝ մասնաւոր նկարագրին, Ժամանակցաց հեղինակը
 սակայն կը ներկայացնէ մեզ զայն. «Այժմ որ նա (Զոլա) գտած
 է իւր ճամբան ու Նիւթը, հետզհետէ երեւան կու գայ իբրեւ
 վայրենի ու տխուր բանաստեղծն կոյր ընտելմանց, բիրտ կրից-
 մարմնական տուփանաց, մարդկային բնութեան ստորին ու նողկալի
 մասանց: Ինչ որ մարդուն մէջ կը հետպըրբէր զինքն, այդ՝ անա-
 սունն է մանաւանդ, եւ ամէն մէկ մարդկային տիպարի վրայ՝ այն
 մասնաւոր անասունն զոր այդ տիպարն յինքեան կը պարունակէ:
 Զայս կը սիրէ նա ցոյց տալ, ու մնացորդն ի բաց կը յապաւէ,
 հակառակ բուն իտէպպաշտ վիպասանաց ըրածին», Ահա զո՛վ
 կ'առնուն մեր նոր գրողներն իրենց առաջնորդ, եւ ահա ինչո՞ւ
 այնքան հպարտ են ու այնքան բարձր մեզմէ որ անկարելի է մեզ
 «գիրնք հասկնալ»:

Արդարեւ այս մասին կը ճանչեմք մեր ապիկարութիւնը,
 մեր անդարմանելի ապիկարութիւնը: Մեղ բնաւ կարելի չպիտի
 ըլլայ մարդկային բնութեան վրայ Զոլայական, Կիւտը-Մորասա-
 նական յոռետեսութեամբ տոգորուիլ, մարդուն վրայ լոկ գազան
 մը տեսնել, վերացում ընել անոր վեհ հոգւոյն ու ազնուատենչ
 իտէպին, համարիլ զայն կոյր ճակատագրային բնազդմանց
 զսպանակներով լարուած մեքենայ մը, անտարբեր ըլլալ բարոյա-
 կանութեան ու անհաւատ՝ յառաջդիմութեան, եւ մարդն ու ըն-
 կերութիւնը, ինչպէս եւ աշխարհը, նկատել լոկ իբրեւ նիւթ
 արուեստի, պատկերներու, նկարագրութեանց, գրական սնտիա-
 ուութեան, դուարձութեան: Նորերուն կը թողուք այդ տխուր
 փառքը՝ եթէ կը յամառին անոր սիրահարները մնալ, իսկ «հնոց
 ու նորոց», արդեանց դատաստանը՝ թո՛ղ ապագայն ընէ զայն, ու
 նա միայն կրնայ ընել զայն արժանաւորապէս:

Միայն թէ բան մը կայ. այդ նորերն, մանաւանդ անոնցմէ մէկ երկուքն, զեղէին քիչ մ'իրենց յաւակնութենէն, նոյն իսկ յանուն բանականութեան: Իրենք տաղանդ ունին, այո՛, այս չուրացուիր, մանաւանդ նկարագրական տաղանդ մը, եւ կրնան զիրենք սնուցանող գրականութեան արձագանգն ըլլալ, որպէս իրենք իսկ կ'ըսեն, բաւական յաջողութեամբ: Բայց միամտութիւն է կարծել թէ նկարագրական սեռին մէջ կը կայանայ բովանդակ գրականութիւնը, կամ թէ վէպի, եւ այն ալ բնապաշտական վէպի, եւ թէ այդ սեռէն դուրս ոչինչ կայ որ արժէ գրականութիւն կոչուիլ ու մշակուիլ: Նկարագրել նկարագրելու համար՝ կրնայ ձանձրալի դառնալ, երբ նպատակ մը չերեւի բացայայտ, բարոյական ու ընկերային նպատակ մը. աննպատակ ընտրուած մանրամասնութեանց այդ դէպերն առաւաւելն կրնան զարմացնել իբրեւ քաջազոր ճարտարի (virtuose) գործ կամ լարախաղացի փորձեր. բայց գաղափարն այդ պատկերներուն, փիլիսոփայութիւնն անոնց. — է՛հ, նոքա կը խորհին, նոքա կ'զգան ինքնին: Ա՛ղաչեմ, քիչ մ'ալ դուք ինքնին բարձրաձայն խորհէիք, ուղղակի պարզէիք մեզ ձեր զգացումն, երկդիմութեանց տեղի չձգելու համար: Պէտք չէ նոյնպէս կարծել թէ ընդհանուր տիպերը ոչինչ են. անոնք դասու մ'ընդհանուր գծերը կ'ամփոփեն, անհատներու խումբ մը կը ներկայացնեն մէկ դէմքի վրայ, զանց առնելով կարի անհատական ու պատահական հանգամանքներ. այսպիսիք՝ ճիշդ ըլլալու համար՝ առաւել ընդարձակ դիտողութեան մ'արդիւնք պարտին ըլլալ եւ ոչ նուազ զգացում կը պահանջեն: Դասական գրականութեան քանի՛ այսպիսի տիպեր անմահ մնացած են: — Վէպէ ու վիպակէ զատ դեռ շատ մը գրական սեռեր կան, արձակի եւ ոտանաւորի, որք կը պատասխանեն մարդկային մտքին ու սրտին զանազան պէտքերուն եւ որոց մշակումն յաճախ շատ աւելի կարեւոր է ընկերութեան զարգացման քան վիպասանութեանն: Ո՛չ Պագոն, ո՛չ Պոսիւէ, ո՛չ Տիկին տը Սէվինետէ, ո՛չ Բասքալ, ո՛չ Մոնդէսքիէօ, ո՛չ Ֆրանքլին, ո՛չ Միշլէ, ո՛չ Կամպէրա վէպ չգրեցին, այլ Դպրութեանց Պատմութեան մէջ անջինջ հետքեր թողուցին: Գիտեմք որ քաղաքական Տնտեսութեան վրայ ճառ մը գրել, մեր նորոց համար, գրագէտի աշխուժութիւնը կորսնցնել է. բայց ընթերցողը գրականութեան մէջ զուարճութենէ աւելի կամ զատ մտքի հաստատուն

կերակուր, կենսաշէն նիւթ կը խնդրէ, իտէալ մը կը փնտռէ զինքն հրապուրող, քարշող, ազնուացնող, բարձրացնող: Ո՞վ պիտի ընէ այս ամէնը. սառն, անհոգի, սկզբնազուրկ, հեգնած պիտարուեստասիրութիւնը (dilettantisme) եի տը Մորասաններու, որոց սիրահարն էք: Այդ բնապաշտական կոչուած դպրոցն ալ միամտորէն յաւիտենական մի կարծէք. Գրութիւններ ու Գպրոցներ յաւիտենական չեն կրնար ըլլալ, քանի որ ծայրայեղութեան ու միակողմանի տեսութեան վրայ հիմնուած են: Ինչ որ կայ ի նոսա բնական ու բանական՝ այն միայն կը մնայ կենդանի, եւ յաճախ այն կար ի վաղուց:

(Արեւելք, 1892)

3. «ՎՈՂՈՒՈՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»

ՆՊԱՏԵԼԻ ԿԵՏԵՐ

Հայը ինքնայատուկ գրականութիւն մ'ունենալու ընդունան է. եւ եթէ է այո՛, Պոլսեցւոյն անկ է ըլլալ անոր գլխաւոր գործիչը, թէ ոչ գաւառին վիճակուած է այդ գերը, իբրեւ ցեղին յատկութիւններուն աւելի հաւատարիմ աւանդապահին:

Եթէ ոչ բոլորովին այս բառերով, բայց գէթ այս իմաստով, կարծեմ, առաջարկուեցաւ «Մասիսոյի մէջ գրական հարց մը, որուն արդէն քանի մը պատասխաններ տրուեցան:

Մեր գաւառացի գրագէտներուն մէջ, որոցմէ արդէն ծնունդ առած է այս խնդիր, զօրաւոր հակում մը կայ ընդհանրանպէս խորհելու թէ Պոլսոյ Հայոց գրականութիւնը ցարդ չէ ունեցած բնաւ սոցմային հարազատ դրոշմ, եւ հետեւապէս եթէ ցեղին մէջ յարմարութիւն իսկ կենայ առանձնայատուկ գրականութիւն մը յառաջ բերելու, անկարելի է որ Պոլսոյ գրագէտներուն միջոցաւ ի յայտ գայ այն: Պոլիս եւրոպական մատենագրութեան ծիծաղելի հետեւողութիւն մ'ըրած է միայն: Ու այդ Պոլսական պիտակ գրականութեան ծաղոն անթիւ ձեւերու տակ քանի մը տարիներէ ի վեր կը մարզէ մեր գաւառացի գրիչները: «Վաղուան գրականութիւնը» գաւառացւոյնը պիտի ըլլայ ու պէտք է որ ըլլայ, գաւառացւոյն որ բնիկ աւանդութիւններու գանձարանն ունի իր յիշողութեան մէջ, եւ որ գաւառաբար-

բառներու երկններանգ ճոխ երանգապնակն ունի իր ափին մէջ, մինչդեռ Պոլին՝ իր լեզուն իսկ կորսնցուցած՝ թոյրէ ու բոյրէ զուրկ քմահաճ բարբառ մ'ստեղծած է, զայն բոլոր ազգին հարկադրելու տարօրինակ յաւակնութիւնն ալ ունենալով: Այս հիմերուն վրայ եզրակացութիւնն ալ շատ դիւրին ու յայտնի կ'երեւայ. — նոր լեզու, նոր գրականութիւն. որ գաւառական գոյն ու դրոշմ ունենան եւ գաւառացւոց ձեռքով մշակուին:

Միայն՝ մեզ կը թուի թէ նկատելի կէտեր կան որք ուշագրութենէ կը վրիպին:

* * *

Եւ նախ եւ առաջ, ըստ մեզ, պէտք չէ որ խնդիր ըլլայ թէ Հայը ինքնայատուկ գրականութիւն մ'ունենալու ընդունալ է: Գիտենք որ ամէն ժողովրդոց գոյութեան պայմանք՝ իրենց տարբերութեան մէջ՝ աւելի կամ նուազ նպաստաւոր են գրական ծաղկման, մատենագրութեան ինքնատիպ հեշտ զարգացման: Համեստ գրականութիւն մ'ունինք ու կրնանք ունենալ, որ պատկերն է մեր կենքի պայմանաց, ինչպէս ամէն գրականութիւն՝ իր շքեղ կամ նսեմ կացութեամբ՝ կը բացատրէ ընկերական բարեխառնութեան վիճակը զայն արտադրող ժողովրդին: Այդ վիճակը կ'որոշէ, կը սահմանէ նիւթը որ կրնայ առարկայ ըլլալ գրականութեան, գրական ձև ստանալ: Անշուշտ աղքատիկ աղկաղկ գրականութիւն մը աւելի կամ նուազ կախում կ'ունենայ օտար հարուստ մատենագրութենէ, բայց քանի որ տարբեր ցեղ մ'է որ այդ մատենագրութենէն օգտուիլ կը ջանայ, բնականաբար իր մասնաւոր կնիքը կը դնէ իր փոխառմանց վրայ, վասնզի հարկ է որ պատշաճեցնէ զայն տարբեր միջավայրի մը պէտքերուն ու ճաշակներուն: Ահա՛ ինչու համար մացարձակ նմանողութիւն մը չի կրնար ըլլալ. անիմաստ բան մը կ'ըլլար այդ, նպատակէ ու ներգործութենէ զուրկ:

Պոլիսը թրքահայ գրականութեան համար կեդրոնի մը առաջնորդող դերն ունեցած է եւ ունի ցարդ: Ասիկա զարմանալի չէ անշուշտ: Մայրաքաղաքին մէջ, որ նաեւ Հայոց սոհմային-եկեղեցական համայնքին կեդրոնը եղած է, ապրող ստուար հայ հասարակութիւն մ'ի հարկէ պիտի ունենար այդ առաւելակշռութիւնը, ո՛չ միայն սոհմային-եկեղեցական հեղինակութեան տեսա-

կէտով, այլ նաեւ մտպւորականին, որ կեդրոնին ունեցած քաղաքակրթական առաւելութիւններով անշուշտ պիտի ըլլար աւելի զարգացեալ: Պոլսական գրականութիւնն եղաւ այն ինչ որ պիտի ըլլար, օտարաց հետ շփման դիւրութիւններով, զոր մայրաքաղաքը, մանաւանդ Պոլսոյ պէս ծովեզերեայ մայրաքաղաք մը կ'ընծայէ, Պոլսահայը ի հարկէ նուազ ինքն իր մէջ ամփոփուած պիտի ձեար, եւրոպական զարգացեալ գաղափարք ու սովորոյթք մուս պիտի գտնէին իր մէջ, իր տեսութիւնները պիտի բարեփոխուէին ու ընդլայնէին, իր զգացումները պիտի նրբանային ու բազմազանէին, եւ իր կենցաղը նախկին պարզութիւնը կորսնցնելով՝ նորանոր պէտքերով ու պահանջումներով բազմերանգ ճոխութիւն մը պիտի ստանար: Իր շինած գրականութիւնն հարկաւ, արձագանգ իր կեանքին, պիտի կրէր իրեն յատուկ նկարագիր մը որ իր գաւառացի եղբայրներուն քիչ մը տարօրինակ ու կնճռոտ, եւ հետեւապէս օտարադէմ պիտի երեւէր, ինչպէս, պէտք է ըսել, քիչ շատ ամեն մայրաքաղաքի գրականութիւն տարօրինակ ու խառնակ կ'երեւի երկրին ներքին նահանգաց ցեղակից բնակիչներուն: Բայց այս ըսել է թէ արդարեւ օտարահամ, օտարաձեւ եղած է բոլորովին Պոլսահայ գրականութիւնը: Արեւի՞ բան է. ստուարութիւ հասարակութիւն մը, որ միշտ սնած է գաւառին շարունակ տուած առատ տարրերով, որ միշտ յարաբերութեան մէջ եղած է իր տոհմակից եղբարց հետ, որ իր միջավայրին մէջ՝ առանձնյատուկ կրօնական-տոհմային կեանք մ'ունեցած է եւ նոյն իսկ այդ տեսակէտով կեդրոն մ'եղած գաւառական վիճակներուն, կրնայ իր ցեղային յատկութիւնները կորուսած ու գլխովին օտարացած հաստուած մը համարուիլ: Զարգացած բարեշրջուած է, ինչպէս միեւնոյն ազդեցութեանց տակ պիտի ըլլային գաւառացի գրողներն ալ, բայց ներքնապէս նոյն ցեղն է միշտ. բանիբուն դիտողը նոյն էական յատկութիւններն ու թերութիւնները պիտի գտնէ Պոլսեցի ու գաւառացի Հայերուն մէջ, ինչպէս հասարակաց ունին դեռ շատ մը նախապաշարումներ, ասութիւններ, աւանդավէպեր ու սովորութիւններ:

Ինչ բանով իրաւունք կարելի է ունենալ ըսելու թէ Պոլսեցիները օտար գրականութիւն մ'ըրած են: Քնարական բանաստեղծութեան արգի ծաղկումը մեր մէջ, վերջացող դարուն եր-

կրորդ կիսուն սկիզբներէն գոյութիւն ստացած, թերեւ աբել-մտեան արուեստին քերթողական ձեւերը փոխ առաւ, բայց ան-հատին ու համայնքին կենաց երեւոյթներէն ներշնչուեցաւ: Հիւար-լեան, Շերենց, Մամուրեան, Յիկին Յիւսար, Զոհրայ վիպագրեցին, ոչ անշուշտ եւրոպական կեանքը, այլ մերը իրենց կրցածին չափ, եւ եթէ բուն գաւառական ներքին վիճակներուն կեանքը չէին կրցած ցոլացնել, ինչպէս Գաւառացի վիպագիր մը պիտի ընէր, չի կրնար ըսուիլ սակայն թէ օտար միջավայր ու բարքեր իրենց նիւթ ունեցան: Անմասն Պարոնեանը մեր բարուց թերութիւնները երգիծաբանեց:

Անտարակոյս աւելի համազգային ու եւրոպական գոյն մը ունեցած են այն գրուածներ որոնց հեղինակներն ընկերական իմաստասիրական հարցեր իրենց նիւթ առած են, եւ այդ ալ այն անսակ խնդիրներու բնութեան հետեւանքն է, որք ամբողջ մարդ-կութեան վերաբերող հասարակաց խնդիրներ են, եւ յետոյ անոնցմով հետաքրքրուող Հայն ի հարկէ պիտի ազդուի եւրոպեան իմաստասիրութեան դպրոցներէն, քանի որ, ինչպէս երբեմն Աթէնքի, Աղեքսանդրիոյ, Բիւզանդիոնի դպրոցներն, այսօր ալ եւրոպականներն են մտաւոր շարժման ամենէն զարգացեալ կեդրոնները: Չերջապէս, անկարելի է ուրանալ որ այդպիսի ընդհանուր գաղափարներով զբաղել սիրող հայ հրատարակագիրներ յաճախ անոնց կիրառուած ընել ջանացած են մեր ցեղին գաստիարակութեան, գրականութեան, բարոյական ու անտեսական կացութեանց: Հարկ չէ, կարծեմ, յաւելուլ թէ գրականութեան այսպիսի ճիւղ մը մարդկային ըլլալով՝ չի դազրիր առհասարակ ըլլալէ ու օգտակար դառնալէ, ըստ որում ամէն ժողովուրդը չեն դազրիր մարդկութեան վերաբերելէ, եւ ինչ որ կը նպաստէ մէն մի ցեղի մէջ մարդկութիւնը մշակելու, այնու իսկ զօրաւոր ստատր մը կը լինի ցեղին մշակութեան: Անձուկ մտածում է կարծել թէ առհասարակ գրականութիւնն այն է միայն որ առհասարակ անհրաժեշտներն ու բարքերը ներկայացնելու մէջ կը սահմանափակուի՝ իբրեւ մի չինական պարսպի մէջ: Թէեւ ցեղին ազգեցութեան բաժինը միշտ կայ, բայց ակնբեր է թէ Գոռնէյլ եւ Ռասին գաղիական ազգին բարքերը ներկայացնել նպատակ չունեցան իրենց ազգերգութիւններուն մէջ, ոչ Պոսիւէ իր քարոզներուն մէջ, ոչ Վոլգեր եւ Ռուսօ իրենց իմաստասիրական գործերուն մէջ, ոչ ալ Հիւկօ իր

այնքան գերազանցապէս մարդկային քերթուածներուն մէջ: Նման բազում օրինակներ կրնանք յիշել ուրիշ գրականութիւններէ, եւ սակայն ո՛չ նուազ այդպիսի գործեր մասն ու պատիւն են այն ազգին մատենագրութեան որուն լեզուով գրուեցան: Մեր Եզնիկը հազիւ ինչ ինչ տեղեր ակնարկութիւններ կը պարունակէ մեր անցեալ բարուց ու աւանդութեանց. կը դադրի՝ մեր հին տոհմային գրականութեան ամենէն չքնաղ մէկ գոհարն ըլլալէ, նոյն իսկ հակառակ իր վերջերս ապացուցուած փոխառութիւններուն:

* * *

Որքան աւելի սխալ մ'է կարծել — ինչպէս գաւառական շրջանակներու մէջ միտում մը սկսած կ'երեւեր խորհելու — թէ տոհմային գրականութիւնը գրեթէ միայն ցեղային հին նախապաշարմանց, սովորութեանց, առածներու, հէքեաթներու ու ռամկական երգերու հաւաքմանց մէջ կը կայանայ, Նախ զասոնք հաւաքելը բուն գրականութիւն ընել չի նշանակեր. եթէ մեր պառաւները քիչ մը գրել կարգալ գիտնային, այդ գործը լուսագոյնս պիտի գիտնային ընել իրենք: Չեմ ուրանար ասոնց մեծ կարեւորութիւնը ազգագրական, հնախօսական ու մինչեւ իսկ պրական տեսակետով, վասն զի ժողովրդական անգիր գրականութիւն մը ի յայտ կը բերեն ու նոյն իսկ ատաղձներ կրնան մատակարարել գիտնական գրականութեան մը: Բայց առ այժմ այդ համարումը չէ գրականութիւն, ո՛չ ալ գաւառական բարքառոց մինչեւ ամենէն ռամկականներուն ու աղաւաղեալներուն համար եղած բառական ու քերականական ձեւոց հաւաքումներն, որոց այնքան խղճմտօրէն անձնատուր եղան վերջերս գաւառացի ուսուցիչներ ու գրասէրներ, բուն գրականութիւն ընելու միամիտ վստահութեամբ: Բուն գրականութիւնը կը շինուի մշակելով գրական այլեւայլ սեռերէն մին կամ միւսը, արձակ թէ ոտանաւոր, երբ մին կը տաղերգէ, միւսը կը վիպէ, մի ուրիշը կը թատերագրէ, սա կ'ատենաբանէ կը վարդապետէ, նա կը պատմագրէ, կամ կ'օրագրէ, եւ մինչեւ իսկ կը նամակագրէ, վասն զի, ինչպէս Մատամ աը Սէվինիէի համար ըսուած է, մարդ երբեմն ամենէն գեղեցիկ գիրքը կը շինէ երբ բնաւ միտք չէ ունեցած գիրք շինելու, — աւելցնենք նաեւ, երբ գրագէտը ճարտար

Թարգմանութեամբք բնիկ մասնագրութեան մէջ կը ներածէ օտար գրականութեանց ընտիր ու շայեկան գործերը այս այլազան սեռերուն վերաբերող, որք անոր համար կը լինին նոյնքան խրացուցեալ հարստութիւններ: Եւ այս ամենէն՝ ժողովուրդը, իբրև բարոյական ու մտաւոր սնունդ, կը քաղէ ներշնչումներ, տպաւորութիւններ եւ գաղափարներ որք կ'ուղղեն, կը սփռին, կ'աշուտեն զինքը, ճշմարտին լոյսը ու գեղեցկին ճաշակը իր մէջ կը շատցնեն: Ուրիշ բան է երբ ձեռնհաս գրողներ գաւառական ավանգութեանց մթերքէն հում նիւթեր քաղելով՝ անանցմէ արուեստին ճարտարութիւններով զարդարուած գեղեցկագիտական գործեր դուրս կը բերեն, կամ պարզապէս գաւառին կեանքը իր բնութեան շրջանակին մէջ հրապուրիչ ու կենդանի ոճով մեզ կը ներկայացնեն, ինչպէս ըրած է Սրուանձտեանց, ու ինչպէս կ'ընեն Թլկատինցին, Ռ. Զարդարեան, Գեղամ իրենց սեղական բարբերու եւ դէմքերու գեղեցիկ պատկերներուն մէջ: Սակայն նոյն իսկ այս ձեւով գրուածներ եւ դեռ միեւնոյն շինուածանիւթէն քաղուած աւելի երկարաշունչ վիպական գործեր, ինչպէս կ'երազուի, չեն կրնար յաւակնիլ միակ հարազատ ներկայացուցիչներն ըլլալ տոհմային գրականութեան մը ու իրաւունք տալ արհամարհանքով նայելու կեդրոնին մէջ ի յայտ եկած գրական գործունէութեան:

* * *

Գաւառի լեզուներն ալ պիտի մնան գաւառական տեղական բարբառներ, ցորչափ կայ կաղմեալ կեդրոնի գրական լեզուն իր ընդհանրականութեան տիրող հանգամանքով: Ինչ օգուտ այս ինչ գաւառաբարբառին յատուկ բառերուն ու ոճերուն ճոխութիւնը, մի ուրիշին այս կամ այն ձեւերուն լեզուաբանական տեսակէտով: Բարձրագոյն հնութիւնը կամ հարազատութիւնը: Անոնք վերածուած են մասնաւոր շրջանակի մը մէջ գործածելի ու հասկնալի ըլլալու վիճակին, եւ որչափ անոյշ հնչեն տեղացի ականջներու՝ անհետեւ իսկ կրնան թուիլ հեռաւորներու: Կարծեմ, խորհողներ եղած են մեր մէջ ու մինչեւ ցարդ կան թելադրողներ թէ բուն ազգային գրական լեզուն պէտք է շինուի զանազան գաւառաբարբառներէ փոխ առնուած տարրերով՝ որոց

մէջ Պոլիսը, իբրեւ իւրութիւն ձեւերու եւ ոճերու մէջ աղքատ, ունենայ, անշուշտ, նուազագոյն բաժինը: Լեզուաբանական օրինաց փոքրիկ հմտութիւն մը կը բաւէ այս կարծեաց անբանաւորութիւնը ըմբռնելու, որ գաւառացուց ուղղուած շողքորթութիւն մ'է միայն, ոչ այլ ինչ: Լեզուները կը կազմուին ու կը ձեւափոխուին իրենց յատուկ օրէնքներու համեմատ, ոչ թէ մարդիկ կը նստին կը շինեն զանոնք ըստ հաճոյից: Ոչ թէ գաւառաբարբառք իրարու հետ կը ձուլուին ազգի մը մէջ գրական լեզուի միութիւն մը յառաջ բերելու համար, այլ անոնցմէ մին, բացառիկ կարեւորութիւն մը ստանալով իր գրուած դիրքէն, ընկերային ու երբեմն ալ մատենագրական պարագաներէ, իր քոյրերուն մէջ տակաւ առաջնութիւն մը ձեռք կը բերէ, կը բարեջըջուի, կը զարգանայ ու վերջապէս տիրող ընդհանրացած լեզուն կը դառնայ: Ցեղական վիճակի մէջ մնացած բարբառներէն աւելի կամ նուազ բառեր ու ձեւեր կրնան ընդունուիլ ու տարրանալ անոր մէջ՝ երբ մտքի կամ ճաշակի պէտք մը կը գոհացնեն, բայց այդ՝ բան մը չի նշանակեր ընդհանուր կազմածին քով որ իր յատուկ նկարագիրն ունի: Այսպէս եղած է ամեն լեզուներու համար: Յոյն հին լեզուին գաւառաբարբառներէն աստիկեանը եղած է գրաւոր յունարէնը, լատիոնի կամ Լուսիմի բարբառը եղած է գրական լատիներէնի հիմը, գրական արգի գերմաներէնը ըարթը գերմաներէն կոչուած գաւառաբարբառէն յառաջացած է, գաղիերէնը՝ Իլ-արՖուանսի տեղական լեզուէն, իտալերէնը՝ Դոպքանայի լեզուէն, ու գիտենք որ Պոլսոյ օսմաներէնն է այսօր թուրք գրական լեզուն: Եւ պէտք է գիտել կէտ մը որուն թերեւս ցարդ ուշագրութիւն չէ դարձուած: Այն է թէ Պոլսահայոց ժողովրդական լեզուն, նոյն իսկ այն աղքատութեան պատճառաւ ուր ինկած կը գանուէր արդի գրական աշխարհաբարին կազմութենէն յառաջ, բնիկ հայ բառերու ու ոճերու մասին, երբ, իր դիրքէն ստիպուած ու իր գրողներուն պէտքերէն մղուած, մշակուելու հարկն զգաց, իր պէտքը գլխաւորապէս, մասնաւոր բառամթերքի մասին, գրաբարի շտեմարանէն լեցնել ձգտեցաւ, իբրեւ ամէն Էայու հասարակաց գանձարանէ մը, եւ այս պարագան ոչ նուազ նպաստած է, կարծեմ, անոր արագ ծաւալման ու դիւրաւ ընդունելութիւն գանձելուն գաւառական

չըջանակներու մէջ: Ոչ միայն իր բառագրքին պարագները, զորս օտար բառեր գրաւած էին, լեցուց գրաբարին հարազատ անեղծ ձեւերով, այլ եւ ունեցած ընդհանր կոտորուք աղաւաղ բառերուն անզ ալ (քաղքըներ, քնկտիք, հար, մար, ախպար, ձուն, արզեւ, աշկերտ, օղջորսակ, ձառք, մենծ, օխտը, էխտել, ըլմանիլ, ալլըման եւայլն) վերահաստատեց անոնց հին կանոնաւոր ձեւերը որք ամէն հայ եկեղեցիներուն մէջ կը լսուին նոյնութեամբ: Այս կերպով հին գրաւոր լեզուին անդն անցնելու ամենէն աւելի յարմարութիւն եւ արժանաւորութիւն ստացած եղաւ, ներկայացնելով ըստ կարի ընդհանրական դիմագծութիւն մը, ըլլալով կերպիւ իւր լեզուական այն հասարակաց գեախնը ուր պուսնց շատ խրաչելու պիտի կրնային միանալ ամէն հայ գրողները, եւ նոեւ իր առած ուղղութեամբն՝ առանց օտարացման՝ զարգանալու ամենէն մեծ դիւրութիւնն իրեն ստեղծած, անդեան ամենէն բնական ու հարուստ աղբիւրը գտած ըլլալով: Այսօր անկարելի է չխոստովանիլ որ Պոլսահայ գրագետներու միջոցաւ մշակուած ու կազմուած գրական աշխարհաբարը գեղեցիկ, ներգաշնակ, ճոխ, բազմերանգ ու ճկուն լեզու մը եղած է, ու զայն կը գրեն դարձեալ մեր գաւառացի գրողներն ալ, խնամով ուսումնասիրելով ու ջանալով իւրացնել անոր բացատրութիւնքն ու կերպերը, մինչեւ անոր ամենավերջին նորաբանութեանց մէջ իսկ հետեւելով անոր: Եթէ մերթ ընդ մերթ, քիչ թէ շատ անղական գոյն մը տալու համար ոճին՝ երբ գաւառական դէմք ու պատկեր մ'է իրենց նիւթը (որուն համար չենք պախարակեր զիրենք) կը դիմեն գաւառական ասութեանց, սակայն ամենամեծ մասամբ Պոլսական ընտիր աշխարհաբար մը կը տիրէ իրենցմէ լաւագոյններուն գրութեանց մէջ, այնպէս որ մարդ կրնար զանոնք Պոլսեցւոյ գրութիւն կարծել, եթէ յաճախ նիւթը ու երբեմն գիտմամբ դրուած ինչ ինչ տարագէժ բառեր գրողին ծագումը չյայտնէին: Թողունք կարեւորութիւնը, բայց փափաքելի՛ էր որ այդ լեզուն դառնար խառնակ ու հում գաւառականի մը ուր կող տարրա, կը ըուսնայ, ըլզըմ ի զայ հողա, Դաւիթ զնկուաւ ու կայնաւ, եւ դո՞ր կ'երթաստի պէս նախագասութիւններ ու ճուկուր (կացին), տու (ճիւղ), ճոր (ջուր), տարնանակ, նարնանակ (այդպէս, այնպէս), թլմշա (թառամիլ), թամաշա (գիտել),

դորդ (ուղեղ), համբա (հարուստ), քնծօն (խբ թէ), պլզտէք (աղաք), մուկ մուկ անել, քնէճ անել եւ ը. ի նման բառեր ու ոճեր քով քովի գային ու լեզուին առաղձը կազմէին: Անշուշտ այս կամ այն գաւառաբարբառն ալ իր մէջը կրնայ մշակուիլ սեղացի գրագէտներէ ու արտագրել իր մասնաւոր հրապօյրն ու սիրողներն ունեցող փոքրիկ գրականութիւն մը, բայց չի կրնար երբեք տեղն անցնիլ այն գրականութեան որուն գործին է ընդհանրացեալ գրաւոր լեզուն, ու վառարանը՝ կեդրոնը: Այդ ընդհանրացեալ գրաւոր լեզուն արգելք մը չէ, սակայն, որ գաւառական կեանքին մօտէն ծանօթ կարող գրիչներ փորձեն վիպական ու թատերական գործերու մէջ պատկերել այդ կեանքի այլ եւ այլ երեւոյթները, նոյն իսկ քիչ մ'ալ ըստ պատշաճի համեմելով իրենց գրուածը սեղական ասացուածներով: Ամէն հայ ընթերցող անշուշտ համակրանք պիտի ողջունէ անոնց այդպիսի գործերը, ինչպէս համակրած ենք միշտ այն գրական պատկերներուն որոց մէջ գաւառացի յաջող գրագէտներ մերթ ընդ մերթ ներկայացուցեր են մեզ զիրենք շքապատող բնութիւնն ու ընկերականութիւնը:

* * *

Ուրիշ մէկ երկու կէտեր ալ կան զորս կը շփոթեն, ըստ իս, «վաղուան գրականութեան», գաղափարին ներկայացուցիչք: Մին՝ շփոթումն է զոր կ'ընեն գրականութեան եւ արուեստին: Ընդհանուր գրականութիւնը աւելի ընդարձակ իմաստ մ'ունի, միայն «արուեստ» ի գաղափարը չէ որ կը պարունակէ, այլ գրական ամէն սեռերուն որք, յայտնի է, ամէնքն ալ արուեստագիտական չեն կարող համարուիլ, բառին բուն առումով: Ճշգիւ խօսելով, բանաստեղծութիւնն է արուեստը ու արձակին սեռերէն վէպն ու արձակ թատերգութիւնը: Արուեստին յատուկ է զգայարանաց կամ երեւակայութեան խօսող ձեւերու, պատկերներու, տիպարներու տակ իրականացնել իսկականը կամ իսկականացնել իրականը, այնպէս որ իրականութենէն կամ մեր երեւակայութենէն առնուած գաղափարը կեանքին զգացողութիւնն ու հոգեցունց յուզումը ապա մեզ: Բայց գրականութիւնը նաեւ առարկայ ունի իմացականութիւններն ու խղճերը մշակել եւ ուղղել, իր կենսական շահերուն վրայ ընկերութիւնը լուսաւորել եւ առաջնորդել:

անցեալն ուսումնասիրել եւ գաս մ'ընել զայն ներկային համար, մարդկային հոգւոյն ու տիեզերքին վրայ մտքին անվերջ հետաքրքրութեանց գոհացում տալ ջանալ, ու այս ամէնը գրականութիւնը պիտի ընէ դարձեալ իր գիտական, պատմական, բարոյական ու իմաստասիրական խօսեալ կամ գրեալ զանազան ճիւղերով: Արդ, եթէ Արուեստին տեսակէտով կրնայ բաղձալի ըլլալ որ բնատոհմիկ ըլլայ մանաւանդ անոր նիւթը, նոյնը չէ այս վերջին գրական սեռերուն համար որք ընդհանուր, մարդկային նկարագիր մ'ունին եւ մտքի լայն տեսութեան կը կարօտին լաւագոյնս ուսումնասիրուելու եւ նոյն իսկ տոհմային կիրառութեանց ճկելու համար: Ուրեմն գէթ գրականութեան այս ձեւերուն նկատմամբ անտեղի է անձեռնհասութեան խնդիր յարուցանել Պոլսեցի գրագէտներու մասին: Իսկ յաւէտ արուեստագիտական նկարագիր ունեցող գրական սեռերուն համար նիւթին եւ առարկային խորապէս տոհմայնութեան կամ մանաւանդ գաւառականութեան պահանջում բացարձակապէս օրինաւոր է: Թէն ըսած է թէ ամէն գեղարուեստական եւ նոյն իսկ ս եւ է գրական գործ կը ցոլացնէ ցեղին նկարագիրը ու միջավայրին ազդեցութիւնը զոր կրած է, փնչպէս նաեւ վայրկենին, այն է պատմական այն շրջանին ուր արտագրուած է: Ինձ կը թուի թէ Թէնի այս քննադատական վարդապետութենէն ազդուած են մեր քննադատք, եւ սակայն, ըստ իս, հոս ալ շփոթութիւն մը կ'ընեն: Թէն ոչ թէ գրական կամ արուեստական գործին անհրաժեշտ պարտաւորութիւն կամ նպատակ կը դնէ այդ ցոլացումը, այլ ճակատագրապէս կրուած ազդեցութեան մը հետեւանքը կ'ընէ զայն եւ հետեւապէս գործին հանգամանաց քննութեան մէջ նկատառելի կարեւոր կէտ մը: Այսու հանդերձ, նոյն իսկ իր սոյն տեսութեան մէջ բացարձակ չէ Թէն, ըստ որում կ'ընդունի միեւնոյն պայմանաց մէջ ծնած ու զարգացած ոգիներու գործեր բոլորովին տարբեր յատկութիւններով սպաւորուած, եւ եթէ զոմանս կը մեկնէ այդ պայմանաց ազդեցութեամբը, միւսները կ'ստիպուի մեկնել անոնց դէմ հակազդեցութեամբ: Եւ տեսնուի թէ այս ըմբռնմունք որքան իրարմէ կը տարբերին, եւ փնչպէս յաճախ կը շփոթուին իրաց ու գաղափարաց սահմանները:

Եթէ, կամայ թէ ակամայ, իր ցեղին հոգեբանութիւնը կը ցոլացնէ գրագէտն իր գործին մէջ, ուրեմն հայացեղ գրագէտը

նոյնը պիտի ընէ ուր որ ալ գտնուի, Պոլիս ըլլայ այն թէ խաղ-
բերդ: Եթէ միջավայրէն ու վայրկենէն պիտի ազգուի, չգիտեմ
թէ ինչու Պոլսահայ գրագէտին միեւնոյն ազգականերէն կրած ան-
խուսափելի ներգործութիւնը նուազ շայեկան պիտի ըլլայ մեր
արդի գրականութեան մէջ մեր սոհմային կեանքին գծերը որոնող
ներկայ կամ ապագայ հետաքրքիր ընթերցողին համար, քանի որ
Պոլսահայ հասարակութիւնն ալ կարեւոր դեր մ'ունեցած պիտի
լինի ցեղին կեանքին մէջ: Եթէ գրագէտն՝ իբր արուեստին պայ-
մանը՝ պէտք է որ բնիկ բարքերուն պատկերացումն ընէ իր գործոց
մէջ, ինչ բան կ'արգիլէ Պոլսահայ գրագէտը նոյն ընելէ իր ար-
տագրութեանց մէջ, իր յատուկ շրջանակին համար, որ, ինչպէս
տեսանք, չի կրնար զուրկ ըլլալ շայեկանութենէ, մի եււնոյն աստն
որ ներքին գաւառաց մէջ ապրողներ նոյն բանն ընեն իրենց միջ-
վայրերուն համար, թող ըլլայ առաւել սրտագրաւ շայեկանու-
թեամբ մը: Բայց ո՞վ ըսաւ, կը կրկնեմ, թէ այդ պատկերացումն է,
եւ ոչ ուրիշ մը, գրագէտին՝ արուեստագէտին առանձնայատուկ
գործը: Ի հարկէ, մեր մօտը եղած իրողութիւններէն կը ապաւո-
րուինք աւելի եւ մեր արտագրութեանց տիպերն ու գոյները ա-
նոնցմէ կը քաղենք աւելի, մանաւանդ որ մեր շուրջն ապրող հա-
սարակութիւնն ալ, նոյն ապաւորութեանց ենթակայ, միեւնոյն մտքի
ու ճաշակի պէտքերն ունի մեզ հետ. բայց եթէ ուրիշ երկիրներ,
ուրիշ դէպքեր, ուրիշ բարքեր կրնան զմեզ հետաքրքրել եւ հե-
տաքրքրելի ըլլալ այն հասարակութեան առ որ կ'ուղղուինք, սխալ
հասկցուած սոհմային գրականութեան մը Պրոկուստական անկո-
ղինը պէտք է որ մեր թեւերն ու ոտքերը կտորտէ: Շաթոպրիան
Նաչէզները գրեց, Վիքթոր Հիւկօ՝ Օտիանդալները, Ֆլօպէն՝
Սալամպօն, Բիէռ Լօդի՝ Մատամ Բրիզանդէմը, Մարիաժ
տը Լօդին եւ ուրիշ տարաշխարհիկ վէպեր. ազգային արուեստին
տեսակէտով անօգուա գործ մ'ըրին:

Ո՛չինչ չափազանցներ. ամէն բան իր սահմանին մէջ տեսնել
վարժուինք:

(Մասիս, 1901, Թիւ 10.)

4. ԳՕՐՉԵՍԸ “ՎՈՂՈՒՐՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ”

(Պատասխաններ)

Գաւառացի ընտրելագոյն գրիչները փութացին պատասխանել մեր նախորդ յօդուածին, ոմանք անոր մէջէն ինչ ինչ մասնաւոր կէտեր միայն վեր առնելով, այլք աւելի ամբողջական նկատառութեան մ'ենթարկելով զայն: Թէ եւ վերլուծող միտք մը մեր արդէն գրածներուն մէջ պիտի գտնէր մեզ գէժ եղած առարկութեանց պատասխանները, բայց աւելորդ չենք համարիր վերադարձ մ'ընել ինդրոյն վրայ, քանի որ գրասէր ընթերցողաց համբերութիւնը տակաւին սպասած չենք տեսներ:

Մեր յօդուածին եզրակացութիւնն եղած էր “ոչինչ չափազանցել, ամէն բան իր սահմանին մէջ տեսնել վարժուիլ”: Արդարեւ ինչ որ գրած էինք՝ բողոք մ'էր այն ծայրայեղ կարծիքին գէժ որով ժամանակէ մ'ի վեր, կարգ մը գաւառացի գրողներու կողմէ, “վաղուան գրականութիւն” մը կը ջատագովուէր, համակ գաւառական նիւթով, ոգւով ու ոճով, եւ որ իր գոյութեան իրաւունքը կը հիմնէր Պոլսահայ գրականութեան օտարախորթ նկարագրին վրայ: Ուղեցիկք ցոյց առ թէ այս արհամարհանքին եւ ուրացման արժանի չէր Պոլսական հայ մատենագրութիւնը, որ Յաճկահայոց գրական լեզու մը տուած էր, որ չէր կրնար երբեք զուրկ համարուիլ տոհմային հանգամանքէ, եւ որ, իբրեւ կեդրոնի, հետեւապէսնաեւ իբրեւ Թըքահայոց մտաւորականութեան ամենէն զարգացեալ աստիճանը ներկայացնող գրականութիւն, առաջնորդող կարեւոր դեր մը կատարել բաժին ունեցած էր եւ ունի: Գրաւոր լեզու մ'ստեղծած եւ զայն այլոց ընդունիլ առած ըլլալն արդէն ինքնին նշան մ'ու սպացոյց մ'էր իրեն կարեւորութեան ու ներգործած ազգեցութեան: Փորձուած այժմայ ընդվզումը, մանաւանդ թէ ոանհարութիւնը, մեզ չէր երեւեր որ եւ է գրական տեսութեամբ կամ օրինակաւ արդարանալ: Ո՛չ Մատենագրութեան ընդհանուր դերին ըմբռնումը, ոչ Արուեստին մասնաւոր պահանջութիւնները մեր տեսութեամբ այդպիսի իրաւունք մը կրնային ստեղծել: Եթէ մեր գրականութիւնը ցարդ նուազ ինքնատիպ ու ինքնազեղ հանգամանք մը ներկայացուցած է, այդ հետեւանք եղած է մանաւանդ իր ուժերուն պակասութեան, իր աղքատու-

Թեան, որով ինքնարդիւն արտագրող ըլլալէ աւելի Տետեւոզ ու թարգմանող եղած է, ոչ սակայն առանց փոխառեալ տարերց միջավայրի պէտքերուն կարելի պատշաճեցումն ընելու: Չէ՞ որ գաւառն ալ մինչև ցարդ «ուղղակի ազդուած է Պոլսական մտքէ», ինչպէս կը գրէ նոյն ինքն Արտաշէս Յարութիւնեան, եւ թէ «գաւառացի գրագէտը իր ճամբան գտած պիտի ըլլար՝ Տետեւոզով լրջօրէն եւրոպական մտաւորականութեան», ինչպէս ասկէ յառաջ գրած էր Ռուբէն Զարդարեան¹:

Մեր յօդուածը, չափազանցուած տեսակէտ մը մատնանիչ ընելու ատեն, չէր ուրանար սակայն կարեւորութիւնն այն ատաղձներուն զորս գաւառը կրնար մատակարարել մեր տոհմային գրականութեան, ոչ ալ արժանիքն այն գրական յաջող երկերուն որք այդ տարրերով յօրինուած էին կամ կրնային յօրինուիլ, — բան մը զոր, այսուհանդերձ, միայն գաւառացի գրագէտին սեփական չենք համարիր, քանի որ տոհմային նիւթը՝ իր հնոյն ու նորովը՝ ընդհանուրին կը պատկանի:

Եթէ նպատակ չկար, որպէս կը յայտարարուի, Պոլսեցոյ եւ Գաւառացոյ անճահ հակառակութիւն մը ստեղծելու այս գրական հարցին շուրջը, կը կարծէինք թէ մեր նկատած կէտերը պիտի կրնային խնդիրը իր յատուկ սահմանին մէջ դնել ու դատմանց գահավիժումը չափաւորել: Բայց մեր յոյսին մէջ կը խաբուինք, գէթ մեր ընդդիմախօսներու մասին խօսելով. միայն թէ կը փափաքէինք անոնց առարկութեանց մէջ տեսնել աւելի ապացուցուած հաւաստումներ, նուազ ծանրացումներ արդէն մեր կողմէ չմերժուած կէտերու վրայ, եւ ընդհանրապէս բուն խնդիրը անկախօրէն ուսումնասիրելու առաւել բարի կամեցողութիւն:

* * *

Արտաշէս Յարութիւնեան կը համարի զմեզ «խորապէս սխալած՝ մերժելով կարեւորութիւնն ապացուցման թէ Հայը ընդունանկ է ինքնայատուկ գրականութիւն մ'ունենայլու». մենք, իբրև ըստ մեզ բացայայտ ճշմարտութիւն մը, ըսելով հանդերձ — բացատրութեան կերպ մը — թէ պէտք չէ որ խնդիր ըլլայ այդ, փութացած էինք տալ մեր փաստերը:

¹ Տես «Վազուի Գրականութիւնը», Մ-ի, Թիւ 40:

Գաւառական լեզուներուն վրայ խօսելով, ինչ օգուտ, ըսած էինք, անոնցմէ այսինչին յատուկ բառերուն ու ոճերուն ճոխութիւնը, մի ուրիշին այս կամ այն ձեւերուն լեզուաբանական սեւսակետով բարձրագոյն հնութիւնը կամ հարազատութիւնը, քանի որ վերածուած են մասնաւոր շրջանակի մը մէջ գործածելի ու հասկնալի ըլլալու վիճակին, ընդունելով միանգամայն որ տեղական վիճակի մէջ ձեռքած բարբառներէն աւելի կամ նուազ բառեր ու ձեւեր կրնան ընդունուիլ ու տարրանալ ընդհանրացած լեզուին մէջ՝ երբ մտքի կամ ճաշակի պէտք մը կը գոհացնեն: Եւ ահա՛ Յովհաննէս Կազանձեան աւելորդ աշխատութիւն «Քր յանձն կ'առնու լեզուաբանական հմտութիւն մը պարզելու եւ երկու յօդուածներու մէջ տպացուցանելու մեզ թէ «Գաւառաբարբառներու մէջ ալ կան կենդանի բառեր որոնք նոյն բառերուն ոսկեդարեան ձեւերէն աւելի հին են», եւ թէ «չի կրնար ուրացուիլ գաւառական լեզուներու մատուցանելիք օգնութիւնը մեր արդի գրաւոր հայերէնին»: Մի եւ նոյնը չէ՛: Այս վերջին կէտը ի վեր հանելու ղուք յօգնութիւնը կու ասն իրենց անձին նաեւ Ա. Յարութիւնեան եւ Ռ. Զարդարեան իրենց պատասխաններուն մէջ:

Բայց եթէ այս մասին, պիտանւոյն ու ճաշակաւորին սահմաններուն մէջ, հիմամբ տարակարծիք չենք իրենց, նոյն բանը չէ սակայն տարբեր կէտերու մասին: Յովհ. Կազանձեան, գաւառական ու ռամիկ բառերու ամենէն աւելի աղճատեալներուն համար ալ մի մասնաւոր տկարութեամբ, կը գժդմի երբ անոնց աղաւաղ, խորթ, անհարազատ մակդիրները տրուած տեսնէ, ու կը յայտարարէ թէ «յետին գաւառական-ռամիկներէն բառն ու ոսկեդարեան է՛ն ոսկեղնիկ բառը հաւասար արժէք ունին լեզուաբանօրէն ալ, գրականօրէն ալ»: Իրեն համար բնաւ աղաւաղ բառ չկայ, եւ կամ ամէն բառերն ալ աղաւաղեալ են, քանի որ «ո՛ր եւ է լեզուի մէջ անեղծ ձեռքած բառ չկայ»: Ներուի մեզ դիտել տալ յարգելի բանասիրին թէ նոյն իսկ եղծման գաղափարը նախնական անեղծութեան վիճակ մը չ'ենթագրեր, եւ եթէ չկայ ո՛ր եւ է լեզու աւքանեղծ ձեռքած բառեր գտնուին, ո՛ւր պէտք է տպա դնել եղծման սկիզբը, լեզուաց սաղմային վիճակներուն մէջ: Ուրեմն պէտք է ընդունիլ ըստ այսմ թէ ո՛ր եւ է գործարար-

նաւորութեան մէջ — ու այսօր այնքան սովորական գաղափար մ'է լեզուները ապրող գործարանաւորութեանց պէս ըմբռնել — սաղմն աւելի անեղծ, հարազատ ու կատարեալ ձեւ մ'է քան յետագայ իր եւ է ձեւ, եւ թէ հրէշն ու պլանդակը մի եւնոյն արժէքն ունին կանոնաւոր ձեւին հետ, վասն զի անոնք ալ անշուշտ իրենց գոյութեան բնական պատճառն ունին: Պէտք է խոստովանիլ թէ, լեզուարանօրէն իրքան բանաւոր կամ անհետեւ ըլլան այսպիսի հաստատութիւնք, գրականօրէն չեն կրնար ուղիղ ըլլալ, — ու պէտք չէ շփոթել երբեք այս երկու տեսակէաները —, եւ մեծ տարբերութիւն կայ մատենագրութեան, մանաւանդ գարաւոր մատենագրութեան մը նուիրագործած բառաձեւերուն ու իր եւ է կործայի մը մէջ կորսուած բառին ու ձեւին մէջանդ: Յայտնի է նաեւ թէ բառերը մնականօրէն աւելի կրցած են գրաւոր յիշատակարանաց մէջ հին նախնական ձեւեր անեղծ պահել քան անգրագէտ ժողովրդեան բերնին յանձնուած անգիր ասմկօրէններու մէջ ուր ընդհանրապէս այնքան շուտ կ'այլափոխուին: Հայր Արսէն Այսաբեան, ընդերկար խօսելէ յետոյ մեր ռամկօրէններուն բազմակիսի սառափոխութեանց, սղմանց ու ամփոփմանց վրայ, կ'ըսէ. «Եւ դարձեալ շատ բան աւելի խժական աղաւաղութիւն՝ է քան բնական յառաջատուութիւն՝ օրինաւոր կարգաւ»: Ու բառերու այլափոխմանց տեսականէն կամ պատմական պատկերէն գործնականին անցնելով՝ կը վճռէ. «Իսկ գործնականին նկատմամբ՝ հիմնական ակործակաց եւ դիտաւորութեանց աւելի համեմատ է՝ նորէն գրաբար ազնուագոյն ձեւերն ընդունիլ ու հաստատել, ինչպէս վերջին յօդուածոյս մէջ տեղ տեղ ծանուցինք¹»: Չալով Պոլսոյ աշխարհարարով կատարուած լեզուական նորոգման կամ մեր արդի գրաւորին հաստատման, կը հաստատէ թէ, 1. այն աշխարհարարին մինչեւ հիմայ առած աղաւաղութեանցը դիմաց իսկական յետաշրջութիւն (réaction) մ'է, եւ 2. միանգամայն նոր լեզուին համար Առատութեան անսպառ աղբիւր մը կրնայ ըսուիլ, գրաբարի հին եւ նոր, ընտիր եւ խոտան, անբաւ շանմարանքն իւր տրամագրութեան թողուած ունենալով²»: Բաւական պայծառ

¹ Մենք կ'ստորագծենք:

² Յ'ս քննութեան քերականութեան, էջ 288:

³ Յ'ս անգ, էջ 238:

չէն աշխարհաբարի հեղինակաւոր լեզուաբանին այս խօսքերն, որուն գրաբարամոլութեան արատէն զերծ ըլլալը սարակոյս չի վերցնեք, կարծեմ:

Օ՛հ, գրաբարեան մը ճանչցուած ըլլալ՝ ի՞նչ եղեուն, եւ ի՞նչ աղէտ. ալ եթէ կը համարձակիս, որ եւ է խնդրոյ վրայ կարծիք յայտնէ հրապարակի վրայ: «Գուն այն չեն որ գրաբարեան մ'էիր կամ ես, որ քար կը նետէիր աշխարհաբարի առաքեալներուն, դուն բնաշրջական միտք մը չես արգէն, եւլն»: Եւ ալ կանխաւ դատապարտեալ է տեսութիւնդ, եւ հին, ու նոր, յանցապարտութեանց այս վերլուշումը կը նորոգի լեզուական խնդրոյ հետ աւելի կամ նուազ կապակից կամ անկապ որ եւ է առիթով, ինչպէս մեր ընդգիմախօսներէն երեքը չթերացան օգտուիլ ներկայ առիթէն: Բայց գրաբարեան կոշուածներն ի՞նչ պահանջեր են¹. Իր բովանդակ կազմածով վերահաստատել գրաբարն իբր գործի նոր գրականութեան. ո՛չ. այլ լեզուական վերանորոգման ճիգերուն ու փորձերուն մէջ ներկայացուցիչն եղած են այն գաղափարին թէ պէտք է նոր գրաւորին մէջ հնոյն աւելի մեծ բաժին մը տալ համեմատաբար աշխարհաբարեանց պահանջման, որք, իրենք ալ, չեն կրցած յաւակնիլ հրաժարիլ որ եւ է գրաբար բառէ ու ձեւէ, այլ ընդհակառակն երբեմն գրաբարի ամենէն յանգուգն ներածութիւնք անոնց ձեռքով եղած են, ինչպէս գրաբար գերանուանց գործածութիւնք: Գրականութեան մէջ կազմական շրջանի մը բնական է երկուստեք քիչ մ'աւելի յառաջ երթալ, բայց այդ իսկ պայմանը չէ՞ փոխադարձ զիջողութեանց ու միջին գծի մը ճշգրտման: Եւ հարկ է ըսել թէ այդ պայքարներու ու տատանմանց շնորհիւ է որ իրենք, Արտաշէս Յարութիւնեան ու նմաններն, այնքան զուտած աշխարհաբար մը կը գրեն այսօր, առանց մոռնալու իրենց նուազ քան առ մեզ, քայլ առ քայլ, այսու հանդերձ, ի պատիւ, ի նպաստ եւլն, զուտ գրաբար քերականական ձեւերը: Բնաշրջական մտքեր չեն եղած այն յոյն ուսուցիչքն ու գրագետք որք, ի Դրգ. դարէն սկսեալ, աղքատացած ու աղճատուած ռամկական նոր յունարէնը հին գրաւորականովը մշակելով՝ հասուցին զայն այսօրեայ գրական այնպիսի վիճակի մը որուն հա-

¹ Տես Ա.—Ա՛ն Տերեւ, Յաւաջարան:

մար Ապէլ Հովաք կը վկայէ թէ «իրօք շատ քիչ կը հեռանայ 2000 տարի առաջուան դասական լեզուէն», ու Ալեքս. Ռանկա-վիս՝ թէ «նուազ կը հեռանայ քսենոփոնի լեզուէն քան այս վերջինը Հոմերականէն», Ճիշդ ինչպէս մեր Ա.Ստընեանն ալ կրցած է արդէն 1866ին ըսել վերանորոգման ճամբուն մէջ մտած աշխարհաբար լեզուին համար, «Այսօրուան օրս քիչ կայ լեզու այնչափ իւր բնիկ սեպհական տարրներէն բաղկացած՝ ինչչափ այս ուղղուած աշխարհաբարը¹»:

* * *

Լեզուի մը ձեւերն հաստատողը (fixer) իրմով արտադրուած գրական երկերուն կարեւորութիւնն է, եւ եթէ այսօրուան մեր գրաւոր լեզուն՝ որուն հիմը Պոլսահայ աշխարհիկ լեզուն է՝ հաստատուն ձեւ մ'առնելու շատ մտտեցած է, յայտնի է թէ Պոլսահայ լաւ գրողներու շնորհիւն է այդ ու չգիտեմ թէ ինչպէս կրնային անոնց լեզուն ու ոճն հետեւելի դառնալ ու հարկադրուիլ՝ եթէ միանգամայն անոնց գրածն համակրելի չըլլար ժողովրդեան մտքին ու սրտին, այն է ասոնց գլխովին օտար, զասոնք բնաւ չհետաքրքրող, անտարբեր նիւթ ու հիմ ունենար: Ապա անհասկանալի է այն առարկութիւն թէ Պէշիքթաշեան, Տիկին Տիւսար, Զօհրապ եւ այլք միայն հայերէն լեզուաւ գրողներ են, եւ ոչ այլ ինչ, որպէս ի հնուճն ալ եղած է Եզնիկ: Այսպէս կը հաւատտեն Արտ. Յարութիւնեան, Ռուբէն Զարդարեան եւ Հասկաքաղ-Գիշերուկ²: «Եզնիկ հայերէն լեզուին չքնաղ գոհարն է միայն, եւ ոչ հայ գրականութեան», կը վճռէ այս վերջինը, ու մենք կը խոստովանինք որ շատ չենք հասկնար այսպիսի նրբին խտրութիւնները: Իր ցեղին լեզուն այնպէս քաջ իւրացուցած ըլլաւ՝ տիրած ըլլալ չէ՞ արդէն անոր ոգւոյն ու՝ կերպիւ իւրիք՝ իր գրչով անոր առանձնայատուկ հանգամանքներն ու քաղաքակրթութիւնը ցոլացնելու վերին կարողութիւնն ստացած ըլլաւ, մանաւանդ երբ այդ լեզուն զարգացման փայլուն կէտի մը հասած կը գտնուի, գիտնալով որ ինքնին գրական լեզու մը

¹ Տե՛ս Քնն-լու Քեր-լու-նի-ն, էջ 237:

² Այս վերջինը Արտ. Գրիգորի մէջ գրած իր յօդուածով:

ցեղախօսական ու քաղաքակրթական կարեւորագոյն յիշատակարան մ'է, իր բառերուն, ոճերուն ու շարադասութեան մէջ վկայ զայն կազմող ցեղին իմացական ու ճաշակագիտական յատկութիւններուն: Ու չգիտեմ թէ Եզնիկ նոյն իսկ իւր նիւթով ինչո՞ւ օտար ոք համարուի մեր գրականութեան մէջ՝ քանի որ իւր միջավայրին կրօնական պէտքն ու պայմանքն եղած են իւր գործոյն շարժառիթ: Ցարօրինակ չէք գտներ նաեւ Հ. Գիշերուկի սա հաստատութիւնը թէ «Է. Դարու վերջերէն յառաջ գրաւոր հայ գրականութիւն չունինք», ջուրին տալով այսպէս մեր հին դպրութեան ամենէն հոյակապ դէմքերն, Սահակն ու Մեսրոպը, Եզնիկն ու Կորիւնը, ինչպէս նաեւ այս վերջնոց կրտսեր աշակերտակիցները, որոց կը պարտինք ոչ նուազ յատուկ տոհմային նիւթով գործեր, նոյն իսկ ըստ հասկացողութեան մեր քննադատներուն: Ընդհակառակն, իրենց տեսութեամբ, աւելի բանաւոր չը պիտի ըլլար ուրե՛մ — թէ եւ հակասական — նոյն իսկ գրին գիւտէն աւելի յառաջ մղել հայ գրաւոր գրականութեան սկիզբը, քանի որ բանասիրաց կարծիքն է թէ Ագաթանգեղոս, Բուզանդ, Զենոբ յոյն կամ ասորի լեզուներով նախնական խմբագրութիւններ ունեցած են, եւ քանի որ լեզուն անարժէք կամ անտարբեր տարր մ'է եղեր որ եւ է ցեղի գրականութեան մէջ:

Նոյնքան քիչ խորհրդածուած թափով մը կը հարցուի. «Գոռնէյի ու Ռասինի գրուածքներուն մէջ ի՞նչ կայ ֆրանսական, ֆրանսերէնէն զատ, որ ֆրանսական տոհմային գրականութեան պատիւն ու փառքը կազմեն, քանի որ այդ մեծանուն հեղինակները հելլէն ողբերգակ բանաստեղծներէն ներշնչուած մնացին առ յաւէտ (Հ—Գ)»: Անձնական վարկած մը սեւէ կերպով արգարացնելու համար ինչպիսի՞ ուրացումներ, ի՞նչ նախաճիւղ: Ի՞նչպէս մեծանուն պիտի ըլլային այդ հեղինակները, եթէ օտար գրականութեան մը պարզ հետեւողներն եղած ըլլային, ու ի՞նչպէս իրենց ազգը՝ իբր իր ամենէն հարազատ ու դասական հեղինակաց՝ պիտի շարունակէր անոնց ցայսօր իր մեծարանքը: Ըսել է թէ հակառակ իրենց նիւթերուն, զորս կրնային քաղել յոյն, լատին, երբայական ու սպանիական գրական ու պատմական ազդիւրներէն, ու հակառակ նաեւ արուեստագիտական օտար ազդեցութեանց, կրցած են ինքնատիպ, անկեղծ ու իրենց ժամա-

նակին ու սոհմին մարդերն ըլլալ: Յեռսինան Պոլեմդիեո՝ Գոռ-
 նէլի վրայ խօսելով՝ կ'ըսէ. «Իր Ուլրաստիոսին, իր Կիլննային, իր
 Ռոտոկիւնին մէջ, մի կարծէք թէ Յուստինոսի, Յենեկայի կամ
 Տիասոս Լիվիոսի կը հետեւի, այլ իր ժամանակին բարբերուն, եւ
 իր աչքին առջեւ կեցած ախպարներուն¹»: Իսկ Գէն, մեծանուն
 քննադատը, Ռասինի վրայ իր ուսումնասիրութիւնը սապէս կը
 սկսի. «Շէքսպիրի եւ Յոփոկզէսի պէս Ռասին ալ ազգային բա-
 նաստեղծ մ'է. ոչինչ աւելի գաղիական քան իր թատրը. անոր
 մէջ կը գտնենք մենք մեր զգացմանց ու մեր կարողութեանց
 սեսակն ու աստիճանը: Անոր ոգին (génie) մերինն պատկերն է.
 անոր գործը կրքերու պատմութիւնն է՝ մեր պէտքին համար
 գրուած. ան մեզ կը պատշաճի իր թերութիւններովն ու արժա-
 նաւորութիւններով. մեր ցեղին համար սրտի լաւագոյն թարգ-
 մանն է ան²»: Չի՛ վայելի մեզ, գէթ օտար գրական գէմքերու
 վրայ մեր դատաստաններուն մէջ, քիչ մը նուազ ինքնազատահ,
 քիչ մ'աւելի զգոյշ ըլլալ:

Մերիններուն մէջ ալ, քիչ մը նուազ կեղեկէն դատելով,
 թերեւս աւելի յատակ պիտի տեսնէիք յատուկ նս մը, ինքնու-
 թեան յարաբերական սահմաններուն մէջ, օտարէն կրուած
 ազդեցութեանց խաւին տակ՝ անոր առնչութեանց թելերը մեր
 բարուց, զգացմանց, գաղափարաց ու պիտոյից հետ: Նոյն իսկ
 Տիկին Տիւսարի ըբած Ֆէմինիզմը անկամպ է բողբոլովն հայ կնոջ
 վիճակին հետ. օրորոցական նշանախօսութեան, պաշարկի, հարսին
 անխօսութեան, կնոջ բերնկապին ու լաջակին, բռնի ամուսնու-
 թեան եւ վերջապէս գրամօժտի ու ամուսնալուծման խնդիրները,
 որոց վրայ այնքան անգամներ գրուած է մեր մէջ, յաճախ նաեւ
 գաւառացի գրողներու կողմէ, կնոջ իրաւանց, ապա եւ Ֆէմինիզմի
 խնդիրներ չն՛ն, եւ հայ ժողով Յանին գործերուն ընթերցումը
 չի՛ կրնար եւ չի՛ կրցած նոյն իսկ գաւառացի քիչ շատ լուսա-
 ւորուած ընթերցողը հետաքրքրել, եթէ ոչ անոր ներկայացնելով
 իր շրջանակի կնոջ վիճակին յատուկ պատկերը կամ պահանջները,
 գէթ անոնց նկատմամբ թելադրութեան ընթելով ու անդրադար-

¹ ՏՊ. «Manuel de l'histoire de la litt. fr.» էջ 133:

² ՏՊ. «Nouveaux essais de crit. et d'hist.» էջ 171:

ձուձներ ներշնչելով : Գիտէք լատին կատակերգակ Յերենտիոսի այն-
քան յաճախ յիշատակուած խօսքը. «Մարդ եմ, եւ ոչինչ մարդկային
օտար է ինձմէ» . Homo sum: humani nihil a me alienum puto.

* * *

«Պոլսահայուն կեանքը մէկ զեղծ վառիանդն է միայն եւրոպական կեանքին, ու Պոլսահայ գրականութիւնն ալ, մասամբ ընդօրինակութիւն ֆրանսական ոսմանդիք դպրոցին արտագրութիւններուն, արտայայտութիւնը եղած է այդ պիտակ ու օտարացած կեանքին (Ս. Յարութիւնեան)» : Առանց անուան Հեղինակին, որ ծանօթ է իբրեւ գաւառացի գրագէտ, կարդալով այս ֆրանսախառն հաստատօք ու դեռ միւս ֆրանսերէն բառերն (euphémisme, internationaliste, digression) որք յօգուածին ամբողջութեան մէջ կը տեսնուին բնիկ հայ բառերու պէս հոլովուած, պիտի կարծէր մարդ թէ Պոլսեցիէ մ'աւելի եւրոպականացեալ մէկու մը գրածն է, ու հիմայ մենք, Պոլսեցիքս, ի՞նչպէս չզարմանանք որ այդ առոյծուն Հեղինակը, զոր Գեորգեան բարգէն վարդապետ իրաւամբ կը կոչէր «ֆրանսերէնով կազմուած շինուած գրող մը», ինքն իսկ է որ բնատոհմիկ գրականութեան մը ջերմագոյն առաքեալը կը հանդիսանայ ու շատ մօտ է հայութեան անունն իսկ զլանալու մեզ եւ մեր գրողներուն : Ի՞նչ հակասութիւն : Եւ ապահովաբար ինքն եւ իւր հաւատակիցք իրենց սեւեռամտածման մասնաւոր հատուածակողմին մէջէն զմեզ կը դիտեն՝ Պոլսահայ հասարակութիւնն եւ իր զարգացեալ դասն իրենց ամբողջութեան մէջ այդքան այլասեռուած տեսնելու համար : Մենք զարգացման ու պարզէն դէպ ի բարդ կեանք մը բնաշրջման աստիճաններու տարբերութիւն մը միայն կը տեսնենք հայ ցեղին պոլսական ու գաւառական մասերուն մէջտեղ, ու ցեղային հիմնական նկարագրաց մասին էսպէս նման կը համարինք երկուքն ալ. — նոյն ճարպիկութիւնը առեւառորի ու հնարագիտութիւնը արհեստի մէջ, նոյն բարեպաշտութիւնը դէպ ի առհմային — եկեղեցական աւանդութիւններն եւ ուխտատեղիները, կնոջ վրայ նոյն տնասէր համբերատար պարկեշտութիւնը, եւ — յատկութեանց հետ թերութիւններ ալ յիշելու համար — նոյն գժտասիրութիւնը վերի ու վարի թաղերուն կամ թա-

զգականներուն շուրջ, նոյն հոն չորպանիական, հոս մենծ-
աղայափան ոգին, նոյն յոխորատանքն դեպ ի բնիկը ու նոյն հիա-
ցիկ վերաբերումը դեպ օտարն, եւ այլն: Անշուշտ, տարազներու եւ
նիստուկացի արտաքին ձեւական տարբերութիւններ, որք գաւառի
քաղաքացին ալ գիւղացիէն կը զանազանն, չեն բաւեր ներքին
խոր այլակերպութիւններ ենթադրելու. երկայն գլանաձեւ
գլխարկով մարիզեան առքորը հայ է մինչեւ ոսկորներուն ծուծը.
Եւրոպական կահերով ու ճաշակով զարդարուած հիւրանոցին մէջ
վաճառականը հայ է իր հաշուետուութիւն մինչեւ յետին թուա-
նշաններուն մէջ, ու վերջին նորաձեւութեան համեմատ հագուած
իր տիկինն ալ հայ է մինչեւ ծայրը մազերուն: Հակառակը ապա-
ցուցանելու համար լոկ խօսքեր չեն բաւեր, իրականութեան վրայ
հիմնուած լուրջ ու խորին քննութիւն հարկաւոր է, ու Պոլսա-
հայ գրականութեան վերաբերութեամբ ի մասնաւորի, այն «ման-
րակրկիտ ուսումնասիրութիւնը որ աւելի շեշտուած ձեւի ներքեւ
երեւան պիտի բերէր թէ իսկապէս հեռու եղած է հայ կեանքին
հանգամանքներուն արտայայտութիւնն ըլլալէ՝ գրականութեան
ձեւին ներքեւ» (Ա. Յարութիւնեան), եթէ արդարեւ եղած է:
Կամ թէ — ինչ որ հաստատապէս աւելի համոզիչ պիտի
ըլլար, եւ ինչ որ ողբացեալ Մամուրեանն ալ, սոյն խնդիրը շօշա-
փող յօդուածի¹ մը մէջ, դիտել կու տար, երբ կ'ըսէր «Մանր
մունր հատուածներով, ուսումնասիրական թեթեւ տեսութիւն-
ներով չէ՛ որ գաւառական գրականութիւն մը կարող է նոր,
կենդանի ու ոսկեղինիկ նրակներ բանալ մեր հին ու զտուած հա-
մարուած գրական մարմնոյն վրայ, ո՛չ, այլ բանահիւսական, կամ
իմաստասիրական կամ հնախօսական եւ այլ հոյակապ հեղինա-
կութեանց հրատարակութեամբ, գաւառական կոչուած ոճով»:
— Թո՛ղ «վաղուի գրականութեան», գաղափարին ներկայացու-
ցիչք աշխատին մարմնացնել զայն, ի լոյս բերել այդ գրականու-
թիւնը օրու հայարուն ատաղձներն առատօրէն իրենց տրամա-
դրութեան տակ ու «հոգեբանական ու կազմախօսական» տա-

¹ Յն Արեւ. Մ-ւ-ւ (1899, թիւ 19) «Գաւառացին Մասնա-
գարան», որ կ'սկսէր սա բառերով, «Տակաւին անկարող եղած ենք ըմբռնելու
թէ ինչ նշանակութիւն եւ ինչ նպատակ կրնայ ունենալ մեր օրերը
բնական կազմած գրականութիւնը»:

րեղքն իրենց արեան եւ ուղեղին մէջ ունենալ կը պարծին, ու ի հանդէս դրուած հարազատ ազամանդներու հանդէպ, իրենցմէ միոյն¹ խրոխա գուշակութեան համեմատ, «Պոլսեցի գրագէտին անցեալը ադամանդի փոզփոզումով խարեութիւն փորձող կտոր մ'ապակիին պատմութեան», վերածեն: Բայց, գէթ մինչեւ այն ատեն, իմ խոնարհ կարծիքս ու — եթէ կ'ընդունին — եղբայրական խրատս է թէ՛ աւելի լաւ է որ ունայն վիճաբանութիւններ չգրգռեն, մենքի ու դուքի պառակտող խնդիրներ չյարուցանեն, աւելի համեստ ու նուաղ յաւակնայեցող ըլլան, առանց մեծարանութեան ու աղմուկի՝ իրենց յատուկ միջոցներուն ու յատկութեանց նպաստը բերեն աշխատողներուն, իրենց անժխտելի տաղանդները մշակել ու զինքեանս կատարելագործել ջանան, փոխանակ այլոց ըրածն աղարտել հետամտելու, պղատոնական գաղափարողի հովեր առնելու ու գրական-լեզուական առաւել կամ նուաղ մտացածին ծրագրեր բանաձեւելու . . . :

(Մասիս, 1901, Թիւ 19)

5. ԳՐԱՐԱՅԻՆ ԼԵՂՈՒ ԵՒ ԳՐԱԳՈՐԾԵՆ

(Դպրոցական Յիշատակներ)

Ա.

Ա. Մ. Վ. Գարագաշեան խստգիւղի ներսէսեան վարժարանին մէջ ի սկզբան ֆրանսերէն լեզուի ուսուցիչ էր մեզ: Ինք այդ ատեն առաջին անգամ Օլլէնտորֆի դրութիւնը մտցուց հայ վարժարանի մէջ, որու համար յետոյ ի հայ պիտի թարգմանէր այդ նշանաւոր դրութեամբ ֆրանսերէնի դասագիրքը: Ինք այն ատեն գերմաներէնին վրայէն հայերէնի վերածելով տուն կու տար մեզ հրահանգները: Կարծեմ ըսուեցաւ թէ Գարագաշեան գաղիներէն լեզուի շատ հմուտ չէր. ճմարիտ չէ այս, ընդհակառակն լաւ հմուտ էր այդ լեզուին՝ առանց քաջ խօսող մ'ըլլալու, մանաւանդ դասական գաղիներէն լաւ գիտէր, որուն շարագրութեան կանոնաւորութիւնը եւ յատկութիւնը մեծապէս կը գնահատէր եւ օրինակ առած էր իրեն իր աշխարհաբար գրութեանց

¹ Յն «Վարդի գրականութիւնը», Ռ. Զարգարեան, Մ-ի-Թիւ 40 :

մէջ: Բազում: Ինչ թարգմանած էր դասական հեղինակներէ, գոսիւէ, Ռասին որդի, Էմէ Մարդէն, Լաֆօնդէն եւ կործեմ Արեւելեան թատրոնին համար ալ թատրերգութիւններ վ. Հիւկոյէ եւ յայլոց: Նոյն միջոցին մեր հայերէնի ուսուցիչն էր Ներսէս Աարդապետ վարժապետեան, խասգիւղի քարոզիչը: Յա Աննե-տիկի հիացող մ'էր, ինչպէս այն ատեն ամէն հայկաբանութեան վարժապետը: Է. Արսէն Բագրատունւոյ եւ Է. Եղուարդ Հիւրմիւզեանի վրայ կ'երդնուին, որոնք, իտալական գրականութեան ազդեցութեան տակ զարգացած, յեղաշրջեալ պարբերութիւններու, ճոխափայլ վերադիրներու եւ մեծահնչիւն բառաշարքերու գրական ոճը մուծած էին հայերէն լեզուի մէջ: Լեզուի ճշգութիւն, պայծառութիւն եւ հարազատութիւն երկրորդական հանգամանքներ կը նկատուէին. դժուարիմաց խրթնութիւնը ճարտարութեան եւ խոր հմտութեան նշան կը կարծուէր: Անուշ գրել ամէն առաւելութիւն յինքեան միացնել էր. մանաւանդ Է. Եղուարդ Հիւրմիւզեանի հետեւողք կը թուէին ներդաշնակութիւնը համարիլ առաջին յատկութիւնը ոճին, որուն յօժարակամ կը զոհէին մաքրութիւն, պայծառութիւն եւ ճշգութիւն: Լեզուի դասական հեղինակները կը համարուէին վնասակեան Էարք, մանաւանդ վերջիշեալ երկուքը, եւ իրենց գործերը ամենուն ձեռաց մէջ էին: Մենք ալ միեւնոյն ուղղութեան մէջ էինք Ներսէս վարժապետեանի առաջնորդութեան տակ. Տելեմաք կը թարգմանէինք, Լ. յվազովչիի աշխ. Օսմանեան պատմութիւնը գրաբարի կը վերածէինք, մինչդեռ մեզմէ մեծերը «Բուրաստան», եւ «Մշակականք, կը թարգմանէին ու կը վերլուծէին:

Օրին մէկը յանկարծ Ներսէս պաշտօնով Կիլիկիա կ'ուղեւորէր եւ մեր հայերէն լեզուի դասերը կը յանձնուէին Մատաթիա Գարաբաշեանին: — Մեծ ու խոր յեղաշրջութեան մը մատնուեցան մէկէն մեր լեզուաբանական ու գրական սկզբունքները ի մասին գրաբարի: Եզնիկի փոքրագիր մատեանը փոխանակեց բագրատունեան եւ հիւրմիւզեան մեծահատոր մատենագրութեանց, հեղինակութիւն կամ թարգմանութիւն: «Եղք աղանդոց», ահա գերագոյն վարժապետը հայկաբանութեան, կ'ըսուէր մեզ. զայն պէտք էր կարգալ անդուլ, ուսումնասիրել, վերլուծել, անոր ոճերն ու դարձուածները սերտել, ի բերան ուսանիլ: Մեր նոր վարպետը

ժամերով կը կենար անոր եջերուն եւ առդերուն վրայ, բացատրելով յառակաբանութիւնները, մտադիր ընելով մեզ ճարտար զանազանութեանցն ու պլաձեւութեանց, միեւնոյն ասին քերականական կանոնաւորութեանն ու բացատրութեան յստակութեանն: Կը զարմանայինք որ Լ. Արսէնի հսկայ վէպը իր պատուանդանէն կը խոնարհէր մի այդպիսի գաճաճ գրքի առջեւ: «Ցեղեմայք», իր անհարազատ ու քմահաճ ասութիւններուն համար քննադատելու միայն կը ծառայէր, երբ չարաճճի ազու մը ձեռքով հրապարակ նետուէր: Ե. գարուն Ա. կէսը, «Ոսկեգարու մասնագրութիւնը», ահա հայ լեզուին անմասն գանձը, վաւերական ճոխութիւնը, գասական հեղինակութեանց աղբիւրը: Ճշմարիտ հայկաբանութեան վառարանը: Ու կը հասկնայինք կամաց կամաց, ու կը փոխուէինք, ու կը սովորէինք ճանչնալ, սիրել ու օրինակ անել մեզ Ա. Թարգմանչաց մաքուր, յստակ ու զօրեղ բարբառը եւ զատել զայն աղաւաղ ու խառնակ գրաբարէ մը ուր ամէն եկամուտ խնդարում քաղաքացւոյ իրաւունք է ստացած եւ ուր անձնական քմահաճոյքը օրէնք է եղած:

Զարմանքը մեծ եղաւ մեր նախկին ուսուցչին, երբ, Ներսէս Եպիսկոպոս եղած, գարձաւ խասգիւղ եւ օր մը դպրոց եկաւ մեր վիճակը քննելու համար: Երբեք չեմ մոռնար — եւ ինք ալ արիւնքով վերջը չէր մոռցած ու յիշեցուց օր մը երբ նոր բացուած Պերպլերեան վարժարանին Օտեանին հետ այցելութեան եկաւ, «Աս Պերպլերեանը՝ իր աղայութեան ասին՝ հայերէնի վրայ ինձի հետ վիճաբանութիւն ըրած է», ըսելով — չեմ մոռնար, կ'ըսեմ, մեր կարգին դէմը նստաւ առջեւի գրասեղանին վրայ ու հարցուց մեզ թէ ինչ կը կարդայինք: Ըսինք թէ մեր ուսուցիչը մեզ Եզնիկ ու Ոսկեբերանի մեկնութեանց Թարգմանութիւնները կը բացատրէ, եւ թէ Պոսիւէի Discours sur l'histoire universelle գրաբար լեզուի կը վերածենք: Ասոր վրայ բուն պոլքար մը մեր ու մեր նախկին ուսուցչին մէջանդ: Նա վենետիկոյ հայրերը կը պանծացնէ իրենց շքեղ ու ներդաշնակ գրաբարին համար, մէք կը պատասխանեմք թէ լեզուին առաջին պայմանները մաքրութիւն, կանոնաւորութիւն եւ յստակութիւն պարտին ըլլալ: Նա՝

— Ո՞րքան ծիծաղելի է Պոսիւէն Բոսուէզի տառադարձելը Գենք՝

— Նախնիք Բաւլորը՝ Պաւլոս, Բիգաղորը՝ Պիւթագոր, Բլա-
գոնը Պղատոն ըրած են:

— Ղեննտիկոյիք Discours sur l'histoire universelle պիտի
կոչ ու գեղեցիկ կերպով «Ճառ ի վեպո ազգաց, Թարգմանած
են, մինչդեռ Ղեննտիք, «Խօսք ի վերայ ատկերական պատմու-
թեան» ըսելով, երկար ու խորթ ձեւի մը վերածած են:

— Բայց Թարգմանչին պարտքը կարճեն ու անուշէն առաջ
հաւատարիմ ու ճիշդ ըլլան է. ազգաց վէպերը տիեզերական
պատմութիւն չեն:

— Ո՞րքան ստորագասական կայ Ղեննտեաց գրածներուն մէջ:

— Եզնիկին ու Ոսկերերանին մէջ ալ շատ կայ. ուր որ լեզուին
օրէնքը ստորագասական պահանջէ, ստորագասական պէտք է գնել
ի հարկէ. լաւ է սխալիլ Եզնիկին հետ քան իրաւունք ունենալ
Հայր Եգուարդի հետ...:

Եւ այսպէս կ'երկարեր վիճարանութիւնը ու կ'օգեւորուէր,
այնպէս որ կը շարունակուէր տակաւին երբ սրահը շատանց դա-
տարկացած էր մեր շուրջը, աշակերտք սեղանտառն իրան ըլլա-
լով: Վարժապետեան եւ քաջուեցաւ տեսնելով որ իր երբեմնի
աշակերտները՝ զորս Սողոս Թողած էր՝ Պամասկոսի ճամբէն անցեր
էին ու Պողոսներ էին արդէն:

Գարագաշեան, հակառակ ինքնին քերականութեան գաս-
գրող մ'ըլլալուն, հրաման ստացած էր Ս. Ներսէսեան վարժարանի
հոգաբարձութենէն Հ. Արսէնի «Յարեըք քերականութեան»ը
գործածել իր դասերուն համար: Այսօր դասագրքի հեղինակ
յեան վարժապետ մ'ալ իր անձնասիրութեան մէջ վերաւորուած
պիտի զգար ինքզինք, երբ, իր ուսուցած ճիւղին համար ինք դա-
սագիրք մը հեղինակած ըլլալով հանդերձ, ըսուէր իրեն հետեւիլ
մի ուրիշի շինածին: Բայց Գարագաշեան բնաւ վերաւորանք մը
չզգաց, հնադանգեցաւ պաշտօնական հրահանգին ու սխաւ գա-
սախօսել «Յարեըք»-ին վրայ, որ ծառայեց աւելի եւս շեշտելու իր
արժանիքը: Ինք ի հարկէ սարկաբար չէր կրնար ուսուցանել, ինք
որ հեղինակութիւն մ'էր հայ լեզուի: Քննադատաբար սկսաւ գոր-
ծածել Հ. Արսէնի քերականութիւնը, մասնատիշ ընելով Թերի-
ները, իբրեւ կանոն յառաջ բերուած անուղիղ ու ցանցառ գոր-
ծածութիւնները, օրէնքի տարտամ բացատրութիւնները, որոշե-

լով հարազատն ու անհարազատը, արհաւիրն ու ապօրինը, վերջապէս ինչ որ Մեսրոպեան լեզուին ընդհանուր մէկ գործածական ձեւն էր, իսկապէս օրէնք, եւ ինչ որ ազաւարում, անհասական կամ անսովոր կերպ մը, բացառութիւն կամ զեղծում էր: Գիտենք ամէնքս թէ Գարագաշեան շին հայերէնի քերականական ուսման ինչ մեծ ծառայութիւն մատոյց իր քերականութեամբ պարզելով եւ այնու եւ այլ օժանդակ դասագրքերով գիւրացնելով ու գործնականացնելով զայն, որ անելանելի քառս մը դարձած էր Հայր Արսէններու գործերով, սուղգիւ անմերձենալի կնճռոտ հանգոյց մը յուսահատեցուցիչ: Գարագաշեան նաեւ Եւրոպական քերականութեանց ձեւն ու մեթոտը սուսա հայերէն քերականութեան, ուսումնական բառերն ու անուանակոչութիւնները ճշգրելով ու բանաւոր կարգ ու դասաւորութիւն հաստատելով:

Ք.

Այս յիշատակները բնական ճամբով մը կը բերեն զմեզ գոհացում տալու անոնց հետաքրքրութեան որք հրապարակու ալ փափաքեցան մեր կարծիքն իմանալ Ոսկեդարեան եւ ոչ-Ոսկեդարեան գրարարներու ծանօթ խնդրոյն վրայ որք քիչ ժամանակ յառաջ մաւական մտքերը զբաղեցուցին Վենետիկէն ու Վիեննայէն ի Պոլիս եւ Պոլիսէն ի Ջփուզնիս:

Վիեննայի դպրոցին վարգապետութիւնը մեր հասուն տիոց մտածութեամբ ալ բանաւոր կը գանենք իր ընդհանուր գծերուն մէջ: Յայտնի բան է որ նախնեաց լեզուն Տրգ դարուն Ա. կիսուն մէջ, յետ գիւտի գրոց, իր ամենէն հարազատ ու մարուր ձեւին տակ թարգմանեալ ու հեղինակեալ գործերու մէջ ի յայտ գալէ յետոյ, իսկոյն Բ. թարգմանչաց ձեռքով աղաւաղում կրեց յունարանական խանգարմամբ որ եղծեց անոր հարազատութիւնն ու ոգին: Յունարէն բառերու կազմածին մերքնական նմանութեամբ կազմուած շատ մը բառեր (ներկայ, ներգործել, բաղդատել, բաղդարել, տարբաղարել, ենթադրել, ենթակայ, մակարել, մակացութիւն, մակասոցել, վերծանել, ներածել, ներածութիւն, պարագրել, պարաբանալ եւն եւն) սպրդեցան մասն լեզուին մէջ, ինչպէս նաեւ յոյն ոճեր, յոյն քերականական ձեւեր, որ օտար են հայ լեզուի ոգւոյն եւ որոց չենք պատահիր բնաւ Ա.

Թարգմանիչներուն, Սահակայ եւ Մեսրոպայ եւ իրենց անմիջական աշակերտաց գործերուն մէջ, Աստուածաշնչի եւ նոյն ժամանակի ուրիշ Թարգմանութեանց ու կորիւնի, Եզնիկի եւ այլ Հեղինակութեանց մէջ: Ի նչպէս կարելի է, զոր օրինակ, բնիկ Հայերէն ու մաքուր գրաբար կոչել հետեւեալներուն նման պարբերութիւններ, Դաւիթ Անյաղթի գործերէն փոխ առնուած. — «Չայն է բացակատարումն գանչեցելոյ ի մեզ հագագի եւ յերիւրեցելոյ ընդ խոշորութեան շնչափողն, եւ տեսակարարեցելոյ լեզուաւ եւ մակալեզուաւ. — Դարձեալ, «Եւ եւս զի մակացելին ի բաց բարձեալ, ընդ իւր ի բաց բառնայ զմակացութիւնն, իսկ մակացութիւնն զմակացելին ոչ շարաբառնայ, քանզի մակացելոյ ոչ ելոյ, ոչ է մակացութիւն, եւ մակացութեան ոչ ելոյ, ոչինչ արգելու զմակացելին գոլ... Եւ եւս կենդանւոյ վերաբարձեցելոյ՝ ոչ է մակացութիւնն, իսկ մակացելեացն բազում ինչ դէպ լինին գոլ:», Ասկէց զատ նոյն իսկ նախնեաց գրաբարը ինքն իր մէջ տակաւ աղաւաղում կրեց. ուսմկին լեզուն գրաւորէն հետզհետէ ասելի հեռացաւ, եւ գրաբարին հասկացողութիւնն ու գիտութիւնը երթալով դժուարացաւ. գրաբարը ուսման առարկայ դարձաւ, այնպէս որ գրողները, գրաբար գրել կարծողները, շատ անգամ իրենց գրուածներուն մէջ մուտք տուին սխալ ու աղաւաղեալ ասութեանց, ուսմիկ բառերու եւ ձեւերու, այլանդակուած հոլովներու եւ խոնարհմանց, եւ անսովոր խնդրառութեանց, որով գրաբարը ասկաւ կորսնցուցնաւ այս կերպով իր նախկին բնիկ մաքրութիւնը այսպէս, Եճք ի մէջ մեղաց, ի մէջ մեր եւ ի մէջ ձեր, կախեցին ի փայտէ, ծիծաղե ի վերայ նորա, վարիւք, կողմք, զործիցդ, լսեալ, ճանաչեալ, ճանաչեցին, ծիծաղեաց, մոռաց, ըարծի թողի առնել եւն եւն, որք ամէն գրաբարագէտի յայանի են իբրեւ հարազատ գրաբարին անսովոր ու սխալ ձեւեր:

Արդ Վիեննական դպրոցը, աչքի առջեւ ունենալով 5^{րդ} էն մինչեւ 14^{րդ} դար հայ հին մատենագրութեան արատաղութիւնները, անոնց լեզուին մէջ ահագին ասարբերութիւններ տեսաւ եւ նախ եւ առաջ Շաղկիման եւ Անկիման դարերու մէջ մեծ խարութիւն մը դրաւ. Ա. ք 5^{րդ} դարու Ա. կեսին մէջ ամբիոփելով, իսկ Բ. ք սկսեալ համարելով անդատին նոյն դարու Բ. կեսէն, երկրորդ կամ կրտսեր կոչուած Թարգմանչաց հետ եւ շարունակելով մին-

չեւ վերջին ու մտաւոր ժամանակները, այլազան տարբերութեամբ ըստ ժամանակաց, զոր օրինակ 5^ր դարու վերջին կէտը, ուր Բ. Թարգմանիչք, խորենացին, Եղիշէ, Փարպեցի, Մանդակունի, իբրեւ աշակերտք նախնեաց եւ գարուն ուր հարազատ լեզուն կենդանի էր տակաւին շրթանց վրայ: ու ականջներու մէջ, թէեւ արդէն ոչ կատարելապէս մաքուր, տակաւին շատ տեղ կրցին բաւական յտակուցութեամբ շարագրել, եւ նաեւ ի մասնաւորի ԺԲ. դարը, Գրիգորիսեանց եւ Ներսիսեանց դարը, ուր մտանազիրք բուն նախնեաց մաքուր լեզուին յատուկ հետեւողութեան մը փայծը ունեցան, չէ կարելի չզանազանել միւս ժամանակներէ ու չհամարել ազնուագոյն քան զայն լեզուին անսակետով: Յայանի է որ այս խորութեան վարդապետութիւնը երեւան բերողներէն մին եղած էր Գարագաշեան՝ երբ անդամ էր Վիեննական Միաբանութեան եւ գործակից Գաթըրձեանի: Վենետիկցիք, այս տեսութեան հակառակ, ուզած են միեւնոյն հեղինակութեան պատիւն ընծայել գրեթէ անխաիր հնոց ամեն գրուածներուն մինչեւ ԺԳ. դար, եւ ըստ այնմ գրել, թարգմանել եւ ուսուցանել, յորմէ այն հակառակութիւնը որ կը տիրէ երկու Դպրոցներուն մէջ Գարագաշեան — Գաթըրձեաններէ ու Բագրատունի — Հիւրմուզեաններէ սկսեալ մինչեւ այսօր մէկ կողմէն Գալէմբերեան — Մենեվիչեանի եւ միւս կողմէն Ղազինեանի մէջտեղ: Բայց բացայայտ է թէ Վենետիկցւոց կողմը չէ իրաւունքը սկզբամբ: Ամէն հին լեզու, որ իր կենդանի գործունէութեան շրջանը փակած է, իր բարեշրջման ընթացքին մէջ ունեցած է ծաղկման, հասունութեան ժամանակները ուր իր կատարելագոյն արդիւնքները յառաջ բերած է, եւ յետոյ ունեցած է տկարացման, քայքայման թուական մը, ուր հետզհետէ իր բնիկ գեղեցկութիւնը, ոյժը եւ կենդանութիւնը կորսնցնելով, օտար տարրերով աղաւաղուած ու իր բնիկ տարրերն ալ այլափոխուած, կը գահավիժի դէպ յանկուծ: Այսպէս եղած է յունարէնի, լատիներէնի, եբրայեցերէնի համար, եւ նոյնը պատահած է նաեւ գրաբար հայերէնի: Երբ արդէն ընթացիկ մի նոր լեզու յաջորդած է անոր իբրեւ գործի մտաւոր յարաբերութեան եւ գրականութեան, հին լեզուն կրնայ մշակուիլ, ուսումնասիրուիլ ու գործածուիլ գիտուններէ եւ ներգործել նաեւ նորին վրայ, բայց այն ասան անոր տեսողութեան յաջորդական

շրջաններին որուն կերպին ու ոճին պատշաճ է հետեւող գանձուիլ. — անտարակոյս անոր ծաղկման շրջանին, յունարէնի համար Սոփոկղէսի, Գսենոփոսի ու Գեմասթէնի լեզուին, լատիներէնի համար Աւգոստոսայ դարու գրական բարբառոյն. տարակոյս չկայ որ հին հայերէնի համար ալ առաջին թարգմանչաց լեզուին անկ է օրինակ հանգիստնալ գրարարագիտաց ու մանաւանդ գրաբարագրաց:

Ըսել չենք ուզեր թէ Վենետիկցիք բնաւ խորութիւն չեն դաւանիր եւ ընտրութիւն չեն ընդունիր. ոսկւոյն քով նոքա արծաթի դար մը կ'ընդունին, որ 7^ր դարէն սկսեալ կը ձգի մինչեւ 12^ր դարու վախճանը. միայն թէ խոտելի եւ մերժելի չեն համարիր արծաթի այդ մատենագրութեան հետեւողութիւնը, եւ մինչեւ անգամ ժ.Բ. Էն ստորագոյն ժամանակաց մէջ ալ հետեւելիներ կը գտնեն: Է. Արսէն Բագրատունի կ'ըսէ. «Պղնձի դար է երկքսասանն, սակայն մարթի տակաւին համարել եւ զայն ընդ նախահարս լեզուիս, մանաւանդ զնշանաւորս ոմանս ի մասննագրաց անտի», Թումաբանական ոճերու մասին, Է. Արսէն անօգուտ ու ֆնասակար իսկ կը համարի որոշել զտակ զանոնք յատուկ հայկականներէն, վասնզի «որոշելով, կ'ըսէ, զՏելլենացի եւեթ կործեցեալն աղքատացուցանէ մինչեւ ի յետին չքաւորութիւն զհայկականս բարբառ». թէեւ այլուր ստգտանել կը թուի զԴաւիթ Ներգիւնացին, «զանյաղթն յորջորջեալ, եւ զայլ ոմանս, որ սաէպ եւ անընարող հելլենարանութեամբք բառից եւ ոճոյ վարանդեն զլեզուն, եւ չգիտեմ որպէս հաւաստի նորուն թարգմանչացն աշակերտի եւ նոցին դարուն իցեն այն շարագրածութիւնք եւ մանաւանդ թարգմանութիւնք», Եր մեղադրէ նաեւ ուսմարանութեանց խառնուրդը: «Թող եւ յորս սկսանի երեւել քանգարումն հայերէն խօսից եւ ուսմարանութիւն, զոր առաջին ի գիր մասնի հանեալ յաննչանից Մատթէոս Ուռհայեցի, եւ ի նշանաւորաց Լամբրոնացին», Է. Արսէն նոյն իսկ ոսկի եւ արծաթի դարուց, այն է Ե. — Է. եւ Է. — ժ.Բ. դարուց հայերէն գրութեանց մէջ երկու տեսակ լեզու կ'որոշէ, մին, որուն համար կ'ըսէ «առաջին այն է ընտրելի», երկրորդ՝ զոր զգուշալի կը համարի «մանաւանդ գեղեցկութիւնք նախնեաց եւ նոցին բուն հայեցի ախորժակք սիրելի իցեն», Այս վերջին դատուն համար

օրինակ կը բերե խորհնացւոյն Պիտայից գիրքը, Օձնեցին, Յովհաննէսի Կաթողիկոսը, Արծրունին, Նարեկացին Ողբերգութեանցն ու ասղից մէջ, Սարկաւագ վարդապետ, « եւ այլք ոմանք ոչ սակաւք : Զասոնք ու զայսպիսիս կը համարի « եղերական », եւ դաւառացի կամ ինքնահասարակ ռճով շարագրողներ, մանաւանդ յետ երեւման արարական գրականութեան, որք նորանկախութեամբ նշանաւոր ըլլալ ջանացած են, աւելորդ ճարտարաբանութեան սիրող, ու հետամուտ ձեւաւոր դարձուածներ առաւ խօսքին դժուարաւոր բառերով եւ ասիական ճոխութեամբ ու ճոռամութեամբ, որով եւ ի հարկէ լինելով խրթին եւ մթին: Իսկ առաջինը, « առաջին ընտրելին », կը համարի համբոյն հայոց բնիկ ու սեփական լեզուն, որ լեզուն հեզինակաց եւ առաջնորդաց միջոցաւ կազմուած է բոլոր միջերկրեայ հայերու վայելուչ եւ հասարակաց ասացուածներէն, ու 4^ր դարէն եւ թարգմանչաց ժամանակէն սովորականն ու գործածականը եղած է մինչեւ 7^ր դար, մանաւանդ Աստուածաշնչին իբրեւ ընդհանրապէս հասկնալի գրքի մը մէջ, « որ թէպէտեւ թարգմանութիւն է, սակայն հարազատութիւն հայերէն խօսից գրեթէ քան յամենայն գիրս ի նմա փայլէ, որ եւ քառ մեծի մասին ծնունդ է ոսկեղէն գրչի մեծին Սահակայ՝ վեհագոյն վարժապետի ճարտարաց ժամանակին », իբրեւ այս բնիկ հարազատ հայերէնին ժառանգ կը գնէ Աբաթանգեղոսն ու Բիւզանդը, 5^ր դարու այլ հեղինակները, եկեղեցական մասնանները՝ Մաշտոց, շարական, նոյն դարուն մէջ եղած թարգմանութիւնները, որոց « պատկառ եւ ստեղ պարս է կալ որում կամքն իցեն յստակ եւ վայելուչ՝ միանգամայն պերճ եւ պայծառ ստանալ զձն բնիկ հայեցի », եւ յետոյ յաջորդ դարուց մէջ մինչեւ Ժ. դար՝ իբրեւ « նոյն տոհմային ոճոյն աւանդապահ կամ նախանձաւոր », կը յիշէ Անանիոս Ընտրեացի, Ղեւոնդ Երեց, Լասախվերտացի, Խոսրով Անձեւացի, Ներսէս Ընտրեացի, Իգնատիոս, Սարգիս, Միխիթար Գոշ, եւ ուրիշներ, « որ զարծաթի դարն կացուցանեն զմերոյ գրականութեանս առ առաջնովքն՝ որ զսկին » :

Այս անտախտութիւնները զորս կը քաղենք Հ. Արսէն Բագրատունւոյ Զարգացելոց քերականութեան առ վարժապետս ուղղուած գլխէն, կը ցուցնեն թէ Վենետիկցիք բոլորովին օտար չեն լեզուական խարութեան մը, ընտրողականութեան մը գաղափարին, բայց

նորա ընտրութիւնը ոչ թէ գործերու վրայ կը հաստատեն այնչափ որչափ ոճոյ ներքին հանգամանաց, ու գրաբար լեզուի հետեւելի ու հարազատ համարելի լայն դաշտ մը ցոյց կու տան, մինչդեռ Վիեննացիք կ'անձկացնեն զայդ դաշտը ու կը փակեն զայն միայն Ե. դարու Ա. կիսուն մէջ: Եւ արդարեւ Հ. Արսէնի մատնանիշ բրած խանգարմունքն ալ սկիզբ առած են իսկ եւ իսկ Ե. դարու Բ. կիսուն հետ, որով հին հայերէնի կատարեալ հարազատ ու ճոխունակ շրջանը կը փակուի երկրորդ թարգմանչաց գործունէութեան սկզբին հետ, թէպէտեւ, սոցա ու յարորդ ժամանակաց գործերուն ուշադիր սուսուձասիրութիւնն ալ գեռ շատ բան կարող է ուսուցանել մեզ նոյն իսկ լեզուի տեսակետով, եւ ինքնուրոյն հանգամանքներովն մէն մի հեղինակ ունի իր յատակութիւններն ու գեղեցկութիւններն իսկ:

Ասիկա ըսել է թէ Վենետիկիք ընդհանրապէս ու Բագրատունին եւ Հիւրմուզ մասնաւորապէս նախնեաց լեզուին մշակութեան գործոյն մէջ չեն մատուցած նշանաւոր ծառայութիւն ու չեն արտադրած կարեւոր ու յարգելի աշխատութիւններ: — Ո՛չ երբեք. թէպէտեւ ոչ Վիեննացւոց չափ խորական ու մաքրամոլ ոգւով, սակայն եւ այնպէս նախնեաց հարազատ լեզուին բաւական զգոյշ ու հմտալից հետեւողութեամբ նորա եւս գրած ու թարգմանած են գրաբար գործեր, մանաւանդ ոչ սակաւ գասական հոյակապ երկեր օտար հին եւ նոր մատնագրութիւններէ հայացուցած են, հեզինակելով նաեւ ոչ նուազ գեղեցիկ գործեր: Ըսե՛մ թէ, ինչ ինչ անընտրող գործածութեանց հակառակ, դպրոցին մէջէն, ես, թէեւ Գարագաշի աշակերտ եւ թագնարար, մասնաւոր համակրութիւն մը կը տածէի գէպի Վենետիկեաները ու խանգով ու զմայլումով կը կարդայի անոնց թարգմանութիւնները, Հ. Արսէնի Վէպը, Մելանի "Ղրախտկորուսեալ" ին, Հովերի "Իլիականին": Եւ այլոց գեղեցիկ հայացուձները, որք մեծ հմտութեան, ճաշակի եւ ջանեց արդիւնք են: Խոստովանիլ պէտք է նաեւ թէ Վիեննացիք ալ մերթ շտա մոլեխանդ եղած են այս կէտի մէջ, մերժելով նոյն իսկ բառեր, բարդութիւն կամ ածանց, ըստ ամենայնի համաձայն լեզուին ոգւոյն, լոկ այն պատճառաւ որ նորա գործածուած չէին առաջին թարգմանիչներէն: Բայց Գարագաշեան ալ իր խստութիւնը մեղմացուց, երբ նախնեացմէ

ընդօրինակաբար գրելու տեղ սկսաւ գրել ինքնատիպ ու ազատօրէն, եւ այնպիսի գաղափարներու մասին որք անծանօթ եւ օտար էին նախնեաց: Մոլութիւնը չէ լաւ, բայց բունը անբունէն, հարազատը անհարազատէն, ընտիրը անընտիրէն ընտրել ու որոշել գործ է բարւոյք ճաշակի:

(Արեւելեան Մամուլ, 1904, Թիւ 18)

6. ՀԵՂԼԷՆ ԳՈՍՍԵԿԱՆ ԳՊՐՈՒԹԻՒՆՆԵՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՑԷ

Ա. Յոյն վշուհ

Յոյն լեզուն է մարդկային լեզուներէն այն որում վիճակած է փառաւորագոյն բախտը: Հանդարտ ու պայծառ երկնքի մը տակ, զեփիւռին սոյլք, տերեւոց սօսափունք, ալեաց մրմունջք անոր մեղմին վանգերն են կազմած, եւ առաջին օրէն եղած է ինքն ալ բնութեան ներդաշնակութեանց վրայ յաւելեալ մի նոր երաժշտութիւն: Իւր մանկութեան օրերէն, նա ցոյց կու տայ թէ սահմանուած է տիրել աշխարհի. անդասին ժԲ դարէն, նախ քան մեր թուականն, յոյն գաղթականութեանց հետ դուրս կ'ելնէ իւր օրօրանէն եւ իւր բարբառքը լսելի կ'ընէ յԱրեւելս եւ յԱրեւմուտս. Յոնիայէն մինչեւ Մեծն-Յունաստան, Յաւրիսէն մինչեւ Իբերական թերակղզին կը խօսին զայն: Արագ կը զարգանայ արեւելեան հնագոյն քաղաքակրթութեանց հետ հաղորդակցութեամբ, եւ ահա այս առանձնաշնորհեալ բարբառն, որ պիտի լինէր քերթողական երեւակայութեան եւ ճշմարտախոյզ բանականութեան միանգամայն գերազանց գործին, Այեաներու եւ Ռաբստաներու քնարաց թելերուն վրայ կը թրթռայ, եւ թաղէսներու, Հերակլիտներու, Պիւթագորներու բերնէն կ'սկսի իմաստութիւնը խօսիլ: Անով Հոմեր կ'ստեղծէ դիւցազններգութեան տիպարը, Արքիղոբոս՝ երգիծարանութեան, եւ Պինդար՝ քնարական բանաստեղծութեան: Անով նաեւ լեւկիպպոս եւ Դեմոկրիտ, դարերով յառաջ քան արդի գիտութիւնն, կը քարոզեն նախատարերց կամ հիւլէներու գոյութիւնն եւ նոցա ըստ հարկաւոր օրինաց միաւորումը կամ անջատումը: Իսկ ի՞նչ բառերով կարելի է նկարագրել այն գերապանծ փառքն ուր հասան յոյն լեզուն եւ

գրականութիւնը այն մեծ դարուն մէջ որ անուանեցաւ «դար
 Պերիկլէայ», ուր երեք մեծ Ողբերգականներն եւ կատակերգակն
 Արիստոփան, քսաներկու գար յառաջ, Ռասիններու եւ Մոլիէրե-
 ներու համար հետեւելի այլ ոչ հաւասարելի հրաշակերտ օրի-
 նակներ արտադրեցին, ուր Հերոդոտ, Թուկիդիդէս եւ Քսենոփոն
 ստեղծեցին պատմութիւնը, ուր Պերիկլէայ բերնին մէջ աստի-
 կեան լեզուն թուեցաւ լինել աստուածոց իսկ յատուկ եւ հզօր
 լեզուն, ուր Սոկրատ գիտութիւնը կը հիմնէր՝ ենթադրութիւններէ
 հրաժարելով եւ հռչակելով թէ Ձեք գիտութիւն՝ քայց միայն
 ընդհանուրին: Այնչափ գրական եւ իմաստասիրական ճոխութիւն
 չպարտէր մնալ մի փոքր ժողովրդեան մէջ. այդ յոյն քաղաքա-
 կրթութիւն մարդկային քաղաքակրթութեան խմորն էր եւ
 պարտէր խառնուիլ նորա հետ: Հնչեց ժամը. Յունաստան իւր
 լեզուով, աստուածներով, գրքերով, իմաստուններով, արուես-
 տագետներով սփռեցաւ Ասիոյ վրայ. արեւելեան ծերացեալ
 ոգեսպառ ժողովուրդք իմացական նոր կորով ստացան այդ հեղե-
 ղին կենսաւէտ ջուրերէն. Հելլենականութիւնն (l'hellénisme) էր
 որ Աղեքսանդրի բանակին հետ կու գար Արեւելքը նուաճել:
 Եկաւ ասանէն ի Թերաքէ շումերի լեզուն կը տիրէր. Աղեքսանդրիա եւ
 Պերգամա կը յաջորդէին Աթէնքի փառքին. ալ յոյն քաղաքա-
 կրթութիւնը համաշխարհական կ'ըլլար: Մանաւանդ, երբ,
 Ովրատիոսի բառերով խօսելով, «նուաճեալն Յունաստան նուա-
 ճեց իւր վայրագ յաղթողը եւ կոշտ լատինի մէջ բերաւ արու-
 եստները», յոյն լեզուն՝ լատինականին եւս դայեակ՝ ստացաւ տիե-
 ղերականութիւն մ'որում այսօր ոչ գաղիբերէնն, ոչ անգղիբերէնն
 հասած է: Ուրիշ ազգաց հետ մեք ալ վայելցցիւք հելլենակա-
 թեան բարիքները. մեր նախնիք անոր հիւթով սնուցին իրենց
 միտքն ու պարարեցին իրենց լեզուն ու գրականութիւնն. մեր
 Արաւազղը գրեց յունարէն ողբերգութիւններ. մեր մի փա-
 ոււտը արեւակիցը, Պրոյերեսիոս Հայկազն, Աթէնքի ճարտար-
 խօսութեան բեմը գրաւեց, եւ գոռոզն Հոռոմ անդրի նուիրեց
 Հայ Պերճախօսին սալ արձանագրութեամբ՝ «Թագուհին քաղա-
 քաց՝ Թագաւորի բանին»: Հինգերորդ դարուն մէջ կրթական
 գաղթականութիւն մը մեկնեցաւ մեր մնագաւառէն դէպ Անտիօք,
 Աթէնք, Բիւզանդիոն, եւ այն ասան Հայ գրականութիւնը իւր

ուկեզէն առճարին ջահերը վառեց այն լուսով զոր յունական կրթութեան կեդրոններէն բերած էին իւր գիտասեր զաւակունք: Ի զուր Յուստիանոս փառեց Աթէնքի գպրոցները. Միջին դարու պատգամը եղաւ յոյն իմաստասիրաց իշխանը՝ Արիստոտել, եւ Օսկանան Ասուածաշունչին հետ համապատիւ փայլեցաւ: Անմահութեան համար ստեղծուած լեզու, ամէն քաղաքական կործանումէ նա կը պրծնէր յաղթական. նա ոչ միայն տնմահ էր, այլ եւ կը թուէր ստանձնած լինել իմացական մեռելութեանց մէջ կենաց շեշտերը հնչեցնելու պաշտանը: Այսպէս, յետ Միջին դարու ասանդարեան մեռելական քնոյն, Եւրոպա կը վերածնէր յոյն հնութեան բարբառներուն ի լուր. Եւրոպա կը յոյնանար, եւ նոր ժամանակները կը բացուէին: Յոյն լեզուն իւր ծնգաց վըայ դիեցուց ու դաստիարակեց եւրոպական լեզուներն ու գրականութիւնքն, եւ այսօր՝ եթէ քան զինքն առաւել կը խօսին գաղիերէնն եւ անգղերէնն, մի խաբուիք, յունարէնն է որ կը խօսի անոնց մէջ: Դեռ առանց անոր կամ անոր մատենագրաց ծանօթութեան չիք կրթութիւն կատարեալ: Այս լեզուին սոյն բացառիկ ու եզական դերն աչքի առջեւ ունենալով, պէտք չէ ուրեմն զարմանալք որ նախնի յոյք բարբարոս եւ անլեզու կը կոչէին այն ազգերը որք չէին խօսեր յունարէնը, որ սահմանուած էր ըլլալու քաղաքակրթութեան գերազանց լեզուն, — որ լեզուն էր իմացական կենաց: Կենաց բանն ալ անով չքարոզուեցաւ աշխարհի:

(Ժաղիկ Մանկանց, 1891, Թիւ 18)

Բ. Պերիլիտի Գուրը

Դար հոյակապ, որ անսովոր փառքով մը փայլեցաւ, եւ որ իր հրաշակերտ արդիւնքներով, իբր ամենափայլուն աստղերէ կազմուած համաստեղութիւն մը, պիտի շողայ յարածամ պատմութեան երկնքին մէջ ու պիտի շարունակէ ազնուացնել իրարու յաջորդող սերունդները:

Ապաքէն յանյիշատակ ժամանակաց հետէ Ելլագա ունեցած էր իւր բանաստեղծները, իւր իմաստունները: Որպէտսի քնարին դիւթիչ շեշտերը դժոխոց թագաւորն իսկ գորովեցուցած էին, եւ Ամիրիոնի երգերուն ձայնով Թեքէ քաղաքին պարսպի քարերը

ինքնին եկած էին իրարու վրայ շարուելու: Դարերով յառաջ
 Հոմեր երկու անձն՝ զիւցազներգութեանց մէջ երգած էր Յու-
 նաստանի դիքն ու դիւցազունքը: Նախ քան զմեր թուականը
 եօթներորդ եւ վեցերորդ դարուց մէջ՝ երաժշտութիւն եւ բա-
 նաստեղծութիւն, միացած, հոգին եղած էին Յունաց ազգային,
 կրօնական եւ ընտանեկան հանգեաներուն: Քնարական բանա-
 ստեղծութիւնը, որ իւր անուան ճշգիւ կը պատասխանէր յայն-
 ժամ՝ լինելով ընկերացեալ քնարէն, յառաջ կը բերէր Սափ-
 փովներ, Աղկէոսներ, Անակրէոսներ, Յիրակոսներ եւ մանաւանդ
 գերագանց բանաստեղծն Պինդարոս, որ գոգցես յոյն ցեղին միու-
 թիւնը կ'անձնաւորէր հնութեան մէջ ուր բաժնուած էր նա այլ
 եւ այլ թագաւորութեանց ու հասարակապետութեանց, եւ որ
 պերճ ներբողներու մէջ կ'անձնահայտէր Աղիմպիայի, Գեղպիտի,
 Պարոսոցիսի ու Նեմէայի մէջ մրցողներուն փառքը: Այն ժամա-
 նակէն ետքն ալ որ կը կոչուի դար Պերիկղեայ՝ յունական հան-
 ճարը ծնունդ պիտի տայ, ի մէջ այլոց, Թեոկրիտի որ հովուեր-
 գութիւնն ստեղծեց, Պողիւբի՝ պտամիչ իմաստասեր որ ուզեց
 բարձրէն դիտել մարդկային իրողութիւնները եւ զանոնք իրարու
 հետ շղթայող կտայր գտնել, Սարաբոնի որ հին աշխարհը մեզ
 գծեց, Պլուտարքոսի որ իւր սքանչելի Վարքերով ինքզինք դառ-
 տիարակ կացուց ապագայ սերունդներուն, եւ, երբ ծաղկիլ սկսաւ
 քրիստոնէութիւն, Աթանասներու, Նազիանզացիներու, Բարսեղ-
 ներու, Ոսկեբերաններու նման կրօնի հրաշքու քարոզչաց: Բայց
 ոչ երբեք յոյն բանաստեղծը եւ յոյն արձակաբանը խօսեցան
 այնքան քաղցր, այնքան ներդաշնակ լեզու մ'որքան Պերիկղեան
 շրջանին մէջ, ուր Ատտիկեան բարբառը դարձաւ մի խօսեալ
 երաժշտութիւն, եւ ոչ երբեք տեսնուեցան՝ այնքան անձուկ
 միջոցի եւ տեղւոյ մէջ՝ այնքան խիտ առ խիտ հանձարներ, հոյա-
 կապ երկովք բեղմնառատ:

Աթէնքն է վառարան այս հրաշալի մտաւոր գործունէու-
 թեան: Մարական պատերազմաց մէջ նա ստանձնեց առաջնորդող
 գեր եւ եղաւ ճշմարիտ մայրաքաղաքն Յունաստանի: Քաղաքական
 փայլին միացան գրականն ու արուեստագիտականը, եւ, ըստ
 բացատրութեանն Թուկիդիդեայ, արգարեւ Նլագայի դպրոցն
 եղաւ Աթէնք: Մարական պատերազմները ոգիներու մեծ ցնցում

տուած էին, եւ փառաւոր յաղթութիւնը՝ զոր տփ մը ժողովուրդ տարած էր քսերքսէսի ծովացեալ թանակին դէմ՝ նոր կեանքով մ'ոգեւորեց Աթէնքը: Երեսուն տարիներ այս մեծ քաղաքն իւր գլուխն ունեցաւ մեծ քաղաքացի մը, Պերիկղէսը, որ նորա ոյժերուն տուաւ ազնուական ուղղութիւն, ինքն իսկ կազմուած երկու չքնաղ եւ մարձր անձնաւորութեանց ներշնչութեան տակ, յոյ մին իմաստասէր մ'է գերազանց, — Անասագոր —, եւ միւսն՝ կին մի մեծահոգի — Ասպասիա: Ուստի եւ, յաշս յետագայ սերնդոց, Պերիկղէս կը ներկայանայ շքապատեալ իմաստասիրաց, բանաստեղծից, պատմագրաց, արուեստագիտաց առաւել քան արքայական շքադիր խումբէ մը, որոց գործերը կը մեան ցայսօր գերագոյն օրինակ ճաշակի, ընտելագոյն դաս մարդկանի եւ պատիւ մարդկային հանճարոյն՝ իբրեւ քաջայանդուգն փորձեր ի գիւտ ճշմարտին:

Թողունք ճարտարապետութիւնն ու արձանագործութիւնը, որք զԱթէնս զարդարեցին հրաշակերտ սաճարներով, թատրոններով, արձաններով որոց մասցորդք ցայսօր մեծ զարմացման առարկայ են, եւ ամփոփենք մեր խօսքը գրականութեան վրայ: Ահա՛ թատրը ուր կը փայլին Եսքիդէս, Սոփոկղէս եւ Եւրիպիդէս, պատկերացնելով մարդկային սիրաբ ճակատագրին կամ պարտքին հետ ի պայքար մտած, եւ Արիստոփան՝ երգիծարանող ռամկին ու ռամկավարաց թերութիւնները: Ահա՛ բեմի հրապարակին ուր Պերիկղէս, զոր «Ողիմպեան», յորջորջեցին, կը խօսի արդարեւ աստուածային վեհութեամբ եւ առաքինի ու իմաստասէր մարգուճխութեամբ, եւ զոր յետոյ պիտի գողացնեն Դեմոսթենեայ եւ Եսքինէսի շեշտերը: Ար ծնի Պատմութիւնը, որ մինչեւ նոյն ասեն բանաստեղծութեան հետ խառն էր. Հերոդոտ կը գրէ իւր «Մարական Պատերազմաց Պատմութիւնը», կեդրոն որոյ շուրջ կը բուլրէ պատմութիւնը բազում այլ ժողովրդոց. Թուկիդիդէս կը պատմէ Պելոպոնեսական Պատերազմն, առաջին անգամ զնելով քննական հետազօտող ոգին դիպաց զըուցին մէջ. քսենոփոն կը պատմէ՝ ի մէջ այլոց՝ զԴարձ ըլիւրուց, գործ յորում — քաղցր է ինձ յիշել ասա զայս —, կը խօսի նաեւ հին Հայոց բարուց եւ կենցաղոյն վրայ: Մեղուն Ատտիկեան, որպէս յորջորջեցին զքսենոփոն, աշակերտն էր Սոկրատայ: Ահա՛ մի այլ մեծ անձնաւորու-

Թիւնն այս բեղմնաւոր ժամանակին, զոր չպիտի վարանիմ կոչել մեծագոյնն, իրաւունք առլով Գեղփիսի պատգամին որ զայն մարգոց իմաստնագոյնն հռչակած էր: Սօկրատ, Թշնամի Յօփեստից, սուաւնոր եւ հաստատուն աղղութիւն իմաստասիրութեան, քննութիւնը նշանակեց պայման գիւտոյ ճշմարտութեան, եւ անձին ուսումը գրաւ սկիզբն իմաստասիրական հետազօտութեանց: Բարձրացաւ Աստուծոյ միութեան եւ հոգւոյ անմահութեան գաղափարաց. ի մահ դապապարտուած, դեռ կ'իմաստասիրէր զուարթ իւր աշակերտաց հետ մինչեւ մահուան գրկաց մէջ: Ասանցմէ պիտի ելնէ Պլատոնն ասուածային, իտեականութեան հիմնադիր, որոյ աշակերտն Արիստոտել պիտի ներկայացնէ մանաւանդ գիտնական փորձարկող ոգին եւ իւր փիլիսոփայական ու գիտնական գործերով պիտի ապահովէ իւր անձին ճոխութիւն մը որ պիտի կտրէ անցնի դարեր եւ մինչեւ ԺԸ դար «վարդապետն ասաց» ը պիտի լսեցնէ ամէն ընդգիմահասութիւն:

Փո՛րք բոլոր այս մեծ ոգիներուն որք հետամուտ եղան ճշմարտին, գեղեցիկն ու բարւոյն, որք այնքան վսեմ իմաստներու ընծայեցին այնպիսի վսեմ ու հրապուրելի բացատրութիւն, եւ որք մարդկութեան յառաջդիմական ընթացքին մէջ լուսատու զամպարներ եղան:

Ու անմահ է փառքն ալ Յունաստանի, մերն այս հոյակապ ոգեաց: Մարդկութիւնն յաւէտ երախտապարտ պիտի մնայ իրեն:

(Ժաղիկ, 1890, Թիւ 7)

Գ. Էին Յսւնաստանի հանճարը

Եթէ կ'ուզէք փայլուն օրինակ մը բարոյական ուժոյ գերազանցութեան ի վերայ նիւթական զօրութեան, առէք հին Ելլադան, այն երկիրն որ փոքր էր այնքան եւ, եւս առաւել, ի փոքր մասուննս կոտորակեալ, եւ քան զոր սակայն չեղաւ աշխարհ մը մեծագոյն: Շատ աւելի կանուխ փայլեցան Նօփիստոս, Ասորեստան, եւ Աեսալք երգուեցան ի Հնդիկս. այլ սակայն ո՛չ մին հասաւ այն քաղաքակրթութեան բարձրութեան ուր բացառիկ շողիւնով ճառագայթեց Յունաստան, իւր ճաճանչներն ամենուրեք սփռելով եւ ժամանակաց խորութեան մէջէն մինչեւ առ մեզ արձակելով

զանոք: Յունաստան իւր կրօնքն ունէր, որպէս այլ ազգք ունէին իւրեանցն. մանաւանդ թէ յաչս յունին ամէն ինչ կրօնական, աստուածային էր, երկինքն ու երկիր, Եօֆն ու ցամաքը, Հունձքերն անդաստանաց ու աստղերն՝ այդ Հունձք երկնային դաշտաց. բայց իւր քուրմեր ոչ երբեք կազմեցին կղերական կազմակերպեալ մի մարմին՝ հոգիներու տիրապետութեան սանձն իբրև ունենալու իրաւունքը պահանջող, եւ կրօնային դաւանութիւնք ոչ երբեք ձեւն առին նուիրական անայլայլելի հանգանակի: Այս պարագայն մեծ նշանակութիւն ունի իբրեւ յունական հանճարոյն զարգացման պատճառներէն մին: Այնու ի սկզբանէ աղափորէն իմաստասիրեցին իւր իմաստունք, իւր փիլիսոփայք. այնու Քաղէս, Եմպետոկղէս, Պիւթագոր, Գեմնկրիա, Անաքսագոր, Սոկրատ, Պլատոն, Արիստոտէլ, Ջենոն, Եպիկուր եւ այլք, հետեւելով մի միայն իրենց մտաց ներշնչումներուն, ջանացին բացատրել իրաց սկիզբն, զԱստուած, մարդկային բնութիւնը, պարտականութիւնը, բարին եւ երջանկութիւնը: Ու գիտենք թէ Յունական իմաստութիւնը ինչ մեծ դեր կատարած է մարդկային ազգի քաղաքակրթութեան պործոյն մէջ: Նա ծնունդ տուաւ գիտութեանց՝ բանալով անծանօթին գնալու ճանապարհը. նա ցրուեց տակաւ կրօնական անհեթեթ գաղափարներ, նա դաստիարակեց մարդկային սիրտն ուսանելով եւ ուսուցանելով կամաց օրէնքները որք կը կոչուին բարոյական. նա վերջապէս պատրաստեց գետինը քրիստոնէութեան գահակալութեանն համար: Բացէք դեռ այսօր իսկ Հոմերը, Եսքիդէսը, Սոփոկղէսը, Պլատոնը, Քսենոփոնը, Արիստոտէլը, Գեմոսթէնը, եւ պիտի գտնէք բարոյական այնպիսի վճիռներ որք իրենց բարձրութեամբ արժանի են դրուելու Աւետարանի վսեմագոյն պատուէրներուն առընթեր: Սոփոկղէս ըսել կու տար Անտիգոնի թէ «Գրեալ օրէնքներէ վեր կան անգիր օրէնքներ — խղճի աստուածադիր օրէնքները — որոց մանաւանդ հնազանդել պարտի մարդ», եւ դարձեալ՝ «Սիրելու համար եղած եմ ես, եւ ոչ ատելու»:

Այսպէս Հելլէն իմաստասիրութեան վսեմ գաղափարներ հիանալի բացատրութիւն մը կ'առնուին Ելլագայի մատենագրաց գործերուն մէջ, որք ժողովրդեան խաւերուն մէջ կ'երթային սփռել զայնս: Յունական մատենագրութիւնն... ո՛հ, ի՛նչ դիւթութիւն,

Ինչ գանձ, ինչ հրաշալիք: — Որպէս ժայռի մը կողէն ցայտելով աղբիւր մ'իներնարուղիս՝ կարկաջաձայն կը հոսի դարի վար. կը պտտի դաշտաց վրայ, առնելով ձեւեր զանազան, աստ յորինելով ընակ ականակիտ, անդ օձապտոյտ սողոսկելով, հեռուն կազմելով ջրվէժ մը լուսափրփուր շառաչուն, նոյնպէս բանաստեղծութիւնն իներնաբեր բղնեցաւ այս օժտեալ ժողովրդի հոգիէն եւ ձեւն զգեցաւ այլեւայլ քերթողական սեռերու: Դիւցաղներգութիւնը (épopée), իբրեւ ընդարձակ մագական հայելի, ցոլացուց դիւցաղնական ժամանակաց բարքն իւրեանց պարզութեան, միամտութեան եւ ոչ անմասն յազնութենէ բրտութեանը մէջ: Քնարերգութիւնը երգեց նուիրական բազնաց շուրջը, ընտանեկան վառարանին ու սեղանին առջեւ, նստաւ գովասան ազգային հանդիսից մէջ, մրմնջեց հեշտութենէ կամ վշտէ հառաչող սրախն մրմունջները: Ողբերգութիւնը Բակքոսեան տօները դարձուց իմացական աշխարհախումբ խրախճանութեանց, եւ նատակերգութիւնը կանգնեց բարոյականի եւ աշխարհվարութեան մի եզակի գասաբեմ, ուր ծաղըն, իմաստութիւնն ու բանաստեղծութիւնը յիրեար խառնուեցան մարդոց հոգիները զուարճացնելու եւ միտնգամայն հրահանգելու համար: Իւր փառաւոր կեանքն անմահացնել կ'ուզէր այս ժողովուրդն, ու ահա Պատմութիւնը կը գտներ: Ար խորհէր տիեզերքին վրայ, մեծ առեղծուած, եւ կը խորհէր մարդոյն վրայ, առեղծուած ոչ նուազ մեծ, եւ ահա իմաստասիրութիւնը կը ստեղծէր: Եւ բանաստեղծութեան ու արձակի այս սեռը շուտով իրենց կատարելութեան զենիթը կը հասնէին, եւ Պառնասոսի գագաթան վրայ կը կազմուէր այլապէս վեհ աստուածներու — իմացականութեան աստուածոց — կաճառ մ'ուր մեծափառ կը բազմէին Ղուսի, Հեսիոդ, Պինդար, Հերոդոտ, Եսքիլ, Սոփոկլէս, Եւրիպիդէս, Պերիկլէս, Սոկրատ, Արիստոփան, Թուկիդիդէս, Պլատոն, Քսենոփոն, Արիստոտ, Գեմոսթէն, Եսքինէս, Թէոկրիտ, Ղուկիանոսարդարեւ ակումբ աստուածախումբ, որ կը շարունակէ ընդունիլ մարդկային ազգի պաշտամունքն, երբ արդէն դարերէ հետէ լուռ ու թափուր է Ողիմպոս: Գեղեցկին սիրով սողորեալ ու արբեցեալ այս ժողովուրդը, մանաւանդ Աթենացին անոր մէջ, որ յոյն սեռի եզակի ձրից բարձրագոյն ներկայացուցին եղաւ, բացատրեց գեղեցիկը նաեւ աչքի խօսող ձեւերու տակ. Յոյն Գեղեցիկ-

Գպրութեանց արժանաւոր քոյր հանդիսացան Յոյն Գեղարուեստք: Փիգիասներ եւ Պրաքսիտելներ յուսահատեցուցին յետագայ դարուց արձանագործները. Ապելէս եւ Ջեւքսիս լեզու առին գոյնին, եւ Յիմոթէոս՝ տղիքին. — իսկ Պարթենոն, իւր աւերակաց մէջ իսկ վեհաշուք, կը կանգնի ցայսօր Ակրոպոլի բարձանց վրայ իբրեւ վիմատառուած մարդկային հանճարոյ մի վեհմ խորհրդոյն, իբրեւ վիմեղէն քերթութիւն մը, հեշտացուցիչ աչաց եւ հոգւոյ:

Այս պանծալի քաղաքակրթութիւն ստճմանափակ չմնաց յեւլագա. նորա գաղթականութիւնք, նորա արշաւանք, նորա գրագէտք ու արուեստագէտք սփռեցին զայն ընդ աշխարհ. բոլոր Արեւելք յոյնացաւ, իւր աստուածները նոյնացուց յոյն աստուածոց հետ, եւ շեղէն ճարտարաց անդրիները կանգնեց իւր մեհնից մէջ. իբրեւ գերազանց լեզու բանականութեան եւ երեւակայութեան, սովորեցաւ ու խօսեցաւ հելլեներէնը: Իսկ յոյն գրականութեան եւ արուեստից վարպետք բացին օգտակնդիր ու դրական Հռովմայեցւոյն առջեւ իմացական կեանքի հորիզոնը, ու դրին գրիչն ու գրոցն ու քնարը նորա բիրտ ձեռներուն մէջ, որք զէնք միայն կրել սովոր էին: Ինչ որ հռովմական քաղաքակրթութիւն կ'անուանենք՝ արդիւնքն է յունին նմանողութեան, յոյն դաստիարակութեան. եւ այն մեծ ազդեցութիւն զոր այդ քաղաքակրթութիւնն ունեցաւ Արեւմուտքը դաստիարակելու մասին՝ կը բղէի դարձեալ յոյն հանճարոյ անսպառ տղբիւրէն: Այս աղբիւր, յետ վերածնութեամբ (Renaissance) յառաջ բերած նորածաղիկ փթթմանն, կը շարունակէ կազմել ազնուացնել ամէն ուսանող նոր սերնդեան գրական ճաշակն ու բարոյական զգայութիւնը, եւ, ցորչափ գեղեցիկն հրապուրէ մարդկային հոգիները, պիտի հրաւիրէ միշտ մտքերը գալ ըմպել իւր զմայլարար կենսաւէտ ալիքէն:

(Պատկ. Աշխարհիկ Գրականութեան, 1893)

7. ՊԵՐՃԱԽՍՈՒԹԻՒՆ

Թերեւս, սիրելի ընթերցող, պատահած է քեզ ներկայ գտնուիլ մի պերճախօս ատենաբանութեան: Գիտած ես յայնժամ հոգւոյդ յուզմունքն, ու զննած ես շուրջդ եզրը ունկնդիր ամբողջին դիմաց վրայ այլազան կրից ու հակընդդէմ զգացումներու

փոխ առ փոխ նկարուիլն: Չե՞ն զգացած յայնժամ սիրազ իբր
 ալեկոծուած մի բուռն հողմէ: Բունաւոր գաղափարաց հոսանք մ'որ
 կ'ողողէ միտքդ, եւ կամքդ իբր քշուած ասորուած մի անդիմա-
 դրելի հզօր զօրութենէ. չե՞ն դիտած թէ ի՞նչպէս ամէն շուրջ կը
 մարի գօռացող ձայնին առաջին շեշտերուն, եւ բովանդակ բազ-
 մութիւնն ականջ կարած կ'ունկնդրէ լռին՝ այնպէս որ այդ
 խուռնամբոխ հրապարակին մէջ ճանճի մի բզզիւնն պիտի կրնար
 լսելի լինել յստափօրէն. չե՞ն տեսած թէ ի՞նչպէս անձնիւր անհա-
 կախուած է՝ յակճիո՛ւ տաննախօսին շրթներէն, թէ մէն մի ունկըն-
 դրի դիմաց գծերն ինչպէս կը ներդաշնակին տաննարանին
 դիմաց բացատրութեան, թէ ի՞նչպէս ամենուն սիրտք կը արոփեն
 զուգաբախ միեւնոյն կրից ազդեցութեան տակ, որպէս թէ մի
 ելեքտրական հեղուկ սրտէ ի սիրտ ընթանար արագ մէկ ակըն-
 թարթի մէջ եւ ցնցէր միահաղոյն համայն հոգիներն, եւ թէ
 ի՞նչպէս հաւանութեան աղաղակներ ու ծափեր կ'արձակուին
 որոտընդոստ հազարաւոր բերաններէ ու ձեռներէ, յեղակարծ
 պայթում բուռն զգացման որ ընդ երկար բարձրացած ու զսպուած
 մնացած էր լանջաց տակ, երբ հրապարակախօսն կանգ կ'առնու
 մի պահ կամ կ'աւարտէ իւր ճառն: Եթէ չես կրցած նայիլ շուրջդ
 ու դիտել, այդպիսի պարագայի մէջ առանձին զգալով ինքզինքդ,
 մերկանալով գոգցես քու էութիւնդ ու պահ մ'ապրելով խօսու-
 ղին մէջ, մտածելով եւ զգալով եւ կամելով նորա հետ, կրնաս
 քու հոգեկան կացութենէդ մակաբերել այլոցն: Այո՛, այդպիսի է
 պերճախօսութիւնն: Կը բռնաբարէ միտքդ ու համոզում մի կը
 դնէ հոն. կիրք մի կը բորբոքէ սրտիդ մէջ որոյ առջեւ կը լռեն
 ու կը շիջանին բոլոր յոյզերդ, նպատակ մի մասնանիշ կ'ընէ քեզ
 յոր՝ իբր բնազդէ վարուած՝ կը մղուի կամքդ անզուսպ: Շունչ
 մ'է մեծազօր որ մէկ բերնէ կ'ելնէ ու կը փոթորկէ ողջոյն հրապար-
 ակին, սառն ամբոխ մի յանկարծ կը վառէ աւիւնով ու խանդով,
 հանդարտ ակումբ մի՝ որ նստած է անտարբեր՝ յոտն կը հանէ
 հրաշունչ մոլեգին, եւ կամ գրգռեալ ժողովրդեան մի վերայ կը
 սփռէ՝ գոգցես դիւթութեամբ՝ ոգին խաղաղութեան: Լսած ես
 երբեք հովին յառնելն անտառին մէջ: Լուռ էր այն. հեռաւոր
 մուռնչ մի կը լսուի հօրիզոնին խորերէն որ երթալով կը մօտի,
 կը մտնէ մթին անտառին մէջ, եւ ահա սարսուռ մի կ'անցնի ծա-

ուց վրայէն, խուլ սօսափուն մի կը լսուի, երերակոծ կը տարու-
 բերին ծառք, եւ սօսափունը կը բարձրանայ եւ ողջոյն անսառն
 կը տատանի ու կը գոչէ ահեղագոռ: Նկատած ես դարձեալ ալե-
 խուով ծոփն որոյ վրայ կը շնչէ յանկարծ խաղաղարար սիւքն,
 փրփրադէզ մուսլ կոհակք կ'անկանին կը փշրին, կը ծաղկին
 ալիք ու կը ժպտի այնաց միապաղաղ մահերեւոյթն: Մրկաբեր
 հողմն ու խաղաղասփիւռ զեփիւռն պերճախօսութիւնն է, եւ
 անսառն ու ծոփն՝ այն հազարաւոր հոգիներն որք նորա ազգեցու-
 թեան կ'ենթարկին: Պերճախօսութիւնն է այս դիմաութեններու,
 Կիկերոններու, Ռսկեբերաննեցու, Պաիււկներու, Միբազոյններու,
 Զաթամներու, Լամարթիներու, Կամպէթաններու, եւ ամէն անոնք
 որք առաւել կամ նուազ ունին յինքեանս այդ աստուածեղէն
 շունչն՝ ունին բաժին այդ գերազօր ազգեցութենէն, — կարո-
 ղութիւն խօսքի զօրութեամբ ներգործելու մտաց, սրտի եւ կամաց
 վրայ, որպէս կը սահմանեն զՊերճախօսութիւն, կարողութիւն
 մտքերը նուաճելու այն գաղափարին զոր կը բաղձայ մարդ ընդու-
 նուած տեսնել ուրիշներէ, գրգռելու կամ հանդարտելու, խան-
 դաղատելու կամ ամոքելու, սիրով կամ ատելութեամբ, զմոյլ-
 մամբ կամ պժգանօք համակելու հոգիներն, կամեցողութիւնը
 շարժելու յայս կամ յայն գործ: Արդարեւ գերագոյն կարողու-
 թիւն, որոյ աղօս մի պատկերը կը տեսնէր Բապշալ ամէն այլ
 իշխանութեան վրայ եւ զոր այնքան աւելի ազնիւ կը նկատեր
 որքան հոգւոյն՝ այն է մարդուն ազնուագոյն կարողութեանց վրայ
 ի գործ կը դրուի այն:

Այս կարողութիւնն, յայտնի է, մարդոյն հետ միայն կրնայ
 ծնիլ. բնութիւնը կու տայ զայն առանձնաշնորհեալ ոգիներու:
 Ուսմունք չեն կարող փոխանակել նմա: Արիստոտելի եւ Վուին-
 աիլիանոսի բոլոր հոնտորական կանոններն թէ լեցնես մի մաքի մէջ
 որ ի բնէ զուրկ է այդ ձիրքէն՝ չես յաջողիր յառաջ բերել
 խօսող մ'որ գէթ հաւասար զօրութեամբ կարենայ միջիլ մի
 անարուեստ աստեաբանի հետ որոյ բերնին մէջ, սակայն, բնու-
 թիւնը դրած է մի կրակէ լեզու: Հաւասար կրթութեամբ զար-
 գացեալ անձինք կարող են մի եւ նոյն դիւրութեամբ, միեւնոյն
 ազգուութեամբ եւ միեւնոյն արդեամբ խօսիլ նոյն նիւթոյն
 վրայ: Յոյժ հաւանականաբար նոյն համոզումներն ունին, նոյն

զգացումներով տոգորուած են, եւ սակայն մին կարծող է իւր համոզումներն անցընել այլոց մտքին մէջ եւ զայս համակրել իրեն, եւ միւսն հազիւ կրնայ անգոյն անկենդան մի բացատրութիւնն ընել իւր գաղափարին եւ զգացման: Այնքան տարբեր է պերճախօսութեան կարողութիւնն արուեստէ որ սովորական է տեսնել ռամկաց իսկ մէջ այնպիսիներ որոց ուսեալն ալ հաճութեամբ ունին կը դնէ, վասն զի պայծառութիւն մի կայ իրենց խօսքին մէջ, կարգ մ'ու աստիճանաւորում մի, ջերմութիւն մ'որ սրտինն է, երփներանգ բան մ'որ երեւակայութեանն է, շեշտ մ'որ հոգւոյնն է: Բնազգարար կը խօսին այդպէս. լեզուանի են, պերճախօսի խմորն ունին: Եւ արդէն արուեստն հոս եւս, ինչպէս ուրիշ ամէն տեղ, հետեւած է կարողութեան. տեսականը յետոյ է քան զգործնականն: Դեռ հետարութիւնն չստեղծուած, դեռ խոտրատ, Արիստոտէլ եւ Վոլինաիլիանոս պերճախօսութիւնն կանոններու եւ օրինաց չենթարկած, ճարտասան ասնաբաններ կը վարէին ժողովուրդներն իրենց լեզուին ծայրով, բարուց խժոժութիւնը կը մեղմէին, սկարը կը պաշտպանէին բիրտ ուժոյն բռնաբարութեանց դէմ, ընկերութեանց ու քաղաքաց հիմ կը դնէին, անհատից ու ցեղից մէջ արիւնային պայքարներ կը խաղաղէին. Սողոն եւ Պերիկղէս օրէնք կու տային Աթէնքի, Տիրատոս ի յաղթութիւն կը ասնէր Սպարտացիներն: Այո՛, իբր առաջին պայման, հարկ է որ պերճախօսն ընչունած լինի բնութենէ ինչ ինչ ձիրքեր, յատուկ կազմաւորութիւն մի: Կորովի, ուղղախոհ եւ արագաթուիչ միտք, խորագգած՝ գիւրտվառ սիրտ, զօրեղ երեւակայութիւն եւ ճաշակ, սոքա են հիմնական կարեւոր հանգամանք ճարտարախօսին. պէտք է որ հաստատէ եւ հերքէ, դատէ, իմաստասիրէ, զուգորդէ գաղափարներն, ապա հարկ է որ լինի քաջ խորհող, շուտ մտածող, լաւ արամբարանող. պէտք է որ մարդկային սրտի թելերը թրթռացնէ, հոգւոյն խօսի, կոչում ընէ զգացումներու՝ բնազգմանց, եւ առ այս հարկ է որ զգալ գիտնայ, յուզուիլ գիտնայ. — « Ինձմէ արտօսը խլելու համար քեզ պարտ է արտասուել » ըսած է Պօպլոյ իրաւամբ —. պէտք է որ կենդանի եւ ազգու պատկերներով ընծայեցնէ իրողութիւններն եւ յղանայ ու կապակցէ համոզկեր հնարքներն, ուստի եւ հարկ է նմա ունենալ աշխոյժ երեւակայութիւն, եւ վերջապէս

կարենալու համար ընտրել ազնիւն ու վայելուչն, գեղեցիկն ու պատշաճն պարտի օժտեալ լինել ճաշակաւ:

Բայց չեն բաւեր սոքա կազմելու կատարեալ ճարտարա-
խօսը: Ո՛չ միայն իւր միտքն պիտի լինի ի բնէ կորովի՝ ողջախոհ,
այլ եւ լուսաւոր, զարգացեալ. ո՛չ միայն իւր սիրտն պիտի լինի
գիւրազգած, այլ եւ ազնիւ, մշակեալ: Եթէ իւր յողթանակը
մաքերը նուաճելն է, ճշմարտութիւնն է իւր գերազանց զէնքն, եւ
որչափ աւելի ճշմարտութեանց լուսով ողողուն ու պարարուն է
իւր հանճարն այնքան եւս հզօր ու արգիւնաւոր է նորա ներ-
գործութիւնն օգիներու վրայ: Ստութեան, նախապաշարու-
մի վրայ հիմնուած շէնք մի, թէեւ ճարտար, իսկոյն կը կործանի
ճշմարտութեան մէկ շնչն: Պէտք է որ գիտութեան հեղինակու-
թիւնն միանայ բնածիր հանճարոյ ուժոյն հետ. պէտք է որ ամ-
բօնն այնպէս նայի ճարտարախօսին որպէս նաւազն փարոսին: Եւ
յետոյ հարկ է ճարտարախօսին լինել այր բարի, պարկեշտ: Ո՛չ
մի յատկութիւն կարող է ներշնչել ունկնդրին այն հրապոյր ու
վստահութիւն զոր կ'ազդէ առաքինութիւն: Հիները պերճախօսը
կը սահմանէին «պարկեշտ մարդ մարտար ի խօսել», եւ
Գեղեցիկ-Դպրութիւնքն կ'անուանէին Բարի-Դպրութիւնք (Op-
timae litterae): Առիթարկ ըսած է «Մեծ մտածումները սրտէն
կու գան», եթէ այդ սիրտ չբարախէ ազնիւ եւ վեհ զգացումնե-
րով, եթէ գեղեցիկն, բարւոյն, ճշմարտին սէրն չտիրէ նորա մէջ,
եթէ հանրային օգտի կիրքն չվառի ի նմա, ի՞նչպէս կրնայ զուրս
ցայտել անտի ճշմարիտ պերճախօսութիւնն: Ի՞նչ որ ալ ընէ,
պիտի խօսի հրապարակախօսն յանուն ճշմարտութեան, յանուն
Արդարութեան, յանուն Եղբայրութեան, յանուն Հայրենեաց եւ
Աստուծոյ, եւ երբ այդ անուններ պատիր գիմակներ են որոց տակ
կը ծածկէ նա անձնական շահն ու գձուձ կրից գոհացման տենչն,
այն ատեն ի զուր պիտի գոռայ շանթէ, ունկնդիրն կը ճանչէ
զինքն ու կը խնդայ իւր ապիկար ճիգերուն, իւր ճամարտակու-
թեան վրայ. եւ եթէ չճանչէ իսկ, կեղծաւոր պերճախօսութիւն
մ'ունի այն սրտագին շեշտերն, այն կենդանի հուրն, այն անդի-
մադրելի հրապոյրն զոր ներքին համոզման, հոգւոյ ճշմարիտ յու-
զումներուն մէջ միայն կարող է գտնել ատենաբանն: Շատոնց
ըսած է Սոկրատ, «Երեւելու լաւագոյն միջոցն լինելն է», ի՞նչ

բանի կը ծառայեն հոնտորական բարք (moeurs oratoires), եթէ ճառին մէջ իրական բարուց (moeurs réelles) ցորացումն չեն: Ժուպերի համեմատ ալ, «Պէտք է որ մտածումներն հոգիէն ծնին, բառերը մտածումներէն եւ խօսքերը բառերէն»: Հոգիէ զուրկ ճառ մի հիւս մ'է մեծահնչուն այլ դատարկ բառերու, փայլուն այլ սնանկ ձեւերու եւ չ'արժանանար այն յազթանակին որ պահուած է անկեղծ՝ համոզեալ հոգիներէ բղետած խօսքերու. ամպ մ'է որ կը գոռայ առանց անձրեւելու:

Երբ ճարտարախօսն իւր բարձր ու զարգացեալ բանականութեան, իւր վառ երեւակայութեան, իւր զգայուն եւ անկեղծ սրտին, իւր վայրկենական ազաւորութեանց ու պարագայից ներշնչումներուն մէջ քաղած է իւր գաղափարներու, պատկերաց եւ զգացումներու գեղեցիկ շղթային օղակներն, հասած է այլեւս արուեստին կատարելութեան եւ բան մ'այլեւս չի պակասիր իրեն ամենեւին ապահով եւ արագ գործելու համար իւր յազթանակին. — այո՛, անտարակոյտ բան մ'ալ պէտք է իրեն, եւ այդ է ձայնը, այդ է ձեւը: Գիտեմք թէ Գեմուսթենէսի համար աստեան-խօսին առաջին յատկութիւնն ալ, երկրորդն ու երրորդն ալ այս էր: Եթէ արդի ժամանակաց ունկնդիրն ճառին ընտրութեան առաջին պայման կը նկատէ իմաստն ու զգացումն, չի խոտեր բնաւ գեղեցիկ առողջանութիւն մ'եւ մարմնոց համար լեզուն որ կը միանայ խօսքին հետ, մանաւանդ զի ճառն ի նմանէ կ'ընդունի անհամեմատ կենդանութիւն եւ նորօրինակ ուժգնութիւն: «Ի՞նչ պիտի ըլլար ապա եթէ նոյն ինքն առիւծը լսէիք», կ'ըսէր Եսքինէս՝ յետ ընթերցանելոյ իւր հակառակորդին ճառերն իւր աշակերտաց ողջ մոլեգինս կը ծափահարէին՝ ընկճուած նոցա զօրութենէն եւ գեղեցիկութենէն: Անոգի, անոցն արտասանութիւն մի կ'սպաննէ գեղեցիկագոյն ճառն, եւ ասնաբանին ցուրտ ու անշարժ կերպարանն եւ դէմքն ցուրտ եւ անաարբեր կը թողուն ունկնդիրներն ալ: Հնչուն, թրթուուն, յստակ ու ճկուն ձայն մի, որ գիտէ յարմարիլ լսարանին ընդարձակութեան, որ կարող է բարձրանալ եւ խոնարհիլ իմաստից սասակութեան կամ մեղմութեան համեմատ, եւ զգացման նրբագոյն ու փափկագոյն երանգները բացատրելու համար անթիւ շեշտեր ու ոլորակներ ունի, բամբին ու սուրին, դաշնին ու գոռին մէջտեղ հարուստ աստիճան մի

խաղերու, այնպիսի ձայն մի հզոր օժանդակ մի է տանաբանին եւ թանկագին մի պարգեւն բնութեան. եւ եթէ միանգամայն խօսուն է գէմքն եւ սրտին յոյզերուն հաւատարիմ թարգմանն, եթէ իւր աչերն գիտեն փոխ առ փոխ արցունք, ժպիտ կամ բոց ցայտեցնել, իւր անձն համակ գիտէ կրքի մի ներքեւ ստրսուալ եւ իւր ձեռներն ու մատուներն գիտեն հրամայել, պազատիլ, սաստել, գգուել, ցուցնել, չափել, ո՛հ, այն ատեն չգիտեմ ի՞նչ կը լինի ճարտարախօսն, ի՞նչ կը լինի ատենաբանութեան բեմն. Թաքսր մի կը լինի բեմն զւր ատենախօսը կը ներկայանայ իւր այլակերպեալ մտքգարէ, բազին մ'ուր կը բորբոքի հուր մի նուիրական որոյ օգետու ջերմութեան իւրեանց երակներուն մէջ ծաւալելը կ'զգան միանգամայն ամէն ունկնդիրք . . . :

Հապա արուեստը, հապա հռետորական ուսումը, ո՛ր պէտք է դնել զայն, խոտան եւ անպիտան պէտք է համար/լ եւ հին դպրոցականութեան սին ու ոսին հրահանգաց կարգը վտարել: — Այո՛ եւ ոչ: Այո՛, եթէ Հռետորական արուեստ ըսելով հասկընամք այն ճղճիմ բաժանութեան, այն անվերջանալի խրատներն, այն կազմուպատրաստ հնարքներն, այն կնճռալի կանոններու շեղջն, այն անբնական կամայական կապանքն, զօրս, Գորգիտաէն սկսեալ մինչեւ Էմիլ Լեֆրան՝ անձկամիտ վարժապետներ աւանդած են իբրեւ անվերջելի գիտութիւն եւ անյեղի օրէնք ճաշակի, եւ որք ուսանող պատանութեան միտքը չարչարելէ, բնական ճաշակը թաւաճեցնելէ ու մտաւոր արգասաւորութեան աղբիւրը ցամքեցնելէ զատ արդիւնք չեն ունեցած: Բաժնած են ինչ որ մնութիւնը խաւնած յօգած է, ընդհանրացուցած են ինչ որ հեզինակաց ոմանց կամ ժամանակի մի մասնաւոր եղանակն էր միայն, ազատ մտքին բացատրութեան որոշ կերպ ու կողապար սահմանած, անկայուն երեւակայութեան անփոփոխ ոլորտ մի գծած եւ զգացման ըսած են "Այսչափ միայն զգա", Ցէքարդի հետ կ'աւանտ ես այս ճարտասանութիւնը, Մոլլերի հետ կը խնդամ այս ithosին եւ pathosին վրայ, Բապարտի հետ կը կրկնեմ թէ ճշմարիտ ճարտարախօսութիւնը կը ծիծաղի (այսպէս հասկցուած) ճարտարախօսութեան վրայ, եւ լաւագոյն կը համարիմ թողուլ ուսանողն իւր բնիկ ճաշակի թելադրութեանց քան տալ նմա այդօրինակ տաղտուկ իմաստակ առաջնորդներ, որպէս անհամեմատ կերպով լաւագոյն

եղած են միշտ նորա որք հոգիով միայն խօսած են քան զայնս որք՝ այսպիսի արուեստարկութեամբ՝ իրր հռետորական տիտաններ թառից լեռներ իրարու վրայ բարդեցին: — Ո՛չ, եթէ հռետորական ուսում ըսելով կ'ըմբռնենք ինչ ինչ ընդհանուր կանոններ ողջմտութեան եւ ճաշակի, ինչ ինչ հրահանգներ ոճոյ էական հանգամանց նկատմամբ եւ մանաւանդ մեծ ճարտարիւօսաց ընտիր հատուածոց, նոցա մէջ պարունակուած իմաստի եւ ձեւոյ գեղեցկութեանց, համոզելու եւ շարժելու եղանակաց ուսումնասիրութիւնն եւ ժամանակաւ եւ տեղեւաւ տարբեր գրական հոյակապ յիշատակարանաց աննախապաշար վերլուծութիւնն: Այսպիսի ուսում մի կը կրթէ ու կը փոփոկացնէ բնական ճաշակն, գրական գեղեցկութեան զգացումը կ'արթնցնէ, մտապէս եւ բարոյապէս կը զօրացնէ ու կը բարձրացնէ, կոչումներ կը գրգռէ, արուեստին հնարից ընդարձակութիւնը կը ցուցնէ, կ'ուսուցանէ վստահիլ մտաց եւ սրտի բնազդումներուն ու երեւակայութեան հեղեղին միակ թուամբ ճանչել բանականութիւնն: Մինչ առաջինը կը հաշմէ, վերջինը կը զարգացնէ. մինչ նա քամածին օրինաց եւ անհիմն կանոնաց բազմայարկ շինուածի մի տակ կ'ընկճէ նորաթեւ իմացականութիւնն, սա ազատ ու պայծառ հորիզոն մի ցոյց կու տայ նմա եւ մտանանիշ ընելով միջոցին մէջ սաւառնող արծիւներն՝ կը խրախուսէ թռչիլ նոցա ետեւէն: Այսպէս ըմբռնուած հռետորական կամ գրագիտական մարդանք մ'անտարակոյս մեծ արդիւնքներ ունի եւ օգտակարագոյն պատրաստութիւն մ'է ատենախօսի պաշտօնին. թէեւ անկարող պերճախօսութիւն յառաջ բերելու անդ ուր բնութիւնը զլացած է իւր տուրքը, օժտեալ հոգիին կ'ընծայէ լիապարար փթիթ մի, կը զտէ կը յղկէ հանճարոյ լնագործ ազամանգն եւ կը շողացնէ զայն գեղափայլ:

Եւ երբ ժողովրդոց մէջ կ'երեւին այնպիսի անհատականութիւններ, զոր բնութիւնն եւ ուսում միաբանած են կազմակերպել, երբ ի յայտ կու գան ճշմարիտ եւ կատարեալ պերճախօս ոգիներ եւ միջավայրին մէջ՝ յորում կ'ապրին՝ բաւական ազատութիւն կը գտնեն շարժելու եւ գործելու, որչափ մեծ կը լինի իւրեանց ներգործութիւնն մարդկային ազգի ճակատագրաց վրայ: Կատարեալ պերճախօս մի՛ քաղաքակրթութեան մեծագոր գործիչ մի է. իւր ազդեցութիւն անդիմադրելի է եւ միշտ բարերար: Ի՛նչ

է իւր գործը, — ճշմարտութիւն սփռել, արդարը պաշտպանել, օգտակարին մղել: Եթէ պաշտօնեայ մ'է կրօնից, կրօնական հաւատալիք կը մերկանան իրենց խորհրդանշանական քօղն ու վսեմ բարոյականի մ'երեւոյթին տակ նոր իմե յայտնութեամբ կը պարզին մարդկային մտաց եւ կը լուսաւորեն խիղճը. եթէ գիտուն մի, բնութիւնն եւ ընկերութիւնը վարող օրինաց փրկաւէտ ըմբռնման կը բարձրանայ անջան ամբոխին իմացականութիւնը. եթէ ժողովրդեան ներկայացուցիչ, հանրային շահերն գձուձ եւ բռնաւոր եսութեան դէմ անպարտելի զօրաւիգ մի կը գտնեն ի նմա եւ հասարակաց ձայնն ահեղալուր արձագանգ մի. եւ եթէ փաստաբան, Անիրաւութիւնը սոսկմամբ կը տեսնէ նորա վրայ զրկելոյն իրաւունքը մարմնացեալ՝ կատաղի եւ վրիժառու, եւ Ոճիրը նորա ձայնին մէջ կը կարծէ լսել քստմեցուցիչ գոչումը սրամտեալ Արդարութեան:

(Երկրագունտ, 1885, Յունվար)

8. ԿՐԾՆԱԿԱՆ ՊԵՐՃԱԽՍՈՒԹԻՒՆ

Պերճախօսութիւնն իւր սեռերն ունի ըստ նիւթոյն. մին ի նոցանէ է Կրօնական կամ Ծուրիրական Պերճախօսութիւնն: Կրօնի հաւատալիք եւ բարոյական պատուէրք. ահա նիւթք եկեղեցական ճարտարախօսին, ահա իւր յատուկ դաշտն ու սահման: Բայց որչափ անսահման է այդ սահման. տիեզերքն ամէն, երկինք եւ երկիր կը բովանդակէ իր մէջ: Հաւատքն ոչ ապաքէն այն շղթայն է որ միմեանց հետ կը կապէ մարդն ու Աստուած, ոչնչութիւնն ու յաւիտենականութիւնն, մահն ու անմահութիւնն. ուստի եւ երբ այդ անհուն շղթային վրայ է որ կ'երթեւեկէ կրօնի վարդապետին խօսքն՝ կրնայ ինքնին ըմբռնուիլ թէ ինչ անեզր է իւր ասպարէզն եւ որպիսի խորութիւններէ որպիսի բարձրութեանց կրնայ խոյանալ այն: Վսեմ խնդիրներ՝ անոնք զորս կը յուզէ, բարձրագոյն շահեր՝ անոնք զորս կը պաշտպանէ: Եւ յանուն մարդկային բանականութեան, յանուն մարդկային օրինաց չէ որ կը խօսի. մարդոց գիտութիւնը ագիտութիւն եւ արդարութիւնն անիրաւութիւն է իւր աչաց առջեւ. կը կոխէ զանոնք արհամարհոտ օտքով, եւ աստուածային յայտնութեան մը վրայ յեցած, կ'ենէ

կը կածորնի անձնակ վեր եւ կը հռչակէ յաւիտենական իմաստութեան պատգամները: Երկնից ու երկրի մէջտեղ կը կենայ բնօրոյ վըայէն կը խօսի սրբազան ասեմախօսն. ու այդ բեմի առջեւ հաւասար են ամէն մարդիկ. հարուստ ու աղքատ, տէր եւ ծառայ, իշխան եւ հպատակ անդ. են խառնի խառն, հաւասարապէս խոնարհած տիեզերաց Աստուծոյն կամաց տակ զոր կը թարգմանէ կրօնի պաշտօնեայն: Այդ բարձրութենէն աշխարհ աննշան կէտ մը կ'երեւի եւ իւր համայն ճոխութիւնը իբր ստուեր մի թեթեւ, մինչ միւս կողմանէ երկնից՝ ուր կը մտնի մարդ՝ փառքերն աչքը կը շլացնեն եւ զմայլմամբ կը յափշտակեն հոգին: Բնմասացին բիրն, հաւատոյ լուսով ողողուն, կը թափանցէ ժամանակին անդունդներն, կը նշմարէ իրաց սկիզբն ու վախճանն, օվկիանոսի առաջին կաթիլին ու հաստատութեան առաջին աստղին գոյանալն եւ վերջին շիթին ցամքին ու վերջին ճառագայթին մարիլն կը տեսնէ, եւ, մերկանալով յաւիտենից խորքն, ցոյց կուտայ՝ աւետար կամ սպառնալից՝ անվերջանալի կեանքն անվերջ երանութեամբ կամ ամենջանօք: Չկայ գազանիք մը զոր չկարենայ լուսաւորել, չկայ վիշտ մը զոր չկարենայ մխիթարել, չկայ զօրութիւն մը զոր չկարենայ փշրել: Այդ գերափայլ լոյսն, այդ համարոյժ սփոփանքն, այդ ամենայաղթ զօրութիւնն կը քաղէ նա մի գրքուկի մէջէ, անսպառ աղբիւր իւր ճառերուն, որ Աստուծոյ մը խօսակցութիւնն է մարդոց հետ եւ, պարզ ու վսեմ միանգամայն, հասկանալի է ամենէն խոնարհ մտքին ու սիրալի վեհախորհուրդ իմաստասիրին: Եւ ի՞նչ դիւցազներգութիւն այն, ի՞նչ ողբերգութիւն. իւր պարզութեան մէջ քանի՞օն գերազանց է շոմերի Ուրիականէն եւ Եսթիղեայ Պրոմեթեւէն. նոցա աստուածային դիւցազնին առջեւ քանի՞ կ'աղօտանան Աբիլէս եւ Պրոմեթեւս: Պեյլիսածինն առիւծներու ծուծով սնեալ վայրագ պատերազմիկ մ'է որ արեան մէջ կը լուզայ, դիակներ կը բզբտէ ու կը մեռնի՝ Ելլադայի ճակտէն նախատիւք մը սրբելու համար. Յիսուս, Անեղածին Արդի, հեզութեան եւ սիրոյ քաղցրահամոյր հրեշտակ մ'է որ անմահութեան աւետիսը կը բերէ, գութ եւ կեանք կը ծաւալէ իւր շուրջ եւ կը մեռնի փրկելով զմարդկութիւն: Այլիսախ վրայ գամուած զոհէն, քանի՞ բարձր է Գողգոթայի վրայ խաչուած զոհը. նա հուրը բերաւ յաշխարհ, իսկ սա ճշմարտութիւնը. նա երկնից

ու երկրի ասելութեան նշանակ, սա Աստուծոյ եւ մարդոյն հաշտութեան միջնորդ: Եւ այդ հրաշագատում մասեան հսկայ յառաջաբան մ'ունի որ է Հին զապարանը, եւ կը շարունակուի եւ կը մեկնուի այն Առաքելաց գործոցն ու բանից, Յրբոց ու Ակայից վարուց եւ Հարց ու Հայրապետաց կենացն եւ քարոզութեանց մէջ: — Անհուն բանագործութիւն, որոյ առաջին վարագոյրը կը բացուի աներեւոյթ եւ անպատրաստ տիեզերաց Քոհնուրոհին վրայ, ուր խեղ հրեշտակներու կայծակնահար բանակ մ'երկինքէն կը գահավիժի մթին տաքարոտի անյատակ խորոց մէջ, ուր ջուրերն մեղապարտ աշխարհ մը կը կշնեն, ուր Եհովայն կը խօսի ամպոց ծոցէն ու Սինայի կայծականց մէջէն, ուր Մովսէս՝ ծովերուն ու ժայռերուն իշխանաբար հրամայելէ եւ ժողովուրդ մ'իւր ետեւէն հուրէն ու ջուրէն անցընելէ յետոյ՝ կը մեռնի լեռան մը գլուխն՝ հետուէն գիտելով երանաւէտ աշխարհի մը հոգեզմայլ տեփլն, ուր Յեսուներ ի մի նշան մասին արեւը կ'ոռնակապեն երկնից եզերաց վրայ, ուր սուսերազէն հրեշտակ մը մէկ գիշերուան մէջ հարիւր ութսուն եւ հինգ հազար թշնամեաց կեանքեր հնձելով՝ անկորուստ յաղթութիւն մը կը պարգեւէ ընտրեալ ժողովրդեան, ուր հրալեզու խստաշան մարգարէներ կը գոռան սպառնալից ու ապականեալ հզօր պետութեանց անկումը կը նախանկարեն ահեղատիպ, ուր քառասուն դարերէ հետէ նախածնողաց ստունգանութեամբ Աստուծոյ եւ մարդկութեան մէջանդ բացուած անդունդը կը ընու Աստուածորդի մը՝ հոն նետուելով առ սէր մեղաորին եւ մահուամբն որչափ իւր խօսքերով գերագոյն քարոզն կը լինի հաշտութեան եւ սիրոյ, ուր երկնադպրոց շարժմանց ու փայլատականաց մէջ՝ Հոգւոյն Սրբոյ այցմամբ՝ լեզուախօսութեան ձիրքը կ'ընդունին յանկարծ ազէտ անգրագէտ ձկնորսներ՝ որք կ'երթան ապա շելենական ու Հոռոմեական իմաստասիրութիւնն յաղթահարել ու Ողբմպոսէն մէկիկ մէկիկ վար առնուլ աստուածներն, ուր Դամասկոսի ճամբայներ կան որոց վրայ հալածիչն ի ջատագով եւ Սողոմն ի Պողոս կը կերպարանափոխի յեղակարծ, ուր խարոյկներու բոցին մէջ վսեմակերպ լուսաժպիտ կը կանգնին մարտիրոսք եւ մարտիրոսուհիք ու վկայութիւն կու տան խաչին, ուր փափկամարմին կոյսեր հսկայներու ոյժը կը ծաղրեն ու Գրիգորներ տասն եւ հինգ ասորիէն յետոյ իժուա ու մութ վիրապ-

ներու խորէն դուրս կու գան անարատ, եւ ուր վերջապէս ապագայ դարուց եւ ժամանակաց անորոշ հեռաւորութեան մէջէն կանխաւ կը նշմարուի ու կը կերպարանի ահաւոր տեսարան մը, տիեզերական վերջին դասաստան մը՝ ուր նա՝ որ մերիտ եկած էր յաշխարհ հեզ եւ խոնարհ՝ պիտի բազմի դատաւոր անաչառ՝ դատելու բոլոր ազգերն ու ազինք որք նախամարդէն ի վեր ապրեցան երկրի վրայ եւ որք՝ հրեշտակապետին փողէն արթնցած՝ գերեզմանաց դարաւոր փողին թօթափելով՝ մարմնազգեցիկ պիտի հաւաքուին երկնից դաշտաց մէջ ներկայելու իրենց գործոց համարն, ճր ճակատագրային, ճր վճռական ուր աստղերը պիտի թօթափին, ովկէանը վերստին պիտի խորտակէ իւր թումներն, ուր կործանեալ աշխարհաց վրայ պիտի որոտայ միայն Արդարութեան անողորբ ձայնն՝ անհամար դատապարտեալներու վայելքուն ու ողբուճներուն մէջէն որք պիտի խեղդեն սակաւաթիւ ընտրելոց բերկրութեան ձայներն:

Այսպիսի դէմքեր, պատկերներ ու պատգամներ կը ընուն Ս. Գիրքն ու Արքոց մատենաքն որք իւր նիւթերն ու բնաբանքն կը մատակարարեն քրիստոնեայ պերճախօսին: Ի՞նչ առաւելութիւններ նորա համար, ի՞նչ վառարան ներշնչութեանց, ի՞նչ տուփ զարմանազան երանգաց, ի՞նչ բովբ հոգին յուզող եւ երեւակայութիւնն ապշեցրնող անսխնեբու: Եւ որ այլ հրապակախօս ունի այն իշխանութիւնն որով կը զինիկրօնի քարոզն յենյով ո՛չ թէ մարդկային բանականութեան վճիռներուն վրայ՝ այլ իմաստութեան աղբիւր ամենակալ Էտէի մը կամաց յայտարարութիւններուն, եւ ո՞վ կարող է այնպէս անջան ամէն վայրկեան ի վսեմ ամբառնալ մայց եթէ նա որ պաշտօն ունի խօսիլ անհունին եւ մարդկային հոգւոյն ճակատագրաց վրայ՝ ո՛չ ի կարծ դատելով՝ այլ հաւատոյ աներկեւան վստահութեամբ: Արդէն Եկեղեցին նոյն ինքն քարոզիչն ժողովուրդէն որոշած ու դրած է հեռաւորութեան մ'ու բարձրութեան մը մէջ որք իրենց ներգործութիւնն ունին նորա խօսից ճոխութեան վրայ: Յերկրի իբրեւ յերկնի, մարմնոյ մէջ իբր անմարմին պարտի նա կեալ. խզած է գրեթէ իւր կապեր աշխարհի հետ. ո՛չ կնոջ սէրն, ո՛չ զաւակաց գորովն կը կաշկանդէ զնա. աշխարհային հայրենիքներու զանազանութեան վերեւ կը նկատէ նա բարձրագոյն ընդհանրական հայրենիք մը, եւ սորա՛ քաղաքացին է

մանաւանդ քան անոր որ ծնունդ առաւ իրեն. հագուստովն իսկ կը զանազանի եւ կը զատուի նա՛ իբր արաւաքին նշան թէ իւր սիրան օտար է այն շահուց, հաճոյից ու փառաց որոց համար հոգի կու տան մարդիկ ընդհանրապէս. կրնայ ապա բարձրէն նայիլ իւր առջեւ խոնուած ժողովրդեան վրայ, արգահատանօք դիտել նորա ճգունքն ստանալու անցաւոր վայելքներ եւ իշխանաբար խօսիլ զայն գերող կրից եւ ցանկութեանց դէմ: Բաց աստի, ոչ որ կ'ընդհատէ զինքն, ոչ որ կը խռովէ, ոչ իսկ ծափահարելու համար — (առճարին մէջ զՈսկերբրան ծափահարող Յունաց օրինակն հետեւողներ չէ ունեցած գէթ) —, եւ իւր ձայն կը բարձրանայ առաձիկն. լոկ մերթ ընդ մերթ կը լուսին վերաւոր խղճմանաց հեծկլանք եւ զղորեալ սրտից արասուք՝ միակ այլ գեղեցկագոյն ծափք պերճախօսի յաղթանակին յայտարար: Թէեւ այսու կը պակսի նմայն գրգռում զոր ընդմիջումն ու ընդդիմութիւն կու տան քաղաքական կամ ասենական ճարտարախօսին, գրգռում յորմէ դուրս կը ժայթքէ յաճախ յանկարծաթափ հեղեղ մ'ափ-յափոց պերճախօսութեան, բայց փոխարէն՝ նորա ճառը վեհափառութիւնն ունի այն գեաներուն որք անմարգաձայն լերանց կողերէն բղկելով կը հոսին որոտագոչ, եւ այդ ձայնն՝ անընդհատ հնչելով նուիրական կամարաց տակ՝ կարծես լաւ եւս կը թափանցէ ունկընդրին հոգւոյն մէջ ու խորագոյնս կը դրոշմուի անդ: Եւ թէպէտ մասնաւոր կուսակցութեան կամ անհատի դէմ ի պայքար չի մաներ՝ երբ ուզէ մեղաց կամ մոլորութեանց դէմ արձակել սուր պայքներ, եւ իւր թշնամին վերացեալ բան մ'է, մոլորութիւն մը կամ վրէպ մը, եւ հետեւապէս որոշ հակառակորդի մը ներկայութիւնն ու ասելութիւնը չեն բոցավառեր զինքն, այլ չի բաւեր իրեն այն սուրբ զայրոյթ զոր կ'ազգէ նմա ապականութեանց տեսիլն, այլ միթէ մէն մի ախա մէկ մէկ դժոխագէմ ճիւղի նման անձնաւորեալ չի՛ կանգնիր իւր երեւակայութեան առջեւ, եւ չի՛ գիտեր քանիննր պիտի ձանձան զինքեանս այն մեղսագրիծ ախուր պատկերներուն մէջ զոր կը ներկայէ...

Է զի քրիստոնեայ աստնաբանն ի բեմ կ'ելնէ մեկնելու կրօնից վարդապետութիւնքն, պարզելու խորհուրդներն, բացատրելու Աւետարանի բարոյականն, հակակրօն կարծեաց դէմ պաշտպանելու հաւատքն եւ հակաքրիստոնէական բարուց ապականութեան

գէմ՝ երկնային ցասման եւ վրիժուց սպառնալիքներովն մարտե-
լու: Այս է Բարոզն: — Է գէ, երբ Եկեղեցին կը ածնէ մին իւր
սուրբերէն, իւր դիւցազներէն, նիւթ կ'առնու բեմբասացն նորա
ճգնալից կեանքն կամ վկայական մահն. զայն զարդարող քրիս-
տանէական առաքինութեանց, յանուն Գրիստոսի նորա կրած ա-
ռապանաց եւ փոխարէն՝ երկնային Սիրնի մէջ նմա պարգեւուած
յաւիտենական փառացն ու երանութեանց պատկերը կը նկարէ
հաւատացելոց առջեւ, նոցա զմայլուճն ու խանդն կը գրգռէ այդ
սրբաբոյր վարուցն համար ու յորդոր կը կարդայ հետեւող
լինել այդ երկնահորդ ասպարիզին: Այս է Ներըողն: — Մերթ
եւս մի դագաղ կը հանգչի սրբազան խորանացն առջեւ, ու թախ-
ծադէմ վշտաբեկ շուրջ կը պատեն զայն ազգականք եւ բարե-
կամք. տխուր վայրկեան. մահն եկած զարկած է հաւատացելոյ մը
դուռն եւ նորա ծոցէն խլած իւր սիրոյ առարկայն, ծնող կամ
զաւակ մը կամ եղբայր մը. եւ կամ ժողովուրդ մ'է ամբողջ որ
կ'ողբայ իւր փառքերէն միոյն մարիլն, իւր նեցուկներէն միոյն խոր-
տակիլն, իւր յոյսերէն միոյն թառամիլն. կենաց ու մահու անյու-
ծանելի գաղտնիքն իւր անողբելի մթութեամբն պատած է մարդոց
միտքն ու կը տանջէ հոգին. յուսահատութեան ճիրաններուն մէջ
կը չարչարուին վերաւոր սրտեր, եւ արատսուալից աչքեր՝ խոնար-
հած ահաւոր փոսի մը վրայ՝ ոչ եւս յերկին կը հային. բանակա-
նութիւնն ընկճուած, հաւատքն իսկ լքած, թանձրամած ստուեր-
ներուն մէջ մխիթարութեան նշոյլ մը կը խնդրեն սգաւոր մար-
դիկ: Ահա՛ այն պահուն խօսք կ'առնու Աւետարանի պաշտօնեայն,
կը ներկայանայ իրրեւ մխիթարիչ երկնառաք ոգի մը. ինքն եւս
կ'ողբայ այն կորուստն որ կ'արիւնէ հաւատացելոյն սիրան՝ խզելով
սիրապինդ կապեր, բայց յանկարծ կը բախէ հաւատոյ թեւերն
ու կը վերանայ երկրային սերերէ ու զգացումներէ վեր, երկրէ
վեր, աշխարհներէ վեր, հոն ուր կորսուած ոգիներն կը գանուին
վերստին, հոն ուր չիք այլ եւս վիշտ, արցունք եւ մահ, հոն ուր
ապականացու մարդն կը վերկենցաղի հրեշտակառիպ, ուր ար-
դարոյն ճակատը կը պսակուի յաղթութեան բրաբիոնով, ուր պա-
տրասուած հեշտութեանց անսպառ բաժակին քով լեղի են աշ-
խարհի քաղցրագոյն վայելք, եւ այդ անդրգերեզմանական աշ-
խարհի մշտալոյս արեւէն յուսոյ ջահը վառելով՝ կը դառնայ յեր-

կիր թօթափելու զայն դամբանի դանդիւնն ու սրտերու սուգին մէջ, վեր վերցնելու այդ երկրապիշ աչերն, վայրահակ գլուխներն, եւ մոխրէն վերակենդան հոգւոյ նորափետուր փիւնիկը մասնա- նիշ ընելու: Փոյթ չէ թէ դոյզն աննշան դք է մեռնողն կամ մի փայլուն անհասականութիւն. միոյն եւ միւսոյն մարմնոյն վրայ կրնայ մի եւ նոյն հոգեշարժ շեշտերը գտնել, զի Աստուծոյ առջեւ հաւասար են մեծն ու փոքրը, եւ կ'անհետանան ընկերութենէ ստեղծուած խտիրը: Նաեւ այդ դագաղէն դաս մը կը հանէ անոնց համար որք կը մնան. թէ առաքինի մ'է որ կը հանգչի անդ՝ ցոյց կու տայ առաքինութեանց յիշատակն միայն կենդանի յետ ամէն երկրաւոր իրաց ու կը խրախուսէ ի նմանութիւն. իսկ եթէ աշ- խարհի մեծութիւններէն մին՝ ի՛նչ առիթ ատենախօսին համար հոչակելու ունայնութիւնն փառաց ու փարթամութեանց, վայր- կեան մ'առաջուան գրգեթը ու գգուեալ, մարդեւոյդ շողորթի- ներէ ու փոյթեռանդն սպասեակներէ շրջապատեալ իշխանասաստ մարդն բաղդատելու երկու տախտակի մէջտեղ անձայն անկենդան պառկող մարդուն հետ, որ Պօսիւէին պէս խօսելով՝ ընդ հուպ՝ «պիտի փոխուի բանի մ'որ այլ եւս ոչ մի լեզուի մէջ անուն ունի» եւ, որպէս Մասիյեծն Լուզովիկոս ԺԳ. ի կամ Ներսէս Վար- ժապետեան ճեզայիրլեանի դագաղին վրայ, գոչելու «Միայն Աս- տուած մեծ է, եղբարք»: Ահաւասիկ Դամբանական ճառն. եւ հա՛մ եկեղեցական պերճախօսութեան վերաբերող ճառերու երեք գլխաւոր տեսակներն:

Այս պերճախօսութիւն, դուստր հաւատոյ, ի նմանէ կ'ըն- դունի իւր ոյժ, նորա հետ կը զարգանայ եւ նորա հետ կը տկա- րանայ ու կը կորնչի: Ուստի եւ այն ժամանակներն եղած են ամե- յէն աւելի նպաստաւոր նորա ծաղկման ուր հաւատքն տիրած է ընդհանուր հոգիներու, ուր նորա խանդիւ բորբոքած են սրտերն ու երեւակայութիւնք: Եւ այս ո՛չ միայն խօսողին կողմանէ, այլ եւ ունկնդիր ամբօխին. վասնզի խօսողին եւ լսողին մէջտեղ հարկ է որ գանուի ընդհանուր սկզբանց, բարձրագոյն համոզումներու նոյնութիւն մը. ճշմարտութիւններն՝ որոց կը հաւատայ եւ որոց վրայ կը յենու սրբազան ատենախօսն՝ թէ չեն ունկնդրին մտաց

1 Դամբանական Անգղիոյ Հանրիէգայի:

եւ խղճին խորն, խզուած է հաղորդակցութեան կապն այդ երկու հոգիներուն մէջ: Այն ատեն նոյն իսկ ի զուր հաւատացեալ է խօսողն. երբ կը զգայ թէ իւր լեզուն այլ եւս իւր առջեւ կեցող ժողովրդեան սրտին լեզուն չէ, ամենուստ տկար, ամենուստ վիրաւորելի, իւր պերճախօսութիւն կը խոնարհի այն բարձրութիւններէն ուր կը թռցնէր զինք մերթ հաւատոյ շունչն, կը կորուսնէ իւր շողերն ու շանթեր եւ կ'իյնայ իբր արծիւ թեւատեալ: Այն ատեն կրօնից քարոզն՝ թողլով հոգեկան յափշտակութեան երկնամերձ գագաթներն, խորհրդոց եւ վարդապետութեանց աղօտանշոյլ այլ հրաշալի մարզերն՝ կ'իջնէ մարդկային իմաստասիրութեան եւ բարոյախօսութեան կրկեսին մէջ, յօգնութիւն կը կոչէ իրեն փորձն ու գիտութիւնն, փոխանակ սրտին՝ մտաց կ'ուղղուի, փոխանակ յիշեցնելու՝ կը տրամաբանէ, փոխանակ նկարելու՝ կ'ապացուցանէ, փոխանակ յուզելու՝ կ'եզրակացնէ, փոխանակ գոռալու՝ երգելու՝ պաշտելու, կը խօսի: Եւ ատեն ոչ եւս կրօնական պերճախօսութիւնն է այն: Ահա ինչո՞ւ համար բեմաւայտական սեռն կը խոնարհի, կը նուազէ օր քան զօր. — ոչ եւս են այն ջերմեռանդն հաւատոյ դարերն ուր եկեղեցիները կ'անձկանային հաւատացելոց խուռներամ բազմութեան, ուր պաղատագին բազուկք եւ արտասուագին աչկունք կը բարձրանային հանապազ դէպ ի կապոյտ կամարն, ուր իրենց կուրծքը կը կռփէին մարդիկ «մեղայ» գոչելով, ուր պահք կը պահէին եւ ծով կը բռնէին, ուր անծանօթ էր տարակոյսը, ուր ոչ մէկուն համար թափուր էր երկին ու ոչ մէկուն համար լուռ էր գերեզմանը. քննութեան ոգին փչեց, հաւատոյ ճրագին բոցն սկսաւ դողդոջել, մարիլ իսկ շատ հոգիներու մէջ, արթնցաւ բանտկանութիւնն, անողոր բանականութիւնն եւ հարցուց «ինչպէս»: Եւ եկեղեցին, համակերպելով նոր մտաց պահանջումներուն, փորձեց պատասխանել բանականութեան. սրբազան բեմերն գիտական դասախօսութեան ամպիոնի կերպարանք ստացան, բնագիտութիւնն ու բնալուծութիւնն գործածուեցան հրաշից ի հաստատութիւն: Այս է իննեւտասներորդ դարու նուիրական պերճախօսութիւնն, սեռ խառնածին, խորթ, անկենդան: Սորա համար արդէն Պօսիւէ կը գանգատէր Մասիյեօնի մասին, ու ֆէնըլոն կ'ըսէր թէ «Այլ եւս Աստուծոյ խօսքը չէ. այլ մարդոց խօսքն եւ գիւտը», եւ Հայր Ռա-

վինեան՝ այս դարուս մէջ՝ թէ « Բաղուսը կան որք իրենց գլխէն կը խօսին, սակաւք, յոյժ սակաւք որք խօսին ի սրտէ, աղեաց խորերէ »: Սորա համար ուր որ Գրասէր Ատոմ բարձրացում կը տեսնե՛ խօսելով մեր եկեղեցականաց վրայ եւ հաստատելով թէ՛ այնքան Յիսուսի վրայ կը խօսին այսօր որքան (լռելեայն) Ցարուինի վրայ, ես անկում կը տեսնեմ, գէթ հաւատոյ եւ եկեղեցական ճարտար-խօսութեան նկատմամբ: Եթէ Շահնազարեան, Վարժապետեան, Խրիմեան, Մուրատեան, Նարպէյ պերճաբան եւ հզօր եղած են յաճախ, անշուշտ ո՛չ այնպիսի քարոզներու մէջ ուր խօսելին աւելի երկրի վրայ քան երկնի, աւելի Սոկրատայ վրայ քան Քրիստոսի, աւելի մնութեան վրայ քան Աստուծոյ, ուր ներշնչուէին օրաթերթից ընթերցմանէն մանաւանդ քան Ս. Գրոց ուսումնասիրութենէն, եւ անշուշտ առաւել իւրեանց ասպարիզին սկիզբն յորում ջերմեռանդութիւնն մեծագոյն էր ժողովրդեան մէջ քան վերջերն ուր եւ ի մեզ սկսաւ շնչել կրօնային անաարքերութեան ոգին եւ տարբեր ուղղութիւն ու ոճ տալ քարոզութեանց:

Այո՛, պէտք է ետ ետ երթալ, դէպ ի վեր երնել ժամանակին մէջ գտնելու համար քրիստոնէական պերճախօսութեան հրաշակերտներն. պէտք է երթալ ԺԷ դարն, ուր Տէքարդի գործերն արգելեալ գրոց ցանկը կ'անցնէին ի Հռոմ եւ Ղուղովկոս ԺԳ: Կարգիլէր մեծ փիլիսոփային դաճաղին վրայ դամբանական արտասանել, եւ ունին դնել ի Գաղիա Պօսիւէի, որոյ ձայնն Սինայի խորերէն գոգցես կու գար միմուտով եւ որ աստուածպետական գաւազանաւ կը թուէր արդէն երկրի վրայ գերագոյն ատենի մ'առջեւ դատել մահացեալ իշխաններն եւ իշխանուհիներն, Պուռաալուի որ՝ ըստ վկայութեան Յիկին Սէվինեէի՝ իւր ճառից պնդակազմ շղթայէն կը կախէր ունկնդիրն՝ շնչառութիւնն իսկ բառնալով ի նմանէ, ֆէնըլնի որոյ անպատրաստ՝ այլ հոգելից քարոզներուն մէջ կը վերակենդանանար Հարց բարբառն. Մասիլեօնի որ դեռ կարի կրօնական էր հակառակ Պօսիւէի տագնապներուն եւ Վոլթերի հիացման եւ որ՝ երբ Ընտրելոց սակաւաթուութեան վրայ իւր քարոզին մէջ կը գոչէր « Արդարք, ո՛ր էք », եւ « ո՞վ Աստուած, ո՛ր են քո ընտրեալք եւ ի՞նչ կը ձայ քեզ ի բաժին », խղճի տագնապներով կը պաշարէր եւ երկիւղել կը համակէր իւր համայն ունկնդիրներ որք սկամայ շարժումով յոան

կ'երևէին՝ խուսափելու համար կարծես գառապարտութեան ճիրաններէն, եւ ի Լա-Տէ բողոքական Սորէնի ոյր մի ճառն՝ յորում գթութիւն կը հրաւիրէր գաղիացի պանդխտեանընտրութեան վրայ՝ այնպէս ուժգին կը ցնցէր եւ կը խանգաղատէր հոգիներն՝ որ ամէն ոք անդէն կը մերկանար իւր զարդերն ու գոհարներ եւ յօժարափոյթ կը նուիրէր մերկերու եւ քաղցեալներու ի նպաստ. — պէտք է երթալ թո՛ղ դարն ի լուր մեր Երզնկացւոյն՝ երբ Սեպտյ բարձանց վրայ կը ներբողէր զՍ. Լուսաւորիչ, «Յարգոււորճ խնդութեամբ բերկրեալ ցնճա՛, եկեղեցի՛ սուրբ, նորահրաշ եւ պայծառ երկին, աղաղակելով հոգեզուարճ եւ ինքն ու Արքայն հետ գրուստելով, երգելով նորա ճգնութեանց հանգիստարան վայրերն ալ. «Ուրախ լեր գեղով գեղեցիկ երկիր ցանկալի, Դարանաղեաց գաւառ գովելի, լերամբք ծաղկաւէտ, ձորովք ջրաբուխ, եւլն», — պէտք է երթալ թո՛ղ դարն ու մտիկ ընել Տարսնի ժողովոյն մէջ Լամբրոնացւոյն յիկերոնեան ճարտարխօսութեան, եւ Շնորհալոյն՝ երբ յետ հայրապետ ողջունուելու իւր եղբորմէն ու ամբողջ ներկայ եկեղեցականութենէն՝ կը լուծէր իւր քաղցրաման լեզուն ի ճառ երկնազգեցիկ եւ ցոյց կու տար մեծութիւնն ու գոռարութիւնն հովուապետական պաշտաման. — պէտք է ելնել ի Ե դար եւ լսել Սահակն որ տիրաննդ նախարարաց կը պատմէ իւր խորհրդաւոր տեսիլն Վաղարշապատու տաճարին մէջ, խորենացին որ իւր դիւցազներգակ գրիչը կը գործածէ մի այլ կերպ դիւցազնի՝ Եկեղեցւոյ ամազոնի մի՛ Լուսինայի գովեստ, եւ Յովհան Մանգակունին որ՝ Վահանայ յաջողութեանց աւետիսն տունլով՝ կը թուչէր ի բեմ՝ եկեղեցւոյն եւ, զերդ Մովսէս յետ կարմիր ծովու անցքին, իւր Եկեղեցւոյն եւ հաւատոյն փրկութիւնը կը տարփողէր՝ «Եկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՅէր յաղբերացն խորայելի, ձայնելով խնդագին. — ու պէտք է վերջապէս ելնել ի Դ դար, դարն այն ոսկի քրիստոնէական պերճախօսութեան, դարն այն բազմաբեղուն ուր Եկեղեցին ծնաւ իւր հայրեր, ու Վիպանիոսի՝ Պրոքերեսիոսի հոգեւորական դաստիարակ լրացուցիչն էր անապատն, եւ ուր միայնութենէն գուրս կը ցայտէր յանկարծ հրալեզու քարոզի կրօնից որպէս լին հօրիզլիներու ծոցէն կը պայթի յեզակարծ որոտում շանթարձակ, եւ թուչիլ Անտիոքէն ի Բիւզանդիոն, Աղեքսան-

գրիայէն ի Կեսարիա, եւ խառնուիլ այն հաւատացելոց խոսան որ դիզուած է՝ ծովակոյտ՝ Աթանասներու, Բարսեղներու, Կազիան- զացիներու եւ Բսկեմերաններու բեմերուն առջեւ, նոցա մերթ ահաւոր, մերթ գգուալի, մերթ սպառնացայտ, մերթ սիրտիածու, հզօր ու անդիմադրելի, նկարուն ու փրփրուն լեզուին տակ գալա- րելով, խոնարհելով՝ կանգնելով, յուսալով՝ յուսահատելով, արտասուելով՝ զուարթանալով, միշտ յափշտակուելով, եւ եր- բեմն ալ ծափահարութեանց գոռամամբ թնդացնելով նուիրական կամարները:

(Երկրագունտ, 1885, Մարտ)

9. ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Քնարը, որ հին դարուց բանաստեղծներուն անբաժան ըն- կերն էր, — ինչպէս ցայժմ ալ ժողովրդական երգիչներուն, — երբ քերթողին մէջ երաժիշտ մը կար միեւնոյն ստեղծ, ու իր տա- ղերը կ'երգէր ան՝ թրթռացունելով լարերն իր քնարին, կամ տաւղին, կամ բամբուին, երկու արուեստներուն բաժանմամբն եղաւ յետոյ ու մնաց ցարդ լոկ խորհրդանշան մը բանահիւսական աւիւնի եւ արտագրութեան: Ար խորհրդանշանէ նա այլ եւս բա- նաստեղծին խանդոտ սիրտը, որուն զգայնութեան այլազան թելերն են միայն անոր կնտնտոցին տակ դողացող աղեք, եւ աստի՛ Բնա- րերգութիւնն ու Բնարերգակ անուններն, փոխաբերաբար կի- րարկուած: Բանաստեղծական այլ եւ այլ սեռերուն մէջէն, Քնա- րերգութիւնը ի մասնաւորի կը յատկանշէ զայն որ քերթողական արուեստին ամենէն զուտ ու նախնական ձեւն է եւ որ կար մար- դուն մէջ երբ նա դեռ ոչ պատմութիւն եւ ոչ աւանդութիւն ունէր: Այս այն բանաստեղծութիւնն է զոր Միլտոն վիպասանօրէն կը դնէ առաջին մարդուն շրթանց վրայ՝ երբ նա, արթնցած ու դեռ քնացող Եւային գեղեցկութեան վրայ կ'բաժ, « որ թէ ի նինջ թէ՛ յարթմնի էր շնորհափայլ », կը մըմնջէր.

« Զարթիր, իմն ամենագեղ, հարսն իմ՝ վերջին գտեալ բարի,

Գերագոյն քան զամենայն ինձ երկնաւոր յետին պարգեւ... »

ու այն՝ որուն, դարձեալ ըստ Միլտոնի, «բանից հոսանք ու նախածնողաց շրթուներէն կը «հոսէին պերճ եւ արագ», ամէն առաւօտ, երբ ինքզինքնին կը գտնէին արեւու վեհափառ ծագմանն առջեւ որ շքեղ լուսով մը կ'ողողէր Եդեմի բազմերան մարգերը: Ծնթակայական բանաստեղծութիւնն է այդ, ինչպէս կը կոչեն Գերմանացիք, հակադրելով զայն Առարկայականին, վիպականին, Թատերականին, վարդապետականին, նկարագրականին, որոց մէջ բանաստեղծը նիւթ մ'ունի իրմէ դուրս, մինչդեռ հոս յաւեա իր նմն է, իր ուրախութիւնը, իր արամուծիւնը, իր յոյսն ու երկիւղը, իր խանդն ու պժգանքն են որ բանաստեղծը կ'երգէ: Ամէն գրականութիւն բանաստեղծութեամբ կ'սկսի, ու ասոր ալ առաջին բարբառն է քնարերգական քերթութիւնը: Յունաստան իր վիպասան շոմերէն ու խրատաբան Հեսիոդէն առաջ Որփէոսներու, Վինոսներու աւանդական յիշատակներն ունի որոնք Ապոլոնէն առած էին իրենց քնարը ու կ'երգէին հոգւոյն յուզմունքը բնութեան զօրութեանց առջեւ, հաճոյքի փայփայանքին կամ ցաւին պրկուձներուն տակ: Ռամայանայի քաջութիւնները վիպեէ առաջ վնտաններու փառաբանութիւնքն ոգած էր շնորհաստան եթերի պայծառութիւններուն դիմաց: Ժողովուրդներու անգիր գրականութեան այդ կորսուած շրջաններուն մէջ միամիտ այլ խանդավառ երգի ինչ շեշտեր բղխած են մարդկային սրտերէ ու անհետացած մթութեան մէջ մարող կայծերու նման: Բայց այդ վաղնջուց երգիչները ապահովապէս ոչ թէ միայն քաղաքակրթութեան առաջին արդիւնքները եղած են, այլ մանաւանդ իրենք իսկ սկսած են քաղաքակրթութիւնը ու վայրագ բարբերու կակղացման գործը, քանի որ հնագոյն աւանդութեանց մէջ երաժիշտ բանաստեղծութեան կը վերագրուի գազաններն զգօնացնելու, քարերը գորովելու, դժոխոց ոգիքն իսկ ի գուլթ անելու դիւթական զօրութիւն մը:

Բանաստեղծութիւնը, իր բարեշրջական ընթացքին մէջ, տակաւ պարզէն բաղադրեալին, համասեռէն այլասեռին երթալով, ինչպէս հանգամանքն է այս ամէն բարեշրջութեան, հետզհետէ յառաջ բերու այլ եւ այլ քերթողական սեռերը, կամ մանաւանդ քնարերգութիւնն ինքնին տարբեր տարրերով բարդուեցաւ տակաւ, ու եղաւ Դիւցազներգութիւնը կամ վէպը պատերազմիկ-

ներու գործքը տարփողելու եւ ընկերութեան կեանքը ցոլացնելու համար, եղաւ Թատրերգութիւնը՝ երգին ու գործողութեան այդ խառնուրդը, մանաւանդ իր նախնական ձեւին մէջ, եղաւ Վարդապետական բանաստեղծութիւնը՝ երգին ու խրատին խառնուրդը. բայց այն ամէն ձեւափոխութեանց մէջ կամ քով դուռ քնարերգութեան սեւը մնաց միշտ, յարատեւեց, թէեւ ինքն իր մէջ ալ յեղաշրջուելով, մարդկային մտածութեան եւ զգայնութեան փոփոխմանց ու արուեստին զարգացումներուն համեմատ: Ո՛չ ասպարէն էապէս այն մարդկային հոգին է բնութեան հետ, ընկերութեան հետ, կեանքին հետ, Աստուծոյ հետ իր հպման, իր շփման մէջ: Քանի որ մարդկային հոգի մ'ըլլայ, քնար մը պիտի հնչէ, խանդի հուրովը բռնկած, հեշտանքի սարսուռովը թրթռուն, վշտին արցունքէն թրջուած: Երբ քաջամարտիկ Աքիլլէսներն ու Եփեսոսներն ալ հասնին, ու Ոլիմպոսներու գագաթին վըայ ալ ամպածածուկ չտեսնեն մարդիկ աստուածները որ երկիր կ'իջնեն նախանձընդդէմ խումբերն իրարու դէմ գրգռելու, կը դադրին Հոմերական դիւցաղներգութիւնները: Եղաւ մատենագրութիւն որ թատրերգութիւն չունեցաւ, ինչպէս Եբրայականը, ինչպէս մեր մէջ ի հնուած, կամ թէ ուրիշներու մէջ կար ժամանակ ուր դեռ ծնունդ չէր առած թատրը. տարօրինակ գաղափար մը չէ ըսել թէ գուցէ անհետի կամ լքուի օր մը՝ փակ վայրերու մէջ համախոնութեանց առողջապահական փնասներուն համար, կամ երբ ո՛չ որ յանձն առնու դերասան ըլլալ, նոյն իսկ արուեստով: Շատոնց արդէն մեռած է Մշակակալաններու եւ Արուեստ Բերթողակալաններու սեւը, որ ո՛չ իբրեւ բանաստեղծութիւն բաւական ցնորք ու զգացում, եւ ո՛չ իբրեւ գիտութիւն՝ բաւական իրողութիւն եւ օրէնք կը պարունակէր եւ որուն ծագումն իր գոյութեան փաստն ունեցած էր այն նախնական ժամանակներուն մէջ ուր օրէնքները կը տաղաչափուէին, անգրագէտ ժողովրդեան յիշողութիւնը գիւրելու համար, եւ ուր փիլիսոփաներ «իրաց բնութեան վըայ», իրենց դրութիւնները կը բանաձեւէին ոտանաւորով:

Բայց քնարերգութեան մահը նոյն իսկ բանաստեղծութեան ոգւոյն մահը պիտի ըլլար, ու մարդոյն մէջ չի մեռնիր այդ՝ հակառակ հաւաստումներուն գրական մտքերու, որք բանաստեղծութիւնը ընկերութեան եւ գիտութեան անչափահասութեան ծնունդ

ու անոր հետ միայն հաշտ կը դաւանին եւ գիտական ոգւոյն յառաջ-
գիմութեանցն առջեւ անոր հոգեվարութիւնը կը հռչակեն: “Եթէ
միայն ընդու մ’ըլլար, կը գրէ Ժորժ Սան, պիտի կրնար կորսուիլ.
բայց իսկութիւն մ’է որ երկու բանէ կը ծնի, — մին՝ արտաքին
ընտրութեան մէջ սփռուած գեղեցկութիւն, միւսը՝ զգացումը
որ բաժինն է ամէն սովորական իմացականութեան”: Գերմանացի
բանաստեղծ մը, Անաստասիուս Կուլան, “վերջին բանաստեղծը,
խորագրով գեղեցիկ տաղի մը մէջ¹, վերջին մարդուն հետ միայն
կարենէ կ’ընդունի վերջին քերթողին անհետացումը աշխարհէ.

“Ու երբ երգով ցնծուն
Աշխարհէս օր մ’անցնի
Վերջին մարդըն, իրմով
Հուսկ քերթողն ալ մեկնի”:

Բանաստեղծական ոգւոյն էական տարրն է յուզումը, եւ
յուզումը միայն տղուն ու ագէտին յատուկ չէ: Թերեւս հասուն
մարդուն մէջ յուզումն այնքան դիւրայորդոր չլինի, բայց փոխա-
րէն որքան աւելի խորին է, ու զարգացուն մտածութիւնը որչափ
կ’այլաձեւէ ու կը նրբազանէ զգայնութեան կերպերը: Գիտութիւնը
պիտի ջնջէ յուզումը: Որովհետեւ ան այն հրաշալիքին՝ որ “աս-
տեղազարդ երկինք”, կը կոչուի՝ աշխարհներու անծայր ու անյա-
տակ ովկէանի մը համեմատութիւններն ընծայեց, ու ջուրի կա-
թիլին մէջ ալ սովորեցուց տեսնել անհունապէս փոքր տիեզերք մը,
անոր համար նուազեցուցած պիտի ըլլայ հոգւոյն հիացիկ ու պաշ-
տող յուզումը: Սէրը նուաճ յուզիչ պէտք է դառնայ՝ որովհետեւ
տարփաւորը սիրուած էակին մարմնոյն ետեւ անոր հոգին ալ կը
դիտէ, ու զայն մանաւանդ, իր անշօշափելի այլ նոյնքան աւելի
սրտազդեցիկ գեղեցկութիւններովը: Եր համակրութիւնները ոչ
միայն բոլոր մարդկութեան, այլ նաեւ բոլոր շնչաւոր ու անշունչ
էութեան ընդլայնած ըլլալուն համար՝ նոր ժամանակի մարդը
պէտք է որ անյոյզ դիտէ կեանքի եռուզեռն իր շուրջ, անփոյթ
էակներուն երջանկութեան ու տառապանքին: Եթէ որոշ հեռա-
պատկերը դրական կրօնքներու դրախտներուն որք մարդուն ար-

¹ Տես Թարգմանութիւնը մեզէ Հ-Ն-ԳԻՐ-Ի ԿԷ, 1900:

դարութեան ու երջանկութեան ըղձանաց հեշտ ու սփոփիչ գոհացում մը կ'ընծայէին՝ աղօտացաւ դրական ոգւոյն հանած տարակոյտներու ամպին ետեւ, միթէ այդու այդ ըղձանք աւելի ուժգին չէ՞ն չարչարեր մարդկային հոգին ու այդ ամպն ինքնին չի՞ լինիր աղբիւր մը հին ժամանակաց անծանօթ յուզումի մը, բարձրագոյն տրամութեան մը, նուրբ էութեանց յատուկ: Յուզումը չպիտի դադրի մարդուն մէջ, մանաւանդ թէ յառաջդիմութեան չափով նրբութեան ու սաստկութեան մեծագոյն աստիճաններու պիտի հասնի, ու պիտի սնուցանէ միշտ քնարերգութեան, բանաստեղծութեան աղբիւրը, յուզումը իր կարգին երեւակայութեան ցունց տալով, ու սա գոյներու, պատկերներու աշխարհներ յարուցանելով, — երկուքն ալ, բանականութեան միացած, տեսլականին անվերջանալի երգը երգելու համար անընդհատ:

Յուզումը, բաւական հզօր ու խոր երգին ծնունդ տալու համար, Ներշնչութիւնն է, ու Ներշնչութիւնը՝ քնարերգունին Մուսան: Ներշնչուելու կարող ու երգելու անդիմադրելի պէտքն զգացող բանաստեղծական հոգիները միշտ միեւնոյն զգացումներէն ու տեսիլներէն, կամ ամենէն ալ հաւասարապէս չէ — ինչպէս ո՞չ ամէնքն հաւասար ուժով է — որ կ'ազդուին. այլ եւ այլ են ներշնչութեան աղբիւրներն ու թափրասոնց հոսանքներուն. այլ եւ այլ են Մուսայները: Ոմանցն ոսկի քնարով զուարթուն մ'է, երկնից մէջ Աստուծոյ փառքը երգող խումբերուն դասակից. կրօնական ներշնչութեան մուսան է ան, Գաւիթը, Շնորհալին, Լամարդինը խանդավառող: Ուրիշներունը, զօր օրինակ՝ Էօփէն Մանուէլին, Քուանսուա Քոբէին, Աճեմեանին, ցածուն ու զգայուն ոգի մը, ընտանեկան վառարաններուն ու խոնարհ յարկերուն այցելու: Անոնցը՝ թեւատարած հրեշտակ մը որ իր թեւոց շուքին տակ աշխարհ մը կը պարուրէ, անոր այերց մէջ կը շնչէ, անոր աղբիւրներուն մէջ կը ճլջլայ, անոր շաղին մէջ իր աչքին ցօղը կը խառնէ եւ ուրկէ Պոիզէօ իր բրիտանական քերթուածները փոխ առաւ, ու Շէքքընտորֆ իր «Գերմանական գետոց երգը», սովորեցաւ: Անոնցը՝ դժբախտ կամ երջանիկ տարիանքներու Մուսայն է, որ կապոյտ կամ սեւ աչքի մը նուազ կամ վառ նայուածքին մէջ բանաստեղծութեան ամբողջ աշխարհ մը գտնել կու տայ իր մտերիմներուն, ինչպէս Ալֆրէտ օրը Միւսէին կամ Պետրոս Գուրեանին: Մին ունի

զուարթ գեղօններու կայսուն թեթեւոսն Մուսայն որ շատ անգամներ եղած է Ազքես. ֆանոսեանինը, ու միւսը՝ անսփոփ արտմութեանց սեւապող հրեշտակը, ինչպէս Լէոբարտի մը, Լընու մը, Եղիս Տէմիրճիպաշեան մը: Ոմանց Մուսայն մենասէր Արձագանգն է, լուսակարկաջ ազբիւրներու եւ սառերոտ անտառներու բնակ, բնութեան ձայներուն կրկնիչ, որ Պէշիկթաշիեաններու քնքուշ քնարին երգել կու տայ Գարունն ու Աշունը, Փափկաթեւ զեփիւններն ու Գեղեցիկ Ալեմտաղներն, — այլոցն՝ Արձագանգն է անցելոյն, որ Հիւկօներու, Լրգանդ տը Լիւններու բամբիւններուն վրայ կը թրթռացունէ հին գարուց ու ժողովրդոց վերածնած ոգիները, կամ ղէօթէներու, Պիւռկէներու եւ Ուլանտներու Պայլալտներուն մէջ աւանդական խորհրդաւոր հրաշալիէպերը կը յաւերժացնէ: Բայց այս ըսել չէ թէ մէն մի քնարերգակ բանահիւս մէկ լար միայն ունի իր քնարին վրայ. յաճախ մէկէ աւելի են, թէեւ քերթողը չգիտնայ միշտ իր կնիսնտոցն հաւասար ճարտարութեամբ խաղցնել: Մէկէ աւելի Մուսայներ կ'այցեն յաճախ քերթողաց: Գարուց վէպը գիւցազներգող Հիւկօն ոչ նուազ գիտէ գողար մնչել սերը կամ հովուերգել բնութիւնը. Լամարդին կրօնքի, սիրոյ, ծննդավայրի ու բնութեան զգացումներուն միանգամայն նոր ու շքեղ լեզու մը խօսեցուց, ու Նահապետը փոխ առ փոխ ձեռք առաւ բներգու հովուական սրինգը, տիրերգու հոգեւնուազ տաւիղը, հայրերգու վիպասան բամբիւրը եւ եղերերգու տիրալար քնարը:

Ու կրնայ թարրերգութիւնն ալ արձակ խօսիլ, գիւցազնական վէպը տակաւ իրապաշտ վիպասանութեան հետեւակ լեզուին շրջափոխուիլ, վարդապետական քերթութիւնը Ֆլամարիոնի պատկերոտ արձակին վերածուիլ, բայց քնարերգութիւնը միշտ երաժշտական պիտի մնայ, ոտանաւորին թեւոց բարախումը պիտի ունենայ, ինք որ բարախումն է խանդավառ սրտին ու թռիչն յուզուած երեւակայութեան, ու ազատի ալ յանգէ ու որոշ թուականութենէ՝ միշտ պիտի ունենայ ծփանք մ'ու ծածանում մը, վէտվէտում մը, որ զինք պիտի տարբերէ արձակէ ու արտայայտէ այն ելեւէջը, այն ճօճանքը, զոր ամէն սաստիկ յուզում կու տայ ոչ միայն խօսքին, այլ եւ մարմնոյն: Ուրախութեան զգացման տակ ձեռքերը կը ծափեն համաշափ, ոտքերը կ'երթեւեկեն պարաշարժ,

ու մարմինը կ'օրորի այնքան, ինչպես ցաւին ներգործութեամբ՝ գլուխը շատ անգամ աջ ու ձախ, առաջ ու ետեւ կը տարուբերի ճօճելով, խօսքերն ալ էլեւէջով մը, սաստկացման ու մեղմացման փոխադասութեամբ յաջորդելով ու իբր արձագանգելով իրարու: Ու յայտնի է թէ նոյն իսկ այս բնական ծփծփումն ու տատանումն է որ յառաջ բերած է տաղաչափական արուեստը, Երբայական Սազմաներուն ու Գողթան երգերուն կոհակաշարժ զուգընթացութենէն (parallélisme) մինչեւ Յոյն եւ Ղատին նրբարուեստ չափականութիւնը, ու Հիւսիսային գրականութեանց նախնական տառակրկնութիւնն (allitération) մինչեւ նոր ազգերու վանկական-յանգական ոտանաւորը, իւր բարեշրջական ձեւափոխութեանց մէջ:

Յանգն ալ այսպէս ծնունդն է միեւնոյն զուգաչափութեան մը պէտքին: Արդի ոտանաւորին մէջ չափը կը ճշդէ այն, չափը կը զարնէ, եւ առ այդ կը բաւէ միայն վերջին ձայնաւորներուն կամ, եթէ տողերը բաղաձայնով վերջանան, ձայնաւորին ու բաղաձայնին նմանահնչութիւնը. յանգը իր պաշտօնը կատարած է, տողերը իրարմէ կը զատուին՝ իրարու արձագանգելով, չափը որոշուած է: Ըստ այսմ, անցողակի պէտք է ըսել թէ որչափ աւելորդ ճիգ է ճոխ յանգի հետամտիլ, միշտ յենման ըաղաձայնը (Consonne d'appui) փնտռել եւ ցանկալի առաւելութիւն մը համարիլ ամբողջ մէկ եւ երկու, մերթ երեք իսկ վանկերու նմանաձայնութիւնը: Ճոխ յանգերու մերթ ինքնաբեր պատահումը թերեւս մասնաւոր հաճոյք մը տայ ականջին, բայց յաճախութիւնը, անոր յարատեւ փնտռուքը բանաստեղծութիւնը բառախաղի (calembour) կը դարձունէ, ինչպէս իրաւամբ եւ ուժգին կը քննադատէ Կիւյօ¹, ու արտայայտելի գաղափարներու շրջանակը կ'անձկացնէ՝ լոկ այն գաղափարները կարելի դարձնելով՝ որը կրնան երկու ճոխ յանգերու ճարմանդովը կոճկուելիք գօտիին մէջ պարփակուիլ, ինչ որ յաճախ կը պարտաւորէ դիմել աւելի կամ նուազ բռնազըօսիկ իմաստներու: Այս կերպ ոտանաւորներ յաղթուած դժուարութեանց, վարպետութեան եւ ոյժի փորձերու (tour de force) մի տեսակ ներկայացումներու չէ՛ն դառնար՝ զորս

¹ Les problèmes de l'Esthétique contemporaine, M. Guyau.

յանգի ըմբիշը կու տայ հասարակութեան առջև: Կրնայ զուարճացնել, եւ անոր համար թերեւս աւելի կը յարմարի զուարճարան գրութեանց, բայց անհաշտ է լուրջ բանաստեղծութեան հետ: Չէի ծանրանար հոս այս կէտին վրայ, եթէ մեր մէջ ալ գաղիացի Պառնասեաններու (les Parnassiens) սխալը իրրեւ ճշմարիտ աւնողներ ու բանաստեղծութեանց գծահատման մէջ հարուստ յանգը իրրեւ կարեւոր ու մինչեւ իսկ առաջին յատկութիւն մը համարող քննադատներ չգտնուէին¹: Յանգը վերջապէս ոտանաորի ձեւին ամենէն էական պայմանը չէ. ան միշտ չէ եղած. Երբայական սաղմոսը, Գողթան երգը, Շարականք եւ անոնցմէ առնուած Հայկական չափը, ինչպէս յոյն եւ լատին չափական (métrique) քերթութիւնք յանգ չեն գիտեր. այս վերջնոց նմանութեամբ² չափական ոտանաւորներ կը գրուին Անգղիացւոց, Գերմանացւոց, Իտալացւոց մէջ. միշտ անյանգ-վանկական ոտանաւորներ (vers blancs) կան, եւ արձակ բանաստեղծութիւններ — անշուշտ գարձեալ ներքին թուականութեամբ մ'ուրառից եւ պարբերութեանց ներդաշնակութեամբ — կը գրուին այսօր առաւել քան երբեք: Էականը խօսքին չափակցեալ վէտվէտուծն ու ելեւէջն է ու բան մ'ալ, այո՛, որ չափը զգալի ընէ իրրեւ տողավերջի հատած, ինչ որ տարբեր միջոցներով ալ եղած է ու կ'ըլլայ դեռ, որպէս հայկ. նորոգեալ չափին մէջ երրորդ անդամին միշտ քառավանկ լիութիւնը:

Ամենէն էականն ու անհրաժեշտը, քնարերգութեան մէջ, նոյն իսկ հոգին է բանաստեղծի, այն հոգին որ խմոր մ'է յատուկ, խառնուածք մ'առանձին, որով ծնեալ մարդը արոյրի պէս թըրթռուն, Եւողեան քնարի պէս սարսուռն, գիտէ բարասել պատահարներու ու գաղափարներու հարուածին տակ, զգացումներու

¹ Ծանօթ են Ռասինի, Լամարգինի գերազանցապէս ներդաշնակ տողերուն յանգական տկարութիւնք: Ալֆրէտ տը Միւսէ կամաւ իսկ ու պարծանքով իսկ կը խուսափէր ճոխ յանգերու հանգիպումէն, իսկ Ալիքթոս Հիւկոյի օրինակը, որ յաճախ ճոխ յանգն ու ճոխ իմաստը հաշտեցուցած է իրարու հետ, չի կրնար բանի մը ծառայել, ան հրաշալի բացառիկ հանճար մ'ըլլալով, եւ դարձեալ նա ալ սչ նուազ պարտաւորեալ կը տեսնուի հնարքներու գիմելու՝ ճոխ յանգը բերելու համար:

² Միայն սկզբունքն ըլլալով վանկերուն շեշտեալ կամ անշեշտ ըլլալը, փոխանակ ըստ հնոց ձայնաւորներու երկարութիւնը եւ սղութիւնը:

շունչին տակ ելեւէջել: Ասկէ պիտի ծնին բառերուն մէջ ամէն ճշմարիտ ներդաշնակութիւնք, տողերուն մէջ շարժմանց հազարու-
 մէկ փոփոխմունք, ձայներու համապատասխան փոփոխութիւնք կամ
 խստութիւնք, մասծմանց եւ յոյզերուն զանազանման համեմատ:
 Անկէ պիտի յառաջ գայ մանաւանդ բանաստեղծութեան ներքին
 արժէքը, որ կը չափուի զայն ներշնչող զգացումովն ու այն գրգռ-
 մամբ զոր կու տայ նա քերթողական աշխոյժին ու երեւակայու-
 թեան: Թող զգացումն ըլլայ մարդկային, բնական, անկեղծ, ազ-
 նիւ, վեհ, գեղեցիկ ու վեր վերջնէ ճշմարիտ քերթողին հոգին,
 ինչպէս հովը՝ ծովուն ալիքը, եւ ահա պիտի ծնի բանաստեղծու-
 թիւնը, կենդանի, գաշնակաւոր, սաւառնաթեւ ճախրող, կամ
 հեղիկ թեւածող, բուռն հեղեղի պէս թաւալուն, կամ խոտին
 տակ գլգլացող առուին կամ լճին վազող արցունքին նման մեղ-
 մահոսան: Այդ բանաստեղծութիւնը պիտի երթայ գտնել սրտե-
 բու ճամբան, ուր միշտ համակիր զգացում մ'իրեն կ'սպասէ,
 վասնզի բնական ու գեղեցիկ զգացումը, որ երգել կու տայ բա-
 նաստեղծին, ամէն մարդկային հոգիներու խորն է, ու ամէն հոգի-
 ները խորան կը լինին անոր երգերուն: Ցաղերգելու արժանի
 նիւթը պէտք է գտնել, եւ ընտրել զայն մանաւանդ որ մշտնջե-
 նապէս գեղեցիկ ու կենդանի է, ինչպէս յաւերժական բնութիւնը,
 զայն որ քու մէջդ է՝ բայց իմ մէջս ալ է, եւ որ քու նսիդ մէջէն
 մարդկային հոգւոյն իսկ խորը կը ցոլացնէ, եւ հետեւապէս պիտի
 կրնայ բաբախեցնել սերունդներու սրտեր:

10. Գ Ո Ւ Յ Յ Ա Ն Գ Ը

ԵՐՐԵԱԿ ԹՈՒՂԹՔ ԱՌ ԱԼՓԱՍԸԱՆ

Ա.

Յանգը, կ'ըսէք
 Շեշտով մը սէգ,
 Թափով մ'անսանձ,
 Ցայ սայրասուր
 Բազմաց նախանձ,
 Խանձող զերգ հուր:

Գանդի նըման
 Է աննըման
 Վեհ բաներուն,
 Որոնք անզոր
 Թողուն հեռուն
 Հոգիքն ստոր:

Արծիւ մ'է յանգ,
 Յանգ ճոխավանգ.
 Մինչ գետնին վրայ
 Արձակն հեւայ,
 Նա վեր սլանայ,
 Թեւովքն հսկայ:

Ի՞նչ անուն տալ
 Յանգին ծալ ծալ.
 Պարիկ, գոհար,
 Թռչուն, թիթե՛ռ,
 Լճյս, ձեզ համար
 Չեն բաւեր գետ:

Խանդ քերթողի,
 Ջերդ բարկ օղի,
 Ըզձեզ արբշիւ
 Կ'ընէ, յանգին
 Երբ ի կըշիւ
 Կը դընէք գին:

Ուրե՛նք ան որ
 Գաղտնեացն անոր

Է տխրացած,
 Նա հանճարի
 Հանքն է գըտած,
 Հանք «Թանգ քառ»ի:

Ու երբ մանկիկ
 «Ծափիկ ծափիկ»,
 Հանին «տան տան»,
 Երբ, կամ «մէն մէն»,
 Կարգայ Թոռան,
 Քերթողներ են:

Արուեստն երբոր
 Կ'ըլլայ հալոր,
 Է՛հ, է՛ր չառնու
 Բարբեր նըման
 Ծերի, աըղու
 Տըկարութեան:

Իրան հաւաս
 Ընծայէք շատ
 Հարուստ յանգին.
 Ծայրից գոչիւն
 Յաճախ մտքին
 Է հուսկ մնչիւն:

Փոխան, իրրեւ
 Թռչուն թեթեւ,
 Ճախրելու վեր,
 Գիտեմ կապար
 Արբան յանգեր
 Ծանր ինկած վար:

Ձի յանգ ու բան

Միշտ միաբան
 Ձեն, ու, յաճախ
 Ձրհամազգի,
 Մին աջ, մին ձախ
 Խեռ կը վարգի:

Ու ճոխ յանգաց

Միջոցը բաց
 Լեցնող բառից
 Փարթամն այն կոյտ,
 Շըռընդալինց,
 Սին, անօգնւտ . . . :

Ո՛հ, չէ՛, դուք որ

Ցաղանդաւոր
 Էք, ու ցոյց տաք
 Շատ հեղ անճիգ
 Թէ սիրտ մը տաք
 Ձեր մէջ ունիք,

Մի շքեղ յանգին

Փարիք ուժգին,
 Մի խանդ, աւիւն
 Սպասէք սառէն.
 Արտի հընչիւն
 Լըսուի բառէն:

Թէ մերթ յաջող

Ներշնչէ տող
 Պերճ յանգն, յաւէտ

Սակայն խաղ մ'է
 Չայնի, ու պուէտ
 Խաղցող մը չէ:

Ոչ ըստ բախտի
 Յանգին պիտի
 Նա ցատկըտուն
 Իմաստ տողէ,
 Այլ իր հոգւոյն
 Սէրն հեղեղէ:

Ցեսլականին
 Յառած աչուին,
 Երգը կ'երգէ
 Նա գեղեցկին,
 Ու մեղ պէտք է
 Ցնցող հոգին:

Բ.

Երբ հետեւակ է տաղ, աղքատ իմաստով,
 Հաւատացէք, յանգը փարթամ, «ակնաթով»,
 Ոչինչ դարման կրնայ բերել չարիքին,
 Փայլուն թեւեր վեր չեն հաներ ըզհէք դին:

Գէթ կարենար, որպէս «ըզգեստ երփնագոյն»,
 Պատիր քողով ծածկել չոր ոսկրը մարմնոյն.
 Բայց յանգ ծայր մ'է, թէ զգեստ՝ ձեռնոց մը միայն,
 Ո՛հ, ի՞նչպէս շուք կրնայ անձին տալ համայն:

Ոսկեճամուկ շքեղ հանդերձ ծիրանի
 Չափեալ բանին՝ ոճն է անոր կենդանի,

Անոր պատկերք, գոյնք գեղամայն, բառք խօսուն,
 ու քընար մը ամբողջութեան մէջ թաքուն:

Ցաղն անիմաստ, տաղն անհոգի երբ ճգնի
 Յանգաց թեւով սաւառնիլ բարձրը երկնի,
 Իկարոսին ինձ նըկարէ փորձը զուր,
 Ծաղու ծովին մէջ անկնիլն է բախար ախուր:

Իսկ երբ քերթուած ինքնին առոյգ է կեանքով,
 Յուզմամբ թրթռուն, աղնիւ խոհից ունի հով,
 Ճոխ ձոխ յանգի պէտքը չունի բնական
 Բարձրանալու դէպ ի կապոյտն եթերին:

Դիւթուած, մոգուած, մեր ըզմայլման մէջ խորին,
 Մոռնանք թէ գէր կամ վըտիա է յանգ տողին.
 Պէշիթաշեան կամ թէ Դուրեան երբ երգէ,
 Պերճ թէ միջակ է ծայրավանգ՝ ո՛ւմ հոգ է:

Անոնց անփայլ յանգեր կ'ապրին ցարդ, ու դեռ
 Պիտի ապրին, ցորչափ գեղոյն ապրի սէր,
 Մինչ յորդ յանգաց ինչ կոհակներ վայրահոս
 Մոռացութեան արդէն գլորած են ի փոս:

Թէ երես տաք յանգին՝ կ'ըլլայ կիրք մը այն,
 Ամէն սահման կ'անցնին պահանջքն իր ունայն,
 Միտք, բան ու սիրտ կ' ստրկանան իր քիմքին,
 Խուռնկ տալ պարտին եզերապահ բառ-կուռքին:

Աղուոր գեղունն ա՛լ աղուոր է ձոխ յանգով,
 Զերդ գեղանի կին մը շըքեղ հագուստով.
 Յանգ շըջանակն է ոսկի՝ պերճ պատկերին,
 Կամ թանգ բաժանին՝ արժանի զով ջինջ ջուրին:

Յանգը քօղք չէ, ըսինք Խրդէն. 'Թէ շըպտը՝
Բընիկ գեղոյն եղծիչ է քան զարդ յարմար.
Նըկարին յարգ չի փոխեր բնաւ շըջանակ,
Ու ափով ալ անոյշ խմուի ջուր յստակ:

Յետոյ . . . պատիր չէ՞ օրինակը մի քիչ.
Շըջանակին անծանօթ է նըկարիչ՝
Երբ իր գործը կ'երկնէ, ու ջուր երբ լողնէ՝
Չը գիտեր որ պիտի խմուի բաժակէ:

Իսկ տաղ ու յանգ են իրարմէ անբաժան,
Ջուգախանուն ի նոյն արգանդ ձեւացան.
Ու երբ յանգն յար պարարտանալ կը ճգնէր,
Իմաստն յաճախ ծամածըռէր կամ կ'ոսնէր:

Ո՛հ, ո՛վ պատմէ պիտի տագնապն երկունքին
Որով լոյս գայ մեծողն մարմին յաղթ յանգին.
Բընալեզու մանկաբարձներ չեն հերիք,
Օտարաձայնք ալ մերթ կըցեն իրենց ճիգ:

Նանիր վաստակ, սակայն. յայտ է Թէ անի
Երբեք մի լուրջ դեր կամ օգուտ մը չունի.
Թողէք սրտին իր երգերուն Թըռիչ տալ.
Թեւարախմանց չափը զարնէ լոկ յանգն ալ:

Գ.

Յանգին վըրայ ձեր « քըմածին », երկ նախկին,
Գիտեմ, առ իս պատասխան մ'էր, որ ծաղկին
Մէջ եպերել ճոխ յանգն էի յանդգներ,
Յայտ բերելով իր այլազան եղեւներ:
Փարթամ յանգաց մեր մէջ վարպետ գերազանց,
Խոց սրտով մ'ուր սուրբ զայրոյթն է Թափանցանց,

Չեր ամրալար քնարին թելոց տալով ցունց,
 Որուն այնքան դափնիներու պարտիք հունձ,
 Հնչեցուցիք յանգին ներքող խանդավառ,
 Ընծայելով անոր պատիւ գերափառ,
 Զայն ներշնչման, զայն հանճարի՛ յորդ ազբիւր
 Հռչակելով ու դեռ վըսեմ ձիրքեր բիւր
 Ցալով անոր, քանի՛ փայլուն աւելի,
 Քանի՛ ձայնեղ հնչէ ուժգին, շունդալի՛:
 Անոր ցըմահ կ'ուխտէք պաշտօն բարեպաշտ,
 Փոխան կեանքին՝ զոր տայ ձեղ՝ յար առնել յաշտ,
 Ու կարապի ընել ձեր Երգը ետքի
 Վարազայանգ շքեղ հրատեշտ մը կեանքի:

Է՛հ, ազատ էք ճաշակներուն մէջ ձերին,
 Ուր որ ուզէք՝ գտնել աղուորն ու բարին:
 Շատեր անձին վտանգով խնդրեն ոսկւոյ հանք,
 Դուք ալ կ'ընէք ջանք գտնելու հարուստ յանգ,
 Եւ ուրիշներ կրնան հաւնիլ այդ կերպին,
 Ծափ զարնել ձեղ, պըսակ դընել ձեր գլխին:
 Միայն երբ մարդ ցընորք մ'իրեն կուռք ըրած,
 Կ'ուզէ որ զայն ամէնք պաշտեն իբր աստուած,
 Ու անհաւանն իր դից՝ հէք մ'է իր համար,
 Անոնց շնորհքէն զուրկ, յաշաղկոտ մ', ապիկար,
 Է ներելի, կարծեմ, որ մէջ մտնէ որ,
 Վըրէպին դէմ բառնալու ձայն ու բողոք:
 Ուստի բընաւ շըկայ տեղի զարմանաց,
 Երբոր յանկարծ զիս կը գտնէք ձեր դիմաց,
 Ողջ ճաշակի դատին կանգնած ջատագով,
 Ճոխ յանգին դէմ խօսիլ պարզուկ յանգերով,
 Պատուէրին հետ օրինակն ալ նոյն ատեն

Տալով անոնց սրբ լըսելու յօժար են:
 Վարդապետող քերթուածք չըկան — անշուշտ շատ,
 Կանխած են մեզ բոք, Պուալօ եւ Ուլրաս,
 Որք ճաշակի ու արուեստի նիւթոց վրայ
 Չտփաբանած են, ինչպէս որ մենք հիմայ:

Չէ, քերթութիւնն այնքան սուրբ է ինձհամար
 Որ ո՛չ երբեք պիտի լինիմ ես յօժար
 Որ նոյնանայ բառախաղի՛ հետ անի
 Ու կայանայ զուգե՛լն մէջ ձայն ձայնի,
 Որք տողերու ծայրերէն տան իրարու
 Արձագանգ մը, որ ո՛րքան լայն ու ազգու՝
 Այնքան տաղը կարծուի վըսեմ, գեղեցիկ,
 Ռամիկ ունկանց թողլով գեղոյն դատակնիք:
 Գիւտ զայն Միլտոն կոչեց դարուց խրժական,
 Վըտարելով զայն իր երկէն վիպական:
 Յոյնք եւ Լատինք իրենց քերթուածքն համայանգ
 Յօրինեցին, ու մեր խանդոտ Շարականք
 Յանգե՛ր ունին, ու չե՛նք առնուր ցարդ ի կիր
 Անյանգ չափը, որպէս առին Հինք ի գիր:
 Եթէ յետոյ սովորական դարձաւ յանգ,
 Հարկ է որ մենք անոր անչափ յարգ մը տանք,
 Մինչեւ տաղին զայն համարել կեանքն, հոգին,
 Գեղն ու շընորհ, զարդն ու գոհար թանկագին,
 Այնպէս որ երբ քերթող դընէ մատն ի լար,
 Կամ ձեռք առնու իր գըրօիչը — պարզաբար —
 Նախ առաջին, որպէս Պանվիլ տայ խըրատ,
 Հոգայ կազմել ճոխ յանգաց շարքն անընդհատ,
 Ապա գտնէ իմաստները որք լընուն
 Ծայրից միջոցքն, հընարիմաց շատ թէ խուն,

Բայց որք, յաճախ անակնկալ, տարգրէն,
 Կ'ապշին ինչպէս ելէր այն սեղ եկեր են:

Է՛հ, չեն զարմանք. ըստ Պանվելի, յանգն է Բան
 Բանաստեղծին, անոր է նա ապաստան.
 Ձերդ արքեալ մը պատէ ի պատ տարուբեր,
 Պէտք է իմաստն ըլլայ յանգէ յանգ յերեր,
 Ու, փոխանակ վեր թռչելու շոյտ, թեթեւ,
 Խարխափէ կոյր, «որպէս ջղջիկ» ձեռնաթեւ:
 Բառ տողալից, իբրեւ երիթ, անհրաժեշտ,
 Ըստ վարպետին դարձեալ պայման մ'է որ հեշտ
 Յանգերն հարուստ՝ այլ բռնազօս իրար գան,
 Ամուսնոց պէս զոր զուգեց զուր մամոնան:
 Ընթերցողին ուշը, ինչպէս քերթողին,
 Այսօրինակ յօրինուածի մէջ տաղին,
 Պարող կնկան ու դիտողին զայն հանգոյն,
 Կ'անդրադառնայ միայն ոտից ծայրերուն:
 Անկեղծ ու լուրջ խոհն ու յոյզը շատ պէտք չեն,
 Հերիք է որ ծայրերը լի՛, լայն հընչեն.
 Ճարտարութեան հանդէս մըն է, ո՛չ հոգւոյ,
 Ու անդ հոգւոյն հետ բուն քերթողն է անգոյ:
 Ձարմանք գրգռեն թերեւս ճարտար այդ շարժմունք,
 Ծիծաղ եւ ծափ, բայց ո՛չ յուզում, ո՛չ արցունք:

Սակայն Հիւկօն, մեծն այն քերթող, աննրման,
 Չէ՛նա վարպետ մեծ տաղաչափ մը նոյնքան.
 Ու Պառնասեանք, Լըգոնդ, Գոբէ, Կօթիէ,
 Չառի՛ն անոր օրինակէն դաս միթէ: —
 Հիւկօն, այո՛, յաճախ գրրէ ճոխավերջ,
 Հաշտ պահելով յանգն ու միտքը փայլուն, պերճ.
 Բայց նա, այլուր ըսած էի, Հիւկօ է,

Չքնաղ հանճար, հըզօր ոգեաց վեհ կարգէ,
 Ում գիւրանալ այլոյ կենիուն է հընար,
 Խեւերն ի մի լըծել ձեռքով մը ճարտար:
 Այլ եւ քանի՛նա իսկ ունի յանգ միջակ,
 Բան թարմատար, ինչպէս կ'ըսեն՝ «տող ճերմակ»,
 Բաղաձայնը՝ նեցուկ ծայրին՝ միշտ հոն չէ,
 Ու շատ անգամ վերջը արկար կը հնչէ,
 Մանաւանդ երբ գըրէ յուզման շունչին տակ,
 Չունի յանգին միտ դընելու ժամանակ:
 Չափազանցեն աչկերոք կերպը վարպետին,
 Չեւն է, կարծեն, գաղանիք անոր արուեստին:
 Ու յայտ է թէ Միւսէ — հանճար մը ան ալ —
 Չուզեց երբեք փարթամ յանգով ճոխանալ,
 Թէ մինչեւ իսկ երբ գրչին գար ինքնաբեր՝
 Խոժոռելով իսկոյն ի բաց կը վանէր,
 Ու կայ քերթուած իրմէ կրկին հեղ գրուած՝
 Որ քաղ հաներ պոռոտ յանգը սպըրդած.
 Անշուշա չը թուէր հաճոյք մ'իրեն նուրբ ու լուրջ,
 Այլ ունկնատանջ յաւէտ բաղխիւն զոր տայ մուրճ.
 Խորհէր՝ լայն թեւք հնդկահաւին ի՛նչ օգուտ,
 Երգ ի բերան յարեւ թեւէ փոքր արտոյտ:
 Գիտէք նաեւ որ լաֆոնդէն, որ Ռասին,
 Դասականներն ամէն, ու մեծ լամարթին
 Չունեցան բնաւ պարարտ յանգին սին մարմաջ,
 Իմաստին փայլ, չափին դաշնակ տային քաջ:
 Այլ «յանգամերժ» իրենց ոգին չէր պատճառ
 Որ իրենց վեհ հանճարն ազնիւ չըքանար...:

Այլ եւս հերիք կը համարիմ այս պայքար,
 Ցարհամոզել ձեզ լիովին է դժուար,

Ձեզ որ, չափեալ բանից սալին վրայ կըքած,
 Ա'յնքան ամեր կուռ կուռ յանգեր էք դարբնած,
 Ու անոնց վրայ որքան թափած ճակատու քիրտ,
 Ա'յնքան անոնց ամուր յարած է ձեր սիրտ, —
 Թէ եւ, յայտնի իսկ լինելով խոստովան,
 Ձեր թըւիքէն ղեղչեցիք ո՛չ սակաւ բան:
 Իմ մանաւանդ խօսքն առ սերունդն է որ գայ,
 Անոր հանգէպ սիրտըս սուրբ բան մը կ'զգայ.
 Կ'ուզէի՝ ան չը մոլորուէր սրխալովն
 Ո՛չ «ակնաթով» յանգաց ու ո՛չ ունկնաթով.
 Կ'ուզէի՝ ան քերթութիւնը չը կարծէր
 Արհեստ զոր մարդ մեքենաբար կը սովորէր,
 Միտք մուրալով պատահական բառերէ,
 Շունչ յուսալով եւեւ պակաս մի տառէ:
 Կ'ուզէի որ խոկալ, զգալ նա գիտնար,
 Աղնիւ խինդը, վեհ արտմութիւնը ճանչնար,
 Վեհի՛ն, մեծի՛ն վրայ հիանալ կարենար,
 Հոգին անձկով երկինքին դէմ թրթռար:
 Կ'ուզէի որ նա գիտնար թէ քերթութիւն
 Սիրտն է մարդուն որ դուրս թափէ իր աւիւն,
 Թէ ճշմարիտ քերթողն յաճախ իր տաղեր
 Սրտին արեամբ, աչքին ցողովն է գրեր,
 Թէ երկրի վրայ պաշտօն մ'ունի նուիրական —
 Մարմնացընէլ գեղն ու շնորհը տեսլական,
 Թէ ականջով թէ եւ իր երգ մեղի գայ՝
 Սակայն հոգւոյն խորը պէտք է նա թնդայ,
 Ուստի հոգւոյ բերճ թըրթռուն արձագանգ
 Քան այն զօղանջ զոր պիտ' հանէ ծնծղայ — յանգ:

(Ժաղիկ, 1903, թիւ 12, 14, 16)

11. Ք Ա Ր Ո Ջ Ը ¹

(Աւակ)

Վարդապետ մը շատ կը տրտմէր:
Համայնքին մէջ երբ կը տեսներ
Սէր ու տենչանք ունայն զարդի,
Շըպար սընգոյր եղած յարգի:

Գաւազանն առած ատեան նա ելաւ,
Համայնից ի լուր խօսելու իր ցաւ.
Ու — անկեղծ բարբառ իր համոզումին —
Լըսելի ըսաւ բողոք մը ուժգին:

Ըսաւ. « Ինչո՞ւ կը բողոքի
Չեր մէջ փափաք պաճուճանքի:
Ինչո՞ւ, այրեր, պոռոտ փողպատ
Կը կրէք ի վիզ, ու անկէ զատ
Մի գնդասեղ՝ վառ ադամանդ,
Չեր շապկին կուրծքն ոսկի ճարմանդ
Կը զարդարէ, ու ձեր ձեռքին
Կաշեայ ձեռնոց ունիք նրբին,
Ճուրնող կօշիկ ձեր ոտքերուն,
Նոյն իսկ երբ գայք Աստուծոյ տուն:
Ինչո՞ւ, տիկնայք, այդ սեթեւեթ,
Մեհեւանդներ այդ անհեթեթ,
Չեր ականջաց ծայրերէն վար
Ինչո՞ւ կախուին գինդեր գոհար.
Առ ի՞նչ քողէք ձեր դաստակին,

¹ Այս ստանաւորն ալ կը կցուի Ճօխ յանդի խնդրոյն, ակնարկելով
ամանց կողմէ հրատարակուած արձակ թէ ստանաւոր այն գրութեանց որոց
մէջ յայտնի կամ ծածկարար՝ Ճօխ յանդին դէմ մեր ընդդիմութիւնը կը
մեկնուէր իբրեւ անկարողութեան կամ նախանձու հետեւանք:

Շար շար մասնի զարդ ձեր ձեռքին,
 Եւ թաթպանի երբ հարկ լինի՝
 Պէտք է մինչեւ արմուկն հասնի:
 Ծարիր ու ներկ ի՞նչ հարկ դեմքին,
 Ի՞նչ հարկ քայլի ծեփծեփանքին . . . :

“ Թողէք, եղբարք, թողէք, քոյրեր,
 Այդ սուտ զարդեր, սին նազանքներ.
 Ճշմարիտ գեղն հոգիէն գայ,
 Դիմաց վըրայ ան թող շողայ.
 Ճշմարիտ գանձն հոգիինն է,
 Կարեւորն ան ունենալն է:
 Չեր զարդ հանդերձ պարզուկ ըլլան,
 Միայն թէ միտք սիրտ առատանան.
 Ու ճոխ այլ սին զարդուց անձուկ
 Երբ յարտուել տայ հընհընուք,
 Ո՛հ, լուրջ խոհից, վե՛հ վերացմանց
 Թուի՛ն դանդաղ կ'ըլլայ ձեր անձ,
 Ու, զանց ըրած ներքին արժէք,
 Արտաքինով պարծիք սին սէգ . . . ”:

Վարդապետն այսպէս, լեցուած յուզմունքով,
 Խօսեցաւ երկար սրտի լուրջ շեշտով:
 Ունկընդրաց մէջէն ձայն մը բարձրացաւ.
 “ Վարդապետ, գիտենք մեք ձեր փորին ցաւ.
 Դատարկ գրպանով ի՞նչպէս գընէք զարդ,
 Ուստի կ'անգոսնէք մեր առջեւ զայն արդ: ”
 Ուրիշ ձայն մ'ըսէր. “ Մոնազ. աշխարհքին
 Չէ՛ տըրուած իրեն վայելք պերճանքին,
 Ուր այր, կին շքեղ, խօլ, գեղահըմայ,
 Երգեն ու պարեն. նախանձոտ մ'է նա: ”

Եւ այլք եւս այսպէս, — հասկացող մարդիկ...

Խացուած էք իրենց եսը ուռուցիկ:

(Արեւ. Մամուլ, 1903, թիւ 27)

12. Տ Ա Ղ Ա Չ Ա Փ Ա Կ Ա Ն Խ Ն Դ Ի Բ Մ Ը

Հայր Արսէն Այսրենեան, իր հոյակապ Քերականութեան, Տաղաչափութեան գլխոյն մէջ, հատուծի (césure) վրայ խօսեցաւ, իբրեւ կանոն կ'աւանդէ որ հատածը, տողին մէջը կամ ձայնքը, չկարենայ իյնալ բութ կամ անշեշտ վանկի մը վրայ, ըստ որում հատածը շեշտուով մը զգալի կ'ըլլայ, եւ հետեւապէս բառի վանկ մը, անընդունակ շեշտի, չէ կարող տողի անդամ մը կոմ տող մը վերջացնել: Այսպէս բառից կիսավանկ ծայրեր, ըով կամ ըով եւ բազաձայնով մը կազմուած (մարդը, մարդին, տունը, սիրտըս եւ այլն) չեն կրնար հարստներու վերջը գալ ու անդամի մը կամ տողի մը վերջին վանկն ըլլալ, այլ միայն կրնան տողին մէջ յաջորդ անդամին անցնել, շեշտը իյնալով վերջնութեան վանկին վրայ: «Եթէ կանոնը կը պահուի, կը յաւելու շեղինակը, նաեւ այն բառերուն ու ոճերուն մէջ՝ որոց մասերն իբրո՞ւ հարկաւ կ'ապակցեալ են եւ մէկտեղ կ'արտաբերուին. ինչպէ՞ս՝ որն որ, քանի՞ մը, թող տալ, ման գալ, շատ անգամ, դող ելլել, եւ այլն, եւ մանաւանդ եմ եւ ալ բութ ձայներով բաղադրածները»: Այսպիսեաց համար կը պատուիրէ անդամատութիւնը կատարել շեշտեալ վանկին վրայ ու մնացորդ մասը կամ բառը անցնել յաջորդ անդամին. ըստ այսմ այսպէս բառին այս ին ու չուզեր բառին չուին վրայ բերել հատածը, պէս եւ զեր վանկերը յաջորդ անդամին մաս ընելով, իսկ այսպիսի բառեր, բնական է յայնժամ, երբեք չձգել տողերուն վերջը:

Այս կանոնները կ'աւանդէ նաեւ Հ. Երուսրգ. Հիւրմիւզեան իր Առձեռն Բանաստեղծութեան գրքուկին մէջ. մանաւանդ ը ձայնաւորը պարունակող հատածի վերջերուն գէմ սաստիկ աններող կ'երեւի, եւ ոչ միայն խորթ ու անարուեստ կը գտնէ զանոնք, այլ մինչեւ իսկ վրիպակ մեծ կ'անուանէ անոնց գործածութիւնը, զոր անօրինակ կը համարի առ նախնիս:

Այսուհանդերձ արդի Հայ բանաստեղծութեան մէջ կը տեսնենք որ այս կանոնները չեն յարգուիր ընդհանրապէս, ոչ թէ խակ կամ ակար քերթողներու գրութեանց մէջ, այլ նոյն իսկ քաղերու, յարգուածներու, հեղինակաւոր գրիչներու տաղաչափեալ արտադրութեանց մէջ: Ռուսահայ բանաստեղծներ, վեճեակի աշակերտներ, տաճկահայ քերթողներ եւ մինչեւ երբեմնի վենետիկեան Հայեր անխտիր կը գործածեն կիսավանկ վերջեր իբրեւ յանգ կամ ծայր հատածի, ու սովորաբար չեն կտրատեր յարաշեշտ ու նախայարաշեշտ բառեր՝ հատածը շեշտեալ վանկին վրայ բերելու համար, մնացեալը նետելով յաջորդ անգամին: Բառից վերջին վանկը ընդհանրապէս լաւ կը համարին անդամ մը կամ տող մը վերջացնելու համար: Յողին ծայրի ղ վերջաւորութենէն կը խորշին քիչ մը, բայց անոր ալ օրինակները կան, ու ոչ իբրեւ իգական յանգ՝ ը երուն նախընթաց տառերով ուրիշ շեշտեալ յանգեր կազմելով. բոլորովին խորշելի բան մը չէ:

Ահաւասիկ օրինակներ ը ձայնաւորը պարունակով վերջերու.

Խելքը միտքը | անոր տրւաւ
Մեծ բանի մէջ էր կապիկը.
Մէկ մը կ'առնէր փայտը գիրկը.
Մէկ մը ուսը | կամ շալակը.
Մէկ մը կ'առնէր ոտքին տակը.
Կամ կը գլորէր մինչեւ բակը: —

Որ ոչ միայն | թուր օրը | կ'ընէր զանոնք | անհանգիստ. —
Այս որ լըսեց | ինչ ընելը | չը գիտցաւ:

(Լ. Գ. Այվազովսքի)

Պայծառ մանկուծիւն, ո՞ր են ներդաշնակ
Քո մեղեդիքը, | քո քնքուշ վիշտեր:

(Ս. Շահազիզեանց)

Տըխուր ժպտով մը | փայլի հեզնօրէն. —
Մոլեգին տենդ մը | հաճոյից հրապոյր:

(Մ. Աճէմեան)

Ոչ որ ըսաւ սա տրդին

Պատոենք սիրտը | տրտմագին. —

Անշուշտ ինձ կ'Յանք մը | կազմած ես ետքի. —

Փրփրփրի ներսըս | ղրժոխքի հանգոյն. —

Նախ կեանքը, վերջը | լացող մ'իւր վըրսն:

(Գ. Գուրեան)

Յուրտ սարսուռ մը | թափանցեց ներս | իր սրտէն. —

Ուր իր դէմքը | պիտի պահէր | միշտ գաղտնի:

(Սիպիլ)

Քուն ես, կամ թէ հեռուն ի խաղ,

Ծրար ճայնըս | լըսուի խաղաղ:

(Գրասէր Ատոմ)

Հինգ նիստէն վերջը | երբ օր մը մինակ. —

Բացուեցաւ դուռը, | ղըշխոյին նուիրակ

Ժանոյց իւր գալը, | հետ իւր բամբիշներ. —

Եւ այս դիպուածը | քեզ լաւ դաս մ'ըլլայ:

(Գ. Ագամեան)

Չըմեռն իր սուգը | տարածէ շորս դին. —

Դէպ ի դաշտերը | ուղղեց իր քայլեր:

(Ա. Փանոսեան)

Բուրեան էին | ծաղիկները | եւ գողտրիկ,

Մանիշակը | յասմիկն ու վարդ, ու հիրիկ. —

Հըրեշտակը, | զոր սրբութիւն մ'անմատոյց:

(Վ. Մալէգեան)

Նոյնպէս ըստ վերոյիշեալ քերականաց պահանջման պէտք էր որ ապօրէն ու սխալ ըլլար հետեւեալ առղերուն կազմութիւնը, վանձի կը պարունակեն հատածներ որք նախաշեշտ վանկերու երկարութեամբ բթացած են եւ կամ ինքնին անշեշտելի կը նկատուին (եմ, ալ). —

Դուրսը շաղ է, | մէջը շաքար,
 Եւ թափուած են | կըլոր սահուն. —
 Թէ տըխուր եմ | կամ մըտայոյզ. —
 Եւ այս շատ իսկ է | սրտիս իմ փոքրիկ:

(Մ. ԱճԳՈՒՄԱՆ)

Ի՛նչ անուշ էք | յայս տեսարան:

(Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ)

Եւ մահամերձն աչ | կ'ուզէ երկու բան:

(Պ. ԴՈՒՐԵԱՆ)

Այս երեւոյթները, որք բազմաթիւ նման գործածութեանց լոկ նմոյշներ են, ի՛նչ կ'ապացուցանեն: Չէ կարելի ըսել թէ գործածողներու ազիտութեան կամ տկարութեան եւ կամ թէ զանցառութեան վերագրելի են, վասն զի, ինչպէս կը տեսնուի, նոքա կը վերաբերին չափեալ խօսքի մեր յաջողագոյն վարպետներուն: Չենք կրնար ըսել թէ ներդաշնակութեան նուազ զգայուն են ու խորթութիւնները չըմբռնող կոշա ականջներ ունին անոնք: Իրենց անունները ինքնին կը բաւեն այսպիսի մեկնութիւններ հեռացնելու: Պատճառն, ըստ մեզ, այն է որ ոտանաւորի ներդաշնակութեան ըմբռնումը փոխուած է մեր մէջ այն ատեններէն ի վեր ուր հարկաւոր կը համարուէին վերեւ բացատրուած կանոնները: Հին ըմբռնման մը յաջորդեր է յայտնապէս նոր մը, աւելի լայն մը, եւ կարծեմ՝ այսպիսի խնդիրներու համար միշտ արուեստագէտներուն զգացումն ու ճաշակը աւելի կշիռ ունին քան տեսականորէն աւանդուած հաստատիպ կանոններ: Երբ ալ ընդհանուր եղած գործածութեան մը չեն պատասխաններ հնօրեայ կանոններ, աւելորդ է պնդել անոնց վրայ, իբրեւ անփոփոխելի պատգամի ու բացարձակ ճշմարտութեան վրայ, եւ այդպիսի Պրոկուստեան կտրապարի մը վրայ չափել ու դատել յառաջացած արուեստի մը գործերը, ինչպէս ըբած էր երբեմն Վարդ Սիպիլի: քերթուածներուն քննադատութեան մէջ, անոնց չափերն ու շեշտակերը, ճիշդ վերջիչեալ նկատումներով, ինչ ինչ տեղեր իբրեւ թերի մեղադրելով յանիրաւի:

Հին ըմբռնումները ուսանաւորին ներդաշնակութիւնը մեքենական կազմութեան մը մէջ կը դնէին ու արտաքին հնարքներով կը կարծուէր կարենալ ձեռք բերել զայն: Պէտք էր հոս կամ հոն շեշտել, եւ ահա ներդաշնակութիւնը պիտի յառաջ գար, մինչդեռ միօրինակութիւն մը միայն կրնար յառաջ գալ՝ միակերպ շեշտելով Էրդ, Ծրդ կամ Նրդ վանկերուն վրայ: Անշուշտ չափ մը՝ գնացք մը կայ ու կան անոր քայլափոխները որք պէտք է որ զգալի ըլլան ձայնի ու շեշտի ելեւէջներով, բայց այս նիւթական՝ պայմանագրական համաչափութիւն մ'է որուն չի կրնար հպատակիլ ու համակերպիլ իմաստներուն շարժումը, եւ ի զուր է ջանալ այդ երկուքը լիովին նոյնացնել: Չափին շեշտերէն դուրս դեռ ամէն բառ, ամէն հատած ու առդ իր յատուկ գոյնն ու երանգն, եղանակն ու թրթռացումն ունին որք փափուկ հասկացողութիւն մը կը պահանջեն եւ որոնց արտայայտութեամբը ուսանաւորին բուն, այն է ներքին՝ թաքուն ներդաշնակութիւնը կրնայ երեւան գալ: Ուսանաւորին առողջանութեան արուեստը անշուշտ կը կայանայ չափի ու իմաստի շեշտերը միանգամայն զգալի ընելուն ու զանոնք հաշտեցնելուն մէջ, բայց ո՛չ ի մի ձուլելուն, ըստ որում չէ կարելի այդ, եւ յայտնի է այլուստ որ չափի շեշտը կարելի եղածին չափ մեղմ պիտի հնչէ, առաւելութիւնը տալով իմաստի ու զգացման գունագեղ պէսպիսութեանց արտայայտութիւններուն: Գիտեմք նաեւ որ բառերուն տողին մէջ գրաւած դիրքը մեծ դեր ունի ընդհանուր ներդաշնակութեան եւ իմաստի ու զգացման ուժի աստիճաններուն համար, եւ հետեւապէս չի կրնար միայն չափական նիւթական պահանջումներու հպատակիլ: Այս ամէն նկատումներով, կարի ճղճիմ հին կանոններ իրենց կարեւորութիւնը կորսնցուցած են արդի Հայ տաղաչափութեան մէջ: Բուժ, սուղ վանկ մը ըստ ինքեան կ'երկարէ նախընթաց վանկը եւ այդ երկարման մէջ արդէն հակակշիռ մը կը գոյանայ որ կը հաւասարակշռէ անդամին թուականութիւնը: Ապա ուրեմն այդ բուժ վանկը ինչո՞ւ չկարենայ ծառայել անդամատման, քանի որ մանաւանդ անդամներու վերջավանկերը լաւ առողջանութեամբ չպարտին բնաւ ուժգնութեամբ հնչել ու չափին բաժանումները բուն կերպով զգացնել: Այսպէս հետեւեալ տողը ո՛չ թէ կը կարդանք

Մի՞թէ հայլույդ մէջ անձկաւ
Գեղունհի մը՝ | նայեցաւ,

այլ՝

Մի՞թէ հայլույդ մէջ անձկաւ
Գեղունհի մը | նայեցաւ:

Բնաւ աններդաշնակ չեն հնչեթ հետեւեալ տողերը՝

Եւ մահամերձն առ | կ'ուզէ երկու ըան. —

Ի՞նչ անուշ էք | յայս տեսարան.

այլ ընդհակառակն անուշ, երբ ալ եւ էքին նախընթաց բառերուն վերջաւորութիւնները կ'երկարենք ու իրենց վրայէն սահելով կ'անցնինք: Արդէն տողից չափական կազմութիւնը ըստ թուոյ վանկից պահելով հանդերձ՝ իմաստին համեմատ բնական շեշտին իրար յաջորդող տողերուն մէջ ետեւ կամ յառաջ տեղափոխութիւն մը գեղեցիկ զանազանութիւն մը չի՞ տար անոնց ու չափոքիլեր միօրինակութիւնը որ կրնար ձանձրալի դառնալ: Բաղդաստեցէք Պօստլյական դասական տողեր որք միակերպ երկուքի կը կտրեն Alexandrinը՝ Հիւկոյական տողերու հետ որք, երկու վեցափանկ կիսատողերը նիւթապէս պահելով հանդերձ, կերպակերպ բաժանում ու գեղեցիկ զանազանում կ'ստանան (4—8, 8—4, 3—9, 9—3, 6—4—4 եւայլն), ուրիշ ներքին շեշտերով անդամատուած:

(Ժաղիկ, 1904, թիւ 9)

13. ԺԱՐՈՆԵՆԿԱԿԻՑ ՎԷՊՆ Ի ՓՐԱՆՍԱ

Ա.

Վէպը ամենէն աւելի մշակուած, ամենէն աւելի սիրուած, ամենէն աւելի ժողովրդական սեռն է Ֆրանսական ժամանակակից գրականութեան: Գրեթէ մի եւ նոյն բանն է միւս գրականութեանց մէջ ալ: Մեր ժամանակին գերազանց գրական սեռն է: Դպրոցին գրասեղաններուն վրայէն կ'ընտանենան վեպասաններուն հետ ու կը սովորին զանոնք սիրել: Գործաւորը աշխատանոց կը տանի իր հետ իր վէպի հատորը. օրիորդն իրենն ունի իր սնարքին

քով. անկէ հաս մը կը գտնես փաստաբանին գրասենեկին մէջ ու վաճառականին գրասեղանին վրայ, եւ մինչեւ եկեղեցականը՝ ամէն լուրջ մարդիկ իրենց նախասիրած վիպողն ունին: Ինչո՞ւ համար գրականութեան այս սեռին գտած այս մեծ ընդունելութիւնը: —

Նախ եւ յառաջ, հնագոյն ժամանակներէ սկսեալ՝ մարդիկ սիրած են գեղեցիկ պատմութիւնները, առասպելները, արկածայի զրոյցները: Դիւցազնավէպերը զբօսուցած են ազգաց մանկութիւնը: Միջին դարու Դիւցազնագութիւնք արդի ժողովրդոց օրրանին շուրջն այն եղած են ինչ որ Ռամայանա եւ Մահապարադա եղած են նախնի շնորհներուն, Իլիական եւ Ոդիսական հին օրերու Յոյներուն, Գողթան Նրգերը մեր նախահայրերուն համար: Գրականութեանց սկիզբը, բանաստեղծներու, ինչպէս նաեւ ժողովուրդներու, երեւակայութիւնը կը յափշտակուէր այն հրաշալի աւանդութիւններէն որք կը պատմուէին, դարերու մէջէ, վաղնջուց ժամանակներու հերոսներուն, անոնց քաջագործութեանց, վայրի գազանաց ու թշնամի տխրաններու վրայ անոնց տարած յաղթանակաց մասին: Սիրելի էր մտաց առջեւ պատկերել այդ վսեմ գործքերը, ու Դիւցազնավէպը (Epopée) ծնած էր:

Բայց քիչ քիչ մարդկային միտքը, փորձառութեամբ հասունցած, կը կորսնցնէր իր ցնորքներն ու խանդը անցելոյն մարդոց նկատմամբ, զորս կ'սկսէր ուսումնասիրել աւելի հանդարտութեամբ եւ բանաւորութեամբ: Պատմական ճշմարտութիւնը կը ջանար որոշել ինչ որ կայ դրական անցելոյն աւանդավէպերուն տակ, եւ, մարդկային իրողութեանց մեկնութեան մէջ, մէկդի կը թողուր առասպելն ու հրաշալին դէպքերու բնական ու բանաւոր կապակցութիւնը փնտռելու համար: Պատմութիւնը, ծնած, կ'ուզէր խօսիլ մանաւանդ մարդուն բանականութեան քան երեւակայութեան: Բայց այս տարօրինակ կարողութիւնը ասով իր իրաւունքներէն չէր ուզեր հրաժարիլ: Ինքզինք յաղթուած չէր համարեր: Գիտենք թէ մարդուն մէջ երեւակայութիւնը բաց ձգուած դուռն է անդրագունին, տեսլականին, կարելւոյն վրայ. պատկերներու դահլիճն է այն զոր անցնիւր որ կը կրէ կամ կը սիրէ փոխադրել իր մէջ՝ հոն իրական կամ իտեական պատկերներու մէջ

կրկին տեսնելու համար ինչ որ կը սիրէ կամ սիրած է, ինչ որ կ'երազէ կամ երազած է, հոն ինքզինք գտնելու համար այնպէս ինչպէս որ է կամ կ'ուզէր ըլլալ: Ուստի եւ Ճշմարիտ պատմութիւնը երեւակայուած պատմութիւններու համար մարդուն ճշտակը չէ նուազեցուցած, ու կլիոյի քով իբրեւ քոյր մը քաղց միշտ կեղծեաց Մուսայն, յաճախ տակաւին շատ սեղմ փարած անոր ու սիրելով դեռ շփոթուիլ անոր հետ:

Մարդկային միտքը պէտք ունի իրական կեանքի անձուկ շրջանակէն դուրս ելնելու. մտացածին ցնորագեղ պատկերներ պէտք են իրեն զինք զբօսցնելու, զինք դիւթելու, զինք մխիթարելու, իրեն գրգիռ կամ նիրհ տալու համար, կամ թէ լաւագոյնս տեսնել տալու իր շուրջը, ընկերութեան բաւիղին մէջ, խորքին մէջ այն հոգիներուն որոց կը պատահի ամէն օր: Այդ իսկ է Ալիպասանութեան (Roman) կալուածը: Էետեւարար հաստատուած է ան գրականութեան դաշտին մէջ եւ մինչեւ իսկ հետզհետէ աւելի կարեւոր, տիրապետող տեղ մը գրաւած: Բայց նաեւ կերպարանափոխուած է դարերու մէջէ՝ իւրաքանչիւր ժամանակամիջոցի փոփոխ ճաշակին լաւագոյնս յարմարելու, իւրաքանչիւր սերունդի սրտին ու երեւակայութեան պահանջումներուն համապատասխանելու համար: Հրաշապատում ու առասպելական ըլլալէ յետոյ հնութեան մէջ, ասպետական, այլաբանական, զուարճարան ու երգիծական եղած է Միջին դարու մէջ, ինչպէս կը տեսնուի Վարդի ու Աղուէսի հոչակաւոր վէպերուն եւ նմանեաց մէջ: Ռապլէի Կառկանդիլային ու Բանդալկոնիէլին մէջ դարձեալ երգիծանքը կայ, վերածնութեան ընկերութեան ճարտարօրէն քողարկուած ու զուարճալի սոսկանքը: Տասնեւեօթներորդ դարուն մէջ, վէպը հովուերգական է ու նրբօրէն սիրաբանական՝ ազնուականաց շողմախօս ընկերութիւն մ'զբօսցնելու, կամ, թատրոնին հետ, կ'երթայ քաղել իր նիւթերը եւ հերոսները դասական հնութեան յիշատակներուն մէջ, միշտ, սակայն, կիւրսի, կասանդրայի, կղէոպատրայի, Տելեմաքի հնօրեայ անուանց տակ նկարելով բարքերը ժամանակին ազնուապետական ընկերութեան: Արդի աշխարհին մէջ ժողովուրդը դեռ չէր ծնած: Բայց արդէն, տասնեւութերորդ դարուն, փիլիսոփայական ոգին կը զարթնու եւ կը հետաքրքրուի բոլոր հարցերուն որք

վերաբերութիւն մ'ունին ժողովրդեան բարօրութեան: Ընկերութեան գաղափարը՝ ընդլայնուելով՝ բովանդակ մարդկութեան հոմանիշ կը դառնայ: Հիմայ ալ անոր պարտի ուղղուիլ գրականութիւնը, զայն պարտի ցոլացնել իր արտադրութեանց մէջ, զայն պարտի առաջնորդել, լուսաւորել զինքն իր վրայ եւ իր ճակատագրաց վրայ: Ու վէպը հրաշալի գործի մ'եղաւ՝ «Հանրագիտակ»ի հեղինակներուն, Վոլթէռներու, Տիտոսներու, Ռուսոներու, Մօնթէպիէօներու ձեռքին մէջ, նախապաշարմանց դէմ պայքարելու, նոր ըմբռնումները ծաւալելու համար: Իմաստասիրական վէպն էր, ընկերաբանական խնդիր մը մէջ տեղ դնող վէպը (Roman à thèse) որ լոյս կը տեսներ Զատիկի, Գանտիտի, Ռամօյի եղբորորդւոյն, Կրօնուհւոյն, Պարսկական նամականւոյն, Մոր Հելօյիզին մէջ, եւ նոյն իսկ Էմիլին, որ մանկավարժական վէպն էր: Ա՛ղգացուէր թէ գրական այդ ձեւը, իր հաճոյական հանգամանաց շնորհիւ, պիտի կրնար իբրեւ բնական խողովակ մը ծառայել ժողովրդական խաւերուն մէջ թափանցել տալու համար որ եւ է գաղափարի ու տեսութեան, որ իր վերացականութեան մերկութեան մէջ անհպելի պիտի մնար մեծ հասարակութեան: Մի եւ նոյն ատեն լըսած Բարուց վէպը կ'ստեղծէր Ժիլ Պլասին մէջ:

Արդի ժամանակաց համար Գաղիական վէպին ծագման վրայ կ'ամփոփեմ տեսութիւնս, ոչ միայն վասն զի գլխաւոր նիւթս է գաղիական ժամանակակից վէպը, այլ նաեւ վասնզի Եւրոպայի միւս երկիրներուն մէջ վիպասանութեան զարգացումը, բանեցուցուած կամ կրուած ազդեցութեամբ, կամ ժամանակին մէկ ընդհանուր ներգործութեամբ, աւելի կամ նուազ կը կապուի սեռին Գաղիոյ մէջ ունեցած ընթացքին:

Բ.

Այս երկրին մէջ վէպը, տասնեւիններորդ դարուն, կը կրէ այլազան կերպափոխումներ: Ամէն ձեւ կը զգենու, ընթացիկ մտքին ու գաղափարաց բոլոր պահանջումներուն կը ճկի, ցոլացնելու համար փոխ առ փոխ, իբր մի մոգական հայելւոյ մէջ, անհաստական կամ դաստակարգերու հաւաքական հոգին, տեսլականի ամենէն վսեմ երազներն ու ձգտումները, կամ թէ իրականութեան ամենէն կոշտ գոյները, ինչ որ ամէն օր մեր շուրջը կ'ապրի եւ ինչ որ

կայ ամենէն տարաշխարհիկ, ամենէն աւելի բանաստեղծօրէն գեղեցիկ եւ առողջ դէմքերը, ինչպէս ամենէն հրէշային ու ախտաժէտ տիպերը, անցեալը քմահաճօրէն պատկերացած կամ ամենէն աւելի գիտնօրէն վերակազմուած, ներկայն՝ բոլոր ժամանակաց հետ իր ունեցած նմանութեանց կամ իր մասնաւորութեանց մէջ, անոր մէջ զոր ունի ամենէն յատկանշական, ամենէն արդի, մարդը՝ նկարուած իր հոգեբանական փափկագոյն զսպանակներովը, ու մարդը՝ ըմբռնուած բնախօսական այլամերժ անսակէտով, մեքենայ-մարդը, զգայարանքներէն ու կոյր բնազդներէն շարժուած:

Ար տեսնէք զանազանութիւնը վիպասանական սեռերուն, հոգեբանականը, ընկերաբանականը, տեսլապաշտը, իրապաշտականը, գիտական կամ նիւթապաշտական ըսուածը, այժմէականը, տարաշխարհիկը, եւ այլն: Այս անտարակոյս նաեւ քսածին սեռը, որ միայն երեւակայութեան ներշնչումներուն կամ հաճոյքներուն կը հնազանդի ու անոր զբօսանքը միայն իրեն նպատակ ունի: Բայց իր ամէն ձեւերուն տակ, 19րդ դարու վէպը տիրող գաղափարով մը յատկանշուեցաւ, այն է թէ նա պարտի ծառայել մարդկութիւնը ինքն իր վրայ լուսաւորելու, հայթայթելու անոր առիթը ինքզինք դիտելու իր ամենէն մաքուր կամ ամենէն այլակերպուած ձեւերուն մէջ, իր թարուց ընդհանրականութեան կամ տարականոն ուժերու կամ տկարութեանց արդիւնքներուն մէջ, վերջապէս ինքզինքին գիտակցութիւնն ստանալու: Այս ըմբռնումը, տակաւ պայծառագոյն, վիպասանութեան ընկերական դերին՝ գործադրութեան եղանակներուն մէջ յառաջ բերաւ հետզհետէ աւելի շեշտուած ձգտում մը յարելու իրականութեան, անոր աւելի մօտէն հետապնդելու, երեւայականին ու պայմանադրականին լուսաւոր այլ դատարկ մարզերը թողլու, իջնելու համար գետնին վրայ, թափանցելու ծածուկ խորշերուն մէջ եւ ի լոյս վերբերելու մարդոց եւ զանոնք շրջապատող իրաց ճշմարիտ երեսը:

Այս ձգտումը ծնունդ կու տայ իրապաշտական կամ բնապաշտական կոչուած դպրոցին, որոյ Օնօնէ տը Պալլաք կը նկատուի իբրեւ հայր, որ իր տիպար գործն ունեցաւ Ալեստավ Ֆլօպէտի Մատամ Պովառիին մէջ, եւ որոյ Էփիլ Զօլա համարուեցաւ յետոյ գլուխը: Իրապաշտական դպրոցը կը հակադրուէր տեսլապաշտ դպրոցին. վիպական (romantique) դպրոցն էր ան,

որոյ գլուխը եղած էր Վիկտոր շիւկօ: Վիպական արուեստը մանաւանդ ննթակայական արուեստն էր: Բանաստեղծութեան, թատրերգութեան, վիպասանութեան, ներկային ու անցեալին մեկնութեան մէջ, մատենագրին հոգին էր մանաւանդ որ կը նկարուէր. իր յատուկ զգացումներն ու երազումները կը բացատրէր ան, մարդն ու բնութիւնը տեսնելով իր տրամադրութեանց քողին, իր երեւակայութեան հատուածակողմին մէջէն: Ու վէպերուն հերոսք յաճախ ինքեանք վիպասանք իսկ էին, ինչպէս Պայրնինները, ինչպէս Սընանքուռի Օպէումանը, Շաթոպրիանի Ռընէն, Տիկին տը Սգալը Տէլֆինն ու Գորիինը, նոյն իսկ «Թշուառներ», ու Մառիիւսը: Այդ հոգին, հեղինակը կ'երեւակայէր զայն տարօրինակ, անիրականալի տեսլականի մը սիրահար, գերագոյն կեանքի մը անյագ ծարաւի, բայց չճանչցուած, արհամարհուած, հետեւապէս անդարման տրտմութեամբ մը սրտահար: Ինքզինք կ'իտեականացնէր, անձինքն ու անոնց կեանքը կ'իտեականացնէր, ու վէպը կ'ըլլար մանաւանդ դիւցազներգութիւն մը, նոր, արդի, յաճախ քնարերգական աւիւնով մը գրուած, ինչպէս Ղամարգինի Ռաֆայէլն ու Կրացիէլլան, Ժորժ Սանի Լէլիան ու Էնտիանան: Գեղեցիկ էր այդ անշուշտ, շքեղ էր այդ. հմայք մ'էր ոճի, գոյնի, փայլի, պատկերներու, ներդաշնակ հնչականութեանց. խանդավառութիւն մ'էր, յափշտակութիւն մ'էր այն: Ընթերցողը խլուած էր իր սովորական միջավայրէն ու դիւթական աշխարհի մը մէջ փոխադրուած, գերազանց էակներու մէջտեղ որք զինք կը խռովէին՝ իր սրտին մէջ վառելով լաւագունին պապակը, բայց նաեւ մաքրելով զինքն իբր սրբագործող հպումով մը: Մէկը Թշուառներու ընթերցումէն ստացած տպաւորութիւնը կը բացատրէր ըսելով, «Երբ աւարտեցի անոր ընթերցումը, աղքատներ կը փնտուէի ողորմութիւն տալու համար անոնց»:

Բայց այս կը նշանակէ՞ թէ այդ գործոց մէջ իրականին զգացումը բացարձակօրէն կը պակսէր, եւ թէ դիտողութիւնը բոլորովին ոչինչ էր անոնց մէջ: Ո՛չ երբեք: Ամէն ատեն իրականը մասն եղած է արուեստին, ու բնութեան ուսումնասիրութիւնը միշտ առաջին դպրոցը եղած է արուեստագիտաց: Ամենէն տեսլապաշտ հեղինակին քով մերթ տիպարներ կան ամենէն խստապահանջ իրականութեամբը նկարուած, գոյներու ծայրայեղ բրտութեամբ

մը յօրինուած միջավայրի նկարագրութիւններ: Քննադատք իրաւամբ կ'ըսեն թէ Զօլայի վէպին սկիզբը աւելի ճիշտ կ'ըլլար փնտռել Թշուառներու այս ինչ մասերուն քան Մատամ Պօվառիի մէջ: Միայն ժամանակի ոգին տարբեր է. անկիւնը որու տակ լամարդին մը, Հիւկօ մը, Էօժէն Սիւ մը կը դիտէ աշխարհքը՝ չէ՛ այն ուրկէ ֆլօպէռ մը, Կի տը Մօբասան մը կը նայի: Ասկէ մանաւանդ կը յառաջանան գեղեցկագիտութեանց եւ երկոց տարբերութիւնները:

Գ.

Դարուն երկրորդ կիսուն մէջ, միտքը իր տեսակէտը փոխեց դրական փիլիսոփայութեան ազդեցութեան տակ ու բնական գիտութեանց գոռոզ յաղթանակներուն հանդէպ: Դրական եղած արուեստի ինչպէս գիտութեան մէջ՝ զուտ առարկայական ու անանձնական արուեստի մը յղացումն ունեցան, ինչպէս առարկայական ու անանձնական է գիտութիւնը: Ինչ որ զգայարանաց տակ չէր իյնար ու գիտօրէն չէր կրնար ապացուցուիլ՝ մերժուեցաւ նաեւ արուեստագէտներէն, որք բերուեցան այսպէս մարդուն մէջ միայն մարմինը տեսնելու, բնախօսական իրողութեանց միայն կարեւորութիւն ընծայելու եւ բնախօսութիւնը հոգեբանութեան հետ շփութելու: Այս վերջինը յապաւուեցաւ. բառն իսկ, ինչպէս յայտնի է, Զօլայի ջղերուն կը դպէր: Եւ այսպէս ահա իրապաշտ արուեստը ալ ծայրատեալ արուեստն է միայն, ըստ որում զանց կ'ընէ մարդուն ամբողջ մէկ կողմը, անոր կարեւորագոյն, ազնուագոյն մասը, հոգին: Երբ վերացում ըլլայ հոգւոյն, երբ ուրացուի ինչ որ կայ բարձրագոյն ու բացարձակ մարդոյն մէջ, իր բանականութեան սկզբունքները, իր խղճին բարոյական օրէնքները եւ իր հոգւոյն ըզձուփերը, շատ մօտ ենք մարդը իբրեւ գազան մը նկատելու, եւ ահա ինչ որ ըրած են Բնապաշտ կոչուած վիպասանները, գրեթէ ամէնքն ալ յոռետես, ամէնքն ալ մարդկային անասնոց տիպարներ ստեղծած ըլլալով, որք զգայարանաց օճանն ունին զգայական հաճոյքի որսին վազելու, աւելի կամ նուազ վտանգաւոր իրենց նմաններուն համար, իրենց ախորժակներուն աւելի կամ նուազ սաստկութեան աստիճանին համեմատ: Այսպէս են, ի մասնաւորի,

Ջօլյայի երեւակայած Ռուկօն-Մաքսոններու ընտանիքին համաբա-
ւոր ժառանգական ջլախտաւորները:

Կը տեսնուի թէ տեսլապաշտ ու բնապաշտ դպրոցներուն
էական տարբերութիւնը իմաստասիրական ըմբռնման տարբերու-
թիւն մ'է. մէկ կողմը՝ արուեստը հոգեպաշտական է, միւս կողմը՝
նիւթապաշտական. եւ եթէ իրապաշտութեան սկզբունքը իր գոյու-
թեան իրաւունքն ունի քիչ մը չափազանցօրէն վերացեալ տեսլա-
պաշտութեան մը հանդէպ, իր բոլոր արդիւնքը միայն այն պայմանաւ
կրնայ յառաջ բերել որ ոչինչ զեղչէ կամ զանց ընէ մարդուն
մէջ, կանխակալ ոգւով յառաջուց անոր վրայ անկատար ու յո-
ռետեսական կարծիք մը չկազմէ: Բաց աստի, արուեստը կրնայ
իրապէս իրապաշտ ըլլալ, բացարձակօրէն առարկայական ու ա-
նանձնական: Արուեստագիտական գործի մ'արտագրութեան մէջ
միշտ արուեստագիտին անձնականութեան բաժինը կայ: Սա պար-
տաւորեալ է իր առարկան իր աչքերով, իր ակնոցներով դիտե-
լու, ինչ որ միշտ իր անհատականութեան կնիքը պիտի դրոշմէ իր
գործին: Չէ կարելի վերացում ընել այդ անհատականութեան,
ու այն վայրկեանին ուր մարդ ամենէն աւելի օտար կը կարծէ ինք-
զինք իր աշխատութեան, բոլորովին անոր մէջն է թերեւս: Բւ միշտ
արուեստը իրականութեան մէջ գաղափարը պիտի փնտռէ, զայն
ի վեր պիտի հանէ, ու իրականութենէն քաղած գոյներն ու ա-
տաղձները զայն զգալի ընելու, մտաւոր տեսիլը իրացնելու պիտի
ծառայեն: Տեսլականն (idéal) ու իրականը (réel) արուեստին երկու
անհրաժեշտ տարրերն են: Իրականութենէն չափազանց հեռացող
մը չպիտի կրնայ արուեստին պահանջած կեանքը տալ իր ստեղ-
ծումներուն ուր գուցէ իր յղացած տեսլականն ալ՝ բնականէն
օտար՝ չչահագրգռէ զմեզ: Միւս կողմէ, իրականութեան պարզ
ընդօրինակութիւնն ընել ձեռնարկող մը պիտի ունենայ կրկին ան-
յաջողութիւններ. նախ ուր որ գաղափարի մը արտացոլումը չկայ,
հոն արուեստ չկայ, վասնզի հոն կը պակսի այն ներքին միութիւնը
որ արուեստագիտական գործին տարրերուն ընթրութեան ու ներ-
դաշնակութեան պայմանն է. աստի՛ շատ անգամ այդպիսի գոր-
ծերու մէջ այն երկայն նկարագրութիւնք ու գիտական կամ ճար-
տարագիտական մանրամասնութիւնք որք անյօդ կը մնան իբր
բռնազբօսիկ եկամուտ մասեր. յետոյ՝ գրչով իրականին կատա-

րեալ լուսանկարումը եթէ արուեստագիտօրէն արժէք ալ ունե-
նար, անկարելի պիտի ըլլար, վասն զի հնար չէ կատարեալ վե-
րացում ընել մեր եսին ու լուսանկարչական գործիքի մը չէզոքու-
թիւնը տալ մեր գրչին: Մարդկային արուեստին բաժինը ոչ թէ
մնութեան արտատպումն է, այլ անոր մեկնութիւնը: Մասնաւոր
զգայն իրողութիւններուն տակ ծածկուած ընդհանուր ճշմարտու-
թիւնը, իմանալին երեւան պիտի բերէ ան: Պղտտոն իմաստասի-
րութիւնը անտեսանելոյն գիտութիւնը կը կոչէր. անտեսանելին —
գաղափարը — տեսանելի ընել է, կրնանք ըսել, արուեստին նպա-
տակը: Ճշմարիտ արուեստագէտը, որ դպրոցի ալ վերաբերին,
նոյնը ըրած են. միայն թէ մարդուն եւ ընկերութեան մէջ իրա-
պաշտք տափակութիւնն ու անանակնութիւնը յաճախ տեսած
ու տեսանելի ըրած են, մինչեւ իսկ չափազանցելով ու կարծես
զբպարտելով մարդկային ընդհանուր մնութիւնը, ու անտես ըրած
են բարին ու ազնիւը, լաւին փոխարէն յոռին տեսլականացնելով:
Այս իմաստով է որ քննադատը իրաւամբ Ջոլան կոչած են «հա-
կառակէն տեսլապաշտ մը (un idéaliste à rebours)»:

(Մանզումէի Էֆրեար, 1902, թիւ 451—453)

14. ԵՐԿՆՈՒԻՐՈՄԵՆԿ ՄԻԻԹՈՐՈՑ ՈՐՐՈՑԻ ՍԵՐՈՍՏՈՑԻՈՑ

(Մասնակցութիւն Հանգիսի վիեննական Միութարեան Հարց ի Կ. Պալեա)

Ո՛չ, խտիրք կրօնից ոչ ստնանեն բնաւ համատոհմիկ զգաց-
մանց, մանաւանդ թէ չպարտին արգելուլ զերախտագիտութիւն
յերեւելոյ եւ ի մեծարանս դնելոյ երախտաւորաց՝ յորժամ խըն-
դիր ի միջի կայցէ պատուել եւ օրհնել զյիշատակ բարեաց եւ
ծառայութեանց յոր վայելեալ իցէ ուրուր: Փոքր իւրաքանչիւր
հատուածի ազգիս փառաւորեն զլրութիւն նորին միանգամայն,
եւ զի լեզու եւ մատենագրութիւն հասարակաց սեփականութիւն
են ամենայն մասանց միոյ տոհմի, ապա եւ որ ծառայեացն նոցին
առ միում ի մասանց անտի՝ ծառայեաց եւ ամենեցուն, որով եւ
իրաւունք են նմա ի վերայ երախտագիտութեան համօրէն ազին:

Սմին երի՛ մեծն Միութար Աբբա, որ զմիաբանութիւնն
յիւր անուն կոչեցեալ հաստատեաց ի մշակութիւն հայրենի

դպրութեանց եւ ի լուսաւորութիւն հայախօս ժողովրդեան, բարերար է հասարակաց, եւ տօն քառապատիկ յորեկինի նորա տօն է ամենայն Հայոց: Ահա վասն այսորիկ Պատուիրակ Աթողիկոսութեան Էջմիածնի բազմեցաւ ի վենետիկ առնութեւր Աբրահայի Ռեխտին, եւ Երեւեցուցիչք Պատրիարքութեանն Կ. Պոլսոյ առաջինկայ գտանին աստ այսօր:

Մխիթարայ կամ Մխիթարեանն անուն պատուեաց ապաքէն զազգ մեր բովանդակ. համայն Եւրոպա ծանեաւ զվասն վենետիկոյ եւ զվիեննայ, ողջունեաց ի նոսա կրկին լուսավառ հնոցս ուսման՝ Գեղեցիկ Դպրութեանց, Գիտութեանց, Պատմագրութեան, Բանասիրութեան եւ Քննադատութեան, եւ բազում անգամ եւ ինքն իսկ ի կաճառս անդ իւր պսակազարդ պանծացոյց զերեւելի անձինս կրկին Միաբանութեանց: Արքայք, իշխանք եւ այլ արք մեծափառք յայց ելին բազում անգամ վանացս, եւ դշխոյք թագազարդք սիրեցին խոկալ ծնրադիրք ընդ կամարօք անշուք մատրանց նոցին եւ խոնարհեցան ի համբոյր աջոյ պարզուկ արեղայից: Նոցա պարսական գտաւ Եւրոպա վասն լուսոյն զոր երկք այնքանիք պատմականք ի լոյս ընծայեալք եւ բազում անգամ թարգմանեալք ի նոցունց՝ սփռեցին ի վերայ վաղնջուց իրաց արեւելեան ժողովրդոց:

Իսկ դժուարին է ըստ արժանի յարգել զսպասն զոր մատուցին կրկին Միաբանութիւնք Մխիթարայ դպրութեան մերում եւ լուսաւորութեան մտաց առ մեզ: Մամուլք նոցին ճոնչեցին անդուլ առ ի լոյս բերել՝ փրկելով ի փոշւոյ եւ ի ցեցակեր փտութենէ՝ զմատենագրութիւնս նախնեաց մերոց. ինքեանք իսկ տքնաջան ուսմամբ եւ հետեւողութեամբ նոցին՝ սրբեալ յեղծուածոյ ժամանակաց զլեզու հարցն մերոց՝ անդրէն ի վեր երեւեցուցին զնա իւրով հարազատն մաքրութեամբ եւ բնագեղ շնորհքն: Եզեւ տեսանել միւսանգամ զԵզնկայ զոսկեղէնն հայկաբանութիւն, զԵղիշեայ զոճ մեղրաբան, զՇնորհալուոյ դաշնակաւորն ճակատութիւն ի գրուածս Հարցն Մատթիայ Գարագաշեանի եւ Յովսեփայ Գաթրճեանի, Բագրատունւոյ եւ Հիւրմիւզեանի, եւ այլոց, եւ Քերականութիւնք եւ Բառագիրք, պտուղք երկայն եւ համբերատար վաստակոց եւ քանքարալից մտաց, ամփոփեցին զօրէնս եւ զվթերս լեզուին: Դասականք Հելլենաց, լատինաց եւ

արդեաց հայերէնախօսք հայաբարբառք գտան. Հոմեր, Աիրգիլ, Սոփոկղ եւ Եւրիպիդ, Թուկիդիտէս եւ Տակիտոս, Պոսիւէ եւ Ֆենըլոն, Գոռնէյլ եւ Ռասին, Միլտոն եւ Պայրըն, Տանդէ եւ Լամառդին իրրեւ բնիկք եղեն մեզ եւ գանձիւք իւրեանց մերազնացելովք ճոխացուցին զմատենադարան հայրենի դպրութեանն: Սեռք քերթութեան, դիւցազնականն, քնարականն, վարդապետականն եւ հովուերգական, սեռք արձակագիր մատենագրութեան՝ պատմականն, ուսումնականն եւ ատենաբանականն, մշակեալք յինքնուրոյն երկս, արգասաւորեցին եւ զբնիկ դաշտ ազգային մատենագրութեան՝ պճնեալ զնա անուշահոտ երկիներանգ եւ բազում այն է՝ անթառամ ծաղկօք, եւ սննդարար քաղցրահամ մշտահամ պտղովք բարգաւաճ յարդարեալ: Մուսայից լսելի եղեն բարբառք խանդավառք կամ մեղամաղձիկք արտմանոյչք. վիպասան քերթուածք յանդնդոց ժամանակաց յուշս եւ դէմն հրաշալիս վերբերեալ ի կեանս ածին. Փլորա երգովք զծաղկանց ազգս եւ զդարման մեզ ուսոյց, մինչ հովիւք Որմզդանայ ի վէգ գային զնուագաց: Չամչեան, Գաթրճեան, Խնձիճեան, Սիպիլեան, Ալիշան կացին պատմաբանք՝ յուզողք ալուց անցելոյն, Քաջունիք եւ Մէնէվիչք՝ գիտունք, Աւգերեան, Աւետիքեան, Յովնանեան, Այտընեան, Տէրվիչեան, Տաշեան, Գալէմքեարեան եւ Բարսեղեան՝ բանասէրք, մատենախոյզք եւ լեզուաբնիկք, եւ այլք բազումք՝ որք դասագրովք գտարերս դպրութեանց եւ զգիտութեանց փոյթ յանձին կալան աւանդել մանկուոյն դպրոցաց:

Եղեն որք խոտան եւ անպէտ համարեցան զբազումս ի գրաւորական վաստակոց աստի հարցն Միխիթարեանց, քանզի գրեալք են ի լեզու նախնեաց, ապա եւ ոչ դիւրամատոյցք բազմաց: Այս ըստ մեզ ոչ իւիք նուազեցուցանէ զարժանաւորութիւն նոցին՝ եթէ առաւել օգտակարութեանն փնասիցէ: Միթէ եւ անպիտանք եղեն մեզ որ ի նախնեաց մերոց հասին առ մեզ մատենաբն պատուականք: Լեզու նախնեաց ոչ ամենեւին մեռեալ եւ թաղեալ համարի առ մեզ, ցորչափ կենդանի կայ յեկեղեցւոջ, ցորչափ փոքու իւիք վաստակով մարթ է մեզ ուսանել եւ ուսուցանել զայն ի դպրոցս, ցորչափ կայ մնայ նա հիմն արդի գրաւորականին եւ գանձարան ճոխութեան նորին եւ զարգացմանն, եւ հուսկ ապա՝ ցորչափ ունի նա զիւրուրոյն վեհութիւն եւ զսեփա-

կան գեղեցկութիւն, ասասցուք եւ զբանաւորական կարգ եւ յօրինուած, որովք մնասցէ նա անհաւատարելի եւ յաչս ճաշակագիտաց՝ աղբիւր առանձին իմն վայելից մտաց եւ հոգւոյ: Թող եւ զայն զի ի ժամանակին յորում ի լոյս ածան երկքդ այդոքիկ՝ լեզու գրաբար ի պատուի էր յոյժ, աշխարհիկն կարի ռամկօրէն հնչէր եւ չէր ատակ զբազմագոյն երանգս մտածութեան եւ զգացման ի յայտ բերել, եւ զսէր գրաբարին առաւել եւս արծարծելով նիւթոցն եւ իմաստից գեղեցկութեամբ՝ նպաստ մեծ եղին ի մաքրութիւն եւ ի զարգացումն նորոյ լեզուին, եւ նովին գեղեցկութեամբ լիցին ցանգ ցանկալի ընտրելոց եւ օճան պատուական՝ գոնեայ ի բարձրագոյն դպրոցս՝ յուսումն եւ ի հրահանգս հայկաբանութեան:

Բայց ո՞չ ապաքէն Մխիթարեան ոմն էր եւ նա որ զիրաւունս աշխարհաբարին հաստատեաց եւ իրաւարար եկաց վիճին ընդ գրաբարեանս եւ ընդ աշխարհաբարեանս՝ հնոյն եւ նորոյն տալով զիւրաքանչիւր զպատշաճն. — զԱյտրեանն կամիմ ասել որ զհոյակապ մատեանն գրեաց, զ«Քննական քերականութիւն աշխարհաբար լեզուի», եւ Բազմալիւսն Վենետկոյ՝ յամեն 1843, ապա Եւրոպայն վիեննացւոց եւ այժմ հանդէսն Ամսօրեայ՝ գործ նոցին վարդապետաց, եղեն գործի ի ձեռս նոցուն առ ի ծաւալելոյ յազգին՝ աշխարհիկ բարբառով՝ ծանօթութիւնս պիտանիս եւ մշակելոյ զայլ եւ այլ ճիւղս դպրութեան, պատմութեան, գիտութեան եւ լեզուաբանութեան: Հաւաքածոյք ստուարք սոցին հանդիսից գանձարանք են այսօր մեծագինք յորս ամբարեալ կան հմտութիւն անբաւ եւ մանաւանդ հետազօտութիւնք կարեւորք զտոհմային պատմութենէ, զհայկական լեզուէն, զերեւելի երեւելի տեղեաց եւ հաստատութեանց, զմնացորդաց հնութեան, եւ զայլոց բազմաց:

Արթութիւն մանկտւոյ եւ պատանեաց ազգիս եղեւ ընդ միշտ մին ի գործոց զորոց զհետ կրթեցան Մխիթարեանք, եւ Վենետկեանք եւ Վիեննականք: Ի դպրոցաց նոցա գային արտաքս նոքա որք առյապա կոչելոցն էին Մամուրեան, Մելգոն Խան, Զուռդ Ասպետ, Կարապետ Կարաբաշ, Փորթուգալ փաշա, Սազըզեան, Աղաբեգեան, Պէշխըթաշեան, Յակոբ Ոսկան, Հէքիմեան, Թէրզեան, Մկրտիչ Աճէմեան, Ապտուլլահ, Արամեան, Սարուխանեան-

Տիրեան, այլովքն հանդերձ, — արգասաւորութիւն փայլուն, որ սատար մեծ եղեւ լուսաւորութեան Ազգին, սփռելով ի նմա պատանիս քաջութունս, լեզուագէտս, հրահանգեալս ի գիտութիւնս եւ ի դպրութիւնս, ընդ տոհմային դաստիարակութեանն միալուծ բերելով զեւրոպականն կրթութիւն, յորոց ոմանք պաշտօնեայք եղին Պետութեան, այլք՝ ուսուցիչք եւ գրագէտք, կամ արուեստագէտք, այլք ի ճարտարութիւնս պարապեցին կամ ի վաճառականութիւն, եւ ամենեքին նօթձեցին օգուտ եւ պարծանս միանգամայն տոհմին իւրեանց եւ Երկրին:

Այլ առ ինչ առատանալ ի բան եւ յերկարել ի խօսս. զազմարդիւն գործունէութիւն կրկին Մխիթարեան Միաբանութեանց ակնբերեւ տեսանի եւ չունի ինչ պէտս հաստատութեան: Մեծ է եւ անժխտելի բաժին վաստակոյ նոցին ի մտաւոր յառաջադիմութեան Ազգին: Չիք երկբայել, զի այդ իսկ եղեւ գերագոյն իղձ մեծին Մխիթարայ, իղձ որ քաջալերեաց զնա դիմագրաւել ի վտանգս եւ առ ոտն կոխել զխոչ եւ զխուժ, որ վարեաց զնա թափառական ընդ ծով եւ ընդ ցամաք, եւ որ ետ նմա յօժարել եւ զքաղցրագոյն զօղս սրտին հատանել՝ յուսով գտանելոյ ապահովագոյն հնարս ցուցանելոյ զսէր իւր առ իւրսն՝ յորժամ յաջողիցի նմա լուցանել ճրագ մշտավառ ի տան իւրում ի լուսաւորութիւն իւրոցն համայնից: Եւ յաջողեցաւ նմա. աննշան կղզեակ ի Հանդրին ալիս կանգնեցաւ փարոս լուսասփիւռ, փոխեցաւ ի լեառն Մուսայից, ի տաճար դպրութեանց, ի ճեմարան գիտնոց, եւ յետ սակաւ ժամանակի ի նմին աղբերէ լուսոյ այլ իմն զամպար լուցաւ մեծափայլ ի Թրիեստ նախ, ապա ի Վիեննա, եւ դպրոցք որք յերկոցունց Ուխտից բացան յԵւրոպ եւ յԱսիա՝ եղին կայծակունք նորանորք հատեալք ի մայր հնոցաց աստի: Եւ ո՛ր ոչ ազգեաց գործ մեծագործ Մխիթարայ, սերմն բարի բազմապատիկ պտղաբերէ, եւ ամենայն հոգի ի լուսաբուղն արդեանց աշակերտացն մեծի Սեբաստացւոյն պարարեալ՝ պարարէ եւ ինքն ըստ իւրում կարգի այլս բազումս հիւթով մտաւոր եւ բարոյական կենաց, եւ շէնն յետին անանուն հաղորդ իմացական վայելից առնի եւ անուղղակի երախտաւորեալ գտանի յառաջնոց՝ մատակարարողաց անտի: Կարեմ՝ ասել, զոր սրինակ, թէ Պէրպէրեան վարժարան չունի ինչ բնաւ աղերս ընդ հաստատութեան Մխի-

Թարայ եւ չպարտի բնաւ ինչ նմա, մինչ հիմնադիրնորա աշակերտ լեալ է Մատթեոս Գարագաշեանի, հոյակապ հայերէնագիտին եւ նախկին Վիեննական Մխիթարեանին, որպէս յայտ է: Այսպէս յընդհանուրս սփռեալ են արդիւնք Մխիթարայ եւ Մխիթարեանց, յերկերիւր ամաց հետէ զի հիմունս արկ Աբբայն զիւրոյ բազմաբեղուն գործոյն:

Ապա յիշատակ նորա օրհնութեամբ լինցի յաւէտ, եւ Միաբանութիւնք որդւոց իւրոց տեւեսցեն բաւեսցեն յամայր ամս, յար անեղծ յինքեանս բերելով զտոհմասէր, զուսատենչ եւ զանձնանուէր ոգի Հիմնադրին իւրեանց, նախանձաւորք փառաց եւ արդեանց մեծարդիւն նախորդաց իւրեանց, եւ ցանկացողք՝ զուգաբայլ ընդ ժամանակին՝ չդադարել բնաւ օգտամատոյց եւ օճան հզօր լինել ի բարգաւաճումն մտաց եւ ի ճշմարիտ զարգացումն տոհմակցաց իւրեանց, յարաճուն արդիւնաւորութեամբ տածելով եւ աճեցուցանելով ի սրտի Ազգին զյարգանս, զսէր, զհիացումն եւ զերախտագիտութիւն առ վեհաշուք անունն Մխիթարեան:

(Հանդէս Ամսօրեայ 1901, Թիւ 9)

15. 1902 ՓԵՏՐՈՒՆՈՐ 2

(Յօրեւեանի իրաւունք)

Այս թուականը, որ ահա՛ երկու ամիսէ աւելի է որ անցաւ, Հայոց, նա մանաւանդ Տաճկահայոց, լուսաւորութեան տեսակէտով, ուշադրութեան արժանի թուական մ'է: Ա՛րժէր որ անդրադառնայինք անոր վրայ ու խորհէինք թէ պարտք մը չի՞ հարկադրեր ան մեր վրայ: Ազգային թերթերն ընդհանրապէս եւ մի քանի մասնաւոր պրիշներ չթողուցին զայն անցնիլ անյիշատակ, ազնիւ զգացմամբ ողջունեցին զայն ու շնորհաւորութիւններ մատուցին առ որ անկ է. բայց այսչափն անշուշտ չէր բաւեր, եւ ազգին գրական խիղճը պէտք է որ զգայ թէ աւելի բան մ'ընելու պարտաւորութիւնը կայ: Բարեբախտաբար դեռ շատ հեռացած չենք այդ թուականէն — ու ամէն ատեն ժամանակ է իր պարտքը կատարելու —, եւ ճշմարիտ գոհունակութեամբ մը կարդացինք

Պատկ. Քաղ. Ժողովոյ որոշումը, որով այս մասին ազգային գրագետներու կողմէ ներկայացեալ յօւելինական առաջարկ մ'ընդու-նելի դատեր ու պարտուպատշաճն ի գործ դնելու արտօներ է զիրենք:

Ընթերցողք ի հարկէ հասկցան թէ խնդիրը, Մասիսի սկզբնաւորութեան թուականին (1852 Փետր. 2) յիանաճելին առթիւ, առ պատուարժան կարապետ էֆ. Իւթիւճեան հրապարակային յարգանաց ու գնահատման ցոյցի մը վրայ է:

Ու ասոր՝ Իւթիւճեանի իրաւունքն ու արժանաւորութիւնը ակնբերել են:

Ոչ միայն իր հիմնած թերթը մինչեւ այսօր իր գոյութիւնը կը շարունակէ իբրեւ ազգային գրականութեան ու լուսաւորութեան գնահատելի գործիներէն մին, այլ եւ հիմնադիրն անձամբ, իբրեւ խմբագրապետ, վարած է զայն ամբողջ 32 տարիներ: Իր հիմնարկութեան թուականներուն, ուր ժողովրդեան ընթերցասիրութիւնը այնքան անձուկ սահմաններու մէջ կը փակուէր, որովհետեւ նոյն իսկ այնքան քիչ էր կարգալ գիտցողներու թիւը, կ'ըմբռնուի թէ որքան դժուարին գործ էր լրագրի մը հրատարակութիւնը, թէ ըլլար շաբաթաթերթ մը: Պատրիարքարանը պարտաւորած էր իր յատուկ պաշտպանութեան տակ առնուլ նաեւ Մասիսի նախընթաց եղող ազգային շաբաթաթերթը, որ, թէեւ ի սկզբան Տէրոյնցի ու Մ. Աղաթոնի ընկերովի խմբագրութեան յանձնուած, լայն դժուարութեանց առջեւ՝ մերթ մէկէն մերթ միւսէն կը լքուէր, եւ վերջապէս, 1846 յուլիսէն մինչեւ 1852 յունվար, իբր հինգուկէս տարուան կեանք մը վարելէ յետոյ, կ'անհետանար ասպարէզէն, Գերագոյն ժողովոյ դրամական նպաստը պակսելով վերջին խմբագրին, Տէրոյնցի: Նոյնը պատահած էր Մոյսեան Աղաւնիի, որ, 1852 Փետր. 28ին սկսած Գ. Մարկոսեանի եւ Ս. Ապրոյի գործակցութեամբ եւ երեք տարիներու տեւողութեան մը խոստամամբ, երկրորդ տարին իսկ չը լրացուցած՝ կը դադրէր նիւթական դժուարութիւններէ ընկճուած: Իւթիւճեան՝ ազգայնոց յորդորանօքն իրեն յանձնուած, գործը իր հաշուոյն անվճատ յարատեւութեամբ կը շարունակէ մինչեւ 1884: Այդ ժամանակամիջոցին մէջ, ինչպէս յայտնի է՝ բազմաթիւ թերթեր ի լոյս եկած ու աւելի կամ նուազ վաղան-

ցիկ կեանքէ մը յետոյ անպայտացած են, եւ թէեւ մի քանի թերթեր, ճամբուն մէջ տարիներ յետոյ իրեն ընկերացած, քալած եւ հասած են մինչեւ ցայսօր, բայց, իբրեւ լրագիր, Մասիս երկարատեն նախընտրուած թերթը եղած է, եւ 1884է ետքն ալ, հանդէսի վերածուած եւ ուրիշ ձեռքերէ ուղղակի առաջնորդուած, իր հրատարակողը պահած է միշտ ու շարունակած սիրելի ընել իր անունը: Մասիսի խմբագրապետը, իր հմտութեամբ, եւրոպականով ամրացած ու զարգացած կրթութեամբ, պահպանողական՝ այլ աննախապաշար յառաջդիմասէր ոգիով, վստահութիւն ներշնչած է ազգին եւ կրցած է իր թերթը օգտակար գործի մը, կարեւոր սատար մ'ընծայել հայ հասարակութեան զարգացման: Պարբերական թերթը, լրագիրը մանաւանդ, հասարակական կեանքին մէջ պիտանի գործարան մ'է, որ իր գոյութեամբն իսկ շատ անգամ, ու անկախապէս խմբագրապետին ուղղակի ներգործութենէն, կենսական դեր մը կը կատարէ: Հասարակութեան զանազան մասերը իրարու հետ հաղորդակցութեան մէջ կը դնէ, կապ մը կը լինի մտքերու մէջ, ժողովրդին ամենօրեայ կեանքը կը հայելիացնէ իր մէջ, հեռուոր կորսուած ձայներ կ'արձագանգէ իր մէջ, մարդկութեան ընդհանուր կեանքն իսկ ցոլացնելով՝ ցեղին աւելի պայծառօրէն գիտակցիլ կու տայ իր համեմատական վիճակին, եւ մտածմանց, գիւտերու, յառաջդիմութեանց հոսանքին տեղեակ ընելով իր ընթերցողները՝ բարեշքման միջոց ու գրգիռ կը հանդիսանայ: Եւ յետոյ, թերթ մը միշտ աւելի կամ նուազ կենդրոնավայր մ'է մտաւոր ոյժերու, գրական կարողութիւններու, որք, միմիայն օգտակար ըլլալու փափաքով ալ, կրնան հոն ի հանդէս բերել իրենց տաղանդները, իբրեւ հասարակաց դասաբեմ մը ուր փոխ առ փոխ կ'երեւին ձեռնհաս խօսող — գրողներ՝ հանրային մտաց լուսաւորութեան աջակցելու:

Այսպիսի կենսական Օռկան մը, գործի մը եղած է Մասիս իր գոյութեան հետեւանքովն, ու այդ գոյութիւնը այնչափ ընդերկար պահպանողն, լրագրին խաղացած դերին օգտակարութիւնը անընդհատ նուիրելով իր ազգին, անժխտելի ծառայութիւն մը մատուցած է անոր բնականաբար: Այսօր անոր բազմամեայ հաւաքածոյն թանկագին յիշատակարան մ'է, ուր 19^{րդ} դարու վերջին

կիսուն մէջ մեր տոհմային ընկերական ու մտաւորական կենաց յաջորդական երեւոյթները դրոշմուած են, որուն, իբրեւ հարուստ աղբիւրի մը, պիտի կրնայ դիմել միշտ զանոնք պատմագրող մը՝ ատաղձ ու վաւերանիւթ փնտռելու համար հոն, եւ ուր նաեւ այնքան հայ մաքեր, անհետացած դէմքեր իրենցմէ բան մ'են ձգեր, մերթ հայ գրականութեան համար գուրգուրալի նշխարներ: Բայց չկարծուի թէ Իւթիւճեան էֆ.ի իւր թերթին մէջ ունեցած հեղինակութեան ու առաջնորդող դերին մեծութիւնը կ'ուզենք պակսեցնել՝ ինքնին լրագրական հրատարակութեան կարեւորութիւնը եւ իւր սրամադրութեան տակ ունեցած միջոցներուն առաւելութիւնները ցոյց տալով: Լրագրապետ մը լոկ տնտեսական վարիչ մը չէ կամ պէտք չէ որ լինի իր թերթին, լոկ հաւաքող ու արձանագրող մը լուրերու եւ նորութեանց, ցիր ցան շառաւիղները ժողվող կեդրոն մը, չորս կողմի լոյսերը անդրադարձնող ցոլացիկ մակերեւոյթ մը: Լրագիրը պէտք է որ ոգի մը եւ գոյն մ'ունենայ, որ ոչ միայն խմբագրին կարծիքներովն արտայայտուի, այլ եւ այն ընտրութեամբ զոր նա կ'ընէ տրամադրելի արտաքին գրական ուժերու մէջ, եթէ ոչ՝ աններդաշնակ մարմին մը, անկերպարան խառնակոյտ մը կը դառնայ, միութեան ու նկարագրին տուած բարձր նշանակութենէն ու ներգործութենէն զուրկ: Ընթերցող հասարակութիւնը օրուան խնդիրներուն վրայ կարծիք մը, խորհուրդ մը կ'սպասէ անկէ, եւ որոշ ուղղութեան մը համապատասխանող յօդուածներ: Իւթիւճեան իր սկզբունքներով յատուկ ուղղութիւն մը տուած էր իր թերթին եւ անոնցմով ու իր գրական ինքնայատուկ ճաշակով գիտէր ընտրել իր աշխատակիցները:

Լուսամիտ մը եղած է ան, տգէտ ու մոլեռանդ կղերականաց պինդ ատեցող, թեթեւօղիկներու եւ իմաստակներու սուր երգիծանող, եւ հայ եկեղեցւոյ աւանդութեանց նախանձախնդիր պաշտպան մը: Տէրոյնցներու, Շահնազարեան վարդապետը դատափետողներուն, ամիրայական եսութիւններուն կողմը չէ եղած. ընդհակառակն, երբ Տէրոյնց, Շահնազարեանի դէմ իր հեռոտ ու մոլեխանձ վարմունքով, կը կորսցնէր Գերագոյն ժողովին համարումը, Իւթիւճեան կ'ընտրուէր իբրեւ հակադրող ոգի մը եւ անոր կը յանձնուէր ազգային թերթին խմբագրութիւնը, հան-

րային կարծեաց թարգման ու առաջնորդ ըլլալու պատուարեր պաշտօնը: Իրրեւ Պատրիարքարանի ժողովներու անդամ եւ իրրեւ խմբագիր, անվճատ ջատագովք եղած է օրինաւորութեան, եւ ինք կամ իր թերթն եթէ ո՛ր եւ է խումբի մը կողմնակալութեամբ ամբաստանուած է՝ այն ալ Սերվիլէններու, Օտեաններու, Ռուսիներեաններու, Ալանեաններու կողմը եղած է, որք, ինչպէս յայտնի է լուրջ ու խոհեմ յառաջդիմականութեան դասը ներկայացուցած են եւ որոց գործակից բազմած է յաճախ օրինադրական աշխատութեանց համար: Իւթիւճեանի նկարագրին ու գրչին ծանօթ մէկ գիծն է իր խայթիչ երգիծանքն, բայց իր ամենէն խարիչ վերագրիները, « շնորհունակ » ներու տեսակէն, ու « Թափառական Հրեայ » էն փոխ առնուած մակդիրները, « Ռոսէն » ներու սեռէն, անարժան հովիւներու ու կեղծաւոր շահախնդիր պաշտօնեայներու համար եղած են:

Աշխատակիցներու ընտրութեան մէջ իր դժուարահաճութիւնը յայտնի իրողութիւն մ'է. Մասիս առաջին եկողին առջեւ բաց դաշտ մը չէր. մուտքի ու քաղաքացիութեան իրաւունքը դիւրին չէր ստանալ, ու դուն ուրեք համբակներուն, « առ ի քաջալերութիւն » նուաստացուցիչ բանաձեւին անցագրով, կը հանդիպէր մուտ գտնել անոր մէջ: Իւթիւճեանի առաջարկուած յօդուածը նիւթի եւ լեզուի կրկնակի արժանիքը պարտէր ունենալ, նիւթը լուրջ, լեզուն մաքուր: Անոր համար՝ յայտնի կամ անստորագիր անոր մէջ երեւցող ձեռնհաս, հասուն գրիչներէն դուրս՝ երիտասարդներէն սովորաբար այդ պատիւը վայելողները, ճշմարիտ աշխատակցի դեր կատարողներն եղած են Պ. Պառնասեանի, Մ. Նորիկեանի, ու Ետքէն Ե. Տէմիրճիպաշեանի ու Բ. Քէչեանի նման օժտուած ու հռչակուած գրագէտներ: Գրելու տենչով բռնուած ընտրահաս պատանին զող ի դող կը մատչէր Իւթիւճեան էֆ.ի գրասեղանին՝ անոր դատաստանին ենթարկելու իր գրուածքը, արձակ կամ ոտանաւոր, աշխարհաբար կամ գրաբար: Հայ Պուլաօն, անաչառ խստադատ քննութեան բովէ մը կ'անցունէր գրութիւնը, ու վճիռը յաճախ մերժողական կ'ըլլար: « Տղան, դուն դեռ վարժուելու պէտք ունիս. կարգած միշտ ու գրէ առ ի փորձ միայն, դիմագրելով ինքզինք շուտով տպուած տեսնելու մարմաջին », Այս վարմունքը, թէեւ յառաջին տեսիլ կարծր

ու անխրախուսիչ, մեծապէս նպաստած է անշուշտ ընդունակներու իրական զարգացման, մինչդեռ՝ ընդհանրապէս խօսելով՝ խակ գրողներու այսօրուան թերթերուն մէջ գտած քիչ մը չափազանցօրէն հեշտ ընդունելութիւնը ի հարկէ շատ աւելի փաստակար է անոնց յառաջդիմութեան, թող հասարակութեան ճաշակին խանգարումն, դպրոցականութեան կրած վատթար ազդեցութիւնը, տհաս յօդուածներէն յառաջ եկած մտաւոր փնտրը:

Հոս տեղն է խօսելու այն ազդեցութեան բաժնին վրայ զոր Իւթիւճեան էֆ., իբրեւ հրապարակագիր ու թարգմանիչ, ունեցած է մեր արդի գրաւորին մշակման ու զարգացման գործին մէջ: Յառաջ չպիտի երթանք մինչեւ ըսել թէ հայ լեզուն բացարձակապէս պարտական է Իւթիւճեանի, չզատելով հին եւ նոր հայերէններուն սահմանները, եւ ոչ ալ թէ նա՝ Արդի լեզուին հեղինակը կամ հայրն է՝: Որչափ եւ աշխարհաբարը յառաջդիմութիւն ստանայ, ոչ ոք պիտի համարձակի ըսել իրաւամբ որ եւ է անձի մը համար թէ անոր արդիւնքը գերազանցած է քան Սահակին ու Մեսրոպին ու անոնց գործակցաց արդիւնքը. ոչ մի դիտող պիտի կրնայ ըսել նոյնպէս թէ արդի կոկուած ու դեղեցկացած աշխարհաբարը Իւթիւճեանի գործն է միայն, մինչդեռ Մասիսի սկզբնաւորութեան ատեններուն ժամանակակից — ու երիցագոյն ալ — ուրիշ թերթեր Նոյեան Աղաւնի, Արշալոյս, Բազմավէպ, Եւրոպա, Բանասէր, Արեւելք, Արեւմուտք, եւ այլք, բաւական մաքուր աշխարհաբարով խմբագրուած են, ու Պալթազարեան, Ոսկանեան, Մամուրեան, Չիլինկիրեան, Տէտէեան, Պելիկթաշեան, ինչպէս հարք Վենետկոյ ու մանաւանդ Վիննայի, եւ ուրիշներ, միեւնոյն ժամանակամիջոցին մէջ իրրեւ հեղինակ, խմբագիր, թարգմանիչ, աշխատած են արդի հայերէնին ու անոր մատենագրութեան մշակութեան եւ լեզուին կանոնաւորման ու ճոխացման վրայ իրենց ազդեցութիւնն ունեցած: Սակայն այս սահմաններուն մէջ ալ, անհնար է ուրանալ, մեծ բաժին մը կը մնայ Իւթիւճեանի, որ, հայերէնին տիրացած ու քաջ գաղղիագէտ, եւ իր պաշտօնով զարգացեալ Եւրոպայի իրերն ու գաղափարներն իրեններուն ներկայացնելու պարտաւոր, եւ մանաւանդ սկիզբէն վիպական թարգմանութեանց շարք մը հայա-

1 Տես «Բազմավէպ», 1901, Փետրվար:

ցնելու ձեռնարկած, աշխարհաբարը գիտակցօրէն եւ ձեռնհասօրէն զարգացնելու մեծ առիթ ու հարկ ու դիւրութիւն, հետեւապէս եւ արդիւնք միանգամայն ունեցած է: Մեր տղայութեան ատենէն Մասիսի լեզուն զլասիք աշխարհաբարի համբաւ մը կը վայելէր արդէն. անոր սիւնակներուն ու թերթօններուն մէջ՝ իր նախաձեռնութեամբ՝ շատ գրաբար բառեր ու ասացուածներ ընտանի դարձած, շատ մը նորակերտ բառեր՝ մանաւանդ քաղաքական ու վարչական լեզուի վերաբերեալ՝ պատշաճապէս բարդուած ու ածանցուած, եւ շատ մը Եւրոպական իմաստներ վայելուչ ճաշակաւ հայացած են: Մեծագոյն ծառայութիւն մը մանաւանդ իր կողմէ այն եղած է որ. լրագիր ու վէպ գրականութեան ամենէն ժողովրդական ձեւերն ըլլալով, Իւթիւճեան կրցած է ուղղապէս ազդել ժողովրդեան լեզուին վրայ եւ, ընթերցասիրութիւնը գրգռելով ու մաքուր լեզու մը տալով իր ընթերցողներուն, մաքուր ու մաքրուած աշխարհաբարին ժողովրդեան բերնին մէջ ընդհանրացման հզօրապէս սատարած է:

Իր թարգմանած վէպերուն օգուտը, առանձին դիտելով, անշուշտ չենք սահմանափակեր լեզուին տեսակէտին մէջ: Վէպը երեւակայութեան, զգայնութեան ու խորհրդածութեան համար անհամար հրապոյր ունեցող սեռ մ'է. իրականին ու իդէալին, մարդուն ու ընկերութեան վրայ լայն, անծանօթ ու շահագրգռող հորիզոններ կը բանայ, կեանքին ու ճակատագրին վրայ մօբին հայեացքը կ'ընդարձակէ, ու թէ եւ կեղծեալ դէպքերու ու անձանց աշխարհի մը մէջ կը փոխադրէ ընթերցողը՝ սակայն կարծես այնու աւելի պայծառ գիտակցութիւն ու տեսիլ մը կուտայ իրականութեան, գիտութեան պէս ան ալ դիպաց բազմաթուութիւնը պարզելով ու տիպերու, միութեան վերածելով, եւ մերթ իդէալ պատկերներով առիթ տալով դատելու ներկայն ու լուսագոյնին ըմբռնումն ու բաղձանքը զօրացնելու մարդուն մէջ, — ասիկա անշուշտ այնպիսի վէպերու համար որոց մէջ հեղինակը հիւանդագին հետաքրքրութեամբ մը արտականոն երեւոյթները չէ որ ուսումնասիրած է ու ապառողջ հայեցուածքով բացառութիւնքը — մանաւանդ այլանդակն ու հրէշայինը — չէ որ իբրեւ ընդհանուր տիպ ներկայացուցած է: Այսպէս Իւթիւճեան Էֆ.էն թարգմանուած վէպերու հատընտիր հաւաքածօյն շայեկան ճա-

րակ մը մատակարարած է հայ ընթերցողներուն, որոց մեծագոյն մասն, ինչպէս ուրիշ ազգաց մէջ ալ, չէ կարող ուղղակի վայելել օտարալեզու մատենագրութեան մ'արտադրութիւնները, — թողունք որ ընտիր՝ յաջողուած թարգմանութիւններ, նոյն իսկ օտար լեզուին հմուտ ազգայնոյն համար ալ, ընթերցանութեան ոչ նուազ շայեկան նիւթ են, եւ ընդհանրապէս պատուական ստացումներ կրնան համարուիլ տոհմային գրականութեան համար: Ա'երեւակայեմ որ արժանայարգ թարգմանիչը երախտագէտներ պարտի ունենալ մեր ժողովրդեան ընթերցասէր դասակարգին մէջ, որուն այնքան յոյզի, վերացման ու մտածման հաճելի ու օգտակար ժամեր անցնել տուած է, նոյն իսկ դրական ծանօթութեանց տեսակետով, քանի որ իր թարգմանած վէպերուն մէջ կարեւոր տեղ մը կը բռնեն ծիւղ վէպիները որք, ինչպէս ծանօթ է, հրապուրիչ պատմութեան ձեւի մը տակ գիտական ճշմարտութիւններ ժողովրդականացնել նպատակ ունին իրենց:

Ահա՛, իբրեւ խմբագրապետ եւ թարգմանիչ, Վարապետ Իւթիւճեանի գրական երկարատեւ արդիւնալի գործունէութեան մէկ համառօտ պատկերը, — անցեալ մը որ պատուոյ պսակով մը կը պատէ այսօր իւր սպիտակ մազերը: Բայց կ'զգամ թէ այս պատկերը, ինքնին ճոխ, դեռ պակասներ ունի, վասն զի Իւթիւճեան չէ դադրած ազգային հանրային պաշտօններ վարելէ, իւր խմբագրութենէն յառաջ ուսուցիչ եղած է, Ուսումնական Խորհուրդներու անդամակցած ու ատենապետած է, եւ կրթական ընդհանուր տեսչի պաշտօնը վարած է երկար ատեն: Այս վերջին պաշտօնին համար պարսաւադէտներ ունեցած է որք ապարդիւն հռչակելով զայն՝ կը պահանջէին որ ուրիշ մը դրուէր իր տեղը: Իմ ատենապետութեան օրով այսպիսեաց կը պատասխանէի ես, «Գտէք ու առաջարկեցէք ինձ լաւագոյն մը, որուն ներկայութիւնը վարժարանաց մէջ առաւել պատկառանք ազդէ ու խօսքը աւելի կշիռ ունենայ, ու այս օրէն իր հրաժարականը ուզենք»: Կը խորհէին ու չէին գտներ, եւ կ'անցնէինք օրակարգին: Անժխտելի է որ Իւթիւճեան էֆ. մեր վարժարանաց Ուսումնական Յայտագրին պարունակած լեզուաց եւ ուսմանց մէկ քանիներուն վրայ հեղինակաւոր մասնագիտութիւն ունի, եւ մայրենի լեզուին համար, ի մասնաւորի, կարելի է կրկնել Գր. Օտեանի խօսքը, «Դեռ

մեզմէ շատերուն կարող է ան հայերէնի դասեր աւանդել ո՛ր Աւելորդ է ըսել թէ ուսուցչաց եւ ուսանողաց բարոյականին համար խստապահանջ հսկող մ'էր ան, եւ եթէ իր պաշտօնին պարտքերը կատարելու մէջ գործնականը թերի կը մնար երբեմն իր պարտաճանաչութեան զգացման քով, յանցանքը իր ծերութեանն էր ապահովապէս:

Իր ստեղծած թերթը ո՛չ միայն մնաց միշտ կարող ձեռքերու մէջ, եռանդնոտ գրական գործիչներու — ինչպէս տակաւին այսօր ալ — ձեռնհաս առաջնորդութեան տակ, փայլուն գործիք մը արուեստի ու գրականութեան մշակման, իմացական՝ բարոյական ու կրթական յառաջդիմութեան, այլ ինքն իսկ, անոր բախտին ու պատուոյն միշտ նախանձախնդիր ու մօտէն հսկող անոր վրայ, յաճախակի անձամբ մասնակցեցաւ անոր խմբագրութեան, իմացական ու գրական աշխուժի վերկենցաղում մ'ի յայտ բերելով կարծես, եւ Գ. Զօհրապի, Տ. Կամարականի, Տ. Արփիարեանի եւ այլոց այնքան գեղեցիկ ու առոյգ արտագրութեանց քով հրապարակագրութեան ալեւոր նահապետին «Կենսագրական ու պատմական նօթերը», իրենց յատուկ փայլն ունեցան ու մասնաւոր հաճոյքով մը ճաշակուեցան:

Արժանի է ապա ու երեսփոխագիտութեան պարտք մը ամենուս համար որ իւթիւճեանի լրագրական ու գրական գործունէութեան յիսնամեկի լրումը բերող 1902 տարին չթողունք անցնիլ՝ առանց տանելու մեր մեծարանքի ու գնահատութեան հանդիսաւոր ցոյցը՝ առ բազմարդիւնն Կարապետ Էֆէնտի իւթիւճեան:

(Մասիս, 1902, Թիւ 15)

16. Տ. Տ. ՄԵԼՔԻՍԵՅԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՒՐԱՅԵԱՆ

Մեր վերնագիրը տեսնելով թերեւս ոմանք խորհին թէ շատ ուշ ենք մնացեր խօսելու անձի մը վրայ որ, ահա՛ չորս ամիսներէ ի վեր արդէն ծածկուած հողոյն տակ, անցելոյն ալ եւս կը վերաբերի: Բայց մենք կ'ըսենք թէ կան անձեր որք կենդանութեան մէջ ըլլալով հանդերձ չեն արժանի խօսքի ու գրի առարկայ ըլլալու, մինչդեռ դարերէ հետէ ապրելէ դա-

դրողներ ամեն օր կրնան նիւթ ընծայել մարդոց ուսումնասիրութեանց ու խորհրդածութեանց, վասնզի ապրած են կեանք մը որ բեղմնաւոր եղած է անմոռանալի վաստակներով, եւ վասնզի իրենց ապրած կեանքէն միշտ կը բղխի կեանք մը մաքի եւ հոգւոյ որ կարող է յար բարձր խոհեր եւ զգացումներ ներշնչել ողջերուն եւ իրենց յիշատակներովն ալ բարիք գործել՝ սիրտ եւ իմացակա- նութիւն պարարելով:

Ձմիւռնիոյ հանգուցեալ Առաջնորդը այսպիսեաց կարգէն է: Մինչդեռ Յոնիական քաղաքին մէջ կատարուած մեծերական հանդէսներով ամեն պատիւ վերջացած կը համարուէր իր յիշատակին համար ու Ամեն Ս. Պատրիարք շօր առաջարկը՝ Կ. Պոլսոյ եկեղեցեաց մէջ յատուկ յիշատակութեան տխրահանդէսի մը կատարման նկատմամբ՝ ընդունելութեան չէր արժանանար, ահա ի Կովկաս կ'սկսէին անվերջ հոգեհանգիստներ, պատարագներ ու դամբանական բեմբախօսութիւններ, պատուելու համար Եկեղեցւոյ փառաւոր զաւակին անմահ յիշատակը, ու, կարծես, ամբնելու համար մեր դժուարահաճ Սրբազնութիւնները: Վստահ ըլլանք, Ապագայն, ինչպէս միշտ, քան զմեզ արդարագատ պիտի լինի, եւ մինչ մենք կարծեցինք, մի քանի անձնական յուշերով ու կտակային տրամադրութեանց քննութեամբք, մեր վճիռը տուած ըլլաւ, ապագայ քննիչներ շատ ու շատ բան պիտի գտնեն խօսելու եւ դուռատելու անոր մասին, ճշդելով տեղը — որ շատ բարձր պէտք է լինի — զոր իրաւունք ունի գրաւելու ժողովրդեան յիշողութեան մէջ իբրեւ Հայ եկեղեցական:

Ի հարկէ, սովորական դէմք մը չէր այն որ երեւցաւ Հայ Եկեղեցականութեան հորիզոնին վրայ Մելքիսեդեկ Մուրատեանց անունին տակ եւ անհետացաւ մահաստուեր ամպոց կոյտին ետեւ: Քննադատներ ունիք որք գովեստի մէջ նուաստանալ կը կարծեն, ու կը խորհին թէ այնքան մեծ է քննադատին փառքը որքան ի ստոր կ'իջեցնէ իւր քննութեան առարկան: Այսպէս ընողներ եղան Մելքիսեդեկ Մուրատեանցի մասին: Խոնարհ ու պարկեշտ ոգւոյն մէջ հպարտութեան ամբարտակ մը տեսան, եւ կեղակարծ կամ ստոյգ կտակի մը ընտանեասիրական տրամադրութեանց մէջ եկեղեցւոյ ու տոհմի շահերուն անտարբեր եսական ոգի մը նշմարեցին: Եւ կան որ հաճոյք մը կ'զգան արժանիքը

ուրացուած տեսնելով, իբր այն թէ կարկառուն դէմքեր հարթէին ուրիշները, եւ կամ թէ ընդհանուր տափակութիւն մը հարկաւոր ըլլար ինքնասէր ետերու արտակարկաւման համար:

Յայտնապէս անիրաւեցան ոմանք ամենապայծառ չքնաղ արժանաւորութեան մը հանդէպ: Անպատճառ Ազգին դրամական մեծ գումար մը կտակելու պարտականութիւնը, իբր պայման մեծ եկեղեցական մ'եղած ըլլալու, ազգու խօսքերով մերժեցին արդէն ուրիշներ: Մերժելի է նաեւ այն մի ուրիշ կարծեցեալ պայմանն ալ որու համեմատ անպատճառ հարկ ըլլայ եկեղեցականին տեղէ տեղ, գաւառէ գաւառ թափառական ընթացած ըլլալ՝ արժանի ըլլալու համար Ազգին երախտագիտութեան: Ազգին ու եկեղեցւոյն ծառայելու այլազան եղանակներ կան, որք կը փոփոխին անձնական կարողութեանց ու տրամագրութեանց համեմատ: Մին կը ծառայէ մշտաշարժ գործունէութեամբ, մի ուրիշն աթոռանիստ ետեղակալ աշխատութեամբ, երբ, զոր օրինակ, կը հեղինակէ գրուածներ որք պիտի կրնան յաւէտ ներգործել սրտերու եւ մտքերու վրայ: Ինչո՞ւ պահաջել որ ամէնքն նոյն տարազն ունեցած ըլլան օգտաւէտ գործունէութեան, եւ ինչո՞ւ չկարենանք կամ չուզենք իւրաքանչիւր անհատի գործն ու արժանիքը դատել ըստ ինքեան, իրեն յատուկ ձեւին մէջ:

Չքնաղ արժանիք մ'է ինքնին, երբ մէկը գիւղի մը մէջ աշխարհ կու գայ, քաղաքի մը Ուսումնարանին մէջ նշանակելի փայլուն աշակերտ կը դառնայ, իր վրայ կը հրաւիրէ Աշտարակեցւոյ նման մեծանուն կաթողիկոսի մը համակրանքն, տակաւին յոյժ անտիական՝ կը հրաւիրուի անկէ յատենի եկեղեցւոյ քարոզելու անոր ներկայութեան, ուսուցիչ եւ տեսուչ կը դառնայ այն վարժարանին մէջ ուր ուսաւ իբրեւ պանդուխտ ուսանող, յետոյ իր միջավայրը կը փոխէ հանրօգուտ գործունէութեան յարմարագոյն դաշտի մ'ի խնդիր, կը վարէ Ս. Երուսաղեմայ Ճառանգաւորաց դպրոցը որ իր ճգանց ու քրտնաջան տքնութեանց շնորհիւ կ'արտագրէ իրեն ամէնէն շատ պատիւ բերող պատուներէն մի քանին, կը մատենագրէ գրական-կրօնական ընտիր երկեր, կարեւոր գաւառի առաջնորդ ընտրուած՝ տասնեակ տարիներով կը վարէ անոր եկեղեցական ու կրթական գործերը, իր մղիչ ազդեցութեամբ նորոգել, շինել, հիմնել տալով կրթական ու բարե-

գործական հաստատութիւններ, եւ վերջապէս, լոկ իր եզակեան արժանիքին համար, Եկեղեցւոյ ամենաբարձր Աթոռին կը կոչուի Ազգին միահամուռ քուէներով, եւ թէեւ չի վարեր այդ պաշտօնը իր կամքէն անկախ պատճառներով, բայց մինչեւ վերջին վայրկեանը իր կեանքին կը շնչէ, կը խորհի, կը խօսի, կը գրէ իր Եկեղեցւոյն եւ Հօտին օգտին համար, եւ հուսկ ուրեքն կ'արժանանայ թաղուիլ Եկեղեցւոյ գրկին մէջ անվիճելի իրաւունքով. ահա կեանք մը որուն պատմութիւնը միայն իր գովեստն է, իրրեւ գեղահիւս վսեմ քերթուած մը, համակ ծառայութիւններով ու պատիւներով հիւսուած կեանք մը:

Յաճախ որքան դժուարին է ճանշնալ մարդուն հոգին: Մօտէն գիտակ այդ հոգւոյն, կրնամ վկայութիւն տալ թէ որքան սիրող էր պարզութեան, զանխուլ ու անսեթեւեթ կեանքի, հեռու հպարտութենէ ու սնափառ պերճասիրութենէ. եւ սակայն այն դառնութիւնը զոր ունեցաւ ծանօթ կաթողիկոսական խնդրոյն մէջ՝ վերագրուեցաւ կաթողիկոսական փառքէ զրկման անձնասիրական վիրաւորման, սրտաբեկութեան: Ա՛հ, պէտք էր ճանշնալ անոր հոգին ու տեսնել թէ, իբրեւ հայ Եկեղեցականի հոգի, որքան խորունկ էր իր վիշտը իրաւագիրկ եւ անշքացած Եկեղեցւոյն հանդէպ: Ի՛հ, տխրելու, իր հոգւոյն մէջ դառնանալու իրաւունքն ալ զլացուած էր անոր, որ «քէն ընել» տղայական բառերով կ'որակենք իր մեծ տրտմութիւնը: Այդ տխրութիւնը ունենալու եւ գրչով ալ արտայայտելու համար որքան արիութիւն պէտք էր ունենալ հոգւոյն մէջ: Ու Մեկքիսեղեկ արիութեան համար ծնած մարդ էր. հսկայի կազմն ու սիրտն ունէր նա իր մէջ: Անձնական զրկումի մը ազդած զայրոյթն էր իր ցաւ. ինչ փոքրիկ չափով կը յաւակնինք չափել մեծ մարդն ու իր մեծ զգացումները: Չ'արժեր խօսիլ այն ճղճիմութիւններուն վրայ որովք կարծեցին խժբժել իր մարդական տրամագրութիւնները իր կտակին առթիւ: Բովանդակ կեանքին մէջ առանց հաշուելու տուող մարդու մը, որ եւ մազմաթիւ ուսանողներ պաշտպանած էր իր ծախքով, անձուկ շահասիրութիւններ վերագրեցին, ինչպէս իր մարմնոյն տկարութիւններէն յառաջացած հանգստի բնական ձգտումը անձնդիւր հեշտախնդրութիւն մեկնուեցաւ: Ա՛հ, մեր բարեհաճ ներողամտութեան արժանանալու համար կատարեալ

իտէալ մը պարտէր ըլլալ, իրացեալ իտէալ մը, եւ մենք ենք որ կը պահանջենք զայդ, աննկատ մեր թերութեանց, մեր այնքանի փոքրկութեանց:

Ճանցանք զինքը, մի քանի բարեկամներ, ընտանեկան ու դպրոցական շրջանակի մէջ: Յայտնի էր որ ընտանեկան կեանքը շատ կը յարգէր ու կը սիրէր. սիրելու համար ստեղծուած սիրտ մ'ունէր, պարկեշտ ու լուրջ սիրով սիրելու, մաքուր եւ սուրբ սիրով սիրելու, եւ եթէ ստոյգ է մայրապետացեալ կոյսին պատմութիւնը որ օր մ'անոր հարսնանալու երազն ունեցաւ ու մերժուեցաւ անկէ, վասնզի նախամեծար ընտրեց նա նուիրուիլ իր Եկեղեցւոյ սիրոյն, — այս պարագայ, զոհին մեծութեամբն զոր ըած է, ցոյց կուտայ թէ որչափ բուռն եղած է Կարեպին Մուրատեանցի սրտին մէջ Հաւատոյ ու Եկեղեցւոյ սէրը մինչեւ յաղթել ընտանեկան, ամուսնական կեանքի սիրոյն որ այնքան զօրաւոր էր իւր մէջ: Կոյսպէս էր նաեւ ուսուցանելու տենչը իրեն համար: Ձերմեռանդ ուսուցիչ եղած էր իր ծննդավայրին մէջ հայ լեզուի. Երուսաղեմի ճառանգաւորաց վարժարանը անմոռաց թուական մ'ունեցաւ իրմով. յետոյ ի Պօլիս ալ կրօնագիտութիւն դասախօսեց նոյն վառ սրտով:

Իմ կենաց տարիներուս, կը գրէր ինձ Պէրպէրեան վարժարանի յոբելեանին առթիւ առ իս ուղղած մի հոգեւից երկար թղթի մէջ, ամենամեծ մասը հոյովուած են ուսանողական եւ ուսուցչական ասպարիզին մէջ, ո՛չ միայն յաշխարհիկ վիճակի, այլ եւ ի վարդապետութեան, յառաջնորդութեան, յեպիսկոպոսութեան եւ նոյն իսկ յետ կաթողիկոսական ընտրութեան: Այսօր իսկ անպատում ցնծութեամբ կը հրճուիմ, երբ կը տեսնեմ թէ բազմաթիւ աշակերտներէս Յ. Գիւտ քահանայ Աղանեան ի կովկաս կը տօնէ իր գրագիտական յոբելեան, Պ. Յարութիւն Աբէլեանց, Յուրիիսի Համալսարանին Ուսուցչապետն, անման երախտագիտութեամբ կը յայտարարէ ազնիւ բժիշկ Թիրեաքեանին թէ աշակերտած է ինձ ի հայագիտութեան, եւ սանունքս ժառանգաւորաց վարժարանին Ս. Երուսաղեմի արդէն ծանօթ են ի Թուրքիա ուսուցչական, քահանայական եւ նոյն իսկ եպիսկոպոսական պաշտօններով: Յիշելով մեր շրջանակին մէջ ընտանեկան եւ դպրոցական հանդէսներն, որոց ներկայ ըլլալ այնքան յուզիչ

էր իրեն համար, կը գրէ այլուր, նոյն թղթին մէջ, գերզգայուն մարդու եւ գերընտիր բարեկամի խանդաղատանքով. «Սոյն իսկ վայրկենին, գիրս գրելու մտախոհութեանս մէջ, կը զարթնուն անցելոյն յիշատակներն, ձեր տօնադարձներու եւ դպրոցական հանդէսներու պատկերացումներով: Սիրտս կը խռովի, միտքս կը տատամնի, աչքերս կը տամկանան, եւ կը գոչեմ արտասուութոր. Ա՛խ, քաղցր յիշատակներ, ա՛խ, անմոռանալի օրեր, զորս նկարագրելու համար բաւական չեն արհեստական ներկն կամ մելանն, այլ պէտք է անհրաժեշտ երկնքի կապուտակին մէջ թաթաւել վրձինն՝ պատկերելու համար ինչ որ երկնային է ու յաւիտենական»:

Այս շեշտերը մանաստեղծ հոգիի մը շեշտերն են, որ բուռն կ'զգայ գեղեցիկը ու մանաւանդ բարոյական գեղեցկութիւնը, եւ Մելքիսեդեկ Սրբազան էր արդարեւ բանաստեղծ, երգիչ: Իր «Խաչ»ին երգը ծանօթ է ամենուն. բայց շատ առիթներու մէջ կ'առնէր քնարը ձեռքը ու գողտրիկ տաղեր կը հիւսէր: մանաւանդ ընտանեկան կեանքի պարագայներ երգելու համար, — մատաղ մանուկին գեղն ու շնորհը, անմեղունակ հոգիին քունը որրանին մէջ, մաղթանք անոր ապագային համար, եւն:

Բանաստեղծ ու պերճախօս, ահա՛ իր հրուս ոգւոյն արտայայտութեան երկու գլխաւոր ձեւերը: Իր դասագրքերուն մէջ ալ, իր պարզ նամակներուն մէջ ալ կ'երգէ կամ կ'որոտայ: Ծայրէծայր իր Հայ. Եկեղեցւոյ պատմութիւնը ջատագովութեան խանդավառ ճառ մ'է ի պատիւ Հայ Եկեղեցւոյն: Հովուական Աստուածաբանութիւնը, թող ըլլայ նմանողութեամբ գրուած մը, երգն է զմայլման այն բարերար, խաղաղիկ ու խոհալից կեանքին զոր կ'երեւակայէ ճշմարիտ քահանային համար: Իր քարոզները ժայթքում էին հաւատոյ եւ սիրոյ եռանդի քան չանդարտ ապացուցումներ կրօնական հաւատալեաց ու բարոյական պատուէրներու: Այսու հանդերձ կուռ տրամաբանութիւնն ալ իր մտքին կարողութիւններէն մին էր. միայն թէ բոցեռանդ ձեւի մը տակ ի յայտ կու գար իւր խօսքին ու գրուածին մէջ: Բոլոր աշխարհ զմայլեցաւ «Առ Պապն Պատասխանոյն» վրայ, վասն զի լի էր քրիստոնէական օծութեամբ ու սիրոյ եւ համերաշխութեան ոգւով. սրտին լեզուն էր մանաւանդ որ կը

խօսէր անոր մէջ, որուն առջեւ կրօնային գերիշխանութեան յաւակնոտ փաստարանութիւնք շատ վարը կը ձնային: Անգղիոյ եւ Ամերիկայի Մամուլները, իբրեւ սիրոյ ճշմարիտ Առաքեալի մը թուղթը, հրատարակեցին անոր թարգմանութիւնը:

Առաքեալի մը սէրն ու հուրն էր իրը, ճշմարիտ ժառանգ Առաքելոց ոգւոյն: «Առաքելական Եկեղեցի», կարծեմ թէ ասոր մէջ կը տեսնէր Հայ. Եկեղեցւոյն գերազանց տիադոսը, ու «առաքելականութիւնը» հոմանիշ կը համարէր պարզութեան, անկեղծութեան, հաւատարմութեան եղբայրութեան: Ահա ինչու համար կը զայրանար իր հոգին թողր անոնց դէմ որք որոմ կը սերմանէին, որք խտրելու պատճառներ կը փնտռէին, որք կրօնային գերիշխանութեան իրաւունքներ կ'որոնէին, ամենուն ծառայելու պարտքը անտեսելով: Կիլիկիոյ եպիսկոպոսները Հայ Եկեղեցւոյ Հօտին ամբողջութեան մէջ պաշտօնավարելու արտօնեալ չտեսնելը մեծ վիշտ կ'առթէր իր սրտին: Իր ներող մտութիւնը առիթ ալ եղաւ յաշտ կարճամտաց՝ զինքն իբր օտարահակ ամբաստանելու: Երբ քրիստոնէական կրօնին հիմնական նոյնութիւնը յարգելի կ'ընէր իր առջեւ ամէն քրիստոնեայ Եկեղեցիները, որչափ աւելի բոլոր կրօնական Հայ Հասարակութիւններն համակրելի պէտք էին ըլլալ իրեն, առանց որ այդ համակրութիւնը հակառակէր Հայ Եկեղեցւոյն զաւակներն իրենց մօր գրկին մէջ անանջատ տեսնելու ըզձին: Չափազանց ճշմարիտ քրիստոնեայ մ'էր ան այսպիսի իղձ մը կրօնային աններողութեան եւ հեռի պատրուակ նկատելու համար: Օրհնեալ ըլլայ իւր յիշատակը:

(Մասիս, 1903, Թիւ 47)

17. ԳՈՅԹԷՍՍ ԳՈՐԾԻՐՅՈՆ ԻՐԲԵՒ ՀՐՈՊՈՐՈՎՈՒՐ

(Իւր մահուան ՅԵՒ տարեգարձին աւթիւ)

Կանգ առնուլ տարւոյն այն օրուան առջեւ որ մեզ կը վերադարձնէ անցելոյն մէջ երջանիկ կամ աղետաւոր իրողութեան մը թուականը՝ գիտակից կեանքի մը զարգացման յայտարար նշանը պարտի համարուիլ իթաւամբ: Բախտաւոր դէպքին վրայ անդրադառնալով՝ կը գնահատէ մարդ զայն, անոր առաւելու-

Թիւնները՝ ժամանակին բերած փորձառութեամբ աւելի լաւ կը դատէ, որչափ անոր առթած բարիքը կը տեսէ ու կ'առաւելու՝ այնքան աւելի կ'ըմբռնէ կարեւորութիւնը պատճառներուն որք ծնունդ տուին անոր եւ զանոնք, եթէ կարելի է, միշտ արդիւնաւորելու իղձը կը զօրանայ իր մէջ: Գժբախտ իրողութիւններու պարագային մէջ, ինչպէս մեծանուն անձնաւորութեան մը մահուան տարեդարձին, յիշելով կորուստը զոր ըրած ենք՝ դարձեալ բարիքը, երախտիքն է որ կը գնահատենք, կը սովորինք աւելի լաւ ճաննալ յարգը բարիքին զոր դեռ ի ձեռին ունինք, մեծ մտքին, մեծ հոգւոյն զոր բախտն ունինք մեր մէջ ունենալու տակաւին, եւ թէ ինչպէս անհասն եւ ընկերութիւնը իմաստնագոյն վարմունքով կրնան փոխանակել կորսուած առաւելութիւնները ու մեծագոյն արդեանց ակնկալել: Տարեդարձները, իրենց արտայայտած զարգացուն գիտակցութեամբ ու թելադրած խորհրդածութիւններովն, կրնան այսպէս օգտակար ըլլալ, բաց անտի որ յիշատակելը, յիշատակը տօնել կամ սգալը պատուութիւն է մարդկային իմացականութեան եւ զգայնութեան: Մտքին յաշտը այնքան ընդարձակ է որքան անցելոյն հետ անոր կապերն աւելի շատ են, ու զգացումն ալ անմոռաց անցելոյն մէջէն կը քաղէ զինքն ընդլայնող ու մեծցնող տարրեր:

Ահա ինչո՞ւ ի վաղուց մարդկութիւնը սահմաններ է իր մէջ տօններ, տարելիցներ, տարեդարձներ, եւ, ըստ պարագային, զուարթ կամ ախուր ցոյցերով յայտներ է անցելոյն հանդէպ իր զգացումները: Կրօնները մանաւանդ այս մասին ունեցան հնութեան մէջ գլխաւոր դերը: Ու քաղաքակրթութեան հետ կը յառաջանաւ, կ'աշխարհականանայ յիշատակման այս սովորութիւն, ընդլայնելով իր շրջանակը: Հնութեան մէջ, յԱթէնս, Եպիկուրի աշակերտներն այնքան կենդանի ու խոր յիշատակ մը պահեցին իրենց վարդապետէն որ անոր մահուան տարեդարձներուն կը խմբուէին անոր վրայ խօսելու, անոր երախտեաց յիշատակները նորոգելու համար: Յառաջացեալ մարդկութիւնը հետզհետէ աւելի ուշագրութիւն կը դարձնէ իր մէջ ապրած ու ապրող հոյակապ անձնաւորութեանց կեանքի պարագայներուն ընծայած առիթներուն՝ իր յարգանաց ու երախտագիտութեան հարկը մատուցանելու համար անոնց կամ անոնց յիշատակին: Կեանքի

կամ գործունէութեան տարիներու որոշ շրջան մը, ծննդեան ու մահուան տարեդարձները, յիսնամեակները կամ հարիւրամեակները պատեհութիւններ կ'ըլլան նման ցոյցերու: Վ. Հիւկօ Վոլթերի մահուան հարիւրամեակին կը մասնակցէր անմոռանալի պերճ ատենախօսութեամբ մը, ու դեռ տարիէ մը քիչ աւելի յառաջ՝ համայն Գաղիա իրեն ծննդեան հարիւրամեակը կը սօսէր անհուն խանդավառութեամբ:

* * *

Արեւելեան Մամուլ իւր հիմնադրին մահուան տարեդարձի օրը յիշատակութեան առարկայ կ'ընէ այսօր՝ ճոխացնելով իր պարունակութիւնը: Յայտնի է որ սգոյ այս յիշատակը միայն ընտանեկան յարգանք մը չէ, լոկ թերթին սնօրէնին ու անոր ընտանիքին պատկանող, այլ կը շահագրգռէ ամբողջ Հայ Համայնքը, որուն մտքին լուսաւորութեան, ընկերային բարօրութեան ու բարուց ազնուութեան նուիրեց Մամուրեան իր բովանդակ կեանքը, իր բոլոր մտաւոր ոյժն ու գանձերը: Որդւոյն այս բարեպաշտիկ գաղափարը արժանի է որ ընդգրկուի բոլոր Հայերէ, ու մեր ամենուս մտքերը այս առթիւ միահամուռ դառնան դէպ ի մեծ մարդը զոր կորուսինք 1901ի մուտքին մէջ:

Ի՞նչ էր Մամուրեան. — Գրագէտ-Հրապարակագիր մը նախ, եւ հոս կ'ուզենք այս տեսակէտով դիտել զինքը մանաւանդ: Բայց չէ կարելի դիւրաւ սահմանել ամբողջ Հասարակութենէ մը սիրուած ու ճաշակուած Գրագէտ-Հրապարակագրի մը կատարած դերը: Յրուած չէ ամէն գրողի տիրապետել հոգիներու ընդհանրութեան մը, եւ, որ աւելին է, իրար յաջորդող մէկէ աւելի մտաւոր սերունդներու միանգամայն յարգելի ու սիրելի ձեւը: Գաղափարի ու զգացման ու ձեւի առաւելութիւններու հազուագիւտ միաւորութիւն մը հարկաւոր է. եւ ահա այդ միաւորութիւն Մամուրեանի գրչին մշտատեւ չքնաղ յատկութիւնն եղաւ: Գաղափարը բարձր էր իր գրուածոց մէջ, նախապաշարման ու խաւարի թշնամի, ուղղութեան ու ճշմարտութեան բարեկամ, իրաւունքի ու արդարութեան անձնուէր ջտագով. — զգացումը մաքուր էր ու ազնիւ, ընտանեկան սուրբ կեանքին ու բնատոհմիկ լուրջ բարքերուն գեղեցկութիւնը կը սիրէր ու կը

քարոզէր. լաւին ու գեղեցկին, հարազատին ու տոհմայնոյն խանդովն ու անձուկով բարախած էր միշտ իր սիրտը: — Իսկ ձեւը, արտայայտութիւնը՝ կենդանի, վառվռուն, նկարուն, այլազան ծաղիկներու գոյներէ, երփներանգ գոհարներու շողերէ, ճառագայթներէ ու կայծակներէ կազմուած շագուցիչ զէն ու զարդ մը՝ որ գաղափարին ու զգացման յաղթանակը կը շահի անվրէպ, միտք, սիրտ ու երեւակայութիւն միանգամայն գերելով, մոգելով, յափշտակելով: Այդ յաղթանակները թուելու համար կարենալու է մտնել զինքն ընթերցող սերունդներու մտքին ու սրտին մէջ, տեսնելու համար թէ ինչ կայծեր վառեր, ինչ սերմեր ցաներ, ինչ վրէպներ ու կանխակալ կարծիքներ քանդեր, ընկերային ու բարոյական ինչ խութեր ու վիհեր մատնանիշ ըրեր, ինչ տկարութիւններ զօրացուցեր, ինչ սփոփ ու քաջալերանք սփռեր եւ հոգեկան զմայլումներու ինչ բաժակներ արբեցուցեր է: Այո՛, տարակոյս չունիմ որ հայ ընթերցողներու ընդհանրութեան համար այսպէս եղած են իւր հրաշալի Մամականիները, իր վիպական խանդոտ էջերը, իր երեսնամեայ Արեւ. Մամուլներուն պարունակած անթիւ տոհմային, ընկերական, կրթական ու իմաստասիրական խնդրոց լուսաւոր տեսութիւններն ու գրական արիստարքեան քննադատութիւնները: Եւ մէնքս կը յիշենք տենդոտ անհամբերութիւնը որով կ'սպասուէին իր Հաննդէսին թիւերը, որոցմով, իբր առիւծի ծուծով, պիտի սնանէր մեր առօրեայ լրագրութիւնը՝ իմաստալից հիւթալից յօդուածներուն հայ մտաւոր խաւերուն մէջ ծաւալումն ընդլայնելով, որոցմէ մեր վարչական մարմինները իրենց ուղղութիւնն հաստատող կամ մերժող բարոյական հեղինակութեան մը պատգամը պիտի ընդունէին, որոցմէ նորաթեք խոստմնալից գրագէտը իր դեռարոյս տաղանդը գգուող ու խրախուսող փայփայանքը պիտի ստանար, ինչպէս սնամէջ անհիւթ գրիչը իր ջատխախիչ հարուածը, ու ամենէն յառաջ ամենուն աչքերը պիտի վազէին դէպ ի Մահնուրը, որ՝ ըստ նշանակութեան բառին՝ լուսոյ արքայի մը, Ապուղոնի մը պէս, հրափայլ լուսացայտ կռօք մը պիտի վազցներ Հայ համայնքի եթերին մէջ, շաշեցնելով խարազան մը ուսկից կայծեր պիտի թօթափէին մութ խորշեր լուսաւորող ու հալածական փախցնող խաւարասէր չղջիկներ: Ճշմարտութիւն մը կը հաստա-

տենք ըսելով նաեւ որ Մամուրեան գերազանցապէս մերազնեայ հանճար մ'եղաւ, մեր տոհմի հոգիին ազնուագոյն մասէն դուրս ցայտած, իր բոլոր գրուածներն համակ թրթռուն ըլլալով ցեղին հոգիովը, իրենց տարբեր ձեւերուն տակ անոր կեանքն ունենալով իրենց առարկայ, զայն պատկերելով, անոր հետ հրճուելով ու տխրելով, զայն ազնուացնել եւ ուղղել ձգտելով: Քարգամանելու տենչն իսկ, որով չբազրեցաւ նա գեղեցիկ հայ աշխարհիկ լեզուի վերածելէ եւրոպական մաստնագրութեան վարպետներու գործերը — մասնաւորապէս վիպական ընտիր երկեր — իր նախնեաց մէջ այնքան հոյակապ թարգմանիչներ ունեցող ազգի մը դարաւոր մէջ ձգտումը ի վեր չի՞ հաներ, ձգտում որով հայ միտքը Սահակ Պարթեւէն մինչեւ Հայր Արսէն հետամուտ եղած է միշտ ճարտար հայացումով իւրուրոյն ճոխութիւն մ'ստեղծելու օտար գրականութեանց դանձերէն:

Ահա ինչ որ եղաւ Մամուրեան իւրեւ գրագետ — հրապարակագիր, եւ ինչ որ իր յիշատակին նուիրուած թերթին ընթերցողք — անոնք որ աւելի կամ նուազ ժամանակակիցներն եղան իրեն — պիտի վերյուշեն: Բայց նորահաս սերունդն ալ ու ապագայք ալ՝ կարդալով իր գործերը՝ անշուշտ համամիտ պիտի գտնուին մեզ անոր թողած գրական գործին փայլուն արժանեաց մասին, ու պիտի խելամտեն այն բեղմնաւոր ներգործութեան զոր ունեցաւ նա մանաւանդ իր ժամանակակից սերունդին վրայ:

Իր մահուան յիշատակին աղբած տխուր զգացման քով՝ իր բարեկամներն ուրախութեամբ կը տեսնեն որ իր ազնիւ Որդւոյն գովելի ջանքովը իր յիշատակը կ'ապրի միշտ կենդանի նոյն իսկ անոր հիմնած պանծալի թերթին մէջ ու իր պատկերը կը փայլի հանապազ անոր կողքին վրայ: Կը մաղթենք որ Որդին իր հայրարժան գործունէութեամբ առիթ լինի միշտ յիշեցնելու իր մեծանուն Հայրը, ու յաջողութեամբ ընթանալով անոր հետոց վրայ՝ իր դասինները այլապէս հաճոյ արգագիր նուէր մ'ընէ Ընտր շիրմին, զոր փառքով կը շրջապատէ արդէն Հայ ժողովուրդեան երախտապէտ յարգանքը:

(Արեւ. Մամուլ, 1904, Թիւ 2)

18. Մ. Մ. Վ. ԳՐԱԳՈՅՆ

(Իր գերեզմանին առջև ասի յափոյ խօսուած)

Հայր Մատաթիա վարդապետ Գարագաշեան, եթէ, թառին կրօնական իմաստով, իր կեանքին մեծագոյն մասին մէջ չեղաւ վարդապետ, սակայն ո՛չ որ եղաւ երբեք աւելի վարդապետ քան ինքն, բառին լայնագոյն մտքով, ու այդ՝ իր կեանքին բովանդակ տեւողութեան մէջ: Եթէ վարդապետ է ո՛վ որ աշակերտ ունի, նա էր մեծագոյն վարդապետ ու վարդապետ վարդապետաց, վասն զի անթիւ ոգիներ իրեն աշակերտեցան:

Նախախնամական բան մ'եղաւ որ ան ընդվզեցաւ վանական կեանքի անձուկ օրէնքներուն դէմ: Չայն մը, կարծես, կը խօսէր անոր մէջ ու կը մղէր զայն դուրս սլանալ վանականութեան նեղ սահմաններէն, ընդարձակագոյն ոլորտի մէջ գործելու, ու ներգործելու համար մատաղ մտքերու ամբողջ սերնդոց վրայ որք մեծ Ուսուցիչներու կը կարօտին: Վերջացող դարուն երկրորդ կիսուն սկիզբներէն գրեթէ մեր միջավայրին մէջ փոխադրուած իբրեւ աշխարհական անձն, երեւեցաւ նա իբրեւ ճոխութեան տէր ուսուցիչ Հայ լեզուի եւ գրականութեան եւ իբրեւ հրապարակագիր հմուտ գրիչ: Գպրոցներուն մէջ քսոս մ'էր Հայ դպրութեան ուսուցումը, ու քմահաճ գրողներ խլած էին հեղինակութիւնը լեզուի Հայրերուն որք անծանօթ էին մնացած: Փայլուն ու մեծահնչիւն սնամէջ խրթին թառերու բռնազբօս շարքը գրականութիւն կը կարծուէր, ու չէին գիտեր ո՛ր փնտուել Հայ լեզուին իսկութիւնը: Մատաթիա Գարագաշ պարզեց լեզուին քերականութիւնը, իր բնիկ օրէնքներուն պարզութեան վրայ զայն հաստատելով ու լարելով թոսէ մը զայն դուրս հանելով ուր կը կորսուէր հակասական, աղաւաղ ու ճղճիմ կանոններու ցանցի մը մէջ: Քմահաճ ու կեղակարծ գրաբարի մը դիմաց դրաւ՝ իբրեւ տիպար եւ առաջնորդ՝ հարազատ լեզուն Մեսրոպին, Սահակին, Կորիւնին ու Եզնիկին, Հայ բարբառոյն այդ գերազանց վարպետներուն, այսպէս դասական լեզուին բանաւոր մշակութիւնը ապահովելով ու զայն գնելով հաստատուն գետին՝ զարգանալի գրական նորագուած աշխարհաբարի քայլերուն տակ: Ինք միշտ հրապարակի վրայ ալ գրեց կուռ աշխարհաբար մը որուն մէջ մաքուր հայերէնի մ'ամուր հիմերը կ'զգացուէին, ինչպէս կը վայլէր իր

յստակ գաղափարներուն ու տրամաբանական մտքին: Ես կը կարծեմ թէ ժամանակ մը « գերազանցապէս գրագէտը » նա՛ ճանչցուեցաւ մեր մէջ, այսինքն գրող մը որ կատարելապէս գիտակից էր իր գրած լեզուին ու յայտնած գաղափարներուն: Ան պատուէրն ու օրինակը տուաւ խորհելէ ետքը խօսելու եւ գիտնալէ ետքը պրելու, եւ իմաստին համար միայն բառերը գործածելու: Տրամաբանութեան մեծ ուսուցիչն ու դասագիր վարպետն ալ չէ՛ր եօթանասունական թուականներուն երեւցող գրական սերունդին: Իր կենդանի դասախօսութիւններովն, իր դասագրքերովն ու հրապարակագրութեամբքն կազմեց մտաւոր բազմաթիւ սերունդ մը, յորմէ շատք ուսուցիչ ու վարպետ եղան իրենց կարգին, իրենք ալ հասցունելով ուսուցանողներ, եւ այսպէս չորս տասնեակ տարիներ իր սերմանած սերմեր արդիւնաւորեցան, իր լեզուական սկզբունքներ՝ իր դասագրոց հետ՝ տիրեցին ու ծաւալեցան դպրոցաց մէջ, եւ անթիւ եղան իր ուզղակի եւ անուղղակի աշակերտներ:

Ահա՛ մեր վարդապետը, որ ըլլալէ չդադրեցաւ մինչեւ վերջին տարիներն իր գոյութեան, ուր, աւանդ, իր մեծ իմացականութիւնը դադրեցաւ գործելէ: Բայց իր դասերէն, իր գրածներէն, իր երկերէն զատ իր կեանքն ամբողջ ուսուցում մ'էր կենդանի: Այո՛, մեծ միտք մը ու մեծ նկարագիր մ'էր անի: Նա իր բովանդակ կեանքին մէջ ճշմարտին ձգտեցաւ. ան սիրեց գեղեցիկը, գեղեցիկ-դպրութեանց ճարտարարուեստ վարպետը. ան սիրեց բարու-թիւնը, ու ան սիրեց անկեղծութիւնը: Ինչ որ անոր մոլորութիւնները, անոր անկումը կ'անուանեն, այն արդիւնք էր իր գերազանց անկեղծութեան, այսինքն իր գերազանց ու մշտական բարձրութեան: Ան չէր խօսեր այս կերպ ու խորհեր այլ կերպ. իր սիրտն ու խօսք մի էին. կեղծութիւն չկար այդ ոսկեղէն սրտին մէջ, դիմակ չկար այդ մեծարոյ դէմքին վրայ. համակ ջինջ ու պայծառ էր իրրեւ լոյս: Անկեղծութեամբ կը հետամտէր ճշմարտին, եւ գերագոյն ճշմարտութիւնը — Աստուած — անշուշտ առաւել կը հաճէր անկէ ու զմեզ շրջապատող մութին դէմ անոր հոգւոյն ճիգերէն քան անուցմէ որք տարբեր են իրենց շրթունքով ու տարբեր իրենց հոգիովն ու գործով: Անոր ճշմարտախոյզ վեմ հոգին ինքնին երկնասլաց բոց մ'էր նուիրական ղամպարի: Անոր գիտնականի հանճարին բարձրութիւնը ու հոգւոյն բարու-թիւնը

ինքնին մեծ քարոզ մ'էին գերագոյն բանին ու գերագոյն բարին: Իր բոլոր կենքին մէջ աշխատութենէ ուրիշ հաճոյք չձանչեց. իմացականութեան ու խղճի գոհունակութեան բարձրագոյն վայելքը միայն փնտռեց, ու ռոնակոխ արհամարհեց զգայութեանց հաճոյքները որոց այնպէս անյագ կը ցանկայ աշխարհ: Իր սիրուհին եղաւ Հայ լեզուն, իր զբօսանքը՝ հնախօսական գեղեցիկները: Ու գրեց այն մատենները ուր վերակենդանացուց Առաջին թարգմանիչներուն լեզուն, որոյ այնքան իւրացուցած էր ուղն ու ծուծը, եւ կանգնեց իւր քննական հոսակապ Յիշատակարանը, գործ որ կը մարմնաւորէ ահագին պաշար հմտութեանց, երկարամեայ անխոնջ աշխատանք ու թարթափանք եւ վերլուծող ու իմաստասիրող խորաթափանց միտք, գործ՝ Եւրոպայի բանասէր գիտնոց ալ պատկառելի, եւ այսպէս, իր ցեղին ոգւոյն գերազանց ներկայացուցիչ, անոր ամենէն նուիրական աւանդներուն ու աւանդութեանց շուրջը մշտայած մշտաբան ու բազմարդիւն անմահ մշակն հանդիսացաւ:

Անմահ, այո՛. — զի մեզմէ ո՞վ կը հաւատայ թէ Մատթիա Գարագաշեանի համար ամէն բան լմացաւ, ամէն բան աստ, այս փոսին առջեւ վախճանեցաւ: Ո՛չ. անոր մարմինը միայն թաղուեցաւ, բայց կենդանի է ու պիտի շարունակէ մնալ անոր հանճարը, անոր հոգին: Հոգին որ գաղափարներու աշխարհին մէջ գամ մի ծնաւ ու փայլեցաւ, այլ եւս մշտնջենի բնակիչն է անոր, անջինջ ու մշտազօր մէկ տարրը անոր: Յայսօր մեր հոգիներուն ականջին չենք զգար դարերով յաւաջ շնչելէ դարձած ոգիներու հծծիւնը, երգը կամ ճառը, Հոմերներուն, Եսայիներուն, Աղկրասներուն, Պղատաններուն, Շէքսպիրներուն: Այսպէս ալ մեր չքնաղ վարդապետն Գարագաշեան պիտի ըլլայ վարդապետն յաւերժուսոյց: Իր գիրքերուն մէջէն միշտ պիտի խօսի ու պիտի ուսուցանէ սիրել նախնեաց լեզուն ու գեղեցիկ անոնց յիշատակներուն մէջ. իր բեղմնալից կենքին պատմութեամբը միշտ աշխատելու, գեղեցիկն ու լաւն արտադրելու, իր տոհմին ու երկրին ծառայելու, անմահ գործերով անհատական գոյութեան վաղանցուկ շրջանը անանց յաւերժացնելու դասը պիտի տայ ապագայ սերունդներուն:

Մենք ամէնքս, ո՞վ մեծ դ Գարագաշեան, քու աշակերտներդ, քու բարեկամներդ, քու մերձաւորներդ, որ ուսանք քեզմէ, որ սիրեցինք զքեզ, որ հիացանք քո վրայ, որ վայելեցինք քու հան-

Ճարիդ գեղեցիկ արդիւնքները, կը խոնարհինք պատկառանքով
քու գերեզմանիդ առջեւ ու կը մատուցանենք քեզ, այս բաժան-
ման կսկծալի պահուն, մեր սիրոյն ու երախտագիտութեան ողջոյնը
հրաժեշտի: Հանգչէ՛ փառքիդ անմահութեան մէջ...:

(Մասիս, 1903, Թիւ 48)

19. ԳՐԲԳԵՈՒՍ. Մ. Վ. ԳՐԲԳԻՈՅԸՆ

(Պատասխան առ Ց. Խաթուլ վանանդացի)

ԶԳարագաշեան անդէպ չէ, կարծեմ, «վարդապետ վար-
դապետաց, կոչել, քանի որ նա, յետ լինելոյ ինքնին անման
վարդապետ լեզուի, գրականութեան եւ տրամաբանութեան, յա-
ռաջ բերած է աշակերտներ որք իրենց կարգին վարդապետ եղած
ին այլոց աշակերտաց, եւ այսպէս մի քանի դպրոցական սերունդ-
ներ շարունակարար:

Յայտնի է թէ աստ «վարդապետ», բառը, ինչպէս է արդէն
իր բնիկ նշանակութիւնը, գործածուած է «ուսուցչի» իմաստով:
Ըստ որում խնդիր կ'ըլլար վարդապետութիւնը ժամանակ մը թո-
ղած եւ յետոյ «հրաշիւք իմ», իր յուշաթափ վիճակին մէջ
զայն վերստացած ըլլալու, ուզեցի ցոյց տալ թէ «բառին լայնա-
գոյն մտքով», վարդապետ եղած էր ան իր բոլոր կեանքին մէջ,
քանի որ շարունակ ուսուցած էր եւ ուսանողներ մարդած եւ ու-
սուցանողներ հասուցած, թէ եւ արդարեւ կրօնական առմամբ
վաղուց հրաժարած վարդապետութենէ:

Մինչդեռ ըսածիս միտքը շատ յայտնի է, կը զարմանամ
թէ կը յոգնիք պնդմամբ հարցնելով թէ որ իմաստասիրական
դրութեան հիմնադիրն եղած է նա: Իմաստասիրական դրութեան
խօսք չկայ հոս, այլ միայն դպրոցական կրթութեան եւ ուսման.
եւ զարագաշեան, իբրեւ դասական զարգացման տէր եւ հեղի-
նակաւոր ուսուցիչ, ինչպէս նաեւ կարեւոր դասագրոց հեղինակ,
խորունկ հետք թողած է մեր կրթական տարեգրոց մէջ:

Պէտք է խոստովանիլ թէ քերականութեան վերանորոգիչ
մ'ըլլալ, կեղակարծ հեղինակութիւններ տապալել, ուսանողու-
թեան առջեւ լեզուի ու ճաշակի ճշմարիտ աղբիւրներ բանալ

փոքր բան մը չէ: Գարագաշեան, կը կրկնեմ, հայ լեզուի ուսուցման քառսին մէջ լոյս ըրաւ, ահա իր դերը. թող ըլլայ հին լեզուին, բայց ո՞վ չի գիտեր թէ հնոյն բանաւոր ու կանոնաւոր ուսումը որքան նպաստած է նորին բարեկարգման ու զարգացման:

Երբ կ'ըսենք «Ոչ ոք եղաւ երբեք աւելի վարդապետ քան ինքն», եւ կամ նոյն իսկ «մեծագոյն վարդապետ», կարծեմ թէ տեղի չկայ զՍահակ եւ զՄեսրոպ նուաստացեալ համարելու վասն զի, յայտնապէս, աշակերտելոց թուոյն մեծութեան վրայ կը հիմնուի հոն վարդապետի առաւելութեան կամ մեծութեան աստիճանը, քանի որ ըսած ենք «Անթիւ ոգիներ իրեն աշակերտցան»: Իսկ թէ որոնք են այդ ոգիները, ինչպէս կը հարցնէք, մենք ու շատեր մեզի հետ կը տեսնենք զանոնք եւ կ'զգանք Գարագաշեանի ունեցած ազդեցութեան ու արդեանց շրջանակին լայնութիւնը: Գուք չէք տեսներ, վասնզի փիլիսոփայական աղանդներու ասպարէզին մէջ կ'ուզէք փնտռել զանոնք, չգիտեմ ինչո՞ւ: Մնաց որ մենք ինքնին արդէն արժանաւոր գովեստն ընծայած ենք Սահակին ու Մեսրոպին, զանոնք «Հայ բարբառոյն գերազանց վարպետները», կոչելով, եւ նոյն իսկ Գարագաշեանի փառքը մեծաւ մասամբ դնելով անոնց լեզուն իւրացուցած ու վերակենդանացուցած ըլլալուն մէջ:

Ար պնդէք թէ Գարագաշեան աւելի արդիւնալի կիրառութիւն մ'ըրած պիտի ըլլար իր հանճարին, եթէ վանական սքեմը չնետէր իր վրայէն, ըստ որում, նիւթական հոգերէ զերծ, եւ տաղանդակից ընկերներու հետ միացած, պիտի կրնար իր ուժերը նուիրել միմիայն կարեւոր երկերու, անոնցմէ ոչինչ կորսնցնելով գրեթէ մեքենական աշխատութեանց համար:

Ասիկա կէտ մ'է որ կրնայ այլեւայլ կերպով գնահատուիլ ըստ տարբերութեան մտաց: Բայց ես, տեսնելով այն կենսական ու բազմարդիւն դերը զոր Գարագաշեան մեր շրջանակին մէջ ի գործ դրաւ, տեսնելով բազմութիւնն աշակերտաց որք խասգիւղի Ս. Կերսիսեանին, Ալաթա-Սէրայի, Աեդր. Վարժարանի եւ մի քանի ուրիշ տեղերու մէջ իր շուրջ ժողովեցան եւ իր գրական սկզբունքներով տողորուեցան, նախախնամական բան մը համարեցի իր հրատարակումը վանական կեանքէ: Թերեւս դուք ձեր տեսակետով ձեր իրաւունքներն ունենաք. բայց ես ալ իմ հայեցակէտս ունիմ

ու անով իմ իրաւունքս՝ ձեզմէ տարբեր խորհելու: Մենք մեր մէջ, իբրեւ հայ լեզուի ուսուցիչ, ոչ Գաթրճեանը, ոչ Բագրատունին, ոչ Այտընեանը, ոչ Հիւրմիւզը ունեցանք, մայր ունեցանք Հայր Մատթիա Գարագաշեանը, եւ ոչ որ կրնայ դատապարտել զմեզ նախախնամական բան մը համարելնուս համար այս բախտաւոր պարագայն, որ մեր կրթական ուղղութեան մէջ կարեւոր յեղաշրջման մը թուականը բացաւ:

Ո՞ր ձայնն էր, կը հարցնէք, որ «կը խօսէր, կարծես, անոր մէջ ու կը մղէր զայն դուրս սլանալ վանականութեան նեղ սահմաններէն», ինչպէս ըսած ու գրած եմ: Ո՞ր ձայնն էր. — Է՛՛հ, իր կոչման ձայնը, իր խղճին ձայնը, ընդարձակ ասպարիզի մէջ գործելու եւ ուսուցանելու տենչը, իր ճակատագրին ձայնը, վերջապէս, եթէ բախտից ու ճակատագրաց տէրը զԱստուած պարտիք ընդունիլ, Աստուծոյ ձայնը:

Այս մղիչ օյժերուն հետ կրնաք կցել այն տարակուսութիւններն ալ զորս վանքին մէջէն Գարագաշեան սկսած էր զգալ: Ինք այն մարդը չէր որ կարենար իր բանականութեան ու խղճին հետ հակասութեան մէջ ապրիլ: Ինք այն մարդը չէր որ սքեմը իր մարմնոյն վրայէն հագնէր եւ «ճակտին ետեւ» ուզած միտքը կարենար ունենալ: Չէ՛, սքեմը խորհրդանշան մ'էր արտաքին, որ կը յայտնէր «ճակտին ետեւ», ինչ ինչ որոշ ու պարտաւորիչ համոզումներ: Եւ երբ այս վերջինները կ'երթան, սքեմը պէտք չէ որ մնայ լոկ մարմնոյն վրայ, աննշանակ: Ահա՛ նաեւ անշուշտ Գարագաշեանի սքեմաթողութեան մէկ ներքին հոգեբանական պատճառը: Բայց չգիտեմ թէ էր esthétiqueի հետ անհաշտ սլաքներ, արձակած կը լինիմ, երբ վանականութեան «նեղ սահմաններ» վերագրեմ: Հապա ի՞նչ է. Վանքը չունի՞ իր խիստ օրէնքները, կրաւորական հնազանդութեան պահանջները, արգիլեալ մտածումներն ու ընթերցումները, պարտաւորիչ դժնգակ աշխատութիւնները, եւ այլն: Ի՞նչ վերաւորիչ կայ «նեղ» կոչելու մէջ վանականութիւնը, քանի որ արդէն այդու կը տարբերի աշխարհիկ ու ազատ կեանքէն: Երբեք «մարմնոյ» մը դէմ թշնամանք ընելը մտքէս չէ անցած, երբ «վանականութեան նեղ սահմանները», բացատրութիւնը գործածած եմ: Այս տեսակէտով, ազնիւ Վանանդացին բոլորովին ձրի վերաւորուած է ինձ դէմ:

«Մեծ ժխտողն էր Գարագաշեան, կ'ըսէք, եւ ուրիշ ոչինչ»,
 Ձեր խօսքին այս վերջին մասը դուք ինքնին ժխտած էք, նոյն իսկ
 ձեր այդ գրութեան մէջ քանիցս թուելով անոր տաղանդներն
 ու տիաղոսները, մեծ ուսուցիչ, մեծ միտք, Ս. Դարու հայե-
 րէնագիտ, սրատես զրոյ, անկեղծ մարդ, եււ. ըսել է
 բազում ինչ էր Գարագաշեան, որու վրայ կրնանք յաւելցնել
 նաեւ թէ վիեննական Մխիթարեան Միաբանութեան չքնաղ փառ-
 քերէն մին էր: Բայց մեծ ժխտող մ'էր. մեծ միտք մը, ինչպէս
 կ'անուանէք զայն, կրնայ մեծ ժխտող մ'ըլլալ: Ես ուրիշ անդ
 մ'ալ ըսած եմ թէ բացարձակ անաստուածի գոյութեան չեմ
 հաւատար, եթէ ոչ բացարձակ անբարոյական մ'ըլլայ այն, վասն
 զի ճմարիտ անաստուածութիւնը բարոյականի ուրացումն է,
 խղճին խաւարումը: Ոչ ոք տարակուսեցաւ Գարագաշեանի բա-
 րոյականին վրայ որ մտքուր եղաւ բառին կատարեալ նշանակու-
 թեամբ: «Հրեշտակի կեանքով ապրեցաւ», կը վկայէին շատերն
 իր մերձակորներէն՝ իր յուշարկաւորութեան օրը: Գուք իսկ
 որակեր էք զայն՝ «անկեղծ մարդ»: Բուն բառն ըսեր էք ինձ
 հետ, ինչպէս բարձրաձայն ու համարձակ հռչակեցի զայն իր
 գերեզմանին վրայ: Եւ, ահ, ընդունեցէք որ անկեղծութիւնը
 բարձրագոյն առաքինութիւնն է, ուրիշ առաքինութեանց երաշ-
 խաւորն ու պահպանը, ու այն՝ մեծագոյն պաշտօնն է զոր մարդ
 նուիրէ գերագոյն էին որ լոյսն ու ճմարտութիւնն է ինքնին:
 Գերագոյն Բանն ու գերագոյն Ձօրութիւնը անպատճառ դրական
 կրօնքներուն ըմբռնածին պէս չըմբռնելը անհաւատութիւն չէ,
 եւ պէտք է ընդունիլ հոգիներուն իրաւունքը՝ իրենց ներքին
 համոզմանն ու իրենց բանականութեան համեմատ հաւատալու:
 Դէպ ի հաւատ հոգւոյ ամէն անկեղծ ճիգ յարգելի է: «Ինչ որ
 մարդուն արժէքը կը կազմէ, ըսած է Ղեսինկ, իր ունեցած կամ
 ունենալ կարծած ճմարտութիւնը չէ, այլ անկեղծ ճիգը զոր
 ըրած է անոր տիրանալու համար, վասն զի ոչ թէ ճմարտու-
 թեան տիրացմանն, այլ խոյզովն է որ մարդ իր բարոյական
 ոյժերը կը մեծցնէ ու կը կատարելագործուի»: Եթէ Գարագաշեան
 իր յատուկ մտքով հաւատքին չէր հասած, բայց, վստահ եղիք,
 հասնելու անկեղծ ճիգ ունէր, եւ այդ իսկ պաշտամունք մ'էր՝
 ճմարտութեան ու հաւատքին մատուցուած, շատ բարձր քան

ուսմկային պաշտամունքին անգիտակցօրէն կրկնուած բանաձեւերը, յաշս Աստուծոյ անշուշտ կարի յոյժ արժանալից քան շրթանց ծայրիւ միայն կցկցուած ու յօդուած սաղմոսներ: Անոր հոգին զուրկ չեղաւ երբեք իտէալէ, մանաւանդ թէ իր ուղղաբարոյ ու անկեղծիկ կեանքովը բարձրագոյն գեղեցկութիւնը, որ բարոյականն է, իրացուց իր վրայ:

Գերազանց բանաստեղծը առաքինի մարգն է, ըսուած է իրաւամբ, որ բարոյական իտէալին ձգտած ու մարմնացուցած է զայն իր անձին մէջ: Թէ լոկ չայ լեզուին գեղեցկութեան ալ յարած ըլլար իր հոգին, ինչպէս կ'ըսէք, դարձեալ իտէալի մը փարած կ'ըլլար, աննիւթ ու իմացական իտէալի մը, զի լեզուն միտք ու զգացում է, եւ գեղեցկին զգացումը իր ամէն ձեւերուն տակ անշահախնդիր, ազնիւ զգացում մ'է, որ նիւթական շահու ու կոշտ հաճոյքի անարգ հետամտութիւններէն վեր բարձրանալու ընդունակ ազնիւ էութիւնը ցոյց կուտայ: Եւ երբ մենք իր կեանքն ալ կը համարէինք հրահանգներով լի դասարան մը, որուն ուսուցումը պիտի մնայ անյուելի, իրաւունք ունէինք ծանրանալու գերազանց վարդապետին բարձր ու բազմադիմի արժանեաց վրայ:

Այսու հանդերձ, այս չէ՛ ժխտել արժանիքը վանական վարդապետաց, քան զԳարագաշեան մեծաց կամ փոքունց, ըստ գնահատման իւրաքանչիւրին, եւ Տէր վանանդացի յանդէպս կ'ուզէ մեզ իր հարցումը թէ «միթէ վանականութիւնը հայ մտքին զարգանալուն, բարգաւաճելուն արգելք եղած է», վասն զի մտքի կամ հմտութեան զարգացման պայմաններուն վրայ չէ որ խօսած ենք: Մեք մեզէն իսկ փութացած ենք իրենց քով՝ անկողմնակալ մտքը մեծարանք դնելու վանական արժանիքներու, երբ առիթը ներկայացած է կրնաք յիշել Միխիթարայ, Հ. Եղիշէի Յօրեղեանները եւ այլ առիթները¹:

(Սուրհանդակ, 1903, Թ/Լ 1466)

¹ Այս յօդուածին հրատարակութենէն յետոյ, Տ. Թաթուլ վանանդացի ինձ հանդիպելով յայտարարեց թէ քննարկելու էր իմ գրութեամբ եւ այլ եւս պէտք չէր անենք գաղափարներ: Ընդդիմախօսի ինչ վեհ տիպար: Ծ. Հ.:

20. ՅԻՅԱՅԱԿՆԵՐԸ՝

Մինչ մէկ կողմէ ժամանակի այն մասը որ մեր կեանքն ըլլալու սահմանուած է՝ կտոր կտոր կը ցնդի կ'անհետի անցնող վայրկեաններուն եւ օրերուն հետ, միւս կողմէ կարողութիւն ունի մարդ ժողովելու այդ կտորուանքը, ու իրարու հետ կցելով՝ եթէ ոչ այլ եւս արդի ու իրական, բայց մտաւոր կեանք մը վերաշինելու, անցեալ օրերու համառօտեալ մէկ շղթան, համադրական մի պատկերը կազմելու հաստատելու իր մէջ, ու կերպով մը նորէն ու միշտ, երբ ուզէ ու չուզէ ալ, ապրելու իր անգամ մը ապրած օրերը. — կարողութիւն ճակատագրային, որ օրէնքն է իր գոյութեան, եւ ուրկէ չի կրնար խուսափիլ իր մտքին առողջ ու սովորական վիճակին մէջ:

Այդ կարողութիւնը իր յիշողութեան զօրութեամբ ունի վերլուչուածներ, յիշատակներ ունենալու կարողութիւնն է այդ: Անով մարդը ներկայ վայրկեանին մէջ կը խտացնէ սահած գացած օրերն ու տարիները, ու անոնց մշտաճուն բեռը միշտ իր կոնակը՝ կը յառաջանայ ամէն րոպէ դէպ ապագայն: Այդ կարողութեան շնորհիւ, կ'ուսնի մարդը, սովորութիւններ կը կազմէ զգացման, մտածման ու գործողութեան որք հետ զհետէ շեշտուող յատկութիւններ, սրուող տաղանդներ, կատարելագործուող յաջողակութիւններ կ'ըլլան իր մէջ, ինչպէս, ասոր հակառակ, անով է դարձեալ որ թերութիւններ կ'արմատանան, պնդացած անընդունակութիւններ ու անդարմանելի ապիկարութիւններ կը յառաջանան: Անով կը նորոգուին մարդուն անցեալ տպաւորութիւնները, զգացողութիւնք եւ զգացմունք՝ որք երբեմն իր զգայնութիւնն յուզած էին՝ կրկին կուզան իր սրտի թելերը ցնցել, երբ անոնց շարժառիթ առարկայները կամ դէպքերը վաղուց կորուսած են իրենց այժմութիւնը: Բայց յուշն ասոնց ալ պատկերքը պահած է իր մէջ, որք կարող են իրականութեան մօտ կամ անոր:

¹ Գրական այս յիշատակներէն յետոյ պատշաճ գատեցիք հոս գնել — եւ այնու վերջացնել այս հատորը — ընդհանրապէս Յիշատակներու վրայ գրուած մեր մի հոգեբանական Թօգուածը, որ հրատարակուած է Արտ. Մ-ի-յ 1902 Յունվար 1ի թուոյն մէջ՝ իր Հիմնադրին յիշատակութեան նուիրուած, եւ որուն մէջ ուզած ենք բարոյական դատ մը գնել Երիտասարդութեան հասցէին:

իսկ հաւասար վերկենդանութիւն մ'ստանալ եւ անոր ազդած երբեմնի յուզմունքն ազդել վերստին, յաճախ շրջաբոլոր իրականութիւնները մոռցնելու եւ անցելոյն մէջ ապրելու ցնորքը տալու աստիճան:

Ու յիշատակը մեր անցեալ արարքներուն՝ հոն է, մեր մէջ. զմեզ գործող կը տեսնենք մի եւ նոյն գործերը, միշտ պատասխանատու կ'զգանք զմեզ անոնց, մեզ կը վերագրենք անոնց արժանիքը կամ ամօթը, այսօր ալ հպարտութիւն մը կ'զգանք մեր անցեալ պատուաբեր վարմանց համար, ու բազմաթիւ տարիներ վերջն ալ շառագունանք մը կ'եղնէ մեր ճակատին վրայ՝ երբ մեզմէ գործուած անազնիւ գործի մը յիշատակը կը զարթնու մեր մէջ, արթնցնել իրեն հետ հին խայթն ալ որ չէ ջնջուած: Այսպէս մեր եսը, մեր բարոյական ու մտաւոր էութիւնը անկորուստ կը պահէ մեր անցեալը. անոր տարրերովն իսկ շինուած է նա մանաւանդ, եւ ոչ միայն կարեւոր մասունքն այդ անցեալին, այլ եւ ամենէն աւելի անկարեւոր երեւցածներ իսկ, կը պահեն անոր մէջ ամէն վայրկեան գիտակցական ըլլալու պատրաստ գոյութիւն մը, եթէ չեն դարձած ամենօրեայ առարկայներ մեր մտածութեան, սովորական վիճակներ մեր սրտին: Բաւէտ անգիտակցական դարձած շատ մ'անցեալ տպաւորութիւնների արգէն մեր հոգւոյն ալուց մէջ խտացած նստած՝ մեր բնաւորութեան արմատները սնուցանող թագուն գեախներ եղած են ու անոր իր ընդհանուր դիմագծութիւնն ընծայած: Մեր մարմինն անգամ, թէ եւ անոր նիւթական ամէն մասունք աւելի կամ նուազ ժամանակի մէջ փոխուին ամբողջովին, չի դրոշմեր իր մէջ մեր անցեալը, իր զօրութեանց ու տկարութեանց մէջ, իր ձեւերուն եւ սովորական շարժմանց ու դրից մէջ:

Մեր յիշատակներով մեզմէ դուրս եղող անձերն ու իրերն ալ աւանդապահները կ'ընենք մեր անցեալ էութեան, որուն շփումը կրած են անոնք, եւ ուրիշ բան մը կապուած կը մնայ անոնց հետ: Տեղերն ուր ապրեցանք, տառապեցանք կամ վայելեցինք, գործիները որոցմով աշխատեցանք, տունը զոր շինեցինք, ծառը զոր տնկեցինք, էակները զորս սիրեցինք, անոնք որոց հետ կամ որոց համար լացինք կամ խնդացինք, առարկայները որք անոնցն եղան, այս ամէնքը մեր կեանքին պատասխանները կը կրեն

իրենց վրայ, ինչպէս մացառները որոց վրայ անցնող հօտը իր գեղձին ծուէնները կը թողու, ու իրենց տեսքը կամ մտապասկերը մեր կեանքի այս կամ այն դրուագն է որ մեզ կը վերբերէ՝ յարակից տխուր կամ զուարթ յուզումներով: Մեր անցեալին հետ՝ մեր յիշատակներուն միջոցաւ՝ նաեւ մեր ճանաչածներուն եւ մեր սիրածներուն անցեալը կ'ապրի մեր մէջ: Մեր զուակներուն մանկական խաղերը կը կարծենք տեսնել տակաւին՝ երբ անոնք մեծցեր են արդէն, եւ երբ մեր սիրոյ առարկայները արդէն անցեալ մ'են եղած բոլորովին, մեր երբեմնի կենակցութիւնը կը կարծենք ապրիլ, ու անոնց անոյշ ձայները լսել ու անոնց քաղցր ժպիտը տեսնել, ու անոնց փարեղի մարմնոյն հպիլ, թէեւ, աւաղ, մեր արցունք մեզ կ'ըսեն թէ ակարճագանգ մը չի կրկնել այդ ձայները, ալ մէկու մը չ'ուղղուիր այդ ժպիտը, ալ այդ մարմնոյն գերեզմանի որդերը միայն կը հպին...

Աւաղ, յիշատակի այդ կարողութիւն որքան չարչարիչ է յաճախ եւ ինչ անփարատ սեւ մութով կը պատէ շատ անգամ մարդկային կեանքը: Այդ մութին մէջ անցեալին ցոլացուցած հաճոյալի պատկերներն իսկ ցաւագին կը գառնան, զի որքան դառն է երջանկութեան անցեալ մը յիշել՝ որուն կ'ընկերանան իւր տխուր վախճանին յիշատակը ու ներկային մէջ երկարաձգուող սրտակսկիծ մորմոքանաց զգացումը: Բայց, թէ եւ անսպառ արցունքի պատճառ, պիտի ուզէի՞նք որ այդ յիշատակը սրբուէր մեր սրտէն ու կորսուած մորմոքելի անցեալը հետք մը չունենար մեր յիշողութեան մէջ: Մոռացումը մահուան լուսնը չ'պիտի ըլլար մեր անհետացած սիրելիներուն ու մեզ ալ համար. այդ յիշատակը չէ՞ մահուան դէմ մեր վերջին ապաւենը, ու երբ ան մեր գրկէն կը խլէ մեր սիրելին, ու ժի մնացորդ մը յիշատակին մէջ չէ՞ դարձեալ որ կը մնայ մեզ, անմեռ յիշատակին՝ զոր կ'ուխտենք իրեն ու մեզ՝ պահել իրմէ, իր կեանքէն, իր մեզ հետ կենակցութենէն, իր գործերէն, իր խօսքերէն, յուշոյ կեանքին զոր կ'ուխտենք շինել իրեն մեր մտքին, մեր սրտին, մեր երազներուն, մեզ մնացած կեանքին մէջ, պաշտամունքին զոր կը նուիրենք այն ամէն անշունչ առարկայներուն իսկ որոց իր ձեռքերը հպած էին եւ որոց իր յիշատակը կ'պած է:

Յիշատակը... այն կը մնայ մեզ անցեալէն, ու այդ անցեալը մեր լուրը կեանքն է. անով կ'ապրինք, զայն կ'ապրինք մանաւանդ, երբ «ապրիլ» կ'ըսենք: Ներկայն անոր ու անորոշ ապագային մէջ տեղ փոքրիկ կէտ մ'է միայն, խուսափուկ վայրկեան մը, եւ ինչ որ ապագայէն պիտի կրնայ իրականանալ՝ դարձեալ շուտով այդ անցեալին փոխուելու համար է, ընդ հուպ նորէն իբրեւ յիշատակի բեկոր մը միայն մասն ըլլալու մեր կեանքին: Այն ենք ինչ որ ըրած է զմեզ այդ անցեալը, (բաց ի այն անցեալէն որ մեր հայրերունն է եւ որուն ազդեցութիւնը կ'երկարաձգուի մեր մէջ ժուանգուած հանգամանքներու ձեւին տակ), խմորելով մեր ամբողջ էութիւնը, մեր նկարագիրը շինելով, մեր կարողութիւնքն ու տկարութիւնքն հիմնելով, անջինջ ուրախութիւններու կամ անմխիթար տրամութեանց աղբիւրը կազմելով մեր մէջ: Այն է մեր արժանեաց չափը, մեր անցեալը. անով կը դասեն ու պիտի դասեն զմեզ մարդիկ, ու ալ այն պիտի տայ բացարձակ ու վերջնական տարազը աշխարհի վրայ մեր անցաւոր գոյութեան՝ երբ մեր շնչաւոր կեանքը վերջանայ իսպառ:

Այս խորհրդածութիւններէն կը բղխի բարոյական անդրադարձում մը, զոր մասնաւորապէս կ'ուզէի յանձնարարել երիտասարդներուն: — Եթէ անցեալն է մանաւանդ մեր կեանքը, ու ներկայն է ու ապագայէն եկած տարերքն են զայն կազմողը, ինչ մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել ներկային ու ապագային որոնք օր մը, վաղը, մեր անցեալը պիտի ըլլան. մեր կեանքի պատկերը կազմող գծերը պիտի ըլլան եւ մինչեւ իսկ, իբրեւ ընդարոյս տրամադրութիւններ, պիտի կրնան գտնուիլ մեր զաւակաց մէջ: Եթէ չեմք կարող արգիլել բախտը ցաւեր բերելէ մեզ որք ան մեր մնացեալ օրերուն համար իրենց սայրասուր փուշերը պիտի ցցեն մեր հոգւոյն մէջ, բայց կարող ենք արգիլել խղճի խայթերու կազմութիւնը մեր գիտակցութեան մէջ: Եթէ բախտը մեր ձեռքը չէ, պարտքը մեր կամքէն կախում ունի. կրնանք մեր ապրած ու ապրելիք օրերուն տրուած ուզողութեամբ այնպէս ընել որ մեր անցեալը բարոյական գոհութեան յիշատակներ ընծայէ մեզ միշտ, պատուաւոր վիպակութիւն մ'ըլլայ միշտ մեզ համար այլոց ու ապագային առջեւ. բարի ժառանգութիւն մը մեր յաջորդաց, ի չգոյէ երջանկութեան գէթ սփո-

փանքը մեզ տայ ու արիութիւնը ապրելու: Կրնանք ընել մեր ի-
մաստութեամբ որ ամաց բեռը բարոյական ու մտաւոր ներդաշ-
նակ ուժերու պաշար մը ներկայացնէ, բարիք ընելու համար մեր
տրամադրութեան տակ միշտ առձեռնպատրաստ, ու իր ճնշող
ծանրութիւնը կարենայ թեւերու թեթեւութիւնն ըլլալ մեզ գէպ
ի վեր սլացումներու համար: Կրնանք ընել, միշտ հսկելով այն նոր
տարերց վըայզորս մեր մէն մի օրն կ'աւելցնէ հիներուն, որ երբ, ա-
ւելի կամ նուազ ընդարձակ, յանգ հլնէ մեր ասպարէզն այս աշ-
խարհի վրայ, երջանկաւէտ թէ թշուառ, փայլուն թէ համեստ,
ազնուական կեանքի մը պատմութիւնն ըլլայ, որ զայն ճանչցողն
ներշնչէ սա՛ գատաստանք. «Մարդ մ'եղաւ ան»:

(Արեւ. Մամուլ, 1902, Թիւ 1)



ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊՐՏՈՒՐՈՒԹՅՈՒՆ ԶՈՅՆԸ

(Հուսկ բանք առ ընթացաւարտ Պէրպէրեան վարժարանի, 1906 ափ.)

Այս երկրորդ անգամ է որ հարազատ որդի մ'ունիմ ես ալ իմ ընթացաւարտ Սաներուս մէջ, եւ թէեւ ամէն անգամ որ իմ վերջին խօսքերս կ'ուղղեմ իմ աշակերտներէս անոնց ողբ, մեր ձեռքին տակ իրենց կրթութիւնն աւարտած, կ'երթան այլեւս նետուիլ կեանքի ասպարիզին մէջ ընդհանրապէս ուղղակի եւ երբեք ընդգրկելի ասպարիզի մը պատրաստութեան պահանջած բարձրագոյն եւ արուեստական ուսումներուն մէջէն, կը բերուիմ խօսելու անոնց ինչպէս հայր մը պիտի ընէր իր որդին յանձնելով իր կամքին ու իր բախտին, — եւ արդէն չէ՞ որ դաստիարակին մէջ միշտ հայր մը կայ հոգեւոր ու բարոյական, քանի որ նա իր պաշտօնով ստանձնած է հօր մը պարտականութեանց մի կարեւոր մասն եւ այնու անոր իրաւանց մէկ մասին տիրացած՝ հանդէպ անոր որդւոյն — բայց ներկային նման պարագայի մէջ այդ զգացումը բուն սաստիկութիւն մը կը ստանայ եւ հայր դաստիարակին մէջ կը բարդուի հայրական զգացումներովն բոլոր անոնց ալ որք զաւակներ ունին ընթացաւարտներու այս դասուն մէջ, ու ես այս պահուստս իրրեւ մագմայակուած հայր մը կը զգամ զիս, ազնիւ ընթացաւարտ Սանուկք իմ, ուղղուելով ձեզ յանուն իմ եւ յանուն ամենուր հայրերուն, որոց հոգիներուն զուգաբախ ու համարաշի տրոփումը կ'իմանամ իմ մէջս:

Ամէն վարիչ հեղինակութիւն, որ մարդկային բանավար ու կամակար անձնաւորութեան յարգանքն ունի, իրենն թարկուած հոգիներուն մարւոյն իղձովն ոգեւորեալ, կը ձգտի ընել այնպէս —

եւ այդ իսկ է իր գոյութեան փաստը — որ այդ հոգիներն օր մ'այլ պէտք չունենան իր ազդեցութեան ճնշումին եւ առաջնորդութեան լուծին՝ կարենալով գծել իրենց ահօսն ինքնավար, ինքնայորդոր քալել օրինաւորութեան շաւիղներուն մէջ ու ինքնամուղ երթալ դէպ յիրացումն մարդոյն: Այսպիսի է հայրական ու դաստիարակական իշխանութիւնը. ան, տղուն ու աշակերտին անչափահասութեան ու խակութեան շրջաններուն մէջ, կարելին ի գործ կը գնէ խօսքով ու գործով, դասով, խրատով, յորդորով, սաստով, հարկադրուած պահանջիտ պարտականութիւններով, վարձքին հրապոյրով ու երբեմն ալ պատիժին երկիւղով, բերելու հասցնելու համար մանուկ սանը — եւ այդ լրումն ու պսակն է իր ջանքերուն ու բաղձանաց — Փիղիքական ու մտաւորական այն հասակին, ուր նա այլեւս պէտք է որ վայելէ իր կարողութեանց ազատ կիրառումն իրրեւ անձ բարոյական, առանձինն երթայ կեանքին մէջէն, իր պատասխանատուութեանց բովանդակ բեռն ստանձնած, իր մարդու դերը կատարելով, իր ուրոյն գործունէութեամբն իր արժանիքը կազմելով, իր ճակատագիրը լնելով: Չեր կեանքի ընթացքին մէջ ահա՛ դուք հասած էք այդ կէտին, այդ հասակին, ո՛ր ընթացաւարտ Պարոններ, ու ձեր դաստիարակք ու ծնողք ալ գրեթէ կանգ կ'առնուն իրենց պարտաւորիչ առաջնորդութեան մէջ որ իղձերու ու բարեկամական յորդորներու միայն կը վերածի այլեւս, ակնդէս այսուհետեւ. իրենց ջանից պտուղներուն, գործնական ապացոյցներուն զոր պիտի տաք իրենց խնամոց արդիւնաւորութեան, այն սրտահեշտ վարձքին զոր կ'ակնկալեն գտնել ձեր պարկեշտ անձնաւորութիւններուն ու պատուալից գործունէութիւններուն մէջ: Հիմա որ վար կը գնեն անոնք այն իշխանութեան գաւազանն որով առաջնորդեցին զձեզ ցարդ, իրենց մատը կը դադրի, ջղուտ ու երկարաձիգ, նշանակելէ կէտն ուր, զանազան պարագաներու մէջ, հարկ էր ուղղուիլ, ու իրենց ազդարար ուղեցոյց ձայնն հրամայական հարկեցուցիչ շեշտերով ոչ եւս պիտի հնչէ ձեր ականջներուն, ո՞ր ձայնն ուրեմն պիտի առաջնորդէ ձեզ յիս այսորիկ, մանաւանդ յետ այսորիկ որ պիտի տեսնէք զձեզ կեանքի փոթորկալից ծովուն մէջտեւը նետուած, այն մանչագին խառնագոչ ձայներուն ժխորին մէջտեղ, զոր պիտի կազմեն մէկ կողմէ ձեր կիրքերուն ու տենչերուն աղաղակներն եւ

միւս կողմէ բուն մրդկոտ պայքարն ընդդիմամարտ շահերուն, փառասիրութեանց եւ կարծիքներուն որ պիտի գոռայ ձեր շուրջը: Ի նշ կտակ ունին գէթ ձեզի ձեր դաստիարակք ու ծնողք իբրեւ վերջին յայտարարութիւն այն բարեացակամ կամքին որով միշտ ձեր բարին ուզեցին, եւ այն անձնուէր հոգածութեան որով փոյթ ունեցան իրենց ժամանակաւոր իշխանութիւնը գործածելու անեական բարիք մը ձեզ ապահովելու, յայտարարութիւն զոր ուզէին նորա որ դուք միշտ ձեր ականջին մէջ ունենայիք իբրեւ երկարաձգեալ արձագանգն իրենց ձայներուն, որք օր մ'ալ լսողորովին պիտի լսեն կենդանի ձայներուն մէջ, եւ յորում դուք գանձէիք միշտ իրենց սէրն առ ձեզ եւ իբր ամբոյսութիւն իրենց ցբարի բարի խրատներուն:

Կաակը, Աջիւ Արդեակք, զոր ձեր լսող դաստիարակք ու ձեր ծնողք՝ ձեր ճշմարիտ բարւոյն ու անբիծ փառքին անկեղծ բաղձանքովք՝ պիտի ընէին ձեզ՝ պիտի ըլլար յամենայնի հետեւիլ Պարտաւորութեան Զայնին, եւ այդ ձայնն է զոր, յանուն ամենուն, կը յանձնարարեմ ձեզ այս հանդիսական ժամուն իբրեւ առաջնորդ եւ ուղեցոյց ձեր կեանքին: Նա՛ պիտի առաջնորդէ ձեզ անստերիւր ճանապարհէն, նա՛ պիտի ցուցնէ ձեզ ճշմարիտ լոյսը կեանքի մութ ճամբուն ու կեղծ փալփուլներուն մէջ, ու անկէ առաջնորդուած միայն չպիտի զղջաք քալած ըլլալնուդ եւ ի վերջոյ հասած ըլլալնուդ հոն ուր պիտի գանձէք զձեզ ի ծայր ձեր ուղւոյն:

Պարտաւորութեան գաղափարն ու զգացումն այն յաականիշն են որ առջին օրէն կենդանիներուն մէջ որոշեց մարդը, բարոյական էակը. բայց անոնք, մարդկային ցեղին ու անհատին բարեջրջման սկիզբը աակաւին տկար ու աղօտ, հեազհետէ կը լուսաւորուին ու կը շեշտուին, եւ նոյն իսկ դաստիարակութեան մի գլխաւոր դերն է յստակել ու զօրացնել զանոնք անհատին մէջ, Ազգի մը նորահաս սերունդին մէջ: Այլեւայլ բնազգութիւնն մէջէն որք անհատին գործունէութիւնը կը գրգռեն, Հաճոյքի եւ Շահու բազմազան գրգռութիւնն ու շարժառիթներուն մէջէն կ'որոշուի վեր կը կանգնի Պարտաւորութեան Շարժառիթը, ու պարտաւորիչ, վճռական շեշտ մ'ունի որ իրենն է միայն. ան միայն կը պարտաւորէ, մինչ միւսները թելադրութիւններ են միայն աւելի

կամ նուազ ուժգին, ու անոր ձայնին աւելի կամ նուազ յօժարափոյթ հնազանդութիւնն է որ կ'որոշէ մարդուն բարոյականութեան աստիճանը: Միւսները կ'իյնան անոր գերագոյն իշխանութեան տակ, ու անոնք զորս ան չի վաւերի՝ ապօրէն գործողութիւններ միայն յառաջ կը բերեն յաչս մարդկային բարոյական գիտակցութեան: Անոր ազդիւրն անշուշտ այն գերագոյն բացարձակ կամքն է որ ամէն էակի կազմած է իր ճակատագիրը, եւ որ զմարդկային էակն օժտելով մանականութեամբ ու ինքնավար կամքով՝ ուզած է որ ան խելամոտ տիեզերական կարգին ու իր գերին անոր մէջ ու մասնակցի անոր՝ ինքնախորհուրդ աղիկամի: Անոր ազնուականութեան գրոշմն է այն ուրեմն ու անոր կեանքին արժանաւորութեան պայմանը: «Վագրը, կ'ըսէ Շաթոպրիան, կը պատահէ իր որսը, եւ կը քնանայ. մարդը կը լինի մարդասպան, ու կը հսկէ.» ինչո՞ւ. — վասն զի վագրն իր պէտքին ու կրքին գոհացման ձայնէն ուրիշ ձայն մը չի զգար իր ներսիզին, ու մարդն անկէ զատ ու անկէ վեր կը զգայ իր մէջ Պարտաւորութեան Չայնն որ տիրապետելու իրաւունքն ունի պէտքերուն ու կիրքերուն վրայ: Այդ անոր արժանապատուութեան ձայնն է որ գոհացում կը ինզրէ ամենէն յառաջ, վասն զի մարդը մարդը ըլլալու գերագոյն պէտքն ու պարտքը կը զգայ իր մէջ ամենէն յառաջ, ու առանց այդ պէտքին ու այդ պարտքին գոհացման՝ ընդունայն են իրեն ամէն գոհացմունք, անարգ ու անպիտան են ամէն վայելք, ամօթահար է իր ճակատ, ու անհանգիստ է իր հոգին: Պարտաւորութիւնը, զոր իրրեւ անհրաժարելի օրէնք զգաց մարդ իր բնութեան խորը գրուած, հարկադրուած իր վրայ մի գերագոյն Օրէնսդրէ, հիմնեց կրօնքը, որուն գերազանց պատուէրը կը մնայ ան միշտ, վասն զի, եթէ ան չգոհանայ, ի զուր են պաշտամունք եւ գոհաբերութիւնք ի տաճարս, ինչպէս լսեցիք վսեմ գօշն Եսայիին՝ ճշմարիտ կրօնքն ու բարեպաշտութիւնը թերեւս բարոյական պարտաւորութեանց կատարումէն տարբեր բան մ'ըլլալ կարծող Եբրայեցիներուն. «Ձե՛ կայ իմ՝ եւ յաճախելոյ զոհիցդ ձերոց, ասէ Տէր. յագեալ եմ ողջակիզօք խոյոց ձերոց, եւ զճարպս գառանց եւ զարիւն ցլուց եւ նոխազաց ոչ կամիմ. եւ ո՞չ թէ գայցէք յանդիման լինել ինձ. ո՞վ իսկ խնդրեաց զայդ ի ձեռաց ձերոց, կոխել զգաւիթս իմ:» Պարտաւորութեան կրօնքը գերա-

գոյն ու տիեզերական կրօնքն է, անհրաժեշտ ու հիմնական մասն առնէն դրական կրօնքներուն, ու չարագոյն անհաւաստն ու անբարեպաշտն ապահովապէս ան է որ ըմբոստ է պարտաւորութեան դէմ, որ անբարոյական է:

Մարդկային արժանապատուութեան ձայնը կոչեցինք զայն մեր մէջ, ուրեմն անոր գերագոյն պահանջն է գոհացնել այդ արժանապատուութիւնը, ու պարտքը՝ բարոյական պարտքը, ներքին ինքնատուր օրէնք մը, — ու չէր կրնար այն տարբեր ըլլալ, արտաքին ինչ կամ հակառակ մեր կոչման —, կը նոյնանայ արգարեւ մարդոյն ճշմարիտ բնութեան հետ, ու անոր սկզբնական պատուէրն է մարդ ըլլալ, մարդ մնալ, հաւատարիմ ըլլալ մարդկային կոչման, մարդկային անձի ճակատագրին, որ է ապրիլ բանաւորութեամբ ու ինքնակամ հետեւելով բանին պատուէրներուն, այդ բանաւորութենէն առաջնորդուած ինքնագործ կամքն ըլլալով մեր բնութիւնն իսկ ու կազմելով մարդկային անձը մեր մէջ, գերագոյն բարի, գերագոյն պարգեւ, զոր յարգել, զոր պահպանել, զոր զարգացնել մեր ու մեր նմանեաց մէջ՝ է գերագոյն պարտքը, յորմէ առնէ այլ պարտաւորութիւնք իրենց սկիզբն ու վաւերականութիւնը կ'առնուն, եւ զոր կատարելով պիտի կրնանք գոհունակութիւնն ունենալ իրրեւ մարդ էակներ ապրած ըլլալու եւ կարենալու ի վերջ աշխարհի վրայ մեր ասպարիզին՝ մեր կեանքն համարձակութեամբ ներկայացնելու Անոր որ տուած է մեզ զայն իբրեւ գանձ մը, ոչ անշուշտ զայն անմտօրէն փձացնելու կամ անօգուտ ապարդիւն գեանին մէջ թաղելու, այլ շահեցնելու զարգացնելու զայն եւ իր փթթմանն ու բեղմնաւորութեան կարելի բարձրութեանն հասցնելու համար:

Մարդկային արժանապատուութիւնը մեր մէջ վեր բռնելու եւ մեր նմաններուն վրայ անոր պատկառ կալու, անոր յարգը ճանչնալու, զայն սիրելու եւ ամենուրեք զայն վեհ ու զարգացուն փափաքելու եւ առ այդ միշտ անկեղծօրէն ջանալու պարտակառնութիւնը ձեզ տուն պիտի տայ անվրէպ ձեր զանազան պարտաւորութիւնները կեանքի այլազան կացութիւններուն, այլազան պատահուածքներուն մէջ, հանդէպ ձեր անձին ու այն այլեւայլ յարաբերութեանց նկատմամբ, որք զձեզ կը կապեն մարդոց եւ Աստուծոյ հետ, իրրեւ մարդային ընտանիքին անդամներ, իրրեւ քա-

զաբացիներ ձեր երկրին, իրրեւ որդիք ձեր ծնողաց, իրրեւ հա-
 րազաաները ձեր եղբայրներուն ու քոյրերուն, օր մ'ալ իբրեւ
 ամուսիններ եւ հայրեր, եւ միշտ իրրեւ ամէն մարդոց ու արարա-
 ծոց հետ զաւակներ Համայնից Հօր, ու խոհուն, զգայուն էակներ
 որ կոչուած էք ապրելու անոր ստեղծագործած բնութեան գե-
 ղեցկութիւններուն եւ զօրութիւններուն մէջտեղ: Երբ բուռն կիր-
 քեր, անբանական մղուածներ կոյր թափով մը շարժին ու մռնչեն
 մեր մէջ, իրրեւ հինօրեայ վայրենական դարերու մարդկութեան
 սիպեր տխուր ահաւուութեամբ մը վերկենդանացած մեր զգա-
 ցուածներուն մէջ, նման այն հոգեգէշներուն (revenant) որոց հաւ-
 ապք կ'ընծայէ տգէտ ուսմութիւնը, — հաւապք՝ զոր ժիւլ Բալյօ՝
 որ այս նմանութիւնը կ'ընէ՝ միամիտ ձեւը կը համարի նախնական
 կոշտ ու վայրագ զգացմանց այսօրեայ մարդուն մէջ ալ մերթ վե-
 րերեւման կամ մնայունութեան իրողութեան —, պարտաւորու-
 թեան ձայնը պիտի ըսէ մեզ թէ կատարելագործուած ու տակաւ
 ազնուացումը մեր բնութեան օրէնքն է, թէ մեր բնութեան ար-
 ժանաւորութենէն ստորանկութիւն է անտաշ անուպայ բարուց
 նմոյշներ պահել մեր վրայ եւ թէ, անձնական կրթութեան յամառ
 ու անդուլ ճիգերով, մէք պարտիմք բանականութեան լուծին
 հնազանգեցնել տակաւ բնազգական անկարգ ու խեռ ոյժերը մեր
 մէջ ու ի սպասու դնել զանոնք առաքինութեանց: — Երբ ա-
 նիրաւութեան ոգին տայ մտաբերել ռանձգութիւն մը ուրիշին
 իրաւանց սահմանին մէջ, անոր կեանքին, խղճին, ընչքին, պատուոյն
 դէմ դուզնաքեայ իսկ յարձակում մը, պարտաւորութեան ձայնը
 պիտի գոռայ իսկոյն ըստ ստոյիկեան բանաձեւին, «Մարդը նուի-
 րական բան է մարդուն համար,» ու պիտի արգիլէ մարդկային
 անձը՝ որ վախճան մ'է ըստ ինքեան՝ միջոց մ'ընելէ անձնական
 շահու, հաճոյքի կամ փառասիրութեան. ընդհակառակն պիտի
 դրդէ վքեզ քեզէն իսկ զոհել, անձնուիրուիլ, չգոհանալ չոր ու
 ճղճիմ արդարութեամբ, այլ սիրոյ թեւեր պարզելով՝ գգուել
 ու պաշտպանել նմանգ որ օգնութեան կը կարօտի իր անձնական
 վերելքի ճիգերուն մէջ: Այսպէս Արդարութիւն եւ Սէր ձեռք
 ձեռքի տալով ընկերութեան չարիքները պիտի նուազեցնեն ու
 հետզհետէ աւելի բազմաթիւ հոգիներ պիտի կոչեն երջան-
 կութեան ու կատարելութեան: Այսպէս մեր նմանին զգաբնու-

Թեան փափուկ յարգանքն անգուծ վերաւորութեանը պիտի ջնջէ, ու գէթ մարդը մարդուն հետ իր վերաբերութեան մէջ ան չպիտի ունենայ ինքզինքին յանդիմանելու բան մը՝ յերկին ելնող ցաւագին աղաղակներէն, ու լուսաւոր բարեացակամ ձիգեր ճակատագրական չարիքը միայն պիտի ունենան դարմանել: Ինչ կ'ըսեմ «նմանին զգայնութեան յարգանքը», մինչ Սիրով դաստիարակուած հոգին անբան արարածներուն իսկ պիտի խորշի ցաւ տալէ, կամ գէթ յանօգուտս, եւ բոյսին համար իսկ պիտի ունենայ քնքոյշ ուշադրութիւններ՝ խորհելով որ կեանք մը, թերեւս եւ թաքուն զգայնութիւն մը կայ անոր մէջ: — Երբ սուտն ուզէ պղծել ձեր շրթուներն եւ կեղծութիւնը՝ դիմակ մ'անցունել ձեր երեսին, պարտաւորութիւնը պիտի ըսէ ձեզ. «Դուք, բանաւոր էակներ, ճշմարտութիւնը սիրելու եւ փնտռելու համար ստեղծուած, ինչպէս կրնուք հաճիլ սուտէն, ու մանաւանդ անով ձեր նմանեաց իմացականութիւնը պատրել, ու մտքերը միմեանց նկատմամբ խեղճ ու կասկածով խռովել, եւ այսպէս խաթարել փոխադարձ վստահութիւնն որ ընկերութեան շաղախն է:» Ու պիտի յիշեցնէ թէ անկեղծութիւնը պայման մ'է մարդուն արժանապատուութեան եւ թէ սուտ ու կեղծ խօսքն ու վարմունքն ստորին նկարագիր մ'ի վեր կը բերեն անհաստի վրայ որ առ երկիւղի, առ նախանձու, առ չարաշահութեան չի վարանիր հակասել իր գիտակցութեան ու նենգել ճշմարտութեան, ու կը ստորնանայ ներկայանալու այնպէս ինչպէս որ չէ, անարժան վստահութեան, իբրեւ համակ կեղծիք մ'ու պատրանք մը, արհամարհանաց ու պժգանքի լոկ արժանի, մթնցած ու աղտոտած հոգի մը: Ո՛հ, աղան երբեք մի ընդունիք դուք այնքան ձեր հոգւոյն մէջ որքան մարմնոյն. ինչպէս Փիզիքական անմաքրութիւնն անհաշտ է մարմնոյն առողջութեան հետ, նոյնպէս բարոյականն՝ հոգւոյն առողջութեան: Բարձրագոյն հնութեան մէջէն որքան գեղեցիկ կը յանձնարարէր Զենտ—Վեստան եռակի մաքրութիւնը մտածութեան, խօսքի եւ գործի, «մաքուր ի խորհուրդս, մաքուր ի խօսս, մաքուր ի գործս», որպէս զի ըլլար մարդն արժանաւոր արարած բարուոյ Արարչին, Արմզգին, որ համակ լոյս, համակ սրբութիւն էր: Պարտաւորութեան ամէն պատուէրք չեն ամփոփուիր միթէ այս եռակի մաքրութեան մէջ, երբ գիտենք որ մա-

քուր խորհուրդներէն մաքուր խօսքերը կը ծնին, ու մաքուր խորհուրդներէն ու խօսքերէն մաքուր գործերը: Ամենէն առաջին՝ խորհուրդին, մտքին մաքրութիւնն է. խորհիլ միայն ուղիղը, միայն ճշմարիտը, միայն արդարը, միայն բարին, ու ատել իր մտքին, իր խղճին խորոց մէջ ինչ որ անուղիղ, ինչ որ սուտ, ինչ որ անարդար եւ ինչ որ չար է. այս նախնական ներքին մաքրութիւնը պիտի արտայայտուի անվճեպ խօսից եւ գործոց մէջ. աղտոտին ատելութիւնը կեղծին, անիրաւին, ազեղին ու վատթարին ատելութիւնն է որ անվթար կը պահէ հոգւոյն առողջութիւնն եւ կեանքին բարոյական գեղեցկութիւնը կ'ապահովէ մտաց եւ զգացմանց արդիւնք ու յայտարար խօսքերուն եւ գործերուն գեղեցկութեամբ: Այո՛, ազնիւ Սաներս, սիրելի զաւակներս, մաքուր եղիք. մաքուր թող ըլլայ ձեր միտքը, մաքուր ձեր խօսքը, մաքուր ձեր գործքը. ձեր միտքը միշտ ճշմարտասէր, ուղղասէր, բարեսէր, գեղասէր. ձեր խօսքը միշտ արդար, ազնիւ, վեհ, օգտակար, լուսաւորող, շինիչ, բարութեան սերմը սերմանող մտքերու մէջ, գձձութենէ, կեղծութենէ, մախանքէ, հայհոյանքէ զերծ անարատ, լաւին ու լաւագունին տենչը վառող հոգիներու մէջ, եւ ձեր ձեռքերը միշտ մաքուր՝ անիրաւ ու փեսսագործ արարքէ, երախտիքը ցանող ձեր շուրջը, բարին գործելու օրինակը տուող ամենուն. մաքուր, մաքուր, մաքուր. մաքուր ձեր ճակատն ամօթին շառագունանքէն, մաքուր ձեր խիղճը զանխուլ խղճահարուսներէն, մաքուր ձեր անունն անպարկեշտութեան արատաւորումէն: Պէտք է որ դուք ձեր ծնողաց ու դաստիարակաց, ձեր Երկրին ու Համայնքին ու Եկեղեցւոյն փառաց պսակին ջինջ ու անբիծ գոհարներն ըլլաք, որպէս զի անոնք անպայման պարծին ձեր վրայ, ու պէտք է որ դուք ամենամաքուր տարերքն ըլլաք մարդկային ընկերութեան, դուք որ յառաջ տարիք անխոնջ փութութով ու գովելի արգեամբ ձեր բարոյական ու մտաւորական դաստիարակութիւնը մինչեւ ի լրումն գրական, գիտական եւ իմաստասիրական երկրորդական կրթութեան մ'ընթացքին, եւ ընտրուեցաք մարդոց մէջ իբրեւ լուսաւորեալ մտքեր ու ազնուացեալ սրտեր, միշտ հետզհետէ ձեր մտքին լոյսն ու սրտին սէրն, ձեր տաղանդներն ու ազնուութիւնքն աճեցնելու փափաքովն ալ ոգեւորեալ, որ յուսամ պիտի մնայ անշէջ առյուծէս: — Գեղե-

ցիկ ու մաքուր արդեամբք բեղմնաւոր գործունէութեան ու յարատեւ վերելքի փափաքը թշնամի մը կրնայ ունենալ, գիտէք, հաճոյքներու անձնատուր մոլի կեանքի մը ու թոյլ անգործութեան սիրահար ծուլութեան մէջ: Երբ այդպիսի արամադրութիւնք գան տիրել անհատին վրայ իր ասպարիզին մէջ, պարտաւորութեան ձայնը դարձեալ հոն է որ պիտի գայ իր զարթուցիչ կենսատու փողն հնչեցնել մեղկութեան ու հեղգութեան ծոցին մէջ ինքզինք մոռցող քնացող հոգւոյն ականջին, ընդոստ արթնցնելու համար զնա իր թմբիրէն ու անոր առջին դնելու իր գործն ու անոր պահանջումները: «Գու հեշտանքին ու ծուլութեան մէջ, պիտի ըսէ անոր, կը մոռնաս ինքզինքդ, կը մոռնաս վաստակը զոր ստանձնած ես մարդկութեան հաւաքական գործին մէջ իբրեւ քու բաժինդ, կը մոռնաս ապագայդ, կը մոռնաս պարտքդ ու պատիւդ, կը մոռնաս տեսլականը զոր կը մատնանշէ քեզ բանականութիւնդ ու արժանեացդ ինամբն որ պիտի կայանայ այդ տեսլականին բարձրանալու ջանքերուդ ու անոր մտանալու յաջողութիւններուդ մէջ, ու կը վատանաս, կը մեղկիս, կը քնանաս, ու ընդունայն կ'անցընես ու կը փճացնես իսկ կեանքդ որ այն թեյն է մետաքսի, որով դու անմահութեանդ նարօաը պիտի կրնայիր հիւսել. ել, կեանքն աշխատելու, շինելու, աւտադրելու համար եղած է. կեանքն յարատեւ ճիգ մը պարտի ըլլալ. մեղկ ու պղերգ կեանքը մեռելութիւնն է ու ամօթն է մարդուն:», Ա. յսպէս, Պարոններ, Պարտաւորութիւնն Աշխատութիւնը պիտի ցոյց տայ ձեզ իբրեւ Օրէնքը մարդուն, աշխատութիւն իր ամենօրեայ օգտակար գործը գործելու, աշխատութիւն բարերար արդիւնարար զօրութիւն մ'ըլլալու իր միջավայրին ու ժամանակին մէջ, աշխատութիւն՝ իր մէջ մնացած կամ սպրդած անմաքութիւնները սրբելու, հին մարդուն առհաւական բրտութիւններէն իսպառ ազատագրուելու, աշխատութիւն՝ միշտ բարձրանալու դէպ յայն կատարելութիւն, որու ընդունակ է ձեր բնութիւնն: Եթէ դժուարութիւնք յոգնեցնեն ու կասեցնեն զձեզ, պարտաւորութիւնը պիտի քաջալերէ ու սրտապնդէ զձեզ, եւ եթէ ձանձրօթն զձեզ լքուցանել ձգտի՝ ուզելով ձեր հոգւոյն մէջ տարածել իր պարապութիւնն ու յոռետեսութեան թոյնով յոյսն ու քաջութիւնն սպաննել ձեր մէջ, Պարտաւորութիւնն իր

ներշնչած առնական կորովովն ու առթած վսեմ քաղցրութիւններովն պիտի արգիլէ ներգործութիւնն անոր թոյնին ու առոյգ, յուսալից պիտի պահէ զձեզ յար, յար գլուխը ձեր արօրին, յար ձեռն ի մաճ, վասն զի, ինչպէս գեղեցիկ կ'ըսէ Հանրի Շանդափուան, „L'herbe d'ennui se fane où fleurit le devoir“ — “Չանձրոյթի խոտը կը թառամի հոն, ուր կը ծաղկի պարտաւորութիւնը:”

Ահա ինչու համար Պարտաւորութիւնը կը մատնանշեմ ձեզ իբրև ձեր փարոսը կեանքի ուժիւնին մէջ. նա պիտի լուսաւորէ ձեր ուղին, անոր խութերն ու վիհերը պիտի ցոյց տայ ձեզ ու պիտի ընէ որ անոնցմէ անվնաս ու անվտանգ վարէք դուք ձեր կեանքի նաւակը: Երբ հեշտաւէտ ծովածոցի մը մէջ սիրէ յամել ձեր նաւակը՝ մուցած հեռաւոր նաւահանգիստն յոր պարտէր դիմել, ան, Պարտաւորութիւնը, իբրև հողմ՝ մը պիտի ելնէ ու ձեր առագաստներն ուռնցնելով՝ ձեր ուղին յառաջ վարել պիտի յորդորէ զձեզ: Ո՛հ, վստահ եղիք, Կրգանք եւ հեշտութիւնք նենգ կը գործեն իրենց անձնատուր եղող յիմարին, կը մատնեն զայն. կը խաբեն շահերն ալ, կը խաբեն փայլն ու պերճանքն աշխարհին՝ երբ անոնց պատիր շողին շուրջ դառնայ ձեր հոգին, ինչպէս թիթեռնը ճրագին շուրջ, ու երջանկութիւնն ալ, անշատաւար մտածուած ու հետապնդուած Պարտաւորութենէն, խաբեպատիր ու վաղաջինջ երազ մ'է. միայն պարպքը չի խաբեր իր հաւատարիմները, միայն ան թափուր չի թողուր հոգին, միայն ան լեզի չի ձգեր իր մատուցած բաժակին խորը: Երբ երջանկութեան ոսկեղինիկ երազը զոր հետապնդեցինք առանց խտտորելու Պարտաւորութեան շաւիղներէն՝ ցնդի՝ վերաւոր, արտասուալից թողլով մեր հոգին, Պարտաւորութիւնը՝ զոր ընկեր ունեցանք մեր քայլերուն՝ մեր լաւագոյն մխիթարիչը պիտի ըլլայ, չուսուութեան բաժակին մէջ իր երկնածօրան կաթիլը պիտի հոսեցնէ ու մեր հոգւոյն մթին ամայութեան մէջ իր անստուեր շողը պիտի արձակէ, իբրև աչքն Յաւիտեանական էակին, Գերապոյն Օրէնսդրին, Գերագոյն Վկային, որուն առջև չեն կորսուիր մեր ճգնութիւնքն ու փորձեր: Բոլոր այդ ճգնութեանցն ու փորձերուն զոր կրած ըլլանք հաւատարիմ մնալու համար մարդու կոչմանն ու տեսլականին, անշահախնդիր բայց խրոխտ վարձ մը

պիտի ըլլայ մեզ դասինեայ պարզուկ այլ անթառամ՝ պսակը զոր Պարտքը պիտի բոլորէ մեր յոգնած, կնճռոտած, ճերմկցած բայց մաքուր ու վեհականգուն ճնացած ճակտուն շուրջ: Ո՛հ, ի վերջ կարուած ասպարիզի մը ու անոր բոլոր դժուարութեանցն ու տագնապներուն ու փորձութիւններուն, ինչ քաղցր ու վեհմ է կարենալ ըսել «Պարտքերս կատարեցի», եւ վկայութիւն աւլ անձին թէ արժանի եղաւ կարգին զոր Արարիչը նշանակեց իրեն իբրեւ վեհագոյն արարածի ի մէջ Արարչութեան էակաց, Բանին ու Կամեցողութեան որ արուեցան իրեն իբրեւ ճշմարտին ու Գեղեցկին ու Բարւոյն մշտադէմ ձգտումներ, իբրեւ Գերագոյն Իմաստութեան ու Բարութեան վեհմ ճառագայթումները մեր մէջ: Ար անէնք որ չեմ ծանրանար այն բազմաց նախանձելի տաղանգներուն վրայ զորս ստացած ունիք արդ՝ շնորհիւ ձեր բնատուր ձիրքերուն ու հրահանգներուն որք զանոնք մշակեցին, եւ որք ի հարկէ կը խոստանան ու կ'ապահովեն ձեզ այժմէն բազմադիմի յաջողութիւններ. չեմ խօսիր ատոնց վրայ, որովհետեւ դեռ ատոնք բոլոր միջոցներ են վեհագոյն նպատակին, վերջնական ու գերազանց յաջողութեանն: Աւերջնական յաջողութիւնը մարդ ըլլալն է, ճշմարիտ մարդ, իր անձին վրայ ազնիւ մարդու տիպար մը ստեղծելն է, Պարտաւորութեան ու Ցեպականին մարդն ըլլալն է ու անոնց իրացումն անձնաւորելն է իր վրայ: Ինչ տաղանգներ, ինչ բնական փայլուն տրամադրութիւններ, ինչ նիւթական ու աշխարհիկ յաջողութիւններ, ալ յանօգուտս չբացած են, աւելի կամ նուազ վաղանցիկ փայլէ մը յետոյ անցած գացած են, առանց մարդ մ'ընել կարենալու իրենց բախտաւոր ստացիչը, առանց ճշմարիտ ու պատկառելի անողարտ արժանիքը կազմելու անոր մէջ, առանց հասցնելու զայն բացարձակ յաջողութեան, ուր իր Պարտքն անվրէպ ու յարատեւ կատարելու փոյթը կրնայ միայն տանիլ: Պարտքին անփութութիւնն յաճախ անկատար թողուց կամ խաթարեց բնական ու ստացական կարողութիւնները, յաճախ գործիք ըրաւ զանոնք անխորհուրդ ու անարգ կիրքերու գոհացման ու ծառայեցուց զանոնք անարժան նպատակներու, յաճախ Աննիբաղները մեղկեց կապուալի գրգանաց մէջ ու Հերակլէսներուն թել մանել տուաւ Ուրիալներու ոտքին առջեւ, յաճախ տաղանդին ազնուութիւնը նկարագրին ստորութեամբը

գ ձ ձ եց, յաճախ անպարկեշտ արարքով կարողութեանց ու ձիրքերուն փայլն աղաոտեց ու նսեմեց, յաճախ Յեսլականը վրիպեցուց տեսութենէ, եւ ապրողին նաւն, անբեւեռ, յուպէտ յուկամ թափառեցուց անհաստատ ծփանքներուն ի հաճոյս: Գեղեցիկ շէնքի մը կառուցման սահմանուած ատաղձներ ցիրուցան վատեցան կամ աննշան խառնակոյտ մը կազմեցին ի չգոյէ գաղափարին որ միութիւն տար անոնց: Պարտքը թէեւ մի, բայց իւրաքանչիւր անհատի վրայ տարբերելով կարողութիւններն, ձիրքերն, ժառանգական հանգամանքներն, միտումներն, կոչումներն, իր բնութեան զանխուլ պահանջումներն ու պարագաներն, Պարտքին իրացումն ալ տարբեր ձեւ մը կը ստանայ ըստ անհատին, խոհուն, զգայուն ու գործն մարդուն տեսլականը տարբեր տիպի մը համեմատ կը մարմնաւորի անոր կեանքին ու գործունէութեան մէջ, որ անոր յատուկ գրոշմը կը կրէ ու անոր էութեան, անոր յատկանշական հանգամանքներուն խորհրդանշան գործը կ'ըլլայ, որ գործողին անցնելէն ետքն ալ զայն պիտի թաքտարէ, զայն պիտի ապրեցնէ տակաւին: Անպատճառ գիտական, գրական կամ գեղարուեստական գործի վրայ չէ խօսքս. ամէն մարդ հեղինակ ըլլալու սահմանուած կամ պարտաւորուած չէ, բայց ամէն մարդ պիտի հեղինակէ իր կեանքն իւրեւ իւրակերտ երկ մը ու անոր գեղեցիկ գաղափարի մը արտայայտութիւնը պիտի տայ. ամէն մարդու կեանքը կրնայ ու պարտի գեղակերտ յիշատակարան մը դառնալ՝ նուիրուած պարտքին, լոյսին, սիրոյն: Իւրաքանչիւրն ի ձէնջ պարտի այս յիշատակարանը կանգնել, այդ գործը գործել, իր յատուկ գործը շինել, բարի կամքերուն մէջ իր յատուկ դերը խաղալ, օգտակար ու ազնիւ դէմքերուն մէջ իր տեղը թռնել, ու ըսել տալ թէ մարդ մ'եղաւ: Առ այդ հարկ է որ լինիք պարտաւորութեան ծառայն, սիրէք անոր լուծը, ու պարտքին խորհիք յարատեւ, ու անոր գոհունակութիւնը փնտռէք ու անոր ժպիտը սիրէք: Ո՛հ, այդ ժպիտը. անոր մէջ, խտացած, ժպիտը կայ Արդարութեան զոր յար գոհացուցած պիտի ըլլաք, ժպիտը կայ Սիրոյն որուն պաշտօնեայն եղած պիտի ըլլաք, ժպիտը կայ Յառաջդիմութեան որուն գործիքն եղած պիտի ըլլաք, ընտանիքներուն, որոց երջանկութիւնն յարգարած պիտի ըլլաք, երկրին, որու կեանքին ու բարգաւաճման տարրերուն վրայ յաւելցած

պիտի ըլլաք, Մարդկութեան, որու պատուոյ պսակին մէջ ծաղկած ու բուրած պիտի ըլլաք. — ժպիտը Պարտքին, ուր ժպիտը կայ Յիսուսին, Սիրոյ այն մեծ Զոհին որ գոհ եղած պիտի լինի ձեզմէ իբրեւ լաւագոյն Քրիստոնեայներէ, ու Իմաստութեան ու Բարութեան Աստուծոյն, որու արքայութիւնն երկրի վրայ իրացընելու նպաստող աղնիւ ոգիներէն եղած պիտի լինիք, եւ որ ընդ ձեզ հաճած պիտի լինի իբրեւ իր սիրելի որդւոց ու անկեղծ պաշտողաց վրայ: Պարտքին ժպիտը կը մաղթեմ ձեզ, սիրելի որդեակք, ձեր կեանքին վերեւ մշտածածան, սրբագործող ձեր ուրախութիւններուն, սփոփածու ձեր տրամուլթիւններուն, եւ խաղաղիչ ձեր յոյզերուն: Երթա՛ք բարեաւ:

(Բիւզանդիոն, 1906, Թիւ 3000)





Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Ց

2-ին
 Յառաջարան

Կ Ի Թ Ա Կ Ա Ն Ն Ի Ի Թ Ե Բ (Մասն Առաջին)

1. Դաստիարակութեան նպատակը	1
2. Դպրոցական վերամուտի առթիւ	7
3. Մանկավարժական կազմակերպութիւն Նախակրթութեան	16
4. Կրթական բանաձեւք.	
ա. Ֆիզիքական գաստիարակութիւն	40
բ. Իմացական գաստիարակութիւն	43
գ. Բարոյական գաստիարակութիւն	47
5. Գրաբարի ուսումը նախակրթարանաց մէջ	50
6. Շարագրութեան գասը մը նախակրթարաններուն մէջ	56
7. Դպրոցական պատիժները	62
8. «Ամենամծ յարգանք պարտական ենք մանկան»	72
9. Բարոյական գաստիարակութիւն	79
10. Դաստիարակ-ուսուցիչ	95
11. Նախակրթարանաց ուսուցիչներու պատրաստութիւնը	101
12. Ուսուցնական խորհուրդը	105
13. Նախնական կրթութիւնը մը մէջ	116
14. Բարոյական գիտութիւնը	121
15. Կրթական Հանգեպք ի Չուիցերիա	141
16. Հին Յունաց գաստիարակութեան նշանակելի կէտերը	161
17. Պէրպլերեան վարժարանի Պատմութենէն	170
18. Ճառ յարելինական	176
19. Կատարելագործում	193
20. Պաստախանատուութեան կենսքը	204
21. Պատիւը	215
22. Պատուելին ու Հրաշնայի պատիժը	224
23. Դպրոցական մարմնոց բնագունելութիւն Պատրիարքարանի մէջ	230
24. Կիլիկիոյ վեհաշնորհ Ս. Կաթողիկոսը Պէրպլերեան վարժարանին մէջ	233

25. Գործոցին Շարահանները	235
26. Հարիւր բարոյական երկասղեակք	256

Գ Ի Ը Կ Ա Ն Ն Ի Ի Թ Ե Բ (Մասն երկրորդ)


1. Ժողովրդեան ու գրագիտին աշխարհաբարները	267
2. Նոր գրողները	278
3. «Վաղուան Գրականութիւնը»	286
4. Գրարձեալ «Վաղուան գրականութիւնը»	297
5. Գրարար լեզու եւ Գարագաշեան	307
6. Հելլէն դասական գոյրութիւնք եւ արուեստք	
ա. Յոյն լեզուն	317
բ. Պերիկլէսի դարը	319
գ. Հին Յունաստանի հանճարը	322
7. Պերճախօսութիւն	325
8. Կր. նական պերճախօսութիւն	333
9. Քնարերգութիւն	343
10. Ճոխ Յանգը	351
11. Քարոզը (Աւսոյ)	363
12. Տաղալափական խնդիր մը	365
13. Ժամանակակից զէպն ի Ֆրանսա	370
14. Երկհարիւրամեակ Միտիթարոյ Աբրայի Սերաստացոյ	378
15. 1902 Փետրուար 2	383
16. Տ. Տ. Մելքիսեղեկ Արքեպ. Մուրատեանց	361
17. Մասթէս Մամուրեան իբրեւ հրազարակագիր	397
18. Ա. Մ. Վ. Գարագաշեան	402
19. Գրարձեալ Ա. Մ. Վ. Գարագաշեան	405
20. Յիշատակները	410

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ Ի Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

Պարտաւորութեան ձայնը	415
--------------------------------	-----

Վ Ր Ի Պ Ա Կ Ք

Էջ	Խառ	Վր	Պա
40	10	Գրոցը	Գրոցը
155	7	Հաւարտեցաւ	Հաւարտեցաւ
176	19	Կրնայի	Կրնայի՞
202	26	Խարիսը	Խարիսիւր
226	27	ստամբուսային	ստամբուսային
281	32	մաքին .	. մաքին
288	22	բարեպաշտ	բնապաշտ
306	27—28	: — Թ՛՛՛՛	— Թ՛՛՛՛
321	7	Անտառագոր	Անտառագոր
370	20	6—4—4	4—4—4





Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՄԱՐՆԵՒԻ ԲՈՒՆ ԿՈՄՊՈՆԵՆՏԻ ՈՐՈՐԻՆԻ (սպառած):

ԱՌԱՋԻՆ ՏՆԻՆԵՒԻ. ԲԵՐԼԻՆՆԻ, ՄԻՆ ՍԻՆԻՆԻ, ԴՈՐԻ, ԵՆԻ
ԵՆԻ (սպառած):

ԵՐԿՈՒ ԲԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆԻ. Ա. ԲԱՆԱԽՈՍՈՒՄԻՆ ԵՆ ԳՈՐԻ,
Բ. ԳԵՂՈՒՄԻ ԵՆ ԳԵՂՈՒՄԻ (սպառած):

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՋՐՕՍԱՆՔՆԵՐԸ. ԲՈՒՆԻՆԻՆԻ (սպառած),
ԴՐԱՄ, ՏԻՆԻՆԻՆԻ ԲՈՒՆԻՆԻՆԻ, ԳՐԻ 3 ՊԱՏԵՎԱՆ:

ԿԵՐԹԵՒ ԼԵՐԻՆ ԵՆ ԴՐՈՒՄԻ, ՎԵՊ ՍԻՆԻ ԵՐԿՈՒ, ԿԱՄ-
ԿԵՐԱՊՈՐԿ. ԳՐԻ 10 ՊԱՏԵՎԱՆ:

ՀԱՄԱՐՈՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ. ԳՐԻ 7 1/2 ՊԱ-
ՏԵՎԱՆ:

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԻ ԳՈՐԻՆԻ ԵՆ ԿՈՄՊՈՆԵՆՏԻ. (ՑԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՆ
ՎԱՃԱՌՈՒՄԻ ԻՐԱՆՈՒՄԸ ՆՈՒՐՈՒՄԸ ՆԿԱՍՍԻՅ ՍԵՐՈՒՄԻ ԻՆՎ-
ՎԱԿԱՐՈՒԹԵԱՆ): ԳՐԻ 3 ՊԱՏԵՎԱՆ:

ՄԱՐԴԻԿ ԵՒ ԻՐԻ. ԿՐԻՆԻ ԵՆ ԴՐՈՒՄԻՆԻ ԴՈՐԻ (սպառած),
ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՄԸ ԽՕՍՔԵՐԸ. ԳՐԻ 15 ՊԱՏԵՎԱՆ:

ԽՈՂԻ ԵՒ ՅՈՒՐԻ. (ՎԱՃԱՌՈՒՄԻ ՏԱՍԻՅԸ ԳԱՐՇԱՅԻԱՆ
ՍՂԿԱՆՑ ՈՐՐԱՆՈՅԻՆ ՆՈՒՐՈՒՄԸ). ԳՐԻ 10 ՊԱՏԵՎԱՆ:

ԴՊՐՈՑ ԵՒ ԴՊՐՈՒԹԻՒՆ. ԿՐԻՆԻ ԵՆ ԳՐՈՒՄԻ ԵՆ ԴՐՈՒՄԻ. ԳՐԻ
20 ՊԱՏԵՎԱՆ:

